

ՀԻՍՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

# Այունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



ԵՐԵՎԱՆԻ  
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
2016թ.  
№ 37 (413)


Այսօր  
Ռոբերտ  
Գրիգորյանը  
(Էջանանցի)՝  
Կդառնար

70  
Տարեկան

Եվ ես՝  
գյուղական մի  
համեստ ուսուցիչ...

*Պոֆերյու Էջանանցի*

# Գործուղվեց այսպեղ, տնավորվեց եւ 52 տարի լուսապու ջահ եղավ



Ինքնակենսագրություն

ՈՌԲԵՐՏ  
ԷԶԱՆԱՆՏԻ

## ՅԻՄԱՐ

Ղափանի շրջանի Առաջաձոր գյուղ, 1946թ. հոկտեմ-


բերի 25, գյուղական ուսուցիչների ընտանիք, առաջնեկ, որբություն 14 տարեկանից՝ Յերիքնազ տատիս խնամքի տակ, երեք երեխաներով...

Ավարտել եմ Առաջաձորի յոթնամյակը, Շրվենանցի միջնակարգը, ՅԻՄԱՐ լուսնի մանկավարժական դասարանը, Կիրովականի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի ֆիզմաթ ֆակուլտետը, բոլորը՝ գերազանցությամբ:

1964թ. սեպտեմբերից առ այսօր աշխատում եմ Լեռնաձորի հիմնական դպրոցում: Սյունիքի մար-

զում միակ ուսուցիչն եմ, ով գործուղումով գյուղ է մեկնել, տնավորվել եւ 46 տարի անընդմեջ աշխատում է նույն դպրոցում...


Եղել եմ ուսնասվար, 1984-ից տնօրեն եմ: Տարիների ընթացքում, անհրաժեշտաբար, դասավանդել եմ բոլոր առարկաները, բացի անգլերեն, վերջին տարիներին՝ միայն մաթեմատիկա: 1977թ. իմ աշխատանքի փորձն ուսումնասիրել է լուսնի կոլեգիան, հրատարակել առանձին գրքույկով ու կարճամետրաժ ֆիլմով: Մասնակցել եմ հանրապետական, համամիութենական ուսուցչական, ջոկատավարների համագումարների որպես պատգամավոր (ելույթներով):



Ընտրվել են ԽՍՀՄ մանկավարժական ընկերությունների համամիութենական խորհրդի անդամ: Մեկ ուսումնական տարի Լեռնաձորում ղեկավարել են ԽՍՀՄ ՄԳԱ գիտահետազոտական ինստիտուտի մաթեմատիկայի ուսուցման փորձնական դասարանը: Ցայժմ հրապարակել են լրագրային ու ամսագրային տարաբնույթ 600-ից ավելի հոդված: Հայ մաթեմատիկական-պատմական նյութեր են հրապարակել խորհրդային եւ գերմանական ամսագրերում: Խմբագրել են յոթ գրքույկ: ԽՄԿԿ անդամ էի, 1991-ից անկուսակցական եմ:

**Նամարի հովանավորը**

**ՍԱՐԻ (ՄԱՀԱՊԱՆ) ԵՐՎԱՆԴԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**



Ծնվել է 1949թ. ապրիլի 2-ին Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղում: Գյուղի միջնակարգն ավարտելուց հետո աշխատել է «Քաջարանշին» տրեստում՝ կռունկավար: 1967-69թթ. ծառայել է խորհրդային բանակում, ծառայությունն անցել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում: Զորացրվելուց հետո աշխատել է Կապանի ավտոտրանսպորտային ձեռնարկությունում՝ վարորդ: Սկսած 80-ականների կեսերից, ղեկավարել է նաև տարածաշրջանում լեռնահանքային աշխատանքների գծով պայթեցումներ իրականացնող հիմնարկը:

ՀՀ անկախացումից հետո ակտիվ զբաղվել է մասնավոր ձեռնարկատիրական գործունեությամբ, սկզբում՝ գյուղատնտեսության ոլորտում, այնուհետև՝ հողային աշխատանքների կատարմամբ եւ տրանսպորտային բեռնափոխադրումներով: Վերոնշյալ ոլորտներում հասել է լուրջ հաջողությունների եւ մինչ այժմ զբաղվում է ձեռնարկատիրությամբ՝ ապահովելով մի քանի տասնյակ աշխատատեղ:

Ամուսնացած է, ունի հինգ զավակ: Ոչ մի կուսակցության չի անդամակցում: Իր կյանքի ամենամեծ նպատակը համարել եւ համարում է ժողովրդին ծառայելը, մարդկանց օժանդակելը:

Պարգևատրվել են ԳԳՀ-ի «Գաուս-200» հուշամեդալով (գերմանական մաթեմատիկական ընկերություն), «Մովսես Խորենացի» մեդալով, «Ակսել Բակունց» մեդալով: Արժանացել են ՀՀ ԿԳՆ Ոսկե հուշամեդալի, սակայն հրաժարվել են: Եւ ու Ռիտան չորս դստեր ծնողներ ենք, ութ թռուռն պապիկ-տատիկ: Վաստակած հանգստի կանցնեմ մեկ տարի հետո: Բիզնես-միզնես չունեմ:

17 օգոստոսի 2010թ.



## Մեծարման արժանի անհատականություն



### ՎԱՅԵ ՎԱԿՈՒՅԱՆ

Հայաստանի  
Հանրապետության  
Սյունիքի մարզպետ

**Ռ**ոբերտ Գրիգորյան-Էջանանցու մասին իմացա, երբ արդեն Սյունիքում էի՝ Քաջարանում: Ռա 2014թ.

հուլիսն էր: Շատերն էին հիացնումընթով պատմում նրա ստեղծած դպրոցի, մանկավարժական տաղանդի, Սյունյաց աշխարհի եւ հատկապես Կապանի տարածաշրջանի նրա իմացության մասին:

Այդ ժամանակ էլ ցանկություն առաջացավ իմ մեջ՝ անպայման ծանոթանալ նրա հետ: Եվ 2015թ. մարտին այցելեցի Լեռնաձորի դպրոց:

Անմոռանալի տպավորություն ստացա մեր հանդիպումից: Նա ներկայացրեց դպրոցի անցած ուղին, կրթօջախի առջև ծառայած խնդիրները, հանրակրթության վերաբերյալ իր մտահոգությունները: Հետագայում առիթ ունեցա ընթերցել նրա հոդվածները:

Ցավոք, Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին անժամանակ հեռացավ կյանքից, եւ մտերմություն, բարեկամություն խոստացող մեր հանդիպումը շարունակություն չունեցավ:

Այնպես որ՝ ինձ ուրախություն պատճառեց արժանավոր այդ անհատականությանը «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար նվիրելու, նրա հիշատակը եւ գրական-ստեղծագործական ժառանգությունն այսկերպ հավերժացնելու նախաձեռնությունը:

Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու առանձնահատուկ կերպարը հիշեցնում է գյուղական դպրոցի կարեւորության մասին, ինչը, անշուշտ, գյուղապահպանության առանցքային բաղադրիչներից է լեռնային մեր երկրամասում:

Ինչ վերաբերում է նրա հայրենագիտական հոդվածներին, ուսումնասիրություններին, առաջադրած վարկածներին, ապա կարելի է վստահորեն ասել՝ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին կարողացել է Կապանի տարածաշրջանի վերաբերյալ ստեղծել հանրագիտարանային նշանակության նյութերի մի ամբողջություն, որը սկզբնաղբյուրի դեր է կատարելու նաեւ գալիք սերունդների համար:

Հարգանք եւ խոնարհում նրա վառ հիշատակին:

## Խմբագրականի փոխարեն (խոսք հիշատակի եւ ոչ միայն)



# Սյունիքյան արեւն ու ոգին էր նրա մեջ, եւ արմատներ ուներ նա հողում



### ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**Մ**եզ հետ չէ այլեւս մեծ հայրենագետն ու հետազոտողը, մեծահամբավ մանկավարժը, մերօրյա Սյունիքի նշանավոր ու սիրելի անհատականություններից մեկը՝ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին:

Կապանի ու Քաջարանի փողոցներում այլեւս չենք տեսնելու բարձրահասակ, վայելչատես ու առինքնող այդ մարդու դանդաղ ու խորհրդավոր քայլվածքը, չենք հաղորդվելու նրա բարի ժպիտին ու լուսավոր կերպարին, հանրային հարթակներում չենք լսելու նրա խորիմաստ եւ անզուգական խոսքը...

\* \* \*

Բազում մարդկանց մասին է Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին ակնարկներ ու ներբողականներ հյուսել: Քանի-քանի անգամ վշտացածներին սփոփողի ու մխիթարողի դերում է հանդես եկել: Սինչդեռ իր մասին երբեք խոսք չասացինք, չհասցրինք նույնիսկ հավաքել իր իսկ հեղինակած մոտ վեց հարյուր հոդվածներն ու ուսումնասիրությունները կամ կազմել դրանց մատենագրությունը: Ինքը վաղաժամ էր համարում դրանով զբաղվելը, ավելի ճիշտ՝ դրա համար պատեհ առիթ էր դիտում իր 70-ամյակը, որին, ափսոս, ինքը չհասավ:

Եվ ուրեմն՝ ելույթս ոչ միայն հրաժեշտի խոսք է, այլև փորձ՝ հնարավորինս բացահայտելու Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու վեհաշուք կերպարը, արտահայտելու դրվատներ նրա անցած ուղու եւ թողած հետագծի մասին: Ի վերջո, ինչպես Սուրբ Գրիգոր Տաթևացին է մեկնում՝ «*Ովքեր իրենց կյանքն ապրել են արդար ճշմարտությամբ՝ նրանց մահ ու վախճան կհասնի հավիտենական հիշատակումով*»: Սա հենց այդ դեպքն է, երբ պետք է խոսքով հավերժացնենք հանգուցյալի հիշատակը:

\* \* \*

Հայոց մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցն է բարձրաձայնում՝ «...վախճանվելը, վիճակված է,

## Խմբագրականի փոխարեն (խոսք հիշատակի եւ ոչ միայն)

ավա՞ղ յուրաքանչյուրիս...»: Չի վախճանվում միայն հիշատակը, իսկ հիշատակը սերում է գործերից ու մնում անմեռ: Նաեւ այդպես է երկիրը հայրենիք դառնում, նաեւ այդպես է ձեւավորվում ազգային արժեհամակարգ:

Այս բանաձեւը թույլ է տալիս առանց վարանումի հայտարարել՝ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու հիշատակն անվախճան է ու անմեռ, քանզի նրա ապրած կյանքն արարումի մի յուրահատուկ պատմություն է, իսկ ինքը՝ գործերով շքեղացած այր մի:

\* \* \*

Ռոբերտ Գրիգորյանն ուսուցիչ էր, վարդապետ՝ բառի մաքրամաքուր իմաստով:

Նրանից անանց շնորհք էր ծորում՝ մանուկների մտքին ախորժեղի:

Դրանում համոզվել է յուրաքանչյուր ոք, ով գեթ մեկ անգամ ունկնդիր է եղել նրա վարած դասին, ով եղել է նրա գլխավորած դպրոցում:

Պատահական չէ, որ աշխարհից հեռու այս գյուղի՝ Լեռնածորի դպրոցի համբավը տարածվել էր ամբողջ հանրապետությունում. մոտ 46 տարի ինքն այդ դպրոցում է աշխատել:

Նրա շնորհիվ էր, որ գյուղական այս դպրոցն Աստուծո տաճարի պես մի միջավայր էր դարձել, որտեղ մարդիկ մտնում էին երկյուղածությամբ ու խոնարհումով եւ դուրս գալիս մաքրագործված ու գոտեպնդված:

Քանի-քանի անգամ ենք ակնատես եղել՝ առաջավորի, օրինակելիի հռչակ ունեցող մայրաքաղաքային դպրոցներից անգամ այցելում էին Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցի հույժ պանծալի դասասացին եւ ուսուցչապետին՝ նրա մանկավարժական փորձին հաղորդակցվելու համար:

Այո, Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու համբավը պայմանավորված էր, նախեւառաջ, ուսուցչական անբասիր գործունեությամբ, բայց...

\* \* \*

Լինելով մաթեմատիկայի ուսուցիչ՝ նա իր գիտական որոնումներում սկզբից եւեթ դուրս էր եկել միանգամայն այլ ուղեծիր եւ հասել հայրենագիտության ամենատարբեր ոլորտները՝ կատարելով համարձակ հարցադրումներ ու եզրակացություններ:

Ինքն էր, որ հակադրվեց Բաղաբերդի տեղադրության մասին հարյուր եւ ավել-

լի տարիներ առաջ՝ հայոց մեծ վիպասան Րաֆֆու կողմից գիտական շրջանառության մեջ դրված վարկածին ու նոր դիտարկումներ արեց:

Ինքն էր, որ Մեսրոպ Մաշտոցի անվան ծագման եւ նրա սյունիքյան երկու այցելության երթուղիների վերաբերյալ միանգամայն նոր վարկած առաջադրեց:

Ինքն էր, որ փորձեց նոր խմբագրումներ անել պատմագիտության մեջ առայսօր վիճելի մի հարցում՝ Դավիթ Բեկի ծագումնաբանության հարցում:

Ինքն էր, որ գեղարվեստական խոսքի թաթավվածությամբ ու պատմական փաստերի համադրումով ներկայացրեց Սյունիքի թագավորության կործանումը՝ կերտելով «Յին Կապանի վերջին աշունը» պատումը:

Ինքն էր, որ գիտական նոր ստուգաբանության ենթարկեց մեր երկրամասի մի շարք տեղանուններ՝ Կապուտջուղ, Խուստուփ, Կապան եւ այլն:

Իր համահեղինակությամբ էր, որ հանրապետության ճանաչված գրաբարագետներն առաջին անգամ արդի հայերենի փոխադրեցին մի շարք ձեռագրեր եւ գործեր՝ միջնադարյան Սյունիքին առնչվող. հիացմունք եւ զարմանք էր պատճառում գրաբարի, միջին հայերենի նրա իմացությունը:

Դժվար թե գտնվեր մեկը, որ այդքան հանգամանալից իմանար Սյունյաց աշխարհի՝ պատմության խորքերում անթեղված բերդերի, սրբավայրերի, բնակավայրերի տեղը, այդքան խորությամբ իմանար Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը», Ղեւոնդ Ալիշանի «Սիսիականը», Սյունիքին առնչվող մյուս կոթողային մատյաններն ու դրանցից անգիր ընթերցումներ աներ:

Երվանդ Լալայանից, Ստեփան Լիսիցյանից ու Սերո Խանգադյանից հետո ինքն էր, որ մեր երկրամասում անկեղծ նվիրումով զբաղվեց ֆուլկլորով ու ազգագրությամբ:

Պատանեկան տարիներից իր ազգանվանը զուգահեռ մի յուրահատուկ հորջորջումով էր ներկայանում հանրությանը՝ Էջանանցի՝ փորձելով անընդհատ հիշել ու հիշեցնել իր փոքր հայրենիքի՝ Սյունիքի Աճանան (Էջանան) գավառի անունը, որի Առաջածոր գյուղում է ինքը ծնվել, ձգտելով դրանով վերստին արտահայտել իր սերն ու նվիրումը հայրենի երկրամասին:

Նա քայլող հանրագիտարան էր, մեր

պատմության կենդանի կրողը:

Չէ, ինքը 69-ը տարեկան չէր: Ինքն, ասես, լույս աշխարհ էր եկել մեր ինքնության համար մղվող առաջին գոյամարտի՝ Չայկի եւ Բելի պատերազմի օրերում, եւ ուղեկիցն էր մեր ամբողջ պատմության: Երբեմն թվում էր, թե ինքն անգամ ինչ-որ կերպ հասցրել էր գրույցի նստել Պատմահոր հետ, մեծարանք տվել ու առել...

\* \* \*

Ճակատագրի կամոք նա պլեւրոնության չհասավ, բայց հասցրեց իմաստության գահ բարձրանալ շատ տարիներ առաջ՝ շնորհիվ աստվածատուր կարողությունների: Դրա համար էլ նրա խոսքն ու ներկայությունը սպասված էին ամենուր:

Մտավորական էր բառի ամբողջ եռությամբ:

Յոթտոր էր ու հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործընթացներում նրա խոսքը նշանակություն ուներ:

Մի՞նչէ կյանքի վերջ հասարակական գործունեությունը, լրագրությունը նրա տարերքն էին:

Եվ այդ ամենը՝ շնորհիվ մի պարզ իրողության՝ սյունիքյան արեւն ու ոգին էր նրա մեջ, եւ արմատներ ուներ նա հողում:

Այնպես որ՝ սխալված չենք լինի, եթե ասենք՝ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու անունն ընդմիշտ կմնա Սյունիքի կրթական եւ հոգեւոր-մշակութային տարեգրության մեջ: Սա է այն բացարձակն ու անժխտելին, որ պետք է միաթարի բոլորիս ու հատկապես տիկին Ռիտային եւ ընտանիքի չորս դուստրերին:

\* \* \*

Առաքելական խոսք կա (Ավետարան ըստ Մատթեոսի, Գլուխ 2, 9)՝ «Նրանից խնդրելուցն առաջ, արդ դուք այսպես աղօթք արեք. «Չայր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի քո անունը...»»:

«Սյունյաց երկիր» թերթի մեծ բարեկամին դեպի հավերժություն ճանապարհ դնելիս հիշում ենք այդ պատվիրանն ու Տերունական աղոթքի խոսքերը եւ ավելացնում՝ թող Աստված լուսավորի Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու հոգին եւ երկնքի կամարներից ներս ընդունի նրան:

Չիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

# Բովանդակություն

Ռոբերտ Էջանանցի. ինքնակենսագրություն ..... 2

**Շամարի հովանավոր**

Սարո (Մահապան) Թադևոսյան ..... 3

Մեծարման արժանի անհատականություն  
(Վահե Հակոբյան, ՀՀ Սյունիքի մարզպետ) ..... 4

**Խմբագրականի փոխարեն (խոսք հիշատակի եւ ոչ միայն)**

Սյունիքյան արեւն ու ոգին էր նրա մեջ,  
եւ արմատներ ուներ նա հողում (Սամվել Ալեքսանյան)..... 4

**Խոսք Ռոբերտ Գրիգորյանի մասին**

Ոնց անենք, որ կիսատ չմնա Էջանանցու կյանքի գործը  
(Աշոտ Բլեյան)..... 8

Նա Արիստոտելի մեթոդյա շառավիղն էր (Լիլիթ Առաքելյան)..... 9

Ժողովուրդներին ազգ դարձնող մարդկային դասին էր  
պատկանում (Տիգրան Գրիգորյան)..... 10

Նրա հետ շփումից դրական լիցքեր էի ստանում  
(Լեռնիկ Պետրոսյան) ..... 11

Նա գիտելիքներ էր շաղ տալիս (Կամո Արզումանյան)..... 12

Մեր տարածաշրջանի ամենահզոր բանահավաքն էր  
(Լեւոն Մարգարյան) ..... 13

Խոր ցավ էր ապրում դատարկվող գյուղերի համար  
(Գրիշա Մանուչարյան)..... 14

Լեզենդները չեն մեռնում (Սուսաննա Օհանջանյան)..... 15

Ուսուցիչը (Հերմինե Նավասարդյան)..... 16

Գյուղական ուսուցչի խորհրդանիշ էր (Կարեն Մկրտչյան)..... 17

Աստված իմ, ինչ ցավ է մտերիմ, տաղանդավոր մարդու  
կորուստը (Վարդան Գեորգյան) ..... 17

Եվ այդ մի Կապանա տան (Ալմարա Անտոնյան) ..... 18

Վերստին ու դարձյալ ափսոս (Արթուր Առաքելյան) ..... 19

Մի գյուղական ուսուցիչ (Խ.Մեհրաբյան)..... 19

Սիրտ տանող ճանապարհը (Լեւոն Կանցյան)..... 21

Ստուգողական մաթեմատիկայից (Ս.Կուշներցով) ..... 23

Լեռնաձորի գրիգորյանական դարաշրջանը  
(Ստեփան Պետրոսյան)..... 26

**Վաստակի գնահատություն**

Վկայական Ռոբերտ Գրիգորյանին տրված  
Մովսես Խորենացու մեդալի ..... 20

Վկայագիր Ռոբերտ Գրիգորյանին Կապանի պատվավոր  
քաղաքացու կոչում շնորհելու մասին ..... 22

Վկայական Ռոբերտ Գրիգորյանին Ակսել Բակունցի  
մեդալով պարգևատրելու մասին ..... 24

Լեռնաձոր համայնքի ավագանու որոշումը Ռոբերտ Գրիգորյանին  
համայնքի պատվավոր անդամի կոչում շնորհելու մասին ..... 24

**Ավանդակեմ**

Հին Կապանի վերջին աշունը (Ռոբերտ Գրիգորյան)..... 27

**Դիմանկարներ**

Ձագ Հաբանդեցի՝ անվանահայր մեր երկրամասի  
(Ռոբերտ Էջանանցի)..... 33

Շահանդուխտ Ա (Ռոբերտ Էջանանցի)..... 35

Շահանդուխտ Բ (Ռոբերտ Էջանանցի)..... 36

Մովսես Խորենացի. կաթողիկոս Ամենայն հայոց  
(Ռոբերտ Էջանանցի)..... 37

Ստեփանոս Մեղրեցի (Ռոբերտ Էջանանցի)..... 39

Մելիք Ղուկաս Ղափանցի (Ռոբերտ Էջանանցի)..... 40

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Եփրեմ եպիսկոպոս  
Ղափանցի (Ռոբերտ Գրիգորյան)..... 42

Պապ Կարճեւանցի (Ռոբերտ Էջանանցի՝ ըստ Ե.Լալայանի)..... 42

Նիկողայոս Ադոնց (Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցի) ..... 44

**Ձեռագիր մասյան. Կադանա տուն (Ռոբերտ Էջանանցի)**

Հիշատակարան ..... 45

Կապանա տուն ..... 45

Կապան գավառի գյուղերը ..... 45

Կապանի Գեղվաձորը..... 54

Քաջարան քաղաքի շրջագծի մեջ մտած բնակավայրերը ..... 55

Կապան քաղաքի շրջագծի մեջ մտած բնակավայրերը ..... 59

Կապան գավառի բնակչությունը..... 62

Օրհներգ Քաջարանի ..... 63

Հնագիտական ուսումնասիրություններ ..... 64

Բուսական աշխարհը ..... 64

Կենդանական աշխարհը..... 65

Հին ու նոր բնակավայրեր ..... 65

Կապան գավառի պատմական հուշարձանները ..... 66

Օգտակար հանածոները ..... 67

Պաշտամունք եւ հավատալիքներ ..... 67

Գավառի ամառանոցները ..... 68

Բնապահպանական միջավայրը, բնակլիմայական պայմանները .. 68

Կապան գավառն անցյալում ..... 69

Կապան տեղանվան ծագման պատմությունը ..... 71

Կապան գավառի բնակավայրերը..... 71

**Սանկավարժություն (Ռ.Էջանանցու հոդվածների, հարցազրույցների, էյույթների շնորհի)**

Սանկավարժական նորարարության մասին ..... 72

Ինչպես ես ապրում, գյուղական դպրոց..... 75

Սանկավարժական լավատեսության մասին ..... 76

Հայ մաթեմատիկական մշակույթը եւ նրա դասավանդումը ..... 78

Ռոբերտ Գրիգորյան. «Չկա հանրակրթական դպրոցը  
վարկաբեկելու ավելի արտառոց երեւոյթ, քան ուսուցչի՝  
իր մոտ մասնավոր պարապմունքի հաճախելու՝  
աշակերտին ներկայացվող պարտադրանքը» ..... 81

Զգուշացեք դասախումբից..... 87

Գյուղական ուսուցիչը ..... 90

Գյուղական դպրոցը դասարանակազմության եւ  
իրավունքի թնջուկում ..... 91

Ժողովրդական դաստիարակությունը եւ ժամանակը ..... 93

Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության կոլեգիայի  
1977թ. հունիսի 11-ի որոշում «Ղափանի շրջանի Լեռնաձորի  
ութանյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ռ. Գրիգորյանի  
աշխատանքի առաջավոր փորձի մասին» ..... 94

**Էջեր Սյունիքի դասնությունից**

**(ԸՍՏ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու)**

Դավիթ Բեկի մահվան 270-ամյակը .....	96
Սյունիքյան օլիմպոսը .....	102
Ասքապատուն (Արքան Հին Կապանի ավերակներում է).....	103
Համոսահյանական ոգեղենության Սյունիքի հնադարը.....	105
Մերոպ Մաշտոցը եւ Սյունիքի կրթալուսավորչական դարձը .....	106
Սյունիքը եւ ռուսական ֆենոմենը.....	112
Աճանաճի հոյաչեն կամուրջը .....	115

**Վահանավանք (Ռոբերտ Էջանանցու անդադարձ)**

Աշխարհագրական ակնարկ .....	117
Վահանավանքը եւ կապանյան տեղորոշումների թեականությունը.....	118

**Բանավիճական հոդվածներ եւ ֆննխոսություն**

Ս.Ումառյանի «Սյունիքը՝ դիցարան» աշխատությունը.....	121
Վիշապանուն եզերք Կապանա.....	128
Նկատառումներ յոթնաբերդ Կապանի ամրոցների տեղորոշման վերաբերյալ .....	129
Նկատառումներ «Սյունիքի պատմություն» գրքի վերաբերյալ .....	131

**Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին**

Ես քո համեստ մշակն եմ (Ելոյթ Լեւոն Տեր-Պետրոսյանի սյունիքյան այցի առթիվ).....	136
Խուստուփի սլացքն ի վեր համբառնած այր մի (Վաչե Եփրեմյանի մասին).....	137
Օվսաննա ոսկեծղի այր Կամոյանին.....	137
Բարձունք. ավագ գործընկերոջ դիմանկար (Վանյա Գալստյանի մասին).....	138
Վարիացիա՝ թերթի համար (հուշի պատառիկ Ռաֆայել Մինասյանի մասին).....	139
Վաստակաբեռ տարեգիրը՝ Կապանա տնից (Արտավազ Մկրտչյանի մասին) .....	140
Եղիկ Ավետիսյանի պայծառ հիշատակին.....	141
Արտաշես Գեւորգյանի հիշատակին.....	145
Գիտության վաստակաբեռ մշակը (Թաթևի Հակոբյանի մասին) ...	146
Դպրության հանդեպ չմարող սիրով (Գրիշա Մանուչարյանի մասին).....	148
Լեռնային ճարտարագետ Վահրամ Հովհաննիսյանը.....	150
Գրկում եմ քեզ, քո... (Յուզիկ Համբարձումյանի մասին).....	151
Կտրած մատին գոնե աղ արեք (Հոներ Աբրահամյանը՝ Կապանի ինստիտուտի տնօրեն. արձագանք).....	152
Կյանքում միշտ տեղ կա սխրանքի համար (Արկադի Ծատուրյանի մասին) .....	153

**Պատմվածքներ, մանրադասումներ, բանահավաքություն (Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցի)**

Երկունք.....	154
Աշխատավարձ .....	155

Ժպիտների քաղաքը.....	157
Պաղպաղակ քաղաքը.....	159
Խորթ մայր արջը .....	160
Կատուն.....	161
Դասարանում միայն Առնոն է.....	162
Դավիթը, որ թողել էր քաղաքը, եկել գյուղ եւ երագուն է դառնալ սովխոզի դիրեկտոր .....	163
Նպաստ .....	164
Որոշում .....	166
Հնդկահավերը .....	167
Հակառակ-բամբառակ .....	168
Մեմախոսություն .....	168
Լիպոյի շտաբը .....	169
Ուսուցիչն ու մանղալը .....	169
Խաղիկներ .....	170
Չորքի նշխարատուն .....	170

**Նամակահ**

Նամակ պրոֆ. Է.Բ.Աղայանին .....	175
Հայկ ՍՄՀ լուսավորության մինիստրություն, ծրագրամեթոդական բաժին, ընկ. Տ.Էլոյանին .....	177
Բանաստեղծ Տիգրան Գրիգորյանին ի Գորիս .....	179
Գորիս, Բանաստեղծին.....	180
«Այունյաց երկիր» թերթի խմբագիր Ս.Լ.Ալեքսանյանին.....	180
Նամակ խմբագրությանը (մի դասագրքի թարգմանության առիթով).....	180
Նամակ Դավանի «Գանձասար» ճամբարից .....	183
Նամակ խմբագրությանը.....	183
Նամակ խմբագրությանը.....	183
Նամակ Լեռնածորից .....	183
Նամակ գյուղական ուսուցչին (Մարգո Դուկասյանի նամակը Ռ.Գրիգորյանին) .....	184

**«Այունյաց երկիր» թերթի բարեկամ**

Ռոբերտ Էջանանցու հոդվածները՝ հրատարակված մարզային թերթում («Սյունիք», «Այունյաց աշխարհ», «Այունյաց երկիր») .....	188
Մեր տարեգիր, սեր լրագիր, իմ թերթ .....	190

**Ընթացիկ**

Իմ լուսավոր աստղը (Աշխեն Գրիգորյան).....	192
Ռոբերտ Գրիգորյանի նամակն իր դասերը՝ Աշխենին .....	193
Ռոբերտ Գրիգորյանի բանաստեղծությունը՝ նվիրված իր թոռնիկ Հայկին .....	193
...Ինչպիսի՞ գորովանքով էր վերաբերվում տիկնոջն ու դուստրերին (Վահրամ Օրբելյան) .....	194
Ծովինար Գրիգորյան. Ռոբերտ Գրիգորյանի ավագ դուստրը եւ գործը շարունակողը .....	198

**Այունյաց Երկիր**

Հասցե՝ Կապան,  
Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 45 90 47:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՎԵԼ ԱԼԵՋՍՆԵՅԱՆ**  
Լրագրողներ՝  
**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**  
**ՍՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
Չեւավորող՝  
**ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ**  
Օպերատորներ՝  
**ՆՈՒՐԱՐ ԴԱՎԹՅԱՆ**  
**ՄԵՐԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**  
Սրբագրիչ՝  
**ՍԼԱՎԻԿ ՆԱՎԱՍՏՐԱՅԱՆ**

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):  
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:  
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500,000 ՀՀ դրամ:  
Ծավալը՝ 25 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 650:  
Ստորագրված է տպագրության 20.10.2016թ.:

## Ռոբերտ Գրիգորյանի մասին

### Ոնց անենք, որ կիսադ չմնա Էջանացու կյանքի գործը...



#### ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ

«Մխիթար Սեբաստացի»  
կրթահամալիրի տնօրեն

Չե՞մ նեղացնում՝ ասելով, որ Լեռնաձորը հայտնաբերել-նշանավոր է դարձրել, պահում է իմ հիշողություններում Ռոբերտ Գրիգորյան մանկավարժ-գործիչը՝ իր ստեղծած համով-հոտով-գույնով-ծայնով՝ միով բանիվ՝ նկարագրով, որ եզակի է մեզանում, ցավոք, չես շփոթի... Մեզ միացրել, հարազատ է պահել հենց մանկավարժությունը, որքան էլ տարբեր, իմը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր մայրաքաղաքային հսկան, ստեղծված որպես փորձարարական-հետազոտական միավորում մեր հավաքանու հեղինակած կրթական ծրագրերի մշակման, կազմակերպման ու տարածման համար, իրենը՝ գյուղական գողտրիկ, մի տեսակ՝ բանավոր, բայց անվանի այնքան, որ ես՝ իմ հանրապետության լուսավորության նախարար աշխատած շրջանում, ես՝ մինչ այդ, ես՝ դրանից հետո ես իմ ընկերների հետ այցելում էի Լեռնաձորի դպրոց, ակնածանքով ու մտավախությամբ, որ հանկարծ չդադարի-բեզարի-բրախի. ախր, անհատկության դրոշմն էր կրում, իսկ ես հո գիտեի՝ այդպիսի խաչի ծանրությունը:

Վերջին անգամ մենք հանդիպեցինք. բացեք իմ բլոգը, բլոգապատում օրագիրն ու վավեր կարդացեք՝ 2015թ. հոկտեմբերին. «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբով Կապանով՝ Բասուտա-Խուստուփ-Ծավի՝ հավեսի աշխարհով շրջագայության էինք համերգներով ու խոստումով՝ Խուստուփի զարմանալի գագաթը՝ որպես ամենահիշարժան պարտք ու նվեր, մատուցելու հետազոտող-վաստակով մեծ խումբ ուսուցիչների: Ու ժամանակ գտանք Լեռնաձոր՝ մեր հարգելի ճանաչված Ուսուցչին իր գյուղում, դպրոցում այցելելու-մեծարելու-լսելու... Իսկ Ռոբերտն ի՞նչ արեց. այդ հանդիպումից մի քանի ամիս հետո հեռացավ-հավերժացավ, մեր հիշողություններում միայն: Գործն իր՝ Լեռնաձորի դպրոցը, որպես այլընտրանք պաշտոնակազմին, կներեք, գյուղեր ավերող, ուրիշ հայրենիք ու արհեստական միջավայր

պարտադրող, անունով-հասցեով միայն տարբեր, այս սկսա կաղապարից թռած հարյուրավորներից, կիսա՞տ թողեց, մի տեսակ անավարտ:

**II** *Անկատար մնաց եւ իր խոստումները՝ 2016-ի հոկտեմբերին Կապուտջուղի գագաթն իր ուղեկցությամբ բարձրանալու, այդ բարձունքից տեսնելու իր նվիրական աշխարհը եւ կրթամշակութային-լուսավորչական իր հայրենաճանաչողությունից ստեղծվող, գյուղը որպես ստնտու պահող դպրոցը...*

Լավ, Կապուտջուղը Ռոբերտի հողվածներով-ուղեցույցներով, ասենք, նվաճեցինք, առանց իր եզակիության, իր սիրելի աղջիկների հետ... այդպիսի պատգամ թողե՞լ է Էջանացին իր աղջիկներին: Լեռնաձորում նրա գործը շարունակում են նրա սիրելի աղջիկները... Վստահեցնում են ձեզ, որ այդպիսի գյուղական դպրոցի պատվերի հանրային պահանջ Չայաստանն ունի. ասել է թե՛ Էջանացու, նրա գործի հարզը իմացողների (մեկը՝ ես ու իմ կրթահամալիրը) աջակցությունը կունենաք, Ռոբերտի աղջիկներ:

19.07.2016թ.



|| **Խոսք Ռոբերտ Գրիգորյանի մասին**

**Նա Արիստոփանեսի  
մերօրյա շառավիղն  
էր**



**ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Սյունիք համայնքի դպրոցի տնօրեն

**Մ**արդ, անհատականություն,  
քաղաքացի, անփոխարինելի  
հայր, ավագ գործընկեր, օրի-  
նակելի ուսուցիչ...

Բարի ու ծաղկատար դեմքով, ժպտուն  
աչքերով, խրոխտ, տիրական ծայնով,  
հարուստ ու տեղական կոլորիտով  
համեմված բառապաշարով Ռոբերտ  
Էջանանցուն ճանաչում էին բոլորը՝  
մեծերն ու փոքրերը: Նրա յուրահա-  
տուկ կերպարը պատկառանք էր  
առաջացնում: Փոքրերը նրան բնու-  
թագրում էին «մեծ պապիկ», «բարի  
պապիկ», ով սիրում էր մանուկներին  
կոնֆետ ու մաստակ նվիրել, իսկ տա-  
րեցները՝ «մեծ մարդ», «քայլող հան-  
րագիտարան», «ժողովրդական մարդ»,  
ունից սովորելու, ինքնահաստատվելու,  
հարաբերվելու, փորձ ձեռք բերելու եւ  
իմաստնանալու հմտություններ եւ յու-  
րացնում:

Բայց նա, առաջին հերթին իսկական  
հայրենասեր էր՝ նվիրված իր հո-  
ղին, ջրին, լեռներին ու ձորերին: Զայ-  
րեսահրության մասին խոսելիս ու  
դասավանդելիս միշտ ձգտում էր արմա-  
տավորել այն գաղափարը, որ հայրե-  
նիքը սկսվում է քո տնից, քո բակից, քո  
գյուղից... Առանց հայրենիք չկա երջան-  
կություն... Սիս նման գաղափարով էլ  
կյանքում առաջնորդվել է նա՝ սիրելով  
իր տունը, իր բակը, իր գյուղն ու իր  
դպրոցը: Զիրավի, առանց գյուղի ու  
առանց գյուղական դպրոցի հարեցիք  
գոյություն ունենալ չի կարող: Ուստի  
հպարտորեն ու պատվով կրեց ինքն  
իրեն շնորհած «գյուղական ուսուցիչ»  
կոչումը:

|| *Բառերը բավական չեն բնու-  
թագրելու մարդուն, ով իր մեջ  
մի ողջ տիեզերք էր ամփո-  
փում: Նրա հետ կարող էիր  
ժամերով զրուցել պատմու-  
թյունից, գրականությունից  
(այդ թվում հարեւան ժողո-  
վորդների), լեզվաբանությու-  
նից, բարբառագիտությու-  
նից, աշխարհագրությունից,  
ազգագրությունից եւ բնական  
գիտության բոլոր բնագավառ-  
ներից:*



Զիացնումք ու պատկառանք էի զգում  
այդ խոհեմ մարդու նկատմամբ: Զատ-  
կապես զարմացել էի հայրենի տարա-

ծաշրջանի պատմության վերաբերյալ  
նրա ունեցած պատմագիտական  
գիտելիքներով, հրատարակված հոդ-  
վածներով: Երբ ինձ փոխանցեց իր  
հրապարակումների փաթեթը՝ կես-կա-  
տակ, կես-լուրջ ասաց. «Ջարմանալի  
մարդիկ են եւ ամսագրերի խմբագիրնե-  
րը, երբ ռուսերեն հոդվածս ուղարկեցի  
տպագրության, զանգեցին եւ հարց-  
րին՝ արդյո՞ք ռուսերենի ուսուցիչ եմ,  
պատասխանեցի՝ այո, տպագրեցին  
եւ գրեցին Լեռնաձորի միջոց. դպրոցի  
ռուսաց լեզվի ուսուցիչ Ռ. Գրիգորյան:  
Զետո ուղարկեցի մաթեմատիկայի  
վերաբերյալ. տպագրեցին անունս ու  
պաշտոնս, որպես մաթեմատիկայի  
ուսուցիչ, պատմության հոդվածներս ու-  
ղարկելիս ներկայացա պատմության ու-  
սուցիչ: Զետաքրքիր է՝ ինչո՞ւ մի անգամ  
հարց չտվեցին՝ եւ մարդն ի՞նչ մասնա-  
գետ է, ո՞ր առարկան է դասավանդում»:

|| *Ջարմանալի, ֆենոմենալ  
հիշողություն ուներ: Գիտեր  
տարածաշրջանի գրեթե բոլոր  
տոհմերին, անծանոթի հետ  
չփվելիս առաջին հարցը տոհ-  
մաբանությանն էր ուղղում ու  
զարմացնում տոհմի նշանա-  
վոր անձանց, վերջիններիս  
գործունեության իր իմացու-  
թյամբ:*

Ուներ յուրահատուկ մի արժա-  
նիք՝ մարդուն մեծարելու եւ լավը  
ներկայացնելու, թմբկահարելու,  
առաքինությունները վեր հանելու մեծ  
հմտություն ու կարողություն: Գիտեր  
հարաբերվել տարբեր տարիքի մարդ-  
կանց հետ, եւ յուրաքանչյուրի հետ  
իրեն դրսևորում էր ինչպես հավասա-  
րը հավասարին՝ կատակի ժամանակ  
կատակում էր, ծիծաղելիս անկեղծ  
ծիծաղում, աշխատանքում էլ՝ նվիրված,  
պատասխանատու, պահանջկոտ...  
Այդքանով հանդերձ հասարակությանը  
հպարտորեն ներկայանում էր որպես  
գյուղական ուսուցիչ:  
Սիրում էր երեխաներին, ապրում  
նրանց աշխարհում, ուրախանում  
նրանց ուրախությամբ ու տխրում  
տխրությամբ: Բազմիցս հրավիրելով  
դպրոց՝ հպարտանում էր, որ իր սաների  
համար այն ոչ միայն կրթօջախ է, այլ  
նաեւ կյանքի դպրոց, ուր ձեռք են բե-  
րում կյանքի հմտություններ: Դպրոցի

## Ռոբերտ Գրիգորյանի մասին

գույքը համարում էր հանրային սեփականություն՝ թույլ տալիս աշակերտին իր հետ տուն տանել, օգտագործել եւ վերադարձնել: Շեշտադրում էր, որ երեխային պետք է վստահել, պատասխանատվություն դաստիարակել: Դպրոցի մուտքին կարդում ես. «Բաց է 24 ժամ»: Պատահական չէ, որ կրթության ոլորտում սկսված բարեփոխումների ժամանակ դպրոցը ԿԳ նախարարության եւ միջազգային կազմակերպությունների կողմից 2009թ. Սյունիքի մարզում փորձարկվող «Երեխայակենտրոն լավագույն դպրոց» ծրագրի շրջանակներում (գյուղական համայնքի դպրոցներ) վաստակեց առաջին մրցանակը: Ռոբերտ Գրիգորյանը կրթության, դաստիարակության հիմքում առաջնահերթությունը տալիս էր երեխայի շահին: Հաճախ դպրոցավարության մեջ հոսանքին հակառակ էր գնում, տարբեր կոնֆերանսներում ունեցած ելույթներում հիմնավորումներով դեմ արտահայտվում գործող հրահանգներին: Մի անգամ ուսուցչի աշխատավարձի մասին խոսելիս ասաց. «Ես աշխատավարձս տուն չեմ տանում, որովհետեւ այնքան խնդիրներ ունեմ դպրոցում լուծելու, ես պետք է հետաքրքրություններ մոզոցեմ, որպեսզի սաճա չուզենա տուն գնալ, իսկ բյուջե՞ն չի հերիքում ...»: Իսկապես, դպրոցը նրա համար հարազատ տուն էր, ուր այցելության ժամանակ զգում էիր քեզ առողջ ու անկեղծ միջավայրում՝ պարուրված հանգստությամբ, ջերմությամբ ու հոգատարությամբ:

Մանկավարժական գործունեության ողջ ընթացքում Ռոբերտ Գրիգորյանը արժեւորեց գյուղական ուսուցչի դերը: Բացառիկ մարդ էր, ով իր բոլոր ելույթներում շեշտադրում էր գյուղական ուսուցչին արժեւորելն ու գնահատելը: Մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության առաքելության մեջ առանձնացնելով գյուղական ուսուցչին՝ հիմնավորում էր նրա դերը գյուղապահպանության մեջ եւ գտնում, որ նրա կշիռն ավելի ծանր պետք է լինի նժարին: Ռոբերտ Գրիգորյանը դեմ էր արտահայտվում նաեւ գյուղական ուսուցչի եւ քաղաքային ուսուցչի աշխատավարձերի տարբերությանը: Ձեկուցումներ էր պատրաստել եւ առաջարկում էր իր դպրոցում հրավիրել կոնֆերանս, ուր կքննարկվեր երկկոմպ-

լեկտ եւ եռակոմպլեկտ դասարանների խնդիրը՝ բարձրացնելով այն հարցը, որ եթե ուսուցիչը վարձատրվում է 45 րոպե դասավանդելու համար, ապա ի՞նչ տարբերություն երկու, թե՛ 32 աշակերտի է դասավանդում, չէ՞ որ այդ նույն ժամանակահատվածում գտնվելով լսարանում՝ նա կատարում է իր առաքելությունը: Փաստում էր, որ ուսուցչի ձեռքերում է գտնվում պետության ապագան, եւ պետությունը պետք է արժեւորի, գնահատի նրան:


Որպես ավագ գործընկեր՝ հաճախ եմ լսել նրա խորհուրդները, առաջարկությունները, ընդունել դիտողությունները: Ամեն անգամ նրան հանդիպելիս ականայից հիշում էի Արիստոտելի խոսքերը. «Ուսուցչի կոչումն առավել պատվաբեր է, քան ծնողինը, քանզի ծնողները միայն կյանք են պարգևում, իսկ ուսուցիչը շնորհում է լավ ապրելու արվեստը» ու համոզվում՝ նա Արիստոտելի մեթոդը շատավիճ էր...

## Ժողովուրդներին ազգ դարձնող մարդկային դասին էր պատկանում



**ՏԻՎՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
Բանաստեղծ

Ռոբերտ Էջանցու անկեղծ բարեկամությունը շատ կարճ ժամանակահատված վայելելով՝ հասցրեցի նկատել, որ այն ոգեղեն անձնավորությունների տեսակից է նա, ովքեր ժողովուրդներին ազգ դարձնող մարդկային դասին են պատկանում...



Ստույգ Ռոբերտ Գրիգորյանի մասին

# Նրա հետ շփումից դրական լիցքեր էի սպանում



## ԼԵՆԻՆԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մեծ պատիվ է պատասխանատվություն է խոսք ասել, թեկուզ համառոտ, այնպիսի մեծատաղանդ անձնավորության մասին, ինչպիսին Ռոբերտ Քրիստափորի Գրիգորյանն է, ույուն ինքը՝ Ռոբերտ Էջանանցին: Մտավորականներ շատ ենք հանդիպում, ովքեր պրոֆեսիոնալ մակարդակով ներկայացնում են այն բնագավառը, որտեղ աշխատում են, սակայն հազվադեպ են պատահում այնպիսիք կամ մտավորական մանկավարժներ, ովքեր բացառիկ խորիմացությամբ

տիրապետում են ոչ միայն այն բնագավառին կամ մասնագիտությանը, որին նվիրվել են ի սկզբանե, այլ նաև գիտական խոր մակարդակով կարող են խոսք ասել կամ գիրք ու հոդված գրել նաև շատ այլ թեմաներով և ուղղություններով: Այդպիսի եզակի մտավորականների թվին էր պատկանում Ռոբերտ Էջանանցին:

Երիտասարդ տարիներին սկսելով իր մանկավարժական գործունեությունը՝ նա ի սկզբանե ընտրեց գյուղական դպրոցը և մինչև կյանքի վերջը մնաց անդամական իր ընտրությանը: Աշխատելով որպես մաթեմատիկայի ուսուցիչ, այնուհետև փոխտնօրեն և երկար տարիներ տնօրեն, միաժամանակ ու մշտապես դասավանդելով մաթեմատիկա, Էջանանցին կարողացավ մանկավարժական նորարարություններ մտցնել թե՛ մաթեմատիկայի դասավանդման բնագավառում և թե՛ դպրոցի կառավարման ու դպրոցավարության բնագավառում: Էջանանցու մանկավարժական փորձը բազմիցս լուսաբանվել ու ներկայացվել է հանրապետական և տեղական մամուլով. խորհրդային տարիներին՝ լուսավորության նախարարության ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտում, իսկ վերջին տասնամյակներում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտում: Ինքը՝ Էջանանցին, տարբեր տարիներին կազմել և հրատարակել է մանկավարժությանը և մաթեմատիկայի դասավանդմանը նվիրված մի շարք մեթոդամանկավարժական աշխատանքներ (բրոշյուրներ) և հոդվածներ, որոնք արդիական են նաև մեր օրերում: Սակայն, եթե փորձենք Էջանանցուն ներկայացնել միայն մանկավարժական գործունեությամբ, ապա դա կլինի խիստ սահմանափակ և ոչ արդարացի: Օժտված լինելով բացառիկ ընդունակություններով և բացառիկ աշխատասիրությամբ՝ Էջանանցին կարողացավ խոր ուսումնասիրություններ կատարել հայոց պատմության, մասնավորապես՝ Սյունիքի պատմության, ազգագրության, բանասիրության, բանախոսության, հայրենի բնաշխարհի իմացության և այլ ոլորտներում: Իր ուսումնասիրությունների համար հանդիպումներ էր ունենում տարբեր բնագավառի գիտնականների, արվես-

տագետների, գրողների, բանաստեղծների և տարբեր բնակավայրերում ապրող տարեց մարդկանց հետ: Նա շատ անգամ է եղել նաև Հայաստանի ազգային արխիվում և այնտեղից իր ուսումնասիրությունների համար անհրաժեշտ նյութեր քաղել:


Ռոբերտ Էջանանցին այն եզակի անհատականությունն էր, ով ապրած ընդամենը 69 տարվա ընթացքում դարձավ շուրջ 600 գիտական, գիտամեթոդական, գիտահանրամատչելի և հրատարակատեսական հոդվածների հեղինակ:

Դրանք այժմ են ընկնում արդիականությամբ, բացառիկ խորիմացությամբ և հետաքրքրությամբ: Կարծում եմ, որ կգտնվի այն հեղինակը, ով հանձն կառնի առանձին հատորով կամ հատորներով ներկայացնել Ռոբերտ Էջանանցի գիտնական-մանկավարժ-մտավորականի կյանքն ու գործունեությունը և աշխատությունների ընտրամից: Այս ուղղությամբ թերեւս առաջին քայլը պետք է համարել «Այունյաց Երկիր» թերթի սույն համարը, որի համար իմ խորին շնորհակալությունն են հայտնում խմբագրակազմին՝ նման բացառիկ նախաձեռնության համար: Էջանանցին յուրահատուկ անհատականություն էր նաև որպես մարդ ու իր երկրի քաղաքացի: Յուրաքանչյուր ոք նրա հետ շփումից կարծես ստանում էր յուրատեսակ դրական լիցք և հույզեր: Նա կարողանում էր իր անմիջականությամբ և պարզամտությամբ շփվել բոլորի հետ՝ լինի դա դեկավար անձ, մտավորական, արվեստագետ, բանվոր կամ գյուղացի: Էջանանցի մեծությունը հարգված էր իր հարազատ բնակավայրում, Սյունյաց աշխարհում և ամենուր: Կարծում եմ՝ մեծ բախտ էր լինել ժամանակակիցը Ռոբերտ Էջանանցու և շփվել նրա հետ, որին արժանացել ենք բոլորս: Էջանանցին իր՝ համեմատաբար կարճ ապրած տարիներում ստեղծեց այնքան, որ հիշվելու է շատ երկար: Էջանանցին անմահ է:



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

### Նա գիտելիքներ էր շաղ տալիս



#### ԿԱՍՏ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

«Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամ. թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ

**Ռ**ղույն, Կապանատան հին թատրոնի իմ բարեկամ, - ահա այսպես թատրոն մտավ իրական թատրոնը, հասարակ թվացող կեցվածքով, լուրջ, արտիստիկ ոճով, իր հող ու ջրի ակունքները շալակին մտքերի շտեմարան - մարդենի կաճառը: Ինձ համար Էջանանցի մտավորականն ուսուցիչ էր նախառաջ վաստակավոր, ժողովրդական ու հանրաճանաչ: Նա գիտելիքներ էր շաղ տալիս, նա ուսուցում էր շաղ տալիս շատ հստակ համոզմունքով: Եվ նրա արտիստիկ ոճը համեմունք էր, գայթակղիչ համեմունք՝ այդ համոզմունքները տեղ հասցնելու համար:

**||** *Ասում են՝ անփոխարինելի մարդ չկա... Ես ժխտում եմ: Կան անհատականություններ, որոնց բացակայությունը չափազանց աղքատացնում է հասարակական կյանքը, սնանկացնում քո օրը, եւ որոշակի պահերի քեզ միայնակ ես զգում:*

Արտաքին գործերի նախարարությունից հիսուն դիվանագետ ճանաչողական այցով Այունիքի մարզում պիտի լինեին: Դա 2010 թվականին էր:

Եվ քանի որ այդ պատվիրակության մեջ էր իմ հարսը՝ Աննա Ավետիսյանը, ով նախաձեռնողն էր միջոցառման, կանխավ քննարկեց ինձ հետ, թե տեղում ու՞մ հետ համագործակցել, որպես ուղեկցող էքսկուրսավար, ով ոչ միայն տեղեկացված լինի, այլ նաեւ տպավորություն թողնի: Միանգամից առաջարկեցի Ռոբերտ Էջանանցու թեկնածությունը:

Կայացավ պատասխանատու միջոցառումը, որին մի ուրույն շուք տվեց պարթեալապետական, երեխայի պես հնազանդ, մարդկային շփումների գլուխգործոցը, չեմ վախենում ասել՝ գիտնական սյունեցին:

Երբ վերջերս եղա Պրահայում՝ Հայաստանի դեսպանատանը, դեսպան Տիգրան Սեյրանյանը հաճելիորեն հիշեց այդ հանդիպումը Կահանավանքում եւ անթաքույց փաստարկեց.

- Ինձ համար Կապանն այդ հետաքրքիր տեսակն է, Ռոբերտ Էջանանցի հայրենագետն ու հայրենասերը, ուսուցիչն ու

դերասանը: Կապանում ես հանդիպեցի մեծ մտավորականի:

Կինոռեժիսոր Հրանտ Հակոբյանը ֆիլմ նկարահանելու նպատակով եկավ Կապան, հանդիպեց ինձ եւ ասաց, որ նպատակ ունի կոլորիտով ու հետաքրքիր մարդու հետ հանդիպել...

Դարձյալ, համաձայնեք, անտարակուսելի առաջարկ պետք է լիներ՝ Ռոբերտ Էջանանցի:

Հետաքրքրվեցի, թե որտե՞ղ է Ռ. Գրիգորյանը, հայտնեցին, որ հուլիսի վերջում է Լեռնաձորում, ինքն է վարում: Ես ռեժիսորին փոքր-ինչ պատմեցի նրա հաղորդակցման ոճի մասին, իհարկե, անպայման շեշտելով, որ ամեն ինչ նրա մոտ ինքնատիպ է, հասարակ ու նախկին թվացող, ոչ սովորական, կենցաղավարական...

Հրանտ Հակոբյանն անմիջապես առաջարկեց գնալ եւ մասնակցել այդ արարողությանը եւ հանպատաստից նյութ ստեղծել:

Այդպես էլ եղավ: Առանց դերաբաշխման՝ դերակատարում...

- Վիրտուոզ է,- ակամջիս մեջ շշմաջ Հրանտը, - վարպետ է... ինձ չխանգարես, - ու գործի անցավ:

Իջանք դպրոց, ինչպես երջանակահիշատակն էր սիրում ասել, գյուղական դպրոց...

- Սա համալիր է... այո, այո, համալիր... Երբ դպրոցի թանգարանում կինոյի գլխավոր հերոսը պատասխանում էր ռեժիսորի հարցերին, այսպես ստացվեց.

- Պարոն Գրիգորյան, դուք կապրեի՞ք Ամերիկայում:

Նա առիթնուղ քննադատի անկյունից խոսեց.

- Հա,հա, ես զարմանում եմ, թե ամերիկացին ինչպես է ապրում Ամերիկայում:

- «Հայրենիքս» խորագրով ֆիլմի պրեմիերան եղավ Երեւանում՝ «Մոսկվա» կինոթատրոնում:

Ռոբերտ Գրիգորյան գլխավոր դերակատարի վերը մշված նախադասությունից հանդիսատեսը ոտքի կանգնեց, բուռն ծափահարություններով ողողեց դասի իճը:

Հավերժ ու բուռն ծափահարություններ իմ ընկերոջը:



Սոսիալական Գրիգորյանի մասին

Մեր փարածաշրջանի ամենահզոր բանահավաքն էր



ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կապանի N1 հիմնական դպրոցի տնօրեն

Մարտի 8-ի ճրագալույցին գուժկանը բոթեց Ռոբերտ Էջանանցու մահը: Լուրը վայրկենապես թափառեց փողոցից փողոց, ներխուժեց տնից տուն եւ բուռբուռ արցունք կորզեց ծանոթ-անծանոթից: Ինչ են ասում... ինչ անծանոթ... Մի՞թե կգտնվի գեթ մեկը, որ չի ճանաչել քանքարավոր ընկերոջս, քայլող մանկավարժությանը, Մարդուն... Երեկոյան փորձեցի հիշատակախոսք գրել, բոլոր ջանքերս ի դերել անցան... Ողջ գիշեր տապակ-տապակ եղա... Ապարդյուն: Երբեք այդքան չէի խելճացել սպիտակ

թղթի առջեւ, գրիչս չէր հնազանդվում ու ոչ մի բառ չգրեց: Ուղեղումս խառնափնթոր էր: Հանգչել էր ուսանողական տարիների ընկերս, ով գիտակցական կյանքում մոմի պես առատ լույս է սփռել շուրջբոլորն ու հավվել... Միասին էինք ընդունվել եւ նույն տարում ավարտել Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) մանկավարժականը, ինքը՝ ֆիզմաթը, ես՝ բանասիրականը:

12 տարով մեծ էր ինձնից, ես՝ խոխա (իր սիրած բառն էր), ինքը՝ մանկավարժության անուն հանած «ոսկերիչ» այր-իմաստուն... Մի օր Ռոբերտ Էջանանցին տխուր-տխուր կանգնած էր բակում: Հարցրի՝ ի՞նչ է պատահել: Ասաց՝ մանկավարժության դասախոսը դուրս է արել դասից: Խնդմնդացի՝ ո՞վ կարող է քեզ համել դասից: Պատասխանեց.

- Լսարան մտավ մի «Կոմսոմոնիստական արավդա» ձեռքին ու դիմեց ուսանողներին՝ տեսե՛ք մաթեմատիկայի ինչ ուսուցիչ է աշխատում հեռավոր Լեռնաձոր գյուղում, ի՞նչ մեթոդներ է կիրառում, չէ, քեզ նման՝ մեծ մարդ ես դառել ու նոր-նոր եկել, ուսանող ես դարձել: Եվ մատնացույց է արել ինձ:

Ես էլ ոտքի կանգնեցի եւ ամոթխած, գլխիկոր ասացի.  
- Այդ հողվածը Ձեր խոնարհ ծառայի մասին է:  
Ու կատաղեց.  
- Տես է, մեծ մարդ է ու սուտ է խոսում, վեր կաց, դուրս արի: Հետո ճանաչեցին... ու կրակն ընկան, ո՞վ կհամարձակվեր դասախոսություն կարդալ Էջանանցու ներկայությամբ: Ելքը գտան III կուրսում: Ուղարկում էին դասախոսություն կարդալու ցածր կուրսերում: Ուսանողներից շատերն այդպես էլ գլխի չընկան՝ Ռոբերտը դասախոս է, թե՞ ուսանող: Դասախոսում էր ամեն ինչ, բացի անգլերեն: Ազնվագարն ու ճշմարտախոս էր: Ստուգողական աշխատանք էր հանձնարարված անգլերենից՝ 1 աշակերտական տետր: Վերջին նախադասությունը մարգարտահատ ձեռագրով գրել էր՝ «Ես անգլերեն չգիտեմ, այս աշխատանքը գրել է մեր ուսուցչուհի Թագուհի Կոստանդյանը»: Սակայն... բերանացի արտասանում էր «Ֆարսի բլբուլ անմահ Ֆիրդուսու» ստեղծագործություններից՝ բնագրով: Ապրում էինք նույն թաղամասում՝ հա-


րեւանությամբ: Մեկ էլ կզանգեր.  
- Մի պառավ եմ գտել, Անդրանիկի մասին պե՛նտրա գյուղում, գմանք խոսեցնենք, գրի առնեն: Փաստագրական պատմվածքը տպագրվեց «Կայծ» թերթում: Պատի թերթի անգլագական սիրահար էր: Բանասիրականի III հարկում պարբերաբար լույս էր ընծայում թերթեր՝ «Ղափանյան պընզըլ», «Ղափանյան խորագ» խորագրերով: Ինչպիսի՞ աշխատասիրություն... Մենք հպարտ էինք, որ մեր ռեկտորը լեգենդար Սերգեյ Սերգեյանն է: Թբիլիսիում պետք է մշվեր մեծանուն գիտնականի հորեյանը: Նյութեր էին խնդրել հորեյարից: Վերջինս ռեկտորատի նիստ էր հրավիրել եւ հարցրել՝ ի՞նչ ուղարկեմ: Դասախոսներից մեկը հուշել էր՝ «Լեռնաձորից մի ուսանող Ձեր մասին պատի թերթ է գրել»: Էջանանցուն հրավիրեցին ռեկտորի մոտ: Տեսնելով թերթը, պատվարժան կարկաժը (իր սիրած բառն է՝ մեծերի մասին) ապշել էր ու խնդրել.

- Ես չեմ կարող գնալ Թբիլիսի, դու ինձնից ավելի շատ գիտես իմ մասին, վերցրու թերթը եւ մեկնիր Վրաստանի մայրաքաղաք: Էջանանցին, իհարկե, չզնայ, բայց թերթը «գնաց»...  
- Մեր ուսուցչուհի Սուսան Օհանջանյանը պատի թերթ է կազմել «Հյուրըման», «Անտուան Մեյե» մեծն հայագետների մասին: Տեսնես՝ բերանիդ ջրերը կզնան: Ուրախանում ու հրճվում էր երեխայի նման, հպարտանում՝ յուրաքանչյուր աշակերտի եւ ուսուցչի հյուլեաչափ հաջողությունից: Մեծահոգի էր... Քանի՞ - քանիսին է օգնել գիրք գրել, խմբագրել ու սրբագրել... ու ոչ մի գրքի տիտղոսաթերթին չի հիշատակվել անունը: Մեր տարածաշրջանի ամենահզոր բանահավաքն էր, գիտեր բարբառ (ինձ երկրորդ մեկը հայտնի չէ, որ այդպես խորությամբ իմանա մեր բարբառը): Գիտնական էր՝ առանց կոչումների: Հողվածների, բանաստեղծությունների, պատմվածքների հեղինակ էր: Այդպես էլ չհասցրեց մեկտեղել ու ժողովածու կազմել (ավելի ստույգ՝ եռահատոր ժողովածու): Վաղմշակված ու ծյունագետ նախահայրերից եկած խոսքն ասվել է Էջանանցու մասին.  
- Ես մեռանիմ, դառնամ ի հող՝ Գիրս մնա հիշատակող ... Եղիցի լույս՝ գերեզմանիդ...



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

### Խոր ցավ էր ապրում դապարկվող գյուղերի համար



#### ԳՐԻՇԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Մեծագույն ցավ ու ավստսանք ապրեցի, երբ իմացա, որ այսօրյաց մանկավարժական ընտանիքից դեպի հավերժություն է հեռացել իմ սիրելի ընկեր եւ բարեկամ, մեծ մանկավարժ, տաղանդավոր մաթեմատիկոս, հայոց պատմության, իսկ առանձնապես՝ Սյունիքի պատմության գիտակ եւ հետազոտող, կապանյան բարբառի համն ու հոտը մեզ հաղորդող, մեր հայրենիքին նվիրված մեծ քաղաքացի Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին:

Իմ մանկավարժական գործունեության մեջ շատ բան այնպես չէր լինի, իսկ շատ բան գուցե պակաս լիներ, եթե չլիներ մեր ժամանակի

ամենատաղանդավոր, ամենակիրթ, ամենաբանիմաց ուսուցիչ, տնօրեն, կազմակերպիչ, մեծ մարդ Ռոբերտ Էջանանցու ազդեցությունը:

Դեռ խորհրդային տարիներից հանրապետության կրթության մարմինների ուշադրությանն էր արժանացել երիտասարդ ուսուցիչ-հետազոտողի մանկավարժական փորձը, եւ պատահական չէր, որ այդ տարիներին գործում էր Ռոբերտ Գրիգորյանի առաջավոր փորձի դպրոցը, որտեղ իրենց մանկավարժական, առարկայական հմտություններն են հարստացրել երիտասարդ շատ ուսուցիչներ: Էջանանցուն խորթ էր դպրոցը զանազան ենթակայությունների բաժանելու խնդիրը: Նա միայն մի ենթակայության կողմնակից էր եւ միշտ պնդում էր, որ դպրոցը համայնքին է եւ պետք է ունենա համայնքային ենթակայություն, եւ համայնքը չպետք է անմասն լինի դպրոցի հոգսերի եւ խնդիրների լուծման հարցում:

Էջանանցու դպրոցն աշակերտի տունն էր. նրա լսարանների, լաբորատորիաների, կաբինետների դռները երբեք չէին փակվում, եւ դասերից հետո միշտ այնտեղ էին տնօրենը, աշակերտը, ուսուցիչը: Այնտեղ համայնքի բնակիչների, աշակերտների, ուսուցիչների կողմից այլ վերաբերմունք էր դաստիարակվել դպրոցի, նրա գույքի եւ գործունեության նկատմամբ:

Ռոբերտ Գրիգորյանը ոչ միայն դպրոցն էր դարձրել գրավիչ, հետաքրքիր կրթական միջավայր, այլեւ կրթական նույնպիսի միջավայր էր դարձրել հայրենի բնաշխարհը:

Ո՞վ է հաշվել, թե քանի անգամ է տաղանդաշատ մանկավարժն իր աշակերտների հետ անքուն գիշերներ լուսացրել բնության գրկում, պատմական հուշարձանների, պարիսպների առջեւ, եկեղեցիների բակերում եւ հայրենի բարբառով ձոնել քառատողեր, իր սաների հետ հիացել աստղերի պարով, պատմել տարբեր վարկածներ տիեզերքի առաջացման մասին:

Պատմական վայրեր, բերդեր տանելով՝ աշակերտներին ոգեւորում ու վարակում էր Դավիթ Բենկի, Անդոկ իշխանի, Մխիթար սպարապետի, Նժդեհի, Անդրամանիկի եւ այլոց ու մերօրյա հերոսների ոգով:

Մեր հաճախակի հանդիպումների ժա-

մանակ (Ռոբերտ Գրիգորյանը միաժամանակ մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությանը կից ստեղծված դպրոցների տնօրենների խորհրդի նախագահն էր) քննարկում էինք կրթության ոլորտում կատարվող բարեփոխումների անհրաժեշտության եւ այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների ու ֆինանսական միջոցների օգտագործման անարդյունավետության մասին հարցեր:

Էջանանցուն չէր զոհացնում հանրապետությունում կատարվող դասագրքաստեղծ աշխատանքը: Նա չէր հաշտվում ստեղծված իրավիճակի հետ եւ ներկա գերբեռնված ուսումնական ծրագրերն ու հաստատվող դասագրքերը փոփոխության ենթարկելու առաջարկություններ էր անում անընդհատ: Մի առանձին ցավով էր խոսում կրթված մարդու սոցիալական պատվերի պակասի, ուսուցչի հեղինակության ու դերի ահագնացող կորստի մասին:

Մեր վերջին խոսակցության ժամանակ հանդիմանեց, թե ինչպես եմ ես համոզվածում բարեփոխում կոչվածի այն տարրը, երբ ավարտական քննությունների ժամանակ, զրոյացնելով առարկայի ուսուցչի դերը, առարկայից գիտելիքների գնահատումը վստահել են տնօրենին ու նրա յուրայիններին, այն էլ՝ տեքստի պատասխանները հրապարակելուց հետո: Պատասխանատվությունն ավելի կլինի, եթե այդ գրավորները ստուգվեն այլ կրթական հաստատությունում:

Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին, բարեփոխումների կողմնակից լինելով, ինքը հենց կրթական գործունեության մեծ բարեփոխիչ էր իր գործունեությամբ եւ հանդգնումը ուներ, որ բարեփոխումներ իրականացնելու համար առաջին հերթին պետք է բարեփոխել ուսուցչին, եւ վերապատրաստման աշխատանքը կազմակերպել այնպես, որ բարեփոխումների կարմիր թելն անցնի նրա սրտով: Այստեղ թերեւս լուրջ բացթողումներ ունեն մանկավարժներ պատրաստող բարձրագույն ուսումնական եւ ուսուցիչների որակավորման բարձրացման հարցերով զբաղվող հաստատությունները:

Ռոբերտ Գրիգորյան տնօրենը, ժողովրդավար լինելով, ողջունում էր դպրոցի ինքնակառավարումը, սակայն գոհ չէր



Ռոբերտ Գրիգորյանի մասին

դպրոցներում ստեղծված խորհուրդների գործունեությունից՝ հաճախ խորհուրդների գործունեության անարդյունավետությունը կապելով տնօրենի անձի ու անհատականության հետ: Տնօրենների եւ վերադաս մարմինների մեղքով է, որ խորհուրդները վերածվում են տնօրենին պաշտոնից հեռացնելու կամ նրան աթոռին հավերժ գամված պահելու միջոցի: Տնօրենների ընտրության ներկա կարգի փոփոխությունը, տնօրենին երկու ժամկետով ընտրելու գաղափարն արդիական են եւ տնօրենների աշխատանքի արդյունավետության զարգացման հիմնական միջոց:

Ըստ Էջանանցու՝ կառավարման լիազորված մարմինների խնդիրն է դպրոցին տալ լավ տնօրեն, իսկ այնուհետեւ չխանգարել նրա աշխատանքին: Տնօրենը պետք է լինի անկուսակցական, սակայն պետականությանը, հայրենիքին նվիրված անձ:

Ռոբերտ Գրիգորյան ուսուցիչը չէր հաշտվում նաեւ գյուղական դպրոցի ներկա վիճակի հետ: Իր բոլոր ելույթներում, զրույցներում անդրադառնում էր գյուղական դպրոցի վիճակի բարելավման խնդրին: Խոր ցավ էր ապրում դատարկվող գյուղերի համար, հայրենիքի ապագան կապում հենց իր՝ հայրենի Լեռնաձոր գյուղի ապագայի հետ: Գյուղական դպրոցի սակավ աշակերտներով դասարաններում պարապող ուսուցիչը կամա թե ակամա կորցնում է իր մասնագիտական որակները մրցակցության բացակայության պատճառով, իսկ ցածր բեռնվածության (հետեւապես եւ աշխատավարձի) պատճառով՝ ստիպված լինում զբաղվել այլ աշխատանքով:

Վերջին մեր հեռախոսազրույցի ժամանակ, երբ կատակով հարցրի, թե ինչպես է իրեն զգում տնօրենի պատուհնի թողած, ուսուցիչ աշխատող Էջանանցին, նույնպիսի կատակով էլ պատասխանեց՝ գյուղական ուսուցիչ են... Դրանով, ըստ էության, նա ասաց ամեն ինչ:

Էջանանցու մանկավարժական ժառանգության ուսումնասիրությունը, հրապարակումը եւ տարածումը ներկա մանկավարժական սերնդի խնդիրն է:

Լեզենդները չեն մեռնում...



ՍՈՒՍԱՆՆԱ ՕՅԱՆՋԱՆՅԱՆ

1975-93թթ. Լեռնաձորի դպրոցի ուսուցչուհի

Իմ մահվան օրը կիջնի լույթուն,  
Ծանր կնարի քաղաքի վրա,  
Ինչպես ամպ միջին կամ հին  
տրտմանություն,  
Կամ լուր աղետի թերթերում գրած:

Ե. Չարենց

Կորուսող մեծ է, ցավը՝ խոր, ասելիքը՝ անսպառ... Հուշերի կծիկը գլորվել ու բացվել է, սակայն ծայրը չեն գտնում. ամեն ինչ անորոշության մշուշով է պատվել: Ահա քանի օր է՝ փորձում են ինչ-որ բան գրել. չի ստացվում: Հիշեցի, որ հուշաթղթերիս մեջ Ձեր մասին բաներ ունեն գրած: Գտա: Այնտեղ ամեն ինչ ներկայով է: Որոշեցի այդպես էլ թողնել:



1993թ. սեպտեմբերի 13: Այսօր ընդմիշտ թողեցի Լեռնաձորի դպրոցը: Մի քանի ժամ առաջ ընկեր Գրիգորյանի հետ դպրոցում էի: Երկար զրուցեցինք: Ասացի, որ 18 տարի առաջ բացված Լեռնաձորյան էջը փակում են: Ջարմացած նայեց եւ ասաց.  
- Մեր դպրոցը չկարոտես. այդպես դժվար կլինի:

\* \* \*

Սիրում է աշակերտներին անմնացորդ: Անկրկնելի եւ օրինակելի ուսուցիչ է: Անմնացորդ իրեն նվիրել է գյուղական դպրոցին: Դասը քննարկում է ինքնատիպ՝ շատ քիչ խոսելով բացթողունների մասին: Գիտի ոգելորել: Երիտասարդ ուսուցիչների նկատմամբ ունի յուրահատուկ մոտեցում:

Ինքնատիպ է հանձնարարություններ տալիս եւ դիտողություն անելիս: Դրանք անակնկալների տեսք ունեն:

Մի անգամ դասամատյանի գրականության էջում մի թուղթ էր դրել՝ վրան գրված՝ զնահատականները... Ջարմանալի, չի ոգնեցնող զրուցուկներ է: Ինքը զարմանում է գրեթե ամեն ինչի վրա: Այս առումով նա շատ նման է Վ.Սարոյանին եւ նրա հերոսներին (ի դեպ, Սարոյանին հանդիպել է Քաջարում):

Պաշտում է Աճառյանին, ակնածանքով խոսում Մեյեի եւ Հյուբեյանի մասին: Ինքն ինձ հուշեց, որ դպրոցում ստեղծեցի «Հյուբեյան» լեզվի ակումբ: Սիրած պատմիչները Խորենացին եւ Ստ.Օրբելյանն են: Հրաշալի գիտի Ալիշանի «Սիսական»-ը:

Հրաշալի գիտի մեր շրջանի ժողովրդական բանահյուսությունը:

Գիտի մեր շրջանում տարածված գրեթե բոլոր դեղաբույսերի պատմությունը: Հավատում է բուսաբուժությանը:

Թեյ շատ է սիրում. ծաղիկներով: Ինքնաեռից կարող են օգտվել բոլորը:

Սիրում է օպերային եւ ժողովրդական երգեր: Դպրոցում կազմակերպված շրջանավարտների հանդիպման ժամանակ վալս պարեց եւ զարմացրեց բոլորիս: Անչափ զեղեցիկ ձեռագիր ունի: Հի սիրում ողբերգություններ սարքել: Հունորի մեծ զգացում ունի: Շատերը նրա կատակների «գոհն» են դարձել:

\* \* \*

2016թ. մարտի 9: Ձեզ ճանաչող կան գեթ մեկ անգամ հանդիպած մարդիկ սկսեցին մի նոր լեզենդ հյուսել...

## ■ Խոսք Ռոբերտ Գրիգորյանի մասին

Երբ խոսում ենք Ձեր մասին, ասելիքը չի ավարտվում, եւ օդում կախված է մնում մի հարց.  
 - Ո՞վ եք Դուք, Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցի. լեզվաբա՞ն, հնագե՞տ, բանահավա՞ք, մաթեմատիկո՞ւ, պատմաբա՞ն, լրագրո՞ղ, թե՞...  
 Ասում են՝ կորստի ցավը ժամանակի մեջ է բուժվում: Այս ցավը մի նոր լեզուն է սկիզբն է...  
 Լեզունդները չեն մեռնում...

արարվում է որոշակի հատկանիշներով. եթե իմաստուն, նա ամենաիմաստունն էր, եթե ճշմարիտ, նա ամենաճշմարիտն էր, եթե վայելչատես, նա ամենավայելչատեսն էր, եթե բարեհոգի, նա ամենաբարեհոգին էր, եթե առաքինի, նա ամենաառաքինին էր, եթե ազնվագարմ, նա ամենաազնվագարմն էր մարդկային ցանկացած խմբի մեջ: Մարդու համար հնարավոր բոլոր շնորհները կային նրա հոգում: Վերերկրային այլ ուղորտներում էր նրա միտքը պտտվում: Ուսուցիչը նա է, ում շնորհիվ գունավոր ու պայծառ է մանկությունից եկող աշխարհը, ով լուսավորում է մարդու ճանապարհներն ամբողջ կյանքի ընթացքում: Նա իր աշակերտների մեջ լույսի այն կանթեղն է, որ ճառագում է ու հավերժ պիտի ճառագի երկրային բոլոր ուղիներում: Ապրում է բոլորիս մեջ՝ ուր սերմանել է կատարյալ չափանիշներ: Անսահման սիրո հեղեղ մեր հոգիներում՝ ինչպես ինքն էր ասում: Շատ դասախոսներ կային համալսարանում, շատ մարդիկ՝ երկրային բազմազան ճանապարհներից, բայց նա մնաց իմ միակ Ուսուցիչը: Ուսուցիչ ամենայնի. լեզվի, գիտությունների, աշխարհի, մարդու... Նրա հետ կարելի էր գրուցել ամեն ինչի մասին. նա հունական գիտություններին էր նման, որոնց համար գիտությունները սահմանազատված չէին, բայց նորոյա գիտական խնդիրներին հավասարապես էր տեղյակ: Ու մարդկության այդ դարերի ճամփան իր միտքը կարող էր մի ակնթարթում անցնել: Լեզվի իր իմացությամբ նա լեզվաբան էր, պատմության դասեր տալիս՝ պատմաբան... նաև մաթեմատիկոս էր, փիլիսոփա... Մի օր ասաց. «Եթե ես Գերմանիայում ծնված լինեի, Նիցշե կդառնայի, բայց Հայաստանում գյուղական ուսուցիչ եմ»: Քանզի դժվար է հայոց լեռներով ու ձորերով պատված գյուղից դեպի աշխարհ ճամփան, նա աշխարհը Լեռնաձոր բերեց: Նրա հողվածները տպագրվում էին Գերմանիայում, նրան իբրև լավագույն ուսուցչի պատվում էին Ռուսաստանում, նրա նորարարությունների մասին գիտեին շատ երկրներում: Նա ստեղծեց իր դրախտավայր-աշխարհը, ուր ամեն ինչ մանկության ամարատ գույներով է պայծառ, ուր ամեն գրված բառ խորախորհուրդ իմաստներով է լեցուն, ուր ամեն գիրք մի զարմանահրաշ աշխարհի փեղկեր է

բացում, ուր ամեն մի պատկեր բազմաթիվ ուղղություններով է արտացոլվում, ուր ամեն մի անկյուն իր բազմաչափությունն է գծում, ուր ամեն մի առարկա բազմադարյա իր պատմությունն է գրում, ուր ամեն մի բույս, ծառ ու ծաղիկ իր հեքիաթն է պատմում... Քիչ է նրան ուսուցիչ կոչել: Նա Հայոց պատմությունն ու Սյունիքին՝ մասնավորապես, կատարելապես գիտեր: Գերմանացի հնագետը նրա ուղեկցությամբ պիտի Բաղաբերդի առեղծվածային արահետներով կապանա լեռների զագաթները բարձրանար: Նրա կազմած բարբառագիտական բառարանը աճառյանական բառարանների ընդգրկումն ուներ, հայոց լեզվի եւ գրաբարի իր գիտելիքներով ցանկացած լեզվաբանի կզարմացներ, համաշխարհային գրականության ու երկիր մոլորակի վրա ապրած իմաստունների աշխատությունների խորիմացությամբ ամենքին կլուսավորեր: Մաշտոցի եւ հայագիտական բազմաթիվ հարցերի մասին նրա գիտական տեսակետը բացառիկ էր: Հայաստանյան եւ այլ երկրների մամուլում տպագրված ու բազմաթիվ անտիպ նրա հողվածները գիտական շատ հարցերի ուղիներ կհարթեն, նրա ստեղծագործությունները բազում հոգիներ կջերմացնեն: Դպրոցի պատին «408 թվականին Մեսրոպ Մաշտոցը Գողթնից Բաղք է եկել այս վայրով» գրվածը վկան է նրա այդ առաքելության: Ռոբերտ Էջանանցին մեծ ուսուցիչ էր:  
 Նրա աճեցրած սերունդները երկար կապրեցնեն երկիրը: Նրանց հոգիներում վառ կմնան նրա վառած կանթեղները: Լուսավորչի էր նա նման, ով լույս է ճառագում ամենուր իր քայլած ուղիներում: Թող Գրիգորյան լուսավորչական նրա լույսը հավերժ ճառագի մարդուն տրված երկրային կյանքի ու մահվան աղջամուղջներից վեր տիեզերական տարածություններում...

## Ուսուցիչը



## ՀԵՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Ուսուցիչ լինելը կոչում է, ու քչերն են կոչված: Ռոբերտ Գրիգորյանն այդպիսի ուսուցիչ էր: Տաղանդավոր, անկրկնելի, անփոխարինելի, բացառիկ... Մարդն



«Կրթություն», N12 (725)  
 16.03.2016

Ռոբերտ Գրիգորյանի մասին

Գյուղական ուսուցչի խորհրդանիշ էր



ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Եթե բանաձեւելու լինենք Ռոբերտ Գրիգորյանի կենսագրությունը, ապա պետք է ասել, որ նա անցյալի, ներկայի եւ ապագայի մարդ էր, իսկ հանրապետությունում գյուղական ուսուցչի խորհրդանիշ էր: Նա եւ մանկավարժ էր, եւ մաթեմատիկոս, եւ պատմաբան, եւ լեզվաբան, եւ հնագետ, եւ ազգագրագետ, եւ լրագրող, մի խոսքով՝ բազմակողմանի զարգացած անձնավորություն: Հայրենասեր անհատականություն էր, եւ նրան ճանաչում էին որպես քաղաքական, հասարակական գործիչ, որպես մեծ մտավորական:

Էջանանցին հասարակության կողմից պահանջված անհատ էր, եւ պատահական չէր, որ հանրապետությունում ու Սյունիքի մարզում անցկացվող կարեւոր ու նշանակալի միջոցառումներում՝ համագումարներում, կոնֆերանսներում, պլենումներում նրա խոսքն ու միտքն իր տեղը, դերը եւ կշիռն ու հեղինակությունն ունեին: Ռոբերտն ապրում էր գյուղացու հոգսերով, գյուղի համար եւ որպես գյուղական մտավորականության ակնառու ներկայացուցիչ, կապող օղակ էր քաղաքի ու գյուղի, հանրապետության եւ մարզի ղեկավար մարմինների ու գյուղի ղեկավարության, գյուղի ներկայի եւ ապագայի միջեւ:

Միանգամայն օրինաչափ էր, որ գյուղի ու կրթական համակարգի հիմնախնդիրների, տեղ գտած թերությունների, նրանց լուծման ուղիների մասին հանրապետության եւ տարածքի ղեկավարների առջեւ հարցերը բարձրաձայնվում էին նրա միջոցով ու նրա կողմից: Ինչպես ռուս մեծ գրող Լեւ Տոլստոյն էր իր ամբողջ կյանքում պայքարել գյուղացիների իրավունքների համար, այնպես էլ Էջանանցին էր պայքարում գյուղի ամրապնդման, զարգացման, ժամանակի պահանջներին համապատասխան՝ գյուղացու ապրելակերպը բարելավելու համար: Ասածս հաստատելու համար բերեմ մեկ օրինակ: Ելնելով Կապանի շրջանի սակավաբնակ գյուղերի ծանր վիճակից, որտեղ փակման եզրին էին դպրոցներն ու մանկապարտեզներն առանձին-առանձին վերցրած, 1986 թ. շրջխորհրդի գործադիր կոմիտեն մշակեց ծրագիր՝ համաձայնեցնելով հանրապետության ղեկավար մարմինների հետ, առաջինը հանրապետությունում սկսեց գյուղերի մանկապարտեզների ու դպրոցների միացման գործընթացը: Շրջանում ծրագիրն առաջինը սկսեց իրագործել Լեռնաձոր գյուղը: Ավելորդ չէ նշել, որ այդ գործընթացն անհրաժեշտ մակարդակով կազմակերպելու ու ղեկավարելու համար Լեռնաձորի դպրոց-մանկապարտեզը պարզեատրվեց համակարգչով: Մարդու մեծության մասին տեսական գրույցների ընթացքում էջանանցու տված բնութագրումները հարստացնում էին գրուցակցին: ■



Աստված իմ, ինչ ցավ է մտերիմ, փաղանդավոր մարդու կորուստը...



ԿԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քաջարանի նախկին քաղաքապետ

Սիրո, բարության ի՞նչ անպառ պաշար կար քո մեջ: Հող ու երկրի, հայ մարդու, մեր ընդհանուր ընկերների բախտով ու ճակատագրով հրճվող ու տառապող էիր: Ամենատուրախ մարդն էիր, բայց ներքուստ կռիվ էիր տալիս անօրինականությունների, ոչ հայեցի մտածելակերպ ունեցողների, հայրենիքի հանդեպ անտարբերների հետ... Մանկան հայացքով էիր նայում աշխարհին ու մարդուն, քո սեփական աստղադիտակից հիանում, զարմանում, զարգացնում, թախծում, ոգեւորում ու ոգեւորվում, հպարտանում բոլորիս հաջողություններով...



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

Մեծ սրտի տեր էիր, բայց, ավաղ, չդիմացանք քո վեհությունն ու հզորությունը, ու ընդհատվեց շունչդ...

Միեւնույն է, դու ապրելու ես, շարունակվելու ես մեր մեջ, քանի որ քո բնածին տաղանդը մանկավարժության ոլորտում, հայրենի բնաշխարհի պատմության ինքնատիպ վերծանումը, բազում նորարարական ձեռնարկումները մեր իրականության մեջ արձանագրեցին փայլուն երիզներ, դու եղար ուսուցչի ոգու տարերքի կրողը, ինչ-որ չափով ուսուցիչն էլ որբացավ, ընկերների որբացան, աշակերտների որբացան, դու գրկեցիր մեզ հրաշալի ընտանիքի հոր, պապիկի, փայլուն ազգագրագետի, պատմաբանի, հայրենասերի, մոդեռն մանկավարժի, ուղևոր ու ծուծով մտավորականի, կատակողի, իմաստուն սեղանակցի շենացնող ներկայությունից... Սիրելի Էջանանցի, ես անվերջ փնտրելու եմ քեզ...

Ու որքան էլ փնտրենք քեզ մեր չքնաղ անցած օրերի հուշերում, քո թողած անկրկնելի ժառանգության մեջ՝ մաթեմատիկական հրաշալի լուծումներ, թեորենների ու աքսեռմների ստեղծագործական նորանոր բացահայտումներ, վիպակների, պատմվածքների, ժողովրդական բանահյուսության, հայրենի եզերքի պատմության վերաբերյալ քո տեսակետների, ուսումնասիրությունների տպագրված վկայություններում, ես քեզ չեմ գտնելու այնտեղ ամբողջությամբ ու շարունակելու եմ քեզ փնտրել: Ինչ հրաշալի էր, որ դու այդպես մտնում ու հետո տանում էիր մեզ այն ոլորտները, որտեղ մաքուր-մաքուր էինք մեզ զգում, որտեղ հպարտ էինք մեզ զգում, ուժեղ, անպարտելի... Հաճախ զարմանում էինք՝ այդ ե՞րբ էիր այդ անենը սովորում, որ հետո տալիս էիր, բաժանում, մատուցում, պարտադրում մեզ: Ու մեր ճանապարհը, առօրյան լցվում էր քեզնով, մեր ընթրիքը համենվում էր ավանդական պապենական մի թեւավոր խոսքի հմայքով, որ դու էիր պեղել, գտել...

Դու մեզ թողեցիր քո հոգու, ոգու, խոսքի, իմաստության, բարության, ազնվության, համեստության, բարոյականության, հայրենասիրության ծաղկուն ճանապարհներն ու արահետները:

## Եվ այդ մի Կապանա փան



### ԱՆՄԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Ատում եմ՝ մեծ լեռը մեծ ստվեր է ունենում, եւ այդ ստվերը հովատում էր, գրքի, գրչի ծարավ հովեկների, այդ ստվերը դառնում էր կանչող-ծգող գյուղաշխարհի, որի անդավաճան զավակը մնաց մինչեւ վերջ...

Ռոբերտն Էջանան ձորի լիիրավ գավակն էր, եւ նրան ճանաչում էին որպես Էջանանցի:

Հիշում եմ, երբ ես ու Ռոբերտը Շրվեմանցի միջնակարգ դպրոցի սան էինք, նա դասամիջոցներին առանձնանում էր դպրոցին հովանի անող տարիք ունեցող ծառի ստվերում ու համեստ, խոնարհ հայացքը հառում դպրոցի դիմացը շուրջապար բռնած բարձրաբերձ Սյունյաց սարերին ու խորհում, խորհում...

Դառը մանկություն, պատանեկություն է ունեցել. ծնողներից վաղ զրկված, տատի շահած-պահած թռնիկը, ով

մի օր կդառնար Սյունյաց աշխարհի տաղանդաշատ, ճանաչված զավակը: Էջանանցու ամեն մի բառը, համեղական հունորը սրտամոտ էին մարդկանց, նրա անմիջականությունը, հանպատրաստից կրակոտ ելույթները հիացնում, զարմացնում էին բոլորին:

Երբ աշխատանքի բերումով հանդիպում էինք կրթության բաժնում, առաջին խոսքն էր՝ Ալմարա, ի՞նչ ես գրել, հանիր, տեսնեմ: Նրա դիպուկ դիտողությունն օգնում էր, նոր եռանդ տալիս: Էջանանցու խորհրդով էր, որ գործուն մասնակցություն ունեցա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնած բարբառագիտական ատլասի կազմման աշխատանքներին, Էջանանցին պեղում, մոռացությունից փրկում էր մեր համեղական բարբառի կորսված բառերը, զբաղվում բանահավաքչական, հայրենագիտական աշխատանքներով:

Դժվար է նրա մասին խոսել անցյալով. նրա անսպասելի մահը ցնցեց բոլորին: Նա հեռացավ սիրելի Սյունյաց աշխարհից, սաներից, «Սյունյաց երկրից»:

«Սյունյաց երկիրը» կարոտով կսպասի Ռոբերտ Էջանանցու հերթական հոգվածաշարին, կսպասի ու կկարոտի...

Եվ Կապանա տան Այրը կմնա ապրողի սրտում, գյուղաշխարհի անդավաճան զավակը հավերժի ճամփան կշարունակի գյուղի գրկում...



Ստուֆ Ռոբերտ Գրիգորյանի մասին

Վերստին ու դարձյալ  
ափսոս



ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն, «Գրական Սյունիք» թերթի խմբագիր

Ցավով հաղորդեց խմբագիր Սամվել Ալեքսանյանը, եւ մեծ ափսոսանք ապրեցի Կապանա տան զավակ Ռոբերտ Էջանանցի-Գրիգորյանի մահվան պատճառով:  
«Չետքեր երկրի վրա» անտիպ գրքում Ռոբերտ Էջանանցուն նվիրված բնութագիր ունեւ... իր խոսքով՝ «Եվ ես՝ գյուղական մի համեստ ուսուցիչ», ինչը նրա մտքի անխոնջ թռչչի եւ ստեղծարար սեւեռումների ժամանակ լույսի հետագիծ է, որ բխում էր նրա հզոր վերացար-

կումների դարբնոցից՝ դեպի Լեռնաձորի դպրոցը-Առաջաձոր ուստանը:  
Չետքեր երկրի վրա... Ռոբերտ Գրիգորյանի ձիրքերի կողքին, դպրոցի տնօրենի նրա պաշտոնը խամրող առավելություն էր, գուցե եւ, չասել ավելորդություն՝ իր չափանիշներով կյանքը հետազոտողի ժամանակը խլած մեծ հոգս: Քանզի նրա մտավոր ներուժը մի ամբողջ դպրոց էր՝ ուսանելի եւ խորագիտակ, իր խոսքով՝ «մտքի ջրվեժումների» կենարար հոսք:

II *Նրա ձեռքբերումը՝ իր կենսաէներգետիկ դաշտում, իր աժդահա կերպարի եւ մտքի շնորհիվ, իր շուրջը գտնված պահերին իր պաշտելի խուստուկի, Աժդանական Կապուտջղղի կենարար ջիղերով լույս էր սփռում:*

Վերջին երկու տարիներին չհաջողվեց նրան հանդիպել: Նախատեսել էի նվիրել 2014-ին հրատարակված «Լեռներում» բանաստեղծությունների ժողովածուն՝ հանդերձ գրքում գետեղված «Կենսամատենագիտություն» հավելվածի, որտեղ Սյունիքի գրական պրոցեսի հանդեպ հետաքրքրված անձ էր Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցի անունը: Սրտաբուխ եւ մշտաբուխ է եղել, հակիրճ ու անհրաժեշտ էր նրան բնորոշ խոսքը: Հեռտորական արվեստի եւ խոսքի մշակույթի գտածո մտքերը, հանքաքարի տեղ մեջտեղ բերած կոփածո անկյունաքարերը, որ նա փորձառու որմնադիրի պես կառուցում էր ակամա հրապուրիչ ելույթները:

II *Ռոբերտ Էջանանցի՝ վերլուծող ու ստուգաբանող, Ռոբերտ Էջանանցի՝ մշտնջենական ու հայեցի, Ռոբերտ Էջանանցի՝ երջանկահիշատակ ու հիշատակելի...*

ՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՅԻՉ

Խ. ՄԵՐԱՐՅԱՆ

Լուսավորության մինիստրության տեսուչ

Որքան գեղեցիկ է Ղափանը: Որքան հարուստ է Ղափանը: Որքան լավ են ու բարի ղափանցիները: Լավին՝ վատ, վատին՝ լավ ասող, իրենց լեռների մեծ հպարտ ու վճռական ղափանցիները: Իսկ նրանց խոսքը լեռնային հազարերանգ ծաղիկների բույրն ու հմայքն ունի: Խուստուկի լեռն իր արբանյակ սարերի հետ միասին հազարամյակների ընթացքում ծուռումուռ աստիճաններ է հյուսել իր լանջին, եւ մարդիկ դարեր շարունակ այդ աստիճանների վրա բնակություն են հաստատել: Այժմ այդ բնակավայրերը գեղեցիկ գյուղեր են դարձել, եւ դրանցից մեկը, որը տեղավորված է Ղափանից Քաջարան ձգվող ոլորապտույտ ճանապարհից բարձրացող լեռան ծորաբերանին, կոչվում է Լեռնաձոր: Չենց այդ գյուղում էլ ապրում, աշխատում եւ ստեղծագործում է մեր օրերի իսկական մանկավարժ Ռոբերտ Գրիգորյանը (Էջանանցին):

Քիչ է ասել՝ ստեղծագործում է... Սիրում է, երբ իրեն գյուղական ուսուցիչ են անվանում, եւ իր գրածներից շատերն էլ ավարտում է «Մի գյուղական «ուսուցիչ» համեստ բառերով: Այո՝ գյուղական ուսուցիչ... Բնության պարզեւած գեղեցիկ արտաքինին, բարձր հասակին ու իրենց դաշտերի կակաչի մեծ ալ-վառվառն դեմքին կարծես մի նոր երանգ է տալիս



## Սոսի Ռոբերտ Գրիգորյանի մասին

Որա համով-հոտով ու ծանրակշիռ խոսքը: Հասարակական գործերը, որոնք համապատասխանում են ժամանակի պահանջներին և միևնույն ժամանակում լուրջ ազդեցություն են ունենում հասարակության վրա: Բայց նա երբեք այդ բարձունքից չի նայում մարդկանց, իջնում է, իջնում այնքան, որ թափանցի մարդու ներաշխարհը, գտնի այն էականն ու կարևորը, որ պետք է նրա հոգին ճանաչելու համար: Ճանաչում է մեծերին, ժամերով կարող է ունկնդրել նրանց խոսքն ու գրույցը, ասացվածքները, առակներն ու պատմվածքները, որպեսզի հետո մշակի ու հղկի: Նա սիրում է փոքրերին, որոնք փոխադարձաբար սիրում են հարգում են նրան ու նրա խոսքը: Իսկ իր խոսքը նա այնպես է կառուցում, որ ամեն օր երեխաներին իր մտքի թռիչքով ու երեւակայությամբ տանի գիտության գաղտնարանները, «շրջագայի» նրանց հետ եւ վերադառնա իրական աշխարհը՝ մաթեմատիկական հասկացություններով, երկրաչափական պատկերներով ու թվերով «շինություններ» կառուցելու:

Այդ «շինությունների» ամրությունը նա փորձում է հաստատում է ֆիզիկայից, կենսաբանությունից, գրականությունից, պատմությունից եւ գիտության այլ ճյուղերից բերված օրինակներով: Լեռնաձորի ծորերում կատարած չափումներով ու հաշվումներով:

Հմուտ ուսուցիչը թերեմները, խնդիրները, մաթեմատիկական հասկացությունները ապացուցում, լուծում, մեկնաբանում, բացատրում է այնպես, կարծես ոչ մի տեղ չի կարողացել եւ հենց նոր է միայն հայտնաբերում ու ստեղծագործում դրանք: Ընկ. Գրիգորյանը յուրահատուկ ձևով է բացատրում նյութը, հարթում, շտկում դասագրքերում եղած թերությունները, այն աշակերտի համար դարձնում բնականորեն ըմբռնելի վերամշակման է ենթարկում եւ նոր միայն հրամցնում: Եվ պատահական չէ, որ դժվար հասկանալի մաթեմատիկական շատ հարցեր նրա գրչի տակ դառնում են հետաքրքրաշարժ նովելներ ու պատմվածքներ, տպագրվում տեղական եւ հանրապետական մամուլում, արձագանք գտնում բազմազան ընթերցողների շրջա-

## Վասակի գնահատություն



նում: Դասերից դուրս եւ դասի ժամանակ ընկ. Գրիգորյանն աշակերտների համար եւ՝ ուսուցիչ է, եւ՝ ծնող, եւ՝ խաղընկեր: Դասի պրոցեսում նա այնպիսի իրադրություն է ստեղծում, որ երեխաներն անկաշկանդ, միմյանց հետ ազատ գրույցների, հարցադրումների միջոցով կարողանում են պարզաբանել ցանկացած հարց, օգնել ընկերոջը՝ հասկանալու անհասկանալին: Աշակերտի թույլ տված սխալը ուսուցչի եւ հենց երեխաների կողմից ուղղվում է սիրով ու հոգածությամբ, առանց ավելորդ հանդիմանության: Նա ապահովում է ժամանակակից դասին ներկայացվող բոլոր պահանջները եւ ի

հավելումն տալիս այն ամենը, ինչ յուրահատուկ է բազմակողմանի զարգացած ուսուցչին: Առանձնահատուկ տիպային կառուցվածք ունի դպրոցում ստեղծված մաթեմատիկական կարիքները, որը միաժամանակ կարելի է գեղազարդության, պատմության, գծագրության կարիքետ, կինոդահլիճ, գրադարան անվանվել, որից օգտվում են ոչ միայն աշակերտները, այլեւ հարեւան գյուղերի դպրոցների ուսուցիչները: Կարիքետներին կից գործող «XYZ» ակումբի համաբավն արդեն դուրս է եկել դպրոցի շրջանակներից եւ ոտք դրել հանրապետական եւ միութենական ասպարեզ: Ակումբն անմիջական եւ հեռակա

## Սոսիալական Գրիգորյանի մասին

կապերի մեջ է հանրապետության եւ Միության բազմաթիվ նշանավոր մարդկանց, ուսուցիչների եւ աշակերտների հետ: Ակունքի անդամները գրի են առնում գյուղի կենսափորձով հարուստ պայկիկներից ու տատիկներից լսած պատմությունները, նրանց կատարած ուշագրավ գործերը, որոնց հիման վրա ստեղծել են առակներ, ասացվածքներ, խնդիրներ:

Հարուստ է դպրոցում ընկ. Գրիգորյանի կողմից ստեղծված «Կրթական հնագիտական թանգարանը», հազարների է հասնում «Բարբառային բառերի բառարան»-ում զետեղված ու ստուգաբանված բառերի թիվը:

Բազմազբաղ ուսուցիչը հաճույքով է կատարում իրեն վստահված հասարակական հանձնարարությունները՝ «Սովետական դպրոց», «Պիոներ-կանչ», «Պղնձի համար» թերթերի թղթակցական պոստերի ղեկավար, պրոպագանդիստ, «Լեռնային արահետ» պատի թերթի խմբագիր, արտահաստիքային պիոներ-ջոկատավար եւ այլն:

Այսպիսին է առաջավոր փորձի դպրոցի ղեկավար, «Մի գյուղական ուսուցիչ» Ռոբերտ Գրիգորյանի այնքան հարուստ բնութագրից վերցված միայն մի փոքրիկ մասը: Նրա գործունեությունն արժանի է շատ ավելի հանգամանակից բնութագրի, որն ուսանելի կլինի շատ-շատերի համար:

06.05.1976

## Սիրտ փանող ճանապարհը

### ԼԵՎՈՆ ԿՆՆՅԱՆ

Արդեն երրորդ տարին է, որ շատ ուսուցիչներ լարված հետաքրքրությամբ հետեւում են այն դպրոցի աշխատանքներին, որի հասցեն է՝ Ղափանի շրջան, Լեռնաձոր

գյուղ: Այն գտնվում է Ղափան-Քաջարան մայրուղու վրա, հինավուրց Ձորքի լեռնալանջերի գրկում: Հնագույն ժամանակներից է հիշվում հայոց այդ ուստանը: Միջնադարում հայտնի էր Տիրնիք անվամբ, այնուհետեւ ստացավ Քրդիկանց անունը: Պահպանվում են եռանավ բազիլիկ հոյաշեն եկեղեցին, պատմական շատ հուշարձաններ: Հեղափոխական հիշարժան ավանդություններ ունի գյուղը:

...Հիմա գյուղը ճանաչում է ստացել իր անվանի երկրագործներով, մարդկանց ուրախություն պարզեղ դպրոցով: Այստեղ իր աշխատանքային երախայրիքն է սկսել ու շարունակում է նրա տնօրենը՝ լրագրող ու բանաստեղծ, բանահավաք ու ակնարկագիր, նորարար ուսուցիչ Ռոբերտ Գրիգորյանը (Էջանանցի գրական մականունով):

Քառասուն-քառասուներկուսին մոտ պարթեւ, հաղթանդամ, ժպտադեմ, առնչվող այրը լավ գրուցակից է, անմիջական, սրամիտ, միշտ իր տարերքի մեջ: Ուսուցչանոցում հանդիպեցի: Ղափանից էր վերադարձել: Նոր, ավելի բարձր պաշտոն էին առաջարկել: Մերժել էր, թե՛ իմ այսօրն ու վաղն այս դպրոցն է, դրանից մեծ ու պատվաբեր գործ չկա ինձ համար:

- Վերջերս առաջիկայով լսեցի ուսուցիչներից մեկի հարցադրումը, ասում է՝ «Ի՞նչ իրավունքներ ունեն ուսուցիչները»: Այդ հարցին ես այսպես կպատասխանեի, ուսուցիչն այնպիսի իրավունքներ ունի, ինչ ծնողը՝ զգուշորեն, նրբանկատ, ուրախ ու երջանիկ մեծացնել երեխաներին, գիտելիքներ տալ նրանց ու սովորել սովորեցնել: Առանց դրանց դպրոց չկա, ուսում չկա: Բարությանը ու համբերությանը, խղճով ու ոգեկոչմամբ ուսուցանել սաներին. սա է ուսուցչի միակ ճշմարիտ գործելակերպը, որ կարող է ծնվել մարդկային գեղեցիկ

հատկանիշների միագումարով: Մաթեմատիկայի դաս է վեցերորդում: Աշակերտները մախորդ՝ պատմության դասի տպավորության տակ են գրուցում են, վիճում Կուսուզովի, Բագրատիոնի, Նապոլեոնի մասին:

Մաթեմատիկայի ուսուցիչը, սակայն, չի հանդիմանում նրանց, նոր թեորենի ուսումնասիրությանը չի անցնում:

- Իսկ ինչպիսի՞ն էր կայսրը:

- Չար ու խորամանկ:

- Այո՞, բռնակալ էր, բայց սիրում էր մաթեմատիկան: Նրա բանակում նշանավոր շատ մաթեմատիկոսներ կային: Եթե հիշում եք, մաթեմատիկայից մի խնդիր կա, որ հենց Նապոլեոնի անունով է կոչվում:

Պատմության դասը շարունակվում է, շարունակվում մաթեմատիկացված:

- Իսկ եթե կտրականապես արգելի վեճերն ու սկսեի «Իմ մաթեմատիկան», չէր ստացվի: Նրանք ինձնից երես կդարձնեին, առարկան կկորցնեի իր հմայքը: Դպրոցի բաբախում երակը դասն է, որը միշտ պետք է լինի համարձակ որոնում, նորույթ եւ ծնվի հայտնագործություն, ինչ-որ մի անակնկալ, - ասում է մաթեմատիկայի ուսուցիչ Ռոբերտ Գրիգորյանը:

Նա գտնում է, որ ուսուցիչը հոգեկան բարեմասնություններ պետք է ունենա: Դա ժամանակի պահանջ է: Նա ոչ միայն իր «եսական ծայրին» պետք է ունկնդրի, այլև օժտված լինի մանկավարժական լավատեսությամբ, հիշի, որ դեռահասների եւ պատանիների սիրտը տանող ճանապարհն ուսուցչի առաջ ընդմիշտ փակ կմնա, եթե նրանց հետ ընդհանուր հետաքրքրություններ, հրապուրանքներ, ձգտումներ չունենա:

Առանց նրանց վրա ուղղակի, անմիջական դաստիարակչական ազդեցության, ուսուցիչը կկորցնի իր կոչման ամենակարեւոր հատկությունը՝ սաների հոգեւոր աշխարհը զգալու ընդունակությունը: Մանկավարժական իրավիճակը միտումնավորություն չունի եւ չպետք է ունենա, ուսուցիչը առկա եւ հեռակա մշտապես աշակերտների հետ է, նրանց գիտակցության եւ ենթագիտակցության մեջ: Թագուհի Կոստանյանը եւ էլմիրա Ավետիսյանը երիտասարդ մանկավարժներ են: Առաջինը օտար լեզու է ավանդում, երկրորդը տարրականի դասավար է:

- Մեր տնօրենը, - ասում է Թագուհի



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

հին, - հաճախ ինձ մոտ դասեր է լսում:  
 - Բայց առավել արդյունավետ է, երբ մենք՝ սկսնակներս ենք լսում նրա դասերը:  
 Դրանք բեմականացված ներկայացում-երկ-խոսություններ են, երբ ուսուցումը հմտորեն զուգակցվում է դաստիարակության հետ:  
 - Լեռնաձորի դպրոցում աշխատելու տարիներին, - պատմում է Էլմիրան, - ես համոզվեցի, թե երեխայի կյանքում ինչպիսի վիթխարի դեր է խաղում տարրական դասարանների ուսուցիչը: Նա երեխայի համար նույնքան սիրելի ու հոգատար է, որքան մայրը: Մեր նկատմամբ փոքրիկ դպրոցականի հավատը, դաստիարակի եւ աշակերտի միջեւ փոխադարձ վստահությունը, որոնք դաստիարակության տարրական եւ ամենաբարդ, ամենախելացի կանոններն են, դրանք կիրառելով, ուսուցիչը դառնում է իսկական հոգեւոր դաստիարակ: Չենց այս չափանիշներով էլ մեր դպրոցի տնօրենը գնահատում է բոլորիս աշխատանքը, ընդգծում, որ դաստիարակի ամենաարժեքավոր հատկություններից մեկը մարդկայնությունն է, խոր սերը դեպի սաները, այն սերը, որի մեջ սրտագին գուրգուրանքը զուգորդվում է ծնողների խելացի խստության եւ պահանջկոտության հետ: .  
 Ռոբերտ Գրիգորյանի ղեկավարած դպրոցում չկան գլխավոր եւ երկրորդական հարցեր: Դաստիարակության մեջ ամեն ինչ գլխավոր է՝ եւ դասը, եւ սովորողների բազմակողմանի հետաքրքրությունների զարգացումը դասից դուրս, եւ նրանց փոխհարաբերությունները կոլեկտիվում:  
 - Չպետք է բռնադատել մարդու ոգին, այլ ուշադիր հետեւել յուրաքանչյուր երեխայի բնական զարգացմանը, - ասում է նորարար մանկավարժը, - ասում է նրա նախասիրություններին ու հակումներին: Իսկական դաստիարակ դառնալու համար պետք է աշակերտներին նվիրես սիրտդ: Լայն են մաթեմատիկայի երիտասարդ ուսուցչի հետաքրքրությունները: Նա տարիների ընթացքում հավաքել է կազմել է Լեռնաձոր գյուղի խոսվածքի բարբառային բառերի հոմանիշների համառոտ բառարանը՝ ավելի քան երկու հազար հինգ հարյուր բառի սահմաններում եւ, ի տես բոլորի՝ փակցրել դպրոցի միջանցքում: Այժմ կազմում է մաթեմատիկայի դասերին ուսումնական ինֆորմացիայի գրավիչ մուտքի քրեստոմատիկ նյութերի ժողովածու:  
 Չամամիութենական ճանաչում է ստացել այստեղ գործող «xyz» («գիտելիք-աշխատանք-ժողովրդական բանահյուսություն») ակումբը, որի նպատակն է ավելի խորն

## Վասակի գնահատություն



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

ուսումնասիրել դպրոցական մաթեմատիկան, հմտանալ խնդիրների լուծման ու տարբեր առաջադրանքների կատարման մեջ, գիտելիքներ տարածել, հավաքել մաթեմատիկական ժողովրդական բանահյուսության նմուշներ:

Դպրոցի թանգարանում պահվում են աշակերտների կողմից գրի առնված լեզենդներ, հանելուկներ, հեքիաթներ, ասացվածքներ, հետաքրքիր լուրեր... «Անդրանիկը Ռոջի գետի հոսանքն ի վեր անցել է 1918-ի ամռանը ու դադար է առել «Օվանի չիման» կոչվող հանդամասում, գրուցել շատ տեղացիների հետ: Չորավարի զինվորներից մեկը կաթսայիկ է նվիրել համագյուղացի Ռուբեն Չայրապետյանին: Այն ցուցադրված է թանգարանում»:

Ռոբերտ Գրիգորյանը գտնում է, որ դպրոցում պետք է լուծել աշակերտի ուսումնառության հիմնական հարցերը եւ տնային հանձնարարություններով չժանրաբեռնել երեխաներին: Նա չի կարող չորս-հինգ ժամ դասարանում աշխատել, այդքան էլ՝ տանը: Ցանկանալով պահպանել նյարդային համակարգը, նա դպրոցում եւ տանը ստեղծագործաբար չի աշխատի, կոփմի կեղծիքի, ծածկագրերից կօգտվի: Չեւտեւապես պետք է նորովի վարել դասը: Այն պետք է ամբողջական պրոբլեմ լինի, լուծման հետ բազում չլուծված հարցեր ունենա, որպեսզի մշտապես ուշադիր պահի ունկնդիրներին: Դասի ժամանակ դեռահասներն ու պատանիներն անկաշկանդ կարծիքներ ու հիպոթեզներ, գիտական եզրահանգումներ պիտի առաջարկեն, իսկ մանկավարժը սպառնալի վերջնական պատասխաններ չպետք է տա: Լինելով մաթեմատիկայի ուսուցիչ՝ Գրիգորյանը անթերի տիրապետում է մայրենի լեզվին, հայերենով հետաքրքրություն արթնացնում դասավանդած առարկայի հանդեպ՝ մեծ տեղ տալով աշակերտների ինքնուրույնությանն ու ինքնադաստիարակմանը: Նրա մանկավարժական ընթացմամբ սաները ոչ թե անտրտուն, հնազանդ, ամեն ինչի հետ համաձայնվող պետք է լինեն, այլ նաեւ վիճող ու առարկող, չարածի, բայց եւ անիրավության ու չարիքի դեմ՝ ըմբոստացող: - Ես գտնում եմ, - ասում է Գրիգորյանը, - որ երեխան ընտանիքի բարոյական կյանքի հայելին է: Ծնողների ամենաարժեքավոր բարոյական գիծը,

որ երեխաներին է փոխանցվում առանց հատուկ ջանքերի, նրանց հոգու բարությունն է, ուրիշներին լավություն անելու, ուրախություն բերելու կարողությունը: Երբ հայրն ու մայրը իրենց սրտի մի մասնիկը նվիրում են ուրիշներին, սրտին մոտ են ընդունում ուրիշների ուրախությունն ու թախիծը, փոքրերը մեծանում են բարի, զգայուն, կարեկից: Նվիրյալ, իրենց գործը սիրող մանկավարժների, ինչպիսին Ռոբերտ Գրիգորյանն է, հոգին լեցուն է սաների նկատմամբ անսահման սիրով ու լավատեսությամբ: Դա նրանց իսկական երջանկության ժամանակն է, ստեղծագործաբար ապրելու ժամանակը: Նրանք գիտեն, որ երեխայի հոգին անգործության չի ձգտում, անբանություն չի սիրում, նրան հաղթանակներ ու կրակներ են պետք, երջանկություն եւ ուրախություն: Ուրեմն՝ չպետք է մարել կրակը: 21<sup>րդ</sup> որ մարդը հաղթանակների, ուրախություն բերելու համար է ծնված:

1989

## Սպուգողական մաթեմատիկայից

### Ս. ԿՈՒՆՆԵՐՅԱՆ

Ցավոք, իմ դպրոցում ընդունված չէր պատերին նկարել: Լեռնաձոր գյուղի ութամյա դպրոցում նկարում են միանգամայն պաշտոնապես: Ընդ որում ոչ միայն պատերին. նկարում են նաեւ առաստաղին ու հատակին: Մասնավորապես, ուսնասվար Ռոբերտ Քրիստափորի Գրիգորյանը մաթեմատիկայի իր կաբինետում առաստաղին նկարել է եռանկյունաչափական շրջան եւ պատրաստվում է նույնիսկ այնտեղ՝ առաստաղին, մի փոքրիկ շարժիչ հարմարեցնել, որպեսզի, ինչպես կարգն է, վեկտորը շարժվի շրջանագծով: Ասեմք, մաթեմատիկայի կաբինետ մտնելուց առաջ, նախ պետք է բացել դուռը:

«Ուսման ընթացքում դուք պետք է ազատ կերպով գրուցեք ինձ հետ՝ չսպասելով իմ հարցերին, ինձ հայտնեք ձեր բոլոր երկնամասերը, քանի որ, իմ կարծիքով, ուսուցման գաղտնիքը այն բանի մեջ է, որպեսզի ես իմանամ, թե ինչ է կատարվում ձեր գլխում, երբ ես խոսում եմ...»:

(Մաթեմատիկայի կաբինետի դռանը փակցված մակագրությունից): Դռանը փակցված մեկ էջանոց մեքենագիր տեքստը պարզապես կատակ է: Դա Գրիգորյանի մանկավարժական դավանանքն է, նրա գաղտնիքը, որը նա այդպիսի յուրօրինակ եղանակով բաժանում է բոլորի հետ՝ աշխատանքային ընկերների, ծնողների, աշակերտների... Արդյո՞ք հաճախակի կարելի է հանդիպել ուսուցչի, որը պատրաստ է աշակերտների հետ քննարկելու իր մանկավարժական գաղտնիքները: Եվ հոգեբանական տեսակետից այդ թուրքը ներգործում է անբասիր կերպով, բացելով դասարանի դուռը, սկսում ես հավատալ, որ այստեղ թեզ հետ ուզում են խոսել, ինչպես հավասարը հավասարի հետ:

Թվում է, թե դատարկ բան է. Գրիգորյանի դասերին յուրաքանչյուրը կարող է առանց հատուկ թույլտվության ջուր խմել՝ ջրամանը հենց այնտեղ՝ դասարանում է:

Բացի դասագրքից՝ Գրիգորյանը իր աշակերտների համար ինքն է մաթեմատիկական խնդիրներ կազմում: Նա մի մեծ աղյուսակ ունի, որը պարունակում է Լեռնաձորի սովխոզի աշխատանքային գործունեության բոլոր ցուցանիշները: Ամեն տարի այն լրացվում է նոր թվերով, որոնք եւ մտնում են տարբեր աստիճանի բարդության խնդիրների պայմանների մեջ եւ չորրորդ, եւ ութերորդ դասարանների համար: Ասում են, որ յոթերորդ դասարանցու



## Ստաբ Ռոբերտ Գրիգորյանի մասին

հայրն այն բանից հետո, երբ որդին խնդրեց օգնել լուծելու այդպիսի մի խնդիր, եկավ դպրոց: Իսկ լուծումից ստացվում էր, որ հայրիկի տրակտորը օրական երկուսուկես անգամ ավելի շատ վառելիք է ծախսում, քան նորման է:

Հավանաբար, ուսուցիչն էլ պետք է լինի ամենից առաջ իմաստուն, անհրաժեշտ գրուցակից: Մաթեմատիկայի կաբինետի դռանը փակցված թղթի տակ, որի մասին արդեն նշեցինք, կախված է Գրիգորյանի լուսանկարը: Այդ նրա համար է, որպեսզի գյուղի բնակիչները կարողանան իսկույն գտնել իրենց հարկավոր դուռը: Իսկ նրանք հաճախակի են գալիս Գրիգորյանին որոնելու, նույնիսկ դասի կեսին:

Մի համագյուղացի նեղացել էր սովխոզի դիրեկտորից, գրի՛ր, ասում է Գրիգորյանին, Մոսկվա, ես կթելադրեմ, Գրիգորյանը հնազանդ գրեց, հետո, նամակն ուղարկելու փոխարեն, պարզապես զանգահարեց դիրեկտորին: Մի քանի օր անց համագյուղացու թափը նստեց, իսկ եւս մեկ օր հետո նրա հարցը լուծվեց:

Ինչ հարցերով ասես, որ չեն դիմում Գրիգորյանին: Մամիկոն պապիկը, օրինակ, եկավ տեսնելու, թե ինչպես են հիմա սովորեցնում: Նստեց, նստեց դասին, հետո հարցրեց. «Ինչո՞ւ թո աշակերտները բարձրաձայն չեն կարդում: Երբ ես սովորում էի, մենք շատ էինք կարդում...»: Հաջորդ դասը Մամիկոն պապիկը անցկացրեց հայոց լեզվի կաբինետում:

«... Եվ ասացին աշակերտները. - Երբ մենք գրուցում ենք ձեզ հետ, ուսուցիչ, մենք սխալվում ենք եւ ճիշտ չենք դատում. եւ մենք չգիտենք ինչ ասել, ինչու ասել, երբ ասել, եւ մեզ համար հաճելի չէ ուսուցչի հետ խոսել այն մասին, որը կասկածի ենթակա է...»:

«...Եվ ասաց Ռոբերտ Գրիգորյանը. - Տիպիկ չէ ուսուցչի համար լսել աշակերտի սխալ պատասխանները: Բոլոր պատասխանները՝ սխալ կամ ճիշտ, զարդարում են աշակերտին եւ օգնում են լավ սովորել: Երկու վիճակներից շահում է նա, ով իրավացի չէ, քանի որ նա հարստացնում է իր գիտելիքները...» (Նույն մակագրությունից):

Լեռնաձորի դպրոցը գտնվում է կիրճի մեջ՝ ծովի մակերեւույթից շուրջ 2000 մետր բարձրության վրա: Դպրոցում սո-

## Վասակի գնահատություն



## Ռոբերտ Գրիգորյանի մասին

վորում է ընդամենը 56 մարդ: Այնուամենայնիվ, հենց Լեռնածորի դպրոցում են տեսա այնպիսի բաներ, որոնք մինչ այդ նույնիսկ ամենաբարեկարգ քաղաքային դպրոցներում համարյա չեն հանդիպել: Այ, օրինակ, բոլո՞ր քաղաքային դպրոցները կարող են հպարտանալ իրենց լողավազանով: Իսկ Լեռնածորում կա՝ փորել են ցեմենտապատել են իրենք՝ ուսուցիչները, ծնողների օգնությամբ: Ֆիզկուլտուրայի դահլիճի հատակի մասին ինձ հետ ծանոթ ֆիզկուլտուրայի ուսուցիչները կասեին. ֆանտաստիկա է: Գրեթե կաուչուկապատ է հատակը: Բանից պարզվում է՝ սրա համար հարկավոր է գնալ Երեւանի կոշիկի ֆաբրիկա եւ թափոններ խնդրել: Մնացածը, ինչպես ասում են, տեխնիկայի բան է: Ամբողջ դպրոցում սեղան-նստարանները մեկ տեղանի են, բարձրությունը կարգավորվում է: Դրանց մասին կարդացին «Ուշիտելսկայա գազետայում» եւ պատվիրեցին փոստով: Այնպես որ այստեղ էլ գերբնական ոչինչ չկա: ...Ես երկար մտածում էի, թե ինչ է հիշեցնում մաթեմատիկայի կաբինետը, հետո հասկացա, ինչքան էլ տարօրինակ թվա՝ կիճոստուղիա: Սեղան-նստարաններն ու ամբիոնը զբաղեցնում են սենյակի միայն կեսը, մյուսում տարբեր չափերի մոտ տասնյակ սեղաններ են, այդ թվում՝ երեքը զանազան ապարատուրայով, ինչպես նաեւ Գրիգորյանի աշխատասեղանը... Եվ տարբեր գույներով ներկված պատերը, եւ կողորդնատների առանցքներով գծագրված հատակը, եւ անկյունի բազմոցն ու ինքնաշեն հեռախոսասարքը, եւ Գրիգորյանի սեղանի վրայի գրանցեցան (դրա մասին հետո) անհասկանալի կերպով ներգործում էին տրամադրության վրա՝ այստեղ ուզում են աշխատել:

Գրիգորյանը այստեղ էլ աշխատում է նաեւ դասերից հետո, դպրոցից նա դուրս է գալիս ոչ պակաս, քան երեկոյան 10-ին, երբեմն նաեւ 12-ին: Ավտոբուս արդեն, բնականաբար, չկա եւ մինչեւ Քաջարան, որտեղ ապրում է Ռոբերտը, երեք կիլոմետր քայլում է լեռնային ճանապարհով: Գրիգորյանը չի ուզում աշխատանքի անցնել քաղաքում: Երեւում է, Լեռնածոր գյուղին նա այնպես է կապվել, ինչպես այս փոքրիկ դպրոցին:

Փոքրիկ դպրոցներն այնքան էլ վատ չեն՝ այդպես է գտնում Ռոբերտ Գրիգորյանը: Այստեղ զգում են, ինչպես տանը: Հարմարավետ են: Դրանց թերությունը կարելի է առավելություն դարձնել: Այդ կարծիքը հավաստում է տասնութ տարեկա աշխատանքով եւ հենց Լեռնածորի դպրոցի գոյությամբ, որը համարձակորեն կարելի է եզակի անվանել:

Ի դեպ, դպրոցը գրեթե միշտ բաց է: Ռոբերտը այստեղ է գալիս եւ կիրակի օրերին, բացում ֆիզկուլտուրայի դահլիճը՝ թող խաղան: Ասենք, բակն էլ լիքն է երեխաներով: Լեռնածորում խաղալու համար այնքան էլ շատ տեղ չկա՝ երկու կողմերից լեռներ են, լանջի վրա, որտեղ թեքությունը քիչ է, միմյանց են սեղմվել տները եւ պատիկ բանջարանոցները: Եվ, վերջապես, գրանցեցանայի մասին: Այն ամենը, ինչ երբեւէ դրա վրա տպագրվել է, խնամքով կարված եւ հավաքված է թղթապանակներում՝ ըստ տարիների: Մաթեմատիկայի կաբինետում Գրիգորյանն ունի իր սեփական արխիվը՝ երկու հսկայական պահարան: Հավանաբար, պարզապես հեշտ է այստեղ նշել մի քանի անվանումներ: Գիտական աշխատանք. փոքրակոմպլեկտ դպրոցների գնահատման չափանիշների նախագիծ:

Լեռնածոր գյուղի բարբառի բառարան: Տվյալ տեղանքում հանդիպող դեղաբույսերի (ավելի քան 300 անուն) լիակատար տեղեկատու: Ու թեւ տեղեկատուն նույնպես կազմել է Գրիգորյանը, «լիակատար» անվանումը հիմնավորված է: Հատուկ մրցանակ՝ զնդակ է սահմանվել նրա համար, ով կգտնի թեկուզ եւս երկու դեղաբույս: Հնագույն ժողովրդական խնդիրների ժողովածու: Այդպիսի խնդիրները հավաքելու համար Գրիգորյանը իր աշակերտների հետ որոնում է տարեց մարդկանց, որոնք դրանք պահպանել են իրենց հիշողության մեջ: Մի հազվագյուտ խնդրի համար նույնիսկ գնացել են շրջկենտրոն, մի պապի մոտ՝ չէ՞ որ մինչեւ այժմ ոչ ոք դրանք չի գրառել: Ում հետաքրքրում է, կարող է մի քանի պայմաններ գտնել «Քվանտ ամսագրի» 1972 թվականի 7-րդ համարում, որոնք այստեղ են ուղարկվել Լեռնածորի դպրոցից, նախապես, հասկանալի է, լուծելուց հետո:

Լեռնածորի դպրոցում կա թանգարան, որտեղ ամեն ինչի կարելի է ձեռք տալ:

Դա պարզապես մի սենյակ է, որտեղ հատակին եւ սենյակին ու սեղաններին դրված են ցուցանմուշներ. մեր թվարկությունից առաջ 1-ին դարի գերեզմանից հանված իրեր, 13-րդ դարի զրահներ, 5-րդ դարից՝ «սպասք», որը գտան մի պառավի օգնությամբ: Նա կովը արածացնում էր եւ որոշեց թուրք կապել գետնի մեջ խրված ցցին: Չգեց ու դուրս քաշեց մի կանաչած շերտի: Եվ անմիջապես դեպի դպրոց... Լեռնածորի բնակիչները թանգարան են բերում ամեն ինչ, ընդհուպ մինչեւ հնագույն ինքնատեղերը, իսկ կողքի ցուցանակը հայտնում է. «Նվեր դպրոցին՝ այսինչ տատիկից...»: Ուսուցիչը պետք է զրուցակից լինի: Գրիգորյանի արխիվում նամակներով լեցուն երկու մեծ տուփ կա: Ահա միայն մի քանի հասցեներ, որպեսզի ընթերցողը կարողանա պատկերացում կազմել, թե ում զրուցակիցը կարող է լինել գյուղական ուսուցիչը: Դաստիարակության ընդհանուր պրոբլեմների ինստիտուտի, Մոսկվա, Հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան, Երեւանի մանկավարժական ինստիտուտ... Եվ նաեւ՝ կոլեգաներ, շրջանավարտներ, պատահական ծանոթներ... Նրա ուսումնասիրությունների ոլորտը, թերեւս, ամենից լայնն է, ինչպիսին կարելի է միայն պատկերացնել: Բացի մաթեմատիկա դասավանդելուց, բացի «Իքս, իգրեյ, զեթ» խմբակից, բացի ուսման վարի պարտականությունից, Ռոբերտ Գրիգորյանը նաեւ պիոներական ջոկատավար է: Ինչպես ինքն է իրեն անվանում՝ «արտահաստիքային»: Դպրոցում ոչ պաշտոնապես կարգ է սահմանված. եթե դրուժինայի խորհրդի անդամը երեք միստի ընթացքում ոչ մի առաջարկություն չի արել, նա խորհրդից ինքնաբերաբար դուրս է մնում: Ռաֆիկ Հարությունյանն առաջարկեց բոլոր բազմաթիվ նամակագիրներին ուղարկել պատերազմի ժամանակ անհայտ կորած համագյուղացիների ցուցակը՝ գուցե որեւէ մեկը ճանաչում է: Ինքը՝ Ռաֆիկը, ցուցակը ձեռագիր բազմացրեց՝ 350 օրինակ: Ուղարկեցին: Եվ երեք համագյուղացիների շիրիմներ գտան: Գրիգորյանի մասին մեր պատմածին ավելացնենք մի մանրամասն եւս: Երբ նա գնաց Մերձբալթիկա՝ պարզվելու, թե արդյո՞ք այն նույն մարդու

## խոսքի Ռոբերտ Գրիգորյանի մասին

մասին է խոսքը, չհամբերեց. եղբայրական գերեզմանից սկսեց ազգանուններ արտագրել և տուն վերադառնալուց հետո տղաների հետ միասին սկսեց նորից նամակներ ուղարկել:

Ուսուցիչը պետք է անսպասելի լինի: Այնպիսին, ինչպիսին Ռոբերտ Գրիգորյանն է: Մաթեմատիկայի դասից հետո նա հանկարծ կարող է աշակերտներին խնդրել տանը շարադրություն գրել «Մեր շրջանի յոթ հրաշալիքները» թեմայով:

Չգիտեմ՝ նրանք ինչ են գրել, բայց հրաշալիքներից մեկն, անշուշտ, Լեռնաձորի ութամյա դպրոցն է:

Չէ՞ որ յուրաքանչյուրը կուզենար իմանալ, որ գիշերվա ինչ-որ ժամին վառվում է լույսը, կտկտում է գրամեքենան, տաքանում թեյամանը, և այնտեղ քեզ գրուցակից է սպասում: Այնպիսին, ինչպիսին Ռոբերտ Գրիգորյանն է:

«Կոմսոմոլսկայա պրավդա», 1982թ.

## Լեռնաձորի գրիգորյանական դարաշրջանը



### ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դժվարանում են անցյալ ժամանակով խոսք ասել մի մարդու մասին, ում հետ ամենօրյա շփումով ապրել են կյանքի 52 տարին, եղել նրա աշակերտը, ընկերը, բարեկամը: Խոսքս Ռոբերտ Գրիգորյանի մասին

է, ով 1964թ. սեպտեմբերյան մի օր առաջին անգամ ոտք դրեց Լեռնաձոր գյուղում և քայլերն ուղղեց դեպի դպրոց, այն դպրոցը, որը որոշ ժամանակ անց դարձավ համբավանուն հենց իր իսկ տաղանդի, ջանքերի և նվիրումի շնորհիվ:

...Դպրոցի տնօրենի հետ դասասենյակ մտավ մի երիտասարդ՝ բարձրահասակ, գեղեցիկ տեսքով, կոկիկ հագնված, ով մեր դպրոցի բարձր դասարանցիներից մեծ էր ընդամենը երեք տարով: Տնօրենը ներկայացրեց երիտասարդ ուսուցչին՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի նոր ուսուցիչ, ու գնաց:

- Բարեւ ձեզ, սիրելիներս, ես ձեր մաթեմատիկայի և ֆիզիկայի նոր ուսուցիչն եմ: Իմ անունը Ռոբերտ է, ազգանունս՝ Գրիգորյան: Ինձ կարող եք դիմել այնպես, ինչպես կկամենաք. Ռոբերտ, ընկ. Գրիգորյան: Դուք իմ առաջին աշակերտներն եք, և մենք, սովորելուց բացի, լինելու ենք ընկերներ, բարեկամներ: Դասերից հետո, օրվա ցանկացած ժամի, կարող եք գալ իմ տուն: Կքննարկենք անհասկանալի մնացած հարցերը, կգրուցենք, իրար լավ կճանաչենք, համոզված եմ, իրար կսիրենք ու կվստահենք:

Ավանդապահ գյուղական դպրոցում տարիներով ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում ստեղծված կարծրատիպն ի դերել եղավ գրիգորյանական առաջին դասաժամին: Կարճ ժամանակ անց Գրիգորյանը դարձավ գյուղի իր հասակակիցների, տարեց մարդկանց, հասարակ գյուղացու, գյուղական ինտելիգենցիայի, երեխաների սիրելին: Լեռնաձորում սկսվեց գրիգորյանական դարաշրջանը...

Կարճ ժամանակ անց նրա աստվածատուր տաղանդի, աշխատասիրության, հանրագիտարանային գիտելիքների շնորհիվ Լեռնաձոր գյուղի անունը

դուրս եկավ Հայաստանի, ապա՝ խորհրդային պետության սահմաններից դուրս: Լեռնաձորի դպրոցի փորձը հետաքրքրեց Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի և այլ պետությունների գիտնականներին: Հանրահայտ «Քվանտ» ամսագիրն իր հրատարակումներում մի քանի անգամ անդրադարձավ Լեռնաձորի դպրոցին, Գրիգորյանի աշխատանքային փորձին՝ իր էջերում տպագրելով դպրոցում ստեղծված «XYZ» ակունքի աշակերտների կողմից ուղարկված խնդիրները և դրանց լուծումները: Լեռնաձորի դպրոցը դարձավ ուսումնական կենտրոն:

Մեծ հայրենասերի պրպտուն մտքի, հայրենագիտական գիտելիքների գերազանց տիրապետման, տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում Լեռնաձորի դպրոցում բացվեց հայրենագիտական թանգարան, հավաքվեցին և հրատարակվեցին Լեռնաձոր գյուղի բարբառային բառարանը, ծեսերը, հին երգերն ու բանաստեղծությունները, հանելուկները, անեծքներն ու հայիտյանքները: Հավաքեց և հրատարակեց Սյունիքի, Կապանա տան բոլոր գյուղերի տեղանունները, եկեղեցիների պատմությունը:

Ծնվել էր դաստիարակվել է մանկավարժների ընտանիքում: Նա իր կյանքն անմնացորդ նվիրեց մատաղ սերնդի դաստիարակության գործին: Նրա աշխատած տարիներին դպրոցը դարձավ յուրատեսակ հավաքատեղի, որտեղ լուծում էր տրվում ոչ միայն դպրոցի, այլև ամբողջ համայնքի առջև ծառայած խնդիրներին, հետագայի համար ծնվում էին նոր մտքեր:

Մեծ հայրողին անմնացորդ սիրով կապվեց Լեռնաձորյան վարք ու բարքին, դարձավ յուրաքանչյուր ընտանիքի բարեկամն ու խորհրդատուն: Կյանքի վերջին ժամերն էլ անցկացրեց իր սիրելի դպրոցում, մահկանացուն կնքեց իր սիրելի մաթեմատիկայի դասարանում՝ իր սեղանի առաջ նստած:

Մահվանից ամիսներ անց էլ յուրաքանչյուր Լեռնաձորցու համար սրբատեղի դարձած դպրոցը մնում է որպես ընկեր Գրիգորյանի դպրոց, որտեղ շարունակվում են դպրոցական բոլոր ավանդույթները, որի հիմքը դրել է մեծն ուսուցչապետը:



## Ավանդավեց



ՌՈԲԵՐՏ  
ԷՋԱՆԱՆՅԻ

Բաղաբերոյի երիտասարդ տիրակալը զորահավաք էր հայտարարել ու հաճախակի էր գովառուները գնում զորատեսիլ: Իր նախորդի՝ Գրիգոր Բ Նվազ թագավորի գահակալման տարիներին սելջուկներն ավերել էին Կապան ոստանը, ասպատակել թագավորության տասնյակ վանքեր, բերդեր ու գյուղեր: Իր սելզործն էր արել 1139-ի ահեղ երկրաշարժը: Գաղթն ահագնացել էր, երկիրը տկարացել, սակայն սելջուկը դեռ այք ուներ Կապանա կիրճի վրա, որը Բաղքի կապ-լեռնանցքն էր եւ իր աջակողմ բարձունքին ուներ անսասան Բաղաբերոյը:

Մոտակա Բաղաբերոյ, Աչաղու, Արավար, Շեկք, Յողար, Եճանան, Իցան, Յիմանդրախտ եւ այլ գյուղերի տարեցներն օրավարձու աշխատանք էին կատարում բերդում: Տաթևից եւ այլ վայրերից այս սարսափազդու ամրոցը բերված հարստություններն ամբարելու նպատակով, բերդավազի ղեկավարությամբ կառուցում էին նոր պահեստարաններ, ընդլայնում Կկվաքարի ու

գետակողմի քարայրները:

Մուսնետիկները շրջում էին գյուղերում.

– Աթաբեկը մեր թագավորին նեղում է, հինգ տարվա հարկ է ուզում...

– Ի՞նչ հարկ, – ընդդիմանում էին ռամիկները, – երկու տարի չկա՝ Գրիհանն ու Գեղավանքն է թալանել: Դա ոչ թե հինգ, այլ տասը տարվան կարժեճար: Նախիջեանի աղն ի՞նչ է, վրան ոսկու գին է դրել...

Միապետության ոսկերիզ խաչվառը փողփողում էր Բաղաբերոյի վրա: Պարսպաներձ աշտարակի դիտարանից թագավոր Յասան Սակոյան Գեռաքարեցին փարվել էր Կապանա չնաշխարհիկ ծորաստանին: Բերդաբնակ ձեռնասուն եղնիկները հետեւում էին նրան, եւ մտասույզ միապետը, սպասավորի բերած քրեղանից լավաշն ակամա կտրելով, մոտեցնում էր նրանց դնչիկներին: Արքայական հոգում կրակ կար եւ այն ավելի էր փոթոթում թագուհի Կատային: Մի քանի օր առաջ Նորավանքից Ստեփանու Մեղրեցի եպիսկոպոսը

գաղտնագիր էր ուղարկել, որ աթաբեկը երկու կողմերից՝ Գանձակից ու Նախիջեանից, մտադիր է ներխուժել Սյունիք:

Յասանն օղակված էր: Նրան օրհասական կռիվ էր սպասում:

Երբեմնի աշխարհակալ Մեծ Յայք տերությունը դար ընդ դար բեկորվել էր, եւ նրանից Սյունյաց աշխարհի երրորդ մասում այս փոքրավուն՝ Բաղքի թագավորությունն էր մնացել:

Սարավույթի շքաքրե դոյակում կաշեգիր քարտեզներն ու իր նախորդների հրովարտակները քննելով, թագավորը խորհրդի նստեց իշխանների հետ: Նրանց իրազեկեց Կիլիկիո Ներսես կաթողիկոսի, Անիի, Վայքի իշխանների սուրհանդակների թղթերը, տեղեկացավ բերդերի ամրացման ու զինյալների բաշխման աշխատանքների ընթացքին, կազմավորեց հան-

# Յին Կապանի վերջին աշունը

Յայոց Ռժիմ թվականին, որ է Փրկչական 1170-ը, աշունը ծանրախոհ շուլալվել էր Կապանա տանը: Սարերում գերված անասնազոլ ելուզակները սպառնում էին աթաբեկի մոտալուտ հաշվեհարդարով: Յալածական գաղթականների խմբերը, գալով Սեւասարի կողմերից, Տաթևի ուխտն էին գնում եւ այնտեղից սփռվում Վայք, Վիրք ու Մանքերմանի երկիր:

Յոնի ու տանձի կաթուկը, փոփ զկեռն ու կտողենի կեծուռը բռնել էին Բաղաց անտառները, բայց Կապանա գեղջուկն աշնանային հավաքչության չէր գնում:



## Ավանդավեպ

բարակային ծառայություն:

Նավասարդն անցել, հոռի ամիսն էր սկսել, եւ Սիսական տունը Մայր եկեղեցու օրն էր նշում: Գահակալ եպիսկոպոս Տեր-Ստեփանոս Ֆախր-Էլ Մսեհը (սիրեցյալ Քրիստոսի) գիտեր, որ թագավորը, ընդհանուր իրավիճակից ելնելով, ոչ Տաթև, ոչ Նորավանք կարող է ժամանել: Արդ, հոռիի Արեգ օրը Հասան թագավորն ու թագուհի Կատան շքախմբով Վահանավանք գնացին:

Սյունյաց Մայր եկեղեցու օրը սահմանել էր Սբ Մեսրոպի աշակերտ եւ գործակից, գահակալ եպիսկոպոս Անանիա Թարգմանիչը, եւ այն յոթ դարից ավելի անընդմեջ նշվում էր ժողովրդական տոնախմբությամբ:

Չիակառքի մեջ, պատարագին ընդառաջ, ծանր խոհեր էին համակել թագավորին: Փորձելով կռահել առաջիկա իրադարձությունների զարգացումը, բռնվում էր սարսուռ պատճառող կասկածի վրա. «Գուցե՞ վերջին անգամ է Սյունիքը տոնում Մայր եկեղեցու օրը»:

Նա սթափվեց թագուհու ձեռքմեկնումից: Թիկնազորը նրանց ուղեկցեց վանքի գավիթ, որտեղ հոգևոր դասը օվսաննա ծայնեց:

Վահանաձորից մինչեւ Կրկնահարկ եկեղեցին ասեղ գցելու տեղ չկար: Գյուղերից ուխտավորներ էին եկել մատաղացուներով, օրինություն էին հայցում նորապսակները: Թագավորի մռայլությունն անկատ չնմաց: Սարեցի ձայնարկու մի տատիկ, քթակալն իջեցնելով, կանչեց.

– Աստուծ պահի թագավերին, մեր կլխան անպակաս նի՛...

Աշխուժությունը ծովացավ ուխտավայրում: Թագավորական զույգը ծունր իջավ Վահան Նախաշինողի մահարձանին: Պատարագիչ Տեր-Սահակ քահանան օրհնաբանեց արքային ու թագավորությունը:

Հավարտ պատարագի, Սյունյաց տերն ու իր կողակիցը գեղմնահյուս նոր մույկեր հագան ու անցան նախնյաց դամբարանագավիթը: Սարկավագները խնկարկում էին, իսկ թագավորը հագիվ լսելի աղոթում էր. «Քրիստոս աստված, խոնարհ ծառայիդ արժանի արա մեր նախնյաց փառքին...»:

Թագուհին արցունք էր հեղում հոր՝ Գրիգոր թագավորի մահարձանին:

Դրում տոնախմբությունը շարունակվում էր: Ձուկ գուսանների փանդիռ-

ների նվագի տակ, իշխանական խրախճարանի զավթում պար էին բռնել նորակոչիկները:

– Մատենագետ, – դարձավ թագավորը Տեր-Սահակին, – միաբաններիդ հաճո՞ էր իմ հրովարտակը:

– Վսեմաշուք, վանահայրն այդ գործով է զբաղված: Բղենո Փղոսկրյա Ավետարանն արդեն զինակիրների ուղեկցությամբ ուղարկել ենք Վայոց ձոր: Մեր սրբությունները բերդ կբերենք տոնավարտին ու կհանձնենք զանձարանապետին: Ձանգերը հանելու համար արդեն ժամանել են աճանանցի վարպետները...

– Որքա՞ն ժամանակ է անցել քաղաքի ավերումից:

– Ահա վաթսուներոս տարի է՝ եկեղեցին խնկարկում է Կապանա նահատակներին: Ով ողջ էր մնացել, բնավորվել է հեռու մի գյուղում: Գավառից շատերը զաղթեցին Վիրք ու Մանքերմանի երկիր: Հենց երկու տարի առաջ Գեղավանցի Վարդիկը Վայք գնաց ու հետը տարավ գյուղերում եղած իր մերձավորների հինգ ընտանիք: Մոտ քսան տարի առաջ Շլորուտի երկու գյուղերը հեռացան մեր աշխարհից...

– Եվ Ջուրջ իշխանը Շահապոնք գնաց, – նրբանկատ շարունակեց թագավորը, – Բաղքի ազատներն են հեռացողներին օրինակ ծառայում: Ի՞նչ կասեք, մեծափառ իշխաններ:

Մահեւան եւ Համտուն իշխաններն անթաքույց խոժոռությամբ նայեցին արքային:

– Ժամանակները փոխվում են, – դժկամ խոսեց Կովսականի իշխանը, – քաղաքի ավերումից երկու տարի հետո Բղենից խոսրովիկ իշխանին գերի տարան, իսկ ահա երկու տարի առաջ Գեղավանքի, Գրիհամի ու Կաքավաբերդի երեւելիներից շատերը հայրենաթող եղան:

– Նրանք Տիրոջ պատժից չեն խուսափի, նզովյալ է հայրենադավը, – պոռթկաց Տեր-Սահակը:

Բաղացարի կողմի անտառախիտ ձորում կրահորը բանում էր գիշեր-ցերեկ: Սի քանի աչաղվեցիներ օգնում էին կրագործներին: Իրիկնաղեմին, երբ կրաքարի շեղջը հողածածկ էին անում, աչաղվեցի Համազը գրուցում էր եճանանցի Սիմոնի հետ:

– Աթաբեկը Շլորուտի կռվի տարուն

մեր գյուղից երկու աղջիկ է տարել: Սի առ ժամանակ հետո նրանց տերերին մի-մի խալաթ է ուղարկել: Աղջիկներից միին իմ ազգականն էր:

– Դե ասա ելտկուզները քո խնամին են, էլի՛, – հեզնեց Սիմոնը:

– Հա՛, բա՛, – գոհացավ աչաղվեցին:

– Համադանի է՛ջ, ձերոնք էլ աղջիկ չունե՞ն, որ տաք, խալաթ առնեք, էսա զալխս են:

– Էղպես մի խոսի, Սիմոն, թուրքն էլ ամարդ:

Սիմոնը շուրջը նայեց, որ մի բան գտնի, տա Համազի գլխովը, բայց սսկվեց:

Դիմացի լեռնակատարից դողանջ լսվեց: Գուրզը զարկում էին հսկա պղնձե սիմուն: Քիչ անց արծազանքեց Աճեն լեռան զանգը: Լսելի եղան հեռավոր լեռնակատարներից եկող խուլ դողանջները: Մեկը մեկին իմաց անելով, բարձունքներում բոցկլտացին խարույկները:

Աղջանուղջին գործավորները ուրվականների պես հավաքվեցին քարայրի դռանը:

Ձանգն ու խարույկը գուժում էին թշնամու զալուստը:

Կապանա տունը չքնեց:

Մթնժորեքը տեղի տվեց խորհրդավոր գիշերվան: Խուստուփի ետնախորքի վրա բիբլիական լեռնակատարները մնանվեցին դիվական կերպարանքների: Գյուղական եկեղեցիների զանգերը գիշերային տագնապ էին հնչեցնում:

Խավարը ճեղքելով, Կապանա տան կանայք՝ ոմանք բարուրները մեջքներին կապած, զարդեղենը ծոցներն առած, լաչակները հանած, իրար ձայն տալով սարվորների մոտ էին բարձրանում:

...Վախթանգի որդի Հասան թագավորը բազմեց գահավորակին, նրա կողքին տեղ գրավեց թագուհին, ամեն մեծավոր կանգնեց իր տեղում: Կերոնների ձիթահոտից նեղվելով, թագավորը խոսեց իրավիճակի մասին.

– Սուրհանդակները զուժել են ելտկուզ աթաբեկի հարձակումը: Մեզ վրա զալխս են եւ Գանձակից, եւ Նախիջեւանից: Թշնամու բանակում շատ են վարձկան այլազգիները ու նաեւ՝ ուրացած հայեր:

Աթաբեկին հայտնի է, որ այստեղ են Տաթեկի ու մյուս վանքերի հարստությունները եւ մեր թագավորական

## Ավանդավեց

գանձարանը: Նա մտադիր է պաշարել մեր ոստանը եւ գնալ Դվինի վրա: Վրաստանում ամիրսպասալարն ասպատամբել է Գեորգի թագավորի դեմ եւ օգնության ակնկալիք չկա: Անիի Շաղաղներից էլ հույս չկա: Մեր կողմից պաշտպանության հրամանները տրված են: Գրադարանը պահված է գետնափոր գաղտնարանում: Համտուն զորապետը թշնամուն կճակատի Հազարու գետի կողմում, Մահեւան զորապետը՝ Ջվարավանքի: Բերդի կայազորի գլուխ ենք կարգում Սմբատ Վաժունեցուն, ազատագունը նրան զորավիգ: Գլորքի համար քարհատները բերդում կբանեն գիշեր-ցերեկ...

Խոսք վերցրեց Տեր-Սահակը.

– Բոլոր գյուղերի երիտասարդ մարդիկ բանակում են, ժողովուրդը քահանաների ու տանուտերերի առաջնորդությամբ լեռնաստանի ապաստարաններն է քաշվում: Բայց մենք քիչ ենք թուրքի երեք տասնյակ հազարի դեմ: Ո՞ւր է քաջ խաչենցիների օգնությունը, որին սպասում ենք ամսից ավելի:

Թագավորը չարձագանքեց:

Խոնարհման նշան անելով թագավորին, ներկաներին դիմեց թագուհին.

– Իմ բարեհիշատակ հայրը չորս տարի առաջ, մահվան անկողնում պատգամ խոսեց, որը կարդում եմ բոլորիդ. «Իմ հայր Սենեքերիմ արքան քաջագն էր, բայց դավաճանի միջոցով խաբվեց ու թշնամու ծուղակն ընկավ: Դա թող դաս լինի մեր հետնորդների համար»: Ահա այդ թշնամու սերունդն է գալիս մեզ վրա, հետեւաբար ավելի նենգ է ու դաժան: Իմ արքան թող հրամայի, որ թշնամու հետ երբեք բանակցելու չպիտի գնանք...

Թագավորը գեղազանգուր գլուխը ետ ու առաջ արեց, որ հաստատունի նշան էր:

Թագուհին արքունի գրագրին, որ իր ազգականն էր, հրավիրեց զրույցի:

– Իմ տերը Մանուել կայսրին թուղթ չի՞ ուղարկել:

– Ո՛չ, զարմուհիս: Նա անգամ չի գրուցել Բյուզանդիոնի հյուպատոսի հետ:

– Եվ ոչ էլ՝ ռուսաց իշխանի՞ն:

– Մեծ իշխանը Վլադիմիրից գնացել ու գրավել է Մանքերման՝ Կիելը: Շաբաթ առաջ սուրհանդակ էր եկել, եւ արքան պատվեց նրան:

Թագուհին փոթորկվում էր: Երկրի

կառավարումը, իր հորաքույր Շահանդուխտ թագուհու մահվանից հետո, գրեթե այրերի գործն էր: Թագավորն իրեն մասնակից չէր դարձնում շատ խնդիրների քննարկմանը: Նեղվում էր այն շշուկներից, թե, իբր, Հասանն իրեն դեռ եկվորի նման է պահում: «Քո պապ Սենեքերիմը Աղվանից տնից էր եւ դարձավ Կապանա տան զոհը», – երբեմն հիշեցնում էր Հասանը, եւ Կատան ինչ– որ չարագուշակ բան էր գտնում նրա պահվածքի մեջ: Կատա Սենեքերիմյանը պահանջեց կառքը եւ տխրադալուկ Կապան քաղաքի միակ բանուկ փողոցով դիմեց դեպի Վահանա ուխտ:

Նրան դիմավորեց տազնապած վանահայրը եւ ուղեկցեց սբ Աստվածածին եկեղեցին, որ կառուցել էին թագուհու հորաքույրեր Շահանդուխտ թագուհին ու օրիորդ Կատան: Բազկատարած մոտեցավ Սուրբ սեղանին ու Տիրամոր պատկերի առջեւ արցունքախեղդ աղոթում էր.

– Հայր մեր, որ հերկինս ես... Երկնաճամ առքա, մեր պաղատանքն ու խոսքը քեզ ենք առաքում քառասունութ վանքերից ու հազար եկեղեցիներից: Քո կամքով ստեղծվեց ու հզորացավ Բաղքիս թագավորությունը: Դու մեր փառքը հասցրիր մինչեւ Չին ու Մաչին, Կիելյան Ռուսիա, Հռոմոնց երկիր: Աղաչում եմ, մեղմիր քո բարկությունը մեզ վրա: Այն օրհասները, որ թուրքի միջոցով բերեցիր մեզ, բավ են եւ մի տանիր նոր փորձությունների: Գթա՛ մեզ, Քրիստոս աստված, պահիր– պահպանիր Սիսական տան վերջին ապավեն Բաղաբերդը: Դու ես այն անպարտելի դարձրել իր ստեղծման օրվանից, երբ Բաղակ նահապետն ապառաժը մեր նախնյաց համար հանգրվան դարձրեց եւ միայն դու կարող ես մեր հայրենի պատվարը մատնել հեթանոսի ձեռքը...

Ջվարավանքի կողմերից նահանջելով, Մահեւան իշխանն անցավ Տաշտունի լեռնանցքն ու ամրացավ Բեխորոտի ու Վաժունիքի բարձունքներում: Սուրհանդակի միջոցով նա օգնական ուժեր խնդրեց Հասան թագավորից ու մերժում ստացավ: Հեծյալների ազատագունըրը Ելտկուզյանների հետ ճակատելու էր գնացել Բղենո կողմերը՝ Համտունին զորավիգ: Մեկօրյա մահանջից հետո Սմբատ Վաժունեցին սելջուկյան բանակի դեմ ճակատամարտեց Կավար-

տի Կշմատուք հանդում: Վիրավորվելով, մարտի դաշտը լքեց Համտուն Բաղացին, եւ դա պարտության նախանշանը եղավ:

Կապանա գետն ի վեր ավերելով գյուղերն ու Վահանավանքը, սելջուկները դյուրավ հասան Հին Կապանի ավերակներին: Իրենց հետ առած Տանձափարախի խարազնագետս կրոնավորներին, մերձիմահ ծեծելով նրանց՝ ստիպում էին ցույց տալ թաքցրած գանձերն ու անասունների մակադատերը:

Առաջապահները Աչաղու գյուղի տափարակում մետաքսափայլ վրանադրյակ հավաքեցին, եւ շուտով այնտեղ հանգրվանեց Շամսադդին Ելտկուզ աթաբեկը:

Ավարից գամբիկներ մորթեցին եւ կրակին անցկացնելով, առաջապահ զորքը երկվարի միսը հոշում էր ու փառք տալիս ալլահին՝ պարգեւած հաջողության համար: Մահապարտ ղուլերի (ստրուկ) ջոկատներին հրաման տրվեց՝ անվարան դեպի բերդը գնալ, մազլցել ապառաժներն ի վեր, ճանկապարան գցել:

– Քանի՞ դար է այդ խաչանախշ բայրաղը փողփողում կալայի վրա, – նվաստացում ապրելով Բաղաբերդի երկնագնա պարիսպներից, հարցրեց աթաբեկը:

– Իմ տիրակալ, շուտով այդ փալասն իր դարերի հետ քո ոտքի տակ կլինի, – գվարճաբանեց պալատական խեղկատակը, – սիսաջանցիներն այնտեղ, ոսկու դեզերի վրա նստած, քո ուղտերի քարավանին են սպասում:

– Քո քաջագարն որդի Մուհամմադ–Ջահանն ավերել է բարձրի գյուղերն ու մոտեցել բերդին: Գյավուրների Սուներաթ մինբաշու (հազարապետ) հայրենի Վաժունիք գյուղում քարը քարին չի թողել, – շողմնեց հետախուզության միաջքանի սերասկյարը:

Հազարացի թարիխի պատմաբանը հաճոյացավ աթաբեկին.

– Ալլահի՛ սովեր, ինչպես հրամանդ է՝ հիմնահատակ ավերում ենք այն գյուղերը, որոնք ավելի շատ կռվողներ են հանել մեր դեմ: Դավթարում արդեն քսանհինգն անց են կացրել, խրթին անուններ ունեն՝ Արավար, Շեկը, Բարեթվայր, Տազամար, Արուքս, Վարդավանք, Պարքոն, Լերմենի շեն, Բեշ...

Աթաբեկը լսել չէր կամենում: Բերդից

## Ավանդավեպ

ու մոտակա բարձունքներից քարագլորքը շարունակվում էր: Պարսպին մոտեցողների վրա վառվող կուպր ու ձեթ էին թափում: Ժայռաբեկորները դորդյունով գահավիժում էին՝ մահապարտների դիակները թողնելով քարակարկառների մեջ, հասնում ու զարնվում երբեմնի ծաղկուն քաղաքի լքված շինություններին:

Սարերից քշված տավարն ու ոչխարը սելջուկի ձեռքում էին: Մարդորս ասկյարները դարանակալել էին կապերում ու քարափների վրա:

Գերեզմանախույզներն իրենց սեւ գործն էին անում Վահանավանքում:

Աթաբեկի պահանջով գերիներից մի վարդապետ բերեցին, եւ թարիխչին նրան թելադրեց տիրակալի վերջնագիրը. «Հասան աղա, այս երկիրն ալլահը մեզ է նվիրաբերել: Հրամանս է, որ բացես բերդի դարպասը: Դու Առանի խաչենեցի ես եւ, փեսայանալով Սիսաջանի թագավորին, կնոջդ փոխարեն քեզ թագավոր ես հռչակել: Եթե մեկ օրվա մեջ նվերներով չգաս ինձ մոտ որպես բարեկամ, ուրթերից բերել կտամ քո ժողովրդին ու կմորթոտեմ պարսպի տակ, քո աչքի առջեւ»:

Աչաղվեցի երկու պատանդի հետ սուրհանդակ ասկյարները բարձրացան Կկոց քարի ժայռազուխը, եւ նետածիզը, թուղթը կապելով նետին, հասցրեց բերդապահներին:

Աչաղուն իրիկնանում էր, երբ պատասխանը տեղ հասավ: Վարդապետն այն կարդաց թարիխչիին: Իմանալով, որ թագուհու կողմից է, պալատականը պապանձվեց: «Վաչկատուն սելջուկ, մորեխի պարսի պես բռնել ես աշխարհը եւ ահա յոթ տասնամյակ ասպատակում ես իմ հայրենի տունը, գերեզմանները պղծում: Այս երկիրը Նոյի ժամանակներից մերն է, դու երբեք չես կարող տեր լինել: Հեռացիր, մենք չենք կարող անգութ թշնամուն բարեկամ լինել: Սուլթանի մորը քո հարեմուն առնելով, քեզ սուլթան ես կարծում: Շատ սուլթաններ են այս ձորում գտել իրենց մահը, հիմա քո ժամն է հասել»:

Թագուհու քայլը կատաղության հասցրեց տիրակալին: Ջայրագին հոխորտալով, նա ոտնատակ տվեց թարիխչիին եւ հրամայեց՝ վարդապետին կապկապել ու գլուխը խոթել գյուրզանների մահապարկը:

Աթաբեկը նոր բան մտածեց:

Ջառչիների միջոցով հավաքեց աչաղվեցիներին: Գերեցին նաեւ սարը փախած մի քանիսին: Համագին նշանակեց չորբաչի (քրիստոնյաների ջոկապետ): Սիրաշահեց այդ միամիտ մարդկանց՝ ավարից մեկական էջ կամ ընջուղ խոստանալով: Եվ հրամայեց գերի քահանային՝ Աչաղուի եկեղեցուն պատարագ անել, իսկ ինքն իր մարդախոշոջ ձեռքը դրեց հնամաշ Ավետարանին ու զարմացրեց ռամիկներին.

– Թող հաշտություն լինի, թող սելջուկն ու հայն այլեւս արյուն չթափեն:

Համոզեց՝ կանանց ուղեկցությամբ բերդ բարձրանալ եւ ավետել հաշտությունը: Ջառչի– մունետիկները հասան բարձունքներին, եւ Կապանա ձորն արծագանքում էր.

– Է հե հե՛, աթաբեկը հաշտություն է ուզում, կռիվը վերջացել է՛...

Բայց դավադիր թուրքը ծածուկ զգուշացրեց սերասկյարներին եւ Բեխորոտի կողմից առաջ շարժվող Ջահան Փահլավանին՝ սպառազենների խմբեր ուղարկել Կկվաքարի կողմերը եւ դարանակալ լինել:

Մուլլայի հետ աչաղվեցի բանագնացներն օրվա երկրորդ կեսին զնացին բերդի արեւելակողմ ձորն ի վեր եւ իրիկնադեմին դարձան դեպի Կկվաքար, որ հարեւանում էր բերդին ու նրա հետ միացած էր կաղնեփայտե հսկա կամուրջով:

Կանայք կողովիկներով միրգ էին տանում բերդապահների համար եւ շտապում ժամ առաջ տեղ հասնել: Կկվաքարի աշտարակից բերդապահները ճանաչեցին նրանց:

– Որդյա՛կ, աթաբեկը հեռանում է, էլ կռիվ չկա, – ծայնեց եկվոր ծերուկը:

– Խաբեական խոսք է ասել, հայրիկ, մի՛ հավատա, – մռնչաց վիթխարահասակ բերդապահ զինվորը եւ անվրեպ նետահարեց մուլլային: Բանագնացներն իրար անցան: Կանանց վայնասունն արծագանքեց ձորերում: Աչաղվեցի բերդապահների հորդորով բացեցին դարպասը, որ ներս առնեն յուրայիններին: Թաքստոցներից դուրս եկան ասկյարները եւ քարտակներից գահավիժելով ինչպես հեղեղ, սրամարտելով մտան Կկվաքար: Բերդաքաղաքը շանթախար եղավ: Կայազորի կտրիճների մի խումբ, Սմբատ զորապետի դե-

կավարությամբ, մայր բերդից խոյացավ դեպի կամուրջը եւ նետերի տարափի տակ ընդունեց մարտը: Մոտակա սարավանջերից ջահերով թշնամական նոր զորախմբեր էին գալիս: Կամուրջն այրվում էր:

– Հասանը փախչո՛ւմ է, – բղավեց մեկը դղյակի դիտաշտարակից:

– Թուլական թագավորին արժանի փեսա է, – այրվող կամրջի վրա հառաչեց Սմբատ Վաժունեցին՝ նետն առնելով կրծքին:

Գիշերային բերդաքաղաքը նման էր շնաճանճի վնասված բույնի: Հասանը հրամայեց թիկնապահներին՝ թագուհուն ու ընտանիքի մյուս անդամներին գաղտնուղիով հասցնել մոտակա Բաղաբերդ գյուղ, որտեղ երկվարներ էին պատրաստել: Կատան հեռանալ չէր կամենում, եւ Հասանը, գրկելով փոքրիկ Խերիսանին, ահազու աղաղակեց.

– Ես սրան որտեղի՞ց մայր գտնեմ:

– Վա՛յ մեզ, վա՛յ մեզ: Հորս թագավորական տունն է ավերվում: Փրկյա մեզ, Քրիստոս աստված, – ողբում եւ առ երկինք պաղատում էր Գրիգոր թագավորի դուստրը:

– Բաղաց իշխաններն են լքում իրենց երկիրը, – թունոտ վրա բերեց Հասանը, – իմ տեղեկություններով սելջուկից փախած Մահեւանը հիմա Շիրակ է հասել, իսկ Համտունը՝ Վայքի Հրաշկաբերդ...

– «Իրենց երկիրը», – ցնցվածի պես մտքում կրկնում էր Կատան: Եվ կանացի հնազանդությամբ նաժիշտի ետեւից գնաց դեպի գաղտնադուռը:

Քարագնաց ու ծերպամուտ ասկյարները մթության մեջ, հողեհի բոցերի ներքո, արդեն կռվում էին մայր բերդի տարածքում: Գիշերային չարագուշակ ժխորը երբեմն ճեղքում էր թուրքաբարբառ վայնասունը. բաղացի կտրիճները, մթան մեջ որսալով նրանց, պարսպից դուրս՝ անդունդն էին նետում:

Կռվի թեժ պահից ժամ առաջ, առանց յուրայիններին հրաժեշտ տալու, Հասան խաչենեցին՝ Բաղաց թագավորի խույրը գլխին, պարկեր շալակած երկու ծառայի ուղեկցությամբ դուրս եկավ բերդից: Աքլորականչին Բաղաբերդ գյուղում առավ իր ընտանիքն ու Գեղվաձորով ճողոպրեց իր հայրենի տունը՝ Խաչեն:

Սահմի ամսվա Չոպաբեր օրը (հոկտ. 18) օրհասական եղավ Բաղաբերդի համար: Սելջուկը տեր եղավ գիշերային

## Ավանդավեռ

բերդին: Նա սրածեց մինչև հնագանդեցնելն ու գերի հանձնվածներին փակեց եկեղեցու մեջ:

Վրա հասավ դառն ու դժմոհակ ժամանակը:

Բաղաբերդի գիշերահամակ բոցերը ճառագում էին մինչև անդնդախոր Կապանա գետի պղտոր կոհակները: Արնահոտ գետից լույսի փայլը հասնում էր Քաշունիքի բարձունքներին: Լեռնածերպերում սսկված գեղջուկ մշակներն ամբողջ գիշեր հետեւում էին բերդաքաղաքի հոգեվարքին, ողբում գերյալ հայրենի եզրաց դառնադետ ճակատագիրը:

Երբ արփին շողաց Արեւիք լեռնապարից, եւ ժամն էր Շառավիղյալ, աթաբեկը շքախմբով ժամանեց Բաղաբերդ: Իջնելով սեւաթույր նժույզից, ուղղեց կարակուլ ոչխարենին, շուրջառի փեշերն առավ ափերի մեջ, անցավ տապալված դարպասներ ու փնտրելով, հարցական մայեց խազինադար– գանձարանապետին:

Տիրակալին ուղեկցեցին բերդի ժայռափոր պահատունը, որի կապարե կնիքն արդեն հանել էին: Կերոնների լույսի ներքո, խազինադարի կարգադրություններով ոսկեղենն ու ակնեղենը դասավորում էին կաշվե պարկերում՝ դավթարում նշումներ անելով:

– Օ՛, արեւափայլ, ակնագարդ այս ոսկե խաչը Տաթեւի խալիֆայինն էր, այս շողափայլ սպասքը Սանաքյարին թագավորինն էր, այս...

– Իսկ այս ի՞նչ դավթարներ են դարակներին: Գյավուրի՞ լեզվով են, թե՞ իմ, – թարիխչիին ընդհատեց Եւտկուզը:

– Իրենց լեզվով են, իրենց սուրբ գրքերն են: Ունեն եւ հույն ու ասորի գիտունների գրքերը, Բալագուրիի եւ ուրիշ մուսուլմանների քիթաբներ՝ թարգմանած իրենց լեզվով: Սա Զուդուդալ-Ալամն է, որում կա, թե այս Կապանն ունի ընտիր բամբակ, – բացատրություն տվեց թարիխչին եւ ավելացրեց.

– Տասը հազարի հասնող այս կաշեկույտը չի կարող զորացնել աշխարհատենչ սուլթանիդ: Լավ է՝ այն կրակի ճարակ դարձնենք կամ գետը թափել տանք:

– Օ՛, վեհագույնդ բոլոր մուսուլմանների, – մեջտեղ եկավ վայելչատես մի երիտասարդ, որ պալատական բանաստեղծ էր՝ Նիզամի Գյանջեւին, – որքան հաճո են լսելիքիդ իմ քափոներն ու

գագեղները, առավել հաճո է ինձ այս անհավատների նարեկը: Քո ծառան այն կարդում է հենց իրենց լեզվով: Աղաչանքս է՝ մի ընդունիր թարիխչիի առաջարկը: Այս ազգը գրքի խենթ է: Տիր ու ցան արա այս մատենադարանն աշխարհքի երեսին: Ոսկի առած, քո ոտքն են գալու, որ վերստին գնեն կտակարանները:


Աթաբեկին դուր եկավ բանաստեղծի խորհուրդը եւ հրամայեց կուսակալներին՝ գրքերը բարձել ուղտերին, ով ինչքան կամենում է:

Չազարամյա անխորտակելի բերդաքաղաքը նենգաբար նվաճած առաջին թշնամին զննում էր բերդատարածքի շինությունները, հիանում նրա բացառիկ դիրքով: Արեւելակողմից բերդը տիրական էր Բաղքի վրա, արեւմտակողմից՝ Չորքի:

Եւտկուզը մոտեցավ կամրջախելի մոտ հավաքվածներին: Սեփները գլուխ չէին հանում տապալված սրբատաշի վրա պատկերված արեւային ժամացույցից: Թարիխչին, որ ամենագիտունի համբավ ուներ, մեկնաբանեց, որ դա գյավուրների ամենագորավոր խաչքարն է: Տիրակալն այլայլվեց: Թարիխչին, որ նրան մեծարելու առիթը բաց չէր թողնում, սիրահոծար խոնարհվեց տիրակալի գոտկատեղին եւ, դժկամության չհանդիպելով, վարժ շարժումներով նրան միզեցրեց կարծեցյալ խաչքարի վրա:

– Այս կալայի (բերդի) անունը պետք է մոռացության տրվի, – հոխորտաց տիրակալը, – գյավուրն այլեւս չպիտի գլուխ բարձրացնի: Թավրիզից դերվիշներ բերեք, որ այստեղ Ղուրան կարդան, սրբագործեն վայրը եւ այն դարձնեն զեյվա:

Ավարառու գունակի սերասկյարին հրամայեց՝ գերիների միջոցով քանդել դղյակը, եկեղեցին, փուռը, աղյուսի



Բաղաբերդ

թրծարանը, ապականությամբ լցնել ջրամբարները: Եվ ինչ ավարի չի առնվել՝ վիմագրեր, խաչքարեր, գործիքներ ու ամանեղեն, թափել տվեց երեք կողմի անդունդներն ի վար:

Շամսադդին Եւտկուզը ոսկեբեռ ուղտերի քարավանը հանձնեց զորապետ ավագ որդուն եւ նոր ժամանած իշխան Ալակունին ու պատվիրեց՝ անվնաս հասցնել Նախիջեւան:

Նիզամի Գյանջեւին ավարից Նարեկն իրեն վերցրեց:

Երկու օր անց, երբ բերդամերձ գյուղերի ավարը՝ անասուններ, զենք, կահկարասի ու սննդամթերք, տնօրինել էին, եւ օրն էր երեզվան, Աչաղուհի հոնուտ դաշտում հավաքվեցին հրաժեշտի խնջույքի: Աշուղները տափաստանաբնակի մուղամներ էին կլկլացնում: Իժերն իրենց վրա առնելով, օձախաղացները հիացք էին պատճառում հաղթողներին: Երբ օձահման խայտաճամուկ Նայա վիշապը դրեց աթաբեկի ուսերին, Նախիջեւանի, Չամադանի, Թավրիզի ու Գանձակի տիրակալ Շամսադդին Էլրագյազը փառաբանեց ալլահին, որ իր

## Ավանդավեպ

գահակալման ողջ պատմության մեջ իրեն պարզեցեց ամենաճոխ ավարը՝ Բաղաբերդի հարստությունը:

Արծաթափայլ սինու վրա մատուցեցին մտրուկի խորոված ազդր, տիրակալը գոչեց.

– Մեր Մեծությունը երախտիք ունի այս գյուղի նկատմամբ, այստեղ ենք առաջինը մեր արդար հացը կտրում: Ալլահին այս գյուղի միջոցով մեզ օգնեց: Ի՞նչ է այս գյուղի անունը...

– Աչախլը, Աչախլը, – իրենց հնչաբերունին հարիր, բղավեցին չավուշները:

– Եվ ինչո՞ւ են մնում անհավատ ու անհաղորդ մեր կրոնին, – բազմանշանակ մռտաց նա, – թող մեր հավատքին դառնան եւ շեն ու հաստատ մնան:

Ելտկուզը դեսպակից շրջվեց դեպի հարձերը: Սերասկյարներն անցան գործի: Գյուղում իրարանցում սկսվեց: Ասկյարներն ընկուզենու տակ հավաքեցին ողջ մնացած տղամարդկանց ու մանչուկներին, գերիներից ջուրեցին աչաղվեցիներին: Ջուռնա-թմբուկի նվագի տակ թլպատողներն առաջ եկան: Սեղի հրահանգով տկլորացնում էին մեծին ու փոքրին, պառկեցնում քուրծի վրա: Յեթինը, ինչ-որ աղոթք ասելով, ասկյարների դիվական քրքիջի ներքո նշտարն ու եղեգնափողը մոտեցնում էր ընկածի ցայքին: Թլփատվողը, աղիողորմ վայնասուն բարձրացնելով, ցավից գալարվելով դեպի մոտակա եկեղեցու բակն էր վազում: Երբ Համազին մեղան բերեցին, նա բղավում էր.

– Երկրորդ անգամ մի՛ արեք, ինձ Կապանա ամռանն են թլփատել...

– Օ՛ տայր ինձ զծուխ ծխանի Եվ գառաւօտն Նաւասարդի, Չվազելն եղանց եւ զվարզելն եղջերուաց, – խաչքարին կրթնաց՝ երգում էր Տեր– Սահակը ավերակ Շլորուտի եկեղեցու գավթուն: Մարդակեր գայլերի ոհմակից մագապուրծ՝ գավթո մտան անտուն ու թափառական երեք կին:

– Աղոթիր մեր փրկության համար, Տեր հայր, մարդիկ գազանի բաժին են դառնում, – խանչխանչ էր գալիս ցնցոտիավոր կինը:

– Թուրքը մարդուս գլուխն է կերել, գայլը՝ երեխայիս, խալան երեսանցու է չանթել, – մղկտում էր հերարձակ գեղջուկուկին:

Քահանան անտարբեր էր: Լաչակով կինը նրան վայրի խնձոր մեկնեց:

Չվերցրեց:

– Ո՞ւր է ոսկե լանջախաչը, որ համբուրում էի, դա է՞լ թուրքին մնաց, – հեզմական խոսեց հերարձակը, – ո՞ւր է մեր աստվածը, տուն ու տեղս են ավերել:

– Մեք փող հարուստ եւ թմբկի հարկանեաք.

Որպէս օրէն էր թագաւորաց, – շարակնում էր քահանան՝ հայացքը հառած դիմացի Քաչինձորին, որտեղով դանդաղ առաջ էր գնում սելջուկյան գունակը՝ ավարը բարձած գրաստներին: Հետո փարվեց խաչքարին ու ողբում էր հորդաբուխ արցունքներով.

– Ամենատես Երկնավոր, ինչո՞ւ աշխարհի վերջն իմ երկրով ավետեցիր, սելջուկի յաթաղանով հայի վերջին ուտանը բնավեր արեցիր, Սյունյաց իշխանական տներն արմատից կտրեցիր, բոլորի ապավեն Բաղաբերդը մատնեցիր հեթանոսին: Մենք խղճահարության եւ կարեկցանքի ենք արժանի, որովհետեւ մեր կորուստն ու ավերածությունն առավել եղան, քան Երուսաղեմինը՝ Նաբուգոդոնոսոր արքայից: Մեզ համակեց վերջին թշվառությունը՝ անդառնալիորեն ու հավիտենապես...

Հավաքած վայրի խնձորն ուտելով, կանայք խղճահար մայուն էին քահանային: Իսկ նա, աղոթքը վերջացնելուց հետո, կաշեկազմ Ավետարանը թողեց խաչքարին, դեն նետեց տրեխները եւ արեւախանձ արեգունիով մեկնեց դեպի ձորը:

– Սա էլ է ցնորվել, – թթու խնձորը չփիպցնելով, ասաց լաչակավորը:

Տեր-Սահակն անցավ Չորքի գետն ու, քարավանին հեռվանց հետեւելով, գնաց նրա ետեւից: Աշնանային ձորի բուրմունքի փոխարեն նրան արբեցրել էր գերության տարվող մատենադարանը, որ ավար դարձած՝ մայր մտնող արեւի հետ անցնում էր Բաղաց սահմանասար լեռնանցքով:

Մատենագետը հասավ լեռնանցք, քարավանը տեսադաշտում էր: Հոգեկան տվայտանքին չդիմանալով, Տեր-Սահակն իր արյունոտված մարմինը թողեց ոսկեդեղին անթառամների լանջին ու հրեշտակի թելով... հանգաւ ի Քրիստոս:

Ջուռնայի նվագի եւ թմբուկների որոտի տակ Էլրագյազը մտավ Նախիջեւան: Դիմավորեցին գահաժառանգը՝ Մուհամեդ Ջահան Փահլավանը եւ իր մտերիմը՝ Ալակուն Օրբեյան իշխա-

նը: Ալակունի բախտի անիվն ակամա էր ամրացված սելջուկյան կառքին: Իր տոհմակիցների ոչնչացման վրիժառությանը լցված՝ նա անձնուրաց ծառայում էր Ելտկուզյաններին: Վլադիմիր– սուզոլայան ռուսական գունդը, որ ճակատելու էր գալիս սելջուկների դեմ, սուրհանդակի միջոցով Տփլիսում պահելով, Ալակունն արդեն ավանդ էր ներդրել Բաղքի թագավորության կործանման մեջ: Ելտկուզյանները նրան խոստացել էին Ռեյ, Սպահան եւ Ղազվին քաղաքների ամիրայի պաշտոնները եւ տեր եղան իրենց խոսքին:

...Ավարաբեռ ուղտերի քարավանն ուղղվեց դեպի ապարանքի գանձարան, իսկ աթաբեկն իր շքախմբով այցի գնաց դամբարանաթաղ:

– Վարպետաց վարպետ, – դարձավ նա Աճեմ ճարտարապետին, – թե գյավուր մնայիր, երբեք հայտնի չէիր դառնա: Իմ գանձարանը լիքն է, կարող ես սկսել մեր տոհմական դամբարանի կառուցումը:

Աճեմի աչքերը փայլ ստացան եւ արտորոնք աթաբեկի ոտքերն ընկավ:

...Բաղաբերդի ավերումից չորս տարի անց Շամսադդին Ելտկուզը մեռավ ու թաղվեց Աճեմ Նախիջեւանցու կառուցած մեծաշուք դամբարանում: Հետո Նոյյան ոստանում հայտնվեցին Մոմինա խանումի եւ այլ ակնեղեն դամբարաններ:

Իսկ Բաղաբերդն ահա ծխում է ութ դարից ավելի: Կապանա տանն առ այսօր թելում է թագավորության ժամանակներում ստեղծված ասացվածքը. «Թօրքըն օխժու անա յա»: Երբ մի տեղ ծուխը սովորականից երկար է տեսնում, նոր կապանցիներն իրենց նախնիների խոսքն են հիշում.

– Բաղաբերդի ծուխն է:



Դիմանկարներ

# Ձագ Հաբանդեցի՝


Յ Կ՛Ի Յ Կ՛Յ Ն՛Յ Խ՛ Ը՛»՛՛՛  
»՛՛՛՛՛ Ն՛՛՛ Ս՛՛ Յ՛՛ Յ՛՛

## ՌՈՒՇԵՐՏ ԷԶԱՆԱՆՑԻ

Չվիճարկենք. քաղաքակրթության արշալույսը մետաղամշակության յուրացման պատմական ժամանակաշրջանն է: Թանգարանային պղնձե, բրոնզե կամ երկաթե հնամուշ ցուցադրություններից ականա կարելի է մակաբերել, որ դրանց ստեղծման ժամանակներում մարդիկ տիրապետել են հանքաքարից մետաղն առանձնացնելու, կռելու, ողորկելու, դրվագելու արհեստներին:

Հնագետներից ոմանք, ըստ կարողության ու ճաշակի, մետաղամշակման նախագնացներ են համարել Միջագետքի, Փոքր Ասիայի, Կովկասի, հս. Աֆրիկայի եւ այլ երկրներ: Ըստ անգլիացի կովկասագետ Դ. Լենգի՝ մ.թ.ա. 5-րդ հազարամյակից շումերները, եգիպտացիներն ու բաբելացիները պղինձն օգտագործել են մաքուր տեսքով: Ենթադրվում է, որ պղնձաքարը ներկրում էին հյուսիսից՝ Հայաստանից: Հնդիկ հնագետ Ս.Դիքչիթն ավելի կոնկրետ է. «Միանգամայն հնարավոր է, որ «արմենոիդները», եթե նրանք իսկապես իրենց հետ Եգիպտոս բերին պղինձ, արդյունահանում էին ինչ-որ ավելի հյուսիս ընկած աղբյուրներից, հատկապես ժամանակակից Հայաստանի լեռներից»:

Պեղումներով պարզված է, որ «Հայաստանում պղինձը հայտնի էր մ.թ.ա. 4-րդ հազարամյակից»: Բրոնզի դարում (III-I հազարամյակներ) Հայկական լեռնաշխարհում, ընդամին եւ Սյունիքում,



զարգացել են բրոնզի մշակման տեղական կենտրոնները: Նվաճողական պատերազմներին վերջ չկար: Վկայակոչելով եգիպտական քուրմ Մանթոնի (IV-III դարեր մ.թ.ա.) պատմությունը՝ նորագույն հետազոտողները պարզել են, որ մ.թ.ա. մոտ 1710թ. Մեծ Հայքի ռազմիկները գրավել են Եգիպտոսը, իշխել մոտ 150 տարի, ներդրել անձայնավոր այբուբենն ու մետաղի գործածությունը, երկամիվ սայլը եւ այլն: Արդեն մ.թ.ա. 1500-ական թվականներին Հայաստանում հաջողությամբ կիրառում էին մետաղների մշակման հնարամիտ գործընթացների բազմազան եղանակներ: 2-րդ հազարամյակում Սյունիքի մարզը, ի թիվս այլոց, դարձել էր մետաղահանության, մետաղամշակության ու փոխանակության մշակակալից կենտրոն: Այդ են վկայում պեղածո բազմաքանակ նյութերը. զորօրինակ՝ Է.Ռեյսերի՝ Տեղ գյուղում 1898թ. ութ դամբարաններից հայտնաբերած դաշույնները, ապարանջանները, բրոնզե կոճակները եւ այլ իրեր, որոնք հնագետ Օ.Խնկիկյանը թվագրել է մ.թ.ա. 2-րդ հազարա-

մյակով:

Բրոնզի դարը մեր պատմագրության մեջ ժամանակագրման մշակման ունի. 2492թ. Հայկի ու Բելի պատերազմն էր: Իսկ մեր Պատմահոր իմաստնախոս բերանն առ այսօր ոգում եւ ուսուցում է բոլորիս. «Հայկ ծնանի զԱրամանեակ. Արամանեակ ծնանի զԱրամայիս. Արամայիս ծնանի զԱմասիայ. Ամասիայ ծնանի զԳեղամ...Գեղամ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սեգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկաղեղն: ...Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք»:

Այս մեր նախահայր Սիսակին ժամանակագրել է ՂԱ-լիշանը՝ մ.թ.ա. 2100, կորովաբանել սյունեցիներին. «Սիւնիք յամառագոյն իմս թուին հանդիսացեալ ի պահուստ ազգային ոգոյ եւ աւանդից»:

Իր ժամանակի պատմագրությանը խորագիտակ Սյունյաց մեծահռչակ պատմիչը՝ Ստ. մետրոպոլիտ Օրբելյանը, կարծես, լրել-շարունակել է Պատմահորը. Սիսակը սերել է Բաղակին, որի անվամբ է Կապանա տան անառիկ Բաղաբերդը, եւ Սիսակի մույն տոհմից էր Ձագ նահապետը, որ կառուցել է Հաբանդա բերդն ու այն վերանվանել Ձագեձորո բերդ: Հետեւելով Ալիշանին՝ Աճառյանը Բաղակին դնում է մ.թ.ա. 1850թ.: Առասպելի կասկածի մշույլ չունեցողի համար ակներեւ է, որ Բաղակ Սիսակյանն ու Ձագ Սիսակյանը գրեթե ժամանակակիցներ են: Սա, թերեւս, հնագույն ժամանակագրական ամրակայուն է Սյունիքի պատմության մեջ:

Բաղակ անվան ծագումնաբանության մասին խոսել են Գր.Ղափանցյանը, Ն.Արդնցը եւ ուրիշներ: Ձագ անվան արմատական քննությունը թեական կարծիքների տեղիք է տվել՝ սակ, ծագ եւ այլն: Ամտարակույս, այն մեր նախնյաց համար կիրարկելի անձնանուն էր: Արձագանքները գտնում ենք 9-րդ

## Դիմանկարներ

դարում, երբ Սյունիքում հայտնի էին Կապանա Չագիկյանները, գործիմասկ՝ Չագիկ իշխան, հայր Վահանի: Վերջինիս անվամբ 911 թվականից առ այսօր կա Վահանավանքը:

Ըստ Զր.Աճառյանի ստուգաբանության՝ հնդեվրոպական նախալեզվում ծագը հասկացվել է հատկապես թռչունի ձագ: Իրանյան սոգդերի լեզվով այն տղա կամ սերունդ է նշանակում: Բայց վարկածի մի արահետ էլ կա: Պատկերացնելու է, որ մետաղամշակության օրրանում մարդն իր կացութեան գուգահեռել է զարգացման աստիճանին հարիր հոգեւոր-մշակութային կյանք, որ էր բազմաստվածությունը: Մեր նախնաց կրոնը ձեւավորվել-զարգացել է, հարկավ, բնության հետ փոխհարաբերվելու արդյունքում: Պաշտամունքային բազմազանությունն առնչվել է ընդերքի, կրակի, ջրի, օդի, երկնքի հետ: Զեթանոսականը ցայժմ էլ ինչ-որ չափով արտացոլում ունի մարդկանց պատկերացումներում: Եվ տեղին էր սպասել, որ նորագույն հետազոտողները Սյունիքում պետք է մակաբերեին բազմաթիվ տեղանունների դիցաբանական ծագումը: Վերջին խոսքը բազմաբեղուն Սերգեյ Ունառյանին է՝ «Սյունիքը դիցարան» անգլագական աշխատությամբ, որը մեր երկրամասի հնագույն պատմության վրա գիտական նոր լույս է սփռում: Ի շարս այլոց՝ Ունառյանը մատնանշել է հայերենի՝ ցարդ չնկատված ծղ կամ ծաղ բառարմատը, որով առաջացած դիցանուններն աղերսվում են կրակի պաշտամունքին: Այդպիսին են Սյունիքի հինավուրց Ծղու, Ծաղթանու, Ծղուկ, Ծաղկերտ, Ծղեկյաց գյուղանունները: Քանի որ հին աստվածությունները տարբեր գործառույթներ են ունեցել մարդկանց պատկերացումներում, ապա երկբայելի չէ կրակի եւ թռչունի պաշտամունքային կապը: Ըստ այդմ՝ Չագ անձնանունը կարող է լեզվի առավել հին վիճակի ծղ (կրակ) արմատի արձագանքը լինել (ցայժմ էլ Սյունիքի խոսվածքները բառասկզբում ձ հնչյուն չեն հանդուրժում): Ծաղը գրաբարում վերառվել է ձ-ով, որի ազդեցությամբ դ-ն փոխարկվել է գ-ի կամ արտասանական ք-ի: Արդ, ձագը նախապես կարող էր կրակ կամ հուր իմաստներն ունենալ (հմմտ. Զրայր, Զրաչե, Զրածին անձնանունները):

Երբ պատմության հողովություն հայերս մոռացանք Չագ անձնանուն-

ըն կամ այն դարձրինք փաղաքական՝ փոքրիկին ծագուկ դիմելով, միջնադարում սյունեցիները Չագեծորը սկսեցին անվանել ծակեր: Ծակ բառը հայերենում գործածվել է նաեւ «քարայր» իմաստով, հմմտ՝ Մեսրոպյան աշակերտների հետ գնում, լեռնակյաց, սորամուտ, ծակախիթ էր դառնում: 10-րդ դարում խորեզմի արաբագիր հանրագիտակ Բիրունին Չագեծորը կոչել է Սակասուր (արաբերենը ձ-ն ուղղակի չի տառադարձում) եւ նշել, որ այնտեղից բերված թուտարի դեղաբույսը քաղցկեղի մի տարատեսակը բուժող հատկություն ունի: Ի դեպ, արաբերեն թուտարին հայերենում ձագախոտ է կոչվում: Չագախոտի բուժական նշանակությունը հայտնի է եղել նաեւ մեր Ամիրդովլաթ Ամասիացուն: Արդ՝ ձագախոտը Չագ նահապետի անվամբ է, թե՞ ինքը բնագետ-բժշկի համբավ ուներ...

**II** *Թերեւս Շահնամն դյուցագ-նապատումի հերոս Շավերան Չանգի անվան ազդեցությամբ մեր հարեւան պարսիկները Չագեծորը կոչեցին Չանգեզուր, եւ նրանց հետեւելով՝ թուրքերը՝ Չյանգյազուր: Առաջինն Ալիշանն է կոչել, որ բոլոր տարիներն էլ նշում են նախնական Չագեծոր ձեւից:*

Յնամենի Սյունիքը, մեր պետականության կորստյան վայրիվերումների համեմատ, երբեմն հավակնել է նշանակալից դարձած իր առանձին տարածքների անվանը: Այսպես, 14-րդ դարից այն կոչվել է Երկիր Ղափանու: 1652թ. ձեռագրված մի հիշատակարանից. «...մեղսապարտ Մովսես սուտանուն երիցո՝ ի երկրէն Ղափանու, ի մյուս երկրէն Չագեծորո, ի գեղջէն Գորիս»: Չագեծոր անունը, որ տրված էր Վարաքակնի մեծատարածք բնաձորին, գործածվել է առմիշտ, եւ մինչեւ 3-րդ հանրապետության ժամանակը, Սյունիքը, որ երբեւէ ձգվում էր Սեւանա լճից մինչեւ Արաքս, հասկացվում էր Չանգեզուր աղակալված անվամբ:

Չագեծորը մաս էր կազմում «Աշխարհացույցում» առբերված Զաբանդ գավառին: Զաբանդ տեղանունը, որ Գորիսի շրջանի (ԶԽՍԶ վարչական բաժանմամբ) հնագույն անվանումն է,

Զյուբշմանը խուսափել է բացատրել: Զ. վրդ. Սանտալճյանն այն ծագած է համարել Արաքսի հովտի Բաբանիս տեղանունից, որը գործածված է Ատրեստանի մի արքայի վերագրվող արձանագրությունում: Դա մերժել է Ս.Ունառյանը եւ տվել իր բացատրությունը. «Զաբանդ անվան արմատը հնդեվրոպական խեթերենում հնչել է հալե-գոհել, որը նորխուռներեն տառադարձությամբ խալու-մատաղ անել է: Զայերենը, ըստ որոշ հեղինակների, հայերենին մերձակից այդ լեզվի հնչումի դիմաց ունի հաղ արմատը, որից եւ՝ հաղորդություն, ճաշակ, սրբություն»:

Զետեւաբար, ըստ Ունառյանի, Զաբանդ անունն իր ծագմամբ նշանակում է զոհարան կամ ծխարան: Զարանման է եւ Սյունիք անվան բացատրությունը:

Զաբանդ անվան այլ ստուգաբանություններն էլ հետաքրքիր են: Եթե նախադիր h-ն մի կողմ դնենք, ապա կունենանք վաղնջական հայերենի (ուրարտերեն կոչվածը) աբբա՝ հայր բառը: Վերջածանց անդ-ը հոգնակիակերտ է: Ուրեմն Զաբանդը է՝ հարք, հայրենիք, ոստան: Զրապուրիչ է եւ պարզունակ մեկ այլ դիտարկում. ակներեւ տարանջատելի են պիլ. աբ՝ ջուր եւ բանդ՝ կապ արմատները: Այս պարագային մեր դատողության մեջ զուգորդվում է «ջրակապ, բանտված գետ» ըմբռնումը, որը հղվում է բնաշխարհիս զարմանահրաշտեսարանին՝ Սատանի կամուրջ կոչվածին:

Ինչեւէ. ղեկավարվենք Ունառյանով: Պատշաճում է, որ քարե բնական բուրգերի ու անձավների ինքնատիպ երկրամասը բազմաստվածության դարաշրջանի զոհարան-ծխարան լինի: Արդ, տրամաբանական է, որ Զաբանդա բերդը, որն, ըստ Ս.Բարխուդարյանի, եղել է Լաստի խութի ապառաժների վրա, գոյություն է ունեցել Չագ նահապետից ավելի վաղ, եւ, իր գործունեությանը համեմատ, անվանի Սիսակյանը կամ ընդարձակել է, կամ վերակառուցել: Եթե այս վարկածը դուրսով մերժելի է, ապա անվիճելի է, որ Զաբանդ գավառանունը եղել է մինչեւ Չագ նախնին: Դնում ենք հնագետի մի դիտողությունը. «Զաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է Չագեծորի բերդ»: Ահավասիկ, թե որքան հին է քաղաքակրթության այն սովորույթը, երբ դրանք են ու քաղաքները վերակոչվում են համբավավոր այրերի (տիկնանց) անուններով: Դե ինչ, մեր նահապետին կարող ենք մե-

## Դիմանկարներ

ծարել՝ կոչելով Ձագ Զաբանդեցի:

Բնականաբար, պատմության հոլովույթի գրեթե 4000-ամյա հետմախորքի վրա Ձ.Զաբանդեցին ներկայանում է դույզն-ինչ առասպելական կերպարով: Նա, անշուշտ, Մեծ Զայքի պետականության երեւելի հայկազուն էր, երկրամասի տիրակալ, զի «հայկական պետություն գոյություն է ունեցել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. 331թ.» Զայկազյան դիմաստիայի շուրջ 60 թագավորներով»: Սեւանա Լճաշենի՝ 3-րդ հազարամյակին վերաբերող դամբարաններից հայտնաբերված սայլերն ու իրերը խոսում են այն մասին, որ էնեոլիթյան (պղնձաքարի) դարաշրջանից սկսած Սյունիքի նստակյաց ցեղային միություններն ունեցել են ինքնուրույն մշակույթ, օտար զավթիչներին դիմակայելու ռազմական տնտեսություն:

Եվ այսպես է քաղցրաբանում մեր Զայր Ստեփանոսը. «Սկսած նախնի Սիսակից՝ այս նահապետության իշխանությունը ակներես հարազատությամբ որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ձիգ ժամանակով»: Սա զորավոր ազդանշան է, որ խորհենք գործիսյան որոշ տեղանունների՝ անձնանուններով ստուգաբանելու մասին: Այսպես, Գորայք-Գորիս տեղանվան հիմքում երևում է Գոր անձնանունը, որ գործածված ունենք համեմատաբար ուշ շրջանում. «Սյունյաց տեր Բաբիկը վիճակով բաժին է հանում Գորին խոտավանը»: Նաեւ, ըստ մեր պրոֆ. Գրիգորյանի տեղեկատվության՝ Ռուսա I արքայի (մ.թ.ա. 735-713թթ.)՝ Ծովինարում թողած վիճագրի մեջ հիշատակված Գուրիսյան երկիրը Գորայքն է: Նկատենք, որ միջնադարում տեղանունների հնչաբերումը հայցական հոլովով սովորական էր, հմմտ՝ Բնունիք-Բնունիս, Եղեգիք-Եղեգիս, Վժանիք-Վժանիս, Մոզք-Մոզս-Մոզես եւ այլն: Արդ, Գորիս հայցականը ենթադրելու է Գորիքից, քան Գորայքից:

Զաբանդի Գորու, Բաղքի Գորագիտ, Գեղարքունիքի Ձագ գյուղանունները, ըստ իս, անձնանվան ծագում ունեն:

Ի վերջո, կա՞ նպաստ, ըստ որի Ձագեծորո բերդը Լաստի խութի վրա էր: Ակադ. Աճառյանն առբերել է լեզվաբանների տեսակետները լաստ-լաստել բառերի վերաբերյալ: Դրանք են՝ տիրել մի երկրի, մի երկիր բռնել եւ այնտեղ տարածվել, բռնակալել, մի տեղ հաստատվել եւ այլն: Ահա թե ինչու իր երկրամասին սիրահարված սյունեցու համար Լաստի խութը պատմության բրոնզե խորքից հառնում է հայրենի եզերաց անվանահայր Ձագ Զաբանդեցու ավանդապատումներով:

## ԲՅ ՆՅ ԿՅՑ ԳՅԵՑ

2

Արեւելյան Զայաստանի վերջին՝ Սյունիքի թագավորության (970-1170) առաջին թագուհին է՝ Սմբատ Ա արքայի կողակիցը, հարսնությունը՝ Աղվանից տնից, դուստր Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի: Սյունիքի թեմակալ առաջնորդ, պատմիչ Ստ.Օրբելյանի երկից (1297թ.) մակաբերվում է, որ ամուսնու հետ եւ նրա վախճանվելուց հետո հովանավորել է մշակույթը, վայելել շինարարի փառք ու համբավ:

**Յերանք:** Գրիգոր-Յամամի որդի, քաջ ու բարեպաշտ իշխան Սահակ Սեւադան հորից ժառանգել էր Փառիսոսի իշխանությունն ու դրան միացրել Արցախի հարեւան Գարդման եւ Ձորոգետ գավառները: Նրա հաճությամբ դուստրերի ձեռքը խնդրել էին անվանի իշխանական տոհմերի երեւելի զավակները. Շահանդուխտինը՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Սահակյանը, Սահականուշինը՝ Զայոց գահի ժառանգորդ Աշոտ Երկաթ Բագրատունին: Սահակ Սեւադան անմասն չէր Սյունիքում ծավալված իրադարձություններին՝ սատարում էր համախմբմանն ու իշխանության կազմակերպմանը: Ս.Սեւադան բուն սեր ու հոգածություն ուներ մշակույթի ու դպրության նկատմամբ, որ ժառանգել էր հորից. «...իր տանը դպրապետներ կարգեց» (Կղնկ.):

**Անունը:** Զագարամյակների խորքում հայերենն ու պարսկերենը քույր լեզուներ են, բազմաթիվ բառարմատներ նույն են երկուսի համար: Արդի ընկալմամբ Շահանդուխտ անունն արքայադուստր է նշանակում՝ շահան-թագավորաց, դուխտ-դուստր: Պատմության հոլովույթում հայոց մեջ տարածված էր հատկապես իշխանական տներում: Մեկ այլ՝ Վարագ-Տրդատի դուստր

Շահանդուխտի անվամբ ցայժմ հայտնի են ժայռ, մատուռ, բերդագյուղ Գինական գետի (Տաթևջուր) աջակողմ բարձունքներում: Իսկ Շահանդուխտ Ա թագուհու անվամբ ավանդաբար սյունեցիները երբեմն կոչում են գորիսակողմ Տեղ գյուղը:

**Գործն է անմահ...** Պատմության սանդուղքի վրա թագուհիները մեծամասամբ երևում են պերճանքի ու քմահաճությունների հետմախորքի վրա: Շահանդուխտի պարագայում դույզն-ինչ այդպես խորհելը սրբապղծություն կլիներ. մեր ստուգապատում պատմիչը՝ հիացած նրա շինարարական գործունեությամբ, այլ մանրամասների չի անդրադարձել: «Երանելի թագուհի Շահանդուխտը... աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչածե վանքը, որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետեւ այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար Սբ Գրիգոր Լուսավորչի անունով... Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքեր. թունավոր զեռուններից խայթված, սեւացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռները, ցույց են տալիս վանքը եւ կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում: Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ նախավկա Ստեփանոսի անունով, հայոց ՆխԹ թվականին (1000թ.), այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաեւ աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաեւ պահեստներ, արհեստանոցներ, եւ վանքը շրջափակում պարսպով» (Օրբ.):

Պատմիչի՝ Սիսական տան պատմության մեջ պահպանվել է մի վճռագիր, որով Շահանդուխտ թագուհին Տաթևի վանքին է նվիրաբերել Տեղ գյուղը 998 թվականին: «Տեղ կոչված գյուղը, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, եւ ես խոսքով տեղից գյուղ էի դարձրել,

## Դիմանկարներ

ին երանելի թագավորի վախճանից հետո, նրա հոգու համար Տաթևի սուրբ կենտրոնական վանքին ու սուրբ նշանին տվեցի...»(Օրբ.):

**Սերնդագործությունը:** Սմբատ թագավորն ու Շահանդուխտ թագուհին երեք զավակի ծնողներ էին՝ Վասակ, Սեւադա եւ դուստր, որ Բաղքի գահակալ իշխան Աշոտի կինն էր: Սմբատ արքայի վախճանից հետո գահին բազմեց Վասակ որդին, ում պատմիչը մեծարում է Կորիճ պատվանունով: Վերջինիս եղբայր Սեւադան հռչակվեց իշխանաց իշխան: Շահանդուխտի թոռնուհին՝ Վասակ Կորիճի դուստր Կատրամիդեն, ամուսնացած էր Աշոտ 3-րդ Ողորմածի որդի Գագիկ Ա Բագրատունի թագավորի հետ: Կատրամիդե թագուհին հայտնի է Անիի Սուրբ կաթողիկե երկնաճեմ եկեղեցու շինությամբ, Սյունիքի մետրոպոլիտության աստիճանի վերականգնման ջանքերով:

Շահանդուխտ Ա-ի աղջկաթոռ Գրիգոր Ա թագավորի կողակիցն էր Շահանդուխտ Բ թագուհին՝ դարձյալ Աղվանից տնից:

**Չանգչիմ ի Քրիստոս:** Ամուսնու՝ Սմբատ արքայի վախճանից հետո Սյունիքի (Բաղքի կամ Կապանի) թագավորությունը կառավարում էր Վասակ որդին, եւ նրան զորավիգ էր իմաստախոս մայրը՝ Շահանդուխտ թագուհին: Թե որքան զուգահեռեց թագավոր որդուն, տակավին պարզված չէ: Վախճանվեց ու ամփոփվեց Վաղատնի (Որոտնավանքի) սրբարանի բակում: Սբ Ստեփանոս եկեղեցվո արեւելյան պատուհանի պսակի քարի վրա Ս.Բարխուդարյանը կարդացել-լուսանկարել է «ՇԻՆԵՑԱԻ ԶՐԱՄԱՆՈՎ ԹԱՎԱԴՐԻՆ ՍՆՊԱՍԱ Ի ԶԵՌՆ ՇԱՅՆԱԴՆՍՈՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱՎՈՒՅՆ ԶՈՅ» արձանագրությունը:

**ՈՌԲԵՐՏ ԷՋԱՆՑԻ**

## ԹՅ ՆՅ ԿՅ ԳՅ

**Յ**ոթնարքա երկրի ոսկեծղի տիրուհի: Սյունիքի թագավորության 200-ամյա ժամանակաշրջանում կառավարել են միմյանց հաջորդած յոթ տիրակալներ: Չորրորդը՝ Գրիգոր Ա Աշոտյան արքան, թագավորել է 1051-1072թթ.: Նա կնության էր առել Սահակ Սեւադա Ա-ի թոռ Սեւադա իշխանի դուստր Շահանդուխտին, որին իր հոր հորաքրոջից՝ Շահանդուխտ Ա-ից, տարբերելու համար ետիները կոչել են Շահանդուխտ Բ: Ամենաօրինակ բարեպաշտուհին կարողացավ դիմակայել վրահաս դժբախտություններին. վախճանվեց ամուսինը՝ Գրիգոր արքան, 1094թ. դավադրության զոհ գնաց եղբայրը՝ Սյունիքի Սենեքերիմ թագավորը, Գրիգոր-Շահանդուխտ թագավորական զույգը զավակ չունեցավ... «Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Շահանդուխտ թագուհու, Կատայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ» (Օրբ.): Ոսկեծղի տիրուհու անվամբ կառույցներ են պահպանվել մինչեւ մեր ժամանակները:

**Դինաստիական անցում:** Քանի որ Գրիգորն ու Շահանդուխտն անզավակ էին, ապա, իշխանների հետ խորհուրդ անելով, որպես թագավորության ժառանգորդ՝ Աղվանքից բերում են «Շահանդուխտի եղբայր, թագավորազն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլեւ՝ աստժուլ երկյուղած» (Օրբ.): Արդ, Սյունիքի թագավորական դինաստիան շարունակվում է Աղվանք-Արցախի թագավորազուններով: Ընդլայնվում են երկրամասերի ռազմական, տնտեսական կապերը: Աղվանքի երեւելիները բազմակի առումներով ապավինում

էին Կապան տանը: Վահան Ջեւանշերյանը Վահանավանքի «եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի եւ Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ»: ճողոպրելով թշնամիներից՝ Կապան եկավ Աղվանքի Տեր-Ստեփանոս կաթողիկոսը, վախճանվեց ու թաղվեց Վահանավանքում 1091թ.:

Սենեքերիմ արքայի եղբրական մահից հետո իշխանությունը ստանձնեց նրա որդի Գրիգորը: Մերօրյա հետազոտողները նրա գահակալությունը հաշվարկում են 72 տարի՝ 1094-1166: Ի դեպ, ըստ պատմիչի՝ «...իշխանությունը ստանձնեց Սենեքերիմի որդի Գրիգորը՝ թագավորելով քիչ ու թույլ» (Օրբ.): Թյուրըմբռնումն ի դերեւ է լինում, եթե մակաբերենք, որ թագավորության փաստացի կառավարումը մոր՝ Շահանդուխտի ձեռքում էր, թերեւս մինչեւ իր մահը՝ 1116թ.:

**Միջնադարյան դիվանագիտության սնանկությունը:** 11-րդ դարում սելջուկներն ասպատակում էին տարածաշրջանը, որը «ենթարկված ու հարկատու էր նրանց» (Օրբ.): Բայց Մելիքշահ սուլթանը խաղաղասեր գտնվեց, որից «թագավորական պատվով մեծարվում էր Սենեքերիմը, որը եւ երեւելի փառքով թագավորեց Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները» (Օրբ.): 1092-ին այդ սուլթանը մեռավ, եւ Սենեքերիմն այլևս վստահելի չէր: Երկու տարի հետո էմիր Փաղունը դավադրաբար սպանեց Սենեքերիմին Յին Կապանում, սկսեցին դառն ու դժնդակ տարիները: Բաղաբերդին հարեւանող Յին Կապանը շրջապատեց Բեկիարուխի Չորթման զորապետը: «...բազմաթիվ հետեւակ ծերպանուտ ու քարազնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր...» (Օրբ.): Դա 1103-ի աշնանն էր, եւ Սյունիքի կառավարիչներն էին մանկամարդ Գրիգորն ու իր թագուհի մայր Շահանդուխտը: Սյունյաց թագավորության մայրաքաղաքը ավերվեց, «կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ» (Օրբ.): Միջնադարյան



Դիմանկարներ

դիվանագիտության սնանկությունն ակնբերել էր: «Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ» (Օրբ.) եւ 1170-ին, Բաղաբերդի անկմամբ, վերացավ:

...Փոխարեն Գրոց նորա... Մեր միջնադարյան թագուհին մշակութամետ էր, սակայն հայտնվեց ռազմամոլության դարաշրջանում: Բոլորը չէ, որ Շամիրամ են, եւ ընդհանուր առմամբ կանացիությունը ներհակ է ռազմատենչությանը: Շահանդուխտ թագուհին Քրիստոսի անհագուրդ ծառայի մարմնացում էր: Նվիրատվություններ արեց Տաթևի վանքին եւ Վահանավանքին, ձեռնարկեց-կառուցեց չորս եկեղեցի: Մինչեւ մեր ժամանակները կիսականգուն պահպանվել է Վահանավանքի մայր տաճարից մոտ 70մ դեպի հարավ գտնվող Սբ Ածն եկեղեցին՝ կրկնահարկ ու պատշգամբով, որի ներսում՝ բեմին հարող հարավային պատին, արձանագրված է.

*Խ:ՇԼԵ: ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՎԱՆ-ԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵԲԱԴԱԻ ԱՂՎԱՆԻՅ  
ԹԱԳԱԲՈՐԻ ԵՎ ԱՄՈՒՄԻՆ ԳՐԻԳՈՐ  
ԹԱԳԱԲՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ ՎԱՄՆ ՈՉ  
ԳՈՒՈ ՄԵՐ Ի ՄԻԱՄԻՆ ԺԱՌԱՆԳ  
ԸՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՖ ՔՈՅՐՍ ԻՄ  
ԿԱՏԱՅՍ  
ՇԻՆԵՅԱՔ ՉՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ  
ԲԵՆ ԳԹՈՅ ՆՈՐԱ ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ  
ԵՄՔ  
ՆՄԱ ԿԱՏԱՐԵՆ ՉՍԲ ԽՈՐՎՈՐԴՆ  
ԵՖ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ՉՄԵՉ  
ԿՅՈՐԴ ԱՐԱՍՅԵՆ ԱՆՄԱՔ ՉԵՆ  
ՄԱՆՆ ՔԻ:*

Ակներել՝ Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1086 թվականին՝ Վահան Նախաշինողի հիմնարկերից 175 տարի հետո:

ՈՐԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

Օáí ë»ë  
Êáí ³ Ý³ ÝóÇ  
(êÛáõÝ»óÇ).  
İ ³ ÃáÕÇİ áë  
² Û»Ý³ ŪÝ Ñ³ Ûáo

*Ով կկանենա մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի:*

Մատթ. Ի-26

Եւ որպէս կենդանութեամբ սորա զուարճացեալ ցնծայր ամենայն ոք, սոյնպէս եւ մահվամբ սորա սգազգեստ լեալ տրտմեցաւ ամենայն ոք. ոչ միայն քրիստոնեայք, այլ եւ մահմեդականք, նաեւ քաղաքապետ ինքն Թահմազդուլի խան, որդին Ամիրգունայ խանին, եւ ամենայն իշխանք իւր՝ որք եւ եկին ի թաղումն Մովսէսի կաթողիկոսին, եւ սգակից լեալ քրիստոնէից՝ ողբային զմեռանիլն նորին զի այնպիսի աստուածահաճոյ եւ աշխարհաշէն այր պակասեցավ յաշխարհի...  
**ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԾԵՑԻ**

Մովսէս Խոտանանցի իր ժամանակակիցների աչքում մի արտակարգ երեւոյթ էր համարվում: Այսպիսի հռչակ, իհարկեւ, պետք է վայելէր այն մարդը, որ ընդհանուր ավերանքի ու վայրենության սեւ տարիներում բարեկարգության ճրագը վառեց հայրենի ավերակների մեջ: Եվ եթէ Մովսէսի գործերը չափազանց խոշորացված են երեւում, սրա պատճառն այն է, որ ժամանակը չափազանց աղքատ էր ազնիվ եւ ընդունակ մարդկանցով, ապականությունը չափազանց շատ էր այլանդակել մարդկանց բարոյականությունը: Համենայն դեպս, Մովսէսի խոշոր ծառայություններից մեկն այն է, որ Օա վերացրեց Էջմիածնի կաթողիկոսության ամենավատ չարիքներից մեկը՝ աթոռակցությունը, որի շնորհիվ միաժամանակ երկու, երեք մինչեւ իսկ չորս կաթողիկոսներ էին հանդես գա-

լիս եւ անվերջ խոշովությունների պատճառ դառնում:

ԼԵՆ

Ստեփանոս Օրբելյանի, իրեն ենթակա ուներ 43 բերդ, 48 վանք, 1008 գյուղ: Բայց Սյունյաց գյուղերի պատմության նկատմամբ մեր պատմիչները սակավապետ ու ժուժկալ են գտնվել: Դուրս-ինչ բացառություն են կազմում տասնյակ գյուղեր, այդ թվում եւ՝ Խոտանանը: Վաղ հեթանոսության ժամանակներից հիշված բազմաթիվ գյուղանուններ թվարկված են Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակում, որը 13-րդ դարում իր աշխատությանն է հավելել Ստ.Օրբելյանը:

Հաստատված է, որ պատմիչի բերած գյուղացուցակն ավանդված է վանքի հիմնադրման ժամանակներից: Ցուցակում Բաղքի Խոտանանի հարկաչափը 12 միավոր էր, հետեւաբար միջինից մեծ գյուղ էր:

Ս.Ունայանը Խոտանանը դիցարան է համարել եւ գյուղանունը հղել Վանի թագավորության Խուտուխնի աստծուն:

Խոտանանում շրջում է Խուտայի եւ Անոնի սիրո լեզենդը: Նկատենք, որ Անահիտ աստվածուհու անվան անմասնիկը փոխառություն է շումերերենից եւ նշանակում է «երկնային մետաղ» (Աճառյան):

Վերին եւ Ներքին Խոտանաները գտնվում են Էջանանի հովտում, Կապանից մոտ 12 կմ հյուսիս-արեւմուտք, Բարգուշատի լեռնաշղթայի հարավակողմ անտառապատ լանջին, Կատարի լեռնագագաթի հարեւանությամբ: Հիմնավորը Խոտանանին համապատասխանում է Վերինը: Այստեղ են 14-րդ դարում կառուցված հուշարձան-դամբարաններ եւ 17-րդ դարում վերաշինված ս.Աստվածածին թաղակապ եկեղեցին: Ըստ ձեռագիր հիշատակարանների, եկեղեցուն ընդօրինակվել են Ավետարան ու Կանոնագիրք:

Ինչպէս Ալիշանն է հաղորդում, Խոտանանի մոտ Մխիթար սպարապետը 1724 թվականին բախվել է Բարգուշատի խանին: Քաջագործել է Բալի գորավարը: Այս ճակատամարտն անհետք չի մնացել Էջանանցիների հիշողության մեջ: Խոտանանցիները փոքրով ու մեծով են զորավիգ եղել հաղթանակին



## Դիմանկարներ

Եւ, անձնուրաց կռվելու համար, կոչվել են խենթեր (դալի): Առ այսօր գյուղացիները մատնացույց են անում Զցոտ հանդամասը, որին այլազգին ասում էր «Էլմանի դլան»՝ հայերի հավաքատեղի, ուր տեղի է ունեցել ճակատամարտը: Մեր գյուղերի բարբառահունչ մականունների շարքում Խոտանանինը՝ պէլ, կարծում եմ, պատվական կլիներ ամեն մի գյուղի համար:

Մինչեւ ուշ միջնադար գործել է Բաղաբերդ-Տաթև բարեկարգ ճանապարհը, որ Բանուկ ճամփա/էլ յոլի/ անունն ուներ եւ անցնում էր Խոտանանի մերձակայքով: Շքանանցում պահպանվել է Բանուկ ճամփայի ավերակ իջեւանատան մի արձանագրությունը: Բայց տեսարժան այդ ճանապարհի՝ Աճանան գետի վրա կառուցված քարակամար երկու կանուխներն են: Կանգունը՝ արեւելյանը, թվագրված է հիջրաթով եւ փրկչականով վերծանվում է 1629, մաեւ ունի Սաադի «Վարդաստան»-ից մի քառյակ:

*Կասրի այս չափն ու կարգը  
շար փարիներ դեռ երկար,  
Թեկուզ մարտինս անկենդան  
լինի հողին հավասար...*

Պարսկատիրության շրջանում այս թվականը պատահականություն չէ: Դա էջմիածնի վանքի վերանորոգման բուռն աշխատանքների տարին է: Ու մաեւ՝ Մովսես 3-րդի կաթողիկոս օծվելու տարին: Նա, որ հետագայում մեր իրականության մեջ կոչվել է Մովսես Տաթևացի, Մովսես Սյունեցի կամ պարզապես՝ Մովսես Խոտանանցի, որովհետեւ «Երյաշխարհէն Սիւնեաց՝ ի գաւառէն Բաղաց, որ այժմ ասի Աճանան, ի գեղջէն՝ որ անուանի Խոտանան»: Մոտ երեքուկես հարյուրամյակ առաջ ապրած հայոց վեհափառ հայրապետի հոգեւոր եւ քաղաքական հարուստ գործունեության մասին գրել է նրա ժամանակակիցը՝ պատմիչ Առաքել Դավրիժեցի (Թավրիզեցի), նրան վերագրելով աստվածային շնորհք:

Հայրենի գյուղից ուսանելու գնալով Մեծ Անապատ, տաղանդաշատ պատանին տասնհինգ տարեկանում քահանայական աստիճան է ստանում Տաթևում եւ օրհնվում կուսակրոն արքեպ: Իր ուսուցիչ Գրիգոր Կեսարացուց թույլտվու-



թյուն ու խորհուրդ առնելով, ու խոտի ու երկրպագության է գնում Երուսաղեմ, անցնում Եգիպտոս, դպտական վանքերում ու մենաստաններում առավել խորանում գիտությունների մեջ: Եղել է Երուսաղեմի ս. Գարություն տաճարի լուսարար: Այնուհետեւ, մի քանի տարի ապրելով Կոնստանդնուպոլսում, վարդապետական գավազան է ստացել Գրիգոր վարդապետից եւ, ի վերջո, հաստատվել Տաթևում, ամբողջովին նվիրվելով լուսավորչական աշխատանքներին: Տաթևի վանքի մոտ գտնվող Մեծ Անապատի դպրոցը, որ 1610թ. հիմնվել էր Քաշաթաղի Մելիք Հայկազի նախածեռնությամբ, Մովսես վարդապետի մանկավարժական գործունեությամբ հռչակ է ձեռք բերում: Սակայն նրա եռանդը չսահմանափակվեց Որոտանի ծորով: Նրա նախածեռնությամբ եւ միաբանների համագործակցությամբ ստեղծվեց Հովհաննավանքի դպրոցը, դպրոցներ բացվեցին Սյունիքում, Այրարատում, Գողթնում եւ այլուր:

Լինելով ժամանակի ուսյալ եւ առաջադեմ հոգեւորական կոհորտայի ներկայացուցիչ, Մովսես վարդապետը հալածանքների կրեց տգետ ու խավարամիտ ուժերի կողմից, որոնց գլուխ էր զուգաբոռ Մելիքսեթ կաթողիկոսը, եւ որը «նույնպես ուղիղ ճանապարհի վրա չէր» (Դավրիժեցի): Նենգաբարո

Մելիքսեթը դեռ 1617 թվականին, կալանքից ազատվելու եւ կաթողիկոսական արժուր կրկին ձեռք բերելու նպատակով, հանձն էր առել ամեն տարի շահական զանձարանը մուծել 100 թուման կանխիկ դրամ: Այդ գումարը բռնի կերպով հավաքվում էր ժողովրդից եւ վճարվում արքունի թռչանոցի բազեպան բեկին, որպես ամենամյա ռոճիկ:

Հոգեւորականների բանասրկություններից ու տգիտությունից ճնշված՝ Մովսես վարդապետը վճռում է թողնել Սյունիքն ու անցնել Արեւմտյան Հայաստան: Երբ դադար էր առել Երեւանում, մի դիպվածով նրա հետ գրուցում է Ամիրգունա խանը եւ, զնախատելով ու մեծարելով վարդապետի իմաստությունն ու հոգեւոր ներուժը, նրան պահում է Երեւանում՝ երեք տարի նշանակելով կաթողիկե եկեղեցում: Վարդապետի փառքը կարճ ժամանակում տարածվում է հարեւան երկրներում, մա համակրանք է վայելում մաեւ շահական արքունիքում: Երեւանի ս.Աննիայի անապատում նրան եպիսկոպոս օծեցին:

**II** *Երուսաղեմում եղած ժամանակ Մովսեսը սովորել էր մոռնա սպիտակեցնելու արհեստը, եւ այս մասին իմացավ շահ Արքաս Մեծը: Արքայի հրավերով մա զնաց Սպահան, հիմնեց մոռնա սպիտակեցման գործատուն: Շահի հետ մտերիմ հարաբերություններ ստեղծեց:*

1627թ. Ֆահրապատում մա մեծ շուքով կազմակերպեց Քրիստոսի ծննդյան տոնը, որին հրավիրել էր մաեւ այլախավատ թագավորին. շահ Արքասին հանդիսությունը խոր բերկրանք ու հաճույք պատճառեց: Եվ մա հարցրեց խոջա Նազար Ջուղայեցուն. «Ձեր վարդապետն ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք, գա՞նձ, կալվածք կամ ուրիշ որեւէ բան, ինչ ինքը կամենում է»: Խոջա Նազարը

## Դիմանկարներ

պատասխանել էր. «Նա այնպիսի մարդ է, որ աշխարհն ու նրա հարստությունը զանց է արել, եւ դրանից ոչ մեկի պետքը չունի: Իսկ եթե շնորհ անես, նրան իբրեւ պարգեւ տուր Էջմիածնի լուսարարությունը, որպեսզի այնտեղ՝ այն եկեղեցուն սպասավորելով՝ աղոթի թագավորի կյանքի համար»:

Խոջա Նազարի խնդրանքը հաճելի եղավ թագավորին:

Նվաստս՝ այս լրագրային հրապարակումը շինողս, որ տակավին անհաս են հավատքին, գայթակղված են բարբառելու, որ Մովսես Խոտանանցուն Էջմիածնի վանքին ամրացնելը Քրիստոս աստծու կամեցողությամբ էր: Որովհետեւ, ինչպես Առաքել պատմիչն է գրում, «Աստվածաբնակ Սուրբ Աթոռը բոլորովին դատարկվել էր զարդերից. ոչ գիրք կար, քանի որ այնտեղ ժամասացություն չկար, եւ ոչ էլ ընթերցում, ոչ զգեստ ու շուրջառ, որովհետեւ ժամակարգություն ու պատարագ չկային: Մինչեւ անգամ Քրիստոսի իջման տեղն ու սուրբ սեղանը ծածկոց չունեին: Կանթեղների լույս չկար, այլ մշտապես խավարի մեջ էր, բայց մի այլազգի մահմեդական ձեթի ճրագ էր վառում եւ դնում բեմի վրա, այն էլ երբեմն-երբեմն անցորդ-ճամփորդների համար, որպեսզի տեսնելով այն՝ իրեն ողորմություն տան... »:

Կաթողիկոսները բնակվում էին Երեւանում կամ Երկրե Երկիր էին շրջագայում: Արդ, Մովսես Խոտանանցին Էջմիածնի վանքի երբեմնի փառքի վերահաստատման նախագնացը եղավ եւ ոգեկոչեց հետագա սերունդներին: Գետից ջրանցքով ջուր բերեց, եւ մշակներն ամենուրեք կուտակված հողը սկսեցին փորել ու խամնել ջրի հոսքին: Այսպես բացեցին հարթահատակը: Վանքին շուրջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին՝ նրա վրա ութ բուրգ կառուցելով: Հավելեցին կամ վերաշինեցին բազմաթիվ շինություններ՝ մենախցեր, հյուրատուն, սեղանատուն, փուռ, նորոգեցին տանիքներն ու գմբեթը, գտան ու վերադարձրին սուրբ նշխարները:

Շինարարի մուրճը զնգաց նաեւ մոտիկ ու հեռու գավառներում:

Բայց Մովսես Խոտանանցին փայլեց հոգեւոր կյանքի վերածնության ասպարեզում: Նա վերահաստատեց քրիստոնեական հավատի ու եկեղեցական ավանդության կարգերը, բացեց նոր դպրոցներ, մտահոգ-

վեց ուսումնատեւջ երիտասարդության կրթության կազմակերպման հարցերով: Նրա աշակերտներից էր, օրինակ, եկեղեցական գործիչ եւ փիլիսոփա Խաչատուր Կեսարացին, որը հետագայում հիմնեց Պարսկաստանի առաջին տպարանը:

1629թ. հունվարին վախճանվեց շահ Աբբասը, իշխանությունը կտակած լինելով միակ թռռանը /զավակներին ինքն էր ոչնչացրել/, որը գահ բարձրացավ շահ Սեֆի անվամբ:

Աստծու սուրբ այրին այս շահի համակրանքն ու վստահությունն էլ վայելեց եւ արքայական հրովարտակով վերացնել տվեց Էջմիածնի վանքի վրա դրված 100 թուման տուգանքը:

1629թ. հունվարի 13-ին՝ Քրիստոսի մարդեղության օրը, Մովսես Խոտանանցին օծվեց հայոց կաթողիկոս եւ նոր թափով շարունակեց շինարարությունն ու բարենորոգումները: Մատենադարանում պահպանվել են շահ Աբբասի հրովարտակը՝ Մովսես Խոտանանցուն Էջմիածնի վանքի լուսարարապետ հաստատելու եւ շահ Սեֆիի հրովարտակը՝ կաթողիկոսական օծումը արքունիքի կողմից վավերական ճանաչելու մասին:

«Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիչներից, որովհետեւ սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների ու օսմանցիների միջեւ, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից»: Կաթողիկոսը հանգավ ի տեր 1632 թվականի մայիսի 14-ին, երբ Երեւանի ս.Անանիայի դամբարանի վանքում էր եւ հավուր պատշաճի թաղվեց Կոզեռն բլրի գերեզմանատանը: Իր սկսած գործը նա կտակել էր իր աշակերտ Փիլիպոս Աղբակեցուն, որը նույնպես եղավ շինարար՝ կաթողիկոսական աթոռին մնալով 20 տարի:

\* \* \*

Յոթանասնամյա կարմիր պատմեշը հաղթահարելով, մեր ժամանակներին է հասել սրբին վերագրվող մի ավանդապատում-հրաշագործություն, որին, եթե չհավատանք էլ, մի իմաստ պետք է վերագրենք. Չորքի Աթոլոյք գյուղի ուրթով Կարճեւան էր գնում Մովսես Խոտանանցին: Գյուղի աղբյուրը շատ տկար էր, եւ մարդիկ խնդրեցին սրբին՝

աղոթով ջուրն առատ դարձնել: Սուրբն աղոթք արեց, եւ ձորապռնկից հորդաց անուշահամ ջուրը, որն առ այսօր բխում է նույն ուժգնությամբ: Իսկ Խոտանանում, իհարկե, գիտեն իրենց լուսապսակ նախնու մասին, բայց խորհրդային ժամանակներում, ի ցավ ամենքիս, խորշում էին ավելի իմանալ, անգամ աշխարհիկ անունն են մոռացության մատնել: Միայն ուսուցչուհի Ալմարան էր երագում՝ գյուղի գաղտնի անվանակոչել կաթողիկոս Մովսես Գ.Խոտանանցու անվամբ:

**ՌՈՒԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ**  
1997թ., «Այունիք» թերթ N27-28



êi » ÷ <sup>3</sup> Ýáë  
Ø» Õñ » óÇ

**Ք**ննելով ժամանակագրությունը, Ալիշանը հաստատել է, որ 1170-1216թթ. Սյունյաց թեմում աթոռակալել է Ստեփանոս եպիսկոպոսը, ով մեր թեմակալների պատմական հոլովություն 3-րդ Ստեփանոսն էր:

Թեմակալ առաջնորդ էր եւ նրա հորեղբայրը՝ Տեր-Բարսեղ Մեղրեցին, ով 1148թ. «մի պատահմունքով Աստապատ գյուղի մոտ Երասխ գետն է ընկնում՝ իր հեծած ջորու հետ միասին» (Օրբ., 49): Թուրքատիրության խառը ժամանակներ էին, եւ տեր կամ իշխող

## Դիմանկարներ

չկար, որ առաջնորդի համար որոնումներ կատարեր: Տեր-Բարսեղի եղբայր, Մեղրու քահանա Գրիգորի կողակիցը՝ Ծաման խորահավատ երեցկինը, հորդորում է ամուսնուն մեկնել Կիլիկիա, եպիսկոպոս ձեռնադրվել՝ «որ մեր որդյակն էլ քահանայապետի որդյակ դառնա» եւ օրինակ է բերում Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին ու թոռներին, որ բոլորն էլ ամուսնացած էին: Տիկնոջ հորդորին անսալով՝ Գրիգոր քահանան ուղեւորվում է Կիլիկիա, կաթողիկոս Գրիգոր Պահլավունուց (Ներսես Շնորհալու ավագ եղբայրն է) եպիսկոպոս ձեռնադրվում, վերադառնում եւ թեմը ղեկավարում 20 տարի: Վախճանվել է Վայոց ձորի Խորձա (Շորձա<sup>o</sup>) գյուղում 1168թ.՝ հավատացյալ համայնքի մեջ շրջագայելիս: Թաղված է Նորավանքի ուխտում, Տեր-Յովհաննես Կապանեցի եպիսկոպոսի մոտ: Տապանաքարին կա «Ձիայր Տեառն Ստեփանոսի տեր Գրիգոր յիշեցեք» մակագրությունը:

Յորը հաջորդում է քանքարաշատ որդին՝ Տեր-Ստեփանոսը: Պատմիչ Օրբելյանը նրան «շնորհագարդ Ստեփան» է կոչում (ԿԴ), որովհետեւ մանուկ հասակից լի էր բազում շնորհներով եւ սիրված ու մեծարված էր ժամանակի իշխողների կողմից: Տիրակալ Շամսեդդին Ելտկուզը (Էլդագյազ) եւ այլ երեւելիներ նրան փաղաքշական անվանք կոչում էին ֆախր էլ Սսեհ, որ թարգմանաբար նշանակում է «քրիստոնյաների պարծանք»:

Տեր-Ստեփանոսը եպիսկոպոս է ձեռնադրվել ու թեմակալ առաջնորդ կարգվել Ներսես Շնորհալի կաթողիկոսից: Կիլիկիայում ականատես է եղել հայկականության բուռն վերելքին: Վերադառնալով հաստատվել է ոչ թե Տաթևում, այլ՝ Վայոց ձորի Նորավանքում, որովհետեւ Բաղքի թագավորությունն անկում էր ապրում: Տաթևի վանքի հարստությունը տեղափոխել էին Բաղաբերդ, որն էլ սելջուկները մատնությամբ ավարի մատնեցին 1170թ.:

Ստ.Մեղրեցին հմուտ քաղաքագետ էր: Սելջուկ տիրակալները նրան պատվել են տուղրա գրով, ֆարմանով ու մանշուրով (հրովարտակներ), որոնց հիման վրա նա արտոնություններ հաստատեց Սյունիքի հոգևոր դասի ու բնակչության համար (Օրբ., ԿԳ): Ամուր կապեր ստեղծեց վրաց Թամար թագուհու, նրան հաջորդած Գեորգի Լաշայի հետ, սիրված-հարգված էր ամիրսպասալար

Ջաքարեի, Իվանե աթաբեկի կողմից:

**II** *Ստեփանոս 3-րդը Տաթևն անտես չարավ. վերանորոգեց Սբ Առաքելոց՝ Պետրոս-Պողոս եկեղեցին, որ ավերվել էր 1138թ. երկրաշարժի ժամանակ ու վրան գմբեթ դնել տվեց վանահայր Յակոբ ճահկեցու միջոցով:*

...Իշխան Ելիկուն Օրբելյանը Ելտկուզի արքունիքում հասել էր բարձր աստիճանի՝ պարսկական մի քանի քաղաքների ամիրա ու քաղաքագլուխ էր եւ, բնականաբար, կրոնափոխ էր եղել: Երբ Նախիջեւանի տիրակալ էր կարգվել, եկավ Տեր-Ստեփանոսի մոտ, ընկավ նրա առաջ, խոստովանեց մեղքերը եւ հաղորդություն խնդրեց: Եպիսկոպոսն օրհնեց, դարձի բերեց մուրյալին: Եվ Ելիկունը որոշ ժամանակ անց եպիսկոպոսից խնդրեց նրա քրոջ դստեր՝ Խաթունի ձեռքը: Շնորհաբանաբար օրհորդը ճահուկում էր՝ դուստր ազատատոհմ Աբասի: Եվ եպիսկոպոսը փեսայացրեց Ելիկունին: Ջույզը որդի ունեցավ, որին Ելիկունն իր հոր անունով կոչեց Լիպարիտ: Կարճ ժամանակ հետո Ելիկունն աթաբեկի որդու հետ պատերազմելու գնաց Գանձակ եւ այնտեղ զոհվեց: Լիպարիտին եւ մորը պատանդեցին Նախիջեւանում: Յետագայում, Ջաքարեի ու Իվանեի խնդրանքով, Տեր-Ստեփանոսը Նախիջեւան գնաց ու մի հնարքով ազատեց գերեվարվածներին՝ պարաններով իջեցնելով պարսպից, եւ բերեց Վայոց ձոր: Վրաց օժանդակությամբ Լիպարիտը գլխավորեց Սյունիքի եւ հարակից վայրերի ազատագրումը, նշանակվեց կուսակալ: Այս Լիպարիտի չորս որդիներից Տարսայիճի որդին էր համբավանուն պատմիչ, մետրոպոլիտ Ստ.Օրբելյանը: Արդ, անգիտելի չէ, որ պատմիչը մեղրեցու շառավիղ էր՝ Ստ.Մեղրեցու քրոջ ծոռը:

...Աբրահամ վրդ. Սկրտչյանի եզրահանգմամբ՝ «Սյունիքում Օրբելյանները հաստատվում են շնորհիվ Սյունիքի աթոռակալ Ստեփանոս Գ-ի: ...Ստեփանոս Գ ֆախր էլ Սսեհը Տաթևի շինությունների ավերակ լինելու պատճառով, Ամաղու Նորավանքը հաստատում է որպես աթոռահիստ» (էջ 74):

Ստ.Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկի ԿԱ գլխից մակաբերում ենք,

որ Ստ.Մեղրեցին Սյունիքի թագավորության վերաբերող մի պատմության հեղինակ էր. «Այն տարում, երբ հայոց 552 թվականն էր (հմա 1103թ. Քս), եղավ Կապան գավառի եւ Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների եւ իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի թղթից»: Այս երկին ծանոթ է եղել նաեւ Վարդան Արեւելցին: Ցավոք, այն այժմ կորուսյալ գանձ է:

Ստեփանոս ֆախր էլ Սսեհը վախճանվել է 1216թ., Արփա (այժմ՝ Արենի) գյուղում եւ թաղվել Նորավանքում՝ հոր՝ Տեր-Գրիգորի մոտ: Նրան փոխարինել է իր քրոջորդի Տեր-Սարգիսը, ով աթոռակալ էլ է 20 տարի եւ նահատակվել Երուսաղեմում:

Յպարտանալու է, որ Ստեփանոս Մեղրեցին Սյունիքի պատմության երեւելիների ոսկե բազումքի մեջ է:

**ՈՐԲԵՐՏ ԷՋԱՆՑԻ**



Յ»Քù Ôáõï³ ë  
Ô³ ÷³ ÝóÇ

Օ ծումն առնելուց հետո շահը խոստմանը տեր եղավ: Օրբից մի օր սուրհանդակներն ավետեցին արքայի ճամփորդությունն ի Ղափան: Եկավ ու բանակեց Սյունի-

## Դիմանկարներ

քի դաշտում: Չեռավոր գյուղերից անգամ, ուն հոտքը բռնում էր, մարդիկ այստեղ եկան՝ շահին ու նրա փառահեղ ճամբարը տեսնելու հետաքրքրությամբ: Տոնախմբությունն ուղեկցվում էր ձիախաղերով մինչև Թամաքեշի եկեղեցին (Տանձուն լենջ), հրացանածություններով ու հրթիռներ (ֆշանգ) արձակելով: Բաղաբուրջ գյուղացի մի խեղճ մարդ հրդեհում է իր խոտի դեզը: Շահի հրամանով հաջորդ օրը նրան բերում են մետաքսափայլ վրանի առաջ, եւ շահը զարմացած հարցնում է, թե ինչու է վառել դեզը: Բաղաբուրջեցին պատասխանում է. «Շահն ապրած կենա, ոչ հրացան ունեն, ոչ ֆշանգ, եղածս էլ խոտն էր, էն էլ մատաղ արեցի մեր թագավորի գալուն»: Պատասխանը շահին դուր է գալիս եւ նա հրամայում է բաղաբուրջեցուն եւ խոտը տալ, եւ մի խալաթ:

**||** *Նադիր արքան ծիով շրջում է մեր նախնայաց բերդերն ու դոյակները, հիանում խուստուս սարով ու միմյանց ազուցված ձորահովիտներով: Մելիք Ղուկասի բերդից դիտելով Ուղուրգետի ձորաշխարհը, միտք է հղանում այստեղ մի քաղաք կառուցել: Միայն հեռատես մելիք Ղուկասը սրտով չի ընդունում այդ առաջարկը:*

Մեր քաղաքով անցնող գետը վաղ միջնադարից կոչվել է Բաղաջուր, ինչպես ամեն մի գետ՝ իր գավառի անվամբ: Այս անունը դարերի հուլովայթուն մոռացվել է եւ պահպանվել աջակողմ վտակներից մեկի անվամբ: Ուշ միջնադարում գետի միջին հոսանքի համար ի հայտ է եկել Ուղուր կամ Ուղուրջայ անունը: Պարզ է, որ այն տրվել է Յոդար կամ Յոդար գյուղի անվամբ, որը եղել է նոր Կապանի տեղում, գետի ձախ կողմում: Յոդար անունն առկա է Տաթևի վանքի հին հարկացուցակում (10-րդ դար): Յոդար անունով գյուղն Ալիշանը սխալմամբ նույնացրել է Օխտար գյուղին:

Յոդար-Ուղուր անվամբ պարսկատիրության ժամանակ կոչվել է ոչ միայն գետը, այլև բաղաբերդերից մեկը՝ մելիք Ղուկասի բերդը (իմա՝ Մելիք-Ստեփանանց), որը ցայժմ էլ բարբառում կոչվում է Ղըր դալա կամ Ղըլ դալա, որ է Ուղուր դալա՝ Ուղուր բերդ կամ Յոդարաբերդ:

Յոդար բառը պատահական նմանություն ունի արաբերենում եւ պարսկերենում գործածական ուղուր-ի հետ, որ նշանակում է բարեբարո կամ բարեհամբույր: Նադիրն, անշուշտ, այդպես էր գիտակցում բառը եւ ըստ այդմ կամենում էր քաղաքը կոչել Ուղուր:

Երբ շահը վերադառնում է, որոշ ժամանակ անց Կապանա հովիտ է ուղարկում 400 մահմեդական ընտանիք՝ մի քուրդ իշխանի ղեկավարությամբ: Իշխանը հավաքում է մելիքներին, որ քննարկի շահական հրամանը կյանքի կոչելու հանգամանքները: Մելիք Ղուկասը ոչ միայն չի գնում, այլևս հորդոր է ուղարկում բոլորին, որ խոչընդոտեն բնակավայրի կառուցումը:

Ղուկասի հայրն ու Դավիթ Բեկը հորեղբոր գավակներ էին եւ ինքը՝ Ղուկասը, տարիներ առաջ քաջագործել էր Դավթի բանակում: Մխիթարի մահից հետո ղեկավարել էր Յահճասարի (Գյոջջիկ, Փուխրուտի մոտ) ճակատամարտն ընդդեմ օսմանցիների, ի գե՛ն կոչելով Քաջարանց, Քրդիկանց, Յանդ, Փուխրուտ, Արջածոր, Մագրա, Թունիս գյուղերի բնակիչներին՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, եւ փառավոր հաղթանակ տարել, թշնամուն քշել մինչև Երասխ եւ սպանել Ալիդարայի խանին: Եվ այժմ փորձված զորականը չէր կարող ընդունել, որ Դավիթն անվաճառ վերաբնակվեն, ինչին հետամուտ էր Դավիթ Բեկը:

Այնուհանդերձ քոչվորներն ամրանում են Ուղուրջայի ափերին եւ սկսում բնակավայրի կառուցումը:

**||** *Մելիք Ղուկասն ամրացնում է իր բերդը, Աճանանի՝ իրեն ենթակա 24 գյուղերից նախնական զորակոչի ենթարկում երեսուն կտրիճների: Առաջածորի՝ Ստեփանոս Նախավկայի եկեղեցուն բոլորը երդվում են Ավետարանի վրա՝ հավատարիմ լինել Դավիթ Բեկի պատգամներին, թույլ չտալ այլազգիներին՝ բնավորվել հայրենի եզերքում:*

Պատասպարվելով բերդում, ժամանակ առ ժամանակ գիշերները գրոհում են Ուղուր անվանյալ քաղաքի վրա, ավերում շինվածքները, խուճապի մատուցում նորեկներին: Ղըր դալան պատու-

հաս է դառնում քուրդ սուլթանի համար: Պայքարը տարիներ է տևում, որովհետեւ շահի ահից մյուս մելիքները Ղուկասին չեն աջակցում: Մելիք Ղուկասը լավ գիտեր, որ ժամանակն իր կողմն է, որովհետեւ Նադիրը ելել էր Ղանդահարն ու մեծ մոնղոլների Դեհլին գրավելու: Քուրդն աղաչում է Մելիք Քարամին ու Այվազ բեկին միջնորդ լինել, որ Ղուկասը հեռանա բերդից, եւ նրան կներվի շահական հարկերը երկար ժամանակ չվճարելը: Ժողովրդին ծանր հարկերից թեթևացնելը հաճո էր Ղուկասին, եւ նա, կտրիճներին թողնելով բերդում, հեռանում եւ նստում է Առաջածորում: Եւ ահա քուրդը դավ է նյութում: Երկու ծպտված դաջաղ է ուղարկում Առաջածոր, որ սպանեն Մելիքին: Բայց մելիքական տանը գիշերով հայտնվածներին Ղուկասի քաջակորով որդի Յովհաննջանը ձեռաց վնասազերծում է եւ զուխներն ուղարկում քուրդ սուլթանին: Քուրդի վրա զայրացած՝ Մելիք Ղուկասն Աճանանում զորահավաք է անում եւ 500 հոգով հարձակվում Ուղուրի վրա, գերի վերցնում քուրդին ու նրա ընտանիքը: Յովհաննջանը թույլ չի տալիս, որ հայրը դատ անի եւ սրի հարվածներով ոչնչացնում է նրանց: Քաղաք կոչվածը կրակի են մատնում, ավարը բաժանում զորքին, իսկ այլազգիներին տարհանում Դարադաղի կողմերը:

Մելիք Ղուկասից հետո Յալիձորում մելիք է նստում Այվազ բեկի որդի Փարսադանը, որը նույնպես հայտնի է դառնում քաջագործություններով: Այս Մելիք Փարսադան 3-րդի մասին՝ հետո:



Ղիմանկարներ

Î àêî ð Û , -  
 Û àôä àÈêÆ  
 Ð² Û àò  
 ä ð î ðÆ² ðø  
 ° ö ð ° Ø  
 ° ä Æ ê Î à ä à ê  
 Ô² ö² Û òÆ

Այս գործի մասին տեղեկություններ քաղում ենք Մ. Չամչյանի, Ռ. Աճառյանի գրքերից և այլ աղբյուրներից: Միքայել Չամչյանը, ներկայացնելով հայոց կաթողիկոս Եղիազարի կողմից 1683 թվականին Եփրեմին Կոստանդնուպոլիս նվիրակ /վերատեսուչ/ ուղարկելու պատմությունը, իր «Հայոց պատմություն» գրքում գրում էր. «Ի նոյն աուրս առաքեաց Եղիազար կաթողիկոս նուիրակ ի Կոստանդինուպոլիս գեփրեմ վարդապետ, որ էր ի Փոքր Սիւնեաց տեղէ Ղափանցի որոյ կացեալ զան մի ի քաղաքի անդ՝ զհետ եղեւ պատրիարքութեան /1684թ. - Ռ.Գ./... 1692. ՌճԽԱ. Մատթոս Կեսարացի՝ Սարի կոչեցեալ, որ ետ կալոյ անս երկու ի պատրիարքութեան՝ կարգեցաւ կաթողիկոս Սոյ՝ ի կենդանութեան Աստուածատրոյ Նարինայ. իսկ զպատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ էառ անդրէն նախասացեալ Եփրեմ Ղափանցի՝ յամի 1694. ՌճԽԳ. և ևկաց յայնմ իշխանութեան այլ ևս ամսերից, զորմէ ունիմք գրել և ի յաջորդ գլուխդ...»: Հրաչյա Աճառյանը, հիմք ընդունելով Մ. Չամչյանի «Հայոց պատմության» 3-րդ հատորում /էջ 727-733/ բերված այդ և այլ հիշատակություններ, հակիրճ կերպով ներկայացնում է Եփրեմ Ղափանցուն, որի կյանքն ու գործը փաստորեն ընթացել են պատրիարքական աթոռի համար մղված համառ կռիվներում:

Այսպես, Եփրեմ եպիսկոպոս Ղափանցին 1683թ. լինելով էջմիածնի Մայր Աթո-

ռի նվիրակը Կոստանդնուպոլսում, ծեռք է բերում կողմնակիցներ և գահընկեց անում Կ.Պոլսի պատրիարք Կարապետ Կեսարացուն՝ 1684-86թթ. նստելով նրա տեղը: 1686թ. Կարապետ Կեսարացուն հաջողվում է գահընկեց անել Եփրեմ Ղափանցուն և նստել պատրիարքական աթոռին /Ազգապատում, 2645 - այս և մյուս հղումները Յ. Աճառյանին են Ռ.Գ./: 1694թ. Եփրեմը նորից է գահ բարձրանում, այս անգամ իբրև Մատթոս պատրիարքի հաջորդ /Ազգապատում, 2665/ աթոռակալ ունենալով թորոս քահանային և Աստվածատուր ավագ քահանային /Չեռ. Վենետիկ, Բ., 133/:

Եփրեմ պատրիարքը հանդիսացել է ազգային շահերի ազդեցիկ պաշտպան և կաթողիկոսության հակառակորդ: Սակայն պատրիարքական գահակալության մրցապայքարում, ինչպես տեսնում ենք, նա շարունակ բախվում էր ուժեղ մրցակիցների հետ: 1698թ. նա նորից է գահընկեց լինում՝ տեղը զիջելով Մելքիսեդեկին /Ազգապատում, 2683/:

Եփրեմ Ղափանցին գնում է Արիանապոլիս որպես տեղի հայոց թեմի առաջնորդ: 1701թ. Եփրեմ Ղափանցուն նորից ենք տեսնում Կ.Պոլսի պատրիարքական գահի վրա: Պատճառ բռնելով կաթողիկոսության դեմ նրա մղած թույլ պայքարը, այնուամենայնիվ, Կ.Պոլսի ընդհանուր ժողովրդական ցույցը, այս անգամ վերջնականապես, նրան գահընկեց է անում և 1702թ. Կ.Պոլսի պատրիարք է դառնում Ավետիքը /Չամչյան, Հայոց պատմություն, հ.Գ, էջ 727-733, Ազգապատում - 2706/:

**ՌՈՒԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**22.12.1997**

ä³ à  
 Î³ ñx»õ³ ÝóÇ

Միթար զորապետի եղերական մահից հետո թուրքը ոտքն առաջ դրեց ու շուտով գրավեց Փոքր Ղափանը: Տեղային առճակատումների հետ ի հայտ եկան թշնամու դեմ պայքարի այլ եղանակներ, որոնք համահունչ էին պարսկատիրության ժամանակներին:

Իրենց վաղեմի սովորությամբ թուրքերը բնակություն էին հաստատում լքված գյուղերում ու ուրթերում: Փոխհատուցման որոշ պայման դնելով՝ հովվության էին գնում հայկական գյուղերը: Հովվի որդին ու թռռը, բնականաբար, շարունակում էին խաշնարածությունը: Եվ մեկ-երկու սերունդ հետո, իր նախնյաց պատմությամբ անհաղորդ լինելով, քյիվվան (մտերիմ թուրք այրերի պատվանունը) հայկական գյուղն իր հայրենի եզերքն էր համարում:

Եկեղեցուց անգամ չէին խորշում, տիրապետում էին խոսակցական հայերենին: Շատ դեպքեր են հայտնի, երբ թուրք մանչերը հայկական դպրոց են հաճախել

Կարճեւանում հովվի տունը մեծացել, մեկի փոխարեն չորս էր դարձել: Մարդ ու անասուն ապրում էին գյուղեզրի ծղմարագուն, որը գյուղացիների օգնությամբ հարմարեցրել էին որպես կացարան: Ջահել թրքուհին, երբեմնակի, բարոյալվ կաթ էր տանում տանուտեր Պապի համար ու ամեն անգամ շողոմուն մույն բառերը.

– Ալլահը քեզ պահապան. Բաբա քյատտահ:

Նրա գնալուց հետո տանուտերը ծայն էր տալիս ծառային, որը գալիս, կաթը տանում էր զամփռներին: Թուրքերի բազմաձև լուսնուտերին համագիտ չէր տալիս, հատկապես, որ մեկը Ղուկասը Հալիծորից սպառնալիք էր ապսպրել...

– Գյուղապետն ի՞նչ խելքի է, Կարճեւանը թուրքացնոց է դարձրել...

Պապը քանի անգամ պահանջել էր, որ թուրքերը գաղթեն գյուղից, սակայն



## Դիմանկարներ

լուրջ չէին ընդունել: Իրենց ընթացումին հատուկ՝ գյուղապետի հորդորը մեղմունք էին գառ ու թաղիք ուղարկելով, որը կարճեւանցին չէր հանդուրժում: Դավիթ Բեկի բանակում կռված գյուղացիները խեթ էին նայում տանուտերին, իսկ նորահաս տղաներն առիթի դեպքում սուլում էին նրա հետեւից:

Պապը, որ քաջագործել էր ճահճասարի ճակատամարտում, հանդուգն վճիռ կայացրեց: Հավաքեց յուրայիններին ու հրամայեց.

– Փայտ ու հնոտիք բերեք, դարսեք իմ տան մոտ:

Կարճեւանի բոլոր գրաստատերերը գործի անցան: Մի երեկո, երբ տանուտերի բակում ցախի հսկայական դեզ էր գոյացել, հին զինվորներից յուրաքանչյուրը հանձնարարություն ստացավ: Գիշերով վառելիքը դարսեցին թուրքերի բնակության ծղնարագի շուրջը, եւ տանուտերը չախմախեց կրակահանը: Մի քանի ժամ անց ամբողջ ունեցվածքն ու բնակվողները մոխրացան: Պապի դաժանությունը դրանից չմեղմվեց: Նա տնատեղն արողով հերկել տվեց, առվույտ ցանեց, իսկ շուրջը ծառեր տնկեց: Աշնան կողմը Լեհվագից թուրքերին տեսության են գալիս նրանց բարեկամները եւ տեսնում, որ ծղնարագի տեղում պարտեզ է: Հարց ու փորձ են անում, սակայն ստանում են նույն պատասխանը.

– Գարնանը գաղթել են Օրդուբադի կողմերը:

Բայց եկվորները խոջա Սարգսի ծառայից իմանում են տեղեկությունը, շտապում Դուզալիի խանի մոտ ու զանգատ անում:

Պապին խանը կանչում է հարցաքննության: «Օձը բնից հանող իր լեզվով» տանուտերը խանին հրամցնում է մի հորինած պատմություն: Մալեցի խոջա Սարգսի, որ ներկա էր նախաքննությանը, ծախ ունկը վեր պահած լսում էր: Երբ Պապն ավարտում է իր արդարացումը, խոջան հաճոյանում է խանին՝ մանրամասն պատմելով եղածը:

– Բաբա քյատտահ, հինգ-վեց տարի է՝ կռիվ չկա, արածոյ անմարդկային է: Կան գլուխդ դահճի կացնի տակ պիտի դնեն, կան պիտի մեր կրոնին դառնաս, - հոխորտում ու երկընտրանք է դնում խանը:

Չարիքի փոքրագույնը մահմեդական դառնալն էր, եւ Պապը գնում է

դրան: Բայց կասկածամիտ կուսակալը չի հավատում Պապի շիտակությամբ ու երկու տարի պահում է իր մոտ, զանազան հանձնարարություններ տալիս: Պապ Կարճեւանցին իր ծառայությանը այնպես է հավատարմություն ցուցնում, որ երկու անգամ նրա կողմից շահի մոտ է գնում որպես բանագնացների գլուխ:

Հավատարիմ ծառայության վարձատրությունն այն է լինում, որ խանը Պապին նշանակում է Մեղրիի նայիբ (կառավարիչ):

Պապը հասել էր իր նպատակին, եկել էր գործելու ժամանակը:

Նա յուրահատուկ հմտությամբ «գործ է սարքում» լեհվագիների վրա, որոնց մեծամասնությունը մահմեդական էր եւ հայտնի՝ ասպատակություններով: Նայիբը խանի մոտ «փաստարկում է», որ Լեհվագի տասներկու հարուստ պարսիկներն օսմանցիների կողմն են, եւ իրավունք ստանում՝ տնօրինել նրանց ճակատագիրը: Գյուղամիջուց տասներկու կախաղան է պատրաստել տալիս, վճիռը կարդում ու բոլորին կախում: Գյուղը հրդեհում է, ամասուններն ու գույքը գրավ առնում ու ուղարկում խանին:

Մի առ ժամանակ անց դավաճանության մեղադրանք է դնում թուրքաբնակ Թաղամիր գյուղի վրա: Փախչողներն ազատվում են, շատերին կոտորում է, տներն այրում ու թաղամիրցիների ունեցվածքն ուղարկում Դուզալի:

Խոջա Սարգսի գիտեր իր բանը եւ տեղից տեղ էր թափառում, որ Պապի աչքին չէր եւա: Բայց մի տարի անց, իրեն հատուկ հնարքով, Պապը հազարապետի լիազորությամբ հայտնվում է Մալեում՝ նրա տանը: «Պետական դավաճանության» մեղադրանքով Պապը մահվան է դատապարտում խոջային ու նրա ընտանիքը: Սարգսի կինն ու գյուղի պառավները Պապի ոտքերն են ընկնում, աղաչում, որ նրա կնոջն ու երեխաներին խնայի: Խանական պաշտոնյան տեղի է տալիս ու գլխատում միայն խոջային:

Պապ Կարճեւանցին այլ դատաստաններ էլ է կազմակերպում, մուրհակներ էլ այրում, գյուղերում երեւացած թուրքերին գաղթեցնում Նախիջեւանի կողմերը: Եվ իր տառապյալ հոգին համակած վրեժի բոցերի տակ ծածուկ ու

անխամիր սեր ուներ առ եկեղեցին ու հայոց ուխտը: Միշտ գաղտնի տեսակցում էր Սբ Ստեփանոս վանքի վանահոր հետ ու հաղորդություն առնում:

Երբ հիվանդանում է ու զգում մոտալուտ մահը, պատարագ է մատուցել տալիս, հաղորդվում ու խնդրում, որ երբ մեռնի, իրեն թաղեն հայ եկեղեցու ծեսով:

Ժամանակ անց նահիեի (զավառի) բնակչության սերը ծածուկ վայելող Պապ նայիբը վախճանվում է: Մեղրեցիք, երկյուղելով խանից, նրա մարմինը դնում են եկեղեցում ու սպասում խանական շքախմբին: Խանը գալիս, եկեղեցի է մտնում ու ցասկոտ վրա բերում.

– Ինչո՞ւ եք դեպի արեւելք դրել ու ձեռքերը խաչել, սա մահմեդական է:

Ու նրա հրամանով մարմինն ուղղում են դեպի հարավ եւ ուղղում ձեռքերը:

Ավանդությունն ասում է, թե խանի հրամանով եկեղեցու դուռը կնքում են ու պահապաններ կարգում, սակայն հաջորդ օրը դարձյալ հանգուցյալի ձեռքերը խաչված ու մարմինը դեպի արեւելք էր ուղղված:

– Սա միայն երեսանց է մահմեդական եղել, - իր կասկածը եկեղեցու գավթում փարատում է խանը եւ կարգադրություն անում.

– Թաղեցեք սրան հայկական ծեսով եւ որպես Բաբա քյատտահ մի հիշեք, այլ որպես՝ Բաբա դաղլու (Պապ Այրող):

Մեղրեցիք հրավիրում են մելիք Դուկասին ու Այվազ բեկին, նրանց ներկայությամբ մեծ հանդեսով թաղում Պապ Կարճեւանցուն:

Մեր ժամանակներում տարեց սյունեցիներից ոմանք դեռ պատմում են կարճեւանցի տանուտերի գլխով անցած զարմանալի դեպքերը:

**Ըստ Ե.Լալայանի գրառումների վերապատմեց Ռոբերտ Էջանանցին**



## Դիմանկարներ

# ՄՇԻ ԳԹՅ ԼԻԷ

# Ձ 1 ԳՅՕ

## Կապանա պատվիրակության անունից հիացք ու շնորհակալիքներ

օլիմպոս Կապուտջուղ-Աժդանականին տեսնենք մեծանուն Ադոնցին:

Լագարդի, Յյուբշմանի ու եվրոպական այլ մեծերի շարքը լրելով, նա հնդեվրոպաբանության ու պատմագրության մեջ սեփական-ուրույն ծիրը գծեց, որին հետեւեց գիտության ինքնատիպ ճյուղավորումը՝ ադոնցագիտությունը: Նա ուղղորդեց հայագիտությունն իր հիմնարար աշխատություններով. ցույց տվեց, որ հայ դասական քաղաքակրթությունը գալիս է ուրարտականից, որ հայ ժողովուրդն իր հնդեվրոպական ազնվական տիտղոսների հետ ավելի հինն էլ ունի:

Ադոնցյան եզրահանգումները, կանխատեսումներն ու ենթադրությունները բացառիկ խթան են բանասիրության ու պատմագրության հետագա զարգացումների համար: Ադոնցյան նպաստներով հիմնավորվեց, մասնավորապես Սյունի-Սիսիուհի-Սիսիան-Սիսական եւ սիս արմատով մյուս տեղանունների՝ ծիսարան կամ զոհարան նշանակությունը: Ադոնցն երեւում է մեծանուն գիտնականի տոհմածառի ուրվապատկերը: Նրա Ադդեհ ու Տեր-Ավետիք դավիթբեկյան զորավար-քահանա նախապապերի բարի անվամբ Սյունիքում քահանաների գերդաստաններն առ այսօր մեծարվում են Ադոնց տոհմանվամբ: Համանուն տոհմեր կան Սյունիքի գրեթե բոլոր գյուղերում: Նիկողայոս Ադոնցն ու Սմբատ Մելիք-Ստեփանյանը զարմիկներ են: Տիկին Վարսենիկը («Սյունյաց երկիր», N-22, 27 նոյեմբերի

2009թ.) Սանկտ-Պետերբուրգում բուհական կրթություն է ստացել պրոֆեսոր Ադոնցի մոտ:

Դառնամ, մեծարման դափնիներով պսակեմ մեր նորօրյա ադոնցագետներին, իմ գիրկն առնեն պրոֆ. Պ. Հովհաննիսյանին....

...Աշխարհահռչակ գիտնականի մեծարումը, հանուն երախտապարտ սերունդների, յուրովսան ստանձնեց նաեւ «Սյունյաց երկիր» թերթը, որը լրատվական առաքելությանը զուգահեռել է գիտամշակութային պարբերականի աներկբայելի կերպարը, հավուր պատշաճի ներկայացնելով ադոնցյան սխրանքը:

Տեղին է հիշեցնել Սյունիքի մարզպետի երբեմնի նախածեռնությունը՝ կյանքի կոչել սովորող սյունեցիների հայրենագիտության դասագիրքը, ներկայացնելով «միայն Սիւնեաց իշխանք կոչին Հայկազունք» մեր արժանավոր մեծերին:

...Կապանա պատվիրակության անունից հիացք ու շնորհակալիքներ Սիսականի իշխանությանը՝ ի դեմս աղուհացով ու ծաղիկներով մեզ պատված շահաք Հակոբջանյանին:

**Ռոբերտ Գրիգորյան (էջանանցի)  
Լեռնաձորի հիմնական դպրոցի  
պետ**



**Ս**յունյաց բազմաթիվ լեռնակատարները խորհրդանշում են մեր գիտուններին, ովքեր դարերի հուլովույթում ճառագել են իրենց քանքարով: Այսօր ժամն է, որ Սյունիքի



## Ձեռագիր մասյան.

# Կապանաւ տուն

### Հիշատակարան

Ես՝ անձս ճանաչողների համար ամենամանցանկալի, Կապանի ուսուցիչների մեջ մտքով ամենատկար, մեղավորներից մեղավոր, նվաստներից նվաստ Ռոբերտ Բրիստափորի Գրիգորյանս, որ նաեւ կոչվում է Ռոբերտ Էջանանցի, իմ հայրենի երկրամասի սիրուց արբեցած՝ կազմեցի այս ժողովածուն, որ հայրենագիտական նյութերի ընտրանի է՝ քաղված տարբեր հրատարակումներից ու իմ գրառումներից:

Նորանկախ հանրապետության դպրոցը պարտավորված պիտի լինի աշակերտներին զինել հայրենի երկրամասի իմացությամբ: Միշտ երագել եմ ձեռքի տակ ունենալ «Հայրենի եզերք» դասագիրքը, որի ստեղծման համար այս ժողովածուն կարող է օգտակար լինել:

Ավարտեցի 1996 թվականի ապրիլի 12-ին՝ երեկոյան ժամը 11-ին, հնգօրյա տքմանքից հետո, Լեռնաձորի ութամյա դպրոցի իմ «Ճգնարանում»: Ձեր հուշերում եւ աղոթքներում բարի հիշեցեք ինձ, դուստրերիս՝ Ծովիմար, Աշխեն, Լիլիթ եւ Սյունե, իմ կողակցին, թոռնիկներիս՝ Լորիկ եւ Հայկ: Անցավոր աղքատության ժամանակներ են: Թանկություն է: Սյունյաց մարզը բռնել է կայացման ուղին...

### Կապանա տուն

Կապանի գավառը (ենթամարզ) գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արեւելքում, Սյունիքի մարզի ոստանն է Կապան մարզկենտրոնով:

Ձանգեզուրի նախկին չորս վարչական շրջանները ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ 1995թ. նոյեմբերին վերամշակել են մեր վարչատարածքային միավորման մեջ եւ կազմել ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ: Մարզում Կապանի գավառը միջակա դիրք ունի. հյուսիսից սահմանակից է Սիսիանի եւ Գորիսի գավառներին, հարավից՝ Մեղրու գավառին: Արեւմտյան կողմից գավառին հարեւանում է Նախիջեւանի Հանրապետությունը, իսկ արեւելյան կողմում՝ Ադրբեջանից ազատագրված հնամենի հայկական հողերն են՝ Հագարի, Որոտան (Բարկուշատ), Ողջի գետերի ավազանը:

Կապանն ուշ միջնադարից մինչեւ երկրորդ հանրապետության կայսրապետական ժամանակները կոչվել է Ղափան եւ միայն երրորդ հանրապետության ծննդյամբ՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ից, վերագտել է պատմական անունը՝ Կապան: Մի շարք պատմական աղբյուրներում կոչվել է նաեւ Կապանա տուն:

Կապանը գտնվում է երկրագնդի հյուսիսային լայնության 39° զուգահեռականի վրա: Այդ զուգահեռականն անցնում է Լիսաբոնով, Վաշինգտոնով, Փխենյանով, Դուշանբեով...

Կապանում պարտություն են կրել եւ նահանջել Պոմպեոսը, հետագայում՝ Շապուհ Երկարակյացը: Սուրբ Մեսրոպի այցելության ժամանակ Կապանա տունը Բաղք էր կոչվում:



## Կապան գավառի գյուղերը

### Ագարակ

Գավառի արեւելյան մասում, Բարկուշատի լեռնաշղթայի ստորոտին, մարզկենտրոնից 18 կմ հեռավորության վրա: Կոչվել է նաեւ Հագերակ: Բարբառում՝ Հըկյերակ: Այս գյուղի մերձակայքում է տեղադրվում պատմական Գրիհամա բերդը: Գյուղը հիշատակված է 13-րդ դարից եւ համարվել է Բաղք-Աճանանի խոշոր բնակավայրերից մեկը: Շրջակայքում կան չուսումնասիրված գանազան հնություններ:

Կանգուն է 19-րդ դարում կառուցված Օհանա եկեղեցին: Գեչուսը եւ Սիրդարան գյուղատեղիներ են:

1919թ. հունիսի 28-ին գյուղին է մոտեցել Քյազիմ փաշան՝ 13 հազար ասկարով: Ագարակցիները ճակատամարտի երկու օրում խլեցին 5 գնդացիր, 200 հրացան, 15 ձիաբեռ փամփուշտ:

Հին կապանցիները մի խաղիկ ունեին Ագարակի վերաբերյալ.

*Ճըլըվըզ-ճըլըվըզ չըխարակ,  
Ես նա տու քինիթը Հըկյերակ,  
Ես հաստ մանկիմ, տու պերակ,  
Ես կոժ կօրրիմ, տու փօրակ:*

### Աղվանի

Հյուսիսային մասում, Քաշունի գետի ափին: Կապանից՝ 30 կմ: Կոչվել է նաեւ

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

Խողվանի: Բարբառուն՝ Ըղվանի: Տաթևի վանքի 1781թ. հարկացուցակում կոչված է Աղավնակ: 1923 թվականին հայտնվել են զգալի թվով նորաբնակներ Տաթևի կողմերից: Տարածքում նշարվում են հեթանոսական գերեզմանոցներ: Կա 17-րդ դարի կիսավեր մի եկեղեցի՝ կառուցված բազալտե սրբատաշ քարերով:

Ստեփանոս պատմիչը Քաշունիքում Խողվանի գյուղ է հիշատակում:

Այս գյուղի խոսվածքը նման է Գորիսի բարբառին:

### Անպառաջատ

Աճանան գետի վերնագավառում, գետի ձախ մասում, Բարկուշատի լճի հրարն լանջին, թավուտ անտառի գրկում: Մարզկենտրոնից՝ 20 կմ: Նաեւ կոչվել է Տորթնի, Տորթին, Դորթնի:

Բարբառուն՝ Տորթնի: Անտառաշատ անհեթեթ անվամբ է կոչվել 1949 թվականի հունիսի 29-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հրամանագրով:

Ստեփանոս պատմիչը գիտի Տորթնի Բաղք-Աճանանում: Մի ստուգաբանությամբ Տորթնի տեղանունը հղվում է ուրարտացիների Տորք աստծու պաշտամունքին:

Ըստ տեղում եղած մի ավանդության՝ Գրիգորյեղովի դին Պարսկաստանից տաբել են այս գյուղով:

Գյուղում կա կիսականգուն եկեղեցի:

### Աջիբաջ

Գավառի արեւմտյան մասում (Գեղվածոր), Բարկուշատի լեռնաշղթայի հրարն ստորոտում, Կապանից՝ 40 կմ հս-արմ:

Հիշվում է նաեւ Աճպաճ, Աջաբաջ, Աջբեջ, Աջեւաչ: Բարբառուն՝ Աճպաճ: Հայր Ստեփանոսը Ձորք գավառում ունի Աջարաջ գյուղը, որը, անշուշտ, գրչագրական սխալով է, ի տեղ Աջաբաջի:

Գյուղում կիսականգուն է եռանավ բազիլիկ եկեղեցին (18-րդ դար):

18-րդ դարի սկզբներին քրդիկանցիներն այս գյուղից իրենց հովվելու են բերել տեր-Պողոս քահանային:

Այս գյուղացի Մոսեսի որդի Սողոմոնը 1736թ. ոտքով գնացել, հասել է Վենետիկ, իր քեռի Յավրի որդի Բաղդասար մեծ վաճառականի թողած կտակին տեր կանգնելու, որ մեկ միլիոն դուկատ ու-

կի է եղել: Սակայն, տեղ հասնելով, այդ գումարը թողնում է հայոց սուրբ Խաչ եկեղեցուն:

18-րդ դարի երկրորդ կեսից մինչեւ 1990 թվականը թուրքաբնակ էր:

1990 թվականին Կապանում առաջարկվել է Աջաբաջ նորանունը, որ Ա.Ումառյանի ստուգաբանությունն է:

### Առաջածոր

Կապանից 7 կմ հս-արմ, Աճանանի հովտում, գետի աջ մասում: Կոչվել է նաեւ Առաջնածոր, Արջածոր, Արչագուր: Բարբառուն՝ Ըռչածոր:

«Աճանանը կառավարում էր Առաջածորում նստող Մելիք Ստեփանը» (Ստ.Լիսիցյան):

«Առաջածոր կոչի այժմ, եւ Աճիգուր յաշխարհացոյց քարտս, մերձ ի Պղնձահանս, բնակեալի հայոց, որոց է եւ եկեղեցի հին, եւ պարապին ի մշակութիւն եւ ի խաշնադարմանութիւն. երկիրն պտղաբեր է, եւ յաւելուած պտղոցն առաքի ի կողմանս Մեղրոյ եւ Նախաճաւանու. ունի եւ ընտիր ձեռագործ անուանեալ Ղափանի կտաւ: Մեծ մասն երկրին ստացուած է Մելիք Ստեփանեան տոհմի» (Ալիշան, Սիսական) (էջ 276):

Գյուղի յայլային արոտատեղիներից մեկը կոչվում է Ղըլ-ղալա, որտեղ ենթադրվում է Կկոց բերդը: Մի այլ ենթադրությամբ այդտեղ է Բաղաբերդը: Շբանանց հանդում՝ հինավուրց Բաղաբերդ-Տաթև ճանապարհին, իջեւանատան ավերակներ կան՝ անընթեռնելի մի արծանագրությամբ:

Մելիք-Ստեփանյան տոհմի պատմությամբ մասնավորապես զբաղվում է Ռ.Ստեփանյանը: Նրա մի վարկածի համաձայն՝ քաղված է Լալայանից, Դավիթ-Բեկ զորավարը սերում է Մելիք-Ստեփանյան տոհմից:

Գյուղում, մի բարձունքի վրա, պահպանվել է Մելիք-Ստեփանյանների մատուռ-դամբարանը, որտեղ, ի թիվս այլ ազնվագարն հանգուցյալների, ամփոփված է Վարսենիկ Մելիք-Ստեփանյանը: Ավարտել էր Պետերբուրգի համալսարանը՝ աշակերտելով Ն.Արոնցին: 1915թ. վերջերին կամավոր էջմիածին է եկել՝ Արմ Հայաստանից ճողոպրած որբերին խնամելու. վարակվել է տիֆով եւ վախճանվել:

Գյուղում կա կանգուն եկեղեցի՝ Սբ Ստեփանոս, 1430թ. մակագրությամբ:

Մելիք-Ստեփանյանները հյուրընկալել են Գրիգորյեղովին՝ տիկնոջ՝ Նինա ճավճավածեի հետ, Ռաֆֆուն, Անդրանիկ զորավարին:

Սմբատ Մելիք-Ստեփանյանը 1918-20թթ. կազմակերպեց Ղափանի ինքնապաշտպանությունը:

### Արծվանիկ

Կապանից 16 կմ հս-արլ, Բարկուշատի լճի մի ճյուղավորման լանջին: Անվանված է նաեւ Երեցվանիկ, Երիցավանք, Երիցու վանք (Կարմիր վանք), Արծուենիկ: Ստեփանոս պատմիչը բազմիցս օգտագործում է Երիցակավանք՝ այն կապելով գահակալ արքեպիսկոպոս Երիցակի հետ: Հիշատակված է նաեւ որպես ավան: Ըստ մեր պատմիչի, Երիցակավանքին կից գործել է բորոտների դպրոց, որը, թերեւս, արդիական գիշերօթիկների նախատիպն է: Արծվանիկի մերձակայքում է Ազնավի տապան միջնադարյան կառույցը: Նշարվում են ուրարտական շրջանին վերագրվող մի ամրոցի հետքերը: Ռաֆֆին 1881թ. սեպտեմբերին եղել է Արծվանիկում, զրուցել գավառի տերերի ու հին ասքերի գիտակների հետ: Ըրկեմանց գյուղացի աշուղ Առաքելը հանդիպմանը երգ է ձուցել նրան.

*Դու ասարդ ես լուսավոր,  
Տայոց երկնքում խավար,  
Մարդ կա՛ մարդկության զարդն է,  
Ունես ուսում եւ համբավ:  
Մարդ կա՛ պարկեղծով մարդ է,  
Ինքը հիմար անասուն.  
Էդպիսին քեանկը զավ է,  
Տեսնես է, չտեսնես, լավ է...*

Արծվանիկում եկեղեցին ունի վիճաբար «ի քս ՇԱ...», այսինքն՝ 1052թ.: Գյուղի եւ գավառի կյանքին վերաբերող ազգագրական ուշագրավ նյութերի ժողովածուներ է կազմել Արծվանիկի պետական դպրոցի վարիչ Եփրեմ Մելիք-Շահնագարյանը: Դրանք հրատարակել է Ցարական Ռուսաստանի Կովկասյան Ուսումնական վարչությունը «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», կրճատ՝ СМОМПК. Ժողովածուի հատորներում: Մելիք-Շահնագարյանի աշխատանքները լույս են տեսել 17-րդ (1893թ.), 19-րդ (1894թ.), 25-րդ (1898թ.) եւ 34-րդ (1904թ.) հատորներում:

...Կապանցիները մի զավեշտական

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

առիթ գիտեն: Երբ արծվանիկցուն ակնարկում են, թե ուրացող Մելիք Ֆրանգյուլն իրենց գյուղացին էր, նա բորբոքվում ու նախատում է ակնարկողին: Յետո, հանգստանալով, «հիմնավորում» է, որ դավաճանը հարեան Սեւաքարից էր: Այդ բանն էլ սեւաքարցիները չեն ուզում լսել եւ չարախոսում են արծվանիկցիների: Այնուհանդերձ, չարաբախտ Մելիք Ֆրանգյուլի անշուք տապանաքարը Արծվանիկի հիմնավորը գերեզմանոցի նախամուտքի մոտ է: Անցորդը պարտավորված է զգուս անեծք մրմնջալ կամ թուսատի:

Այս գյուղը օղեսեր-գինեսեր է:

### Բահարլու

Լքված գյուղ Գեղի գետի ստորին հոսանքի ձախ ափին: Տեղահանվել է գետի վրա ջրամբարի կառուցման պատճառով, 1988 թվականին: Անունը ծագում է պահլավերեն բահար-գարուն բառից: Ենթադրվում է, որ այն գտնվել է Չորքի Ծաղթանու գյուղի տեղում (Տեղանունների բառարան): Գյուղն ակոսող ձորակով վեր գնալիս Ջաղածոր հնավայրն է:

### Գեղանուշ

Կապանից 6 կմ հր-արլ, Արեւիքի լճի ճյուղավորումներից մեկի խիստ թեք լանջին: Ավանդված է նաեւ Գյուղգյում, Կյուտկյում, Գիլաբերդ, Կարաջալլու, Գատկոմ, Ուտկոմ ձեւերով: Բարբառում՝ Կյուտկոմ: Գեղանուշ անունն առել է 1949թ. հունիսի 29-ին: Գյուղում կա երկու եկեղեցի, շրջակայքում՝ հին գյուղատեղիներ: Ալիշանն ունի Կուտկոմ կամ Ուտկոմ:

Գեղանուշում, առաջինը գավառում, 1990 թվականի մարտի 18-ին վերաբացվել է Սբ Զոհիսիմե եկեղեցին, որը տարի առ տարի իրեն է գրավում հավատացյալներին: Բացման արարողության պատարագիչն էր Ս.Սերովբե վարդապետ Իսախանյանը, քարոզիչը՝ Հայ Առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդ Ս.Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը: Այժմ քահանան է Սեւայի Աբելյանը:

Գեղանուշը գտնվում է Կովսական գավառում: 17-18-րդ դարերում Տաթևի եպիսկոպոսական թեմի գավառներից մեկը կոչվել է Գիլաբերդի գավառ՝ այս գյուղի անվամբ: Տաթևի վանքին տրվող

գավառառարկը կազմում էր 21 700 պարսկական շահի /մեկ շահին հավասար էր ֆրանկի քառորդ մասին/:

Բանաստեղծ Արտեմ Վարդանյանի հայրենի գյուղն է:

Այս գյուղից է համբավանում զվարճախոս Գինուսը, որի սրախոսությունները հավաքել-հրատարակել է առակագիր Գրիգոր Գեւուհյանը:

### Գեղի

Գյուղ Գեղվածոր գավառակում, Գեղի գետի միջին հոսանքի շրջանում, Կապանից 29 կմ արեւմուտք: Պատմության մեջ հիշվում է Գեղո վանք, Գիղի, Գեղի Սոֆուլու, Քեթ Սարաուլու, Քիղի անուններով: Բարբառում՝ Գեղի, Գեղվածոր: Ստ.Օրբելյանի հիշատակած Գեղոյ վանքն է: Գյուղում կան եկեղեցու եւ վանական մի այլ կառույցի ավերակներ, շրջակայքում՝ հիմնավորը գերեզմանոցներ:

Այս տեղանունը, ի թիվս այլոց, Ունառյանը դնում է սանսկրիտի ուլկա-գելգել արմատից, որ խարույկի, կրակի պաշտամունքին է առնչվում: Այս պաշտամունքը կրող ժողովուրդը, ըստ Ղափանցյանի, ապրել է Վելիկունի երկրում, որ Գեղարքունիքն է:

Գեղիի թուրքերն իրենց գյուղի անունը բացատրում էին հայերենի գեղեցիկ բառից: Պատմում էին, որ իրենց նախնիները զարմացած էին հայերի կենցաղով: Նրանց հատկապես դուր էր եկել եւ յուրացրել են տնային պայմաններում վլացք անելը, թոնրի մեջ լավաշ թխելը, գլխատների օճորքից տանձի ու խնձորի պտղափնջեր կախելը:

Գեղվածորի թուրքերը 1919 թվականին գետերի կցվանքատեղում շրջափակել ու ոչնչացրել են Գողթանից՝ Ազուլիսից ճողպարող գաղթականների քարավանը եւ ավարը բաժանել միմյանց միջեւ: Գ. Նժդեհը Գեղվածորի թուրքերին տեղահանել է դեպի Նախիջեւանի կողմերը, բայց հետագայում խորհրդային իշխանությունը նրանց ետ է բերել:

Այժմ Գեղին հայաբնակ է: Գործում է դպրոցը:

### Գյարդ

Գավառի արմ մասում, Կապանից 33 կմ: Գտնվում է Գեղի գետի աջակողմյան մի վտակի ձախ ափին: Անվանված է նաեւ Կարդ, Քիրթ, Քարթս: Երկունսն են՝ Ներ-

քին եւ Վերին, վերջինիս ավերակներն են պահպանվել: Բարբառում՝ Գյարթ:

Ալիշանի քարտեզում կա Կարթ: Ունառյանը գտնում է, որ «Յունիսային Կովկասից 4-5-րդ դարերում լեռնաբնակ ցեղեր են տեղաշարժվել դեպի Սյունիք: Դրանցից են... գարթերը, որոնք ապրել են Չորք գավառի Գարթ գյուղում, որոնց տեղացիներն անվանել են քարտեր»:

Գյուղն ունի 17-րդ դարում կառուցված բազալտաշեն եկեղեցի, որի բեմի տակից դուրս է հանված բուժիչ ջրի աղբյուրը: Շրջակայքում կան հայերեն վիմագիր տապանաքարերով գերեզմանոցներ:

Չորքի խոսվածքում հանդիպում է «Գյարթի կատու» նախատիճը:

### Գումարան

Կապանից մոտ 5 կմ հր-արլ, Գեղանուշ գյուղից 2 կմ հս-արմ, Արեւիքի լճի մի սարավանդի վրա: 20 կմ հեռավորությամբ համանուն լեռնագագաթն է: Բարբառում՝ Գյումարան: Միավորված էր Գեղանուշի կոլտնտեսության հետ, հիմնականում զբաղվում էին շերամապահությամբ (գյուղ-շերամ):

1990-ին առաջարկել է Գերասիմաշեն մոր տեղանունը:

### Դավիթբեկ

Մարզկենտրոնից 25 կմ հս-արլ, Բարկուշատի լճի հս-արլ ստորոտին, Քաշունի գետի հովտում: Նախկինում՝ Չեյվա. Դավիթբեկ է վերանվանվել Դավիթ-Բեկ զորավարի անվամբ, 1949թ. հունիսի 29-ին: Բարբառում կրկնանուն է՝ Դավիթբեկ, Ներքե Չեյվա:

Ըստ Բաֆֆու, այստեղ են տեղափոխվել Չորքի Չեյվայից 1830-ական թվականներին, սակայն տեղաբնիկները միշտ եղել են: Պարսկերենում Չեյվա նշանակում է ամրոց, մի բարբառով՝ գետերի կցվանքատեղ:

Գյուղի արլ կողմում Տախ գյուղատեղին է: Ստ.Օրբելյանն ունի Տախն: Պահպանվել է Տախի եկեղեցին, նշմարելի են հնավայրերի հետքերը:

Յետագոտողների մի մասն այս գյուղը համարում է Անդոկի դուստր Փառանձեմի՝ Հայոց թագուհու ծննդավայրը:

Այստեղ է ծնվել Արամ Մանուկյանը: Բանաստեղծ Գագիկ Դավթյանի հայ-

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

րենի գյուղն է.

*Ներիր ինձ,*

*երկիր, ես քո երկրային*

*մեծահոգությանը վերաբերող առաջ*

*երկյուղածությանը*

*ինձ խոնարհվելու*

*արժանի արա...*

*Վերաբերող ես եմ բուժելու, երկիրը...*

Այս գյուղացի Արթուրյան Մովսիսյանն իր տոհմը ծագած է դնում Ասյաթ-Նովա-յից:

### Դովրուս

Աճանանի հովտում, Խոտանանի եւ Անտառաշատի միջեւ, Կապանից՝ 20 կմ: Տարբեր աղբյուրներում անվանված է նաեւ Թավրուզ, Տավրոս, Տովրուզ: Բարբառում՝ Տավրս:

Կապանի իշխանությունը 1990թ. այս գյուղանունը վերափոխել է Տավեր՝ ոգետրված լինելով Սո.Օրբեյանի հիշատակած Տավետար (կարդա Տավյար) գյուղի անունից: Այս կողմերում կա Թափուռ անվամբ հին գյուղատեղի, որ կարող է Տավյարը եղած լինել:

### Եղվարդ

Կապանից 18 կմ հս-արլ: Հինավուրց Բաշունիք կամ Մյուս Բաղք գավառի վիճակի մեջ: Հիշվում է Աղահորդ, Եղվարդ, Եղվարդ տարբերակներով: Բարբառում՝ Յղավերթ: Եղվարդ անունը, կարծես, առավել ետին շրջանի է, որովհետեւ գյուղը միջնադարում Աղահորդ է կոչվել, իսկ Կապանում՝ մշտապես Յղավերթ:

Շրջակայքում կան բազմաթիվ հնություններ՝ Սպիտակ աղբյուրի խաչ եկեղեցին, Շինատեղ, Խաչին խութ, Ծավիկ: 1830-ական թվականներին ներգաղթ է եղել Ղարաղաղի Վինա գյուղից:

Գյուղի մոտ է Նարգիզ-շուշան դաշտը, որտեղ 1725 թվականին տեղի է ունեցել ճակատամարտ Թորոս իշխանի եւ պարսից Ֆաթ-Ալի խանի բանակների միջեւ:

1700թ. կառուցված եկեղեցու բակում են ամփոփված Դավիթ-Բեկի զինակիցների եւ Թորոս իշխանի գերեզմանները:

1919թ. Նուրի եւ Քյազիմ փաշաների զորքերի դեմ մեծ պատերազմ եղավ Եղվարդ գյուղի մոտ:

Ապրանքափոխանակություն կատարելու նպատակով Անդրանիկ զորավարը

Եղվարդի մերձակայքում շուկա է հիմնել:

### Լեռնաձոր

Կապանից 25 կմ հեռավորությամբ, Ողջի գետի ձախ ափին, Քաջարանից արլ: Հիշատակված է Քրդիքենդ, Քուրդքենդ, Քրդիկանց, ինչպես նաեւ՝ Տինիք, Տիրնիք ձեւերով: Չորքի խոսվածքում՝ Դիլար, Ալիշանի մոտ՝ Տելուլեր եւ Քուրտքենտ:

Բարբառում՝ Քյըրդիգյաց, Լեռնաձոր: Եկեղեցու կնիքի դրոշմի վրա Քրդիկանց է: Ենթադրվում է, որ գյուղանունը ծագում է Քրդիկ իշխանի անունից:

Մյուսինքում Քրդն հիմքով մի քանի տեղանուններ են եղել: Քրդիկանցը, ըստ Ունառյանի, Քուրդիկ իշխանի զովասուն ամառանոցն էր եւ հարեանուն էր Տինիք (Տիրնիք) գյուղին, որը ուշ միջնադարում Քրդիկանց տեղափոխվեց: Ալիշանի քարտեզի վրա Տելուլեր է: Քրդիկանց-լեռնաձորցիները 1958 թվականին նորից վերադարձել են Տելուլեր-Դիլար-Տինիք նախկին գյուղատեղին, որտեղ առ այսօր Լեռնաձոր գյուղն է:

Ըստ Ունառյանի՝ գյուղանունը ծագում է հին հայոց Տիր աստծու անունից:

Գյուղի շրջակայքում կան երկու եկեղեցի եւ այլ հնավայրեր:

Ս.Խանգաղյանը Ապարանի շրջանի Ղարաքիլիսա գյուղի անունը շինում է Քրդիկանց՝ Վաչուտյան Քուրդ իշխանի անունով (Հայրենապատում, հ.2, էջ 23):

18-րդ դարում Երզրումի նահանգի Բայազետ գավառի Խաստուր գյուղում է ապրել մատենագիր Խաչատուր Քուրդքանցին (°):

Անցած դարի առաջին կեսին Քրդիկանցի Սբ Աստվածածին եկեղեցու քահանա տեր-Պողոսը Տաթևում ստորագրել է Դավիթ-Բեկի գործունեության վերաբերյալ մի փաստաթղթի տակ (1835թ. սեպտեմբերի 25):

Գյուղի հանդանուններից դիցական ծագում ունեն Վանենին, Շվոտը: Վերջինս փետրվար ամսվա հնագույն անունն է՝ չար ոգու եւ դեւի իմաստով (փետրվարը աստանաների ազատության ամիսն էր):

Գրառված են Շուշան տատի խաղիկները.

*Նէնա օրը նօրայ ա,*

*Նօրայ ա, պիլլօրայ ա,*

*Քու լլանենգյա իրենաաթ*

*Ին սէրարու մըլլօրայ ա:*

Գյուղում արթուն է ազգատոհմային

պատկանելության գիտակցությունը: Յոթ ազգատոհմերը՝ մեծ ու պստիկ, երբեմն իրար «ծեռոց են նետում», ախորժեղի խոսքակովով նախատում միմյանց:

Պրոֆ. Թ.Հակոբյանի, գրող-թարգմանիչ Ս.Ունառյանի հայրենի գյուղն է:

Լեռնաձոր նորահնար անունը 1920-ական թվականներից է: Լեռունը հավաստում էր, որ մտահոգացել է ուսուցիչ Արգար Նախիբյանը:

### Խալաջ

Աճանան գետի ձախ մասում, Կապանից 7 կմ հս-արլ: Ունի եկեղեցի: Նույնացվում է 13-րդ դարից հիշատակված Խմայճ կամ Խմույճ գյուղի հետ: Բարբառում՝ Խալաջ:

Մոտակայքում եղել են Եմազլու, Ինջավար, Թեջաղին գյուղերը: Բախշի բանասացն ասել է, որ, իբր, Էջանան գյուղը Թեջաղինի տեղում էր:

Տեղական թուրքերը դավադիր մի գրույց էին ստեղծել, թե, իբր, Թեջաղին բառը հապավված է հանցագործներ Թալեաթի, Էնվերի, Ջամալի անուններից:

Ոչ պաշտոնապես վերանվանվել է Անդրանիկաչեն: Այժմ հայաբնակ է, գործում է դպրոցը:

### Խդրանց

Կապանից 12 կմ արլ, Բարկուշատի ճյուղերից մեկի գառնափ վանջին: Աղբյուրներում կոչվել է նաեւ Խոտորանց, Սիրքյաթաս, Ծաղկածոր: Բարբառում՝ Խդրանց, ա-ն՝ քմայնացած: Այստեղ է Չուրուքդռեն ավերակ վանքը. կան խաչքարեր, գերեզմանոցներ:

Ունառյանը տեղանունը համարում է եգիպտական սիրո աստված Հատորի անունից եւ այստեղ է դնում նրա հեթանոս ծիսարանը:

### Խլաթաղ

Գյուղ Աճանանում, Առաջածորից արմ: Կոչվել է նաեւ Ախտախանա, «Նոր-Դար»-ի 1890թ. հմ. 129-ում կոչված է Խլաթալ, հավանաբար վրիպակ է: 1940թ. հունիսի 1-ին վերանվանվել է Չորաստան անհեթեթ անվամբ, սակայն այդ անունը քննություն չի բռնել: Խլաթաղ գեղեցիկ անունը ստուգաբանվում է հայերենով. այն աղերս ունի Խալդ աստ-

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

ծու պաշտամունքի հետ:

Ալիշանի քարտեզի վրա Ախալ-խանա է, բայց էջ 276-ում կարդում ենք.

«Բնակիչք խլաթաղի են Հայք հողագործք, տունք 35, ունին եկեղեցի փոքր: Սակաւուք ի բացեայ, ի հս. սորա եւ ի սմին կողման գետոյն (ի վեր ելանելով) կայ Ախտախանա գիւղ, անծանոթ ըստ ցուցակաց»:

Այս գյուղից էր Առաջին հանրապետության քաղաքական գործիչ Գեղեոն Տեր-Մինասյանը:

Խլաթաղիները սրախոս ու զվարճախոս են: Կապանում երբեմն նրանց կատակով անվանում են սոխասեր /սօղան օտող/:

### Ծավ

Գյուղ Կապանից 17 կմ հրվ, Արեւիքի 12-ի ճյուղերից մեկի լանջին, Բասուտ գետի ափին: Բարբառում՝ Ծավ: Հր-արլ մասում Բակունցի նկարագրած Մթնածոր անտառն է: Բասուտ գետի հովտում սոսիների անտառն է: Սոսիներ են աճում նաեւ Կապան քաղաքում (մի քանիսը տնկել է ծավցի Եղիշե Դավթի Հովհաննիսյանը), Էջանանցի հովտում եւ այլուր:

Ծավում ավանդազորայց կա, թե, իբր, վաղ անցյալում գյուղի մերձակայքում կամ հենց գյուղի տեղում ծովակ է եղել:

Սոտակայքում են Թրջումանանց, Սանալու, Նավս, Կեմանց, Չինարլու, Դալլաքլու, Աղջկաբերդ գյուղատեղիները: Ըստ երեւոյթին Թուրջումանանց (Թնջումանաց) եկեղեցին Սբ Թարգմանչաց անունն ունի:

Ումառյանը Նավս լեռան անունը դնում է Նոյի ժամանակներից:

Շխորաց գյուղատեղում կա ավերակ եկեղեցի: Այստեղ է Քսաջուր աղբյուրը, որը հանքային է եւ, գյուղացիների պատմելով, բուժում է քոսը:

Բասուտ գետի մի վտակի վրա Ղափճուղա գյուղատեղին է՝ եկեղեցու ավերակով: Այնտեղ է կամարակապ քարե մի կամուրջ, որը միացրել է մերձակա երկու գյուղեր: Վիմագրեր կան Գյամուշ յաթաղ, Իվլու հանդամասերում:

19-րդ դարի վերջերին Վերին ձորից շատ ընտանիքներ են վերաբնակվել Ծավում, Կեմանցում: Ծավում է ծնվել Գեւորգ Հայրյանը:

### Կաղնուպ

Կապանից 25 կմ հս-արլ, Բարկուշատի 12-ի մի ճյուղավորման լանջին, գեղատեսիլ վայրում: Հիշված է նաեւ Մողես, Մուկես, Նավրուզլու: Բարբառում՝ Սողես: Ումանք ենթադրում են, թե Մողեսը Քաշունիքի Մոզք գյուղն է՝ հիշատակված 13-րդ դարում: Կաղնուտ է վերանվանվել 1949թ. հունիսի 29-ին: Շրջակայքում կան կիսավեր եկեղեցի, գերեզմանոցներ, հին բնակավայրերի մնացորդներ:

Հին գյուղատեղին տեղացիները կոչում են Հոնապատ (Անապա՞տ): 1830-ական թվականներին գյուղը գաղթականներ է ընդունել Ղարաղաղից:

Ալիշանը Մողես գյուղանունը դրել է նորագույնների ցուցակում:

### Կապան

Այունիքի մարզի կենտրոնը, մարզի մայրաքաղաք ուստանը: Գտնվում է Ողջի գետի երկու կողմերում, Խուստուփի հս ստորոտին: Այլ անվանումները՝ Ղափան, Խաբան, Խափան, Մաղան: Տեղացիների հորջորջմամբ՝ Ղափան, հեզնաբար՝ Մաղան: Վերջինս արաբերեն հանքաշխարհ է նշանակում:

Այունիքի թագավորության մայրաքաղաքն էր 10-12-րդ դարերում եւ գտնվել է այստեղից 10 կմ արեւմուտք, Տանձուն լեռն տարածքում:

Միջնադարյան Կապանը գեղարվեստորեն ներկայացված է Ս.Ումառյանի «Բաղաբերդ» վեպում: Կապանի պատմությունը գիտական քննության է ենթարկել դ-ր Գր.Գրիգորյանը: «Ղափան» անվամբ գրքույկ ունի հանգուցյալ Արտ.Կարապետյանը:

Քաղաք է կոչվել է 1938 թվականին, մինչ այդ ավան էր: Երեւանից հեռու է 320 կմ:

### Հաջաթին

Կապանից 30 կմ արմ, Գեղի գետի աջ մասում: Բարբառում՝ Հաջաթին եւ Հուչուփ: Պահպանվել է հինավուրց միանավ եկեղեցին, որը արմ կողմից՝ ակներեւաբար ավելի ուշ ժամանակում, ընդլայնված է մոտ չորսուկես մետրով: Լայնությունը 8 մ է, ընդհանուր երկարությունը՝ 15 մ 70 սմ: Դռան բարավորի վրա շրջանաձեւ զարդանախշ կա: Կտուրը 6 մ երկարությամբ փլվածք ունի:

Եկեղեցու արմ կողմում՝ 75 մ հեռա-

վորության վրա, կիսավեր մի կառույց կա: Ձորք գավառում Ստեփանոս Մետրոպոլիտը հիշատակում է Ոչեթի գյուղ: Նրան կրկնում է Ալիշանը, բայց՝ Ողջեթի եւ մի այլ անգամ՝ Չաթու անուններով: Երկուսինն էլ, հավանաբար, այս գյուղի մասին է:

Թուրքերը մի մեկնություն էին հարմարեցրել՝ ուչ-աղի, որ, իբր, երեք ցավի դարմանման վայր է: 1990թ. առաջարկվել է Խաչատուն նորահնար անվանափոխությունը: Հաջաթինը եւ Հուչիթին տարբեր, բայց մերձավոր գյուղեր էին:

### Ղարաջիման

Կապանի արլ մասում, Ողջի գետի հովտի ձախափնյա լանջին: Թարգմանաբար՝ սեւ մարգագետին, սեւահողք:

1990-ին առաջարկվել է անվանափոխել Դիցամայր, որ հնամենի Կովսականի գավառի Դիցմայրի մի գյուղանուն է: Ումառյանը Դիցմայրին մեկնում է անտառի աստծու՝ Մայրի անունով, սատարված լինելով Ալիշանի մի դիտողությունից:

### Ղարապղա

Գյուղ Աճանան գետի վերին հոսանքի շրջանում, աջ մասում: Հիշված է նաեւ Քարատղա, Կարատղա, Ղարաունլա, Քարանկա: Բարբառում՝ Կարաղղա: Ալիշանի մոտ Գարատուգա է, հարկավ, վրիպակով: 1990-ին առաջարկվել է անվանափոխել Վանեք, որ հուշել է Ս.Ումառյանը: Վանեք անունը «Կապան» թերթը մի անգամ օգտագործել է որպես այս գյուղի մերձակա Չանախչի անտառի նորանուն: Այս անտառի տարածքում գավաթագործ վարպետների գյուղ է եղել:

### Ղովշուր

Գավառի կենտրոնական մասում, Գեղի գետի ստորին հոսանքին առընթեր, Չեյվայի հարեւանությանը: Նաեւ՝ Կովշուտ, Կավշլուտ, Կավուշուկ: Բարբառում՝ Ղավշուտ:

Թարգմանաբար՝ զուգակցված, հավանաբար Կիցք գյուղանունից: Գյուղից վերեւ, գառնիթափ արտերում հին գյուղի ավերակներ են նշմարվում, պահպանվել են խաչքարեր:

1990թ. առաջարկվել է Թավշուտ...

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

ամհարիր նորանունը:

### Ղըրղըլու

Նախկինում գյուղ գավառի հր-արլ մասում, Շիկահող գյուղից հր-արլ: 1939թ. ուներ 123 բնակիչ: Կոչվել է նաև Ըռստամանց: 1888 թվականին Քրդիկանցից մի քանի ընտանիք է վերաբնակվել Ղըրղըլուում: Այս գյուղը վերականգնվելու միտում ունի. տոհմերի շառավիղներն ապրում են Կապանում, ունեն ընդգծված հայրենաքաղձություն:

Ղըրղըլու անունը աֆշար ցեղի մի ցեղախմբի անվանումն է:

### Ճակատեն

Կապանից 6-7 կմ հրվ, Կովսականի վիճակում: Նաև՝ Չիկադին: Բարբառում՝ ճկըտեն: Շրջակայքում պահպանվել են 10-րդ դարի եկեղեցու ավերակը, մատուռներ, 17-րդ դարում կառուցված կամուրջ: Ըստ Ալիշանի՝ Չաքատին կամ Չքտեն:

Տեղացիներից ոմանք գյուղանունը բացատրում են որպես արեաահայաց կողմ՝ Բաղքի ճակատամաս, որը հազիվ թե համոզիչ է: Մերձակայքում կան հին գյուղատեղիներ (Շինդուն և այլն):

Ճակատ բառը պահպանվելուց ունի գագաթ իմաստը:

### Մուսալամ

Գյուղ Ողջի գետի եւ նրա աջակողմյան վտակ Բաղաջջի կցավանքատեղում: Կապանից՝ 18 կմ: Նաև՝ Մուսաշաղ, Պղնձաշեն, նորագույնը՝ Չագեձոր:

Բարբառում՝ Սալլամ: Թարգմանաբար՝ աղոթատեղի կամ ճգնարան (արաբերեն):

Ժողովրդական ստուգաբանությամբ, իբր, միս ալան է, որ կթարգմանվի պղինձ գնող: 1960-ական թվականներին այստեղ են վերաբնակվել մոտակա Աջըլլու գյուղի բնակիչները, մեկ տարի ուշացումով՝ Ավսարլուինը: Երկու գյուղերը գտնվել են Բաղաջջի վերին հոսանքի շրջանում, Աջըլլուն՝ աջ, Ավսարլուն՝ ձախ մասում:

Աջըլլուն կոչվել է նաև Թունիս, իսկ Ավսարլուն՝ Արջագուր, Աճիզուր, Արջածոր: Երկու գյուղատեղիներում էլ կան ավերակ եկեղեցիներ: Ավսարլու-Արջածորի եկեղեցին՝ կառուցված 14-րդ

դարում, կանգուն է, բակում խոյարձան կա: Եկեղեցուն արձանագրություն կա՝ թվագրված ՌՃԶ-1657թ. ՅԻՇՏԿԵԱ-ՆՅԻՇԿ ՆՆՁԵՑԵԼՈՑ ՅՈՂՈՅՆ ՔՍ ՈՂՈՐ-ՄԻ: ՅՇՏԿ ԱՍԻՆ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏԵՑԻ ԱՆՈՒԹԵԱՑ ԱՆ ՈՂԱՑԻ Ի ՔՍ Ի ՅԻՇՏԿ ՈՎԱՆԵՍԻՆ ՈՂՈՐՄԻ ԻԲՐ ՈՂՈՒՅՆ: Չախ խորանի բարավորին արձանագրված է.

ԱՎԱՔ ԽՈՐԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵ ՅԻՇՏԿ ԽՈՒ... ԽՈՒՄ ԹՎ ՌՃԶ:

Եկեղեցու երկարությունը 10 մ 32 սմ է ներսում, բեմն ունի 5 մեղ պատուհան:

Արջածոր գյուղն Ալիշանը նշանակել է նորագույն գյուղանունների ցանկում: Բացի այդ, Բաղաբերդի գավառում թվարկել է Յանդիշեն, Քջանանց, Փլմագրայ, Արջածոր:

Ջաբրայիլ քիշին պատմել է, որ Ավսարլու անունը ծագել է ռուսերեն օֆիցեր անունից: Այդ մականունն ուներ այդ գյուղի երիտասարդներից մեկը, որ անվանի էր:

1990-ից Մուսալլամը վերանվանված է Չագեձոր՝ բարեհիշատակ Չագիկ նահապետի անվամբ:

### Ներքին Գիրաթաղ և Վերին Գիրաթաղ

Միմյանցից 3 կմ հեռու գյուղեր Կապանից մոտ 10 կմ հս-արմ, Բաղաբերդի դիմաց, Ողջի գետի Գիրաթաղ վտակի ձախ մասում: Յավանաբար պատկանում էր Վահանավաթին կամ իշխանական տներից մեկին, այդ պատճառով չեն նշված Ստ. Օրբելյանի հարկացուցակում:

Ումառյանն այս անունը նույնպես դիցական է համարում. այն դուրս է բերում բաբելական Գիրթա՝ կրակի աստծու անունից: Այդ աստծու անունից է դնում նաև Կովսականի Գիրակա ամրոցի անունը, որ տեղացիների հորջորջմամբ կոչվում է Գիրվին քար:

Բարբառում գյուղանունը հնչում է Գիրթաթաղ կամ Կռաթաղ: Վերին Գիրաթաղում եկեղեցու ավերակ կա:

Գիրաթաղ տեղանվան հիմքում կարելի է նաև որոնել կուռք արմատը:

Ըստ մի լեգենդի (գրառել է Սերգեյ Յակոբյանը), երբ Լենկթեմուրի զինվորները հրդեհեցին Կապանի հռչակավոր գրադարանը, մի քաջ աղեղնավոր հայկազուն իրկեց մի քանի մագաղաթյա գրքեր ու թաքցրեց մի հայաբնակ գյուղում: Թշնամու հեռանալուց հետո սկսե-

ցին արտագրել ու բազմացնել, եւ այդ գյուղը կոչվեց Գրի թաղ կամ Գրաթաղ, որ է Գիրաթաղը:

Այս լեգենդը պատմում են նաև Գեղանուշի Կիրատեղի վերաբերյալ:

1990թ. Կապանի իշխանությունն առաջարկել է Ներքին Գիրաթաղը վերանվանել Գրաթաղ, Վերին Գիրաթաղը՝ Կաքավաբերդ:

### Ներքին Գյողաքլու և Վերին Գյողաքլու

Կապանից 12 կմ հս-արլ, Կապան-Գորիս մայրուղու աջ կողմում: Անցյալում հայաբնակ էր. Վերին Գյողաքլուում կան եկեղեցի, հայերեն վիճագրով գերեզմանաքարեր, այստեղ է Պուտխաչ հնավայրը:

Կապանցիներից ոմանք գյուղանվան մեջ տեսնում են Կոտակ անձնանունը:

Տեղանունների բառարանում կարծիք է վկայված, ըստ որի գյուղը նույնացվում է միջնադարյան Կոմեն գյուղին: Դա ընդունելի չէ, որովհետև Քաշունիքի գյուղախմբերում զիտեն Կոմենա ձոր հանդամունը, որտեղ, բնականաբար, պետք է եղած լինի Կոմեն գյուղը:

1990թ. անվանափոխության ժամանակ Վերին Գյողաքլուն առաջարկված է վերանվանել Վարդավաճք, Ներքին Գյողաքլուն՝ Գետիկ, թեպետ Վարդավաճքը չտեղորոշված գյուղ է Բաղքում, իսկ Գետիկը վայրցձորյան է:

### Ներքին Խոտանան և Վերին Խոտանան

Ներքին Խոտանանը հնուց անտի համարվել է Վերին Խոտանանի մի թաղը: Խոտանանը հնագույն գյուղ է Աճանանում, Կապանից 10-12 կմ հս-արմ, Բարկուշատի լճի հարավային լանջին: Հիշվում է նաև Խոտանոն, Խոտեան, Խոտան: Բարբառում՝ Խտանա, սեռական հոլովում՝ Խտնանու:

Նախաքրիստոնեական մոխրապաշտ Աճանանում, ինչպես պնդում է Ս.Ումառյանը, Խոտանանը Վանի թագավորության Խոտտուխին աստծու դիցարանն էր:

Ի դեպ, Վանի հարավարևմտյան կողմում, ժայռի արհեստական որմնախորշի մեջ փորագրված արձանագրության մեջ նշված է, որ, ըստ Իշպուխնե արքայի սահմանած կարգի, արեւի ամ-

## Ձեռագիր մասյան. Կաղանա տուն

սին Խոստումնեին պետք է զոհել երկու եզր եւ չորս ոչխար:

Առաքել Դավրիժեցին բազմիցս անդրադարձել է Սյունյաց դպրոցի սան Մովսես կաթողիկոս Խոստանանցու (Մովսես Սյունեցի) գործունեությանը: «Մեծահավատ, սրբասունդ եւ բարեփառ մեր տեր Մովսես կաթողիկոսը Սյունյաց երկրի Բաղք գավառի, որ այժմ Աճանան է կոչվում, Խոստանան կոչված գյուղից էր»: Այս Մովսեսին, մինչ կաթողիկոս դառնալը, Շահ Աբասը կալանավորել ու վրան տուգանք էր դրել: Նա գահակալել է Շահ Սեֆիի ժամանակ՝ 1629-ից, եւ վախճանվել է 1632-ին: Վերակառուցել է Էջմիածնի վանքը, ամենուրեք խթանել է շինարարությունը: Եգիպտոսում ու Երուսաղեմում եղած ժամանակ սովորել էր մոմի սպիտակեցման գաղտնիքը եւ արտադրություն կազմակերպեց Էջմիածնում, ինչպես նաեւ պարսից մայրաքաղաքում:

1632 թվականին թուրք է գրել Լեհաստանի թագավորին «ի խնամ հայոց»:

Մովսես Խոստանանցու գահակալության 1-ին տարում կառուցվել է Աճանանի հողաշեն կամուրջը Բաղաբերդ-Տաթև ճանապարհին: Կամուրջն ունի պարսկերեն արձանագրություն՝ առնված Սաադիի Գուլեստանից:

*Կապրի այս չափն ու կարգը շար  
դարիներ դեռ երկար,*

*Թեկուզ մարմինս անկեղտան լինի  
հողին հավասար...*

Արձանագրության մի տողն անընթեռնելի է:

13-րդ դարում Խոստանանը Տաթևի վանքին տալիս էր 12 դահեկան հարկ, 1781 թվականին՝ 3700 դահեկան պտղահարկ:

Ձեռագիր հիշատակարանների համաձայն՝ Խոստանանի Սբ Աստվածածին եկեղեցուն ընդօրինակվել են Ավետարան ու Կանոնագիրք:

Գյուղում մշմարվում են 14-րդ դարի հուշարձան-դամբարաններ:

Դավիթ-Բեկի ժամանակներում մեծ ճակատամարտ է եղել Ղոզու հանդում, որն առ այսօր կոչվում է Էրմանի դլան՝ հայերի մնալու տեղ: Կռիվներում քաջագործություններ ցուցաբերելու համար Խոստանանցիները խենթեր (դալի) մականունն առան: Հիմա էլ կապանցիներից կարելի է լսել «այլ խըտնեցե» (խոստանանցի խենթ) հեգնանքը:

Ուսուցչուհի Ալմարա Անտոնյանը

լեզենդ է գրառել Խուրդ եւ Անոն ընկերների մասին, որոնցից, իբր, Խոստանան գյուղանունն է:

Խոստանանի մերձակա լեռնազանգվածը տեղացիները կոչում են Կատարին: Կարծում են՝ այս կողմերում պետք է փնտրել Կատարո վանքը:

Խոստանանը Պողոս Տեր-Դավթյանի հայրենի գյուղն է:

### Ներքին ճան

Գավառի հր-արլ մասում, Կովսականի վիճակի մեջ, Ծավից 7 կմ արլ: Գտնվում է Բասուտ կամ Ծավ (Չավնդո՞ւր) գետի ստորին հոսանքում: Ըստ Ալիշանի՝ Բասուտ գետն իր անունն առել է Կովսականի Բոստ գյուղանունից:

Գյուղանունը, հավանաբար, իրենց հետ բերել են ներգաղթողները Ղարաղաղից: Այս գյուղի խոսվածքն առանձնահատկություններ ունի:

Դեռեւս անցյալ դարում հանդեցիները Սթնածորից եղնիկներ ու եղջերուներ էին բերում եւ ընտելացնում:

### Նորաշենիկ

Կապանից 18 կմ հս-արմ, Աճանան գետի ձախ մասում: Բարբառում՝ Նրաշինք, սեռական հոլովում՝ Նիշքին, Նըրըշինքին: Ստեփանոս պատմիչը Բաղք գավառում հիշատակում է Նորաշենիկ գյուղ: Մեկ այլ Նորաշենիկ է մատնանշում Կովսական գավառում: Բայց Բաղքում հիշատակում է նաեւ Նորաշինիկ Մյուս, որի հարկաչափը Նորաշինիկի հարկաչափին հավասար էր:

Գյուղում խոսվում է մի ավանդագրույց, թե, իբր, նախկին գյուղատեղում չեն դիմացել մրջյունների գրոհներին, որոնք պարբերաբար տանում էին ամբարված հացահատիկը, եւ գյուղը տեղափոխվել է ներկայիս տեղը: Եկեղեցի կա եւ՝ գյուղում, եւ՝ նախկին գյուղատեղում: Վերջինս եռանավ բազիլիկ է, կիսավերակ, ունի արձանագրություններով խաչքարեր:

Գյուղում հայտնի թունամյան տոհմի մի ավանդության համաձայն՝ բանաստեղծ Յովհ.Թունամյանի եւ իրենց նախնիները ազգակցական կապ ունեն եւ ներգաղթել են Պարսկաստանից:

Անցյալ դարի 2-րդ կեսից պղնձաբեր հանքեր են հայտնաբերվել Նորաշենիկի մերձակայքում: Լազարեւ եղբայրնե-

րը 1874թ. Նորաշենիկից ներքեւ՝ գետի ափին, կառուցել են ձուլարան: Ներկայիս հիվանդանոցի տեղում ապրել են պղնձագործներ, որոնք գործարանից գնում էին պղինձը, պատրաստում կենցաղային իրեր եւ վաճառում գյուղերի բնակիչներին: Կանգուն են մնացել ֆրանսիացիների կառուցած վարչական շենքի պատերը «Բաղալին յուրդ» համաձայնում:

1828թ. մի կոնդակում Տաթևի արքեպիսկոպոս Սիմոնը գրել է. «Յամի Տեռան 1824, գաւառին Աճանանու Մէլիք Ստեփանէսն, Մէլիք Սողոմոնն, յառաջնածորեցի, ի ժամանակի Գորիսու զօրաց զլիսավոր պօտապօլկովնիկ բարեճնունդ Նազիմկայ Քէպր Անդէիչին եւ Նորաշինքու զօրաց կապիտան Իւան Վէկինտիչին եւ ի նոսին եղեալ չինովնիկներին...»:

Խորհրդային ժամանակ գյուղից վար՝ Աճանանի ձախ ափին, գործել է հիդրոէլեկտրակայան. շինությունն օգտագործվում է այլ նպատակով:

Աճանանի սովխոզը կոչվում էր այս գյուղի անունով:

Գյուղի հանդամունների ցանկը կազմել է Ս.Կարապետյանը:

### Շաբաղին

Կապանից հս, Սեւաքարից 7 կմ: Հիշված է գրավոր աղբյուրներում Եղեգն, Եղիգն, Եկին, Շաբաղին-Եկին, Եղինկ տարբերակներով: Բարբառում՝ Շաբաղին եւ զուգահեռաբար՝ Եղեգյ:

Այս գյուղում ընդօրինակվել են ձեռագրեր: Գյուղը հիշված է Ստեփանոս պատմիչի ավանդած հարկացուցակում, Բաղք գավառում:

Այժմ հայաբնակ է:

Համանուն գյուղ կար Քաջարանց գյուղի մոտ, որ բարբառում կոչվել է Շիվդինանց, իսկ Շբանանց գյուղատեղին Խլաթաղի դիմացն է:

### Շիկահող

Կապան մարզկենտրոնից 23 կմ հարավ, Ծավ գետի վտակ Շիկահողի ափին: Նաեւ՝ Շիխաուզ: Բարբառում՝ Շգավէլ:

Շիկահողը հիշված է նաեւ գյուղաքաղաք (Շուշեցի տեր Բաղդասար Գասպարյանի հուշագրություններում): Գյուղանունն առկա է 13-րդ դարի հարկացուցակում: Հողային աշխատանքներ

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

կատարելիս այս գյուղում հայտնաբերել են բրոնզեդարյան կացին եւ այլ իրեր:

Ակներե եւ, որ տեղանվան շիկ արմատը դիցական է:

Կապանում տեղանունը շեկ-կարմրավուն իմաստով են ընկալում: Մեկի կարմրավուն հագուստը հեզնելիս նրան կեսկատակ համարում են շիկահողջի:

Կապանի շրջանում 1-ին կոմունիստական կազմակերպությունը ստեղծվել է Շիկահողում 1919թ., ուսուցիչ Բագրատ Դարոբյանյանի ջանքերով:

19-րդ դարի 80-ական թվականներին հանքատեր Կոնդուրովը Շիկահողի տարածքում հայտնաբերել է պղնձի հանքեր եւ ձուլում կազմակերպել: Բերդին քար, Կյըզոլին ծօր, Պռշնոտ, Կհուլեն պռնկ հանդամասերում պահպանվել են հանքախորշերի ավերակներ:

Բրիտանական հանրագիտարանում Շիկահողը նշված է որպես Եգիպտոսի քաղաքական գործիչ Նուբար փաշայի ծնողների գյուղ:

### Շիշկերպ

Գավառի հր-արլ մասում, Բասուտ գետի վերնագավառում, Ծավ գյուղից 1 կմ արեւմուտք: Գյուղից հյուսիս, Փուխրուտից արեւելք, Շիշկերտ լեռնագագաթն է՝ 2735 մ, որ նաեւ կոչվում է Էշակնեյդան (սա նմանակված է Աժդակ դիցանունից): Բարբառում՝ Շիշկերտ:

Գյուղական շիշ արմատը Ս. Ունառյանը հղում է նորխուհիերեն սիս բառին, որ ծես-գոհ բառն է:

Հայր Ստեփանոսի մոտ Կովսականում նշված է Շաշիգետ գյուղ, որը երեւանյան հրատարակության մեջ ակներե վրիպակ է, որովհետեւ այն առնված է Մատենադարանի հմ.6271 ձեռագրից, որտեղ, ըստ նույն ծանոթագրության, Շաշիգետ է: Բայց նշված է, որ փարիզյան հրատարակությունն ունի Շաշիկետ տարընթերցվածքը: Սա հի՞մք է եզրահանգելու, որ հին բնագրում Շիշկերտ է եղել:

Գյուղանվան կերտ վերջածանցը ենթադրում է, որ հնագույն ժամանակներում գյուղը դղյակ, ամրոց կամ ավան է եղել:

Շրջակայքում կան հին գյուղատեղեր՝ Անապատեր, Նատրու գետ (այստեղ ավերակ եկեղեցի կա), Քյարվանգյահ, Թոյուխքյանդ, Հանդի կալեր, Հաչին դուզեր, Փթրախլու, Մազրա, Վասու վե-

րընգած (սա, հավանաբար, Ստեփանոսի հիշատակած Վարոսի վանք գյուղի ավերակն է): Աղամամադ արեգունիի արտի սահմանի մի քարի վրա արձանագրություն կա:

1-ին հանրապետության տարիներին Սմբատ-բեկը մտահոգացում ուներ այս գյուղում լեռնային գործի ուսումնարան հիմնել: Նրան սատարում էր նարոդովուական, հրապարակախոս Ակնունդին՝ մեղրեցի Խաչատուր Մալունյանը:

### Շրվենանց

Գյուղ Աճանանի հովտում, Խոտանան գետակի ձախ մասում: Նաեւ՝ Դայմադաղու: Բարբառում՝ Շրվենանց: Կաթողիկոս Աբրահամ Կրետացին 1736թ. Մուղան ճամփորդելիս, Երիցվանքից դուրս գալով «Եւ անտի Պարկուշատով եկինք ի գիւղն Գիւլմէշէ՝ որ է Մէլիք Շրվենի գիւղն»: Արդ, պետք է ենթադրել, որ Մէլիք Շրվենին պատկանող Գյուլմեշա գյուղը վերաբնակվել է ներկայիս Շրվենանցում կամ թե՛ ներկայիս Շրվենանցն էլ, թեպետ այլ անվամբ, պատկանել է այդ Մէլիքին:

Գյուղը հիշված է նաեւ Շրվանենց ձեռով: Մի Շրվեն անձ գիտի նաեւ Լեոն:

Գյուղում կան 10-րդ դարին վերագրվող եկեղեցիների ավերակներ, հինավուրց գերեզմանոցներ: Հս-արմ կողմերում հիշված են Խրվանդ, Խուրթին, Խուստուփաձոր գյուղերը, հարավային կողմերում՝ Քեղցահանդ գյուղը: Առկա է գրչագրական թյուրիմացությունը, որովհետեւ նշված գյուղանունները կան նաեւ Կովսականի վիճակում: Խրվանդա խաչ գյուղատեղի կա Շիկահողից 3 կմ արմ, գետակի աջ կողմում, որի մոտերքում է Աքլորաքարը:

1903թ. կան 1904թ. Շրվենանցում բացվում է դպրոց, որի հոյակապ շենքն իր միջոցներով կառուցել է այս գյուղացի մեծահարուստ Գասպար Իվանի Տեր-Մարգարյանը՝ Բաքվի սեփական նավթահանքերից ստացած եկամուտներով: Ուսուցիչների աշխատավարձն էլ ինքն էր վճարում: Շրվենանցի միջնակարգ դպրոցը համբավվածում դպրոցներից մեկը դարձավ, կրթեց Աճանանի (Էջանանի) հովտի ոչ միայն հայ, այլեւ թուրք պատանիներին:

Այս դպրոցում ուսուցչություն է արել Գեղեոն Տեր-Մինասյանը՝ 1-ին հանրապետության խորհրդարանի անդամ:

### Չայքենդ

Գյուղ Գեղվաձորում, Գեղի գետի եւ նրա աջակողմյան Կարթ վտակի միախառնման տեղում, Կապանից 33 կմ արեւմուտք: Թուրքաբնակ էր: Մինչեւ 1940թ. կոչվել է Մահմուդլու: Չայքենդ գյուղանունը ետին շրջանի է եւ թարգմանվում է Գետաշեն: Այս գյուղից 8 կմ հս-արմ գտնվում է Աջիբաջ գյուղը:

Չայքենդից ներքեւ Գեղի գետին ձախից միանում է Կահուրդ (Քիրս, Քյուրուտ, Սարիդարա, Գահուրդ) գետակը: Սրա հետ համանուն է Կահուրդ գյուղանունը: Ստեփանոսն ունի Կահուրա, Ալիշանն ուղղում է՝ Կահուրդ: Տեղացիներն այս գետակը վերին հոսանքում Այրիչայ են կոչել: Երկարությունը 14 կմ է: Գյուղում այժմ մի քանի ընտանիք է բնակվում:

### Չափնի

Գավառի հր-արլ մասում, Ողջի գետի ձախակողմյան վտակ Եղեզնազետի վերին հոսանքի ձորում, Արծվանիկից 3 կմ հս-արմ: Կոչվել է նաեւ Ներքին Չափնի: Մոտակայքում է Վերին Չափնի գյուղատեղին: Բարբառում՝ Չափնի: Եկեղեցի 1912 թվականից:

1732թ. Նադիր-շահի բանակում Թուփալ Օսման փաշայի դեմ մարտնչում էին վեց հայազգի հազարապետ, որոնցից էին չափնեցիներ Այրին-բեկի Աղաջանը եւ Մուսիսի որդի Բաղիզը (Աբրահամ Երեւանցի, Պատմություն պատերազմաց):

### Սրաշեն

Գյուղ հնամենի Կովսականում, Շիկահող գետի (նաեւ Խաչինչայ) աջափնյա լանջին, Շիկահող գյուղից 6 կմ հր-արլ: Նաեւ՝ Սարուշեն, Քյիլիսքյանդ: Բարբառում՝ Սրաշեն: Ունի 17-րդ դարում կառուցված Սբ Հռիփսիմե եկեղեցի, երկարությունը 17 մ 70 սմ, լայնությունը՝ 11 մ: Տանիքը ծածկված է շիֆերով եւ ծառայել է որպես... կոլոնտեսության մարագ:

Գյուղի հս-արմ կողմում Աղնաշեն գյուղատեղին է, հր-արմ մասում՝ Վալիխմատ գյուղատեղին:

### Սեւաքար

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

Գավառի արլ մասում, Կապանից 18 կմ հս: Բարբառում՝ Արվաքար: Ըստ Ալիշանի, 1886թ. գյուղը ուներ 84 տուն, 694 բնակիչ: Գյուղը հիշվում է Ռաֆֆու «Դավիթ-Քեկ» վեպում. Ռաֆֆին այս գյուղում եղել է 1881թ. աշնանը:

Գյուղի շրջակայքում կան հնավայրեր, հս-արմ կողմում Ինջեւար գյուղատեղին է:

1820-ական թվականներին Սեւաքարը ներառված էր Կյուլաբայի մահալի մեջ՝ Ագարակ, Չափնի, Սեւաքար, Արծվանիկ, Խդրանց:

Չայրենական մեծ պատերազմում սխրանք է գործել սեւաքարցի լեյտենանտ Մամբրե Անտոնյանը. զոհվել է 1944թ. օգոստոսին:

...Սեւաքարցիները պնդում են, որ Շուն-Ֆրանգյուլը արծվանիկցի էր:

### Սղզնակ

Գյուղ Ողջի գետի միջին հոսանքի ձախակնյակում, Կապանից 8 կմ հս-արլ: Բարբառում՝ Սիզնագ: Թուրքաբնակ էր: Հին հայկական անունն էր Սզնեք, որպիսի գյուղ կա նաև Արցախում: 1990թ. Կապանի իշխանությունն առաջարկել է Սզնուտ նորանունը:

### Տանձավեր

Գավառի հս-արլ մասում, Քաշունի գետի հովտում, Կապանից 34 կմ հս-արմ: Անվանված է նաև Տանձավայր, Տանձեւար, Տանձեակ: Բարբառում՝ Տնձեկեր: Գյուղում կա երկու եկեղեցի՝ մեկն ավերակ է ավելի հին, հին գերեզմանոցներ, շրջակայքում՝ բնակավայրերի հետքեր:

Հս-արլ կողմում Մաճ հնավայրն է՝ եկեղեցու շինությամբ, սրանից արլ՝ Վանանդաբերդն է: Մաճը գյուղաքաղաք է հիշվում:

Տանձավերի եկեղեցու բարավորին Ս. Խանգաղյանը կարդացել է՝ 1705թ.: Բայց 1620թ. Խաչատուր գրիչը Տանձեւարի եկեղեցուն (Ղափան աշխարհի Տանձեւար գյուղ) ձեռագրեր է արտագրել:

Տանձավերից արևելք Աղբուլաղ (Աղբուրա՞կ), Կուրթկուլաղ (Գայլակա՞նց), եւ Անդրկաբերդ (Ղալա Բոյն) գյուղերն էին:

1736թ. Պարսկաստան գնալիս Աբրահամ կաթողիկոսը Տանձավեր

գյուղը անայի է տեսել:

Պատմիչ Ստ.Օրբեյանը գիտի Տանձավայր գյուղ, որը Տաթևի վանքին տալիս էր 8 միավոր հարկ:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1924թ., Շրվենանցից 15 ընտանիք, իսկ 1932թ. Լեռնաձորից եւս 15 ընտանիք են վերահաստատվել այստեղ:

### Ուժանիս

Գավառի արլ մասում, Քաշունիքի վիճակի մեջ, Եղվարդ գյուղից 3 կմ հս-արմ: Բարբառում՝ Վժենես: Սա, անշուշտ, Ստ.Օրբեյանի՝ Քաշունիքում հիշատակված Վաժանիք գյուղն է: Կովսականում եղել է Վաժնատուք գյուղ, իսկ Չորքում՝ Վաժունիք: Չորքի Վաժունիքը պետք է որ Փուխրուտին մերձակա Վիժնի կոչվող հանդամասում եղած լինի:

Տեղանունը դիցական ծագում ունի: Պահլավերենում վաժ աղոթք է նշանակում: Վաչագան գյուղանվան հիմքում նույնպես, ըստ Ունառյանի, պետք է այդ արմատը փնտրել:

Ուժանիսի եկեղեցին թվագրված է 1589թ.:

1920 թվականին Ուժանիսի ծաղիկ հանդամասը բռնակցել են հարեւան Կուրաթի (Ղուբաթու) շրջանին:

Ս.Խանգաղյանը, լինելով Ուժանիսում, հուշագրել է. «1919 թվականին... Մելիք-Քարամյան Սմբատ-բեկը (ղարաբաբեցի) Քըշկռոտի կապում սպանեց Քյազիմ փաշայի զորքի պիլիմտչուն, սա օգտագործում է Բոգուց Աբգարը, եղվարդցի Անդրեաս Բախշիի Տեր-Հարությունյանը, Շամիր Գալստյանը... Չեքուց Օհանը անվրեպ խփող էր, Սիմոն Չաքարյանը ինքնաշեն ռումբով ոչնչացրեց Քյազիմ փաշայի շտաբը»: Քաշագործություններով աչքի ընկան Աթա Չաքարյանը, Նախշունի որդի Համբարձունը, Օհան Գրիգորյանը: Վերջինս ավագակ Բեկլար-բեկին բռնեց, մեքքը ոլորելով կոտրեց. օգնության եկավ արծվանիկցի Գրիշա Մեսրոպի Տեր-Հարությունյանը...»

Ուժանիսի Արտավազը Վարդագարի Հովհաննիսյանը 1925-ին ավարտել էր ՄՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետը: Նա 1937թ. Արբեշյանի թեթև արդյունաբերության մախարարն էր:

### Փայահան

Գյուղ Գեղվաձորում, Գեղի գետի վերին հոսանքում, Չայքենդի եւ Աջիբաջի միջև: Տեղորոշողներից մեկը Փայահանը համարել է 13-րդ դարի հարկացուցակում հիշված Բակավանք գյուղը, որ քիչ հավանական է: Թուրքերն այդ տեղանունը բացատրում էին փայա-գոմ բառից:

1990 թվականին առաջարկվել է Փառական նորանունը: Այս տեղանունը գողթանական է: «Փռնակու արաղ»-ը պատվական խմիչքի համբավ ուներ:

### Փիրիլու

Գեղի գետի հովտում, նոր կառուցվող ջրամբարից 7 կմ վեր, գետի ձախ կողմում: Երկուսը՝ Ներքին եւ Վերին: Բարբառում՝ Փուրուլու: Տեղանվան փիր արմատը պարսկերենում ծեր սուրբ կամ սրբավայր է նշանակում: Այս գյուղի հետ 1959թ. արդեն ձուլված էր հարեւան Խիժ/Խեշ, Խշի/ գյուղը: 1990 թվականին Կապանի շրջանի իշխանության կողմից առաջարկվել է Ներքին Փիրիլուն վերանվանվել Բակավանք, Վերին Փիրիլուն՝ Արձանասար:

### Փիրմազրա

Մինչև 1949թ. հունիսի 29-ը Փիրմազրա, այնուհետև՝ Կաթնառատ: Խոսակցական լեզվում այս նորանունը երբեք չի հնչել, այլ միայն՝ Փիրմազրա: Տարբեր աղբյուրներում հիշատակված է նաև Փիլմազրա, Փուխրուտ Մազրա, Բըլ Մազրա: Բարբառում՝ Փիրմազրա:

Գտնվում է Չորքի վիճակում, Ողջի գետի աջ վտակ Փուխրուտգետի ձախակողմ բարձրունքին: 2 կմ հս-արմ Հին Փիրմազրա գյուղատեղին է:

Ալիշանի քարտեզի վրա Մեզրե անվամբ է, իսկ 291-ում ունի Փլմազրայ:

Փուխրուտ գյուղում պահպանված մի ավանդազրույցի համաձայն, այս գյուղացիներն անցյալում այստեղ են վերաբնակվել հարեւան Փուխրուտից:

Փիրմազրա գյուղի բարձրունքից 1920թ. Սժեհի կարգադրությամբ հրետակոծվել է դիմացի սարավանջին գտնվող Քրոյիկանց գյուղը՝ բոլշեիկների հետ բացահայտ համագործակցության համար:

Արտ.Կարապետյանը գրել է. «Պղնձի նոր հանքավայրեր հայտնաբերելու

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

Նպատակով 20-րդ դարի սկզբներին շրջանի արեւմտյան հատվածում հետազոտական աշխատանքներ է սկսում Սելիք-Փարսադանյանը: ...Եղած հնարավորությունները տրամադրում է Ղափանից 33 կմ արեւմուտք ընկած Փուխրուտ եւ Կաթնառատ (Փիրմագրա) գյուղերի շրջակայքի հետախուզությանը, որտեղ պղնձի եւ արծճի առկայությունն ամենահավանականն էր»:

### Փուխրուտ

Չորքի հիմնվուրց գյուղերից մեկը, Փուխրուտ գետի աջ ափին, Լեռնաձորից 7 կմ հր-արլ: 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի՝ Չորքում հիշատակված Բեխորոտ գյուղն է: Սբ Ստեփանոս եկեղեցին այստեղ կանգուն է 18-րդ դարից:

1736թ. այս գյուղով անցել է Աբրահամ կաթողիկոսը, որ գնացել էր Մուղան՝ մասնակցելու Նադիր-շահի թագադրությանը:

Բեխորոտ անվամբ մի այլ գյուղ կար Գողթնում:

Ըստ մի ավանդապատումի՝ Ղավիթ-Բեկի հերոսամարտերին ամենաշատ ծիավորն այս գյուղն է տվել /Չորքի գյուղերից/:

Րաֆֆին գիտի Փուխրուտի լեռներ: Արժվանիկի քահանա Մեսրոպը Րաֆֆուն հյուրասիրելիս գովել է Փուխրուտի մոթալ-պանիրը եւ եղվարդի լավաշը:

Հանդամասերից հնավայրեր են Վիժին, Մղելա քարը, Հունայլանը:

Ըստ մի կատակ-գրույցի՝ անցյալում, իբր, հյուրի համար գիշերով անասուն են մորթել, խնջույք անցկացրել, բայց լուսադեմին պարզվել է, որ մորթել են... քուռակ: Հիմա, երբ փուխրուտեցուն հիշեցնում են քուռակ մորթելը, նա հիշեցնողին նախատում է, ի վերջո երկուստեք ծիծաղում են:

Այս գյուղացի Բարխուդար պապն իր կենդանության օրոք կառուցել է իր թաղման շքեղ դամբարանը:

### Քիրս

Գյուղ Գեղի գետի ձախակողմյան վտակ Կահուրդի վերնագավառում, Քյուրուտ գյուղից 3 կմ հս-արմ: Բարբառում՝ Քիրս: Նույնացվում է 13-րդ դարում Ստ.Օրբելյանի հիշատակած Կիցք գյուղի հետ, որը ետին շրջանում կոչվել

է նաեւ Գեց: 1990թ. առաջարկվել է վերանվանել Կեցք:

### Քյուրուտ

Կապանից 42 կմ հեռավորության վրա, Գեղի գետի ձախ վտակ Կահուրդի (Քիրս-Քյուրուտի գետ) ձորում: Ալիշանն այս գյուղը վերանվանում է Կահուրա՝ հավանաբար նկատի ունենալով 13-րդ դարից հիշատակված՝ Չորքի Կահուրայ գյուղը:

Ըստ մի ավանդագրույցի՝ այս գյուղանունը կապվում է 4-րդ դարում հիշատակված Գորուք իշխանի անվան հետ:

1990թ. առաջարկվել է Գորուք նորանունը:

### Օխտար

Գյուղ Էջանանի հովտում, Աճանան գետի ձախ ափին, գրեթե Խլաթաղի դիմաց: Բարբառում՝ Օխտառու, հազվադեպ՝ Ըխտարանց: Ալիշանը համարել է, որ Օխտարը 13-րդ դարից Բաղբուն հիշատակված Հողար գյուղն է, քարտեզում էլ գրել է Հողար (Ոխտար) կրկնանուն ձևով: Աշխարհագրի թվարկման մեջ ունի Օխթար. Հողար կրկնանունը:

Այժմ հայաբնակ է: 1990թ. առաջարկվել է Ուխտավայր նորանունը:



## Կապանի Գեղվաձորը

### ՊԱՏՄԱՆՆԵՆԱՐՅԱԳՐԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Չորք կամ Կապան գավառի Գեղվաձոր ֆիզիկաաշխարհագրական շրջանը՝ 310 քառ. կմ տարածքով, գլոբուսի վրա

փնտրելի է արեւելյան երկայնության 46 աստիճան եւ հյուսիսային լայնության 39 աստիճան կորդիկնատներով, գտնվում է Բարգուշատի լեռնաշղթային առնթո՛քի՝ հարավակողմում ու բովանդակում է Ողջի ձախակողմ Գեղի վտակի (երկարությունը՝ 30կմ) ամբողջ ավազանը: Գեղի գետն իր ակունքն առնում է ծ.մ. գրեթե 2860մ բարձրության վրա գտնվող Գազանա լճից, որը երեք լճակների միասնությունն է՝ մոտ 2հա ընդհանուր մակերեսով, 10մ առավելագույն խորությամբ եւ ակներեւ՝ հրաբխային խառնարանի տեղանք է: Գետի ավազանը՝ ընդհուպ մինչեւ ակունքների շրջանը, անտառապատ է, իսկ ձորահովիտներն ու լեռնալանջերի գյուղերը թաղված են պտղատու ծառերի ու թփուտների մեջ:

Գեղի գետը սելավատար է, հորդանում է մայիս-հունիս ամիսներին: Ջրի տարեկան միջին ծախսը 5.23խմ/վրկ է:

Գավառաձորը կարելուր դերակատարում ուներ հատկապես Սյունիքի թագավորության (970-1170թթ.) շրջանում: Պատմիչ Ստ.Օրբելյանը թագավորության 43 ամրոցից առանձնապես հիշատակել է Գեղվա ամրոցը, 48 վանքից՝ Գեղվա վանքը: Տեղանունների քննությանն անդրադարձել են եվրոպացի հայագետներ: Հետեւելով Ն.Ադոնցին, Գր.Ղափանցյանին՝ հետազոտող Ս.Ումառյանը հիմնավորել է որոշ տեղանունների՝ Բակվանք, Շարաքո, Գեղի, Վանեցի, Աջաբաջ եւ այլ անունների դիցապաշտամունքային ծագումը: Նորխուրդական արձանագրության Վելակունի (Velakuni) կրակի պաշտամունքին առնչվող արմատից են ծագում Գեղի, Գեղարքունի, Գիլան, Գեղերեցիկ եւ այլ տեղանուններ:

Ողջի գետի վերին հոսանքի շրջանը՝ Վահանավանքի կավաքներից մինչեւ Աժանական-Կապուտջուղ եւ Գեղի գետի ավազանն ամբողջությամբ, վաղ միջնադարից կոչվել է Չորք գավառ, որը հետագայում զուգահեռվել է փոխարինվել է Կապան գավառանվամբ: Տաթևի վանքի հին՝ տասներորդարյան հարկացուցակում առերկված են թվով 16 հարկատու գյուղեր, հարկաչափի հղումներով. Բաղաբերդ-12, Տիմիր-12, Ծաղթանու-6, Գեղո վանք-20, Բեխերոտ-8, Բեշ-6, Բազախու-8, Աջաբաջ-10, Նորագյուղ-12, Բակվանք-12, Կահուրու-6, Ոչեթի-6, Շարաքո-8, Կաճաճուտ-8, Կիցք-8, Վաժունիք-12: Տաթևին ոչ

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

հարկատու գյուղերի հիշատակումներ կան մատենագրական տարբեր աղբյուրներում: Տաթևյան նոր՝ 17-րդ դարի հարկացուցակում (ըստ այլ վարկածի՝ 1781թ.) Ձորք գավառը երկատված է երկու գավառի. Գեղվաձորի գավառ՝ Կից-3200 շահի պտղի հարկ, Աջբեջ-2900, Ներքին Կարդ-2070, Վերին Կարդ-1200, Չաթու-2600, Գեղի-2650 եւ Բաղաբերդի գավառ՝ Քրդիկանց-3400, Հանդիչեն-3050, Քչանանց-2250, Փիրմազրա-2900, Արջաձոր-2900, Բուխուրուտ-2880:

Ակներեւ է, որ անգամ հին ցուցակից ցայժմ պահպանված են մի շարք գյուղանուններ՝ Գեղո վանք -Գեղի, Բեխորոտ-Բուխուրուտ-Փուխրուտ, Աջաբաջ-Աջիբաջ, Ոչեթի, Կահուրտ... Հիմնավորը գյուղանուններից մի քանիսն այժմ որպես հանդանուններ են հնչում՝ Ծաղթանու, Բագախու, Վաժուհիք, Արջաձոր, Չաթու, Քրդիկանց, Քչանանց...

Ըստ Ալիշանի՝ 1657թ. Գեղվաձորի Գեց՝ նախկին Կիցք գյուղում Պողոս գրիչը ձեռագիր է արտագրել եւ, ըստ հիշատակարանի, ընդօրինակությունն ավարտել Դեղնավոր գյուղում: Կարդ գյուղից էր Տաթևի թովմաս եպիսկոպոսը:

Վաշինգտոնի՝ Կոնգրեսի գրադարանում պահվում է մի ձեռագիր՝ գրված 1683թ., Կից գյուղի Սբ Ստեփանոս եկեղեցում, հեղինակն է Հավիաղ երեցը:

Գեղվաձորի բնակչության զանգվածային տեղահանություն է եղել Դավիթ Բեկի իշխանության անկումից հետո՝ 1730-ական թվականներին: Ձորօրինակ, հայտնի է Աջաբաջի երեւելիների հայտնվելը Վենետիկում, որտեղ կար դափանցիների փողոց: Կովկասյան թաթարների (աղբբեջանցիներ) զանգվածային վերաբնակեցում է եղել հատկապես ռուսատիրության ժամանակներից՝ Թուրքմենչայի դաշնագրությունից (1828թ.) հետո: Եկվորները տեղանունները հարմարեցրել են իրենց հնչումին (Կիցք-Քիրս, Կահուրտ-Քյուրուտ, Ոչեթի-Հուչուքի եւ այլն) կամ գործածել իրենց հոգեհարազատ՝ բերված տեղանուններ (Չայքենդ, Փայահան, Սանջարաղ, Մոլլալու, Ղովշուտ եւ այլն): Ցարական իշխանությունների հետեւողականության շնորհիվ չեն վնասել եկեղեցական շինությունները, որ կան գավառաձորի բոլոր գյուղերում եւ այսօր կիսական-

գուն կան ավերակ են: Ի դեպ, Կարդի եկեղեցին կառուցված է աղբյուրի վրա:

Բայց ինչ թուրքական է՝ ավարառություն, ավազակություն ու կողոպուտ, 19-րդ դարի երկրորդ կեսից հայտնի դարձավ Կապանա տանը: «Գեղուաձորը՝ պատմական Բաղաց իշխաններու այդ ոստանը առաջին օրէն իսկ իր վրայ հրաւիրած էր Ատրբեջանի եւ Նախիջեւանի ուշադրութիւնը եւ օրօր անտանելի կդարձնէր Ձանգեզուրի հայութեան դրութիւնը» (Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 37):

1918թ. Գեղվաձորի Սանջարաղի ձորում թուրքերը շուրջկալեցին ու ոչնչացրին Նախիջեւանից ներգաղթող նոտ 2 հազար հայերի, տիրացան նրանց ունեցվածքին: Գարեգին Տոփեհը վրեժխնդիր եղավ: Մեկ տարի անց նա մաքրեց Գեղվաձորը թուրքերից, հաղթանակը տոնեց 1919թ. դեկտեմբերի 10-ին: Այդ ժամանակ էր, որ Գորիսում լույս տեսնող «Այունիք» թերթը գրել էր. «Գեղուաձորը Ձանգեզուրի համար այն է, ինչ որ Կարտագինէն Հռոմի համար»: 1988 թվականի փետրվարից սկսված ազգային-ազատագրական շարժման տարիներին Գեղվաձորը մաքրվեց կովկասյան թաթարներից:



## Քաջարան քաղաքի շրջագծի մեջ մտած բնակավայրերը

### Աթելըզ

Նախկինում գյուղ Քաջարանի հյուսիսակողմում, քաղաքում ձախից Ողջի գետին միացող վտակի ձորն էր վեր: Բարբառում՝ Աթելըզ: Ալիշանի Սիսականի ներդիրի քարտեզի վրա նշված

է արեւմտահայերենին հարմարեցված տառադարձությամբ՝ Աթելըզի: Իսկ էջ 102-ում կրկնաճանձ է՝ Աթելըզ եւ կասկածաբար՝ Աթելըզ: Մխիթարյան Հայրիկն, անշուշտ, համարել է, որ այս գյուղանունը նույնական պետք է լինի Աթելըզ գյուղանվան հետ, որ հիշատակած ունի Ստ.Օրբելյանը Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառում:

Ափկես կամ Ափկեզ գյուղ է եղել հարեւան Մագրու գավառակում:

Ս.Խանգանդյանը Աթելըզ գյուղը նույնացնում է Աջիբեջ գյուղի հետ: Սա, հարկավ, թյուրիմացություն է:

Քաջարանին է միավորվել 1959 թվականին:

Քանի որ բարբառում գյուղանունը Աթելըզ է հնչում, հստակ երեւում է նրա աղբյուրը Աթելըզ տեղանվանը: Ա-ն զ է դարձել ղ-ի ազդեցությամբ: Առավել հինը Աթելըզ պետք է կարծել, որը Աթելըջի հայցական հոլովածն է (հմմտ. Շեկք-Շեկս, Վաժնատուր-Վաժնիս, Տամալեք-Տամալեկս, Մոգք-Մոգս-Մողես եւն):

Ինչպե՞ս է Քաշունիքի Աթելըջը հայտնվել բարձրադիր գոտում: Նախ, կարելի է ենթադրել գյուղի վերաբնակությունը՝ լրիվ կամ մասնակի. նման տեղաշարժեր միշտ եղել են: Կարելի է նաեւ ենթադրել, որ Ձորքում էլ համանուն գյուղ է եղել, ինչպես ունենք, զորօրինակ, երկու Վաժնուհիքներ, երկու Բահարլուններ, երկու Ձեյվաներ եւ այլք: Բայց Կապանի տարեցները գիտեն, որ ցածրադիր գոտում եղած գյուղերը բարձրադիրում արոտատեղեր են ունեցել՝ ուրթեր: Երկար օգտագործումից ուրթերը կոչվել են գյուղերի անուններով. մի երեւույթ, որ առկա է նաեւ մեր օրերում: Արդ, կարելի է համարել, որ Աթելըզ այլահունչ գյուղը Քաշունիքի Աթելըջի յայլային կալվածքն է:

Թուրքերենից Աթելըզ բառը թարգմանվում է ձի եւ աղջիկ: Ձորքում մի հին զրույց կա ձիավոր աղջկա մասին, սակայն դա միայն հայ բնակչության շրջանում էր հայտնի եւ նման է այն պատումին, թե ինչպես Աղավնու հյուսիսակողմ բարձունքում առեւանգմանը դիմադրած Շահանդուխտը ձիուց վար է թռել ու նետվել անդունդը:

Աթելըզի մերձակայքում հանքերը շահագործվել են հնագույն ժամանակներից: Այստեղ 1852 թվականին պղնձի նոր հանքեր է հայտնաբերել ազուլեցի

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

Մովսես-բեկը:

Աթլըզում կա անուշահամ եւ հորդաբուխ մի աղբյուր, որ կարծես ազուգաներով բերված է մոտակա ձորակից:

Լեռնածորից Սարայի տատի բոյաթի սգերգը Աթլըզում 1945 թվականին.

*Կրքորովիք քուր, ա թօրթէր,*

*Մէծաւ-կիճաւ կյօղ թօրթէր,*

*Մէռնօղը նի ծըզանի,*

*Լեց նօղը կյե սըզանի...*

### Արալը-Օխչի, նախկինում՝ Արշաղուռ, բարբառում՝ Արալը

Նախկինում՝ գյուղ Քաջարան քաղաքի աջափնյակի տեղում: Թարգմանաբար, ինչպես թե, անջատյալ կամ արանք է նշանակում: Բայց Արա արմատն ավելի հին է կարծվում, եւ տեղանունն ավանդաբար հղվում է հեթանոս ժամանակի արալեզներին, որոնք, իբր, վերքեր լիզելով կենդանացնում էին մեռածներին (հմմտ. Արա Գեղեցիկի առասպելի հետ: Շամիրամը կանչեց Արալեզներին, որ լիզեն Արայի վերքը, եւ քաջ Արան ողջիանա: Այս պատումից էլ մեր եռանուն տեղանուններն են՝ Արալեզ-Արալը, Քաջ Արա-Քաջարան, ողջիանա-Ողջի: Սա, անշուշտ, ժողովրդական ստուգաբանություն է):

Քաղաքի այս թաղամասի համար «Գարուն» անագրում պրոֆ. Թ.Յակոբյանը գործածել է Գետամեջ անունը:

Արջաղուռ գյուղը 1897թ. ուներ 148 բնակիչ: 20-ական թվականների սկզբին արդեն միացած էր Օխչի գյուղի հետ:

Քաջարան-Մեղրի բարեշեն ավտոճանապարհը սկիզբ է առնում խիտ բնակեցված այս թաղամասից:

### Դավիթբեկ

Ավան Բաղաբերդի արեւմտակողմ ստորոտին, զրեթե պարսպին առնթեր: Լինելով 15 կմ Քաջարանից արեւելք, Ողջի գետի երկու ափին, կոմունիստների ժամանակից համարվում է Քաջարան քաղաքի թաղամաս: Դիմացին՝ Արեւիքի լեռնաշղթայի հյուսիսակողմ ստորոտին, գտնվում էր Ղուշչուլու գյուղը:

Ավանում, գետի ափին, հորդաբուխ աղբյուր կա, որը համարվում է մոտակա բարձունքին թառած Բաղաբերդի գետնածածկ եղած ջրմուղի շարունակությունը:

1931 թ. գարնանը՝ երկրաշարժի ժամանակ, բերդի տարածքի մի հատվածը առ ժամանակ թացացել էր:

Այս ավանից մեկ կիլոմետր արեւելք, Ողջի գետի աջ ափին է գտնվել Վերին Ջրախոր գյուղը, որի ավերակներում ցույց են տալիս նույնպես ավերակ Բաղաբերդի (Բաղակի քար) բերդը՝ տեղորոշված պրոֆ. Թ.Յակոբյանի կողմից:

Ֆրանսիացիների կառուցած հեկը Ներքին Ջրախորում է:

Դավիթբեկ ավանի մոտ, ըստ ավանդազրույցի, Բաղաբերդի դիմացի՝ Ողջի գետով բաժանված բարձրաբերձ ժայռից մինչեւ բերդը շղթայաճոպան էր անցկացված, իսկ գետեզրին, իբր, մետաղե դուռ է եղել:

Բաղաբերդի դիմացի բարձրագույն ժայռատանը, որ ակներեւաբար հինավուրց Կապանի արեւմտյան սահմանն էր, ունի հին-հին կառույցների հետքեր: Այստեղ պետք է փնտրել հնագույն անվանի բերդերից մեկը, որ, հարկավ, Կապանին էր:

Այս ավանի մոտից սկիզբ է առնում Բաղաբերդ-Տաթև ճանապարհը, որի աղուրը նշմարվում է մեր ժամանակներում: Տարեցներն այն անվանում էին Էլ յուլի, այսինքն՝ Բանուկ ճանապարհ:

1990թ. առաջարկվել է ավանը վերանվանել Անդոկավան: Անդոկը Սյունի մեծագոր իշխան, Վրաց, այնուհետեւ Յայոց մարզական Վասակ Սյունու պապն էր:

Բաղաբերդի տակ նա պարտության է մատնել պարսից մեծաթիվ բանակին:

Դավիթբեկ տեղանունից հրաժարվելը բացատրվում է կրկնանունությունը մերժելու սկզբունքով: Բնական է, որ ավանը Բաղաբերդ պետք է կոչվի, սակայն դրան չզնացին, որովհետեւ պատմական փառաշուք այս անունը Կապանի քաղաքապետարանը դրել է Կապանի թաղամասերից մեկի վրա:

Այս վայրում 1170 թվականին սելջուկներն ավերեցին Բաղքի համբավանուն մատենադարանը՝ մեկ բլուր ձեռագրեր, ինչպես հաղորդում է պատմիչը:

Գայթակղեցուցիչ երազանք է, որ այստեղ Սյունիքի մարզպետարանը հետագայում կենտրոնացնի գրավաճառման գործը եւ սահմանի ամենամյա Գրքի տոն:

Մի քանի տարի շարունակ Լեռնա-

ծորի դպրոցի աշակերտներն այստեղ՝ բերդի ավերակների մեջ են հանդիսավոր կարգով ստացել իրենց կրթության վկայականներն ու գովասանագրերը:

### Ձեյվա

Ավան Գեղի գետի գետաբերանից կես կիլոմետր վեր, Ղուվշուտ գյուղից վար, գետի ձախ ափին: Բաֆֆին, որ շրջել է այս վայրում 1881թ., այս անվամբ բերդաքաղաք է դնում Ողջի եւ Գեղի գետերի միախառնման տեղում: Գեղի գետի այս հատվածում պահպանվել է հին քարե կամրջի մի մասը, անընթեռնելի արձանագրությամբ:

Ըստ Բաֆֆու, Ձեյվայի բնակչության մի մասը 1730-ական թվականներին տեղափոխվել է Քաշունիք եւ այնտեղ հիմնել նույնանուն գյուղ: Գաղթողները գյուղ են հիմնել նաեւ Սակուկի խանությունում:

Ձեյվա բառը հին պարսկերենով ամրոց կամ բերդ է նշանակում: Լեւոն պապն այն բացատրում էր գետերի կցվանքատեղ ու նաեւ շեշտում էր գեհ-եզր մեկ այլ իմաստը:

Յետաքրքիր է այս տեղանվանման նմանությունը օլիմպիական Ձեւսի անվան հետ: Երբեմն Ողջի գետը կոչվել է Ձեյվայի գետ, ստորին հոսանքում՝ նաեւ Չավնդուրի գետ, Ուզուրչայ, Կապանգետ: Բայց այս գետին պատշաճում է Բաղաջուր անվանումը, որ նրա մի վտակի անունն է:

Ձեյվա անվամբ գյուղ է եղել նաեւ Ձեւու բերդի հարեւանությամբ:

Ձեյվայից արեւմուտք Լեռնածորի Փագալար հանդամասն է: Այստեղ նշմարելի է հին եկեղեցու ավերակը: Այդտեղ, հավանաբար, Բակավանք գյուղն էր:

Ձեյվայից հյուսիս՝ թերակառույց ջրամբարի տարածքում, Բահարլու գյուղն էր, որի հնագույն անունը, մի ենթադրությամբ, Շաղթանու էր:

Սոււմգայիթի եղեռնագործության օրերին այս ավանի թուրքերը դիրքավորվել են Ձեւու կապում՝ սպասելով «հայերի հարձակմանը»: Յետո «խրտնել են» ու փախել ձախակողմ արեգունին: Յայ իշխանավորները գնացել, հորդորել ու ետ են վերադարձրել:

Ավանի համար 1990թ. առաջարկվել է նոր անուն՝ Բարիկավան («Ղափան» թերթ, 17 մարտի 1990 թ.): Թեպետ այս

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

անվամբ գյուղ կա Օլթիի գավառում, սակայն, ըստ իս, մեզանում այս անհեթեթ անվանումն է: Ըստ երեւոյթին հեղինակայինը եղել է Բաբիկավան՝ Բաբկեն Սյունու անունից, սակայն մեքենագրվել կամ տպագրվել է վրիպակով, երկրորդ բ-ի փոխարեն՝ ր:

### Հանդ Վերին

Քաջարան քաղաքի արեւելակողմում՝ գրեթե նրան առընթեր, Ողջի գետի ձախ ափին: Այժմ՝ կիսաբնակեցված: Բարբառում՝ Երա Հանդ, օտարահունչ՝ Փանուսլու: Կոչվել է նաեւ Հանդ Վերին Մեծ: Ալիշանի Սիսականի ներդիր գունավոր քարտեզի վրա նշված է Բանսլու, էջ 291-ում Հանդիչէն է, իսկ 1886 թվականի Ջանգեզուրի գավառի աշխարհագրի ցուցակում նշված է, որ Բանսլուն ունի 33 տուն, 365 բնակիչ:

Ս.Ունառյանն այս գյուղանունը շատ հին է համարում եւ, դնելով նախաքրիստոս ժամանակներից, այն հանում է եգիպտական փյունիկ թռչունի՝ բանուի անունից, որը մարմնավորում էր Արեւաստծուն, պաշտվում էր նաեւ հայերի կողմից եւ քրիստոնեւթյան ժամանակ դարձել էր Քրիստոսի խորհրդանիշը:

1870-ական թվականներին Մեծ Հանդի Սբ Աստվածածին եկեղեցուն հովվել է Պողոս քահանա Մելիք-Ստեփանյանցը, որի գրանցումները պահպանվել են նաեւ Քրդիկանցի, Փուխրուտի եկեղեցիների Չափաբերականք մատյաններում: Ռուլանդ Սմբատագունը պնդում էր, որ այս քահանան շառավիղված է Աճանանի Մելիք-Ստեփանյաններից:

Հանդում հին տեղ նոր եկեղեցի է կառուցվել 1910-ական թվականներին (վարպետներ Եփրեմ Մազրեցի, Հանդից՝ Աբգարեց Կուքի, Կյուքուց Նազար): Այս Նազարը (բանաստեղծ Նազարի չափածոներն էլ են հայտնի) բանաստեղծ Սարգսի որդին էր (Սարգսի մի երգը «Կապան» թերթի 1996 թ. հունվարի 31-ի համարում):

1913թ. Վերին Հանդի ծխական դպրոցում ուսուցչութուն է արել Ավետիք Իսահակյանի եղբորորդի Իսահակ Իսահակյանը:

Գյուղից հյուսիս, ձորով վեր բարձրանալիս, Շլորուտ հնավայրն է: Պրոֆ. Թ.Հակոբյանը գտնում է , որ սա այն Շլորուտն է, որ ավերեցին սելջուկները

12-րդ դարում: Գանձախույզներն այս կողմերում չարտոնված պեղումներ են արել: Մի քանի տարի առաջ մի գանգ է հայտնաբերվել եւ, բարեբախտաբար, այն հայտնվել է սիրող-հնագետ Աշոտ Հայրումյանի հավաքածուում:

Ստ.Լիսիցյանը 1932թ. եղել է Վերին Հանդում եւ նկարագրել թաղումների առնչվող մի քանի հավատալիքներ: Այս գյուղի մասին խոսք ունի Ս.Խանգադյանը («Հայրենասպառում», 1-ին հատոր):

Պատմում են, որ այս գյուղացի Փանի պապը զարմացել էր ոչ այնքան ինքնաթիռի գյուտի վրա, որքան այն բանի վրա, թե «ինչպես են խանութ բերված այդքան շատ մակարոնը մեկ-մեկ ծակել, սնամեջ արել»:

### Հանքավան

Նախկինում ավան Քաջարանից հրարմ, Գանձասար բաց հանքի ներկայիս արեւելակողմ հորիզոններից մեկի տեղում: Արմ կողմից այս ավանին հարեւանել է Փիրղավդան կամ Փիրղոսդան սրբավայրը, համանուն գյուղում: Բազմամիստի ձեւ ունեցող հնագույն մատուռը վերացվել է հանքի ընդլայնման պատճառով:

Սրբատեղին հավատացյալների կողմից շատ զորավոր է համարվել: Չբեր կանայք այստեղ գալով եւ չոքեչոք աղոթք անելով, իբր, հետագայում զավակներ են ունեցել: Գավառի ցածրադիր գոտու գյուղերում հավատում էին, թե մարդուն խայթելուց հետո օձն, իբր, Փիրղավդանի օջախն է գնում...:

Փիրղավդանը փիր եւ դառու է. պարսից լեզվում փիր-ը նշանակում է ծեր սուրբ: Տեղանունը գործածված է նաեւ սուրբ Դավիթ ձեւով:

Ալիշանն ունի Փիրտովուտան, քարտեզի վրա տառախալով է՝ Չիրտաուտան:

«Քաջարանշին» տրեստը նախապես կոչվում էր «Փիրղավդանշին»:

Այս վայրերում կարտոֆիլի կարմրավուն տեսակը շատ բերքատու է:

### Շիվիկանց

Նախկինում գյուղ Քաջարանց գյուղի հարեւանութամբ, արլ կողմում, Ողջի գետի ձախ ափին: Նաեւ՝ Շաբադին, Շաբադին: Թուրքաբնակ էր:

Ս.Ունառյանը գտնում է, որ այս տե-

ղանունը նույն ծագումն ունի Շվանի-ծորի հետ: Այն համարելով դիցական՝ հիմքում դնում է Վանի թագավորության արեւի աստծու՝ Շիվիկի անունը:

Մինչեւ խորհրդային կարգերը գյուղը հայտնի էր հայերի դեմ նյութած դավադրություններով: 1918-ին, սատարվելով Նախիջեւանից ներթափանցած լրտեսներով, նախապատրաստել են Քջանանց գյուղի բնակչության... մորթը գիշերով: Քաջարանցիները բացահայտել են դավադրությունը, եւ հայդուկ Գոհիչը գնդակահարել է Շիվիկանցի խառնակիչ մոլլա Ջեմիին: Մեկ տարի հետո, հուսալով հարեւան թուրքերի օգնությունը, շուրջկալել են Քաջարանցը: Բնակչության անգեւ մասը պատսպարվել է գյուղի Սբ Հակովբ եկեղեցուն: Սակայն Քրդիկանցի եւ այլ հարեւան գյուղերի զինյալների օգնութամբ քաջարանցիները ետգրոհ են ձեռնարկել եւ զինված թուրքերին կոտորել գետի աջափնյա բարձունքում, որը Կոտորածի քար անունն է կրում:

Նույն տարում մեծ կռիվ է եղել Քյոչնավ հանդամասից մինչեւ Ղայմաստ, որի պատճառը քաջարանցի Բախշու սպանությունն էր բաց դաշտում: Այդ ժամանակ թուրքերին քշել են մինչեւ Գեղվածոր, որտեղ ցարական գնդապետ, 1-ին հանրապետության լիազոր ներկայացուցիչ Արսեն Շահմազյանը 50 մարտիկներով հաղթանակ տարավ թուրքական զորամասերի դեմ: Իսկ Կապճուղի կռիվներում հռչակ ձեռք բերեց Ղազար Քոչարյանը (ՔաչալՂազար): 1918թ. դեկտեմբերին Նժդեհը նշանակվել էր Նախիջեւանի գավառապետ եւ զորահրամանատար ու այս քաջ Ղազարին վերցրել էր իրեն օգնական:

### Քաջարանց

Գյուղ Քաջարան քաղաքից արմ, Կապճուղ (Կապուտջուղ) եւ Քաջարանց գետերի միախառնման ձախակողմում: Հիշատակված է նաեւ Կեճանան, Գեջան, Քջանանց, Քոչարան, Կաղժարան ձեւերով: Բարբառում՝ Քջանանց: Գեջարան գյուղ է եղել Գողթնում, իսկ Կուրավանքի մոտ եղել է Քաջարեթ բնակավայր: Քաջարան տեղանունը գործածական էր նաեւ Կիլիկիայում:

Ըստ իս, գյուղի հինավուրց անունը Կաճաճուտ է, որ ունի Ստ.Օրբեյանը եւ Ալիշանը գիտի Կաճաճա տարբերակը:

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

Միջնադարյան Սյունիքում հազվադեպ են անց վերջածանցով տեղանունները: Դրանք ի հայտ են եկել ետին շրջանում, հատկապես տոհմատեղերի նշման առումով: Գավառս ունի Խնկանց, Կեմանց, Ըրկեմանց (Արկանի ձո՞ր), Ըռստանանց, Շրվեմանց, Քրդիկանց, Շխորանց, Թիլիկանց, Շբանանց, Չունանց, Գյըղըրջանց, Դրբանց եւ այլն:

Կաճաճուտից Քչանանց է ձեւվել ձայնի տնտեսման օրենքով մեկ ճ-ի սղունով:

Քաջարանցն ունի միանավ թաղակապ եկեղեցի՝ սբ Չակովբ, որի արեւմտյան պատը մասնակի փլված է: Գյուղի մերձակայքում Նապատ հնավայրն է: Այս տեղանունն Ումառյանը հղում է խուռիական ջրի աստծուն:

Մի ավանդագրույցի համաձայն, Յաղուղարա հանդանունը ծագում է Ձեթի ձոր՝ այդ վայրում նավթի աղբյուր եղած լինելու նշանակությունից:

Ալդարա հանդանվան հիմքում հայոց պաշտամունքային ալ կան ալք բառն է, որ քաջք կան առասպելական ոգի է նշանակում:

Քաջարանցի մերձակա մարգագետինները նաեւ կոչվել են Քառասունակ հովիտ: Գյուղի մերձակայքում նարգանային հանքային ջրերի աղբյուրներ կան: Այստեղ է Թթուջուր հանգստավայրը:

Այս գյուղի տոհմերից մեկը Գուսանանց տունն է (Աշղղլար): Կույր աշուղ Դավիթը երգում էր իր ուսուցիչ աշուղ Առաքելի (Ըրկեմանցի՞ց) ստեղծագործությունները: Նրա ստեղծագործություններից քիչ բան է պահպանվել:

### Քաջարան

Մարգային ենթակայության քաղաք Կապանից 32 կմ արեւմուտք, Ողջի գետի երկու ափերին: Անունն առել է Քաջարանց գյուղի անունից: 1947-1958թթ. եղել է քաղաքատիպ ավան, այնուհետեւ՝ քաղաք: Մինչեւ 1951թ. հուլիսի 4-ը կոչվել է Քաջարանց: Քաջարանը բնակավայր է եղել անհիշելի ժամանակներից: 1823թ. Կասպիական մարզի կառավարիչ գեներալ Վ.Սադաթովը գեներալ Երմոլովին գրել է, որ, ըստ տեղացիներից ստացած տեղեկությունների, Ողջի գյուղի մոտ կան պղնձի ու երկաթի հարուստ պաշարներ: 1835թ. պղնձի ելքերն այստեղ ուսումնասիրել

է գերմանացի գիտնական Չերման Վիելմ Աբիխը:

...Փիրդուղանի գործարանն աշխատել է 1846 թվականից: Չանքերը շահագործել են Ռոզով եղբայրները, Կունդուրովը (սա նաեւ կոչվում էր ուստա Ալավերդի, ազգությամբ հույն էր), կային այլ գործատերեր:

Մոլիբդենային հանքանյութի հայտնաբերումը մեծ հեռանկար բացեց Քաջարանի համար: Հետախուզական աշխատանքները սկսեցին 1930-ական թվականներին: 1933թ. Մոսկվայից հատուկ մասնագիտական հանձնաժողով այցելեց Քաջարան: Ետպատերազմյան տարիներին մասնագետների կազմը աստիճանաբար համալրվեց տեղացիներով: Խորհրդային Միությունում հռչակ վայելող պղնձամոլիբդենային կոմբինատը երկար տարիներ ղեկավարեց Քաջարանց գյուղացու զավակ Ֆրունզե Չմայակի Պետրոսյանը՝ մաքրափայլ ու ազնվականատես, գիտնական մի այր:

Քաջարանը ՀՀ գունավոր մետաղագործության ուստանն է: Հզոր գործարանը հանքաքարը հանում է գետներես բաց եղանակով: Ստացված խտանյութը չի ձուլվում, վաճառվում է արտերկրի:

### Օխչի, Ողջի

Նախկինում գյուղ Քաջարան քաղաքի շրջագծում, Ողջի գետի ձախ ափին: Բարբառում՝ Օխճի, Օխճանց: 1886թ. աշխարհագրում Ալիշանն Օխչիում նշում է միայն թուրքեր՝ 1122 հոգի: Քարտեզի վրա ունի Ողջի: Բառը թուրքերենից թարգմանվում է նետածիգ կամ նետ պատրաստող (օխ-նետ): Հետաքրքիր է, որ փորվածքներում ժամանակ առ ժամանակ գտնվում են նետի մետաղածայրեր:

Կապանա հեքիաթասացները Օխչի անունը մերթ ստուգաբանում են որպես օխտը դօշի (յոթն իգիթ), մերթ որպես օխայով աշխատողների բնակավայր. օխա է կոչվում փայտի այն գերանը, որը հորիզոնական ուղղությամբ միացնում է գորգագործական տորթ գործիքի աջ ու ձախ մասերը:

...1846 թվականին, փաստաթղթեր կեղծելով, թուրք Չափենները (Չափեկյաննե՞ր) տեր ճանաչվեցին Ողջի գյուղին:

Խորհրդայնացումից առաջ օխչեցի

Հաջի-բեկին, որ ուսանել էր Լայպցիգում եւ ազգամիջյան երկպառակությունների կազմակերպիչ էր, Տանձուն լեռնում գնդակահարել էր հայ ֆիդայի Մուրադ Սեբաստացին, դիակը կապել ձիուն եւ ուղեկցել մինչեւ Օխչի՝ տիրոջ դուռը, հավաքել գյուղացիներին ու բացատրել իր վարմունքի պատճառը: Թուրքերը մի առ ժամանակ խաղաղվել են:

20-ական թվականներին Օխչիում վերաբնակվել են զգալի թվով ընտանիքներ հարեւան Վերին Հանդից, Քրդիկանցից եւ այլ գյուղերից:

Այս գյուղի անունն ունի արագահոս Ողջի գետը:

1897 թվականից Օխչի գյուղի մոտակայքում հիշված է Գաջատկին անվանք գյուղ, այժմ՝ տեղն անորոշ: Կարծում են, այդ գյուղը գտնվել է Լեռնածորից արեւելք, նախկին Բողաջըղ գյուղի դիմաց. վայրը Լեռնածորի հանդամաս է եւ բարբառով հնչում է Հաջատկյուն ծօր: Ակներեւաբար գյուղատեղի է: Շրջակայքում կան կրաքարի ու մարմարի հանքաշերտեր: Տարեցները պատմում են, որ մոտ անցյալում այդ կողմերում կրաքարի այրումից կիր էին ստանում: Ողջիում, Եղեռնալանցից (Ղան յալ) արեւելք, Արխաշան ձորն է, որտեղ կարելի է ծանրավուն ապար հավաքել եւ արժիճ ձուլել, ինչպես տնայնագործական եղանակով անում էին մեր նախնի արհեստավորները:

Ողջիին անդրադարձել է նաեւ մեծանուն Սերո Խանգաղյանը: Կապուտջուղ լեռը, որի ստորոտին է Ողջին, առավել է հրապուրել մշակույթի երախտավորին: Նրա «Հայրենապատում» շարքի 1-ին հատորում կարդում ենք. «Կապուտջուղ լեռան վրա սառույցներ կան եւ Կռվակոչի առասպելական ժայռը»: «Հիշում են 1897թ. մի տեղեկատու՝ Աթկզ, Շաբադին, Ողջի, Քաջարանց, Փիրդովուդան գեղջք, չիք ուսումնարան»(էջ 44): «Ողջու կիրճով ոչ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ոչ էլ Շապուհ արքայինը: Նրանք հասել են Ողջու կիրճի բերանին, բայց մնացել են ներքեւում՝ Բաղաբերդի տակ»: «Այս նեղ ձորում 1868թ. հինգ գյուղ է եղել ու միասին ունեցել են հինգ արոր, 61 այծ ու ոչ մի ապակե լամպ»:

Ձեռագիր մասյան. Կադանա տուն



## Կապան քաղաքի շրջագծի մեջ մտած բնակավայրերը

### Աշտարավան

Ավան Կավարտիջուր գետակի ձախ մասում, Կապան-Կավարտ ավտոճանապարհին առընթեր: Որպես բնակավայր պաշտոնապես չի ճանաչվել: Բարբառում՝ Աշտարավան: Ավանն այսպես է կոչվել սեւաքարցի Աշոտ Գրիգորյանի անվամբ, որը 1957 թվականին առաջինն է տուն կառուցել ամայի վայրում:

Հինավուրց գյուղատեղի է: 871 թվականին գրված մի կալվածագիր-սիգելի նկարագրության համաձայն, համընկնում է Բաղքի Կշմատուք գյուղին կամ նրա հանդամասերից մեկին:

### Աջախլու

Չորքի վիճակի մեջ, հինավուրց Կապանի դիմաց, Ողջի գետի ձախ կողմում: Բարբառում՝ Աջախլու: Հս-արմ կողմում բանաստեղծական ներշնչանք բերող բարձրաբերձ ջրվեժն է, որ սնվում է Կատար լեռան աղբյուրներից: Ոմանք այստեղ՝ Կատար լեռան վրա են դնում Աղջկաբերդը:

Բնակավայրի արեւմտյան կողմում հեթանոսական մեհենատեղի կա: Արեւելյան կողմերում Կկոց բերդն է, տեղացիներիս հնչմամբ՝ Ղըլղալա:

Աջախլուն Ստ.Օրբելյանի հիշատակած Աջաղու գյուղն է, որի պարզամիտ քրիստոնյա բնակչությանը խաբելով, սելջուկ հրոսակապետը բաց անել տվեց... Բաղաբերդի դռները եւ ավերեց:

Գյուղում կա կիսականգուն եկեղեցի, նշմարելի են մի այլ եկեղեցու ավերակները:

Վահանավանքը կառուցելուց հետո Վահան Չափկյանն, ի թիվս այլ գյուղերի, այս վանքին է նվիրել նաեւ Աջաղուն: Սակայն այն հիշված է Տաթևի վանքի

հարկացուցակում՝ 8 միավոր հարկի չափով:

Տարեցները պատմել են, որ անցյալում, երբ բնակչությանը վտանգ էր սպառնում, զանգով ազդարարում էին բոլորին ու հավաքում... Աջախլուի բերդը: Այս ավանդությունը կռվան է՝ վերանայելու Կկոց բերդի, Բաղաբերդի, Բաղակուբարի, Աղջկաբերդի, ինչպես նաեւ Շեկք ամրոցի տեղորոշումները: Պատմիչը Աջաղու գյուղի հետ հիշատակում է նաեւ Աջաղվագետ գյուղը: Դա կարող է գրչագրական աղավաղում լինել:

Գյուղանունը, ակներեւաբար, ունի այն աղու արմատները, որոնք բնորոշ են Սյունիքի՝ հեթանոս շրջանից ավանդած տեղանուններին:

### Արփիկ

Ավան Կավարտիջուր գետակի աջ մասում, Աշտարավանից հարավ, գրեթե Կապան քաղաքին առընթեր: Բարբառում՝ Արփիկ:

Տեղանունը 19-րդ դարի խոշոր հանքատեր Մելիք-Ազարյանցի դստեր՝ Արփիկի անունից է:

Հինավուրց գյուղատեղի, արմ կողմում կան հին գերեզմանոցի հետքեր: Շրջակայքում մեկդարյա հնության ավերակ հանքախորշեր կան:

### Բաղաբուրջ

Հինավուրց գյուղ Կապանի հարավակողմում, Վաչագան գետակի աջակողմ բարձունքին: Բարբառում՝ Պղավերձ: Ստեփանոս պատմիչի՝ 13-րդ դարի հարկացուցակում հիշատակված Բեխեւերջի գյուղն է: Մոտակայքում է Սբ Զոհիսիմե անվամբ, սրբատաշ քարերով կառուցված՝ թաղակապ եկեղեցին, որի բեմի մոտ երկու խաչարձան կա:

Ըստ մի ավանդագրույցի, երբ հարկահանները Բաղքում առել են հարկերն ու հասել այս գյուղին եւ, իմանալով, որ գավառի վերջն է, այն հորջորջել են Բաղավերջ: Բաղաբուրջ հնչումն աղավաղումն է Բաղաբուրգի բուրջ բառը բուրգն է, որ արաբախոսի մոտ տառադարձված է: Բուրգ-բուրջ նշանակում է պարիսպ, աշտարակ: Ըստ իս, այստեղ հնագույն բերդաքաղաք է եղել:

Բաղաբուրջի մոտակայքում կան գյուղատեղիներ: Առանձին հե-

տաքերություն ունեն այս գյուղի հանդանունները: Կապանի մեջ է 1958 թվականից:

### Բարաբառում

Կապանից հս-արլ, Ողջի գետի ձախ կողմում: Բարբառում՝ Պռաթունք, գյուղաբնակը՝ պղծաբանից: Ալիշանը կոչում է նաեւ Պռաթավատուն: 1886 թ. գյուղն ունեցել է 41 տուն, 332 բնակիչ: Գյուղում կա կանգուն թաղակապ եկեղեցի, մոտակայքում կան բազմամետաղային հանքավայրեր: Բարաբառումի հանդանուններից մեկն ունի Մեհրի անվանումը, որը հեթանոսական է կարծվում:

Այս գյուղի արեւելակողմում է Կապան քաղաքի մեծատարածք գերեզմանատունը: Գրեթե համանուն է նաև հանգուցյալների տապանաքարերի արձանագրությունները՝ ազգանուն, անուն, հայրանուն եւ ծննդյան ու վախճանման տարեթվերը: Կապանցիները, կարծես, սովորույթ չունեն տապանաքարերի վրա նշել տեղանունը, տոհմական տեղեկություններ ու մի բնորոշ խոսք հանգուցյալի զբաղումի կամ բարի գործի մասին: Այս ամենի բացակայությունն առավել աչք ծակող է շքեղ դամբարանների նկատմամբ:

### Բեխ

Հինավուրց գյուղ եւ մեհենատեղի Կապանից արմ, Ողջի գետի աջ կողմում, Կովսականի վիճակի մեջ: Բարբառում՝ Պեխ: Ստ.Օրբելյանն իր գրքում գետեղել է մի սիգել, ըստ որի փրկչական 871թ. Կովսականի Բեխ գյուղը փոխանակվել է Բաղքի Արուքս գյուղի հետ: Կովսականն, ըստ Ստրաբոնի, Կոսսյան լեռների գավառն է:

Արուքս գյուղի սահմանները նկարագրելիս հայր Ստեփանոսը նշում է Հիմանդրախտը, որ տեղադրելի է Բեխի դիմաց՝ Ողջի գետի ձախ մասում: Մեծ ձորը, որի վերնագավառում Խնկանց եւ Հողար գյուղերն են, բեխցիների հանդանունների մեջ կոչվում է Իմինանցա ծոր. կարծում են, որ սա Հիմանդրախտ գյուղի տեղավայրն է:

Ոմանք համարում են, որ Բեխ ուտիերն բառ է եւ արեւ է նշանակում:

Տեղական մի միամիտ գրույցի համաձայն՝ այն պեխի-բոխի ծառանունից է:

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

Բեյլը մելիքանիստ գյուղ էր, հայտնի է Մելիք-Փարսադանյաններով: Այս տոհմը Տաթևի համանուն տոհմի մի ճյուղն է: Մելիք-Փարսադանյաններից են ճյուղավորվել Առաջաձորի Մելիք-Ստեփանյանները (ըստ ավանդության):

Մելիք-Փարսադանյանների տոհմածառը «Ձանգեզուրի հայերը» գրքում գետեղել է հեղինակ Ստ.Լիսիցյանը:

Բեխուն միանավ, թաղակապ, կանգուն եկեղեցի կա, որի բակում Մելիք-Փարսադանյան Բալի (Բալի 2-րդ) զորավարի տապանաքարն է՝ ՌՄԽ թվականով, որ է 1791թ.: Սա այն Բալին է, որի մասին գրել է Ալիշանը՝ վկայակոչելով Ստեփանոս Շահումյանին:

Խոտանանի մերձակա Յոսո վայրում 1724 թվականին ճակատամարտ է տեղի ունեցել Մխիթար զորապետի և Բարկուշատի խանի միջև. Բալու պարանոցը կիսով չափ կտրված էր: Երբ ուշքի է գալիս, պարանոցն առնում է ուսերին և մացառներում սողալով, մի կերպ հասնում է Յալիձոր և «եղև սքանչացումն յոյժ ամենայն տեսողացն» (Սիսական, էջ 277):

1820-ական թվականներին հայտնի էր Մելիք-Փարսադանյան Մելիք Յովհաննեսը, որին կոչում էին Մելիք Յուսեփ-ղուլի: Ժամանակին Կապանի ազնվական տներում պարսից անուն առնելը շատ տարածված էր: Մելիք տիտղոսը կրում էին ավագ որդիները, մյուսները՝ բեկ:

1840-50-ական թվականներին Մելիք-Փարսադանյանները Բեխ գյուղի տակով անցնող գրաստների և տավարի համար «դաշ փուլի» կոչվող հարկ էին վերցնում:

Յույն կապալառու հանքատերերի դրոճամբ 1872թ. Մելիք-Փարսադանյան Սարգիս-բեկը ընդհարվեց թուրք բեկերի հետ և սպանվեց:

Բեխի մոտակայքում են Փռավարտո վանքը, Յալիձորի բերդը: Ըստ Ումառյանի՝ հալե խեթերենում նշանակել է զոհել կամ մատաղ անել...

Մերձակայքում նշմարելի են Յալիձոր գյուղի (Երա Մադան) ավերակները:

Արտ. Կարապետյանը Յալիձոր տեղանունը բացատրել է որպես հալելու ձոր:

Բեխից էր Ստեփան Մելիք-Փարսադանյանը, գրական կեղծանունը՝ Ստեմել:

Լինելով Ձանգեզուրի ազգային-ա-

զատագրական կռիվների մարտիկ, հետագայում ապրել է ԱՄՆ-ում և հուշեր է տպագրել:

Այս գյուղից էր մաթեմատիկայի համբավանում ուսուցիչ Կանո Մխիթարի Առստանյանը (1927-1990), որին շատ հարմար են գալիս Խորենացու խոսքերը սբ Մեսրոպի մասին. «Նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով...»: Նվաստ երկար տարիներ մաթեմատիկական նամակագրություն է ունեցել Կ.Առստանյանի հետ:

Բեխի դպրոցի ուսուցիչ Գրիգոր Գեղորգյան-Գեուկնը Բալի զորավարի կյանքն ու սիրանքը լուսաբանող չափածո ասք ունի:

### Լենինյան հանքեր

Բանավան Սայաթ լեռան ճյուղավորման վրա, Կավարտիջուր գետակի աջ ափին: Բարբառում՝ Լենգրուպպա, գեղջկաբար՝ Լենյան: Անունն առել է բուլշեիկների նախակարապետ Վլադիմիր Ուլյանովի՝ Լենին մականունից:

Նախկինում կոչել են Ղաթարի հանքեր կամ Ղաթար, փոքր-ինչ հարավ գտնվող Ղաթար բնակավայրի անվամբ: Ոմանք այստեղ են փնտրում Ստեփանոս պատմիչի հիշատակած Կատարո վանքը: Դա ընդունելի չէ: Ղաթարը, ըստ իս, հնամենի Առո գյուղն է: Անվիճելի է, որ մոտակայքում էր Արուսը: Գայթակղեցուցիչ է այս գեղեցիկ Արուս անվամբ կոչել Կապանի այս Լենգրուպպա կոչվող թաղամասը: Արուս գյուղի տեղորոշումը տվել է դոկտոր Գր.Գրիգորյանը:

Այստեղ գտնվող պղնձահանքերը շահագործվել են տակավին նախաքրիստոս ժամանակներում: Ալիշանը գրում է. «Ղաթար գետը հայանուն, որ ոչ յիշի ի ցուցակս և ի պատմութեան, այլ միայն Կատարոյ վանք: ...Ի սահմանս գեղջս, որպես և Կալարտայ յայտնեալ են Պղնձահանք, կալուածք Յունաց ոմանց և հայոց Ազուլեցուց, հաստատեալ անդ հալոցս և քուրայս գտելոյ, որոյ աղազաւ բարգաւաճել առնու գիւղն և սահմանորդքն. որք և միաբանեալ ի սկիզբն 1891 տարւոյ հանգանակեցին գումար մեծ դրամոյ առ ի հաստատել դպրոցս» (էջ 278): Այնուհետև նշում է Ֆրայբուրգում ուսանած մեծահարուստ Նազարբեկյանցի անունը:

Պղնձի պարունակությունը 56 տոկոս էր, տարեկան հանույթը՝ 20 հազար

փութ, մեկ փութն արժեր 11 ռուբլի:

Խորիրոգային իշխանությունը 20-ական թվականներին վերականգնեց առժամանակ ընդհատված հանքարդյունաբերությունը: Դրանում մեծ ներդրում ունեցավ լեռնային ինժեներ, ազգային գործիչ Սմբատ-բեկ Մելիք-Ստեփանյանը, առաջաձորցի, որ 1904թ. ավարտել էր Ֆրայբուրգի լեռնային ակադեմիան:

1990թ. տեղանունների անվանափոխության ցանկում Կապանի իշխանությունների կողմից նոր անուն չի առաջարկվել:

### Կապան

Այունիքի մարզի կենտրոնը 1995-ից, նորընծա մարզի ոստան մայրաքաղաքը: Գտնվում է Ողջի գետի (Կապանի գետ) երկու ափերին, Խոստուկի հյուսիսակողմ ստորոտին:

Կապանում Ողջի գետին աջից միանում է Վաչագան գետակը, ձախից՝ Կավարտիջուրը:

Այլ անվանումները՝ Ղափան, Խաբան, Խափանու երկիր, Կաբան, Մաե՛լ Մադան, Միս-Մադան: Բարբառում՝ Ղափան, քաղաք, բազար, հեզմաբար՝ մադան: Վերջինս արաբերեն հանք, հանքաշխարհ է նշանակում:

Ուշ միջնադարից Ղափան անունը տրվում էր ավելի ընդարձակ տարածքի, գրեթե մինչև Վայոց ձորի սահմանները: Յայտնի է, օրինակ, Փիրգադե Ղափանցին, որ ծագումով Միսիանի Գետաթաղից էր: 1586թ. ճամփորդել է Եվրոպա և իր ճամփորդությունը նկարագրել տեղական բարբառով:

1508թ. մի կալվածագրում նշված է «Ղափանի... նահիա» ու նաե՛լ՝ Ղափանաթ: Օրիի ժամանակ նաեւ կոչվում էր Մեծ Ղափան:

1722թ. Պետրոս դի Գիլանենցը գրել է. «Խաբար արեկ թէ ղզլբաշն գնացել այ Ղափանստան այ մտել»:

Ըստ Մատենադարանի հմ. 5794 ձեռագրի՝ թիֆլիսեցի Ղուզանենց Փարսադան բեկի որդի Թաղիի հիշատակարանի. «Եւ ի վախճանի անկան ի մարտին. որ իմ եղբոր գերեզմանն այժմ ի Խոտի է. ի Ղափանումն», - Թաղիի եղբայրը՝ Աբդուսսեհը, Ղավիթ-Բեկի զորավարներից էր:

18-րդ դարում հայտնի էր քնարերգու Պետրոս վարդապետ Ղափանցին:

15-րդ դարի սկզբներից Վենետիկում

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

Ղափանցիների փողոց կար:

Հիշատակարաններից. «Ձղանջաղան 1457թ. 30 000 ջորաբեռն մալ ի Ղափանն տարան», «1467-ին Հասան Ալին, որ ի Մակու էր ի գնդան, ելեալ գնաց ի Ղափան եւ կոտորեց»:

Կապան անունը աշխարհագրական անուն է: Ակներեւ է, որ սա նախապես եղել է հասարակ անուն եւ նշել է այն կապ-լեռնանցքը, որտեղ այժմ՝ բնության գաղտնիքները բանալու տեսքով մարդուն հանձնող արջի բրոնզածույլ քանդակն է (հեղ.՝ Մարատ Նուրիջանյան), Սուրուն կապ կիրճում: Տեղանքի կապան բնույթը այդ բառն աստիճանաբար վերառել է տեղանվան իմաստով:

Հինավուրց Կապան քաղաքը Րաֆֆին տեղորոշել է ներկայիս Ներքին Ջրախորի տեղում, որ անհավանական է:

Ղափան անունը ուշ միջնադարից է:

Կապանա տան հինավուրց անունը Բաղք է, որը Ստեփանոս Մետրոպոլիտ պրոտոֆրոնտես Օրբելյանն իր «Սյունիքի պատմություն» պատվական գրքում առասպելաբանել է որպես Բաղակ նահապետի անուն: Բաղակ անձնանուն կա Աստվածաշնչի մի մատյանում:

Չորքում տարեցները ավանդույթ գիտեն ինչ-որ Բաղա թագավորի մասին:

Կապանը Ղափան անվամբ քաղաք է կոչվել 1938 թվականին, մինչ այդ ավան էր:

Երեւանից հեռու է 320 կմ, ծովի մակարդակից բարձր է 705-800 մ:

Կապանում է Սյունիքի մարզի ղեկավար վարչակազմը՝ մարզպետարանը:

Առաջին մարզպետը՝ Սուրեն Ջհանգիրի Աբրահամյանը, կառավարում էր 1996թ. փետրվարի 19-ից:

### Կավարդ

Ավան եւ նախկինում գյուղ Կապանից 4 կմ հս-արմ: Բարբառում՝ Կավարտ, սեռական հոլովում՝ Կրվարտու: Հիշատակված է Ստ.Օրբելյանի կողմից, Տաթևի վանքի 13-րդ դարի հարկացուցակում, Բաղք-Աճանան գավառում: Գյուղանունը չի ստուգաբանված. բնական է՝ այն բաժանել կավ եւ արտ մասերի, սակայն հազիվ թե երկուսն էլ մերօրյա իմաստ ունենան: Անունն, անշուշտ, դիցական է, ինչպես դիցական է հս-արմ կողմում գտնվող Կրկոռա քար լեռան անունը: Երկրորդ արտ արմատը պահլավական ծագում ունի եւ սուրբ է նշա-

նակում:

Գյուղը հիշատակված է նաեւ Տաթևի արքեպիսկոպոսարանի «Քեոթուկ» մատյանում:

1823թ. մի փաստաթղթում Կավարտը հիշատակված է որպես կայուն (ոչ վերաբնակված) գյուղ Փիսիան մահալում, որը բռնում էր Աճանան գետի եւ Ողջի գետի միջև ընկած տարածքը:

Բաց հանքի ընդլայնման պատճառով, 1960-ական թվականներին գյուղը տեղահանվել ու տեղափոխվել է մոտ 2 կմ արմ, Կավարտիձորի ակունքը: Քանդվել է 17-րդ դարի շքեղ եկեղեցին:

Ստակայքում է Գաջին խութ բարձունքը, որտեղ գաջի հանք կա: Հս-արմ կողմում Ջալին գյուղ տափարակն է, որ գիտի նաեւ Ալիշանը: Թարգմանվում է Տգրուկալիճ: Մի ավանդագրույցի համաձայն, այս ծանծաղ լճակում վեց եզների մի վեսկի է անհետացել եւ, իբր, այն օրից լճակը խորհրդավոր է: Նաեւ հինավուրց Բաղքում մայրերը երեխաներին ասում էին, որ, իբր, իրենց այդ լճակից են բերել: Ակներեւաբար, այս հավատալիքներն առնչվում են հեթանոս ժամանակների ջրի ու պողպեթության աստվածության պաշտամունքին:

Գյուղի արեւմտյան կողմում, Սայադի բարձունքին Բաշքյանը գյուղատեղին է, որտեղ հույն կաթոլիկների եկեղեցի կա, արձանագրությամբ:

Գայթակղեցուցիչ է՝ այս գյուղանունը կապել Բեշքեն անձնանվան հետ, որ շատ տարածված է Օրբելյան իշխանական տոհմի մեջ: Այս գյուղատեղից արմ ոմանք տեղադրում են Աճանանի բերդը, որն Ալիշանի Սիսականի ներդիր քարտեզի վրա Հաճնո բերդ է կոչվում:

### Շահարջիկ

Կապանից 4-5 կմ արեւմուտք, Ողջի գետի ձախ կողմում: Երկուսն էին՝ Ներքին եւ Վերին, սա Վերինն է:

Բարբառում՝ Շահարջիկ: Նույնացվում է Ստեփանոս պատմիչի հիշատակած Շեկք կամ Շեքքս գյուղ-ամրոցին: Թարգմանաբար, կարծես, քաղաքավայր կամ փոքր քաղաք է նշանակում: Դրան նպաստում է գյուղի մերձավորությունը հնամենի Կապան քաղաքին, որ գետի աջ ափին էր:

Գյուղի արեւելակողմում գտնվող ձորի կամարակապ կամուրջը կառուցել է առաջածորցի վարպետ Կաբին:

Մի այլ ստուգաբանությամբ գյուղանունն, իբր, արաբ ջոհար բառից է, որ թարգմանաբար զոհար կամ հանքաբար է նշանակում եւ ըստ այդմ՝ ջոհարագործի բնակավայր, ջուհարչիք:

Վահանավանքի ծաղկման շրջանում Շեկքը վանքապատկան էր, բայց նաեւ հիշատակված է 13-րդ դարի հարկացուցակում: Գյուղից վերեւ, լեռնապարի վրա, նշմարվում են Շեկք ամրոցի ավերակները: 1881թ. Րաֆֆին ձիով բարձրացել է ու դիտել ավերակները: Առաջածորի խոսվածքում՝ Շքանէն ծօր հանդանուն:

Գյուղից 1.5 կմ արեւելք, ձորում, կիսականգուն եկեղեցի կա, խաչագարդ բարավորներով: Դա, թերեւս, խնկանց գյուղատեղին է, որ թուրքերը Կարաքյանը էին կոչում: Ալիշանը գիտի «խնկանց գիւղը յերի անապատին Տանձափարախու՝ դասի ընդ գեօղս Աճանանու ի նոր ցուցակի»: Խնկանց գյուղից կամ խնկոց վանքից հս-արմ Գյանջի գյուղատեղին է:

Խնկանց գյուղը ոմանք համարում են ետին շրջանի Հողար գյուղը:

Պատահական հողային աշխատանքներ կատարելիս Շհարջիկում հնավայր է հայտնաբերվել՝ հեթանոսական մեխյան: Գյուղն այժմ հայաբնակ է:

Ալիշանը գործածել է Շահարճիկ, Շհարջուկ, Շեհիրճիք եռանուն ձեւը:

1990թ. անվանակոչության ժամանակ առաջարկվել է Շղարջիկ նորահնար գյուղանունը:

### Շահումյան

Կապան ոստանից 4-5 կմ հս-արլ, Աճանան գետի աջակողմ բարձրունքին: Բարբառում՝ Շահումյան, Շահումյանի հանքեր, Շահըյան: Նախկինում հայտնի էր Գյունուշ մաղարա անվամբ, որ արաբերենից թարգմանվում է Արծաթի հանք: Հինավուրց գյուղատեղի է Բաղք-Աճանան գավառում, գուցե՝ Ջարերի դաստակերտը:

Անցյալ դարում այս Արծաթահանքը պատկանում էր Նազարբեկյանցին ու Միրզայանցին, որոնցից այն գնել են ֆրանսիացիները: Այս վայրի հանքաքարից ստացված պղինձը սեւական էր եւ օգտագործվում էր կենցաղային իրեր պատրաստելու համար: Երբ ֆրանսիացիներն իմացան արծաթի պարունակության մասին, որը սեւ երանգի պատճառն

**Ձեռագիր մասյան. Կադանա տուն**

էր, սկսեցին մշակել նաև հանված ու դեն նետված աղքատ հանքաքարը:

Գյուղը 1931թ. ուներ 151 բնակիչ:

1953թ. Լեռնածորից այստեղ են տեղափոխվել Սերգեյ Ումառյանի ծնողները՝ Զովհաննես եւ Սոնյա: Զետագայում Սերգեյն ավարտեց պետհամալսարանի արելեյան լեզուների բաժինը, աշակերտեց ակադ. Զ.Աճառյանին: Նա բնագրից թարգմանեց պարսից փառահերդ դյուցազնավեպը՝ Ֆիրդուսու Շահնամեն: Ս.Ումառյանը (Զարուբյունյան) վախճանվել է այստեղ, 1994թ. նոյեմբերի 26-ին, Ֆիրդուսու մի խոհը շուրթերին:

*Մահվան առաջ ամեն մեկը  
խոնարհվում է ծնկաչոք,  
Նրա դաժան հարվածներից  
չի ազատվել դեռ ոչ ոք:  
Մահ կա եւ պեղք է լինի, այդ  
օրերն է աշխարհի,  
Մի՛ փնտրիր դու ուղին  
անարդարի, արդարի:*

**Վաչագան**

Կապանից 5-6 կմ հարավ, Վաչագան գետի ձախ կողմում, Խուստուփի ստորոտին: Սա վերին Վաչագանն է: Ներքինը, որ նաև Քյարխանա է կոչվել, նույնպես վերառվել է Կապանի մեջ: Ասված էր՝ Քյարխանա, հու վեր տեսնա, ըրխանա:

Բարբառուն՝ Վըչքան: Կովսականի հինավուրց գյուղերից է: Ենթադրվում է, որ հինավուրց անունը Վաժնատուք էր: Դիցավայր է: Պահլավերենում վաժնանակում է աղոթք: Ըստ Ս.Ումառյանի՝ բարբառային աղավաղմամբ դարձել է Վաչագան: Ժողովրդական մի ստուգաբանությամբ գյուղանունը կապվում է Վաչագան Բարեպաշտին՝ Աղվանքի թագավոր:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Վաչագանի հանդանունները: Կա, օրինակ, Երե Պեյին ծօր եւ Ներքե Պեյին ծօր: Տեղացիները դա պարզունակ են բացատրում, իբր, Բահի ծոր: Քաղելով Եզնիկ Կողբացուց՝ Ս.Ումառյանը գրել է մարդկանց ոգիների հեթանոս ըմբռնումի մասին: Պայը, ըստ Կողբացու, ակներես արարած չէ, դա մարդկային երեակայության արդյունք է: Արդ, պետք է համարենք, որ պաշտամունքային պայ անունն առ այսօր մնացել է Վաչագանա հանդանվան մեջ:

Ալիշանը գիտի Վեչագան: Նորագույն բնակավայրերի ցուցակում Մխիթարյան Զայրիկը նաև ունի Վչքան, նաև Քօլու: Այս վերջինը որպես հանդանուն եւ գյուղատեղի Վաչագանի մոտ է, կա ավերակ եկեղեցի:

1830-ական թվականներին Վաչագանում վերաբնակվել է մահմեդական հայերի մի ընտանիք Ալաշկերտից:

...Քյարխանա բառը պարսկերեն է եւ նշանակում է քարհանք-գործարան:

*Անունըդ էիչ ա: Մինասսսսս,  
Շելակըդ էիչ ա: Գյուլասսսս,  
Շարեղըս քյընուն: Վըչըքան,  
Տինչի ըս քընուն: Ըխճըրկան:*

**Այունիք**

Ավան Կապանից արլ, Աճանան գետի գետաբերանի մոտակայքում: Երբեմն մտնում է քաղաքի, երբեմն՝ գավառի (շրջանի) ենթակայության մեջ, ըստ իշխանավորների կառավարման հարմարության: Բարբառուն՝ Այունիքի սովխոգ:

1931թ. ունեցել է 70 բնակիչ:

1897թ. այստեղ Մելիք-Ազարյանցը եւ իմեծներ Վ.Վահանյանը կառուցել են Այունիքի ծուլարանը՝ հիդրոկայանով: Սա դարասկզբին Զայաստանի ամենախոշոր ծուլարանն էր:

Ըստ Ումառյանի՝ 1101 թվականին այս բնակավայրի մերձակա դաշտում է բանակել սելջուկ Չորթման գորավարը եւ այստեղ է ծալված քաջ կույս Այունեն՝ Տինիքի Բակուր իշխանի դուստրը, մտել բանակատեղի՝ Չորթմանին դաշունահարելու մտադրությամբ:

...Կապանի շուկայում ամառ-ձմեռ վաճառվում է այս ավանի մենատնտեսների ընտիր կանաչեղենը (համեմունքներ):



**Կապան գավառի բնակչությունը**

Լինելով խիստ լեռնային երկրամաս՝

Կապանի գավառը հնագույն ժամանակներից ծուղակ էր թշնամու համար եւ քիչ է տուժել: Անգամ շահ Աբասի բռնագաղթին են կապանցիները դիմակայել:

Էթնիկական ցեղախմբերի տեղաշարժերը հին աշխարհում ավարտվել են նրանով, որ նրանք ի վերջո լուծվել են տեղաբնիկներից՝ իրենցից հիշատակ թողնելով մի շարք տեղանուններ, որոնք առ այսօր կան Կապանում եւ յուրովի են հնչում տեղական բարբառում:

Զնագույն են համարվում Բաղք, Այունիք տեղանունները: Գիտնականների մի խումբ Այունիք տեղանունը ծագած է համարում սեպագիր արձանագրություններում հիշատակված Տիունի կամ Սիունի տոհմանունից:

Սերգեյ Ռմառյանը, զարգացնելով Զյուրշանի, Մարկվարտի, Աճառյանի, Մելիքիշվիլու դատողությունները (դիտողությունները) Սիսական-Այունիք տեղանունների վերաբերյալ, հենվելով պատմահամեմատական քերականության մեթոդների վրա, ցույց տվեց, որ Սիսական-Այունիք բառերը ծագում են սիս փոքրասիական արմատից, որը նշանակում է զոհ կամ ծես: ՈՒստի տեղանվան իմաստը կնշանակի ծիսարան կամ զոհարան:

Որ հեթանոս մշակույթների ետնախորքի վրա Այունիքը դիցարան էր, դարձյալ հիմնավորել է Ս.Ռմառյանը:

Բաղքի Տագանար գյուղանունը հղվում է Աստվածաշնչուն հիշատակված փյունիկյան Դագան աստծուն: Անագան գյուղանունը (Անգեն քա՞ր) նվիրված էր շուներական Ա-ն՝ երկնքի աստծուն: Գագըրյը խուռիական Գագբաե աստծու անունից է: Խոտանանը հղվում է Վանի թագավորության Խուտուհին աստծուն: Աճեն, Աճանան, Ըջանան-Էջանան բազմանունը ծագել է Աճեն գյուղանունից: Տեղանունը ծագել է աճենի-մոխիր, կրակ իմաստից, որն ատո-կրակ բառի մյուս ձևն է եւ ունի հնդիրանական ծագում: Ազաթանգեղոսը մեր նախնիների մոխրապաշտ է անվանել:

Չորքի Գիրաթաղ գյուղանունը բաբելական Գիրրա աստծու անունից է, Տինիքը հին հայերի Տիր՝ արելի, երազահանության ու դպրության աստծու մեհյանն էր: Կովսականի Խուստուփ լեռան անունը աղոթական իմաստ ունի: Նավս անունը խորհրդանշում է տապան բառը: Եվ այլն:

Փոքրասիական եւ հնդիրանական

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

ժազման տեղանունների մի մասը ետին դարերում աղավաղվել է կամ դուրս մղվել օտար նվաճողների տիրապետության շրջանում՝ արաբների, սելջուկ-թուրքերի, մոնղոլների, պարսիկների լեզուների կողմից: Բայց մաքրամաքուր հնագույնը մնացել է կամ ժամանակագիրների աշխատություններում, կամ ժողովրդի բանավոր խոսքում:

Գավառում հայտնի Կըրկոռա քար լեռան անունը ծագում է նախաուրարտական շրջանի՝ ջրի եւ պտղաբերության վիշապաբնույթ Կուեռա-Կուեռ աստծու անունից: Ռիլոբըլաղ լեռան անունը, որ ետին շրջանում է թարգմանաբար այդպես կոչվել (ուլու-նախնի, նախակարապետ, բըլաղ-աղբյուր), նույնպես առնչվում է ջրի պաշտամունքին:

Սյունիքի բնակչության միատարրացման փաստերը վերաբերում են մ.թ.ա. 6-րդ դարին, երբ արդեն հայտնի են հին հայկական արքայատոհմերը:

...Հավաստի տվյալներ չկան, թե արդյո՞ք խալիֆայության շրջանում Սյունիքում ապրել են հագարացիներ (արաբներ): Բայց 11-12-րդ դարերում հայերից հետո համեմատաբար մեծ թիվ էին կազմում թուրքերը: Ըստ Օրբելյանի՝ նրանք ապրում էին վրաններում եւ ընդհարումներում պարտվելիս փախչում էին Նախիջեանի կողմերը:

«Թուրք եւ պարսիկ ցեղերը, - գրում է Թ.Հակոբյանը, - հայկական լեռնաշխարհում հաստատվեցին ավելի ուշ՝ 11-րդ դարում: Սելջուկ-թուրքերը Բաղքում, Չորքում, Կովսականում հաստատվեցին Սյունյաց թագավորության անկումից հետո (1170թ.)»:

Թուրքի հետ ապրելը դժոխք է: Քաղաքակրթության պատմության մեջ մեկ այլ իշխող ժողովուրդ այնքան գազանաբարո չէ, որքան վաչկատուն թրքությունը: Սյունեցիներից սովորելով նստակյացությունը՝ նրանք փոխ առան կենցաղային առաջադեմ սովորույթներ, զարգացրին մշակութային կյանքը, անգամ իրենց մարդաբանական տիպով մերձեցան հայերին:

Ընդունած լինելով իսլամն արաբներից՝ թուրքերն այն հայերին պարտադրելը դարձրին բռնի քաղաքականություն: Բայց Սյունիքը դիմակայեց:

Կապանցու խոսվածքում թորք բառն անարգանքի ու արհամարհանքի իմաստ ունի: Պատահական չէ, որ 3-րդ հանրապետության ծննդյան երկունքն

ընթացավ Սյունիքից թրքության խաղաղ տարիանմամբ:

1805 թվականից՝ Ռուսաստանին միացվելուց հետո, ղզբաշ պարսիկների, սեւախոյ ու սպիտակախոյ թուրքերի հալածանքները հայերի նկատմամբ մեղմացան:

Ցարին միանալն առաջին հերթին ցարին էր շահեկան: Նա, ցավոք, իր քաղաքականությամբ չտարբերակեց բնիկ հայկականն ու եկվոր մուսուլմանականը:

Ընդհանրապես ռուսական քաղաքականությունն առանձնապես չի ջատագովել համահավատք ժողովուրդների պաշտպանությունը, ինչպիսին չի անում պանիսլամիզմը: Դա Ռուսաստանի աքիլեսյան գարշապարն է եւ առավել ցայտուն է երեւում Կովկասից, առավել եւս՝ մեր Սյունիքից:

1823 թվականին Ալլահ-դուլին իր գյուղացիների հետ Ղարադաղի Աբուլֆետ խանի մոտից փոխադրվեց Չավնդուր գետի ձախ ափը եւ բնակություն հաստատեց Բաղաբյուրտ գավառում: Նա նստավայր ընտրեց Գեղին: Գեղվաձորցիներն իրենց համարում էին Դարգալի եւ Սարալլի, իսկ Բասուտի հովտի թուրքերը՝ Բաղարլի ցեղերից առաջացած:

Նույն 1823 թվականին Սելիք Հովհաննես Սելիք-Փարսադանյանը՝ նույն ինքը Հուսեյն-դուլին, վեճի մեջ էր Նեժաֆ-բեկի հետ՝ Կավարտ եւ Կատար գյուղերի համար: Ընդհարումն ավարտվեց սպանություններով:

1846թ. ցարական օրենքով ազնվականները պիտի շտապեին ապացուցել իրենց հողատիրական իրավունքները... Չագիեները (հայտնի է մի ավանդություն, ըստ որի՝ սրանք թուրքացած Չագիկյաններն էին) տեր ճանաչվեցին Ողջի գյուղի հողերին, կավածքներ ձեռք բերեցին Դավիթբեկում (Չեյվա), Խլաթաղում:

Կապանցիներն ու օտարներն ապրեցին կողք կողքի:

Հայր Ալիշանի «Սիսական» գրքում բերված է Ջանգեզուր գավառի աշխարհագիրը 1886 թվականի դրությամբ (էջ102):

Խորհրդային իշխանության տարիներին մարդիկ ապրեցին, կարծես, անհայրենիք: Կոմունիստ բոսերը (ինքս էլ համայնավարների կուսակցության մեջ էի, այլապես բանի տեղ չէին դնի)

Սիրի կըշեին ինձ, եթե ասեի, որ հասունանում է Սոււզախիթյան եղեռնը...

Այժմ Կապանի գավառում ապրում է մոտ 50 հազար մարդ, որոնք բնակվում են Կապան մարզկենտրոնում, Քաջարան գավառաքաղաքում եւ 50 գյուղում:

Կապանի խոսվածքը պատկանում է ՌԽ ճյուղին, գրեթե նույնական է Ղարաբաղի բարբառի հետ, գիտական քննության չի ենթարկված: Խոսվածքը տարբերակվում է Վերին Չորում, Ներքին Հանդում, Աղվանիում, դույզն- ինչ՝ եղվարդում:



## Օրհներգ Քաջարանի

*Մրերը կոող բազմադարյա  
Դարբինների պարվարն եւ նոր,  
Բաց ընդերքը քո մեարայիս՝  
Չուլենք եւ րանկ, եւ րրակրոր:  
Մարանի էր Սյունիքն անակ,  
Երբ դարերից հառնեց նորեն.  
Դու, Քաջարան, հսնց շողուն ակ,  
Մարզի զարդն եւ արժանորեն:  
Չորքի ոսրան, անկանգ բանիր,  
Որ քո ոգով լինենք անհատթ,  
Անեն օջախ Նայասարանի  
Քեզնով դառնա ծաղկուն դրախտ:  
Մարանի էր Սյունիքն անակ,  
Երբ դարերից հառնեց նորեն.  
Դու, Քաջարան, հսնց շողուն ակ,  
Մարզի զարդն եւ արժանորեն:  
Դու ձյունածածկ Կապուրջուղին  
Ջերմ շունչ րվող դասարակերտ եւ,  
Մեր հայրենյաց անկախ ուղին  
Քո գունձերով պիրի կերտեն:  
Մարանի էր Սյունիքն անակ,  
Երբ դարերից հառնեց նորեն.  
Դու, Քաջարան, հսնց փայուն ակ,  
Գրար րեղդ արդարորեն:*

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն



### Հնագիտական ուսումնասիրություններ

Կապանում առավել լավ են պահպանվել 16-18-րդ դարերի պատմական հուշարձանները: Հնագույնները կամ թաղված են հողի տակ, կամ հուճք են ծառայել ետին շրջանի շինարարությունների համար: Հանքարդյունահանող ֆրանսիական ընկերությունը Վահանավանքի ավերակների սրբատաշերից տեղափոխել է օգտագործել է կառույցներում, գավառի անհայտ մասերում: Այդպես են վարվել նաև Վահանավանքի շրջակա թուրքական գյուղերի բնակիչները:

Մեզ հայտնի առաջին հնագետ-հետազոտողը, թերեւս, Կապանա տան պատմությանը քաջահմուտ, Սյունիքի պատմիչ հայր Ստեփանոս մետրոպոլիտ Օրբելյանն է, որ իր երկը հորինելիս, իր իսկ վկայությամբ, կարդացել է քարագիր արձանագրությունները: Վիճագրերն ուսումնասիրել են նաև վիպասան Րաֆֆին, Ե.Լալայանը, Ս.Բարխուդարյանը եւ ուրիշներ:

Գավառում հնագիտական ուսումնասիրությունները գիտական հիմունքներով սկսել ու զարգացրել է գիտության դոկտոր Գրիգոր Մետրոպոլիտ Գրիգորյանը: Վահանավանքի պեղումները սկսել են 1966 թվականից: Դարերի մոռացության զրկից Վահանավանքի համալիրում ի հայտ եկան Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Վահան 2-րդ Ջեւանշերյանի կառուցած գավիթը, սյունասարահը՝ 14 որմնասյուների հիմքերով, Շահանդուխտ 2-րդ թագուհու կառուցած կրկնաշարկ դամբարան-եկեղեցու շինությունը, վանքի սեղանատունը, բազմաթիվ դամբարաններ, խաչքարեր, արձանագրական սալիկներ, կավե ամանեղեն են այլն:

Կապանում պատմում են, թե երբ Գրիգոր Մետրոպոլիտը, վերջին հողա-

շերտերը հեռացնելով, գտավ Վահան Նախաշինողի տապանաքարը, երկնային հրեշտակը, վայրի աղավնու կերպարանքով, թառեց նրա ուսին ու մի փետուր զցեց տապանաքարին: Գիտության երախտավորն այդ պահին աչքերը փակել ու հոգեւոր զմայլանքով իջել էր պատմության տասնադար խորքը: Հրեշտակն արթնացրեց նրան, եւ գիտնականը փետուրի փոխարեն տապանաքարին ոսկեշող գրիչ տեսավ: Այդ գրչով նա օժտվեց երկնային ներշնչանքով եւ բազում գրքեր գրեց... Վահանավանքյան հուշարձանախմբի վերականգնման աշխատանքները սկսել են 1978 թվականին:

Մասնակի պեղումներ են կատարվել նաև Բաղաբերդում, պարսպին առընթեր տեղամասերում: Հայտնաբերված է մի գաղտնագիր արձանագրություն, որը պահվում էր Կապանի երկրագիտական թանգարանում եւ որն առ այսօր չի վերծանված:

Երկրագիտական թանգարաններ կան Կապանի գիշերօթիկ դպրոցում, Արծվանիկի, Վերին Խոտանանի, Ծավի, Լեռնածորի դպրոցներում: Կան ցուցանմուշներ բրոնզե դարից:

Գավառում չարիք են ակամա գանձախույզները: Մի քանի գյուղերում փորվել են եկեղեցական շինությունների շրջակայքը, դամբարանները:



### Բուսական աշխարհը

Տարածքի ավելի քան 30 տոկոսը զբաղեցնում են անտառները, որոնք առաղձի, պտուղների ու հատապտուղների յուրահատուկ շտեմարան են կազմում:

Տարածված ծառատեսակներն են բոխին, կաղնին, հացենին, թեղին, թխկին, սոսին, բարդին, հավկեռասենին,

արոսենին, հոնին, վայրի խնձորենին ու տանձենին, ճապկին, դժնիկը, տխլենին, ալոճենին, զկեռենին, լատենին, սալորենին, ծորենին, ընկուզենին, թթենին, կեռասենին, գիհին, եղենին, ուռենին, սերկելիլենին:

Բազմազան են թփերն ու ծառաթփերը՝ մասրենի, դրախտածառ, թանթրվենի, վայրի խաղող ու նշենի, մոշենի, հաղարջենի, կոկոռնենի, հավամրգի, հապալասենի: Որոշ ծառատեսակներ ու թփեր օգտագործվում են նաև բուժական նպատակներով: Միայն բարձր գոտում հանդիպող գերիմաստու խեժը գործածվում է ցաներ բուժելու համար: Նույն նշանակությամբ գործածվում է ցածրադիրի արեգունիներում շատ տարածված ցաքին:

Վաղնջական ժամանակներից Կապանում ունի ազնիվ տանձի հինգ տեսակ, խնձորի՝ երկու, որոնք չիր ու անուշեղեններ պատրաստելու բարձրակարգ հումք են:

Պարսկաստանից ներգաղթելիս քարավանները բերել են շահական թթենի, տանձենի, Խորասանի դդում:

Թեպետ պտղարտադրությունը վերջերս նվազել է, ահավասիկ ինչ է գրել հայր Ալիշանը Էջանցի հովտի մասին. «...երկիրն պտղաբեր է, եւ յավելուած պտղոցն առաքի ի կողմանս Մեղրոյ եւ Նախճավանու» (Սիսական, Վեներտիկ, 1893, էջ 276):

Գրեթե բոլոր գյուղերում բարդի ու սոսի տնկելու սովորույթ կա. դրանում ոմանք հնավանդ պաշտամունքային տարր են տեսնում՝ հիշված Անուշավան Սոսանվերի քրմական ժամանակներից: Տատիկները պատմել են, որ հնում լտտենի (պշշնի, նաև երկաթածառ) ծառի բնափայտից ուլունք պատրաստելու սովորույթ կար: Լտտենու ներկած ուլունքն, իբր հուռուք է եւ չար խափանող ուժ ունի:

Գավառում գերակշռում են լեռնաանտառային, լեռնամարգագետնային դարչնագույն, ալպյան ճմատորֆային հողերն ու լեռնային սեւահողերը:

Բարձրադիր գոտին ամռանը մարգագետինների խայտաճամուկ ծաղկատան է հիշեցնում: Բազմաթիվ ծառաթփերի ու խոտաբույսերի բուսուտները մատնում են լեռնաշխարհի գոտիակառությունը: Օրինակ՝ կոնխուրը, պարկուկենին, քեղը, սրահացին աճում են 1500-2000մ բարձրության գոտում,

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

կատվալեզուն, թուրինջը, հոնին՝ 1500 մ եւ այլն:

Կան ժողովրդական բուսաբուժության մեջ օգտագործվող բազմաթիվ խոտաբույսեր, որոնցից են դաղձը, ջղախոտը, արեւբուրիկը, առյուծագին, գիվանը, անձխոտը, խուլ եղինջը, ձիածեղը, խոնդատը, խատուտիկը, տատրակը, խնկածաղիկը, ծոթրինը, խուրձը եւ այլն:

Ալ-Բիրունին ծագախոտը (արաբ. թուտարի) համարել է քաղցկեղը բուժող բուսատեսակ եւ մատնանշել, որ այն աճում է Արմենիայի Ջանգեզուր գավառում:

Կապանի լեռնաշխարհում զգալի թիվ են կազմում ուտելի խոտաբույսերը, որոնց հավաքչությունը մաս է կազմում կապանցու խոհանոցային կենցաղին:

Գյուղերում ձմռան համար չորացնում են ավելուկ, դաղձ, քեմոն, ուրց, համեմունքային խոտաբույսեր, ինչպես նաեւ դեղաբույսեր: Շատ տարածված է գարնանը կան ուշ աշնանը թխվող՝ բուսական լցոնով կարկանդակը (ժինգյալավ հաց կամ կոպաթ):

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են գազ փշաթուփը, իշակաթնուկը, թրաշուշանը, մկնաստիքը, վարդակակաչը, խուրձը, իրանուկը, կակաչը եւ այլն:

«Քրեածին» բույսերից տարածված են խաշխաշը եւ վայրի կանեփը:



## Կենդանական աշխարհը

Գավառում բնական պայմանները խթանիչ դեր ունեն կենդանական աշխարհի պահպանման ու զարգացման համար: Անտառները, ձորահովիտները, կիսանապատներն ու արեգունիները, կիրճերն ու մացառուտները պատասպարում են իրենց պայմաններին: Ըստ Վ. Անանյանի՝ հնագույն ժամանակներում Ջանգեզուրում տարածված էին վագրն ու

հովազը, որոնք այստեղ էին ներթափանցում արաբսամերձ շրջաններից:

Դրսեկի համար մի խորհրդավոր գազանանոց է Մթնածորը, որ նկարագրած ունի Ակսել Բակունցը: Այն այժմ ներառված է Շիկահողի արգելանոցի մեջ, որտեղ եւ՝ Բասուտ գետի հովտում, սոսիների համբավանում պուրակն է:

Լեռնաշխարհում ամենուրեք տարածված են գայլը, արջը, աղվեսը, փորսուղը, վայրի խոզը, նապաստակը, այծյամը (կխտարը): Միջին եւ ցածր գոտիներում տարածված է շնագայլը (չախկալ): Լեռնաշղթաների՝ միմյանց ազուցված լեռնալանջերին վայրի ոչխարի (մուֆլոն) եւ քարայծի հոտեր են:

Կան լուսան, աքիս, բազմազան են կրծողները:

Ի սպառ վերացել է բորենին, իսկ հովազ լինում է խիստ հազվադեպ:

Տարեց որսորդների պատմելով՝ մինչխորհրդային ժամանակներում կար մարալ /եղջերու/: Տեղացիները մացառախոզի, ոզնու, գորշուկ-փորսուղի ճարպն օգտագործում են բուժական նպատակներով:

Վայրի կենդանիները մարդատես ու մարդամոտ չեն, ինչը չի խոսում մարդու՝ կենդանական աշխարհի նկատմամբ տածած սիրո մասին:

Գյուղաբնակ գրեթե յուրաքանչյուր ընտանիք կով ունի: Ընտանի այլ կենդանիներից տարածված են ոչխարը, այծը, խոզը: Սկսել է ավելանալ գրաստ՝ ձի, ջորի, էլ ունեցող ընտանիքների թիվը: Գյուղերում հոտերը հսկում են գամփռերը, իսկ քաղաքներում, կարծես, ավելանում են թափառական շներն ու կատուները:

Ընտանի կենդանիներից վերացել է գոմեշը, որ մոտ անցյալում պահում էին Կապանի մի քանի գյուղերում:

Թռչուններից գավառում տարածված են ճնճուկը, ագռավը, կաչաղակը, սերմնագռավը, չարդը, կաքավը, մոշահավ-կեռնեխը, անգղը, քարարծիվը, բազեն, փայտփորիկը, վայրի հնդուհավը, հոպոպը /սանդերքահավ/, ուրուրը, թագվորուկը, երաշտահավը, վայրի աղավնին, արտույտը, խաղտանիկը եւ այլն: Գավառի վրայով է անցնում թռչնական երանների մի չվագիծ:

Արագահոս գետակներում խայտում են կարմրախայտի վտառները:

Կան տներ, որտեղ պատվական տեղերում ցուցադրել են վայրի կենդանի-

ների եղջյուրներ, արծվի թեւատարած խրտվիլակ, գունավոր փետուրներ եւ այլն: Թունավոր օձերը տարածված են հիմնականում ցածրադիր գոտում: Կապանում օձի խայթը անդեղ վնասազերծում են Մանուչարյանները:

Կարտոֆիլի դաշտերում տարածում ունի կոլորադյան բզեզը:



## Հին ու նոր բնակավայրեր

Կապանի գավառի ինձ հայտնի հին ու նոր բնակավայրերի այբբենական ցանկում, անշուշտ, կան չտեղորոշված գյուղեր: Դրանք հատկապես գտնվում են Կապանի գավառի պաշտոնական սահմաններից դուրս՝ Ջանգելանի եւ Կուբաթլուի գավառներում: Այդտեղ՝ մի շարք գյուղերում, պարզորոշ պահպանվել են հինավուրց եկեղեցիների, դամբարանների ու գերեզմանոցների մնացորդներ, խաչքարեր: Արաքսի մոտերքում տեղորոշված է Նոյյան նախկորգանը:

Տեղանունների մի զգալի մասը աղավաղված է օտար հնչումին համապատասխան, առանձնապես ցայտում է միջնադարյան արաբների ազդեցությունը: Կան հայերենից թարգմանված տեղանուններ:

Տեղանվանացանկը կազմելիս ձեռքի տակ են ունեցել գյուղի գրադարանում եւ առանձին տներում առկա գրականությունը: Օգտագործել են տարբեր գյուղերում երբեւէ կատարած իմ գրառումները: Տաթևի վանքի «Քրթուկ» մատյանի հարկացուցակներն օգտագործել են միջոնորդված եղանակով:

Նախնական գնահատմամբ մեր գավառում գյուղանունների թիվը մոտ 600 պետք է լինի: Այս ցանկում մոտ 500 է: Բազմաթիվ գյուղանուններ չեն հիշատակվել գրավոր աղբյուրներում կամ այդպիսիք առայժ չկան: Նորահնար տեղանունները՝ Շղարշիկ, Չերե-

## Ձեռագիր մասյան. Կառանա տուն

մուշկա, Յանլետավան, Ուխտավայր, Գերասիմանյան, Թավշուտ, Խաչատուհ, Գեա, Պրաֆիլակտորյա, Դոմիկներ, Պերեմեննի, Շամբուտ, Յովվաշեն, Անդրանիկաշեն, Գետիկ, Սզնուտ եւ այլն դեռ պետք է հիմնավորվեն ու համապատասխանեն կապանյան հնչումին, հաստատվեն ԱԺ կողմից:

Վերացված գյուղերը որպես հանդամասեր պահպանվել են գյուղերի խոսվածքում: Այդ պատճառով հանդանունների ուսումնասիրությունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Բարբառում մեր գյուղանունները յուրովի են հնչում՝ Քյրդիգյաց, Քչանանց, Վրչքան, Պռաթունք, Ըրցվանիք, Յրկյերակ եւ այլն: Դա բանալի է՝ հանդանունների ցանկում չհիշատակված գյուղերի անուններ փնտրելու համար:

Գյուղանուններ պետք է ենթադրել Չափնու Բերդինգա եկեղեցի, Սկնատան խաչ, Իրփինգյանց, Նորաշենիկի Ըլվանց, Ախպինի, Եղվարդի Սուղդան, Բինա, Գեղանուշի Խնեգյա, Ծղեր, Շիկահողի Եղնեգաց, Տխտավեք, Շարուքար, Մարեկ, Արծվանիկի Ըննածոր, Առաջածորի Պեռնք քօլ, Կավարտի Գյրլածոր, Անտառաշատի Փարիմցեր, Լեռնածորի Պրթին Ծօր, Էջանանի Գյունջուբուր հանդանունները եւ այլն:



## Կապան գավառի պատմական հուշարձանները

Հատկապես ցածր ու միջին գոտիներում կան բազմաթիվ հնավայրեր, քարանձավներ, կիկլոպյան ու վաղմիջնադարյան կառույցների ավերակներ:

Մեր մոխրապաշտ (Ագաթանգեղոս) նախնիների մեհյաններից ու ատրուշաններից շատ քիչ բան է պահպանվել: Նշմարվում են Կրկոռա քարի, Հարսնաքարի մեհյանների ատրուշանների հետքերը: Կռապաշտությունը,

հավանաբար, մինչև Գրիգոր Լուսավորչի ձեռնարկումները, կործանման էր դատապարտվել Քրիստոսի աշակերտ Բարդուղիմեոս առաքյալի կողմից, որը, ինչպես գրում է Ստեփանոս Մետրոպոլիտ Օրբելյանը, ի թիվս այլ գավառների, այցելել է նաև Բաղք: Բայց հավաստի է, որ հեթանոսական մշակույթի հուշարձանները Բաղքում ոչնչացվել կամ քրիստոնեական պաշտամունքների են հարմարեցվել Գրիգոր Լուսավորչի, Գրիգորիս նախնիների կողմից եւ նրանց գործակիցների միջոցով: Հող էր նախապատրաստվել Սբ Մաշտոցի համար, որը լուսավորչական առաքելությանը 408թ. Բաղք է եկել՝ ստանալով Վաղինակի, այնուհետև Վասակ մարզպանի հյուրընկալ աջակցությունը: Մաշտոցն այցելել է Բաղքերը:

Կառույցների նշմարելի հետքեր ու ավերակներ կան Կովսականի անտառաշատ տեղանքներում, Ղըրղալա (Բաղքե՞րո, թե՞ Կկոց բերդ) բարձրավայրում, Խուստուփի մերձակա լեռնատանում, Վանք-Չանախչիի ծմակներում, Բարկուշատի ձորաստաններում:

Հնագույն են հիշվում Բաղքերը (3-4-րդ դարեր), Երիցավանքը (5-6-րդ դարեր): Վերջինս, ըստ ավանդության, Սյունիքի գահակալ եպիսկոպոս Երիցակից է անունն առել: Տեր Երիցակը գահակալել է 517-518 թվականներին: Բայց դա, ակներեսաբար, միամիտ գրույց է, որովհետև Ստ.Օրբելյանի «Եվ ապա Երիցակավանքի սուրբ վանահայր, մեծ տնտեսվար, խարազնագետ ու խստակրոն ճգնավոր Երիցակին հարկադրելով...» խոսքից այդպես էլ հետևում: Հետեսաբար Երիցակավանքը գոյություն ուներ ավելի հին ժամանակներում: Երիցակ վանահայրի (վանահոր) վարքից Օրբելյանը մի քանի հրաշապատում դեպքեր է ավանդել:

Կապանի գավառի հնագույն պատմությունն անբաժան է Բաղքերը ամրոցից, որը եղել է Կապան քաղաքի միջնաբերդը: Ավերակները գտնվում են հիմնավորց Կապանի արևմտյան կողմում, ըստ պրոֆ. Թ.Հակոբյանի՝ Ողջի եւ Գիրաթաղ գետերի կցվանքատեղում, ժայռի վրա: Բերդն ուներ կրկնակի պարիսպ, պարսպաբուրգեր, երկու տաճար, ագուզաններով բերված ջուր (ենթադրվում է, որ սա մերձակա ավանի ձորում բխող հորը աղբյուրն է), եկեղեցի, օժանդակ բազմաթիվ կառույցներ եւ այլն:

Ցավոք, առ այսօր Բաղքերը արձանագրություններ կամ վիմագրեր չեն հայտնաբերված:

Անդովք Սյունի իշխանի (Վասակ Սյունի մարզպանի պապի) սխրագործությունները կապված են Բաղքերի հետ: Այս մասին գրել է Մովսես Կաղանկատվացին, մեր ժամանակներում վիպել է Ս. Ունառյանը:

Տարեցների պատմելով, 18-րդ դարի առաջին տասնամյակների ազատագրական կռիվների ժամանակ Դավիթ-Քեկ զորավարը վերաշինել ու ռազմավարական նպատակներով օգտագործել է բերդը: Ըստ երեւոյթին Ռաֆֆին սխալմամբ Բաղքերը նույնացրել է Ձեւու բերդի հետ:

Կապանը կոչել են նաև Յոթնաբերդ գավառ: Պատմական հուշարձանները մեծամասամբ տեղադրված էին Ողջի գետի հոսանքն ի վեր՝ նախկին Չորք գավառում, որը հետագայում է այդպես կոչվել եւ նախկինում կազմում էր Բաղքի մի մասը (Թ.Հակոբյան): Այստեղ են Վահանավանքը, Բաղակուքարը, Աղջկաբերդը, Ձեւու բերդը, Կկոց քարը, մի Շլորուտ բերդ:

Վահանավանքի կառուցումը սկսվել է 911 թվականին, Սյունյաց գահակալ իշխան Չագիկի որդու՝ Վահան Նախաշինողի կողմից:

100-ից ավելի կրոնավոր ունեցող այս վանքին կից բացվել էր միջնադարյան ամենանշանավոր հոգևոր դպրոցներից մեկը:

Վահանավանքն իր ծաղկման շրջանն է ապրել Սյունիքի թագավորության շրջանում եւ իր նշանակությունն աստիճանաբար կորցրել է սելջուկների, մոնղոլների ու լենկթեմուրյան հրոսակների ասպատակումների պատճառով:

Գավառի գրեթե ամեն մի գյուղում եկեղեցու հին շինություն կա. մի մասը լավ է պահպանվել: Եռանավ բազիլիկներ են Քրդիկանցի, Նորաշենիկի, Աջիբաջի եկեղեցիները: Ինքնատիպ է Խղրանցի Չուրուբղուն վանքի հորինվածքը:

Եկեղեցիները կրում են Սբ Աստվածածնի, Հակոբ Տեառնեղբոր, Ստեփանոս Նախավկայի, Սբ Հռիփսիմեի, Սբ Գրիգորի եւ այլ անուններ:

Բերին Խոտանանի, Տանձավերի, Եղեգնի եկեղեցիներում ընդօրինակվել են ավետարաններ ու այլ ձեռագրեր:

Հնավանդ մի քանի վանքեր ու բեր-

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

դեր գավառում տակավին չեն տեղորոշված: Այսպես, Ալիշանը գիտի Աճանանի բերդ (Յաճո), եւ պրոֆ. Յակոբյանն այն ենթադրում է Սայադ լեռնաբազկի հյուսիսակողմում:

Քարակերտ կամարակապ կամուրջներ կան Աճանան, Բասուտ, Գեղի, Ողջի գետերի վրա, որոնք գրեթե ավերակ են: Աճանանի կամուրջներից մեկը, որ գտնվում է Խլաթաղ-Ըխտարանց (Օխտար) ճանապարհին, կառուցվել է Մովսես Խոտանանցու՝ հայոց կաթողիկոս ընտրվելու 1-ին տարում՝ 1629 թվականին եւ ունի պարսկերեն արձանագրություն՝ մի քառատող Սասաղիի Գուլեստանից:

Բազմաթիվ արձանագրություններ կան Երիցավանքում, Վահանավանքում, ինչպես նաեւ գյուղերի եկեղեցիների պատերի մեջ: Տեղ-տեղ հայտնաբերվել են հողածածկ եղած խոյակներ, խաչքարեր:

Առաջածոր գյուղում՝ մի բլրի վրա, պահպանվել է Մելիք-Ստեփանյանների տոհմական մատուռ-դամբարանը:

Չայրենական մեծ պատերազմի զոհվածների հիշատակի հուշարձաններ կան գրեթե բոլոր գյուղերում: Կապանում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակի կոթողը:

Մազկենտրոնում են Դավիթ-Բեկի բրոնզածույլ հեծելարձանը, որի սլացքն ուղղված է դեպի արեւմուտք, կարծես՝ դեպի Վանա լիճ:

Այստեղ է նաեւ Խորհրդային Միության հերոս, ծավցի Յուրան Ավետիսյանի արձանը:

Որպես մասունք, մի քանի ընտանիքներ պահում են հնագույն ձեռագրեր:



## Օգտակար հանածոները

Կապանա տունը Չայաստանի Յանապետության մետաղահանության շտեմարանն է: Գավառն ունի բազմա-

զան օգտակար հանածոների հսկայական պաշարներ: Այստեղ են Քաջարանի պղնձամոլիբդենային եւ Կապանի պղնձահանքային համալսարանում կոմբինատները: Ողջի գետի վերնագավառը, կարծես, գանձասար լինի: Յենց այդպես՝ Գանձասար է կոչվում Քաջարանի կոմբինատի բաց հանքը:

Լեռնաշխարհում գրեթե ամենուրեք կարելի է նշմարել փորվածքներ:

Չողային աշխատանքների ժամանակ Քաջարանում, Շիկահողում, Գեղանուշում, Էջանանի հովտում եւ Կապան քաղաքում հայտնաբերվել են բրոնզեդարյան գործիքներ:

Բրոնզածույլ կացինը Գանձասարում գտնվել է շատ մեծ խորության վրա:

Այս ամենը վկայում է, որ մետաղի արդյունահանումը Կապանում գոյություն ուներ անհիշելի ժամանակներում:

Չայր Ալիշան. «Ի սահմանս... Կաւարտայ յայտնեալ են Պղնձահանք, կալուածք Յունաց ոմանց եւ Չայոց Ագուլեցոց հաստատեալ անդ հալոցս եւ քուրայս գտելոյ, որոյ աղագաւ բարգաւաճել առնու գիւղն եւ սահմանորդքն» (էջ 278):

Կապանի պղնձի հանքավայրը գտնվում է Կապան քաղաքից 3-4 կմ հյուսիս, Կավարտիջուր գետակի վերին հոսանքում: 1846 թվականից մինչեւ խորհրդային կարգերը մշակել են մասնավոր ձեռնարկատերերը: Փիրոդվդանի գործատունը 1846 թվականից մինչեւ 1874 թվականը ընդմիջումներով աշխատել է 13 տարի եւ ձուլել է 2285 փուֆ սեւ պղինձ:

20-րդ դարի սկզբին Կապանի պղնձարդյունաբերության տերերն էին Ֆրանսիական կովկասյան արդյունաբերական եւ մետաղագործական ընկերությունը, Կոնդուրով եղբայրները, Մելիք-Կարակոզովը, Մելիք-Ազարյանը, Մելիք-Փարսադանյանը, Խոջամիրովը եւ ուրիշներ: Դեռեւս 1835 թվականին Կապանում պղնձի ելքերն ուսումնասիրել էր գերմանացի գիտնական Յերման Աբիխը:

Ոմանք Չայիծոր տեղանունը ստուգաբանում են որպես հալելու ձոր, իբր, հանքաքար հալելու վայր: Յինավուրց Կապան քաղաքի Ջիտաթաղի համար կա մեկ այլ բացատրություն՝ ոչ ջիուղների թաղ: Ջիտա պահլավերենում լաջվարդ ու կապույտ է նշանակում: Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, թե Ջիտաթա-

ղը պղնձագործ արհեստավորների թաղ էր, որովհետեւ պղնձագործի արհեստանոցի շրջակայքում հայտնվում են պղնձարջասպի լաջվարդ երանգներ:

Կապանի եւ Քաջարանի հանքերը բազմամետաղային են: Գլխավոր միներալներն են քվարցը, պիրիտը, կալցիտը, գիպսը, դոլոմիտը եւ այլն: Գավառում կան նաեւ կրաքարի, բազալտի, կաոլիցիտի, մարմարի հանքավայրեր:

Մի ավանդության համաձայն, անցյալում Կապուտջուղի շրջանում նավթաբեր մի երակ է հայտնվել: Վայրը ցայժմ Յուղածոր է կոչվում:

Յեսանաքարի հանքավայր կա Փուխրուտ գյուղի մոտակայքում:



## Պաշտամունք եւ հավատալիքներ

Կապանա տան պաշտամունքային սովորույթներն ու հավատալիքները նկարագրել են 19-րդ դարի վերջի Արծվանիկի դպրոցի ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնազարյանը, Ե.Լալայանը, Ստ.Լիսիցյանը եւ ուրիշներ: «Սյունիքը դիցարան» աշխատություն է գրել Ս.Ումառյանը: Վերջին տարիներին գյուղական դպրոցներում ի հայտ են եկել սիրող-բանահավաք ուսուցիչներ:

Չայրենական մեծ պատերազմից հետո կապանցիները գրեթե մոռացել էին Վարդավառի խուստուփյան տոնակատարությունները, Ջատիկը: Նրանք այլեւս չէին ճաշակում Սբ Ծննդյան գաթան, որ թխում էին հունվարի 4-ին եւ կոչում կրկենե կամ քյոմբա (սա՝ հնդեվր. կունբ բառից), փետրվարի 14-ին Տյառնընդառաջի խարույկը չէին վառում, որ կոչում էին Դրդոռանչ կամ Դիրդառանչ:

Ժողովրդի մեջ առավել շատ արմատներ ձգեց սննդատարությունը:

Յեթանոսության եռանդը դեռ չի մարել Շլորուտի բարձունքներում: Մեր օրերում էլ խաչքարերի արանքներում

## Ձեռագիր մասյան. Կադանա տուն

բուսած ծառափերին գունավոր գործվածքի կտորներ կապողներ կան, կոճակներ են դնում, մոմեր վառում: Այդ ամենը բացատրվում է չարը տնից ու իրենից վանելու եւ սրբատեղիում այն անվնաս դարձնելու սնահավատությամբ: Սրբատեղիում իրեր թողնելը, իբր, հիվանդությունից ազատվելու հնարավորություն է ընձեռում:

Վախեցածին բուժելու եղանակը, իբր, տրված է ժառանգաբար: Կան այդ եղանակին տիրապետողներ: Խունկ վառելու երեւոյթը հնագույն է եւ նորերս կրկին կենցաղ է մտել: Իմաստն այն է, որ, իբր, հոգուն դուր է գալիս անուշահոտությունը:

Լամպը (հնուն՝ ձիթաճրագը) վառ են պահում, որ հոգին չմոլորվի, մեկին չկոխի ու չկուփի:

Լացկան երեխայի քնաբարձին կարել են նապաստակի ականջներ, որպեսզի նապաստակի հանգիստ ու երկար քունն անցնի նրան:

Կանայք մեջեցյալին հրաժեշտ էին տալիս եկեղեցում եւ չէին ուղեկցում մինչեւ գերեզմանատուն, որպեսզի բարձրաձայն ողբերով քաջքերին չմատնեին հանգուցյալի տեղը:

Կապանցիները փորձել է ու լավ է ճանաչում չար աչք ունեցողին: Չէր ցանկանա օրվա մեջ առաջինը նրան հանդիպել կամ ընդհանրապես հանդիպել: Գրկի երեխայի թափկից կամ ուսից մայրերը ըշկրիելունք են կապում՝ չարի խափանման հուռուք:

Կշեռքի, ճախարակի վրայից անցնելը սրբապղծություն է:

Դժբախտությունից, չար պատահականությունից ազատվելիս կապանցիները Աստուծուն մատաղ է խոստանում ու երբեւէ այն իրագործում է անգամ ավերակ եկեղեցու մոտ:

Տիգրան պապը պատմել է, որ տեւական երաշտին, անձրեւ հայցելու համար, կանայք լծվել են վեժկուն ու վարել ձորը: Այդ տեսարանի մի գեղանկար է թողել Սմբատ Մելիք-Ստեփանյանը:

Կապանա խոսվածքում պահպանվել են մի շարք պաշտամունքային բառեր:

Պարելիս կապանցիները կանչում է տաշշի, որ հեթանոս Տուշշի աստծու անունից է գալիս:

Ընտանի կենդանուն ջուր տալիս, նրան խմելու տրամադրելու համար, ծայնարկում է կուռռ՝, որ ջրի եւ պտղաբերության Կուռռա-կուռռ աստ-

ծու անունն է: Ջրային Նիգ աստծուն են անշչվում բարբառի մի օմիլ, մի կալ, մի ա կալա բառերի մի արմատները:

Կապանցիների հոգեւոր բարեմասնություններից ընդգծելին մարդուն սատար լինելն է, նրան ուրախություն բերելը, լավություն անելը: Խերի ու հաջողության հանդիպելիս մրմնջում է «հո՛ւր ըմ լալ մուն թիքյա հաց տված», որ նշանակում է երբեմնի լավության փոխհատուցումը: Կապանցիները չգիտի մեկի հետ թշնամանալու վատբարագույնը՝ «Մէն օտուն ըն, վէսկուռը շպըրտուն չին»: Նրա ներաշխարհում ի բնէ կա հունամիզմի որոշակի համոզմունք՝ անհատի համար յուրովի խորությամբ:

Չաշվենկատ չէ: Չյուրերի, մերձավորների ու անձանոթների համար կարող է շատ միջոցներ վատնել՝ խնջույքներ սարքել ու երբեք չզոջալ: Առատածեռությունն ու միջոցների մսխումը երբեմն... հիմարության տպավորություն են թողնում (ասենք՝ Եվրոպայից եկած մեկի համար):

Կապանցիները սփյուռքում մերձեցնում են եղբայրական քաղցրությամբ: Չայրեմի երկրամասով չեն պարծենում, սակայն շատ կարոտաբաղձ են:

Չեզոք ու ծաղր անող են, հիմարին չեն ներում, նվնվացողին մի կերպ են տանում՝ կշտամբելով, որ «սուրը վեր չածի»:

Ենթական չի տրտնջում, աստիճանավորն էլ չափից դուրս չի փառավորվում:

Կապանցու դավադրությունն ու դավաճանությունը անթույն է, միամիտ ու նաեւ ծիծաղելի:

Գյուղերում բարձր խոսող են, հարեւանների հետ մշտապես լարում ունեն, հաճույք ունեն բամբասանքի նկատմամբ՝ գյուղական համայնքի շրջանակում:

Գրեթե ամեն մարդ գյուղերում մականուն ունի: Մականունը երբեմն տոհմական-ժառանգական է:

Բնաշխարհի սիրահարներ են: Կապանցիները անտառներից ու լեռներից հեռու անտես ու դանդաղ... մահանում է:



## Գավառի անառա-նոցները

1.Կարմրաքար: Գավառի հս-ալ մասում, Բարկուշատի լճի մի ճյուղավորման վրա, Դավիթբեկ գյուղի մոտ: Բարբառում՝ Կըմբըրաքար, Դզըլդաշ: Մերձակայքում գտնվող Երիցավանքը երբեմն կոչվել է Կարմիր վանք:

1957-58թթ. հիմնվել է առ այսօր գործում է «Կարմրաքար» հանգստյան տունը:

2. Վահանավանք: Տանձափարախի ձորում, Ողջի գետի աջ ափին, Վահանավանք տանող ճանապարհին առընթեր:

Հիմնվել է 1991-94 թվականներին: Տանձափարախի անապատում ընդօրինակվել են ձեռագրերը: Պահպանվել է հնագույն մի կամրջի հենապատը: Մոտակայքում Հին Կապանի պարսպապատն է:



## Բնապահպանական միջավայրը, բնակլիմայական պայմանները

Գավառը գտնվում է Արաքսի ձախ Ողջիգետի ավազանում: Չյուսիսային մասում Բարկուշատի լեռնաշղթան է, հարավում՝ Մեղրու լեռնաշղթան կամ Արեւիքի լեռները, արեւմուտքում Ջանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասն է: Այս լեռնաշղթան ձգվում է արեւելյան երկայնության 45° միջօրեա-

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

կանի երկարությամբ: Այստեղ է Կապուտջուղ կամ Կապճուղ լեռը, ծովի մակերեսային 3904 մ բարձրությամբ, Արագածից հետո երկրորդը Հայաստանի Հանրապետությունում:

Գավառի արեւելքում Խուստուկի-Կատարի աղեղնածե լեռնաշղթան է, որը Ողջի գետով բաժանվում է Խուստուկի (3202 մ) եւ Կատար (3012 մ) մասերի:

Կապան քաղաքի տարբեր տեղերից երեւում են օղակող լեռնաշղթաների բազմաթիվ լեռնաբազուկներ, առանձնապես՝ Խուստուկի սարի բարձունքները:

Գավառի ամբողջ տարածքի ընդամենը 0,1% ունի մինչեւ 3° թեքություն, որտեղ գտնվում են գործարաններ, բազաներ եւ օդանավակայանը:

Տարածքի 1,6 տոկոսն ունի 3-8° թեքություն եւ հիմնականում հատկացված է մշակաբույսերին: Ամբողջ տարածքի 52,6 տոկոսն օգտագործվում է որպես արոտավայրեր ու խոտհարքներ: 29 տոկոսը բարձրլեռնային գոտի է, որն օգտագործման համար գրեթե պիտանի չէ:

Գավառը գտնվում է երկրաշարժային գոտում: Վերջին երկրաշարժը տեղի է ունեցել 1968թ. հունիսի 9-ին, ժամը 5.55-ին, 8 բալ ուժգնությամբ:

Կլիմայի փոփոխականությունը գավառում դյուրավ նկատելի է, որովհետեւ ծովի մակերեսային 740 մ բարձրություն ունեցող ցածրավայրը Կապուտջուղի գագաթից հեռու է մոտ 30 կմ-ով: Չմռանը ցածրադիր գոտում տեղացած ձյունը 3-4 օրից ավելի չի մնում, մինչդեռ Կապուտջուղի գագաթային շրջանում կան հավերժական ձյան բծեր:

Բարձրադիր գոտում ամառը կարճատեւ ու զով է, իսկ հովիտներում՝ շոգ ու չորային: Հունվարի միջին ջերմաստիճանը 0° -ից մինչեւ՝ -14° է, հուլիսինը՝ 7-23°: Տարեկան տեղումները կազմում են 500-800 մմ, վեգետացիայի շրջանը՝ 20-200 օր:

Խոշորագույն գետը Ողջին է՝ ձախակողմյան Գեղի վտակով: Երկարությունն է 82 կմ, ավազանը՝ 1175 կմ<sup>2</sup>: Գեղի վտակի ջրի մակարդակը գրեթե հավասար է Ողջիի մակարդակին: Քաշինձոր, Բաղաջուր, Ծաղկարի, Գիրաթաղ, Վաչազան, Կավարտիջուր, Գեղանուշ եւ Աճանան վտակները համեմատաբար սակավաջուր են:

Ողջի գետը միանում է Արաքսին, ջրի

տարեկան հոսքը 70 մլն մ<sup>3</sup> է: Արաքսին է միանում նաեւ Ծավ (Չավնդուր) գետը:

Քաշունի գետակը Որոտանի վտակն է:

Գավառում են բարձրլեռնային Կապուտ, Գազանա, Գոգի լճերը:

Կապանի գավառը լեռնային աղբյուրների երկրամաս է, ունի նարզանային բուժիչ ջրեր: Հայտնի են Թթուջուրը, Քոսաղբյուրը, Քսաջուրը, Շոր աղբյուրը եւ այլն:



## Կապանի գավառն անցյալում

Գավառի դիցական տեղանունների առատությունը վկայում է, որ այն հայկական բնօրրան էր անհիշելի ժամանակներից: Հեթանոսական շրջանի բազմաթիվ տեղանուններ հասել են մինչեւ մեր ժամանակները՝ Խուստուկի, Խոտանան, Աճանան, Շիշկերտ, Ուժանիս եւ այլք:

Ստեփանոս Օրբելյան պատմիչը նշում է, որ Սյունիքի սահմանները մշտապես փոփոխվել են: Ղա, անշուշտ, վերաբերում է նաեւ Բաղք, Քաշունիք կամ Սյուս Բաղք, Կովսական եւ Չորք գավառներին, որոնց տարածքներից ձեւվել էր Ղափանի շրջանը խորհրդային ժամանակում եւ Սյունիքի մարզի Կապան գավառը (պայմանական) այսօր:

Վաղ միջնադարից գավառը հայտնի է եղել Բաղք կամ Բաղաց աշխարհ անվանումներով: Բաղ արմատով Կապանի խոսվածքում եւ գրավոր խոսքում պահպանվել են բազմաթիվ տեղանուններ՝ Բաղաբերդ, Բաղաբուրջ, Բաղաջուր, Բաղակուքար, Բաղին ետք, Բղոտ, Բաղա թագավորի ամրոց եւ այլն:

428 թվականից՝ հայոց պետականության անկումից հետո, եղել է պարսից տիրապետության տակ: 640-885 թվականներին տնօրինել են արաբները: 886թ. մտել է հայ Բագրատունիների, իսկ 987 թվականից՝ Սյունիքի թագավո-

րության կազմի մեջ: Պատմագիրների հիշատակությունների համաձայն՝ Սյունիքի թագավորությունը կոչվել է նաեւ Բաղաց թագավորություն կամ Կապանի թագավորություն՝ Կապան մայրաքաղաքի անունով: Բաղքում վաղ միջնադարից հայտնի էր Չագիկյան իշխանական տոհմը:

1103թ. Կապանի գավառի տարածքը ենթարկվել է սելջուկների ասպատակումներին, որոնք ավարտվեցին Կապան մայրաքաղաքի ավերումով: 1170թ. Աչաղու գյուղի երեւելիների միամիտ դավաճանությամբ, ընկնում է նաեւ անառիկ Բաղաբերդը: Թշնամին այդ բերդաքաղաքում ոչնչացնում է Բաղքի համբավանուն մատենադարանը՝ մոտ տասը հազար գիրք: Այս մատենադարանի հռչակը հասել էր անգամ մեծ գիտնական Օմար Խայամին:

1170 թվականը Կապանի թագավորության վերջն է (Ստ. Օրբելյան):

13-րդ դարի 30-ական թվականներից գավառը գրավել են մոնղոլ-թաթարները: Այդ շրջանում անխնա շահագործվել են Աճանանի պղնձահանքերը:

15-րդ դարից Ղափանին տիրել են սեւախոյատեր եւ սպիտակախոյատեր թուրքմենական ցեղերը: Նրանց տիրապետության ժամանակաշրջանը ամենաողբերգականն է Կապանի պատմության մեջ: Բնակչության գերեվարումը, հարկադրական գաղթերը դեպի Վրաստան, պաշտպանական կառույցների եւ մշակութային օջախների անխնա ոչնչացումը ծանր հետեւանքներ ունեցան Սյունիքի պատմության մեջ: ...Ամտարբեր Եվրոպան մարդկերի երախն էր նետել իր զոհին՝ Հայոց աշխարհը, այդ թվում եւ Սյունյաց հնամենի ծաղկուն երկիրը:

Միջինասիական տափաստաններից թուրքական ժանտախտը Եվրոպա էր գնում:

15-րդ դարից հետո գավառի տարածքը մտել է Բեխի կախյալ մելիքության կազմի մեջ:

1639 թվականից Կապանի գավառի տարածքը, Ջանգեզուրի մյուս գավառների հետ, ընկավ Իրանի շահի տիրապետության տակ: Թուրք-իրանական բախումներն ավերում էին Սյունիքը:

1722թ. մարտից մինչեւ հուլիս Ղափանում անհիշանություն էր տիրում:

Մայիսին կան հունիսին Ստեփա-

## Ձեռագիր մասյան. Կապանա տուն

նու Շահումյանը Ղափանի հայության խնդրագրի հետ գործուղվում է Վրաստան՝ Վախթանգ 6-րդի եւ նրա որդի Շահնավազի մոտ: Դավիթ-Քեկի 2000-ամոց ջոկատի հավաքագրումը եղել է Քարթլիի թագավոր Վախթանգ 6-րդի կողմից՝ շահ Սուլթան-Յուսեյնի հրովարտակի համաձայն Վրաստանում կազմակերպված մեծ զորահավաքի միջոցին՝ 1722թ. օգոստոս-սեպտեմբերին: Այդ ժամանակ էլ Դավիթ-Քեկը շարժվել է դեպի Հայաստան:

Դավիթ-Քեկի ղեկավարությամբ Ղափանի իշխանությունն անկախացավ: Պարսից շահը խրախուսեց Դավիթ-Քեկի անվամբ դրան հատելը: Այդ ժամանակներում Ղափան անունը տրվում էր Մեղրուց մինչև Սիսիան եղած երկրամասին:

Դավիթ-Քեկի մահվան եւ Մխիթար սպարապետի նահատակման պատճառով Ղափանի իշխանությունը երկար չի տևում: Թուրքական զորքերը 1730 թվականին գրավում են Կապանը:

1735 թվականին այն վերագրավում է Իրանի Նադիր Աֆշար շահը: Այդ ժամանակ Կապանի գավառը մաս էր կազմում Ղափանի մահալին:

1805 թվականին «սիաթն օրինյալ» էր, եւ Կապանի գավառը միացվեց ցարական Ռուսաստանին, իսկ 1829 թվականից ընդգրկվեց Ղարաբաղի նահանգի մեջ: Նիկոլայ 1-ին ցարը 1828-29թթ. կազմավորել էր Հայկական մարզ, որի մարզպետն էր Ալ.Ճավադավաձեն (Գրիբոեդովի աները):

Ղափանը 1861 թվականից Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուր գավառի մի մասն էր:

Ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում Այսրկովկասի՝ այդ թվում եւ Հայաստանի ռազմավարական, ազգագրական-ժողովրդագրական ուսումնասիրություններին: հսկայական միջոցներ են հատկացվել հայերի ներգաղթի կազմակերպմանը:

Դեռեւս 1823 թվականին Մոզիլեւսկին ու Երմոլով 2-րդը կազմել են «Описание Карабагской провинции» ժողովածուն: Ղարաբաղի նահանգի կարգավիճակը գրյատեսել է 1822-1841 թվականներին:

Կովկասյան Ուսումնական շրջանի վարչությունը ձեռնամուխ է եղել «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» ժողո-

վածուի լույս ընծայմանը: ժողովածուի բազմահատորյակում բազմաբնույթ տեղեկություններ կան Ղափանի գավառի վերաբերյալ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Արծվանիկի դպրոցի ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնագարյանի ուսումնասիրությունները, որոնք գետեղված են 17-րդ (1893թ.), 19-րդ (1894թ.), 25-րդ (1898թ.), 34-րդ (1904) հատորներում:

34-րդ հատորում գետեղված է Խնձորեսկի դպրոցի ուսուցիչ Շիրակունու մի հոդվածը:

Հայագգի գիտնական Ստեփան Չելինսկին 1886թ. լույս է ընծայել «Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде», «Материалы по изучению экономического быта» հատորները:

Կովկասի բժշկական ընկերությունը 1894թ. լույս է ընծայել «Медицинский сборник»-ը, որի 56-րդ հատորում գետեղված է բժ. Գեդեանովի «Зангезурский уезд» հոդվածը, որտեղ բժշկական տեսանկյունից տվել է գավառի ամբողջական նկարագիրը: Գավառի մասին հետաքրքիր տեղեկություններ կան պրոֆ. Գ.Չուրպինի 1931թ. լույս ընծայած «Ջանգեզուրի հայերը» ռուսերեն գրքում:

...1918 թվականին, հավանաբար, Տեր Հիսուսը բաղձաց երկիր գալ: Մայիսի 28-ին՝ դարավոր ընդմիջումից հետո, Հայաստանում՝ մի պատառիկ Արեւելահայաստանի տարածքում, ծնունդ առավ մեր առաջին հանրապետությունը, որը գոյատևեց գրեթե երկու եւ կես տարի, Դաշնակցական կառավարության ղեկավարությամբ: Առաջին հանրապետությունն աստիճանաբար մասնատվեց-տկարացավ, ի վերջո մնաց Գարեգին Տեր-Հարությունյանի (Նժդեհ) Լեռնահայաստանը, որի մայրաքաղաքն էր Գորիսը, իսկ գործողությունների կիզակետը՝ Ղափանը: Պատմությունը գրելու իրենց հատուկ կամավորությամբ, բոլշեիկյան գիտունները գեթ մի դրական բառ չասացին մեր առաջին հանրապետության հասցեին եւ առիթի դեպքում չարախնդարով՝ ամեն ինչ ծուռ հայելու մեջ ներկայացրին:

1920 թվականին Հայաստանը, իսկ 1921 թվականին Ղափանի շրջանը միացան, թե բռնակցվեցին խորհրդային կայսրությանը:

Մինչեւ 1930թ. սեպտեմբերի 9-ը կոչվել է Ջանգեզուրի գավառի Ղափանի գավառամաս, այնուհետեւ Ղափանի շրջան:

Խորհրդային կայսրությունը, որ Հայաստանը տնօրինեց յոթ տասնամյակ, պատմականորեն ի հայտ եկավ ակնառու հակոտնյա ժայռահեղություններով՝ պետականության բարձրակարգ-ամբողջատիրական կազմակերպմամբ եւ աշխարհից վարագուրված մարդատյացությամբ: Կապանի գավառում ծաղկում ապրեց բազմաճյուղ տնտեսությունը, ստեղծվեց հանքարդյունաբերության համաշխարհային համանուշի ինդուստրիա: Համայնավարների իշխանության արշալույսին արորն էր հերկում հողը, իշխանությունից հեռանալիս հասցրել էին Լուսին թռչել: Սակայն խորհրդային պետական մեքենան ամենագաղտնին ու ամենադաժանն էր աշխարհում: Քարտուղարական իշխանությունը՝ երկերեսանի Յանուսի կերպարանքով, ակնածանքի փոխարեն ստեղծել էր վախի ու երկյուղի, քծնանքի ու կաշառակերության թագավորություն: Պաշտոնները վաճառվում էին կոմունիստական գրասենյակներում:

Ընդսմին տարի առ տարի շրջանի մի զգալի մասը զիջվեց հարեւան Ադրբեջանին, բնակչության մեջ արիեստակաճորեն մեծացվեց թուրքերի թիվը: Չնայած այն բանին, որ Կապանի գավառը (Ղափանի շրջանը) ԽՍՀՄ-ի մետաղահանության խոշորագույն վայրերից էր եւ այն Կրեմլի հատուկ հոգածությամբ մշտապես մոդեռնացվում էր, Կապանի բնակչության սոցիալ-կենցաղային մակարդակը զգալիորեն ետ էր մնում աշխարհի առաջատար պետությունների ցուցանիշներից: Տեսնելով նորօրյա կապանյան շուկան՝ կապանցիներն այսօր են իմաստավորում, թե որքան էին հետ ընկել ժամանակակից աշխարհից:

Խորհրդային իշխանության տարիներին «չտեսնելու տալով»՝ ոչնչացվեցին պատմամշակութային մի շարք հիմնավոր հուշարձաններ, եկեղեցիների գրադարանները, կեղծվեցին ազգային պատմության, ընդ որում՝ նաեւ Կապանի գավառի պատմության բազմաթիվ փաստեր: Հավաստեցյալները մղվեցին ետից պլան. տակավին 20-ական թվականներին ղափանցիները գիտեին «Կրիթոր Լուսավերեչի» տոն, որն ի սպառ մոռացվեց:

Ձեռագիր մասյան. Կապանա տուն



## Կապան տեղանվան ծագման պատմությունը

Կապան տեղանունը վաղնջական ժամանակներից հիշվում է Սյունիքում, Կիլիկիայում, ինչպես նաև Արեւմտյան Հայաստանի այլ վայրերում: Որպես գավառի անուն, այն նշանակում է լեռներով ազուցված՝ կապված երկիր, անանցանելի լեռնակիրճերի բազմությամբ կապանքված երկրամաս: Կապանա տունը մշտապես ծուղակ է եղել թշնամու համար: Մեր հայրենի եզերքը կապել է նրա առաջխաղացումը:

Առ այսօր տեղացիների խոսվածքում կան Սուրուն կապ, Օխուն կապ, Գեղվա կապ, Հուշուֆին կապ ու նման այլ տեղանուններ:

Կապան անունը մեր մատենագրության մեջ հիշված է 5-րդ դարից: Ստ.Օրբելյանի Պատմության Իվ գլխում վկայակոչված է Հովհաննես Եկեղեցապանը, որից պատմիչը միջաբերում է հինգերորդ դարյան մի հրաշք, ընդսմին Կապանից եկած Հովհաննեսին:

10-րդ դարում Կապանը Սյունիքի թագավորության մայրաքաղաքն էր: Կապան մայրաքաղաքը պրոֆ. Թ.Հակոբյանը տեղորոշել է ներկայիս Կապան քաղաքից մոտ 10 կմ դեպի արեւմուտք, Ողջի գետի աջ ափին, «Տանձուն լեռ» կոչվող վայրում:

Գրավոր աղբյուրներում ավանդված է նաև Խաբան, երկիրն Խափանու, Կաբան տարընթերցվածքներով: Ուշ միջնադարում ի հայտ է եկել Ղափան բարբառային տարբերակը: Սա կարելի է բացատրել Կապանի խոսվածքի հնչյունային մի օրենքով, երբ բառասկզբի կ-ն դ է դառնում: Օրինակներ՝ կապ-ղաբ, կուգ-դուգ, Կատար-Ղաթար, կիրգիգ-ղըրղըգ եւ այլն: Այն առավել բնորոշ է արաբերենից եւ թուրքերենից փոխառյալ բառերին, որոնք զգալի թիվ են կազմում բարբառում: Բնակա-

նաբար, դիմակայման ծայնային այս օրենքն ակամա տարածվել է նաև բազմաթիվ բնիկ հայ բառերի վրա: Կապան բառի պ-ն փ է դարձել բառասկզբի դ-ի ազդեցության տակ:

Ստուգաբանելով Բաղք տեղանունը, Սերգեյ Ունառյանն այն դնում է բալ հիմքից, որը հնդեվրոպական ծագում ունի եւ նշանակում է «բարձր, լեռնային երկիր»: Հետեւաբար, ըստ Ունառյանի, Բաղք եւ Կապան բառերը նույնիմաստ են: Ավելին, մեր հայրենակից գրող-բանասերը ցույց է տվել, որ Կապուտջուղ լեռան անունը Կապճյուղ է՝ Կապանի ճյուղ մեկնությամբ:

Պարսիկ աշխարհագիր Հուրդու ալ-Ալամը 10-րդ դարում Կապանը ծաղկող քաղաք է համարել:

Կապան բառը պատահական նմանություն ունի տաճկերենի գափան բառի հետ, որը կշեռք է նշանակում: Դա շինծու ստուգաբանության առիթ է տվել թուրք գիտուններին, որոնց պահվածքը գիտությունը վարկաբեկելուց այն կողմ չի գնում: 5-րդ դարից հիշված բազմաթիվ տեղանուններ 10-րդ դարում Կովկասում հայտնված թուրքերը հարմարեցրել-ստուգաբանել են յուրովի՝ Կապան-Կափան, Երնջակ-Ալինջա, Որդուատ-Օրդուբադ, Կոնստանտնուպոլիս-Ինսթապուլին եւ այլն:



## Կապան գավառի բնակավայրերը

Բաղքի թագավորությունը, ըստ Ստ. Օրբելյանի, իրեն ենթակա ուներ քառասուներեք բերդ, քառասունութ վանք, հազար ութ գյուղ:

Պատմիչի ապրած ժամանակ գյուղերի թիվը Կապանի գավառի տարածքում հարյուրից ավելի էր: Մի քանի գյուղանուններ պահպանվել են մինչեւ մեր օրերը: Եվ, չնայած տարբեր հետազոտողների ջանքերին, հնավանդ գյուղերի

մի զգալի մասն առ այսօր տեղորոշված չէ:

Ստ.Օրբելյանի Պատմության վերջում բերված գյուղացուցակը վերաբերվում է միայն այն գյուղերին, որոնք հարկատու էին Տաթևի վանքին: Դա նշանակում է, որ հարկացուցակը գյուղանունների լիակատար ցանկ չէ: Պատմիչն այլ առիթով, օրինակ, հիշում է Հիմանդրախտ, Կշմատուք գյուղերը, որոնք չկան հարկացուցակում:

Հետազոտողներից ոմանք ենթադրել են, թե հայր Ստեփանոսի գյուղացուցակը, որ աշխատությանն է կցվել 13-րդ դարում, գոյություն է ունեցել Տաթևի վանքի հիմնադրման ժամանակ (9-րդ դար):

Ետին դարերում բազմաթիվ գյուղանուններ հարմարեցվել են օտարախոսների հնչունին, կորցրել նախնական սյունական հնչողությունը:

Խորհրդային ժամանակներում հնավանդ բազմաթիվ տեղանուններ դուրս մղվեցին նորահնար անհեթեթ տեղանունների կողմից՝ Կաթնառատ, Գեղանուշ, Անտառաշատ, Լեռնածոր, Չորաստան եւ այլն: Հանքերը կոչվեցին բուլշեւիզմի գերագույն քուրմ Լեմինի անունով, կոլտնտեսություններն ու խոշոր կառույցները՝ Ստալինի, Չերժինսկու, Կիրովի, Ջափարիձեի եւ այլոց անուններով:

Խորհրդային իշխանության վերջին տասնամյակներում Արփիկ, Շահունյան, Լեմինյան հանքեր բանավանդերը, Կավարտ, Բարաբաթուն, Բաղաբուրջ, Վաչագան, Բեխ, Շհարջիկ, Աչախլու գյուղերը վերառվել են Կապան քաղաքի շրջագծի մեջ, իսկ Աթլըզ, Չորքի Դավիթբեկ, Չեյվա, Վերին Հանդ, Հանքավան, Քաջարանց, Ողջի գյուղերը՝ Քաջարան քաղաքի շրջագծի մեջ:

**ՈՐԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ**



# Մանկավարժություն

## Ռ. Էջանցու հոդվածների, հարցազրույցների, ելույթների ընտրանի

### Մանկավարժական նորարարության մասին

Վերջին տասնամյակներում դպրոցը՝ մեր հարազատ զավակը, մեր ափերի մեջ, կարծես, դարձել է ուրիշինը: Մեր սրտերից ու հոգիներից ճառագած ջերմությունը, հպանցիկ անցնելով մեր ափերի վրայով, չի տաքացնում մեր զավակին:

Սովորույթ է դարձել՝ յուրաքանչյուր գլոբալ հարց, մանկավարժական աշխատանքի ամեն մի բարդ պրոբլեմ շողարկել մեծադրոգ մեկնաբանություններով ու «մարդիկ» քննադատությամբ եւ, դյուզն-ինչ հազուրդ զգալով, դրանք համարել լուծված (ինձ՝ քննարկված): Դե, ուսուցիչ լինելով օժտված ենք պատկերավոր խոսքի մեծ պոտենցիալով ու անմիջական լինելու բացառիկ հատկությամբ եւ ըստ այդմ, ի վերջո, ամեն ինչ որակվում է որպես քաղցր-մեղր ասուլիս: Քանի՞-քանի անգամ մանկավարժական մամուլն այս կամ այն հարցի աշխույժ մախաձեռնումներ է սկսել հատկապես ի արձագանք վերակառուցման համապետական ծրագրի եւ որ այն, քավ լիցի, գուցե թե կրի ժամանակավրեպ բնույթ:

Յետեւելով գիտական հետազոտությունների կաղապարին, երբեմն մախաձեռնում ենք կամ ուսուցման, կամ դաստիարակության, կամ ընդհանուր զարգացման պրակտիկային հուզող պրոբլեմները, ընդհանրացնում ուսուցիչ-անհատների առաջավոր

փորձը (սրա մեթոդն էլ թվարկում-գովերգությունն է): Ընդամին, հետամորեային սուղկերի պես շատացել են դպրոցի վերակառուցման վերաբերյալ առաջարկությունները, որոնք ընդհանուր եզրեր սակավ ունեն եւ աչքի են զարնում էկլեկտիկ բնույթով: Նման մոտեցումը երբեք դպրոցի լավացման օգտին չէ, որովհետեւ սովորում է թողնում հիմնականը:

Անշուշտ լավ չէ, որ ոմանք այն մտայնությունն ունեն, թե մանկավարժական աշխատանքում երբեք նորարարներ չեն եղել կամ թե՛ մախկինում դիտված առաջավոր փորձի դպրոցները էական դեր չեն խաղացել ժամանակակից պրոբլեմների իմաստավորման ու ըմբռնման համար: Նրանք, ովքեր կասկածել են ուսուցման ու դաստիարակության արմատացած մեթոդների արդյունավետության վրա եւ հակված են եղել նորի որոնմանը, նորարարներ են եղել: Իսկ նորարարությունը, չգիտես ինչու, համարվել է գիտական մանկավարժների մոնոպոլ մենաշնորհը, եւ նորարար ուսուցիչը ակամա մնացել է հետին պլանում:

Վերջին տասնամյակներին դպրոցը դիտվել է որպես, այսպես կոչված, ծրագրավորման օբյեկտ ու հեղեղվել «վերին էջերից» եկած հրահանգներով ու պատրաստի դեղատոմսերով: Ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ մանկավարժական պրակտիկայում ծագած պրոբլեմները մենք մերը չենք համարել, որովհետեւ սովորել ենք ապավինել գերատեսչական միջամտության մեթոդին: Մենք վաղուց դադարել ենք մաշվի նստել մանկավարժական աշխատանքի ազգային, տեղային-աշխարհագրական

եւ այլ առանձնահատկությունների հետ: Այդպես մեզ սովորեցրել են:

Դպրոցական գործը բազմաթիվ կողմերով նմանակել է կրկեսային կենդանու վարժանքին (թող ոչ ոք վիրավորվածի կեցվածք չընդունի): Մենք դադարել ենք տեսնել մեր առջեւ նստած մարդուն: Եվ նա այնքան հեռացավ մեզնից (եւ դա էլ նկատելու չտվեցինք), որ հանրակրթական դպրոցում ներհակությունն ու ճգնաժամերը դարձան համատարած ու տեսական երեւույթներ:

Կեղծ լավատեսին չես համոզի, որ մանկավարժական աշխատանքի ինքնատիպությունը կորել է: Դպրոցին ասում են «ուժեղացնել», «արմատապես վերակառուցել», «կանխել»... Տարբեր միմիստություններից ու շրջանային ղեկավար օրգաններից նույնն են ասում եւ՝ արդյունաբերության, եւ գյուղատնտեսության, եւ շինարարության ու մյուս բնագավառների ստորին օղակներին: Արտադրությունում, օրինակի համար, խառատը հաստոցին պարտադրում է որոշակիորեն համակարգված գործողություններ: Այսպիսի պատճենումը սողոսկել է նաեւ դպրոցական հարկը: Արտադրական պրոցեսը՝ դասը, չափազանց շատ է հագեցված աշակերտի՝ որպես մեքենայի հետ աշխատելու տարրերով: Այսպես է հարցնում ենք, բացահայտում, հանձնարարում: Այս ամենին ոմանք զուգակցում են ժպիտն ու առիթնող ծայրը, համբերատարությունն ու պահանջկոտությունը: Այնուհանդերձ, կարծում են, աշակերտ-մարդու հետ գործ ենք ունենում հպանցիկ, անհամակարգ ու... անհոգի-այնքանով, որքանով այն հազիվ թե համապատասխանում է դասական

## Սանկավարժություն

մանկավարժության արարած՝ մանկավարժական պրոֆեսիոնալիզմի պահանջներին: «Այս ենք արել, այն ենք արել» մոտեցումը հանդիպվի դարձել է դպրոցի ճանաչման-գնահատման չափանիշ. դպրոցի դիրեկտորը հպարտանում է իր լսած դասերի քանակով, դասդեկը՝ միջոցառումների թվարկումով, առարկայավարի, դասի ճոխ կազմավորումով ու մշտական պլան-կոնսպեկտներով: Ոմանք էլ գլուխները կորցրել են Շատալովի կամ Պալտիշեի մեթոդների կրկնումից ծագած անհաջողություններից: Խոտորմակին՝ խոտորմակ...

Ընթերցողը, թերևս, ծանծրացավ եւ կանխակալ կարծիքով ինձ համարում է հերթական մեծադիրք ելույթ ունեցողը, որովհետև վերն ասածս, իրավամբ, «դեկլարատիվ» խոսքի տպավորություն է թողնում: Բայց այդ ամենը շարադրել են՝ նախապատրաստելով իմ հիմնական ասելիքը:

Պնդում են, որ դպրոցում պետք է արմատավորել հատկապես սկզբունքներ, իսկ մնացածը թողնել ուսուցիչների (աշակերտների) հայեցողությանը, կանոնարկման ու իրահանգավորման մարմնաջից ձեռնպահ մնալով հանդերձ: Այսօր դպրոցին պետք են ոչ թե դեղատոմսեր ու կանոնարկումներ, այլ՝ սկզբունքներ ու ոճ: Օրինակ առենք պերմանենտ (հայերեն՝ ոչ դիպուկ՝ մշտական եւ ոչ՝ մշտական) մանկավարժական աշխատանքի սկզբունքը: Պերմանենտ մանկավարժություն տերմինը ինքս եմ հորինել եւ, ահավասիկ, պարզաբանում եմ:

Չեր կոնտակտներն ու շփումը աշակերտների հետ պետք է լինեն «հավասարաչափ անմիջական», այսինքն՝ դասի ժամանակ դուք չպետք է երեւաք առավել զգացմունքային, հանելուկային կամ անմատչելի, քան աշակերտների ունեցած այլ հանդիպումներում: Օրինակի համար, եթե դուք մաթեմատիկայի ուսուցիչ եք, ապա ամենուրեք, աշակերտների ներկայությամբ առավել եւս, կյանքը պետք է տեսնեք մաթեմատիկոսի աչքերով: Եվ եթե դուք դասի ժամին սովոր չեք ժպտալ կամ զվարճաբանել, ապա այդպիսին մի եղեք ոչ դասամիջոցներից, ոչ դասերից հետո առհասարակ, որովհետև աշակերտները դա կընկալեն որպես կեղծիք ու արհեստականություն: Երբ ձեզ մոտ դասալսման են եկել, լրացու-

ցիչ ճիգ մի գործադրեք եւ մի հեռացեք ձեր ամենօրյա բնական վիճակից, թե չէ աշակերտ-մարդու աչքում դուք կերեւաք «ոչ վստահելի» մարդու կեցվածքով: Հիշեցեք, որ դուք այն միակ պրիզման եք, որի միջով անցնում են աշակերտի՝ դեպի ուսումնական առարկան տանող հոգու ճառագայթները:

Իսկ եթե դասերից հետո փողոցում կամ գյուղում ինչ-որ առիթով հանդիպում եք ձեր աշակերտ/ներ/ին, «ակնածանք կորզելու կեցվածք» մի ընդունեք. հիշեցեք, որ դուք որդեգրել եք պերմանենտ մանկավարժության «հավասարաչափ, անմիջական» լինելու սկզբունքը:

Կարող եք (դա ինձ հաջողվել է վաղուց) աշակերտին ներշնչել (ոչ թե պարզապես ասել) այն միտքը, որ դուք նրա հետ աշխատում եք... նրա օգտին եւ որ իր անմիջականությունն էլ պակաս օգտակար չէ ձեզ համար (ուսուցիչը սովորեցնելիս միշտ սովորում է): Հենց դասի ընթացքում, թեկուզ անզգուշաբար, չեք ակնարկում ձեր ավագ լինելը, ձեր ասածի անսխալական ու պարտադիր լինելը ու երբեք ձեզ չեք կորցնում (ինձ՝ չեք բարկանում), հիշելով, որ նա չի կատարել տնային հանձնարարությունը, չի կարդացել դասը, չի լուծել խնդիրը: Բայց ամեն րոպե (անզամ տանը, բազմոցին պառկած) ձեզ կկորդադեղդ հետապնդում է դասարանի «ցածր գիտելիքների ու պատրաստվածության» մակարդակը, ձեզ մտատանջում են Արամի ետ մնալը, Նելսոնի ինքնամփոփությունը, Գագիկի խոստումնալից հեռանկարը, Միշիկի վախվորածությունը, բաշխական օրենքի ուսուցման դժվարությունը... Հազար բաներ, ուսուցչական բաներ...

Կոմենսկու ժամանակներից սկսած, մանկավարժական գիտությունը պնդում է, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը դասն է: Նկատի ունեն այն հանրահայտ ճշմարտությունը, որ աշակերտին առավել ինտենսիվ ձևով ներագրելու գլխավոր ժամանակը դասաժամն է: Բայց եթե երկար տարիներ աշխատեք գյուղական միջավայրում եւ ձեր՝ մանկավարժական աշխատանքին սիրահարվածությունը լինի բարձունքում, կհանգեք շատ անսովոր մտքի. միթե՞ դասը հիմնականն է ու զլխավոր: Արդյո՞ք գանգի ռեժիմը չի կաղապարում մեր մտածումն ու երեւակայությունը:

Ամռանը, ճակնդեղի դաշտում, խաղերի միջոցով 4-րդ դասարանցիներին սովորեցրել են դրական ու բացասական թվերի գումարումը, որը նախատեսված է 5-րդ դասարանում անցնելու համար: Ու նաեւ. քաղաքացիության, մարդկայնության, մարդկանց անեմուրեք ուրախություն բերելու պատրաստակամության դասերը (կյանքի դասերը) իմ սաներին տվել են ոչ թե 45 րոպեի կաղապարի մեջ, այլ դաշտում, սարում, լողավազանի մոտ, աշխատանքային դեսանտների ժամանակ, որտեղ փոքրիկ մարդու հետ հաղորդվելու համար կան «առավել ինտենսիվ» հնարավորություններն ու տրամադրող մթնոլորտը: Չգարմանաք, մի աշակերտ հեռախոսով ավելի լավ է ըմբռնում խնդրի լուծումը, քան «կավիճ-գրատախտակ-ուսուցիչ» մեթոդով:

Դասի հնարավորությունները գերազնահատելով ու ֆետիշացնելով, մենք, փաստորեն, բեմական բովանդակություն ենք տվել աշակերտի հետ մանկավարժական հաղորդության ոսկե գաղափարին: Հիմա ինձ ընթերցողը կհասկանա, եթե ասեմ, որ ոչ դասամիջոցն է մերը, ոչ արտաուսումնական ժամանակը: Եվ դրա հիմնական պատճառը դարձյալ դաս-բեմադրությունն է (որքանով այն մերձեցնում է մեզ աշակերտին, այնքանով էլ անջրպետում է մեզ նրանից):

Ահավասիկ մի պարագայում: Թե որ տարիքում ինչի է ընդունակ աշակերտը, թե ինչպես պետք է ղեկավարել նրա մտածողությունը, ինչպես վարվել դաստիարակչական աշխատանքում ծագած դժվարությունը հաղթահարելիս, մեզ ասում են գիտնականների գրած հազարան գրքերը, մեթոդական ձեռնարկները, մենագրությունները: Սա էլ առիթ է, որ ուսուցչական պրակտիկայում զարգանա գրքային մտածելակերպը: Բայց չէ՞ որ ամեն ինչ կարելի է անմիջականորեն իմանալ հենց մեր իսկ աշակերտներից: Դրա նախապայմանը անկեղծ, հոգեհարազատ փոխհարաբերությունն է: «Ո՞ր պահից է քեզ համար սկսում անհասկանալի» սկզբունքն իմ մշտական հարցն է աշակերտությանը (ոչ աշակերտներին): Ու եթե այս հարցադրումը թույլ արձագանք ունենա, ապա առաջին հերթին ինքս իմ աշխատանքը անբավարար կգնահատեմ:

5-րդ դասարանում, որտեղ աշխա-

## Մանկավարժություն

տուն են առաջ անցնող ուսուցման եղանակով (օրացուցային ուսուցման խախտման սկզբունք), դասը սովորաբար սկսվում է աշակերտական հարցերի ու պահանջների տարափով. փորձել են այսինչ համարի խնդիրը՝ չեն կարողացել լուծել, տանը պարզվեց, որ ձեր բացատրությունը խոր չէի ըմբռնել, այսինչ չի լուծումը կասկածում են, այս տիպի օրինակները չեն կարողանում լուծել եւ այլն, եւ այլն: Փոխադարձաբար բոլոր աշակերտները, առանց բացառության, պատասխանում են ինձ հետաքրքրող բոլոր հարցերին (հրապարակավ կամ առանձնագրույցով). ովքե՞ր են հասկացել, սակայն չեն կարող վերարտադրել, կարո՞ղ ես բերել հնարավոր սխալ պատասխանները, ո՞րն է, քո կարծիքով, Ն.-ի չհասկանալու պատճառը, իմ վարմունքում ինչը՞ դուր չի գալիս, տրամադրված ես ավելի դժվար խնդիր լուծել եւ այլն:

Նման իրավիճակը լրիվ բացառում է համահարթեցման արգահատելի երեւոյթը. ծրագրային պահանջների միմիմունմն ապահովում են բոլորը, իսկ առավել ընդունակների համար ստեղծվում է ինքնագարգացման բավարար հեռանկար:

Երբ աշակերտը հիմնովին համոզվել է (դարձել է նրա վարքի նորման), որ ուսուցչի հետ միայն համագործակցելով կարող է հաջողություն ունենալ, նրա համար ուսումնառությունը դառնում է հաճույք:

Համագործակցությունը չպետք է ներառի ցուցանողության գեթ մի հատիկ անգամ: Պատկերացրեք, Գարեգինը դասի ընթացքում հինգ անգամ խոստովանում է, որ չի կարողանում փոխադրիչը գործածել տարբեր իրավիճակներում: Ի՞նչ եզրակացնել: Գարեգինը (խոսքը մեր մեջ) դմբո է: Հեն կարծում: Ուրեմն իմ՝ ուսուցչիս մոտեցումն է անկատարյալ, ուրեմն անհրաժեշտ է գտնել մանչուկի ուղեղում ծագած արգելակման պատճառը եւ այն էլ՝ արագ, հենց այս պահին: Հէ՞ որ նրա համար ճգնաժամային իրավիճակ է, սպասում է նաեւ դասարանը: Հետո՞ ինչ, որ այդպիսի բարդ իրավիճակներ չեն կանխագուշակել պլան-կոնսպեկտում, չեն նախատեսել: Համարձակություն կունենա՞ Գարեգինը՝ արտաուսումնական ժամանակում գոնե զանգահարել ինձ կամ, ասենք, ինձ գտնել գյուղում որեւէ տեղ

ու հիշեցնել փոխադրիչի գործածման մասին (պերմանենտ համագործակցության սկզբունք):

Համագործակցության չափանիշները պարզ ու գործնական են, այդ պատճառով՝ դույզն-ինչ անսովոր: Կարելու է այն է, որ դրանք բացառում են ակադեմիզմը: Ահավասիկ մեր սահմանած չափանիշներից մի քանիսը.

ա) երբ ուսուցիչը բացակայում է, աշակերտներն ազատ մնալու համար չեն ուրախանում, այլ դասն անց են կացնում ինքնուրույն, սակայն ուսուցչի կարիքն ամեն ինչով զգալով,

բ) աշակերտի համար դպրոցում լինելը եւ ուսուցչիցների հետ շփվելը երանական ժամանակ է (երբեմն մեր դպրոցում աշակերտներն ու ծնողները լինում են մինչեւ երեկո),

գ) «սպասվածից» շատ են աշակերտական առաջարկությունները, նախաձեռնություններն ու քննադատությունը,

դ) միմյանց ներդաշնակում են աշակերտների փոխադարձ պահանջկոտությունն ու միմյանց կարեկցելու-օգնելու տրամադրվածությունը:

Հիրավի, եթե համագործակցությունը ճշմարիտ կեցվածք է ընդունել, ապա գիտեք բոլոր տարիքի աշակերտների «գաղտնիքները», չէ՞ որ նրանք ձեզ հետ բացախստում են ձեզ հետաքրքրող (եւ չհետաքրքրող) բոլոր հարցերի շուրջ: Այդ դեպքում էլ ի՞նչ կարիք կա հատկապես գիտական հրապարակումներից իմանալ, թե, «մերօրյա երեխաները ինչով են տարբերվում տասնամյակներ առաջ սովորած երեխաներից», աքսելերատների մասին տեղեկություններ հավաքելու համար գրքույկներ ու թերթեր փորփրել (իմիջիայլոց, աքսելերացիան սուտապատում է, զուտ կաբինետային հորինվածք):

...Համագործակցության մարդասիրական սկզբունքը համառորեն կիրառելով, ուսուցիչը դառնում է մանկության իսկական բարեկամը, նրա փառավոր հոգեւոր պետը: Ումանք, հատկապես հին սերնդի ուսուցիչների մի մասը, դեմ են համագործակցության մանկավարժությանը (պերմանենտիզմին): «Հի կարելի, - ասում են, - շատ մերձենալ աշակերտին, չափ ու սահման կա»: Այսպես մտածողները, ակներեւ է, տուրք են տալիս այսպես կոչված մանկավարժական վուլգարիզմին: Ոչ ոք չի պնդում, թե ուսուցիչը պետք է իջնի բարձունքից:

Կյանքն ինքն է հրամայական պահանջ դրել՝ մանկավարժությունը պետք է լինի ավելի մարդասիրական: Իսկ մարդասիրացման պրոցեսն անվերջ ու անհատակ է: Այն միշտ պետք է պարուրի կյանքը, դպրոցն ու մանկությունը՝ առավել եւս:

Հները սիրում են վիճարկել, թե մանկավարժությունը որ բնագավառի հետ ավելի շատ ընդհանրական եզրեր ունի՝ գիտությամբ, թե՞ արվեստի: Հիմա էլ, իբրեւ թե այդ անհամ բանավեճը դպրոցին զգալի օգնություն է բերել, նիհիլիստը ինքնագոհ չարախնդուն է անկյունից՝ տեսեք, տեսեք, գիտության ու արվեստի կոլտուրան հավասարեցնում են արհեստի: Ջարմանում ես, իսկ ի՞նչ վատ է, որ ինչ-որ տեղ մանկավարժությունը արհեստ լինի: Ելնելով արհեստավորի չափանիշներից, մի՞թե ներելի է, որ ուսուցիչը չունի ընտիր-մարգարտաշար ձեռագիր, վարժ չի բանեցնում դասարանական կարկինը, ծրագրավորող սարքը, կինոապարատը, չունի գրավիչ խոսքի ձիրք ու շնորհք...

«Աշակերտի հետ անկեղծ լինելու վտանգի» մտայնության պատճառն այն է, որ իրավամբ փորձաշատ ու տարեց ուսուցիչը դժվար թե կարողանա հրաժարվել իր երկարամյա «փորձ ու մեթոդից» (հարմարվել է, հետեւաբար դյուրին է): Մյուս կողմից, դպրոցը, կատարելով հասարակության սոցիալական պատվերը, չի կարող ետ մնալ կյանքից:

Կան նաեւ այլ դրդապատճառներ: Ուսուցիչը չի կարող օժտված չլինել ամենամարդասիրական հոգեւոր բարեմասնություններով: Երեխան՝ ընտանիքի բալիկը, ծննդյան օրվանից սեր ու զուրգուրանք է վայելում: Նրա ճերմակ բարուրը ինքնին սիմվոլիկ է նաեւ՝ հասարակության հոգատարության գերագույն մարմնացումը: Արդ, մի՞թե մարդկային է, որ դպրոց գալով, նա դառնում է «ինչ-որ մեկը», այլ ոչ՝ մեր հոգեհարազատ զավակը (թեկուզ մնալով ուրիշի երեխա), մեր ուրախություններն ու կյանքի իմաստն իրենով պայմանավորող երկրի ապագա քաղաքացին:

**13 հոկտեմբերի 1987թ.**



## Մանկավարժություն

# Ինչպես ես ապրում, գյուղական դպրոց

### Դպրոցի փնտռությունը

Վերակառուցման հովերը դանդաղ են հավակնում մեղմել այն ծանրությունը, որ պատճառում է դպրոցական տնտեսությունը կրթական գործին: Ասե՛ք՝ ծանրություն ասածը ինչ-որ տեղ հաղթահարելի է: Խոսքն այստեղ անել վիճակների մասին է, որին առաջին հերթին բախվում են դպրոցների ղեկավարները:

Թվում է, թե դպրոցում կան, այսպես կոչված, ոչ մանկավարժական օղակներ: Դա պատրանք է: Օրինակի համար, վաղուց մեր դպրոցում հավաքարարների համակազմը յուրահատուկ համագործակցություն ունի մանկավարժական կոլեկտիվի հետ եւ գրեթե «մանկավարժական ֆունկցիա» է կատարում (մասնակցություն սովորողների առողջության եւ հիգիենայի կազմակերպման աշխատանքներին, զբարստության խորհրդի աշխատանք եւ այլն):

Ընդհանուր առմամբ դպրոցական տնտեսության մեջ ներգրավված բանվորական համակազմը դաստիարակչական աշխատանքի մեծ պոտենցիալ ունի:

Մենք դպրոցի առջև ծառայած արդիական խնդիրներից կարելու էր ենք եւ այն, թե որքանով է դպրոցական բանվորը հաճուքով կատարում իր աշխատանքը, որ դրանով իսկ սատար լինի դպրոցի մեծագույն պրոբլեմի լուծմանը՝ ֆիզիկական աշխատանքի նկատմամբ սեր ու հարգանք դաստիարակելուն:

...Հնոցապանը գրուցում է աշակերտների հետ: Պարտականություններն է թվարկում. ձեռնասայլակով ներս է տանում քարածուխը, հետեւում հնոցին, տաք ու թունաշունչ խարամն է ջրկում եւ տեղափոխում, հսկում է էլեկտրաշարժիչների աշխատանքը, ջրասնուցումը, կափույրների փաթաթաններն է փոխում: Մի խոսքով,

հանգիստ չունի: Աշխատում է ցերեկ ու գիշեր, իսկ երբ վթարներ են լինում... Այս ամենի համար նա վաստակում է ութսուն ռուբլի, իսկ աշխատավարձի տարեկան միջինը կազմում է քառասուն ռուբլի (սեզոնային աշխատանք է):

Աշակերտները գիտեն նաեւ հավաքարարի աշխատանքի «մանրամասները» եւ կարեկցաբար միշտ օգնում են նրան: Նա մաքրում է 500 քառ. մ մակերես, քուրքով մշակում է լվացարանակոնքերը, դասամիջոցներին լաթերն ու գորգիկներն է թափ տալիս, վերցնում է ծակուծուկների փոշին, աղբն է հեռացնում... Եվ այսպես՝ յոթ ժամ: Նա էլ ամսական վաստակում է յոթանասուն ռուբլի: Գյուղական դպրոցում սպասարկող անձնակազմից յուրաքանչյուրի աշխատավարձը չի գերազանցում ութսուն ռուբլին: Դե, արի ու տուն պահիր... Պարզ չէ՞, որ դպրոցական բանվորը ապատրամադրելու է դպրոցականներին դեպի աշխատատար եւ ցածր վարձատվող աշխատանքը:

Եվ խոսքը միայն բանվորների աշխատավարձի մասին չէ:

Տարիներ առաջ մեկնարկած եւ հետագայում «տեղապտույտ անող» որակված ռեֆորմը պահանջ էր դրել դպրոցական պայմանները մերձեցնել տնայինին: Այդ տողի հեղինակը, հավանաբար, չէր պատկերացնում, թե ինչ անորոշության է մղում դպրոցին: Ո՞ւմ տունն էր նկատի առնվել: Չէ՞ որ մեզանում կան հարուստների, փարիսեցիների, գեփողների եւ ազնիվ մարդկանց տներ:

Մոսկվայում, համագումարի օրերին, մեզ մի դպրոց տարան, որը շլացնում էր ընտիր կահույքով: Ինքս գնացի եւ դուրս եկա... թշվառությանը կարելի էր ցելով: Անհամաչափ կահավորանքն ամենուրեք է: Բայց կասկած չունեն, որ մեր՝ Ղափանի շրջանի բոլոր դպրոցները շատ աղքատ են կահավորված: Ցավալին այն է, որ ամեն ինչում չափանիշը հարաբերական մոտեցումն է. չգիտենք՝ աղքատ ենք ո՞ւմ հետ համեմատած: Մի բան պարզ է, չկա մի դպրոց, որը լրիվ ապահովված լինի անհրաժեշտ գույքով: Ցավ է պատճառում այն, որ դպրոցները չունեն գույքի պարբերաբար նորացման ու հարստացման հուսալի ծրագիր:

Անկեղծ ասած, իմ չափանիշը գերազանց սպասարկումն է: Դպրոցը պետք է ուրախություն պատճառի մարդկանց, առինքնի կահավորվածությամբ

եւ հարմարավետությամբ: Հիմա դպրոցում ստացվող կահույքն ավելի շատ ատաղձահումք է հիշեցնում: Միայն տեղափոխման ընթացքում այն կորցնում է ապրանքային տեսքը, իսկ ցածր որակի պատճառով երկար չի ծառայում: Ներկված են առանց մանկավարժական դիզայնի պահանջների, երբեմն փաթեթավորման մեջ բացակայում են միայն գամերն ու ճարմանդները, պահարանների ապակիները:

Այս տարի տնտեսական ապրանքներ գնելու համար մեր դպրոցը ժողկրթաթմնի միջոցներից ստացել է 300 ռուբլի: Դրանով հիմնականում պետք է գնենք մաքրող նյութեր եւ դպրոցական տնտեսությանն անհրաժեշտ ապրանքներ, որոնց ցանկը խիստ սահմանափակ է: Եվ, եթե ջանաս փաստաթղթերը պատրաստել (աստված հեռու տանի թղթերի դիկտատուրան), ապրանքը կարող է խանութում չմնալ, լիմիտը կարող է սպառվել, փաստաթղթերի գործածման ժամկետը կարող է անցնել, տեղափոխման համար ճանապարհները կարող են փակվել...

Օրինական հարց է ծագում: Ինչո՞ւ դպրոցին չվերապահել կանխիկ առևտրի իրավունք: Չէ՞ որ փաստաթղթային արգելքներն ու կանոնարկումները երբեք չեն երաշխավորում ակնկալվող խախտումների վերացումը: Իսկ վստահելը, հրապարակայնության արդի պայմաններում, դպրոցին պետք է օրի ու ջրի պես:

Պետք է հրաժարվել կես հաստիքների տխրահռչակ պրակտիկայից: Պատկերացրեք, մեր դպրոց-մանկապարտեզի համար, որն ունի ութ դասարան, երկարօրյա ուսուցման մեկ խումբ, նախադպրոցականների մեկ խումբ, նախատեսված է տնտեսվարի կես հաստիք: Ո՞վ կդիմի 40 ռուբլանոց աշխատանքի համար: Նույնպես կես հաստիքներ են նախատեսված պիոներական ջոկատավարի, գրադարանավարի, արտադասարանական խմբակի ղեկավարի, երկարօրյա ուսուցման խմբի հավաքարարի համար, երաժշտական ղեկավարի համար՝ կեսի կես հաստիք: Բնական է դատել, որ գյուղական դպրոցը այդ եւ

## Մանկավարժություն

մնացած 70 ռուբլանոց հաստիքների համար պետք է փնտրի... թոշակառուների: Որքան էլ մեծ լինի հարգանքը թոշակառուների նկատմամբ, կարծում եմ, ոչ մի կոլեկտիվ չի համաձայնի ունենալ թոշակառու ջոկատավար:

**II** Այս պարագային էլ, ինչպես տեսնում եք, դպրոցի նկատմամբ գործում է մնացորդային սկզբունքը՝ գյուղական դպրոցը հայտնվել է կադրային կապանքների մեջ: Ինչո՞ւ ենք խնայողության համապետական պահանջը աչք ծակելու պես առաջին հերթին փաթաթել դպրոցի պարանոցին:

Դպրոցական տնտեսությունը բնորոշվում է յուրահատուկ դիմամիզմով: Այն ենթակա է մշտական նորացման ու փոփոխման: Դե, երեխաների հիմնարկ է, անհրաժեշտ է մերթ քաղիքը ներկել, մերթ գաջել պատին օրինագանց մեկի կողմից փորված ակոսը, պաստառապատել ննջարանի պատերը (գոնե մոդայից հետ չընկնելու համար), վերաներկել չքավոր շինարարի տհաճ ներկած խողովակը, եռակցումով նոր ջրացայտիչ դնել... Իսկ որտեղի՞ց գտնել անհրաժեշտ նյութեր կամ, որ կարելու է, ինչպե՞ս գտնել: Ո՞ւմ միջոցով կազմակերպել աշխատանքները: Աշակերտների՝ (14-ից բարձր տարիքի): Այդ դեպքում պետք է հոգալ աշակերտին վճարելու մասին: Նման տնտեսավարկի համար դպրոցը վաղուց պատրաստ է եւ հասունացել է ժամանակը՝ համապատասխան ֆինանսական վերապահում անելու համար: Դպրոցին նաեւ պետք է վերապահել առանձին աշխատանքների համար գործավարձային վճարման իրավունք:

Խոր մտահոգություն է պատճառում սարքերի եւ գործիքների շահագործումը: Բանն այն է, որ, օրինակի համար, տասը տարի առաջ գնած 150 ռուբլանոց հաստոցը, որ արդեն խափանվելու վերջին միտումն ունի, առմիշտ 150 ռուբլի արժե: Անգամ տարիներ առաջ գնած 220 ռուբլանոց միկրոհաշվիչը դպրոցի հաշվեկշռում այդ գինն ունի, թեպետ այն վաղուց էժամացել եւ խանութում վաճառվում է 40 ռուբլով: Այս երեւույթը դպրոցի հասարակության խաբկանք է ստեղծում: 20-30 տարվա հնաճ պա-

հարանները, 15-20 տարեկան հեռուստացույցները, արտադրությունից հանված կինոապարատները, պահեստային դետալներ չունեցող բազմաթիվ սարքեր, դպրոցական տնտեսության բնորոշ կոլորիտներ են:

Վերջապես մեր ժամանակներում ավելի շատ դպրոցներ են դառնում դեպի նյութական արտադրության ոլորտը. այգի-բանջարանոցները, օժանդակ տնտեսությունները, կապի ստանձնումը հատուկ են զգալի թվով դպրոցների: Իսկ ինչպիսի՞ն է մեխանիզմներով ու տեխնիկայով ապահովվածությունը: Դպրոցը չունի մեքենայական վառելիքի հստակ որոշված ֆոնդ: Այս հարցում էլ նա շարունակում է բազային ձեռնարկության խնդրատու լինել: Իսկ բազայինները, համատարած ինքնաֆինանսավորման անցնելով, շարունակում են նոր պատճեններ դնել դպրոցի առջեւ...

...Սովորաբար խմբագիրները խորհուրդ են տալիս հոդվածն ավարտել եզրահանգումներով: Այս անգամ թող լինի այսպես. թող վերին էջերում մտորեն, թե ինչու գյուղական դպրոցի դիրեկտորը ստանձնում է մերթ վերանորոգող բանվորի, մերթ բազաներից գնումներ կատարողի դեր: Թող մտորեն եւ գործեն:

15.06.1989թ.



## Մանկավարժական լավատեսության մասին

**8**-րդ դասարանցի Արմենը չի ցանկանում դպրոց գնալ: Հանրահաշվից հերթական «2»-ն է ստացել, վիճել է ուսուցչի հետ: Ուսուցիչը նրան 20 րոպե պահել է գրատախտակի մոտ եւ հարցերի տարափով ամբողջ դասարանին հա-

մոզել, որ Արմենը չի իմանում լուգարիթմական ֆունկցիայի հատկությունները: Իսկ Արմենն այն կարծիքին է, թե ինքը գոնե բավարար գիտի դասանյութը: Այդ մասին նա պատմել է ծնողներին, բողոքել ուսուցչից: Իսկ այժմ նա չի ուզում դպրոց գնալ... Ավելի հուզիչ է 10-րդ դասարանցի Ա.Ա.-ի օրագրի մի հատվածը: Նա օրագիր սկսել է պահել այլ դպրոց տեղափոխվելուց հետո. «Գրեթե յուրաքանչյուր կաթինետում նստում էի վերջին նստարանին: Ինձնից ոչ ոք լավ բան չէր սպասում: Ճանաչված էի որպես վատ սովորող եւ անկարգությունների հեղինակ: Ընկ. Ս.-ն եւ ընկ. Կ.-ն միշտ անվանարկում էին իմ բոյը: ...Երբեմն պատրաստ էի դասարանին ուղղված դժվար հարցին պատասխանելու համար առաջինն ինքս ձեռք բարձրացնել, սակայն դրանից ի՞նչ օգուտ, երբ ի վերջո պետք է արժանայի կշտամբանքի: Չստուգված բոլոր գրավորներիս տակ հայտնվում էր «2»-ը»: Այս օրինակների մանկավարժական վերլուծությունը մտորումների տեղիք է տալիս: Առանձին ուսուցիչներ ու դասղեկներ տրտնջում են ընտանիքի «պասիվ» դերից, նույնիսկ իրենց անհաջողությունները պայմանավորում են ընտանիքով (նաեւ՝ երեխաների մերձավորներով): Դաստիարակության իրականացման առաջնությունը պատկանում է դպրոցին: Երեխաների դաստիարակությունը կազմակերպելու խնդրում ընտանիքը ենթարկվում է դպրոցին՝ ղեկավարվում նրա «ղեկատվությամբ» եւ համագործակցում նրա հետ: Ընտանիքի դերի գերազնահատումը ուսուցիչ-դաստիարակի ակտիվ գործունեության ակամա նվազեցման, ինքնահանգստացման նախապայմանն է:

**II** Ծնողական ժողովից հետո ծնողներից մեկը մոտեցավ դասղեկին: Նրան հուզում էին իր երեխայի ցածր գնահատականները:

- Թուլացրել եք հսկողությունը, - բացատրում է դասղեկը եւ խորհուրդ տալիս ուշադիր լինել, - եւ «4»-ի կիսացնի...

Եվ ի՞նչ է ստանում ծնողը այս անորոշ խոսքերից: Նրա մեջ ամրակայվում է այն մտայնությունը, թե երեխայի առաջադիմության համար վճռական դերն իրենն է: Նա պետք է հետեւի երեխայի առողջությանը, կերակրի ու

## Մանկավարժություն

հագցնի նրան, բարելավի կենցաղային պայմանները: Բայց ինչպես «ուշադիր լինի, որ «4»-ի հասցնի»: Եվ նա, ստիպված, գործադրում է դաստիարակության իր մեթոդները, որի արդյունքները կարող են լինել անցանկալի:

Կյանքը համոզում է, որ առանձին ուսուցիչներ մակերեսային կամ ոչ ճիշտ են ընկալում դաստիարակության մեջ իրենց առաջնային դերի էությունը: Ուսուցման պրոցեսի դաստիարակական նշանակությունը ետին պլան մղելով, նրանք վնաս են հասցնում ուսումնադաստիարակական աշխատանքների կոմպլեքսայնությանը: Նման ուսուցիչներին, որպես կանոն, միայն հետաքրքրում է՝ աշակերտը գիտի՞, թե՞ չգիտի: Այս մասին լավ է ասել Վ.Սուխոմլինսկին. «Ուսումնադաստիարակական աշխատանքի պրակտիկայում շատ ուսուցիչների համար «գիտենալ», նշանակում է կարողանալ պատասխանել առաջադրված հարցերին: «Գիտենալ» հասկացության նկատմամբ նման հայացքն ուսուցչին մղում է դեպի աշակերտների մտավոր աշխատանքի եւ ընդունակությունների միակողմանի գնահատումը»: Այնուհետեւ մեծ մանկավարժը եզրակացնում է, որ նման դեպքում տարեցտարի աշակերտի համար սովորելը դառնում է ավելի ու ավելի դժվար, եւ տալիս է այսպիսի գործնական խորհուրդ. «Ձգտեցեք այն բանին, որ սովորողների գիտելիքները լինեն ոչ թե վերջնական նպատակ, այլ միջոց, որ դրանք չդառնան անշարժ, մեռյալ բեռ, այլ գործեն դպրոցականի մտավոր աշխատանքում, դպրոցականների փոխհարաբերություններում, հոգեւոր արժեքների փոխանակման այն մշտական պրոցեսում, առանց որի չի կարելի պատկերացնել լիարժեք մտավոր, բարոյական, հուզական, գեղագիտական զարգացում»:

Վերջերս մեր շրջանի բարձր դասարանցիների հավաքում աշակերտները պատմում էին այն վայ մանկավարժների մասին, ովքեր գիտելիքների ստուգումը ծառայեցնում են սովորողներին «ծնկի բերելու», նրանց «համառությունը» հաղթահարելու, նրանց մտեմացնելու նպատակին: Ուսումնադաստիարակական պրոցեսը չի կարող ընթանալ նորմալ, եթե աշակերտը չի համոզվում, որ ուսուցիչն իր հավատարիմ, մեծահոգի բարեկամն է, որ նա ամեն առիթ գործադրում է ուրախանալու և

աշակերտների հաջողություններով: Իսկապես ինքնանպատակ է, երբ ուսուցիչն առաջին պլան է մղում սովորողների ավելի շատ պատրաստի գիտելիքներ տալու, դաստիարակության «բանաձեւերին»:

**II** *Այսօր մանկավարժական միտքը առաջնահերթ խնդիր է համարում սովորել սովորեցնելը, ինքնադաստիարակումը: Դրանք, ինչ խոսք, հաջող քննություն են բռնում բազմաթիվ առաջավոր դպրոցներում եւ ուսուցիչների պրակտիկայում: Գույժ կարելու պարբեր է հատկապես ուսուցչի եւ սովորողների հարաբերությունների զարգացումը: Այս հարցում իր ամբողջ կարեւորությամբ վեր է հանում ուսուցչի (դաստիարակի) մանկավարժական լատենտությունը, որի էությունը սովորողի իմացական հնարավորությունների նկատմամբ հավատի մշտական դրսեւորումն է:*

Իսկ արդյո՞ք բոլորն ունեն այդ հավատը: Հաճախ մենք տարբեր ուսուցիչներից լսում ենք որեւէ աշակերտի մասին այսպիսի արտահայտություններ. «Նրանից բան դուրս չի գա», «Մինչեւ համծնարարությունն չկատարի՝ «3» չեն նշանակի», «Նրան բարձր գնահատական նշանակել չարժե» եւ այլն: Թերթում ենք դասամատյանները: Սովորողների ճնշող մեծամասնությունը առարկայից զարմանալիորեն միատարր գնահատականներ է ստանում՝ կամ միայն «3»-ներ, կամ՝ «4»-եր, «5»-եր: Վատ սովորողները, հատկապես քառորդների վերջերին, «փայլում» են մի քանի ժլատ «3»-ներով: Պարզապես ուսուցիչը ղեկավարվում է այն կանխակալ կարծիքով, թե այս աշակերտը միջակ սովորող է, եւ անսովոր կլինի նրան «3»-ների հետ նաեւ «4» կամ «5» նշանակել:

Աշակերտ Ն.Յ.-ն մինչեւ 7-րդ դասարանը կարծես ոչնչով աչքի չէր ընկնում մաթեմատիկայից: Այդպես էր թվում ինձ: Նա մյուս առարկաներից էլ էր ետ մնում եւ միշտ արժանանում էր ուսուցիչների կշտամբանքին: Նկատեցինք, որ նա մաթեմատիկայի դասընթացի առանձին ենթաթեմաների նկատմամբ

տարբեր նախասիրություններ է դրսեւորում: Այսպես, ծանծանում էր «Գծային անհավասարություններ» թեման սովորելիս, իսկ «Քառակուսի արմատ» թեման սովորեց մեծ հետաքրքրությամբ: Առաջին թեմայի ստուգողականից սովորականի պես «2» ստացավ, իսկ երկրորդից՝ «4»: Նրա անվան դիմաց գրանցվող «2»-ների միատարրությունը խախտվեց: Դասամատյանում հայտնվեցին «3», «4» եւ անգամ «5» գնահատականներ: Դրա հիմքում միայն քաջալերանքը չէր ընկած, ինչպես կարելի է կարծել: Գաղտնիքը մանկավարժական լավատեսության մեջ է: Հասնելով այն բանին, որ Ն.Յ.-ն (եւ ոչ միայն նա) մտավ գրույցների անկաշկանդ մթնոլորտը, պարզեցինք նրա՝ ուսումնական նյութից մտավախություն ունենալու պատճառները, մաթեմատիկական սովորելիս՝ մտավոր հնարների ստեղծման ուրույն եղանակները: Պարզ դարձավ, որ նրա վրա վատ է անդրադառնում առանձին համադասարանցիների վերաբերմունքը: Նրան վանում էին նաեւ առանձին ուսուցիչների դասերի միապաղաղությունը, գրոհայնությունն ու «հատու» պահանջկոտությունը: Ն.Յ.-ն ութամյա դպրոցի մաթեմատիկայի դասընթացն ավարտեց «4» (երկրաչափություն) եւ «5» (հանրահաշիվ) գնահատականներով: Գ.Շչուկինան գրում է. «Աշակերտի, նրա իմացական հնարավորությունների նկատմամբ հավատը, ինչպես դա ապացուցել է թե՛ հոգեբանությունը, թե՛ դպրոցական պրակտիկան, ոչ միայն դպրոցականի իմացական հետաքրքրության, այլեւ նրա բարոյական զարգացման խթան է»: Դժվար չէ համոզվել, որ դեռահասների ուսումնական անհաջողությունները՝ կապված ուսուցչի՝ նրանց նկատմամբ ունեցած պասսիվ դերի, առնականման հետ, տեղիք է տալիս վարքի անհանգստացնող շեղումների, բացասական ազդեցություն գործում նրանց դիրքորոշման եւ ընդհանրապես աշխարհայացքի վրա: Դժվար թե ուսուցչի կողմից հոգատարություն չկալելով, նրանից միայն պահանջներ լսող աշակերտը կյանքում օժտված լինի քաղաքացիական մեծ ակտիվությամբ, հեռու կանգնած լինի սպառողական արգահատելի տրամադրությունից:

Շատ կարելու է ուսուցչի (դաստիարակի) աշխատանքային գործունեության գնահատման գլխավոր չափանիշներից մեկը համարել նրա մանկավարժական

## Մանկավարժություն

լավատեսությունը: Ուսուցչի կոչման վեհ առաքելությունն է ամեն վայրկյան իր նախածեռնության բարի աջակիցներ դարձնել իր բոլոր սաներին եւ նրանց մղել սեփական նախածեռնության դրսևորման: «Լավ ուսուցիչը ամենից առաջ այն մարդն է, - գրում է Վ.Սուխոմ-լինսկին, - ով սիրում է երեխաներին, բերկրանք է ապրում նրանց հետ շփվելիս, հավատում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է լավ մարդ դառնալ, կարողանում է բարեկամանալ երեխաների հետ, սրտին մոտ է ընդունում մանկական ուրախությունն ու դառնությունը...»:

**II** *Ոմանց թվում է, թե աշակերտը պարտավոր է միայն սովորել, «գիտենալ», ինչպես ասում է Սուխոմլինսկին: Եվ շուտով նրանց ու սովորողների միջև հասունանում են կոնֆլիկտներ: Սկսնակներից ոմանք ապակողմնորոշվում եւ տրամադրվում են թողնել մանկավարժական աշխատանքի քնազավառը:*

Մանկավարժական լավատեսությունը ուսումնադաստիարակչական պրոցեսի արդյունավետության համար կարևոր դեր է խաղում, այդ պատճառով մանկավարժական աշխատանքի անբաժան ուղեկիցը պետք է լինի այն:

Մեր ուսուցիչները, մանկավարժական կոլեկտիվները ուսուցման պրոցեսում պետք է աշակերտին պատվաստեն ստեղծագործաբար մտածելու, փաստերն ու երեւոյթներն իմաստավորելու ունակություն, հայտնաբերեն յուրաքանչյուր աշակերտի ներքին պոտենցիալ կարողությունները: Եվ, իրոք, աճող սերնդի կրթության ու դաստիարակության հաջողությունը, ամենից առաջ, պայմանավորված է ուսուցչի բանիմացությամբ ու պրոֆեսիոնալ վարպետությամբ, իր գործին մեծ ու անհատնում, ես կասեի՝ հավերժ երիտասարդ սիրահարվածությամբ, երեխայի բարդ, հաճախ շատ հակասական հոգեկան ու մտավոր աշխարհը թափանցելու կարողությամբ: Իր գործի խորագիտակ ուսուցիչը միայն կարող է այնպես անել, որ ուսուցման պրոցեսում աշակերտը ձեռք բերի հիմնավոր, կայուն գիտելիքներ, որ ուսումը նրա համար լինի ոգեշունչ աշխատանք, հոգեւոր բերկրանք, սովոր-

րողը խորապես զգա, որ իր առջեւ բացվում է գիտելիքների մեծ ու անսահման աշխարհը, գիտելիքներ, որոնք օգնում են նրան՝ ճանաչելու կյանքը, դառնալու նոր հասարակարգի կառուցման ակտիվ մասնակիցը: Հանրապետությունում քիչ չեն մնան ուսուցիչները. Աշտարակից՝ հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ Ռ.Պապիկյանը, Ղափանից՝ մաթեմատիկայի ուսուցիչ Ռ.Գրիգորյանը, Կամոյից՝ ռուսաց լեզվի ու գրականության ուսուցչուհի Ի.Աստվածատուրովան, Եղեգնաձորից կերպարվեստի ուսուցիչ Չ.Մինասյանը, Երեւանից՝ N30 դպրոցի պատմության ուսուցիչ Յ.Բաղդասարյանը եւ շատ ուրիշներ, որոնք իրենց բարեխիղճ ու ստեղծագործական աշխատանքով կրթում, դաստիարակում են արտադրության առաջավորին, վաղվա բժշկին ու արվեստագետին, բնագետին ու տնտեսագետին, ճարտարապետին ու հասարակական գործչին:

1977թ.



## Հայ մաթեմատիկական մշակույթը եւ նրա դասավանդումը

**Գ**իտություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է լինում, թեկուզ համառոտ, ծանոթանալ նրանց պատմությանը: Դա լույս է սփռում այս կամ այն պրոբլեմի պարզաբանման վրա, սովորեցնում է ծավալել բազմակողմանի ուսումնասիրություն:

Ամեն մի ուսուցիչ գիտի, թե որքան օգտակար է իր դասավանդած առարկայի պատմության էական հարցերի գիտական քննությունը:

Առիթմնող ուժ ունի մաթեմատիկայի պատմությունը: Այն համաշխարհային մասշտաբով բավականին ուսումնասիրված է եւ ամփոփված համրամատչելի գրականության մեջ: Միանգամայն տեղին է, որ դպրոցական դասագրքերում

զետեղված են հավելվածներ ու ծանոթագրություններ՝ մաթեմատիկոսների ու դասական մաթեմատիկայի մասին:

Սակայն դասավանդման ընթացքում ուսուցիչները սակավ են անդրադառնում կամ նույնիսկ չեն անդրադառնում հայ մաթեմատիկական մշակույթին: Հանրակրթական դպրոցի աշակերտները գիտեն Անանիա Շիրակացու կամ Ժամանակակից հայ մաթեմատիկոսների անունները միայն: Տարիների փորձի հիման վրա հանդգնում ենք, որ 4-10-րդ դասարանների գրեթե բոլոր աշակերտները մեծ ցանկություն ունեն ուսումնասիրելու հայ մաթեմատիկայի գիտական պատմությունը:

Մաթեմատիկայի խմբակի պարապմունքներից մեկի ժամանակ պատմեցի, թե ինչպես կարելի է հետաքրքրող հարցի մասին համադրումներ անել գիտական աշխատությունների օգնությամբ: Մեր ձեռքի տակ ունենալով պրոֆ. Գ.Պետրոսյանի «Մաթեմատիկական Հայաստանում հին եւ միջին դարերում», (Երեւան, 1959 թ.), Ա.Աբրահամյանի «Հայոց գիր եւ գրչություն» ու այլ աշխատություններ՝ աշակերտներին տրամադրեցի ինքնուրույնաբար ծանոթանալ Անանիա Շիրակացու գիտական կենսագրությանը, այբուբենի թվական նշանակությանը, մեր կաբինետի նախարահում զետեղել էինք գերմանացի մաթեմատիկոս Կ.Ֆ. Գաուսի խոսքերը. «Մաթեմատիկական գիտությունների թագուհին է...»: Գիտական աշխատություններից մեկը հնարավորություն ընձեռեց «հայտնաբերելու» հայ մշակույթի ինքնատիպ հանրագիտարանի՝ Շիրակացու համանման զեղեցկությամբ հնչող բառերը (Շիրակացին ապրել է Գաուսից 11 դար առաջ): Աշակերտներին բացատրեցի, որ հնում մաթեմատիկական կոչվել է նաեւ արվեստ համարողական, իսկ մաթեմատիկոսը՝ համարող: Շիրակացու այդ միտքն էլ պատանի մաթեմատիկոսներն ընտրեցին որպես մաթեմատիկական ակունքի նշանաբան եւ զետեղեցին գիտնականի նկարի կողքին:

Այբուբենի թվական նշանակության հարցն ուսումնասիրելիս պատմեցի պրոֆ. Հր. Աճառյանի մասին: Ակամայից հարց ծագեց, թե ինչով կարող է աշխարհահռչակ լեզվաբանը օգտակար լինել մաթեմատիկոսներին, այն է՝ «Հայոց գրերը» եւ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատություններով: Նշենք, որ Աճառյանը հանգամանորեն

## Մանկավարժություն

քննել է Մեսրոպ Մաշտոցի վարքագրությունը, մշակել նրա գիտական կենսագրությունը: Աճառյանը հիմնավորում է, որ Մաշտոցի մոտ գրերի գյուտը հղացել է Գողթն գավառում (պատմական այդ գավառը մեր՝ Ղափանի շրջանից բաժանվում է Կապճյուղ սարով): Գրերի գյուտից հետո նա Գողթն է եկել լուսավորչական առաքելությանը, հետո անցել է Սյունյաց գավառը: Կոնկրետ փաստերը համադրելով՝ եկանք այն եզրակացության, որ Մաշտոցը Գողթնից Սյունյաց գավառն է անցել Կապճյուղ սարի մինչև այսօր բանուկ լեռնանցքով, այցելել է Տիրնիթ (այժմ՝ Լեռնաձոր) գյուղը, որովհետև ճանապարհն անցնում է Քաջարանով եւ Լեռնաձորով:

Այս օրինակը պայմանավորում է միջառարկայական կապի ինքնատիպ մի հնարավորություն:

**II** *Ճիշտ է, շեղվեցինք մաթեմատիկական նյութը քննարկելիս, սակայն, մեր կարծիքով, դա օգտակար է աշակերտների հետաքրքրությունների շրջանակներն ընդլայնելու առումով: Դեռ ավելին, պատմեցի, որ գրեթե բոլոր գիտություններն ի վերջո ամենաճիշտ ստուգաբանության են ենթարկվում մաթեմատիկական ապարտի կողմից: Որպես համոզիչ օրինակ, նրանց ցույց տվեցի լեզվաբան Գ. Զահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գիրքը: Արտաքին դիտում կատարելով՝ աշակերտները քերականական կարգերի քննության մեջ առաջին անգամ տեսան... մաթեմատիկական բանաձևեր, սիմվոլիկա, գծապատկերներ...*

Հայ մաթեմատիկոսների աշխատություններին ծանոթանալիս աշակերտները «բախվում են» գրաբար լեզվի հետ, ձգտում սովորել այն: Եվ տարօրինակ չէ, որ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Արեւիկ Ղափյանի հետ պլանավորեցինք անցկացնել մաթեմատիկայի եւ լեզվի արտադասարանական խմբակների համապատկեր պարապմունք:

\* \* \*

Հայ մաթեմատիկական մշա-

կույթը ուսումնասիրելու ընթացքում աշակերտներին հետաքրքրում են, հատկապես, խնդիրներն ու խրախճանականները: Իրենց աշխատություններում այդպիսի հավելված ունեն Անանիա Շիրակացին (7-րդ դար), Մխիթար Երզնկացին (14-րդ դար), Զաքարիա Սարկավագը (17-րդ դար) եւ շատ ուրիշներ: Դասերին նախապատրաստվելիս ունենում են հին հայկական մաթեմատիկական խնդիրներ ու բազմաթիվ այլ փաստեր: Այսպես, 6-րդ դասարանցիներին երկրաչափության դասին համառոտ պատմում են Էվկլիդյան երկրաչափության եւ հույն մեծ երկրաչափ Էվկլիդեսի (3-րդ դար. մ.թ.ա) «Տարեք երկրաչափության» («Սկիզբ») 13 մասանոց աշխատության եւ նրա՝ համաշխարհային քաղաքակրթության մեջ ունեցած որոշիչ դերի մասին: Այնուհետև կարդում են 11-րդ դարի հայ մշակավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին մի նամակից քաղված բառերը. «...Ոչ ենք երբեք դադարեալ ի թարգմանութենե... եւ զերկրաչափական զեկլիդեսին սկսալ թարգմանել»: Հպարտություն է համակում երեխաներին, երբ հայտնում են, որ քաղաքակրթ ժողովուրդներից առաջինը հայերն են թարգմանել Էվկլիդեսին: Ցույց են տալիս «Երկրաչափութիւն Ելզլիտին» (Երեւան, 1962) գիրքը: Նույն դասարանում զուգահեռների աքսիոման անցնելիս համառոտակի կանգ են առնում Էվկլիդեսի 5-րդ պոստուլատի պատմության վրա, որ դարեր շարունակ եղել է մաթեմատիկոսների քննության նյութ: Հետաքրքրական է, որ մաթեմատիկայի պատմության այդ հարցերին նվիրված վառ էջերից մեկը պատկանում է Մեսրոպ Մաշտոցի սան, հայ մաթեմատիկոս Աղան Արծրունուն (5-րդ դար): Չորրորդ դասարանում, որտեղ գաղափար է տրվում թվարկության սիստեմի մասին, երեխաների ուշադրություն են հրավիրում հայկական այբուբենին՝ որպես նաեւ թվերի մշակման հիմնավոր եղանակի: Այս հարցին ավելի մանրամասն անդրադառնում ենք խմբակում՝ ներգրավելով ավելի բարձր դասարանցիներին: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա.Եզանյանը հիմնավորում է, որ մեզ հայտնի առաջին հայ մաթեմատիկոսն ինքը Մեսրոպ Մաշտոցն է. «Երբ Մեսրոպը ստեղծեց հայկական այբուբենը, այդ ժամանակ տառերին տվեց թվային արժեքներ», - գրում է նա: Ինքնին սա հե-

տաքրքիր փաստ է: Նկատենք, որ ավելի տպավորիչ կլինի, եթե այբուբենի տոները վերածվեն այբուբենի ու թվանշանների տոնի:

5-րդ դասարանցիների համար հետաքրքիր են հայկական այբուբենի տառերով կոտորակների պատկերումն անցյալում: Մեր համարողները 10.000 թիվը կոչել են բյուր: Սակայն թվահաշիվը դրանով չի վերջացել: Համարողները գործ են ունեցել նաեւ ավելի մեծ թվերի հետ, որոնք, ինչպես հաղորդում է Ա.Աբրահամյանն իր «Հայոց գիր եւ գրչություն» գրքում, կոչել են գունդ, ավագ գունդ, արքա գունդ, կայսր գունդ:

Պատանի մաթեմատիկոսների սիրած զվարճալիքների մաս են կազմում նաեւ Շիրակացու աշխույժ խնդիրները, որոնցից գատ հայտնի են ինը զվարճալիքներ: Բերենք դրանցից մեկը (քննել է Ա. Եզանյանը): Որ ժամին ճաշելու ես, այդ թիվը կրկնապատկիր, արդյունքին ավելացրու 5, արդյունքը բազմապատկիր 5-ով, ստացած թվին ավելացրու 10, այն, ինչ ստացար, բազմապատկիր 10-ով, ստացածին ավելացրու գինու այն քանակը, որ պետք է ըմպես ճաշին: Արդ, ինձ ասա ստացածդ վերջին թիվը:

Ինչպես հայտնի է, Անանիա Շիրակացին ծավալել է նաեւ մանկավարժական բեղմնավոր գործունեություն: Բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ նա կազմել է թվաբանական խնդրագիրք՝ «Յաղագս հարցման եւ լուծման»: Մեզ են հասել այդ գրքի 24 խնդիրները միայն: Դրանցից վեցն առաջին անգամ հրապարակվել է «Բազմավեպ»-ի համարներում: 24 խնդիրները լրիվ հրապարակել է Երուսաղեմի «Սիրոն» ամսաթերթը 1885 թվին: Շիրակացու խնդիրներն ու խրախճանականները աշակերտների միջոցով զետեղել ենք ինքնաշեն ալբոմի մեջ: Դա, որպես դիտողական նյութ, օգտագործում են դասավանդման ընթացքում սովորողների հետ անհատական աշխատանք կազմակերպելիս: 5-7-րդ դասարաններում, մաթեմատիկայի եւ հանրահաշվի առանձին դասերի ժամանակ, առաջադրում են Շիրակացու հիշյալ խնդրագրից մի քանի խնդիրներ, որոնք նախօրոք գրել են առանձին քարտերի վրա: Էպիդիասկոպով ցուցադրում են հին մատենագրական նյութերի լուսանկարներ, գրիչների ձեռագրեր, այդուհանդերձ եւ այլն: Այսպես, խմբակի

## Սանկավարժություն

պարապմունքներից մեկում ցուցադրեցի մի էջ Շիրակացու բազմապատկման աղյուսակներից (Մատենադարանի N 1770 ձեռագիր): Այն տառային նշանակումներով սյունակներ է, չկան մաթեմատիկական նշաններ: Ստեղծվեց պրոբելմային իրադրություն... Աշակերտներն զգացին այն դժվարությունը, թե ինչպես էին կատարվում (գրառվում) մաթեմատիկական գործողություններն առանց նշանների: Նրանք համոզվեցին, որ Շիրակացու աշխատությունների գիտական արժեքն ավելի է բարձրանում, երբ նկատի ենք ունենում, որ չի օգտագործված հաշվումների՝ ժամանակակից գործածության տասնորդական հզոր սխտեմի ապարատը: Շիրակացին հրաշալի գիտեր իր ժամանակի մաթեմատիկան (կրթություն էր ստացել հունական դպրոցում, փիլիսոփա Տյուքիդուսի մոտ):

6-րդ դասարանում սկսում ենք երկրաչափության դասընթացի համակարգված ուսումնասիրությունը: Առաջին դասերին հաղորդում են Գրիգոր Մագիստրոսի թարգմանությունների, հայ հեղինակների կողմից ստեղծված երկրաչափության դասագրքերի մասին: Երկրաչափության հայերեն տպագիր առաջին դասագիրքը Զակոբ Թադյան Ջուղայեցու «Գրքույկ երկրաչափական»-ն է, որն ունի 55 էջ էլ լույս է տեսել Մադրասի հայ գաղթօջախում (1792 թ.): Դրանից 2 տարի հետո Վենետիկում լույս է տեսել Սահակ Պրոնյանի «Երկրաչափութիւն երիս գիրս բաժանեալ» դասագիրքը: Ա.Պրոնյանը հիմք դրեց հայ մաթեմատիկական տերմիններին, որոնց մի մասը գործածական է նաև մեր ժամանակներում:

Մաթեմատիկայի պատմությունն այն հուսալի կամուրջն է, որ հնարավորություն է ընձեռում հայ ժողովրդի պատմության եւ մաթեմատիկայի ուսուցիչների համագործակցված աշխատանքի համար: Արտադասարանական խմբակում հարկ են համարում աշակերտներին հաղորդել 5-6-րդ դարերի հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթի հայտնի աշխատությունների մասին: Անհաղթը խոսել է, այսպես կոչված, կատարյալ թվերի մասին (թվեր, որոնք հավասար են իրենց բոլոր բնական բաժանարարների գումարին):

Ուսումնադիտողական պարագաներ պատրաստելիս մեծ հնարավորություններ կան օգտվելու հայ մաթեմատիկական մշակույթի մատենագրությունից: Այսպես, դպրոցական տետրերի շապի-

կի վերջին էջի վրա կարելի է հանդիպել Պյութագորասի աղյուսակին՝ 81-ի սահմաններում: Մինչդեռ Շիրակացու բազմապատկման աղյուսակներն ունեն մինչև 81 միլիոն թիվը: Հայերեն տառային նշանակումներով այդ աղյուսակը կարելի է վերածել դիտողական պլակատի՝ փոխարինելով այժմ գործածվող թվանշաններով: Իհարկե, դա զուտ դաստիարակչական-հայրենասիրական նպատակ է հետապնդում:

Հայ մատենագիտությունը բավականին ուսումնասիրել է 14-րդ դարի մաթեմատիկոս Նիկողայոս Արտավազդի աշխատությունները, որոնց մի մասը հասել է մինչև մեր ժամանակները: Նրա շարադրման լեզուն տրամադրող ու քնարական է: «Այդ ժամանակն է հաղորդելու քեզ ավելի բարձր եւ ուշադրության ավելի արժանի խնդիրների եղանակների մասին, որպեսզի տեսնելով դրանք, կարողանաս նորոգել իմ նուրբ սերը դեպի քեզ», - գրում է միջնադարի մեծ մտածողը: Նիկողայոս Արտավազդի աշխատությունների պատառիկներով դասը համեմատում են, մասնավորապես 7-րդ դասարանում՝ «Քառակուսի արմատ» թեման անցնելիս: Նրա՝ հաշվողական արվեստին նվիրված առաջին հոդվածի երկրորդ գլխում մանրակրկիտ շարադրված է ձեռքերի մատների միջոցով 1-ից մինչև 9.999 թիվը ներկայացնելու եղանակը:

**II** *Միանգամայն հարմար է բարձր դասարանցիների հետ կոլոքվիում կազմակերպել՝ նվիրված 11-12-րդ դարերի գիտնական Դովհանես Իմաստասեր Սարկավազի «Անկիւնաւոր թիւք» աշխատությանը, որը, փաստորեն, թվերի տեսության անզուգական քննություն է:*

Շիրակացու եւ մյուս մտածողների խնդիրներն ու խրախճանականները շատ մատչելի էին ժողովրդական մասաներին: Այդ են վկայում բանախոսության մեջ առկա տարբերակները: Մեր ակումբի անդամների հետ վերջին 5 տարում հավաքագրել ու խմբագրել ենք մեր շրջապատի բնակչության մեծ տարածված նման խնդիրներն ու խրախճանականները: Համազոտադարձի Նազանի տատից լսել ու խմբագրել ենք հետեւ-

յալ խնդիրը: «Մի մարդ կեռասի 22 ժամ ուներ եւ ստանում էր 105 կողով կեռաս: Աստված ասաց նրան. «Եթե տամ քեզ եւս 12 ժամ եւ կողովը մեծ լինի իր կեսի չափով, քանի կողով կեռաս կվերցնես»: Այդ մարդն ուսումնական չէր եւ չպատասխանեց: Տերը պատժեց նրան՝ թողնելով միայն 7 ժամ: Ասա, քանի՞ կողով կկազմեր աստծու պարգևը եւ քանիսը մնաց նրան»: Մեր կարծիքով այս խնդիրը 17-րդ դարի մանկավարժ Կոնստանդին Ջուղայեցու մի խնդրի տարբերակն է, որ բանավոր հասել է մինչև մեր օրերը:

Անցյալի մաթեմատիկայի բազայի վրա է հիմնված նոր ժամանակների մաթեմատիկան: Սովետահայ մաթեմատիկայի պատմությունն ուսանելի է իր բազմազան կողմերով: Դասավանդման ընթացքում, մասնավորապես նաև որպես դասի դաստիարակչական նպատակ, մենք օրինակներ ենք բերում կյանքի այն բնագավառներից, որտեղ ամեն ինչի ռաիվիրան մաթեմատիկան է (էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, տիեզերական թռիչքներ եւ այլն): Ուսանելի են նաև մեր ժամանակների մաթեմատիկոսների՝ Ա.Շահինյանի, Ս.Մերգելյանի, Մ.Ջրբաշյանի, Գ.Բադալյանի, Ա.Թալալյանի եւ շատ ուրիշների գիտական կենսագրությունները: Աշակերտների ուժերով կազմակերպել ենք երեկույթ՝ նվիրված ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ն. Մերգելյանին:



Մանկավարժություն

# ՌՈՐԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Ձկա հանրակրթական դպրոցը վարկաբեկելու ավելի արտառոց երեւոյթ, քան ուսուցչի՝ իր մոտ մասնավոր պարապմունքի հաճախելու՝ աշակերտին ներկայացվող պարտադրանքը»

## Հարցազրույց Լեռնաձորի հիմնական դպրոցի փնտրենի հետ

– Պարոն Գրիգորյան, նոր ուսումնական տարվա սկիզբ է, եւ ուզում ենք, նախեւառաջ, «Այունյաց երկրի» շնորհավորանքը փոխանցել Ձեզ, ինչպես եւ հանրակրթության բոլոր աշխատակիցներին:

Հանրակրթության մասին քննարկումները հասարակության մեջ, կարծեք, ընթանում են տարին բոլոր: Բայց ավանդույթի համաձայն՝ դրանք առավել աշխուժանում են ուսումնական տարվա նախօրեին եւ առաջին օրերին: Ընթացիկ ուսումնական տարին բացառություն չէ այդ առումով, եւ պատահական չէ, որ թերթն էլ իրեն հետաքրքրող, մտահոգող հարցերն է ուզում պարզել, ինչի համար եւ Ձեզ զրույցի ենք հրավիրել:

– Մեծարված եմ շնորհավորանքի համար: Հուսամ, որ դաղձով ու զիվանով թեյամանի թշուր չի խանգարի ձայնագրիչին... Արդեն սկսել է իմ 46-րդ մանկավարժական տարին եւ, բնականաբար, ավանդականն ու արդիականը յուրովի եմ համադրում: Ուզե՞նամ-չուզե՞նամ՝ դուրս-ինչ պահպանողական պետք է լինեն: Ուսուցման ու դաստիարակության տիրույթում հնի ու նորի դիմակայությունը մեծավ մասամբ անհատական ընկալման խնդիր է: Արդ, ակնկալելով գլխավոր խմբագրիդ հարցադրումների արդիականությունն ու հրատապությունը՝ չեմ պատրաստվում ոչ վիճարկելի պատասխաններ ու դատողություններ ի ցույց դնել:

– Ինչպե՞ս կուզենայիք Ձեզ դիմել՝ պարոն Գրիգորյան, Էջանանցի, թե՞... Ի դեպ, ինչո՞ւ ընտրեցիք Էջանանցի հորջորջումը, մանավանդ որ Էջանան-Աճառանը թողել եք ու շատ վաղուց լեռնաձորի դարձել: Լեռնաձորում ոչ մեկի մտքով անգամ չի անցնում, որ առաջաձորի եք:

– Այր թանկագին, գիտե՞ք՝ Քառնեզին հավաստել է, որ մարդու համար ամենասրտամոտ հնչումն իր անձնամուկն է: Բարեհիշատակ մայրիկս, որ եվրոպական գրականության հանդեպ սեր ունեւ, իմ անունն այնտեղից առավ: Երբ թոթովում էի, Ռ-ն դժվար էի արտաբերում եւ ինքնակոչվեցի Օբերտ: Հիմա Սաբոն ինձ Օբի է ասում: 1-ին, 2-րդ դասարանցիները, ընդօրինա-

կելով թռններիս, ինձ սիրալիր պապիկ եմ կոչում: Աշխեն տատն ասում էր՝ Ռոբերտ, բալա՛: Տիգրան ափուն գյուղում տարածել էր իր կնքած անունը՝ ճգնավոր: Ալբե Արծրունին՝ ԱՄՆ-ից, Վահրամ Օրբեյանը՝ Կապանից եւ նախկին աշակերտներիս մի մասը (ուն ականջը չեմ քաշել) հեռաձայնելիս կարոտաբաղձ վրա եմ տալիս՝ Հարազատ: Տատիկներ կան, որ քնքշորեն դիմում են՝ Ձիզին մատաղ: Դեռ երիտասարդ ուսուցիչ էի, երբ Սաթենիկ, Պայծառ մայրիկները գրկում-ճակատս էին համբուրում՝ արեւը կծին: ...Պարոնը մտերմության նշանակ չունի, գյուղական միջավայրում հարգի չէ, եւ այսօր էլ համատարած կոչվում եմ ընկեր Գրիգորյան: Մենախոսելիս ինքս ինձ կոչում եմ գյուղական ուսուցիչ: Էջանանցի կրկնամուկն առել եմ երջանկահիշատակ մանկավարժ եւ տնօրեն Շմավոն Գեւորգյանի ազգագրական՝ իրեն հատուկ դիտարկումից: Իմ՝ Էջանանցի ստորագրությունը մի նպաստ է, որ միջնադարյան գավառանունը վերակենդանանալով հարատեւի: Աճառանի (Էջանան, Ըջանան) գյուղանունների ցանկն ունի մեր ստուգապատում պատմիչ Ստ. Օրբեյանը: Ի դեպ, Ազաթանգեղոսը ինձ այլունեցիներին կրակապաշտ ու մոխրապաշտ է անվանել: Տարիներ առաջ իմ սաների հետ Էջանանում՝ Կուեռա-Կուեռ դիցական լեռան վրա, հայտնաբերեցինք ատրուշան՝ փորածո մոխրի հետքերով: Ս.Ունառյանի ստուգաբանությամբ, Աճառան գավառանվան արմատն ատրկրակ նշանակության մի տարբերակն է:

Գյուղական ուսուցման առանձնահատկություններին հարիր չէ, որ ուսուցիչն այլ տեղացի լինի: Գյուղի նիստուկացը, սովորությունները, տոհմաբանությունը, խոսվածքը, արհեստները, ժողբանը (ֆոլկլոր), սերը, հունորը հույժ մանկավարժական եւ եւ հույժ անհրաժեշտ՝ գյուղական ուսուցչի կայացմանը: Արդ, եթե այլ մի գյուղում ուսուցիչ լինեի, անշուշտ պետք է կայանայի որպես այդ գյուղացի: Կկանեմայի, որ այս բանաձեւը հոգեհարազատ լինի գյուղ մեկնած երիտասարդ ուսուցիչներին: Ի դեպ, գյուղական ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ հրապարակել եմ 20-ից ավելի լրագրային հոդվածներ:

– Հիմա՞ ըստ էության: Նախ՝ մտովի վերհիշենք կրթական համակարգի անցած ուղին անկախության տարիներին: 1990-ական թվականներից, կարծեք, ազգովի որոնումների մեջ ենք, քանի՞-քանի՞ անգամ բարեփոխումներ հռչակեցինք եւ արեցինք, կրթական գործը քանի՞-քանի՞ անգամ ձեւեցինք-վերաձեւեցինք: Հիմա էլ, ըստ էության, որոնումները շարունակվում են: Ի վերջո, ի՞նչ ենք ուզում, ի՞նչ խնդիր

## Մանկավարժություն

### պիսի լուծի դպրոցը մեր ընթացքի այս հանգրվանում:

– Չերկնչենք, որոնումները միշտ կլինեն, որովհետև դպրոցը պատմության հոլովույթի մեջ մաս է կազմում տարածությանն ու ժամանակին եւ բազմակի առումներով հասարակական կյանքի ուղղորդիչն ու արտացոլիչն է: Վտանգավոր են բարեփոխումները, որովհետև դրանք երբեմնակի արտերկրի կույր ընդօրինակումներ են եւ հարկավ, քաղաքական համագործակցության հետնախորք ունեն: Հայկականության մեջ իր բոլոր խորքերով ամենաազգայինը մանկավարժությունն է, եւ նրան պատվաստված փոքրիկ շյուղն անգամ խորթության երանգ ունի:

Մեր ժողովրդի աննախընթաց մեծագույն նվաճումն անկախ պետականության նորագույն կազմակերպումն էր: Այդ դարակազմիկ երեւոյթը պետք է խթաներ հայ մանկավարժության վերածնունդը՝ արտերկրի արժեքների համադրմամբ: Սակայն մենք շարունակեցինք օտարասիրությունը: Համաշխարհային ասելով՝ ակամա նկատի ունենք ուրիշինը, իսկ ինչպե՞ս ենք մենք հարաբերվում համաշխարհային կոչվածին, ի՞նչ ենք արտահանում, ինչո՞վ ենք առինքնում...

Օրինակ առնենք աշակերտների գիտելիքների գնահատման համակարգը, որը ներդրել ենք, սակայն չենք իմաստավորել: Գնահատման 10 միավորանոց համակարգն ավելի է խորացրել ուսուցչի եւ աշակերտի անջրպետը, նրանց դրել բարիկաղի երկու կողմերում: Բնական է համարել, որ սովորողի (երեխա, դեռահաս, խոխա) գիտելիքների ավարտուն մակարդակ գոյություն չունի, մինչդեռ դպրոցը, հիմնականը թողած, գիտելիքների չափման-գնահատման երկրորդական խնդիրը դրոշ է դարձրել: Չէ՞ որ կարելի է ուսուցել նաեւ առանց գնահատականների: Առաջնային դաստիարակության, խորհրդածության, երեւակայության խթանման դրդապատճառային համակարգն է, եւ այդ ամենը թողել ենք հետին պլանում: Չավե՞շտ է. ճանաչված շատ տաղանդներ դպրոցում չեն փայլել բարձր գնահատականներով, իսկ մեղալակիրներից ոմանք մռռացվել են կյանքի գորշ արահետներում... Լավակարգ մանկավարժությունն ուսուցչի եւ անհատ աշակերտի յուրովի համագործակցությունն է, մշտագո (պերմանենտ) կապը:

... Հասարակությունը պետք է փայլի ամենաթանկ կապիտալի՝ գիտելիքին ապավինած ու սիրահարված անհատի պահանջարկով:

– Եվ ինչպիսի՞ հանրակրթական դպրոց ունենք այսօր՝ մոտ քսանամյա որոնումներից հետո: Ընդհանուր առմամբ ինչի՞ց հրաժարվեցինք, ի՞նչ ներդրեցինք, որ կարելի է նվաճում, առաջընթաց համարել:

– Քսանամյա որոնումների մեջ անկարելի է չտեսնել խորհրդային դպրոցի արժեքներից կամա թե ակամա հրաժարվելու միտումը եւ բուռն ծափահարություններն առ «իսլամացվող Եվրոպա»: Երկուստեք ծայրահեղություններ են: Նվաճում է մեղիա կրթությունը, որը չպետք է հավակնի համակարգի:

– Հետաքրքիր է, որոնողական այդ աշխատանքներում ներկա՞ է (մասնակի՞ց է) ուսուցիչը, թե՞ նա հայտնվել է պասիվ հայեցողի, պասիվ կատարողի դերում:

– Չեր սասածն է. ուսուցիչը պասիվ հայեցող ու կատարող է: Կարծես այլես պահանջարկ չեն վայելում ուսուցչական հետազոտությունները: Ի դերն է եղել մանկավարժական քննադատությունն իր դասական նշանակությամբ: Լավ է ասված՝ ոսկու գինը ոսկի հանողը կիմանա: Մանկավարժական գերատեսչությունները պետք է կազմակերպեն ուսուցչական

առաջավոր փորձից ծնված գաղափարների, նորարարությունների բանկ, հավուր պատշաճի խրախուսեն գիտահետազոտական աշխատանք ծավալողներին: Առիթ են ունենում հաճախակի հաղորդակցվել մեր մարզի շատ գործընկերների հետ: Եվ քանի՞-քանի՞ անգամ հաճություն են ունեցել՝ զգալով, որ իմ առջեւ կրթական համակարգի նվիրյալ է, շնորհափայլ հետազոտող ու գիտնական: Տրամաբանական է, որ մեր մարզում հայտարարվեն գիտահետազոտական աշխատանքի, առաջավոր փորձի դպրոցներ:

– Դպրոցի այսօրվա կացությունը, շարունակական բարեփոխումների փիլիսոփայությունը եւ դրանց համապատասխանությունը մանկավարժական գիտությանը, ազգային մանկավարժությանը:

– ՀՀ ԳԱ-ն հետամուտ չէ մանկավարժ-գիտնականների պատրաստմանը: Հայտնի են արտերկրի ակադեմիաների անդամ հայ գիտնականներ, որոնք հեղինակային մատչելիություն չունեն մեզանում: Մերօրյա դպրոցը փաստաթղթահեղձ է եղել, թղթի դիկտատուրա է, արձանագրում ենք, լրացնում, ծրագրեր կազմում, հաշվետվություններ տալիս: Ամեն ինչ բերված է նրան, որ տեսչավորումը դյուրին լինի: Մարդկային փոխհարաբերությունները, ներդպրոցական համագործակցությունը, հոգեւոր բարեմասնությունների արտացոլվածությունը, անմնացորդ սերն ու պահանջկոտությունն առ մանկություն մնացել են ստվերում:

– Ծնողի դերն այդ ամենի մեջ. կա՞ պատշաճ, շահեկան համագործակցություն ծնողի եւ դպրոցի միջև:

– Ժամանակն է, որ ծնողի եւ դպրոցի համագործակցությունը կարգաբերվի օրենսդրորեն: Աճող սերնդի դաստիարակության խնդիրը պետականորեն դրված է դպրոցի վրա, եւ դպրոցի համար միեւնույն չէ, թե ինչ է տեղի ունենում աշակերտի հետ հետդասային ժամանակում: Գաղտնիք չէ, որ կան դաստիարակությանը չհետամտող ծնողներ: Եվ քանի դեռ դպրոցի ու աշակերտի ընտանիքի համագործակցությունը պարտադիր նորմ չէ, դպրոցն այդ գործառնությամբ իրականացնում է տարերայնորեն, իմա՝ սիրողական մակարդակով:

– Կան հարցեր, որոնք, այնուամենայնիվ, հասկանալի չեն հանրության ամենալայն շրջանակներին: Օրինակ՝ ինչո՞ւ պիսի երեխան դպրոց հաճախի վեց տարեկանում, ինչո՞ւ պիսի դպրոցական շրջանը տեւի 12 տարի: Չէ՞ որ նախադեպ ունենք, եւ կարելի է ասել քննություն բռնած նախադեպ: Նկատի ունենք խորհրդային շրջանի նախադեպը:

– 12-ամյա ուսուցումն իմ սերնդի ուսուցիչների համար անսովոր է: Խորհրդային դպրոցի նվաճումներից աններելի մի նահանգ էլ է կատարվել. պարտադիր ուսուցում է սահմանվել ութամյան (իննամյան): 10-ի փոխարեն դպրոցական զանգին ունկնդիր լինել 12 տարի՝ ինչ-որ տեղ անբնական է, եւ «արտոնյալ դասակարգին»՝ մանկության հանդեպ տածած սիրո կեղծ տարր է պարունակում:

– Ավագ դպրոց ենք ստեղծել. ո՞րն է նպատակը, կայանո՞ւմ է արդյոք այն: Խնդիրներից մեկը, որքանով տեղյակ ենք, մասնավոր պարապմունքները վերացնելն է: Չլուծվեց՝ մասնագետների մեծ մասի կարծիքով, թե 20%-ով բարձր աշխատավարձ է պետությունը տալիս ավագ դպրոցի մանկավարժին: Նույնիսկ արատավոր բարբեր ենք հասցրել արմատավորել այնտեղ: Օրինակ՝ ուսուցիչը պարտադրում է աշակերտին մասնավոր պարապմունքի հաճախել իր

## Մանկավարժություն

մոտ, թե չէ...

– Դպրոցի գործառույթի մեջ, ինչպես ասացի, առաջավորում ու շահեկանը կարելի էր երևանալու նպատակ պիտի լինի: Եթե մասնավոր պարապմունքն ավելի որակյալ է, ի՞նչն է խանգարում, որ այդ եղանակը կիրառվի դպրոցում: Արտաքուստ դժվար խնդիր է թվում, բայց մանկավարժական արհեստավարժությունն ունի այդ «գաղտնիքի» բանալին: Կան, անշուշտ, առաջատար կամ տակավին ոչ հայտնի մասնագետներ, որոնք ցանկալի առաջադիմությունն են տալիս հենց դպրոցական հարկում՝ շրջանցելով մասնավոր կոչվածը: Ի դեպ, Ձեր նշած 20% բարձր վճարի մասին: Ինչո՞ւ այն սահմանել փորձնական կարգավիճակի դպրոցի ուսուցչի համար, եթե ոչ՝ համատարած բոլոր լավագույն ուսուցիչների համար: Կրթության համակարգը չի ճանաչում լավագույն ուսուցչին: Վարձատրությունը համահարթեցված է, չկան առավել արդյունավետ աշխատանք կատարողներին հայտնաբերելու չափանիշներ: Մեր մանկավարժական պաշտոնն անգամ չունի լավագույն ուսուցչի կատարելատիպի՝ գիտականորեն հիմնավորված չափանիշներ: Չկա հանրակրթական դպրոցը վարկաբեկելու ավելի արտառոց երևույթ, քան ուսուցչի՝ իր մոտ մասնավոր պարապմունքի համախելու՝ աշակերտին ներկայացվող պարտադրանքը:

– Ի դեպ, ի՞նչ է սպասվում այն երեխային, որն իններորդ դասարանից հետո, այնուամենայնիվ, ավագ դպրոց չի հաճախում: Ունե՞նք պետական ծրագիր երեխաների այդ խավը փողոցում չթողնելու համար:

– Հանրակրթությունը՝ որպես պետական քաղաքականության առաջնահերթ հայտանիշ, մեզանում բարձր մակարդակի վրա չէ: Նկատի ունեն պարտուսը, որը սահմանափակվում է ինճամյա կրթությամբ: Հասարակության բեկեռացվածությունը, աղքատության դրսևորումները, ապագայի անհեռանկար ու մշուշոտ պատկերացումները վտանգել են նաև հռչակված պարտուսը: Ինչ-որ տեղ կան դպրոց չհաճախող դպրոցահասակներ, եւ դա փոթորկում է ինճ: Այո, այո, ուշ դեռահասական տարիքի ու պատանեկության նկատմամբ հոգածությունը երբեք չպետք է խամրի: Այդ տարիքներում կարծրանում են պատկերացումները հասարակական կյանքի նկատմամբ, եւ շարունակական կրթության ապահովումը պետք է լինի պարտադիր:

– Քիչ առաջ բացասական, արատավոր բարքերից էինք խոսում, բայց, կարծեք, հարմարվել ենք դրանց: Բոլորիս թվում է, թե այդ ամենի դեմ ուրիշ մեկը պետք է պայքարի, բայց ոչ մենք: Ո՞վ չզիտի, ասենք, որ Կապանի իններորդ դպրոցի միջոցով հազարումի գրքեր են պարտադրվում մանկավարժներին, ծնողներին: Մի մասն ուղարկում են կրթության ազգային ինստիտուտից՝ այդ ինստիտուտի մարզային մասնաճյուղերի միջոցով, մյուս մասը՝ այս կամ այն բարձրաստիճան չինովնիկն է ուղարկում: Գազիկ Հովհաննիսյանի դպրոցի պես մեկական առետրի կենտրոն էլ կա Գորիսում, Սիսիանում՝ հայտնի մենեջերներով՝ դպրոցի տնօրենի կամ արհմիութենական գործչի սքեմով քողարկված: Գումարած թատրոնների, համերգների տոմսերի իրացման հավերժական մայմունությունը: Հո չե՞ք սաի, թե Լյուդվիգ Հարությունյանն այդ մասին տեղյակ չէ: Եթե տեղյակ չէ, ուրեմն իր տեղում չէ, եթե տեղյակ է ու ոչինչ չի ձեռնարկում, ուրեմն մասնակից է այդ չարչիությանը: Բազմաթիվ տնօրեններ իրենց վստահված դպրոցների բուժեմներում հազիվ հասցնում են սեփական առետուրը

կազմակերպել: Դա՞ էլ նկատելի չէ, դրան էլ կրթության վարչությունում տեղյակ չեն: Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ ենք ակնհայտ այս հարկահանությունը վերացնել դպրոցներում:

– Հարցադրումը լրագրողական հետաքննության սրություն ունի: Շտապեմ ասել, որ ամեն ինչ մայրաքաղաքային բարքերի շրջանակում է: Գոնե ինճ գրքեր չեն պարտադրել, բայց ականջալուր են երեւոյթին:

– Մի մտահոգիչ երեւույթի մասին եւս. երեխան հեռացել, օտարվել է ուսուցչից, երբեմնի հոգեհարազատությունը չկա նրանց միջեւ, ուսուցիչը, կարծեք, այլևս իդեալ չէ իր աշակերտի համար:

– Ուսուցումը երկկողմ գործընթաց է՝ ուսուցիչ-աշակերտ: Այն չի ենթադրում դիմակայություն կամ հակադրություն: Երկկողմ գործընթացը ծառայում է աշակերտի ձեւավորմանը, զարգացմանը, կայացմանը: Մաքրամաքուր մանկավարժությունը ժխտում-մերժում է չհասկանալու համար կշտամբելն ու հակակրանքը: Եվ զարմանալու չէ, որ մարդիկ իրենց ուսուցիչներին իմաստավորում-ճանաչում են դպրոցական տարիների հեռվից, որովհետեւ «ճշմարիտ ուսուցիչներն են սովոր իրենց առաքինությունները դարձնելու աշակերտների սեփականությունը» (Կորյուն Աքանչեյի): Հոգեհարազատությունն ուսուցչի համար պետք է բնատուր շնորհք լինի եւ ոչ՝ «դիպլոմային պարտականություն»: Ֆրոնտալ ուսուցումը, որպես պատրանք, ստեղծել է աշակերտի վերացական կերպարը, եւ դրան հատկապես տուրք են տալիս սկսնակ ուսուցիչները: Որքանով ուսուցիչը լավ է ճանաչում աշակերտին եւ ունի կարեկցողի, անդամավաճ սիրողի, դրական հույզեր արարողի առաքելություն, այնքան նա մերձ է աշակերտի իդեալ կոչվելու բաղձալի համարումին:

Երբ ուսուցիչն աշակերտական հանրույթի մեջ դադարում է մեկիկ-մեկիկ տեսնել ու զգալ աշակերտ անհատին, նա իր աստվածահաճո մասնագիտությունը փոխս է գցում պարզունակ արհեստի հետ:

– Իհարկե, ուսուցչի հանդեպ պետությունը պետք է ավելի հոգատար լինի, իրական ուսուցիչը արժանի է համընդհանուր խոնարհումի: Բայց, մյուս կողմից, ուսուցիչն էլ պետք է ուսուցիչ լինի, լավագույնս տիրապետի իր մասնագիտությանը, մանկավարժությանը: Իսկ մենք, կարծեք, խնդիրներ ունենք այդ առումով: Պատշաճ գիտելիքներ ու մանկավարժական հմտություն չունեցող ուսուցչից ազատվելն անգամ անհնար է դարձել:

– Մանկավարժական աշխատանքի պետք է գալ բնատուր սիրահարվածությամբ, բավականություն ստանալու պատրաստվածությամբ, ի հայտ բերելու եւ հայտնագործելու տրամադրվածությամբ: Այս ամենը պետք է արտացոլվի մրցութային համակարգով՝ մանկավարժական աշխատանքի տարիների սանդուղքի վրա, այսինքն՝ մանկավարժական միջավայրը պետք է ունենա տվյալ դպրոցում, մարզում, հանրապետությունում ուսուցչական առաջավոր կորիզի ստեղծման մտահոգություն ու կարգ: Առաջատարների բազումքի գոյությունը հմտության պակաս ունեցողին չի հանդուրժի:

– Կրթության ազգային ինստիտուտը, ինչպես նշեցինք, մասնաճյուղեր ունի մարզում: Կարողանո՞ւմ են դրանք ինչ-որ չափով նպաստել նախորդ հարցում արժարժված մտահոգությունների վերացմանը:

## Մանկավարժություն

– Կրթության ազգային ինստիտուտի (լավ է՝ Հանրակրթության ազգային ինստիտուտ) մասնաճյուղերը մեր մարզում կարող են ընդլայնել նախաձեռնությունները տեղական ավանդույթների ու ինքնատիպ առանձնահատկությունների կտրվածքով: Աղաղակող բաց է ուսուցչական տարաբնույթ հետազոտությունների անտեսումը:

– **Խոսենք դաստիարակության մասին.** Ի՞նչ ենք հետապնդում դաստիարակության ամբողջ գործընթացում, ի՞նչ ենք դաստիարակում, ո՞ւմ ենք դաստիարակում: **Դաստիարակության հայեցակարգ կոչված փաստաթուղթ ունենք, ի՞նչ է դա:**

Ազգային արժեքային համակարգի մասին ենք տեղի-անտեղի եւ անընդհատ խոսում, հայրենասիրության, քաղաքացիության, ժողովրդավարության մասին ենք խոսում: **Գոնե որոշարկված է արդյոք, թե ինչ են ենթադրում այդ հասկացությունները:**

Դաստիարակություն ասվածի մեջ, ըստ էության, որոշակի տեղ է զբաղեցնում (պետք է զբաղեցնի) բարեկրթությունը, բայց այդ ոլորտում, կարծեք, պարտված ենք: **Քայլենք փողոցներով, այցելենք հասարակական վայրեր... բազում օրինակների կառնչվենք՝ ասվածը հավաստող: Իհարկե, ծնողը, ընտանիքը լուրջ անելիք ունեն այդ ուղղությամբ, բայց ոչ պակաս անելիք ունի դպրոցը:**

– Դաստիարակության համակարգը դյուրավ ուղղորդվում է գաղափարախոսությամբ: Բազմակուսակցական երկրում ամեն ինչ խառնափնթոր է, որովհետեւ առկա է գաղափարաբանական ակներեւ հակամարտությունը: Անգամ Առաքելականի արժեքների եւ նորընծա հեթանոսականի համառ փոխվերագրումներ են ի հայտ եկել:

Դաստիարակության հայեցակարգ կոչվածը մեռելածին փաստաթուղթ է, այն չի աշխատում: Հայրենասիրությունը, քաղաքացիությունը, ժողովրդավարությունը հայեցական են ըստ դպրոցի, ըստ ուսուցիչ-դաստիարակի: Գյուղական միջավայրում դաստիարակությունն ինչ-որ չափով ակունքներ է առնում ավանդականությունից, համայնքի տարեցների վարք ու բարքից: Նոր ժամանակներում հարկ է մտահոգվել հասարակական համակեցության պահանջների ու կանոնների ուսուցմամբ: Մանրամասնե՛մ: Ստորելու է՝ միջահասակ կինը փողոցով քայլելիս արեւածաղիկ է կրակում, մի պարմանի պագել է մայթին՝ կողքը դրել գարեջրի թերաս շիշը, այս պացանն էլ ավտոբուսում տեղը չի գիջում պապիկին...

– **Իսկ ինչպե՞ս է ազգայինն արտացոլվում, արտահայտվում, դրսևորվում կրթության, դաստիարակության մեջ:** Միգուցե այդ հարցն այնքան էլ հրատապ չէ այլևս, եւ նախապատվությունը տալիս ենք համամարդկային, մասնավորապես եվրոպական արժեքներին: Մի՞թե տարակուսանքի պատճառ չէ օտարալեզու դպրոցի առջեւ կանաչ ճանապարհ բացելը: Մեր խորհրդարանը, որքանով տեղյակ ենք, առաջին ընթերցմամբ օրինագիծն ընդունել է: **Երկրորդ ընթերցումն էլ առանց խոչընդոտների կանցնի, քանզի խորհրդարանը սեփական դեմք չունի:**

– Օտարալեզու դպրոցի գաղափարը վերակենդանացել է ոմանց մոտ ազգային ինքնաճանաչման տկարությունից: Մեզանում թեւածում է ազգային ինքնամաքրման ոսկեդարը, որի ստնտուն մայրենի հայոց լեզուն է: Փույթ չէ, խորհրդարանը կարող է վրիպել, հետագայում ամեն բան կդրվի իր տեղը:

– **Անցնենք դպրոցի կառավարման հարցերին:** Նախ, ինչպե՞ս եք վերաբերվում իրողությանը, որ կրթության նախարարը վերջին տարիներին մեզանում կուսակցական է, որ ուսուցիչների գերակշռող մասն իշխող կուսակցություններում են հանգրվանել եւ հանգամանքների փոփոխության դեպքում նաեւ կուսակցությունն են փոխում: Ինչպե՞ս կարող են կուսակցականությամբ կաշկանդված տնօրենը, ուսուցիչն ազատ լինել եւ անկաշկանդ դասապրոցես իրականացնել: Ժամանակը չէ՞, որ կրթության համակարգը՝ նախարարից մինչեւ ուսուցիչ, ապակուսակցականացվի:

– Երբ համայնավար էի, հրապուրված էի գրքային կոմունիզմով՝ հասարակության կազմակերպման բարոյական արժեքների գինանոցով: Բազմակուսակցականության մեջ պետք է որ միմյանց հակադրվեն մորալի տարբեր ընկալում ունեցողները: Թե երբեմն ինչի նման է այս կամ այն կուսակցությունը մեր երկրում, տեսանելի է: Երբեմն ինձ թվում է, որ հասարակության առավել գիտակից զանգվածը կարող է միավորվել միակուսակցական հայկականության հայտանիշով, ներառելով մերազնյա սփյուռքը: Խոչոր ազգերի համար հենց խոչորության հայտանիշը կուսակցականության զգացողությունն է: Փոքրերի համար բազմակուսակցականությունը նմանակելն անիմաստ ու անհեռանկար է: Հարկավ, երբ նախարարը կուսակցական է, իսկ մանկավարժն «անկուս կամ այլկուս», համակարգում անհարթություններն ու խոչերը որակ կկազմեն:

– **Դուք լո՞ւրջ եք վերաբերվում երեւութին, որ դպրոցի տնօրենին իբր խորհուրդն է ընտրում, դուք լո՞ւրջ եք վերաբերվում օրենսդրական հեթիաթին, թե խորհուրդն է վերահսկում դպրոցի տնօրենի եւ առհասարակ դպրոցի գործունեությունը:** Մի՞թե հնարավոր է, որ կոռուպցիայի, պրոտեկցիայի մեջ թաղված համայնքապետը գիտակ մեկին գործուղի խորհուրդ: Մի՞թե դպրոցն այնքան սովորական միջավայր է, որ համայնքապետը (մեր համայնքապետերի մի մասն այդպես էլ շարունակում է օտարված մնալ Մեսրոպյան տառերից) հասկանա դրանից ու խորհրդի անդամների միջոցով փորձի աջակցել դպրոցի կառավարմանը: Մեր ինչի՞ն է պետք ստերի այս շքերթը, ո՞ւմ եւ ի՞նչ ենք ուզում ապացուցել:

– Խորհրդի միջոցով դպրոցը կառավարելու գործող կարգն ինքնախաբեություն է: Տնօրենի ընտրության հարցում խորհուրդը պատահաբար կարող է եւ ճիշտ կողմնորոշվել՝ ղեկավար կարգել համար մեկ մտավորականին, ազնվափայլ մարդասերին, գիտնականի բարք ցուցաբերողին, կրթական գործին մինչեւ ականջները սիրահարված ֆանատիկոսին: Ըստ իս, մեր ժամանակներում տնօրենին պետք է ընտրի-նշանակի կրթության մարզային գլխավոր շտաբը՝ մարզպետարանի վարչությունը, որտեղ կենտրոնացված պետք է լինեն բնագավառի լավագույն գիտակները:

Հիմա էլ մի նոր գլխացավանք են շրջանառել՝ տնօրենը պետք է լիցենզիա-հավաստագիր ունենա: Փիե՛... Ավելի լավ ու տեղին չէ՞, որ հավաստագիր ունենան պատգամավորները, համայնքապետերը, նախարարները, ոստիկանները, որոնց գործունեությունը դիպլոմով չէ կանխանշված, ինչպես մանկավարժին: Տնօրենի կերպարի մեջ առկա է խաբկանքների մի կծիկ՝ կարդերի (յուրայինների եւ ոչ յուրայինների) բանակի տնօրենում, դիմակայություն կոռուպցիոն ռիսկերի բանբասանքներին, կույր նվիրվածություն իշխանական հիերարխիային եւ

## Սանկավարժություն

այլև: Իսկ նվաստս երագում են, որ տնօրենն իրավամբ լինի մանկավարժական լիդեր, ամենամանկավարժը՝ մանկավարժների մեջ, ամենաշրջահայացը՝ ինչպես հայրն ընտանիքում, ամենաուշադիրը՝ ինչպես մայրը, լինի այր կամ կին, որին միշտ սպասում են, կարոտում, որից անհագ գորանում են...

– Իմիջիայրոց, գրույցից առաջ փորձեցինք ճշտել տնօրեններից մի քանիսի կարծիքը դպրոցի առջև ծառայած խնդիրների մասին: Գիտե՞ք, թե հատկապես ինչ մտահոգություններ ունեին նրանք. պատահականությունը, թյուրիմացությունն էլ շատ կրթությունը ղեկավարող պաշտոնյաների շարքում՝ նախարարությունից մինչև մարզային վարչություններ, համայնքապետարանների համապատասխան բաժիններ:

– Լրագրողի աչքերն անկողնակալ ճառագում ունեն: Բայց կա մանկավարժական համերաշխության խնդիր: Իմ գաղտնիքն է՝ պաշտոնակից գործընկերներից յուրաքանչյուրի մեջ գտած ունեն քաղցրության մի հատիկ: Մարդը ներանձնամալով է իրեն գտնում, ճանաչվում է արհեստավարժության համագործակցությամբ: Սյունիք աշխարհում բարեկամների, մտերիմների, համախոհների պակաս չկա:

– Դպրոցում այդ ամենի արդյունքում ուսումնառաստիարակչական պրոցեսը, կարծեք, հետին պլան է մղվել: Դպրոցը, ցավոք, ավելի շատ հիմա «կլուբի» է նմանվում: Անընդհատ միջոցառումներ՝ ուսումնական պրոցեսի հետ կապ չունեցող: Մենք էլ սկսել ենք դպրոցի տնօրենի, մանկավարժի աշխատանքը գնահատել միջոցառումների քանակով ու փայլով, ընտրական գործընթացներում նրանց խաղացած դերով, համայնքային միջոցառումներին ավելի շատ ծափահարողներ եւ փուչիկ տատանողներ ապահովելով: Կկարողանա՞նք մոտակա տարիներին դպրոցն ազատել նման ողբալի երեւոյթներից, կկարողանա՞նք դպրոցում զբաղվել միայն դպրոցական գործերով եւ տնօրենին, մանկավարժին գնահատել միայն ուսումնառաստիարակչական աշխատանքների որակին համապատասխան:

– Դիպուկ նկատառում է: Դպրոցում արմատացել է շուրն (ո՞նց էլ հարազատացել է այս հորանջ բառը մեր չտեսներին): Դասի ժամին Արմինեի տիկնիկն է ընկնում հատակին, երեւում են Արթուրիկի արջուկի ականջները, Անուշիկն էլ մի հսկա սինի է կրում: Ասում են՝ միջոցառման փորձի համար է: Այսպես է, ակունքային առօրյան դպրոցն ականա իր հարկն է տեղափոխել: Լրագրում կարդացի. երեւանցի մի տնօրեն հպարտանում էր, որ տարվա ընթացքում 150 միջոցառում է արել: Այդ ամենը չի՞ խանգարել ուսուցման գործընթացին, թե՞ հիրավի ավերել է... Այո, դպրոցը կլուբ ու կազինո չէ, եւ այս դիտարկման մեջ վերլուծության կարիք չկա: Այլ բան է, գործիմասկ, որ դնումանք բիզնես ուսուցելու-դաս տալու մասին: Միջոցառումների դպրոցական բեմը դրամահավաքչության մեկնարկի հարթակն է: Այս տիպը երեւոյթը խորացնում է անդուհող դպրոցի եւ ընտանիքի (հասարակության) միջեւ: Դիտարկելի են ակնառու ծայրահեղություններ. ունեւոր ծնողները հանգամանակայանը մասնակցում են ժխտության ակնարկներով, աղքատները՝ նվաստացած արժանապատվությամբ, անգամ՝ պարտքով: Մտորելու է կարո՞ղ է դպրոցը ունեւորի համարում ունենալ: Ասենք՝ դրամաշնորհներ տա քանքարավոր աշակերտներին, ուսուցիչ-նվիրյալներին...

– Հանրապետության դպրոցներում անվերջ մրցույթներ

են անցկացվում՝ «Լավագույն տնօրեն», «Լավագույն ուսուցիչ» ... Ո՞ւմ ենք համարում լավագույն տնօրեն, լավագույն ուսուցիչ:

– «Լավագույնների» մրցութակարգն անհեթեթություն է: Այն իրականում մոռացության է մղում լավագույն ուսուցչին: Ինչպե՞ս կարելի է լավագույն ճանաչել մեկ-երկուսին, երբ մեր ընկալմամբ մարզում նրանց թիվը տասնյակների է հասնում, հանրապետությունում՝ ավելի քան շատ: Վիճակախաղային տարրը վստահություն չի ներշնչում: Լավագույնին պետք է ճանաչել հեռվից՝ նախապատրաստել հավակնորդի գործունեությունը լուսաբանող ճշմարտահավատ տեղեկագիր, այն շրջանառել-քննարկել հանրույթներում, արժանացնել գրքույկով հրատարակելու բարձր պատվին: Խնդրին անգնահատելի ծառայություններ կմատուցեն էլեկտրոնային փոստերը: Ըստ այդմ՝ ԿԱԻ (ՀԱԻ) մասնաճյուղերը կհիմնարկեն առաջավոր փորձի գրադարաններ, սկսնակներն իրենց ձեռքի տակ կունենան ավելի գործնական ուղեցույցներ:

– Գյուղական դպրոցն է, կարծեք, հայտնվել լրջագույն մարտահրավերների դեմ հանդիման: Նախ՝ կա՞ մեզանում գյուղական դպրոցի էության պատշաճ ըմբռնում: Երկրորդ, կկարողանա՞նք գյուղական դպրոցը փրկել անվերջ օպտիմալացումների երախից:

– Գերատեսչական ծայրափողերից վաղուց չեն լսվում գյուղական դպրոց, գյուղական ուսուցում, գյուղական առանձնահատկություններ բնորոշումները: Ընդհանուր առմամբ մեր գյուղերը մխրճվել են ագուցված ճգնաժամի մեջ, եւ այդ տխուր պատկերների մեջ դպրոցն է վիզը ծռել: Քաղաքը ճչան ու աղմկարար է, եւ ամբողջ ուշադրությունն իրեն է բեւեռել: Գյուղն իր ազգագրական ինքնատիպությամբ ամոթխած հարս է եւ համբերատար ապավինել է բուրժուազիայի հանկարծաբուխ ձեռքմեկնմանը: Հրամայական է, որ վերեները նախաձեռնեն գյուղի կայացման-զարգացման համապետական ծրագիր, որի մաս կկազմի գյուղական դպրոցի վերագարթոնքը: Քչերը գիտեն, որ սակավակազմ գյուղական դպրոցներում ուսուցչական աշխատավարձերը վճարվում են կիսով չափ, նաեւ՝ քառորդ չափով: Նախարարությունը կիրարկում է կես դասարան, քառորդ դասարան հասկացություններ, եւ ըստ այդմ վտանգված են եւ ուսուցչի, եւ աշակերտի իրավունքները: Եթե, ասենք, դասարանում միայն Աշտիկն ու Վարդուշիկն են, դասը կարող է տեսել ոչ թե 45 րոպե, այլ՝ 22 րոպե 30 վայրկյան: Իսկ քաղաքի դպրոցում, եթե դասարանում, դիցուք, 30 աշակերտ կա, դասը 45-ի փոխարեն 67 րոպե 30 վայրկյան չի տեսում: Ի դեպ, գյուղական դպրոցների թերակազմ կարգավիճակը մանկավարժական սխրանքի հնարավորություն է ընձեռում. արդ, հետազոտական-որոնողական աշխատանքի լայնամասշտաբ մեկնարկը գյուղական դպրոցին է: Վերն արժարժված մասնավոր էֆեկտը կարելի է սպասել գյուղական ուսուցումից: Ցավով պետք է արձանագրենք, որ ժամանակ առ ժամանակ բռնկվող օպտիմալացումներից դպրոցն անցել է պերմանենտ օպտիմալացման: Փոքրավուն դպրոցում ծնողի աչքին «կլուբային շուրն» չի զարմում, եւ նա երեխայի տեղափոխման մտահոգություն է ունենում: Մեր աչքի առաջ փակվեց համբավմունք շրվենանցյանը: Ճարմանակիրներն մարզիս մի շարք գյուղեր ունեն գյուղապետարան, սակայն դպրոց ու մանկապարտեզ չունեն: Մի՞թե գյուղապետարանի կազմակերպման հայտանիշը դպրոցի աստիճանական կազմակերպումը չպիտի լինի:

## Մանկավարժություն

– Ներդրողական կյանքում որոշ երեւոյթներ վաղուց ձեւի են փոխարկվել: Ուսուցիչներից շատերը, օրինակ, բայց դասը թատերական ներկայացում են համարում: Առարկայական մեթոդավորումներն ու մանկխորհուրդներն էլ բոլոր ուսուցիչներն են լուրջ ընդունում, ի՞նչ կասեք այդ մասին:

– Մանկավարժական խորհուրդը, մեթոդավորումներն արդիականության արժեք չունեն: Առաջինը տնօրենի կից ձեւական-արձանագրական միավորում է: Կոչված է որոշումներ ընդունել ներդրողական կյանքի կազմակերպման հարցերի վերաբերյալ: Մինչդեռ մանկխորհրդի ցանկացած որոշում զուրկ է իրավական հիմքից, որովհետեւ ամեն ինչ չափված-հրահանգված է վերելից: Աշակերտներին դասարանից դասարան փոխադրելու, կրթության վկայականներ հանձնելու, դպրոց ընդունելու կամ այլ դպրոց տեղափոխելու պատասխանատու գործառնությունները կանոնարկված են նախարարության հրահանգներով: Այդ ամենը ձեւականորեն անցնում է մանկխորհրդով եւ կնքվում տնօրենի կողմից: Արձանագրվում են ուսուցչական ելույթները՝ մտահոգություններ, առաջարկություններ, ընդհանրացումներ: Դրանք արձանագրվում են՝ ավարտվելով դեկլարատիվ, կենսագործելիության հայտանիշից զուրկ որոշումներով:

... Հասունացել է ժամանակը, որ հանրապետության ուսուցիչների առաջատար համակազմը հավաքվի ուսուցչական համագումարի, որոշի կրթության օրենքի կենսագործման արդյունավետ եղանակները, կառուցվածքային փոփոխությունների հեռանկարը, դպրոցական կյանքի դինամիզմի արդյունավետ չափանիշները եւ այլն:

– Քիչ առաջ դաստիարակության բովանդակության մասին էինք խոսում, բայց ֆիզկուլտուրայի դրվածքը շատերին է մտահոգում, հանրօգուտ աշխատանքն էլ դպրոցից հանել ենք: Դպրոցականների ամառային հանգիստն էլ բոլորիս ջանքերով վերացրինք: Սյունիքի մարզում ժամանակին կառուցված տիպային հրաշալի ճամբարները մի քանի հոգի զավթեցին եւ երեխաների համար դարձրին արգելված գոտի: Առանց այդ հարցերի լուծման գործը դժվար թե գլուխ գա:

– Ֆիզիկական դաստիարակությունը դպրոցի անզուգական առաջնահերթությունն է: Առողջ մարմնում՝ առողջ հոգի: Ֆիզիկական, հոգեկան սթրեսների դեմ պայքարը մանկավարժության գերխնդիրն է, դպրոցավարության չափանիշային պահանջը: Ընդհանուրի մեջ ֆիզկուլտուրա առարկան կոնկրետ խնդիրներ է լուծում: Սպորտն ինչ-որ տեղ փոխս օգտելու է արվեստների ու մշակույթի հետ: Ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվում մարզական հնարավորությունների արդիականացմանը: Մարզագույք տնօրենը խնդրում է օտարաճան կազմակերպություններից, մռայլատես մեծահարուստներից: Ուժի, հնարամտության, վայելչատեսության մանկավարժական պահանջները յուրովի են ապահովում հնավանդ ազգային խաղերը, որոնք, ի ցավ ավագ սերնդիս, մոռացվում են: Համադրեք, խնդրեմ, հոլախաղը կամ չլիկ փայտը մարտկոցի ուժով պարող եւ խիմո պատճառող մարդուկի ծրագրի հետ... Սյունիքի ամեն գյուղ մրցութային տասնյակ խաղեր ու խրախճանականներ ունեն: Ուրեմն, ֆիզկուլտուրայի ուսուցիչն ու... մանկխորհուրդն առավել ազգային պետք է լինեն:

Ինչ վերաբերում է երեխաների ամառային հանգստին, գյուղական դպրոցում այն հնարավորություններ ունի: Օրինակ

առնենք Լեռնաձորի հիմնականը: Դպրոցը գործում է շուրջտարայ: Աշակերտական արձակուրդներին դպրոցի մարզական եւ մյուս հնարավորությունները գտնվում են աշակերտական խորհրդի տրամադրության տակ: Դպրոցում ոչինչ փակի տակ չէ:

Ի դեպ, աշակերտական ինքնավարությունն ինքնապատակ չպետք է լինի: Ինչպես դպրոցում ամեն ինչ, այդ էլ պիտի ուսուցվի: Աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության հեղինակներն այս կարեւոր պահանջը չեն ամրագրել:

...Հասարակության կազմակերպման անհատապաշտական, ազատ շահառուական եղանակը, բնականաբար, չի ենթադրում բարեգործական հանրօգուտ աշխատանք: Եթե ամեն ինչի համար վճարելն է առաջնային, ապա բարեգործությունը սակավաթիվ առաքինի ու բարձրաշխարհիկ անհատների մենաշնորհն է: Հանրօգուտ աշխատանքը դպրոցից հանելով, դատեցեք ինքներդ, շրթայական կապակցվածությամբ հասել ենք մուրացկան երեխաների թափառական խմբերի իրականությանը...

– Դասագրքեր... Մի՞թե չենք կարող առանց տառասխալների, առանց կուսակցական ընդգծված շեշտադրության դասագրքեր ունենալ: Ինչպե՞ս հասկանալ՝ միեւնոյն առարկայից շրջանառության մեջ են իրարից էականորեն տարբերվող, պետական ծրագրերին չհամապատասխանող դասագրքեր:

– Գրքի արտադրությունը մեզանում բարձիթողի է, ամենուրեք կարելի է հանդիպել «փտորի», որն առավել աչք ծակող է մանկավարժական ասպարեզում:

– Ի՞նչ վիճակում է մանկավարժական գիտությունը:

– Մանկավարժական գիտության պրագմատիզմը պետք է քրքրի ուսուցչին: Հետազոտությունների, եզրահանգումների եւ նորարարության պտուղները պետք է համտեմբե դպրոցում: Գիտական միջավայրի տկարության պատճառով մանկավարժների խորհող-պրպտող սերունդը քննություն է բռնում արտերկրի գիտական կենտրոններում: Մանկավարժական պարբերականները երբեմն փայլատակում են ուսուցչական ինքնատիպ հետազոտություններով: Արդ, կռահելի է, որ գիտնական ուսուցչին կարելի է ճանաչել հենց իր գրասեղանի մոտ, առանց գիտական աստիճանի շնորհանդեսի:

Թող այն տպավորությունը չստեղծվի, որ արտերկրի հետ համագործակցելը տաբու են համարում: Ազգայինի առանձնահատկությունները զուգահեռվում են համեմատական մանկավարժությանը, մաս ու բովանդակություն կազմում համամարդկայինին:

... Վերջերս մանակագրությամբ ու գրույցներով փորձում էի իմանալ բարեկամներիս կարծիքը աշակերտի կողմից գրավոր նյութը չըմբռնելու երեւոյթի պատճառների մասին: Ընթերցասիրության համատարած նահանջը հիմքում այդ ախտն ունի, որից տրտմունք են գրեթե բոլոր երկրներում: Համացանցով իմացա, որ գերմանացի մանկավարժները, կարեւորելով խնդիրը, անգամ այն կոչել են հատուկ եզրով՝ դիպլոմատիկա: Դե, համացանցն էլ աստիճանաբար նաեւ հայախոս է դառնում, լավ ժամանակներն առջեւում են:

Շնորհավոր նոր ուստարի, արեւշատություն գլխավոր խմբագրին ու խմբագրակազմին:

**Հարցազրույց՝**  
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**  
**«Այսօրվայց Երկիր»**  
**1 սեպտեմբերի 2010թ., N15**

## Մանկավարժություն

### ԶԳՈՒՇԱՅԵ՛Ք ԴԱՍԱԼՍՈՒՄԻՅ

Նորերս տնօրենը ԿԳՆ-ի առաքումներից հերթական գնումը կատարեց: Նա իր եւ տեղակալների գրասեղաններին դրեց տպարանային արտադրության դասալուսման գրանցման մեկական մատյան: Կասկած չունեմ. մեր բարեխիղճ վարչականները, կապտավուն կազմով մատյաններն առած, ուսուցչին կրնկակոխ հաջորդելով, արդեն որերորդ անգամ դիրք են գրավել դասասենյակի վերջին նստարանին ու լրացրել 16 կետանոց առաջին էջ-հարցարանները: Փույթ չէ, որ մատյանի կազմի վերջին երեսին առբերված վարման կարգը պահանջում է համարակալել էջերը, սակայն յուրաքանչյուր էջ ունի «Դասալսման գրանցում թիվ -» վերնագիրը: Ի միջի այլոց, թե ինչպես է արեւնտահայերենի բազմիմաստ «թիվ» բառը վերջին տարիներին դուրս մղել արեւելահայերենի՝ քննություն բռնած «համար» բառին եւ անհեթեթորեն տեղ բռնել կնիքների ու ցուցակների վրա, թողնենք լեզվի պետտեսչության քննությանը: Համարակալելը ենթադրում է «համար» (թվահամար, համրել, համրիչ, անհամար եւ այլն) բառը, այլ ոչ՝ «թիվ»-ը: Ուղղախոսություն ուսուցանողի համար սա անկարելուր հարց չէ:

Դասալսումների գրանցման մատյանը, ի զարմանս, չի թվարկված ԿԳՆ 2000թ. օգոստոսի 15-ի հմ. 264-Մ հրամանում (այնտեղ թիվ չէ, այլ Հմ;), որը սահմանում է դպրոցում պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի ցանկը: Սա նշանակում է, որ «գրանցամուկության» ինքնագործունեությունը շարունակվելու միտում ունի: Վերջը չէ՞ք տեսնում, նախարար առ նախարար դպրոցը բեռնվում է գրաքննական փաստաթղթերով, եւ ավարտագծում, անշուշտ, «թղթի դիկտատուրան» է, որի դարաշրջանը հազիվ էինք թոթափել:

Նպատակ չունեն մերժել դասալսումների մատյանը, որովհետեւ այն կրթահամակարգի աստիճանների «սրտից բխածն» է: Գլուխ չունեն նրանց հետ վիճել, որովհետեւ, գիտեն, այսպես «համոզիչ» կփաստարկեն՝ «մատյանը պետք է ուսուցչի աշխատանքը ճիշտ

գնահատելու, առաջատարին ու թերացողին տարբերելու, նորարարությունը գրանցելու, պլանների ու ծրարի կենսագործումը ստուգելու, ժամանակակից գիտության նվաճումները ծանուցելու համար»: Նորընծա մատյանը շնորհավորելու միտք էլ չունեմ: Բայց այն մտորելու է: Մերօրյա դպրոցի իրավիճակին ծանոթ եք: Տարի առ տարի հակվում ենք թղթարարությանը: Ըստ էության, դպրոցում ամեն ինչ գրանցում ու գրաքննություն է ընթանում: Աշակերտական բազմազան տեսերը, դասամատյանները, միստերի ու ժողովների արձանագրությունները, դասալուսմանը, տարբեր նշանակության ծրագրերը, միջոցառումների ցանկերն ու ամփոփագրերը, պատճենվող համակարգչային քարտերն ու գրատախտակային գրառումները, ժամանակացույցները ու գրաֆիկները, տնօրենի (ուսմասվարի, զինղեկի, դասղեկի, ջոկատավարի, ավագ հերթապահի եւ այլն) շրջանառած տեղեկատվական փաստաթղթերը, ֆինանսատնտեսական գրագրությունները, դիմումներին ու գրություններին պատասխանելը, դասագրքային տեղեկագրումները, «ստացար-ստորագրի» ապրանքագրերը, վառելիքի ծախսման ամենօրյա գրառումները, տեսչական ստուգումները, փակ-զաղտնի քվեարկությունները, հաշվետվությունները, (թվարկումը շարունակեք) կազմում են մերօրյա դպրոցի գրաքննական գունագեղ պատկերը:

Այս ամենի ետնախորքում դպրոցի տեսչավորման դյուրինացման ավանդական մտայնությունն է: Գաղտնիք չէ, որ վերադաս ատյանների որոշ պատասխանատուներ վաղուց թքած ունեն դպրոցի արհեստավարժ-մանկավարժական գործընթացը ճանաչելու վրա եւ հակվել են տնավարականին՝ փաստաթղթերի ու գրանցումների առկայության հիման վրա յուրովսան գնահատական տալուն:

Այսքանից հետո մտադիր են՝ տեսնել ընթերցողի դառն արցունքը: Վերը բերված՝ այդպիսի բազմաբովանդակ փաստաթղթավարությունից հետո դպրոցական մանկավարժներին ծնողական շրջաններն անգամ չեն վստահում: Երեխաներին մասնավոր ուսուցման են ուղարկում, որտեղ նշված փաստաթղթից միայն աշակերտական տեսորն է երեւում: Վճարի համար անգամ անդորրագիր էլ չեն պահում, բայց արդյունք

ը... Արդյունքը ծնողի սպասածն է: Օրը ցերեկով, կրթատենչ հասարակությունը, հանրապետությունով մեկ համատարած, դպրոցին ձեռնոց է նետել՝ դեռահասներին կրթում է ետդպրոցական ժամանակում, դպրոցից դուրս, իսկ դպրոցում չիմանալու կամ չտեսնելու ենք տալիս: Ուսուցչիցների շրջանում էլ ի՞նչ առաջավոր փորձ է փնտրում ուսմասվարը, երբ ետդասային ժամանակում առկա է դասուսույցի «գերմեթոդը», որը սովորել է հանրակրթական կոչվածը: Իսկ դուք հրապուրված եք (ծեզ հրապուրել են) աներիկաների, ֆրանսիաների եւ այլոց «սուպերարդյունարար» մեթոդներով եւ ջանում եք դրանք պատվաստել մեր չպեղված բազմադարյա մանկավարժության ծառին:

Գիտեք նաեւ, որ ինչ-որ տեղ ծնողները (կամ հոպարը, մորաքույրը) դասուսույցին էլ չեն հավանում: Անտեղյակ մի՛ եղեք, վերջընթեր ուսուցումը դարձյալ դպրոցին չեն վստահում: Դասախոսի մոտ են տանում, որտեղ իսկի տեսորն էլ պետք չի:

Այս դիտարկումից հետո քննության առնենք դասալսում կոչված երեւույթը: Նման գործառնությունը դժվար թե հատուկ լինի հասարակական կյանքի այլ բնագավառներին: Զորօրինակ, գլխավոր բժիշկը մատյանը չի առնի ու մտնի վիրահատարան՝ գրառելու մեր տեսակի անհատի հետ կատարվողը:

Դասալսման նախակերպը կարելի է մակաբերել պալեստրայի, ինչպես նաեւ հին Հայաստանի վարդապետարանների գործունեության ուսումնասիրությունից: Բայց դա երեւելի անհատականությունների ճանաչման ու մեծարման գնահատականն էր: Դասալսումն, անշուշտ, պաշտոնապես կիրառվել է դաս-դասարանական համակարգի հայտնագործման հետ՝ մեծն Կոմնիացու (Կոմենսկի) կողմից:

Ցարական, այնուհետեւ խորհրդային զորանոցային մանկավարժության համար այն դարձավ ուսուցչի վրա ներագրելու «գեներ» յուրահատուկ ձեւ: Եվ «տրոյկան» դրանից շատ է օգտվել: Ի՞նչ է. մեծերի հետ սպիտակ արջերի սառցադաշտերում մանկավարժներ չէ՞ն եղել:

Խորհրդային շրջանում դասալսումն ուսուցչի համար անթաքույց ներառում էր նրա անկարողության բացահայտելու եւ անհաբեկչության տարրեր: 20-30-ական թվականներին ուսուցչական կա-

## Սանկավարժություն

դերը, հիմնականում լինելով դպրոցների շրջանավարտներ, բնականաբար, վարպետության կատարելագործման կարիք ունենին:

Կրեմլի պահանջով ուսուցչական աշխատանքի կարգվածներին պետք էր ուսուցանել:

Եվ դասալսույնը կիրարկվեց որպես դպրոցական կյանքի պարտադիր պահանջ: Ասենք, առանց դրա պատկերացելու չէր կայանա խորհրդային դպրոցը: Այն անհրաժեշտաբար ներդրվեց, արմատացավ, դարձավ ավանդական: Արդ, մեր ժամանակներում, առարկայավարների համալսարանական կրթության պայմաններում, այն պետք է վերահիմաստավորվի:

Աստված սիրեք՝ այս շարադրանքը քննարկելիս մեջբերումներ չանեք արտերկրի գիտուններից: Բավ է, որքան նրանցից առած ու ներդրած ունենք: Չեն կարծում, թե նրանք իրենց երկրներում այնքան հարգի են, որքան մենք ենք չտեսի պես կպել նրանց՝ աներախտիք անգետի պես անտես առնելով ազգային մանկավարժությունը: Մեր դիտարկումը, թե դասալսույնը որպես դպրոցական գործառույթ ձեւավորվել է եւ արմատավորվել ուսուցչական կադրերին ուսուցանելու եւ վերագիներու նպատակով, մտապահեք: Դրան զուգահեռ գոյություն է ունեցել մանկավարժական բռնապետության դրսևորումը, դասալսման արդյունքները՝ կարելին եւ ոչ կարելին, քննարկվել են մանկխորհրդի (նաեւ ռայմանկի, կոլեգիայի) նիստերում, վերահասի խորհրդակցություններում, անգամ մամուլում ու ծնողական ժողովներում: Ինչ-որ գյուղում, օրինակ, իշարածն իմացել է, որ այսինչ դասատուն քարտեզի վրա «չի կարողացել» գտնել Լենինգրադը չի կարողացել լուծել աշակերտների համար ծրարով եկած խնդիրը:

Դասալսույնը զորանոցային մանկավարժության դանդաղ գործող ականն էր: Ներկայություն ունեցող (սվող) դասերը, բնականաբար, ընթացել են ուսուցչի եւ աշակերտների լարվածության պայմաններում, արտացոլել անվերլուծելի ձեւականություններ: Առանց զգուշացման դասալսումները երբեմն խաթարում էին ուսուցչի հոգեաշխարհը: Դասալսումից հետո ուսուցիչը դասաժամին ակտիվություն չցուցաբերած աշակերտների հետ «դատաստան» է տեսել, վերավարժեցրել նրանց «պա-

հանջվող» դերակատարության մեջ: Ուսուցչի մեծամասնությունը չէր համակրում դասալսույնը, որովհետեւ այդպիսի դասաժամերին ուսուցչի եւ աշակերտների միջանձային փոխհարաբերությունները դուրս էին գալիս բնականոն վիճակից: Ստեղծագործման պահը (սա դասի ամեն բուսեն է) կանոնարկված ու կադրավարված էր դասալսողի մտահայեցողությանը, ճաշակին ու այդդրական տրամադրությանը համապատասխան: Եզակի դասալսումից ստացած տպավորությունը կարող էր ոչ ցանկալի կանխակալ կարծիք լինել ու վճռական լինել ուսուցչական կարիերաների համար:

Դասալսույնը, թվում է, լուծում է նաեւ ուսուցչին վստահելու կամ չվստահելու խնդիր՝ մասնագիտական պատրաստվածության առումով: Այս դիտարկման վրա ի հայտ է գալիս մի հարակարծություն (պարադոքս): Մեր ժամանակի ուսուցիչը բուհական լսարանում զինվել է գիտության հիմունքներով, իր հոգու ռսպնյակով անցկացրել մանկավարժության գոհարեղենը՝ վարժվել ուսուցման ու դաստիարակության մեթոդների ու եղանակների մեջ, տիրապետել հոգեբանության հիմունքներին: Էլ ի՞նչ ենք ուզում նրանից: Եթե պատահական դիպումավոր մեկն է, ապա ի՞նչ միտք ունի նրա հետ աշխատանք տանելը: Ըստ կոչման եւ դիպումի, սկսնակ ուսուցիչը խանդավառ մասնագետ է, նորարարության սիրահար ու, տեսեք, տարեցներին բարձունքից է նայում՝ նրանք իրենց դարձնում են, հնացել են, եւ դեռահասները նրանց ձեռ են առնում: Ինքը ցույց կտա, որ մանկավարժությունը հարափոփոխ ջունգլի է, իսկ իր նորակոչությունը՝ նրանում տիրաբար թափառող առյուծ... Եվ գալիս է դասալսողը, որ նրա վարդենի ճախրը համարի անմիտ եւ դասալսումների մատյանի հմ. 9 կետում շարի գլխին փչած դիտողությունները՝ նորեկին մղելով դեպի հնոտիքի ու պահպանողականության ճահիճը: Մարդուն դիտողություն անելը բարեկրթությունից չէ, այլ՝ գռեհիկ վարչարարության ժամանակավրեպ մարմաջից, որ ունեն դեկավարի հովերով փնջացող պատահականությունները: Ուսուցիչ-անհատին դիտողություն անելը, ըստ իս, հոգեւոր ցինիզմի արտահայտություն է: Եվ չպատկերացնել, որ առանց ուսուցչին (մանկավարժին) դիտողություն

անելու կարելի է բարձրարդյունավետ դպրոց ունենալ, թերահավատություն կամ անհարկի չկամություն է: Ընդամին, չեն պնդում այս պայմանի կիրարկումն այսօրվանից կամ... սեպտեմբերի 1-ից:

Այսօրվա մանկավարժական հրապարակում դասալսման գնալը հակասական է դպրոցական գործի շահեկանությանը: Այն իր մեջ ունի ուսուցչի ազատության ճնշման, դասալսողի անձի գերադասության չգիտակցված հաստատման, ավելի բարձր աստիճանավորի ցուցանողության ցուցադրման, կոլեկտիվում անհամերաշխվածության անտես սերմանման, հավատավոր աշակերտների ըմբռնումի մեջ ուսուցչին նսեմացնելու եւ բազմաթիվ այլ բացասական մետ տարրեր:

Որքանով դասալսողը գիտի, թե ինչ պատրաստվածության ուսուցիչ է իր առջեւ, այնքան էլ գուցե ավելին, ուսուցիչը գիտի, թե դասալսողն իսկապե՞ս մանկավարժական լիդեր է, ունի՞ վարպետության փայլ, մանկավարժական հեղինակություն է, թե՞ միջավայրային: Ուսուցչի համար չկա տհաճության ավելի ճշող առիթ, քան ոչ պրոֆեսիոնալի կողմից դասալսման «ենթարկվելը»:

Դիտողություններին դույզն-ինչ անդրադարձանք: Բայց դասալսողից պահանջվում է նաեւ ուսուցչին ներկայանալ առաջարկություններով ու եզրակացություններով: Այս պահանջները սակավ ուսումնասիրված են գիտամանկավարժական (մեթոդամանկավարժական) հետազոտություններում: Արդ, բնականաբար, դրանցում իշխողը մտահայեցականն է, սեփական պատկերացումը դիմացինին պարտադրելը, իմա՝ ազատ ինքնագործունեությունը: Բանավիճելու, քննարկումը ձգձգելու առիթ ու պատեհություն՝ որքան ուզեք: Հենց այն, որ աշակերտակենտրոն ուսուցումն ու ֆրոնտալ-ավանդական ուսուցումը մերօրյա մանկավարժական միջավայրի աչք ծակող հակասության կռվան են, դասալսումն ինքնին բնորոշում է որպես քննարկելի, բարելավելի ու նորովի ընկալելի դպրոցական երեւույթ: Դասի քննարկումը՝ դիտողություն, առաջարկություն, եզրակացություն, անշուշտ, ինչ-որ բան արժե: Դրան հետեւում է աշխատաժամանակի ընդլայնումը, ծագում են լրացուցիչ ծանրաբեռնվածության հանձնարարման, ինքնակրթական աշխատանքի

## Սանկավարժություն

կազմակերպման եւ այլ խնդիրներ: Դրանք առայժմ կանոնակարգված չեն դպրոցի ֆինանսական տախտակում եւ ներդպրոցական վերահսկողության համակարգում չունեն հստակ ձեւակերպումներ:

Դասալսման արդյունքներով ի հայտ բերված առաջավոր փորձը, լինելով ուսուցչի հեղինակային մեծաշնորհը, ինչո՞ւ պետք է նրանից խլվի եւ տարածվի, առանց նրան փոխհատուցելու կամ հեղինակային արտոնություն վերապահելու:

Մյուս կողմից՝ ամենաթունդ դիտողությունն անգամ խթան չէ, որ թերացող կամ անկար ուսուցիչը «դարձի գա»: Ծայրահեղություններին էլ ոչ ոք չի դիմի՝ նա պետք է հնամաշ վերարկուով դպրոց գա մինչեւ թռչակի տարիքը ու երբեմն «տարիների պատկառազուրկ վաստակից»՝ ինքնագոհ, նաեւ դրանից հետո: Վերոբերյալ երկու իրավիճակները պրակտիկայում ցայժմ տաբու են: Դասալսողը դրանք պետք է մի կողմ դնի եւ սովորականի պես կատարի իր պարտականությունները՝ դասալսում, դիտողություն, եզրակացություն: Յետո ի՞նչ, որ, օրինակ, օգոստոսյան խորհրդակցությունում էլ կասեն, թե այսինչը լավ ուսուցիչ է, այնինչը՝ վատ: Աչք փակելու չէ, որ այժմ զգալի թվով ուսուցիչներ ակներեւ քամահրանք ունեն դասացուցակային դասերի նկատմամբ: Դասի մանկավարժական ցածրորակությունը նկատում են նաեւ ուշիմ աշակերտները:

Պետք է խոստովանել, որ դասուսուցչների «մոդայիկ» կազմը, որը մանկավարժական աշխատանքը վեր է ածել պարզունակ արհեստի, լավագույնս գիտի, թե ինչ է կատարվում դպրոցում եւ հատկապես ինչ ճակատագիր ունի դասը:

Մինչդեռ այստեղ-այնտեղ կարելի է պնդումներ լսել, թե դպրոցը պահպանողական պետք է լինի: Ենթատեքստում թերահավատությունն է բարեփոխումների նկատմամբ, նորի ամսատչելիության կասկածը: Դինամիզմի եւ դանդաղկոտության հակադրությունից է, որ դպրոցը պարտված դուրս եկավ ետդասային մասնավոր ուսուցման մրցույթից: Եթե դպրոցից դուրս կա ավելի որակյալ ուսուցում, ապա տնօրենից մինչեւ նախարար՝ բոլորը պետք է սրտաճաք լինեն:

Չիմա, երբ քաղաքն ու գյուղը վեր են ածվել շուկայի, եւ ցանկալի մրցակ-

ցությունը մարդուն պետք է քաղաքավարությամբ տրորի կամ վեր բարձրացնի, դպրոցը, փաստորեն, հայտնվել է ճգնաժամի մեջ: Ի վերջո, մեզ անհայտ է նորօրյա դասալսման նպատակը: Եվ ավանդական եղանակներն ու գործելակերպը վերափոխաստավորելու մեր չկամությունը, թերեւս, բացատրելի է: Նորարարության, հետազոտության, նոր ընկալման գաղափարի շրջանառման համար ուսուցիչը չի վճարվում, չի խրախուսվում, չի քաջալերվում: ԿԳԵ-ն չի կարելուրում բարեփոխումների արմատավորման ու նորացվող մանկավարժության գաղափարների բանկը:

Տարակուսելի չէ այլեւս, երբ ուսուցչին արտադպրոցական ժամանակում վարձում են որպես դասուսույց, նա այնտեղ է ջանք գործադրում որակի ու արդյունավետության համար: Չէ՞ որ հոգացավությունը վճարվածությամբ է:

Մի կողմից ուսուցման եղանակների ու մեթոդների ազատության ապահովումն ուսուցչի համար, մյուս կողմից վերադասի պահանջը դպրոցի տնօրենությանը՝ ուսուցչի պատրաստվածությունը բարձրացնելու եւ մեթոդական վարպետությունը կատարելագործելու վերաբերյալ, դիմակայության եզրեր շատ ունեն: Եթե որակյալ ուսուցիչը ջանադիր աշխատանքի, առաջավոր փորձի հեղինակման, նորարարությամբ գործընկերներին տրամադրելու, իր տաղանդի ու շնորհների օրավուր բացահայտման ու նախաձեռնությունների համար ըստ արժանվույն չի վճարվում, ապա դասալսումն աննպատակ զբաղմունք է, անհեթեթություն:

Ուրեմն դեն նետե՛լ դասալսումը:

Դպրոցի առջեւ դեռեւս չի դրվել բարեփոխման այնպիսի պահանջ, որ ուսուցչական աշխատանքի խթանման շահագրգռվածությունը ոչ թե «վերելից» լինի, այլ՝ հատկապես ուսուցչական հարթակից: Ոչ թե տնօրենությունը պարտականություն պետք է ունենա՝ բարձրացնելու ուսուցչի մեթոդական վարպետությունը, այլ դպրոցի կազմակերպումն այնպես պետք է լինի, որ ուսուցիչն ինքը ներքին պահանջ ունենա առաջատարի բնագիծը նվաճելու համար: Եվ դրա մեխանիզմը պետք է կարգավորվի տնօրենի հեղինակային ծրագրից բխող լրավճարային սանդղակով:

Ժամանակն է, որ դպրոցում կյանքի կոչվեն այնպիսի սկզբունքներ, որ

աշակերտ-անհատի թաքնված ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը, ինֆանտիլիզմի մասնակի հաղթահարումը, արդյունավետ մեթոդական հնարների ու եղանակների փորձարկումն ու ներդրումը, պրագմատիկ բովանդակությամբ նախաձեռնություններում հանդես գալը, ստեղծագործական ինքնատիպությունը (մի խոսքով՝ աննահանջ մասնագիտական բարձր պատրաստվածությունը) դառնան ուսուցչի ոճը, մշտական ձգտումը, յուրատեսակ ցանկալի մարմաջ: Այդքանից հետո դպրոցի վարկը կասկածի չի ենթարկվի եւ չի լինի արդիականությունից ետ մնալու խնդիր: Դասալսումը կվերառվի նոր նշանակությամբ: Ոչ թե դասալսման պլանը կատարելու խնդիր կլինի, այլ ուսուցիչն ինքը կիրավիրի դասալսման՝ կամ օգնություն ստանալու ակնկալիքով, կամ նորարարությունն ի քննություն դնելու անհրաժեշտությունից ելնելով: Մրցույթի տարրը տեղ կգրավի ուսուցչական աշխատանքում: Եվ դասալսումից կզգուշանա ոչ թե ուսուցիչը, այլ դասալսողը:

Դասալսման մեջ առաջնայնությունը վերապահելով ուսուցչին, կարծես, սողանցք է մնում դեպի անկառավարելիության կասկածը: Դպրոցում դա տեղի ունենալ չի կարող, որովհետեւ եռանյա ղեկավարման նոր կարգն ի գործ է տնօրենի պաշտոնում ընտրել իսկական մանկավարժական լիդերին: Առաջիկայում, հարկավ, կունենանք ավելի շատ հեղինակային դպրոցներ՝ ի դեմ գործադիր տնօրենի: Յետեւաբար, կարող ենք սկսել փորձաշրջան անցնող դպրոցներից: Չէ՞ որ դպրոցի ֆինանսավորման նոր համակարգն ընձեռում է այդ հնարավորությունը:

Ուժեղ ուսուցչին կարող է դիմակայել միայն գերուժեղ տնօրենը: Լավ է ասված՝ դպրոցի անունը, պարծանքն ու պատիվը ուսուցիչն է: Եվ պատշաճում է, որ նա ունենա արժանավոր ընթացակարգ:

Այնուհանդերձ, զգուշացե՛ք դասալսումից:



## Մանկավարժություն

### Գյուղական ուսուցիչը

**Ե**ս ուզում եմ խոսել ինձ հուզող մի հարցի՝ գյուղական ուսուցչի ու նրա աշխատանքի մասին: Ինչի՞ց է, որ մարդ գյուղում մերթ մինչեւ ականջները սիրահարվում է դպրոցին, մերթ իրեն մենակ զգում, ինքնամփոփ դառնում:

Առհասարակ, մենք քիչ ենք խոսում ուսուցչական, մանկավարժական արվեստի մասին: Մանավանդ, երբ միջավայրը գյուղական է ու կոլեկտիվի անդամների թիվը՝ քիչ, դրա անհրաժեշտությունն ավելի է զգացվում: Անկեղծ ասած, ես նախանձում եմ քաղաքի ուսուցիչներին, մեծ կոլեկտիվում են աշխատում, հարուստ գրադարաններ, ուսուցչի տներ, մեթոդկաթիներտներ հաճախում: Իսկ գյուղական ուսուցիչն իր այդ պահանջին հագուրդ տալու համար միայն պետք է թերթերին ու ռադիոյին հետեւի: Ուզում եմ ասել, որ շատ դեպքերում նա ինչ-որ այլ պայմաններում է աշխատում եւ նրան պետք է վերադրել որոշ առանձնահատկություններ (այն էլ սկզբունքային): Անգամ մտքիս մեջ «գյուղական ուսուցչի մանկավարժություն», «գյուղի ուսուցչի պլան-կոնսպեկտ, բնավորություն» եւ այլ արտահայտություններ են գալիս: Իհարկե, առանց հումորի:

Ես ուսումնասիրել եմ ուսուցչի՝ գյուղացիների հետ առնչվելը, կենցաղը, լեզուն, խառնվածքը, կեցվածքը, ամեն, ամեն ինչ ազդում են ուսուցման ու դաստիարակության, դասի եւ, իհարկե, աշակերտների վրա:

Գյուղերում շատ ուսուցիչներ կան, որ իսկապես մանկավարժի խառնվածք չունեն, ուսուցչին ներկայացվող շատ պահանջներ անկարող են կատարել: Ինքնազարգացման մասին նրանք վաղուց մոռացել են: Կան եւ մարդիկ, որոնք, ինչպես ասում են, «30 թվականի պլան-կոնսպեկտով են խոսում»: Թերթերի կարեւոր իրադարձությունների, դպրոցի կյանքին համ ու հոտ տվող «մանրուքների» նկատմամբ անտարբեր

մարդիկ էլ կան, որոնց ճանաչելով չես կարող զայրույթ չապրել: Չեմ ուզում ընկերներիս վիրավորել, բայց գյուղերում աշխատող ուսուցիչների գերակշռող մասը կամ մանկավարժական կրթություն չունի կամ հեռակա կարգով է այն ստանում: Դա, ինչ խոսք, կաշկանդում է ստեղծագործական աշխատանքը: Իսկ երբ նորավարտներին ես մոտիկից ծանոթանում, սպասումներդ չեն արդարանում՝ նրանց մտածելակերպն էլ հետեւյալն է՝ «Մեկ է, մյուս տարի գյուղում չեմ մնա»: Էլ ի՞նչ սրտով պետք է ուսուցանի նման տրամադրություն ունեցողը:

Գյուղական դպրոցում ամեն տարի նոր ուսուցիչ են նշանակում: Դա եւս, իմ կարծիքով, խրախուսելի չէ ու գործին վնասում է:

Ես գյուղը սիրում եմ, հասկանում, քաղաքն իղեպ էլ եմ համարում: Ինչո՞ւ պետք է այդպես լինի:

Դրա հետ մեկտեղ, եթե հաշվի առնենք, որ փոքր կոլեկտիվում տարբեր բնավորությունները հաճախ չեն կարողանում չորստերել իրենց, ու միշտ չէ, որ կատարյալ մարդկանց հետ ես գործ ունենում, ահա ակամատես ես լինում անսկզբունք, տիպաբանությամբ: Իսկ դա մարդկանցից շատ ուժ ու եռանդ է խլում: Դրա փոխարեն... Կենսաբանության մի ուսուցչի ավտորուսում ցույց տվեցի «Չետաքրքրաշարժ կենսաբանություն» գիրքը: Չհետաքրքրվեց անգամ: «Ինչի՞ս է պետք», ասաց: Իսկ ուրիշն անընդհատ գրախանութում է, գիտի, թե այսինչ գիրքն այսքան տպաքանակով արդեն լույս է տեսել ու աշխատողին թախանձում է ստանալուց հետո իրեն չմոռանալ... :

Մարդիկ տարիներ շարունակ ատեստացիայի չեն ենթարկվում, լճացում են ապրում, իրենք էլ չզգալով այդ: Գյուղում, իհարկե, արթուն, պրպտող միտք էլ կա, լավագույն ուսուցիչներ էլ կան: Սակայն ինչո՞ւ մենք ավելի հակված ենք կյանքին վարդագույն ակնոցներով նայելու: Ցավոք, ես ճանաչում եմ քաղաքական կյանքի նկատմամբ խիստ անտարբեր, գեղագիտական հարցերի մասին շատ աղոտ պատկերացում ունեցող, իր գործն իսկ չսիրող, միշտ դժգոհ ուսուցչի՝ մի մարդու, որից անբաժան է վճռած բոլոր խնդիրների տեսողը, եւ որը, սակայն, չի կարող գեթ ծերուկ գեղջուկի հարցասիրությանը հագուրդ տալ:

Ուսուցչի ամենօրյա տրամադրու-

թյուն...

Սկսեմ ասել՝ ռոմանտիկ ավիչը երակներում, անդամագրվում են կոլեկտիվին ու, եղո՞ւկ, փշրվում են, ծուլանում: Որովհետեւ, ասենք, մեկը հուսահատեցնում է՝ «Ինչո՞ւ մանկավարժ դարձար», մյուսը՝ «25 տարվա ստաժ ունեն» (մի՞թե ամեն 25 տարի կարող է հարգանք ներշնչել) եւ այլն:

...Ավելի վատ է, երբ աշակերտներն են զգում, որ ուսուցիչը չի ապրում իր գործով, անհետեւողական է, անըբազաց, որ ավելի շատ աշխատավարձի մասին է խոսում:

Ես չեմ քաշվում հայտարարել, որ ուսուցիչը նաեւ կարող է աշակերտի՝ ուսման մեջ ետ մնալու պատճառ հանդիսանալ: Չիրավի, ամեն ինչ ուսուցչի մեջ պետք է որոնել: Երբ անհամատեղ են ուսուցչի եսը եւ մանկավարժական գիտությունը, ապա նա պարզապես խտանող է:

Չույժ կարեւոր է մեթոդիավորումների (նաեւ շրջիկ), խիտ եւ գործուն ցանց ունենալը: Մեր մանկավարժական թերթն էլ կարող է ավելին անել. ինչո՞ւ «Գյուղական ուսուցչի ամբիոն», «Գյուղական ուսուցչի համալսարան» բաժիններ չունենալ: Իհարկե, դա ամենեւին չի նսեմացի մեր լուսե երթը՝ գյուղի ու քաղաքի միջեւ եղած տարբերության աստիճանական վերացումը: Չարմար չի՞, արդյոք, թերթում բանավեճ սկսել ուսուցչի, հատկապես գյուղական ուսուցչի, ինքնազարգացման վերաբերյալ:



## Մանկավարժություն

# Գյուղական դպրոցը դասարանակազմության եւ իրավունքի թնջուկում

**Ընդ այն ժամանակս եկեալ Սեւրոդայ...,**

**եւ դորոցս կարգեաց յամենայն գաւառս:**

**Պատմահայր**

Յավարտ ուսումնական տարվա՝ դպրոցին համակում է ասպես կոչված կոմպլեկտավորման մտահոգությունը: Քանի՞ դասարան-միավոր պահելու թույլտվություն է ստանալու: Ինչպե՞ս ավելի շատ աշակերտներ ունենալ, որպեսզի, ինչ-որ թվաքանակ ապահովելով, կարելի լինի դասարան պահել: Ի դեպ, դասարանների քանակին համեմատ, սահմանվում են ուսմասվարի, բանվորի եւ այլ հաստիքներ: Դպրոցն իր հիմնադրի՝ մարզպետարանի եւ նախարարության հետ դիմակայում է կոմպլեկտավորման (իմա՝ դասարանակազմության) արտառոց մարտահրավերին:

Ամենուրեք կան գյուղեր, որոնց տխուր համայնապատկերի խորախորհուրդ ուրախությունը դպրոցահասակ մի քանի երեխաներն են: Ինչպե՞ս կազմակերպել նրանց ուսումնառությունը:

Սյունիքի մարզում նոր ուստարվանից, ըստ նախնական տվյալի, կկրճատվի 150 դասարան: Մարզի կրթահամակարգը կաթվածահար կլինի, կտկարանա մոտ 20 հիմնական կամ 15 միջնակարգ դպրոցի չափով:

Հանրակրթության վարիչները, որոնց ուրբանիստական մտածելակերպում գյուղական ուսուցման վերաբերյալ հոգածությունը սակավ ու ժլատ է, չեն հանդուրժում, որ դասարանում լինեն 6-ից պակաս թվով աշակերտներ: Քաղաքային դպրոցի նկատմամբ գերակայության պատրանք ունենալով՝ ապշում են, ասենք, 3 աշակերտ լինել, երբ խոշոր բնակավայրերի դպրոցների դասարաններ են ճխտել 30-ական եւ ավելի աշակերտների:

Անգամ մատնացույց են անում օվկիանոսամերձ երկրներ, որտեղ դասարանի միջինը 50 կամ ավելի է: Թվում է՝ նույն դյուրությամբ հայերիս կարելի է խորհուրդ տալ՝ զբաղվել, ասենք, փղաբուծությամբ...

3 եւ 30: Հիրավի, անսովոր է: Բանն այն է, որ ուսուցչական ռոճիկները եւ ուսումնառության ծավալները որոշվում են 45 րոպեանոց դասաժամերի քանակով: Եվ 3 աշակերտների, եւ՝ 30 աշակերտների դեպքում դրանք նույնն են: Այս օրինակում թռիչքը 27 է, եւ դա այք ծակող է: Բայց այդպես է նաեւ 10, 15, 20, 30 թվով աշակերտների դեպքում, որը, չգիտես ինչու, տանելի է համարվում: Համաշխարհային բանկի սահմանած միջինը կապանք է՝ հայ դպրոցը... Սի՞թե հնարավոր չէ շրջանառել այլ սկզբունքներ ու մոտեցումներ:

Տարի առ տարի մեզանում դասարանակազմության խնդիրն ավելի ցցուն կերպարանք է առնում: Աներկբայելի է, որ այն հանրակրթության մեջ սպրդած թյուրըմբռումների եւ սովերային երեւոյթների արտացոլիչն է: Այսպես, երկրի ֆինանսական վարիչների հետ համերաշխված՝ ԿԳ նախարարությունը մի շարք գյուղական դպրոցներում փորձել ու տարածում է կես դասարան, քառորդ դասարան սովերային նորամուծությունը: Սպասելի է, որ դասարանակազմության նկատմամբ կկիրարկվեն նաեւ այլ կոտորակային թվեր: Ըստ այդմ՝ գյուղաբնակ աշակերտների դասը 22 րոպե 30 վայրկյան կամ 11 րոպե 15 վայրկյան է: Իսկ եթե տնօրենի հայեցողությամբ, հանուն աշակերտի իրավունքների, դասացուցակային դասը 45 րոպե է տեւում, ոտնահարվում է ուսուցչի իրավունքը՝ դասաժամի համար նա վարձվում է 2 կամ 4 անգամ պակաս դրամի դիմաց:

Գործնականում, թերակազմ դասարանների առկայության դեպքում սովորաբար համատեղվում են տարբեր դասարանների աշակերտների դասերը, զորօրինակ՝ 2-րդ եւ 4-րդ դասարանցիները, նույն դասին ունկնդրելով ուսուցչին, կարող են «սովորել» հեքիաթ են բանաստեղծություն, գունարում եւ ուղղագրություն եւ այլն: Ձավե՛շտ է, անհեթեթություն՞ն, թե՞ հանցանք...

Եթե տարատարիք աշակերտների

համատեղ ուսուցումը նախադիպուքային է, հետեւաբար, փորձառություն ունեն մոտ անցյալի խորհրդային դպրոցի տարրական դասարաններում, ապա ներկայիս կրտսեր եւ միջին դպրոցի համար՝ կրթակարգի նորագույն պահանջների լույսի ներքո, հակացուցված է:

Առկա իրավիճակի փորձաքաղ դասարանի միջին խտության ելակետային սխալ դրույթն է (հիմնական դպրոցում այն սահմանված է 25-30 աշակերտ), որը կապանք է դպրոցական համակարգը: Ստացվում է, որ կշտամբանքի են արժանի այն դպրոցները, որոնք ունեն 24 եւ պակաս թվով աշակերտներով դասարաններ (ուրբանիստական բնակավայրեր): Գյուղաբնակ անընկեր երեխան կամ ճակատագրորեն գյուղին գամված մի քանիսը, թերակազմ դասարանում սովորելով, բացե՛հբաց դատապարտված են թերարժեքության բարդույթ ասրելուն: Այդպիսին է նաեւ ուսուցչի հոգեվիճակը...

Իրավիճակի մանկավարժական վերլուծությանը հասու չէ կամ անիրագել է ձեւանում այսպես կոչված Կրթության ազգային ինստիտուտը (պետք է լինի՝ Հանրակրթության ազգային ինստիտուտ): Ցայժմ նա պատասխան հրահանգը՝ դասի արդյունավետության կազմակերպման, դասացուցակների կազմման, դասերի եւ դասամիջոցների ժամացույցի, դասագրքային վարձավճարների եւ այլնի վերաբերյալ: Ի դեպ, բարձրաձայնելու է, որ նման հրահանգ պատրաստելն անհնար է առանց... իրավախախտումների:

«Միջիններ»-ով ղեկավարվելը մեր երկրի համար ժամանակավրեպ է եւ հեռահար քաղաքական վտանգավորություն ունի: Ինչ խոսք, եվրոպաներում դասը կարող է արդարացված լինել: Անտարակույս, եվրաինտեգրման պետք է գնալ սեփական արժեքների համառ հավաստմամբ եւ ոչ՝ որպես միամիտ հետեւորդ: Եվրոպան յուրովին է լուծել գյուղի հարցը, իսկ մեզանում ազգային զարթոնքի վերելքն ու կայացումը տակավին խարսխվում են գյուղական սուբստանցի վրա:

Մտահոգիչ է, որ մեր նախարարությունում (իմա՝ ԿԳ) վերջին տարիներին սկսել են ի դերեւ լինել «Գյուղական դպրոց», «Գյուղական ուսուցում», «Գյուղաբնակ ուսուցիչ» արտահայտու-

## Մանկավարժություն

թյունները: Մինչդեռ, ըստ իս, պատշաճ է, որ գյուղական ուսուցմանը, որպես հայկականության առանձնահատկություն, օրենսդրորեն անդրադառնա մեր Ազգային ժողովը:

Ներքին եւ արտաքին պանդխտության միտումն աղետի պես կախվել է գյուղի վրա: Նանին այլեւս չի ասում՝ իմ քորփա երեխին էն անիրավ աշխարքը մի զցիլ, եւ ամեն գյուղ իր ծավալուն սփյուռքն ունի:

Նոր ուսումնական տարում դպրոց պիտի հաճախեին զոհված ազատամարտիկների զավակները... Այս եւ այլ պատճառներով Սյունիքի մարզում նոր ուստարվանից, ըստ նախնական տվյալների, կկրճատվի 150 դասարան: Մարզի կրթահամակարգը եթե ոչ կաթվածահար կլինի, կտկարանա մոտ 20 հիմնական կամ 15 միջնակարգ դպրոցի չափով:

«Միջին»-ի թելադրությամբ ոմանք դա շատ հանգիստ են ընդունում: Եվ իրենց քաղաքական ու հանապազօրյա տգիտությունը ցուցադրում են հարիր հարցով. «3-4 հոգանոց դասարան կլինի՞»:

Իսկ ովքե՞ր են հանդուրժում 25-30 հոգանոց դասարանը, որի իմաստավորումը ազգայնորեն չունենք Մեսրոպյան Ոսկեդարից մինչեւ մեր համակարգչախելող ժամանակները: Ահավասիկ իրատես պատասխանը՝ ավտորիտարիզմին հակված աստիճանավորից բացի՝ ոչ ոք: Ըստ նորագույն ընկալումների՝ մենք պերճանքին ու ճոխասիրությանը հակված ազգ ենք: Արդ, այդ ամենն առաջնահերթորեն չպե՞տք է արտացոլվի հանրակրթության կազմակերպման բնագավառում:

Դասարանի սահմանված խտություն-միջինն իր հետ բերել կամ պայմանավորել է մանկավարժական ճգնաժամ: Ըստ եւթյան, դպրոցից (ուսումնառությունից) ակնկալիքներ ունեցող ծնողական զանգվածը լռելյայն երես է թեթել հանրակրթությունից ու զավակներին մղել մասնավոր պարապմունքների: Եթե դպրոցին ֆինանսապես նեղելն անթաքույց է, ապա ծնողն ակամա ընդունում եւ հաշտվում է ուսուցման ցածրորակության կասկածի հետ: Այս երեւույթը դպրոցի համար հանրությանը պարտադրված չգիտակցված հանցագործություն է...

Բազմաթիվ գյուղերում պետական

բյուջեից վարձատրվում են գյուղապետարանների աշխատակազմեր, որոնք դույզն-ինչ մտահոգված չեն հայրենի գյուղի դպրոցի ու նախակրթարանի կազմակերպմամբ ու հեռանկարով:

Դասուսույցի մոտ առավել արգասավոր եղանակով համալրելով իր գիտելիքները՝ աշակերտը դպրոցում նրա շնորհիվ հաղթահարում է ստուգողականի դժվարությունները, եւ դպրոցը ծափահարում է... կեղծ հաջողությունների համար:

Ի հայտ է եկել հակադպրոց տարրը՝ հանրակրթությունը քամահրող անհատներ, երեխային դպրոց ուղարկել չկամեցողներ, կրթվածությունը հեզոզ ընտանիքներ: Ամեն ինչ կարելի է վարձել, ընդամենն եւ՝ ուսուցիչ: ԶԼՄ-ների երբեմնակի հնչեցվող մեղադրանքին, թե կրթության համակարգը կոռուպացված է, ոչ ոք չի անդրադառնում:

Վերոբերյալ ճգնաժամին դիմակայելու նպատակով, զանգվածային ուսուցչության պրակտիկայում ելք փնտրելու փոխարեն, աշակերտն իր մտավոր հնարները փոխանցի կամ մտածել սովորեցնի ընկերոջը: Պարզ է՝ այդ ամենն արժեք չունի եւ անհեթեթ է դասուսույցի գործարած եղանակների նկատմամբ: Հարկավ, ուսուցման արդյունարար եւ լավակարգ եղանակը «մեկ ուսուցիչ, մեկ աշակերտ» իդեալական զույգի համագործակցությունն է: Արքա դաստիարակելու համար Ալեքսանդրին Արիստոտելն ուսուցիչ եղավ: Եվ պրոֆեսոր չպետք է լինել հասկանալու համար, որ ինչքան քիչ է աշակերտների թիվը դասարանում, այնքան ավելի արդյունավետ է ուսումնառությունը:

Քանի դեռ Կոմենսկու դաս-դասարանային համակարգը հարատևում է, մեղուցյալիս պատկերացմամբ՝ մեր ազգային դպրոցի դասարանում աշակերտների թիվը 10-ից ավելի չպետք է լինի: Սա ատոմային զենք (կամ ավելի հզորը) ունենալու երազանքից ավելի իրատեսական է: Մեր պետական այրերը, անշուշտ, գիտակցում են հանրակրթությանը հատկացվող միջոցների խնդրում այլ երկրների հետ համեմատելու կամ ընդօրինակելու մոտեցման անհեռանկարայնությունը: Ինչու՞ մեզ չընդօրինակեն:

Մանկավարժական նորարարությունն ու առաջավոր փորձը հատկապես պետք է ակնկալել սակավակազմ

դասարաններից, որոնք հիմնականում առկա են գյուղական բնակավայրերում:

Գյուղի վերակազմակերպման, գյուղատնտեսական արտադրանքի ավելացման եւ համաշխարհային շուկայում նոր ելքերի տիրանալու համար գյուղական ուսուցման բարեփոխիչ վերակառուցումը անհեթեթություն է: Ամենահայեցին այն է, որ գյուղաբնակ մի քանի երեխաներն էլ լիարժեք հիմնական կրթություն ստանան հայրենի գյուղում: Ինչպե՞ս:

Նախ՝ կես կամ քառորդ դասարան կոչված «գյուղ» փորձարկելուց պետք է ձեռնպահ մնալ այլընտրանքային մոտեցմամբ: Այսպես՝ սակավակազմ դասարանների համար կարելի էր խնայել նախատեսված ուսուցչական լրավճարները եւ հանդիսավի չկրճատել 45 թուպեանոց դասաժամը: Աղաղակող թերացում չէ, որ սակավակազմ դասարանի ուսուցիչը չվարձատրվի դասողկության, գրավոր աշխատանքների ստուգման, կաբինետի վարիչության եւ այլնի համար:

Նաեւ դասարանակազմության խնդիրը պետք է հանել նախարարության օրակարգից եւ թողնել մարզպետարանի իրավասությանը, որովհետեւ մարզպետարանն է օպերատիվ տիրապետում արտաբյուջետային համալրումների լծակներին, համայնքների կազմակերպման կամ լուծարման իրավիճակին: Սահմանամերձ եւ բարձրլեռնային գյուղերի վերակազմավորումն ու զարգացումը համապետական խնդիր է, որի լուծման ոսկե օղակը գյուղական դպրոցն է:

Դասարանի սահմանված խտություն-միջինն իր հետ բերել կամ պայմանավորել է մանկավարժական ճգնաժամ: Ըստ եւթյան, դպրոցից (ուսումնառությունից) ակնկալիքներ ունեցող ծնողական զանգվածը լռելյայն երես է թեթել հանրակրթությունից ու զավակներին մղել մասնավոր պարապմունքների:

Համագործակցելով նախարարության հետ՝ մարզպետարանը պետք է իրավասու լինի մասնակի փոփոխություններ կատարել ժամաքանակային պլաններում, կիրարկել ինտեգրված դասընթացներ՝ հարակից ուսումնական առարկաների միասնական ուսուցում, կազմակերպել տարատարիք աշակերտների համատեղ ուսուցում որոշ ուսումնական առարկաներից,

## Մանկավարժություն

սահմանել դպրոցի հաստիքացուցակը:  
Դառնանք ամենակարեւորին:

Երկրում, առավել եւս՝ Սյունիքի մարզում, տարածված երեւոյթ է գյուղական համայնքների կազմակերպումն առանց դպրոցի: Բազմաթիվ գյուղերում պետական բյուջեից վարձատրվում են գյուղապետարանների աշխատակազմեր, որոնք դուրս-ինչ մտահոգված չեն հայրենի գյուղի դպրոցի ու նախակրթարանի կազմակերպմամբ ու հեռանկարով: Բայց չէ՞ որ գյուղական իշխանության հիմնական նպատակը բնակչության վերարտադրության խնդիրն է, որը, բնականաբար, արքայադուր է առանց դպրոցի: Դպրոց չունեցող համայնքը անպտուղ կնոջ է նման: Եվ իշխանության կազմակերպման նախապայմանների մեջ հարկ է ամրագրել կրթարանի անխտիր առկայությունը: Եթե իր ընտրվածության ժամանակահատվածում, ջանքեր գործադրելով, գյուղապետարանը չի ընդլայնում համայնքի կրթարանը, աշխատակազմը պետք է լուծարել՝ հոգուտ հարեւան համայնքի: Յուրաքանչյուր գյուղական համայնքի համար պետք է նախատեսել հիմնական դպրոց (ՀՀ օրենք կրթության մասին, հ.18-7) ֆինանսավորման միասնական նվազագույն չափով: Այս դեպքում հարկ կլինի սահմանել միայն աշակերտների առավելագույն քանակ դասարանի համար եւ չբացառել, որ նվազագույնը կարող է մեկը լինել: Գյուղապետարանի եւ դպրոցի ղեկավարների աշխատավարձի չափը պետք է աղերս ունենա համայնքի դպրոցի դասարանների թվի հետ...

Եթե գյուղապետարանը հետամուտ չլինի հիմնական դպրոցի մեկական դասարան (թվով 8) կազմակերպելուն, նա պետք է հարկվի, եւ միջոցները պետք է ուղղվեն հարեւան շահագրգիռ համայնքի նույն խնդրի լուծմանը: Նման մոտեցումը կխթանի մրցակցությունը:

Խորհուրդ չէ՞: Եթե գյուղն անդպրոց է, ուրեմն տարեց մարդկանց բնակավայր է, որի կառավարումն արդիական հրատապություն չունի: Դա դուրսով կարելի է անել «սոցապ»-ից կամ փորձաշատներից մեկին իշխանական լիազոր կարգելով:

Փոքրավուն գյուղերի հիմնախնդիրներն աչքի առաջ ունենալով՝ ունանք մտնում են կրթության կազմակերպման դյուրին տարբերակ՝ ավտոբուս մի քանի գյուղերի համար: Սա, ակներեւո-

րեն, երթուղային տաքսու մետրոյի գույքորդական, միամիտ մտածելակերպն է: Չմռանը սյունեցին իր ծագուկին լեռնաստանի ուղրանները ճամփորդելու ուղարկել չի հանդգնի: Ի դեպ, մոտ անցյալում մեր համայնավար նախորդները, որ երեխաներին ոսկե սարեր էին խոստանում, նրանց մեծարում էին «արտոնյալ» դասակարգ կոչելով: Նոր հայերիս առաքելությունը ճշմարիտ հումանիստականն է:

15.10.2007թ.



## Ժողովրդական դաստիարակությունը եւ ժամանակը

Անցյալի սյունյաց տներում միմուճար որդին յոթ փութ ոսկի էր: Պապը թռան մեջ գգում ու փայփայում էր իր շարունակությունը, իսկ տատի շուրթերից անպակաս էր ամենօրյա գգվանքը. «Տօնըս-տեղըս...»:

Հարկավ, այսօր էլ այդպես է: Ժողովրդական մանկավարժությունը, ինչպես անհատում գանձարան, գիտականի ստնտուն է: Եվ ավանդականը մխրձվել է մերօրյա համակարգչային ժամանակի մեջ, մոր երանգ առել: Դպրոցի ու ընտանիքի երկխոսությունից ոչ ոք զլուխ չի հանում, որովհետեւ այդ օղակում առաջինը խուլ է ձեւանում, երկրորդը համր: Դպրոցի հոգաբարձի «ռեֆորմն» է, ծնողի պահվածքի մեջ ավանդույթի ուժը: Եթե, ասենք, տանը մեկ կամ ավելի աղջիկ երեխաներ կան, այնուհանդերձ, միմուճար տղան, ավանդույթի ուժով, արտոնյալ կարգավիճակ ունի: Այժմ նա ապերիկն է:

Այդ կարգավիճակը, թերեւս, սյունեցիներիս անափ սիրուց է, որպիսին պետք է որ աշխարհի որեւէ անկյունում չլինի: Մանկավարժը լավ գիտի, որ մեզանում ավանդույթը ռոբուն է, կարծր գրանիտ: Պապն իր դարն ապրած ունի, եւ տոհմի աստղն ապերիկն է: Լոտոների

դարում, ի՞նչ կա որ, նա կարող է պրոֆեսոր կամ նախարար լինել, հորոսկոպ կենդանացուցում այլ բաղձալի կանխատեսումներ էլ կան:

Արդեն տեղ-տեղ միմուճարի համար ծնողական ազնիվ մտահոգությունը պերճաշուք կենցաղի ստեղծումն է՝ մեծական տարագ, մագ ու համակարգիչ եւ շուտով քառանիվ մի բան: Փոյթ չէ, որ տանը բազմոցն է հնացել, սպասքը դեռ մայրիկի բերած օժիտինն է, եւ գյուղում տատիկն է թոնթրում՝ անասունների հետեւից գնացող չկա:

Ոչ ոք չի կարող մեզ նման խանդաղատագին վերաբերվել ապերիկին, կարելվոյն չափ զվարճացնել, պաշտպանել նրան չար աչքից: Տանը նրա տեղը ոսկե պատվանդանն է: Այս ամենը գերազանց է, լավ է, թե՞ բավարար՝ առայժմ մենք հասու չենք քննարկել ու հասկանալ: Բայց անվիճելի է, որ ծնողական սերը դպրոցին այնքան է պետք, որքան՝ գետը ծովին: Մանկավարժական սերը, լինելով պաշտոնական կադապարի մեջ, ծնողականի համեմատ անեռանդ ու անցողիկ է: Դպրոցն ավելի շատ ցուցադրում է սերը, քան իսկապես անհատույց ու ճշմարիտ սիրուն է:

Այդ պատճառով ապերիկը դպրոցում ավելի է նեղվում, քան մյուսները:

Դպրոցական կյանքի առաջին իսկ օրվանից տնական ապերիկի կարգավիճակը դպրոցական ապերիկների մեջ ի դերեւ է լինում: Իրեն հատկացված աշակերտական նստարանը, հավասարական հեթապահական ծառայությունը, ուսուցչուհու տեսանելի համայնավարությունն ապերիկի սրտով չեն: Դժվարություններն ի հայտ են գալիս ժամանակ առ ժամանակ: Տարիների սանդղակի վրա նրան ասում են՝ սխալ ես գրել, ձեռագիրը վատ է, Հայկի գծագիրը քոնից լավն է, Սեւակը քեզանից բարձր է ցատկում եւ այլն: Ապերիկը, բնական է, այդ ամենը դժվար է տանում, եւ նրա ես-ը նրան մղում է հոգեւոր մեծության կղզին:

Տանը, ինչպես արել են, շարունակում են անել ապերիկի փոխարեն: Չտեսնելու են տալիս, որ նրա աննպատակ ազատությունն ակներեւ ներհակ է նպատակային գործողությունների վարժեցմանը: Նրան ամեն ինչ կարելի է ու ներելի: Սկսահակն է ջարդել, հետո՞ ինչ: Ինչ թողել է գորգին կամ սեղանին, պարտավոր են հավաքել քույրիկները: Ինչո՞ւ

## Մանկավարժություն

պետք է անկողինն ինքը հարդարի: Այս պահարանն էլ միայն ինքն իրավունք ունի բացել ու փակել...

Դպրոցի միջանցքում ապերիկը լաց է լինում: «Սնիքերսը» կերել, թուղթը հատակին է շարտել, եւ հերթապահները վրա են հասել: Հիմա կգա ավագ հերթապահը...

Իսկ դասաժամին չի կարողանում բացատրել իր իսկ ընտրած խնդրի լուծումը:

- Իր մայրիկը գրել է ու տվել արտագրելու, - խնդմնդում է Աշոտիկը:

- Իսկ եթե մաման զբաղված է, քեռակինն է տնայինը գրում, - ասում է մի բզիկ:

Եվ ապերիկը միտք է անում. «Մայրիկն ասում է, որ ես հարվածային եմ ու շուտով գերազանցիկ, իսկ այստեղ այլ բան են ասում: Դպրոցը վատ է ու անտանելի»:

... Դասուսույց վարձելու մոդան 8-րդ դասարանից է: Ապերիկն առաջինն է: Մայրիկն ափսոսում է մինուճարի «անարդյունք» տարիների համար. «Դպրոց ասածը ձեռքից գնացել է, այնտեղ ոչինչ չեն սովորեցնում: Երեխայիս բախտին քար են զգել, անբան դարձրել»:

Տարիների սանդղակի վրա պարմանական տազնապ կա. ապերիկն արդեն ապեր է: Սափրվում է, բայց պիտույքները քույրիկն է լվանում-հավաքում: Ծխում է, ու հայրը չիմանալու է տալիս: Իսկ տատն այլեւս չի ասում. «Տօնըս տեղըս...»:

... Է, ինչ գործ ունենք ուրիշի տղայի հետ: Հեն է, Խուշուշ գիզին թոնիրը վառել է: Ապերը բանակից զանգել, թոնրի լավաշ է ուզել: Չուղարկի՞:



## Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության կոլեգիայի 1977թ. հունիսի 11-ի որոշում

**ՂԱԾԱՆԻ ԵՐՁԱՆԻ  
ԼԵՆԻՆԱՃՈՐԻ  
ՌԻԹԱՍՄՅԱ ԴԴՐՈՑԻ  
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ  
ՌԻՍՈՒՑԻՉ  
Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԼԵԻ  
ՍՈՍՏԱՎՈՐ ԾՈՐՁԻ  
ՄԱՍԻՆ**

(ՁԵԿ. Ռ. Վ. ՍԱՐԳՅԱՆ)

Ղափանի շրջանի Լեռնաձորի ութամյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ռ. Գրիգորյանի աշխատանքի առաջավոր փորձը վերջին տարիներին արժանացել է ՀՍՄՀ լուսավորության մինիստրության, ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի, ՀԼԿԵՄ Կենտկոմի, «Սովետական դպրոց» թերթի, հանրապետական ու միութենական շատ թերթերի եւ պարբերականների, բազմաթիվ մանկավարժների, գիտաշխատողների ուշադրությանը: Ռ. Գրիգորյանի առաջավոր փորձի շատ ուսանելի օրինակներ պրոպագանդվել ու արմատավորվել են, իսկ հետազոտական շատ աշխատանքներ արժանացել են ուշադրության: Նրա աշխատանքային առաջավոր փորձը մեծապես նպաստել է Լեռնաձորի ութամյա դպրոցի ուսումնադաստիարակման աշխատանքների էլ ավելի բարելավմանը:

Դպրոցի գործունեության գնահատման չափանիշներից ելնելով՝ Լեռնաձորի դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների համակողմանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մանկավարժական գիտության ու պրակտիկայի նորագույն նվաճումները կոլեկտիվում ներդրելու, ուսուցման ժամանակակից պահանջները կենսագործելու, դաստիարակու-

թյան գործում կոմպլեքսային մոտեցում ցուցաբերելու եւ գյուղական դպրոցի առանձնահատկություններին բնորոշ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ ձեռք է բերվել ընդօրինակման արժանի փորձ:

Լայնորեն պրոպագանդվող նոր ու արդյունավետ մեթոդական հնարները, ուսուցման մեթոդները մանկավարժական կոլեկտիվի անդամները հանգամանորեն ուսումնասիրել եւ ստեղծագործաբար ու նպատակասլաց ձեռով կիրառում են իրենց աշխատանքի պրակտիկայում: Ուսուցման պրոցեսի կատարելագործման ազդակներ են ոչ միայն առաջավոր փորձի ուսումնասիրումն ու դասապրոցեսը ժամանակակից պահանջներով կազմակերպելու անհրաժեշտության գիտակցումը, այլեւ տարիներ շարունակ տարված փորձարարական արդյունավետ աշխատանքների արդյունքների ընդհանրացումը: Իսկ դրանք ուղղակիորեն նպաստել են դպրոցում ուսման իրական առաջադիմության բարձրացմանը եւ դաստիարակչական աշխատանքները լավագույն ձեռով կազմակերպելուն:

Դպրոցը անցել է ուսուցման կաբինետային համակարգի: Նպատակասլաց ձեռով ու լայնորեն օգտագործվում են ուսուցման տեխնիկական միջոցները: Վերջին չորս ուսումնական տարիներին դպրոցը ոչ մի երկտարեցի չի տվել: Այս հաջողությունների մեջ առանձնապես մեծ ներդրում ունի դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ ընկ. Ռոբերտ Գրիգորյանը, որը ոչ միայն աչքի է ընկել իր մեթոդամանկավարժական ու առարկայական բարձր պատրաստականությամբ, իր գործիմացությամբ ու խրախուսելի նախաձեռնություններով, առաջավոր փորձով, այլեւ կոլեկտիվի անդամներին ստեղծագործական աշխատանքի մղելու իր ընդունակությամբ:

Կոլեկտիվի շատ անդամներ, համոզվելով նրա աշխատանքային փորձի արդյունավետության մեջ, սիրով ներգրավվել են որոնողական աշխատանքներում, բարձրացնում են իրենց մանկավարժական վարպետությունը եւ լուրջ հաջողությունների հասնում: Դպրոցի դիրեկտոր ընկ. Շ.Գեւորգյանը վարպետորեն է կոորդինացնում մանկավարժական կոլեկտիվի բոլոր անդամների, դպրոցական բոլոր օղակների գործունեությունը, խրախուսում նորն ու

## Մանկավարժություն

ամառաավորը, կոլեկտիվի անդամներին նպատակամղում ստեղծագործական աշխատանքի:

Ուսանելի շատ ձեռքբերումներ կան ուսուցիչներ Վ.Վեչտոնովայի, Ա.Յանբարձունյանի, Ս.Օհանջանյանի, Զ.Ավագյանի աշխատանքի փորձում:

Ռ.Գրիգորյանը շուրջ մեկ տասնամյակ աշխատում է աշակերտների նվազ միջին խտություն ունեցող գյուղական 8-ամյա դպրոցներում ինքնուրույն ու շերտավորված աշխատանքների արդյունավետ համակարգ մշակելու պրոբլեմի վրա եւ լուրջ ու արժեքավոր ընդհանրացումներ է արել:

Նա հաջողությամբ է օգտագործում քարտերը, անհատական այլ ամառադրանքները, ուսուցման տեխնիկական միջոցները՝ մեծ ուշադրություն դարձնելով դպրոցականների տրամաբանական մտածողության զարգացման հարցերին:

Համամիութենական ճանաչում է ստացել դպրոցում գործող «իքսիգրեկզեթ» («Գիտելիք աշխատանք ժողովրդական բանահյուսություն») ակումբը, որի նպատակն է ավելի խորն ուսումնասիրել դպրոցական մաթեմատիկան, հմտանալ խնդիրների եւ մաթեմատիկական տարբեր ամառադրանքների լուծման մեջ, ամենուրեք մաթեմատիկայի

նկատմամբ սեր դաստիարակել, տարածել գիտելիքներ, հավաքել ժողովրդական բանահյուսության նմուշներ (հատկապես՝ մաթեմատիկական):

Ուշագրավ է, որ մաթեմատիկայի երիտասարդ ուսուցչի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է: Նա հրատարակել է բազմաթիվ հոդվածներ, բանասիրական հետազոտություններ է կատարում, կազմել է «Լեռնածոր գյուղի խոսվածքի բարբառային բառերի հոմանիշների համառոտ բառարան» (շուրջ 2500 բառ): Այժմ կազմում է մաթեմատիկայի դասերին ուսումնական ինֆորմացիայի գրավիչ մուտքի քրեստոմատիկ նյութերի ժողովածու:

Դպրոցում աշխատանքի սկզբունք են դարձել «Սովորել սովորեցնել», «Գիտելիքները ինքնուրույնաբար ձեռք բերել» պահանջները:

Դպրոցի պիոներական դրուժնան աչքի է ընկնում ինքնատիպ նախաձեռնություններով, ստեղծված է հայրենագիտական թանգարան, պիոներները նամակագրական կապի մեջ են ԲԱՄ-ում աշխատող երիտասարդների հետ: Մանկավարժական կարգապահ կոլեկտիվը անում է իրենից կախված ամեն ինչ աշակերտներին խոր ու կայուն գիտելիքներ տալու, դպրոցում դաստիարակչական աշխատանքները ամուրի հիմքե-

րի վրա դնելու համար:

Կոլեգիան որոշում է՝

1. Նշել, որ Ղափանի շրջանի Լեռնածորի ութամյա դպրոցը ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջող կազմակերպման գործում լուրջ հաջողությունների է հասել: Դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ռ.Գրիգորյանի աշխատանքի ամառավոր փորձը արժանի է ուսումնասիրման, տարածման ու արմատավորման:

2. Հանձնարարել ծրագրամեթոդական բաժնին (պետ՝ Ա.Մանուկյան), 1977թ. ընթացքում պատրաստել եւ հրատարակել «Ղափանի շրջանի Լեռնածորի ութամյա դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ռ.Գրիգորյանի աշխատանքի ամառավոր փորձի մասին» գրքույկը՝ 3 հրատարակչական մամուլ ծավալով:



# Էջեր Այունիքի պատմությունից

ըստ Ռոբերտ Գրիգորյան Էջանանցու



## Դավիթ Բեկի մահվան 270-ամյակը

*Եվ դասահեց այն ժամանակ, որ Դավիթը հիվանդացավ եւ մահացավ իր սանճ՝ Նալիձորում, խաղաղ դայանաներում, Տիրոջ 1728 եւ հայոց 1177 թվականին, Դավիթն ու իշխելով վեց տարի:*

Ղուկաս վրդ. Ստեփանյան Սեբաստիացի

Այունյաց ամեն դարը հերոսական ասք ունի:

Աներկբա կարելի է ասել, որ այլոցնեցիների՝ մեզ հայտնի առաջին էպոսի պատումները սկիզբ առան Արշակունյաց ժամանակներում, ի դեմս քաջագործություններով հայտնի Անդրովկ իշխանի: Այունյաց ազատատենչ ոգին ու շնչն ադարդուն վիպել է մի այլ էպոս՝ ի դեմս ժողովրդական հերոս Դավիթ Այունցու:

Անդրովկի ժամանակը թագավորական էր, Դավթինը՝ կորուսյալ թագի:

Չետնորդները, ունկ դնելով վանքերի գրչատներում արարված սուփերքին եւ

հագուրդչստանալով, այդ ամենին հավելել ու սերնդեսերունդ պատմել են նախնյաց ավանդազրույցները: Հիմա էլ մեր գյուղերի ակունքներում ու եկեղեցիների բակերում զրույցի են հավաքվում տարեցները, բայց անցած-գնացած ժամանակների դեպքերը նրանց քիչ հարցնող կա, որովհետև, կարծես, ամեն ինչ գրառված է: Բանահավաքները ժողովել են անգամ օրինանքներն ու անեծքները, բարբառի ամեն բառն էլ տեղ է գտել ինչ-որ բառարանում: Թեպետ ժամանակը համակարգչային է, բայց գրախեղդ է եղել:

Ուսյալ սյունեցին, առջեւն ունենալով Կապանում առինքնող հեծելարձանը, յուրացրել է Դավիթ Բեկի սխրանքների գրքային պատմությունը եւ ուսումնատենչ մանչուկի թելից բռնած՝ նրան խոսք ու խրատի է տանում հուշարձանի խորախորհուրդ վիճաշարի մոտ: Բայց գրքային Դավիթ Բեկը, որ ի լուր հայության ու աշխարհի ելել է լուսաճառագ Մխիթարյանների վանքի դիվանատնից, առավել վիպական ու դույզն-ինչ անիրական է. հերոսներից ոչ ոք չի մեռնում թշնամու ձեռքով: Հալիձորում Դավիթը երեք հարյուր վաթսուն յուրայիններով դիմակայում է թուրքական «վաթսուն կամ յոթանասուն հազար եւ առավել եւս շատ» զորքին, զորավարը հրովարտակներ ու այլ պաշտոնական գրագրություններ չի թողնում, վախճանվում է առեղծվածային մահով: Մելիք-Փարսադանը, որ Ազուլիսում զոհվել էր 1725-ին, Հալիձորի ճակատամարտի մասնակից է համարվում... եւ այլն: Այսպիսին է Դավիթ Բեկի պատմության սկզբնաղբյուրը՝ Մխիթարյան միաբան Հ.Ղուկաս Ստեփանյան Սեբաստացու «Դավիթ Բեկ կամ Պատմություն Դավանցոց» աշխատությունը, որը Դավիթ Բեկի գործունեությունը ներկայացնող «միակ ու միակ գրավոր հիշատակարանն է» (Լեո): Այն ստեղծվել է զորավարի մահվանից մի քանի տարի անց, նրա՝ եվրոպա մեկնած զինակիցների՝ Տեր-Ավետիք քահանայի (Աղոնցի հոր պապի) եւ հետագայում համբավանում վաճառական Ստեփանոս Շահունյանի թելադրությամբ ու պատումների հիման վրա:

Ղուկասի խմբագրումն ավելի շատ գեղարվեստական գործ է, քան պատմագրություն: Ընթերցողին երբեմն թվում է, թե կարդում է Եղիշեհն կամ Խորենացուն: Բանասերներից մեկը նրան



անվանել է «Սյունյաց Եղիշե»: Բայց մեր պատմագրության մեջ այս երկն աչքի է ընկնում յուրօրինակ ինքնատիպությամբ՝ հայ զորավարը ներքին եւ արտաքին թշնամու նկատմամբ հանդես է գալիս բացառիկ անողոքությամբ. «հրամայում է հատել Դավիթ-Բաղդ ուրացողի գլուխը», «այդ օրը չորս հազար թուրք կոտորեց»...

Ընթերցողն, օրինակ, զմայլվում է Հալիձորի ճակատամարտի դուկասյան նկարագրությամբ: Դա մի անգերազանցելի պատկեր է մեր վիպական գրականության մեջ: Բայց հեղինակը մեղանչել է պատմական դեպքերի հերթականու-

թյան շարադրանքում: Նա վատ է ներկայացնում Սյունիքի աշխարհագրությունը, թեպետ հայտնի է, որ նա հեղինակ է աշխարհագրական անտիպ աշխատությունների եւ անգամ կազմած ունի Դավիթ Բեկի մարտական գործողությունների քարտեզը: Աշխարհագրական անտիպ բառարանում, ակնարկելով հիմնական երկը, Ղուկաս Սեբաստացին հղում է արել. «Այս ամեն տեսցես ի համառօտ պատմութեան, զոր գրեցաք» (մեջբերումը Ա.Մաղոյանի, ՊԲՀ, 3, 1973):

Ստ.Շահունյանի եւ Տեր-Ավետիքի պատումները, որոնք հիմք են հանդիսա-

## Էջեր Այունիքի դասնությունից

ցել Սեբաստացու երկի համար, նույնպես հրապարակված են: Դրանք հիմնականում մարտական գործողությունների ու զորքերի տեղաշարժերի նկարագրություններ են եւ Դավիթ Բեկի մասին պարունակում են պատահական ու կցկտուր տեղեկություններ:

Դավիթբեկյան ասքը երկակի է՝ Դավիթ Բեկը եւ հայտնի է, եւ անհայտ. որպես ազատագրական պայքարի նախագահ ու կազմակերպիչ, ռազմավար ու մարտավար, դիվանագետ ու ազգային գործիչ, նա մեր պատմության մեջ գրեթե հստակ է երեւում: Մինչդեռ նրա ծագման, ծննդավայրի, ընտանիքի (տոհմի), անհատականության ու առօրյա գործելաճի մասին ամեն ինչ տակավին մնում է մեր չիմացության անթափանց շղարշի տակ: Հետաքրքրություններից ամենագայթակղիչը, թերեւս, նրա ծննդավայրի ու հայրական տան իմացությունն է, որով տքնում ու ճգնում է մերօրյա պատմագրությունը: Հետազոտողի համար, ըստ երեւութի, «գայրացուցիչ» է այն պարագան, թե ինչու մոտ անցյալում (270 տարի է մեզ բաժանում նրանից) ապրած հերոսի մասին կան հակասական, հորինված կամ կեղծված տեղեկություններ: Չէ՞ որ Դավիթը ժամանակով մեզնից հեռու չէ այնքան, որքան, ասենք, Անդովկը կամ Երուզանդական կայսրերը: Իրարաներժ աղբյուրները նրան համարում են կամ գեղարքունիքի, կամ տաթեւացի, կամ դավանցի...

Շատերը, որ գրիչ են վերցրել Դավիթ Բեկի խառնակ սոփերում մի տող հավելելու կամ ուղղելու, անթաքույց համակվել են նրան իր հայրենակիցը կամ իր փառավոր նախնին ներկայացնելու միտունավորությամբ: Իսկ ոմանք դեկավարվել են այլ դրդապատճառներով. ոմն Ստեփան Դավիթով 1797 թվականին ռուսաց կայսրին տեղեկանք է ներկայացրել իր ծագման վերաբերյալ, պարզ է՝ սերված Դավիթ Բեկից, որպեսզի ազնվականի տիտղոս ձեռք բերի: Թիֆլիսեցի Փարսադան բեկի որդի Թաղին հիշատակագրել է, թե, իբր, Դավիթ Բեկն իր քրոջ ամուսինն էր եւ որպես զինակից ուներ իր եղբայր Աբղյւսեհին: Եվ այլն: Նման տեղեկությունները հաստատել կամ հերքել չենք կարող, անհրաժեշտ է համոզիչ քննություն կատարել: Սակայն շփոթի խայծը կարելի է մատնանշել. բանն այն է, որ Դավիթ Բեկ գորավարին

համաժամանակ գործել են մի քանի համանուն անձինք. օրինակ, լեզգիների գլուխն անցած Դուռթ, որ գնաց Գյանջալի վրա, մեկը Դավիթ ուրացող, որ ապատամբեց եւ այլ Դավիթներ:

Քանի դեռ չեն հայտնաբերված Դավիթ Բեկի գործունեությանը վերաբերող նոր աղբյուրներ, դավիթբեկագիտությունն առաջ կգնա եղածների նորովի քննություններով կամ կշարունակի ենթադրությունները:

Հայտնի է այն մեծ հետաքրքրությունը, որ ծագել էր եվրոպական շրջանակներում Դավիթ Բեկի ղեկավարած ազատագրական շարժման նկատմամբ: 1722-ին սկսվել էր Պետրոս Մեծի կուկասյան արշավանքը: Դրան ի պատասխան, օսմանյան բանակը գրավեց Թիֆլիսը, մտավ Ղարաբաղ եւ ներխուժման վտանգ ստեղծեց Սյունիքի համար: Լեհաստանից, Ռուսաստանից եւ այլ վայրերից զգալի թվով հայ կամավորներ դժվարություններով անցան Սյունիք ու մտան Դավթի դրոշի տակ: Երգրումի փաշան Դավիթ Բեկից գործողությունների «բացատրություն պահանջեց» եւ հանդուգն պատասխան ստացավ:

Ռուսական եւ շահական արքունիքներն ակնդետ հետեւում էին Սյունիքում ծավալվող իրադարձություններին: Արդ, կարելի է ասել, որ Դավիթ Բեկը միջազգային ճանաչման հեղինակություն էր:

Բնական է ենթադրել, որ ժամանակակիցները գրել են մեծ գործիչ կենսագրությունը, եւ այն պահպանվում է ինչ-որ դիվանում:

«Դավիթն ինքը ազնվական էր, բարեպաշտ, արդարակորով, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ, գրագետ, ազգի բարօրության նախանձ-նախնդիր եւ աններող՝ նրա թշնամիների հանդեպ», - այսպես է բնութագրել գորավարին Ղուկաս վարդապետը: Այս խոսքերը, որքան էլ հիշեցնում են հորենացու հանրահայտ բնութագիրը Մաշտոցին, ենթատեքստ ունեն: Ղուկասը, հարկավ, դրանք գրել է Շահումյանի եւ Տեր-Ավետիքի պատմությունից կամ թե՛ նրանց հետ ունեցած զրույցների հիման վրա: Դրանք հենց կենսագրական մասի համառոտումն են: Երկին զուտ պատերազմական նկարագրությունների ոգի տալու եւ դրանով իսկ տառապյալ հայաշխարհը ազատագրական պայքարի կոչելու նպատակով հեղինակը շրջանցել է գորավարի կենսագրությունը՝

հավանաբար այն խմբագրած-մշակած լինելով որպես առանձին ստեղծագործություն:

Որքան խառնակ է Դավիթ Բեկի պատմությունը, նույնքան խառնափնթոր է նրա ապրած ժամանակաշրջանը: Պարսկատիրության պայմաններում մեկիքական «պաշտոնական» կողմնորոշումը պետք է լիներ դեպի Իրանի շահը: Ընդամին, դեռ Իսրայել Օրուց էլ առաջ, Ղարաբաղում եւ Սյունիքում խլրտում էր ռուսական կողմնորոշման քարոզչությունը, որի ջահակիրն էր Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Մինչդեռ, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, թեպետ Դավիթ Բեկը չէր խուսափում պարսից կամ վրաց համագործակցությունից եւ աչքի առաջ ուներ ռուսաց ակնկալիքները, գիտեր, թե ինչ են թելադրում Անգլիան ու Ֆրանսիան Ռուսաստանին ու Թուրքիային, նա, այնուհանդերձ, ուներ «անսովոր» կողմնորոշում: Դա անկախ պետություն ստեղծելու համառ ջանքերն էին, որին նվիրաբերվել էր ողջ էությանը: Այդպես կարող էր մտածել ժամանակի իրականության կաղապարվածությունից վեր կանգնած հեռատես քաղաքական գործիչը:

Թվում է, թե երբ նա գլխատում է իր ենթակա Պապ գորապետին, հրամայում է սրի քաշել Թաղամերի 60 թուրքական դաված ընտանիքները, գժտվում է Մխիթար բեկի հետ, բանտարկում է Հալիծորի մեկիքին, գլուխների բեռներ է ուղարկում շահին ու պահանջում է գլխատել ճողոպրած խանին, չի ստորագրում զինական օգնություն հայցող նամակներ, չի արձագանքում սյունեցիներին Կասպիականի ավերին վերաբնակեցնելու ռուսական առաջարկին, տեղաբնակ թուրքերին պահանջում է արտագաղթել, անտեսում է միջպետական պայմանագրերը-նա ոչ փոխկապակցված գործունեություն է ծավալում: Բայց դա այդպես չէ: Օսմանյան աշխարհակալության տեսանելի նկրտումները զոնե նրան կստիպեին բավարարվել ժողովրդի անվտանգության երաշխիքներ ստեղծելով, դաշնակիցներ գտնելով:

Տեր-Ավետիք քահանան, օրինակ, հետագայում կարող էր մատնել իր քաղաքական կողմնորոշումը եւ հեռանալ Եվրոպա: Որոշ գորականներ հենց Հալիծորի վճռական ճակատամարտում կարող էին լքել նրան: Տգիտության ճիրաններում տվայտող ռամիկը կա-

## Էջեր Այունիքի դասնությունից

րող էր թողնել Ղարաբաղը եւ տեղափոխվել Աստրախան: Փույթ չէ: Անկախ պետության, հայկական պետության կազմավորման գաղափարը Ղավթի հավատամքն էր եւ ամրասանոր իշխում էր նրա ձեռնարկումների ու մտածության մեջ:

Այս դատողությանը հետեւելով, ստորեւ կտեսնենք, թե ով էր ու որտեղից էր Ղավթի Բեկը:

Անկարելի է պատկերացնել, որ Ղավթի Բեկի ապրած ժամանակներում բանակն ու Այունիքի բնակչությունը չիմանային նրա ով լինելը: Դա այնքան հանրահայտ էր, որ, թերեւս, ոչ ոք հարկ չի համարել այդ մասին գրել (համեմայն դեպս՝ գրավոր հիշատակություն առայժմ չի հայտնաբերված): Բեկի ծագումնաբանությունը մնացել է ավանդազրույցներում եւ, ինչպես հաստատել է ազգագրությունը, այն էլ՝ միայն Այունիքում, ի մասնավորի՝ Կապանում: Այդ մասին առ այսօր էլ պատմում են տարեցներից ոմանք: Եվ դրանց չհավատալու հիմքեր չկան. առավել եւս, որ առ այսօր էլ կապանցիները չեն թաքցնում դավիթբեկյան ժամանակներում դավաճան հորջորջվածների՝ այս կամ այն գյուղից ծագած լինելը:

Ղավթի Բեկի ով լինելու հիմնահարցի վրա լույս է սփռում առերեւոյթ մի նկատառում, որին, կարծես, ուշադրություն չի դարձվում: Դա Հալիծորի կառուցապատումն ու աթոռանիստ դարձնելն է: Ինչո՞ւ հատկապես Հալիծորը:

Յոթնաբերդ Կապանն անվիճելիորեն ուներ այլ ամրություններ, որոնք ռազմավարական տեսակետից ավելի նպաստավոր էին ոստան դարձնելու համար: Այդպիսին էին Շնհերի, Որոտնա, Ձեւու, Ղըղալա բերդերը, Տաթեւի վանքը, Բաղաբերդը (տես «Այունիք» թերթի հմ. 35-36-ը), որոնց պարիսպներն ու որոշ կառույցներ պահպանվել էին եւ անգամ վերանորոգվել էին հենց իր՝ Ղավթի Բեկի կողմից (ՉԺՊ, հ.4):

Բայց նա Հալիծորի անապատում նոր բերդ է կառուցել: «Հալիծորի բերդի կառուցումն ավարտվել էր 1723թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին» (ՊԲՀ, հմ. 4, 1990): Այսինքն, Ղավթի Բեկի՝ Այունիք գալուց զրեթե մեկ տարվա ընթացքում: Եվ այդ բերդի կառույցներն առ այսօր կանգուն ու ոյուրավ ուսումնասիրելի են:

Բայց Հալիծորը Բեխի Մելիք-Փարսադանյանների կալվածքն էր (Թ.Հակո-

բյան, ՉՊ աշխ., էջ 392): Ուրեմն, Ղավթի Բեկը «տիրանում էր» Կապանի տիրակալներից մեկի՝ Մելիք-Փարսադան Բ-ի ժառանգական տիրույթին: Հագիվ թե: Նրան՝ տարաբախտ որբացյալին, ձգել էր երբեմնի հայրական տունը...

Թեպետ Ղավթի գալու օրերին Մելիք-Փարսադանը 250 զինվորներով ենթակայություն էր հայտնել նրան, այնուամենայնիվ չէր հավատում նրա վճռականությանն ու սպասվող հաջողություններին եւ խուսանավում էր: Նա, բնականաբար, չէր կարող ձերբազատվել ավատական իշխանատենչության հակումից եւ չկասկածել, որ իր ազգականը Վրաստանից եկել ու ձգտում է տիրանալ իր կալվածքին ու տիտղոսին: Եվ իր հետ համագործակցելու հարցում տատանվելու համար Ղավթի Բեկը, ի տես եւ ի դաս ամենքի, իր ազգական մելիքին տասներկու օր բանտարկել է տալիս Շնհերի բերդում ու նրա հետ՝ նաեւ մելիքի փեսա Տեր-Ավետիքին: Ազատվելով, նրանք դարձ են կատարում դեպի Ղավթիք, շուտով դառնում նրա երեւելի զինակիցներից ու գործակիցներից նշանավորները: Հալիծորի ճակատամարտում նրանք Ղավթի անկումն հավատարիմներից էին: (Ե.Լալայանը Մելիք-Փարսադանի տապանաքարին կարդացել է մահվան 1724 թվականը: Քանի որ նա սխալ է կարդացել Մխիթար բեկի տապանաքարի թվականը, այդ մեկն էլ կասկածելի է: Այլապես Հալիծորի ճակատամարտի թվականը պետք է վերանայվի):

Մելիք-Փարսադանի եւ Տեր-Ավետիքի հավատարմության քննությունը եղավ Ձեւու բերդի առումը, որը, ինչպես պարզված է, տեղի է ունեցել 1723թ. վերջերին (ՊԲ. հմ. 4, 1990):

Այս բերդի մասին մեր պատկերացումները մնում են առ այսօր թեական: Բաբելոնի հազարամյա բերդերն այնքան աննշմար չեն, որքան այս Ձեւու կոչվածը, որից հիմա մի քար էլ չէք գտնի, թեպետ պատմաբաններն ու վիպասանները նրան պսակել են անզուգական հռչակով: «Ձեւու բերդը գտնվում է Կապան գավառում, Բուխուրուքա լեռան մոտ, Հալիծոր գետի ձախափին, այնտեղ, ուր Հալիծոր եւ Օխչի գետերը միախառնվելով կազմում են մի եռանկյունի: ...Այդ բերդը Ղավթանի ամբողջ տերիտորիայի վրա զրեթե գերիշխող դիրք ուներ» (Հ.Կնյազյան,

Ազատագր. պայքարը Ղավթի Բեկի գլխավորությամբ, Երեւան, 1963, էջ 92): Սա, գոնե կապանցիների համար ակնհայտ թյուրիմացություն է:

Բաֆֆին, որ 1881թ. ամռանը եղել է մեր կողմերում, այդ բերդից նշմարելի ավերակներ անգամ չի տեսել Ողջի գետի եւ նրա Գեղի օժանդակի կցվանքատեղում, որպիսին նկարագրել է իր հռչակավոր վեպում եւ առասպելաբանել, թե, իբր, Ձեւու բերդաքաղաքն ունեցել է մոտ հինգ հազար ընտանիք:

Ձեւուի տիրակալ Ասլամազ-ղուլիին պարտության մատնելուց հետո, ինչպես ավանդված է, Ղավթի Բեկը բնակիչներին ստիպում է գաղթել. հայ բնակչությունը՝ Քաշունիքում հիմնում է Նոր Ձեւուն (Ձեյվա), այլազգիները՝ նույնանուն գյուղ Մակվի խանությունում: Այս ավանդությունը վիպասանին պատմել է զեյվեցի Ասրին: (Ե.Լալայանի մի հաղորդումից կարելի է ենթադրել, որ Քաշունիք Ձեյվան եղել է դեռ Ձեւու բերդի անկումից առաջ):

Հավաստված է, որ Ղավթի Բեկը, ի թիվս այլոց, նորոգել է օգտագործել է Ձեւու բերդը (ՉԺՊ, հ.4, էջ 605): Արդ, զարմանք է պատճառում, որ Բաֆֆու՝ Կապանում լինելուց հետո 150 տարի առաջ վերանորոգված ու հռչակված բերդից պարսպի հետք անգամ չի մնացել, մինչդեռ Հալիծորը եւ ավելի հնագույնները լավ պահպանվածություն ունեն:

Թռուցիկ դիտումն անգամ բավական է համոզվելու համար, որ Ողջի գետի եւ Գեղի գետի խառնուրդում ոչ մի բերդ էլ չի եղել: Դա, ըստ երեւոյթին, թյուրիմացաբար տեղանշվել է մերձակա Ձեյվա կոչված բնակավայրի անվան հուշումով: Դուկաս Սեբաստացին այն ներկայացնում է «բարձրաբերդ ու անառիկ» մակդիրներով, իհարկե, հետեւելով վաճառականի ու քահանայի պատումներին:

Հայտնի է, որ մինչեւ 30-ական թվականները խնդրո առարկա վայրում եղել է Մուլլալու գյուղակը, իսկ ավելի հնում իջեւանատուն կարելի էր ենթադրել, որից մի պատ էր մնացել մինչեւ վերջերս՝ զուգահեռված Ողջի գետին: Մյուս կողմից, կարծես, անտրամաբանական է, որ Բաղաբերդից (Սուտ-Բաղաբերդ: Տես «Այունիք»-ի հմ. 35-36-ը) մոտ մեկ կիլոմետր հեռավորությամբ մեկ այլ բերդ հիմնվել՝ իմա այս Ձեւու բերդը, հռչակվել այնքան, որ «Ղավթի-Բեկ»-ի

## Էջեր Այունիքի դասնությունից

հեղինակը գոնե մեկ անգամ չնշեր Բաղաբերդի անունը:

Ձեյվա (Ձեւա) անունը նորանուն է, թեպետ մոտ անցյալում մեր հարակից տարածաշրջանները ողողված էին Ձեյվա-ներով: Այն մեզանում շրջանառվել է ուշ միջնադարից: Համեմայն դեպս, մինչեւ 16-րդ դարը մենք այդ անվամբ բնակավայր կամ բերդ չենք ունեցել: Ըստ Ս.Խանգաղյանի՝ բառը պարսկերենում բերդ կամ ամրոց է նշանակում: Աճառյանը նրա Ձեւիա տարբերակը ստուգաբանել է որպես մահմեդականների աղոթատեղի: Արդ, պարզ է, որ Ձեյվան առնվել է որպես հատուկ անուն եւ տրվել բերդերից մեկին, թերեւս ամենամշանավորին: Հեղինակ Ղուկասը Ձեւու բերդը դնում է Փուխրուտի կողմերում (ի կողմանս Փուխրութայ լեռին), վիպում եւ նրա առանը սխրանքի մղում իր հերոսներին: Ի դեպ, նման տեղեկություններ չկան ոչ Ստ.Շահունյանի, ոչ Տեր-Ավետիքի պատումներում, որոնց հիման վրա է նա ստեղծագործել: Տեր-Ավետիքն անգամ չի նշել Ձեւա անունը, սակայն Ասլամազ-ղուլի գորապետի ամրությունները կարեւորել է: ...Որոշ խմբագրական ուղղումներում նշվում է, որ Փուխրութա բառի փոխարեն եղել է Փուխսարաթա (սարիաթ-ուխսատեղ): Այդպիսի հղում ունի նաեւ Րաֆֆին իր վեպի մեջ:

Հենվելով բանավոր ավանդույթին, գիտենք, որ Ասլամազ-ղուլին Գեղվաձորի թուրքերի պարագլուխն էր: Բայց, որ զարմանալի է, Գեղի անունը չենք հանդիպում Ղուկասի պատմության մեջ: Ձեւուին տիրելու համար, ըստ Ղուկասի, Դավիթը գորածողով է անում Ղարաչիմենում: Ղարաչիմենի ավերակներն առ այսօր ցույց են տալիս Փուխրուտ գյուղի մոտ: Սղնախը (բանակատեղին), որ ցայսօր էլ հիշում են Վերին Ձորում, դարձյալ ցույց են տալիս Փուխրուտի մերձակայքում:

Ղարաչիմենի գորածողովը, պարզ է, ուղղված էր Գեղվաձորի դեմ, որը սպառնալիք էր Հալիձորի ռազմակայանի համար: Դե, եթե Գեղվաձորին տիրանալու համար պետք էր Փուխրուտից սկսել, նշանակում է՝ Հալիձորից Ողջիի ձորն ի վեր գործելը նպատակահարմար չի համարվել: Եվ քանի որ հենց այդ ուղեգծում էր գտնվում Սուտ-Բաղաբերդը (ներկայիս Դավիթ Բեկ բանավանի մոտ), Ձեւու ասելով հենց դա էլ նկատի են ու-

նեցել:

Դավիթ Բեկի ժամանակներում բերդն իր վաղմիջնադարյան նշանակությունը կորցրել էր, որովհետեւ ընդհարումները տեղի էին ունենում հրազենի գործածությամբ: Ամեն մի բնական ամրություն կարող էր վերառվել բերդի նշանակությամբ, ինչպիսիք էին սղնախներից մի քանիսը եւ այս պարագայում՝ Գեղվաձորի մուտքը՝ երկու գետերի միացման տեղը, որ մեզանում հայտնի է Ձեյվա անվամբ: Ասլամազ-ղուլիի գորակայանը, պարզ է, Սուտ-Բաղաբերդն էր, որին էլ պատշաճում են Ղուկաս վարդապետի նկարագրությունները: (Ի դեպ, այս բերդը հետագայում հրետակոծել է Նժդեհը եւ դուրս քշել Գեղվաձորից ու շրջակա գյուղերից այդտեղ դարանակալած թուրքերին):

Արդ, պարզ է, որ սխալասությունն է, երբ կապանցիները Սուտ-Բաղաբերդը կոչում են Դավիթ Բեկի բերդ: Ասլամազ-ղուլիին վնդելուց եւ բերդը վերանորոգելուց հետո Դավիթ Բեկն այդ ամրությունն օգտագործել է հետագա գործողությունների ընթացքում՝ Շիշկերտ-Մազրա-Ափկիս լեռնային ճանապարհին զուգահեռելով Ողջի գետի ձորի բացված միջանցքը:

Տեղական մի ավանդությամբ, երբ Ձեյվան պետք է գրավվեր, Դավիթ Բեկը կայանել էր Տանձուն լեռնում՝ Թամաքեչի եկեղեցու բակում: Այդ ժամանակ նրա Փելանգ կոչվող մտույզը (Դավիթ Քաջարանցին ուղղում է՝ Փառնակ) գրավում է մի զամբիկով ու թիկնագործից հեռանում: Դա հուշում է գորավարին՝ հետագայում, Հալիձորի վճռական ճակատամարտի ժամանակ թուրքական բանակի հեծյալների վրա բաց թողնել մատակ ձիերի երամակը, որ նախապես հավաքել էր տվել շրջակա գյուղերից: Դա մարտի հաջող ելքի բազմաթիվ հնարքներից մեկն էր:

Համադրելով պատմական տեղեկությունները՝ հնարավորություն ունենք դատողություններ անելու Դավիթ Բեկի ապրած մտահոգությունների, նրա մտքի սլացքի ու համառության մասին:

Որքան էլ նրա շրջապատում կային միջազգային դրությունն ու երեսույթները դույզն-ինչ ըմբռնող այրեր, նա բոլորից բազմակի անգամ վեր էր կանգնած: Նա այլևս վրացական գծի կույր հետեւորդ չէր: Շահական Պարսկաստանի հետ նա արագորեն հստակեցրեց հարաբե-

րությունները՝ առճակատումից անցնելով համագործակցության: Ապստամբ աֆղաններից հալածական շահ Թահմասպը նրան այսպես է դիմել. «...այսօր քեզ կարգեցի իշխան եւ գլուխ մեր բոլոր իշխանների, որ այդ կողմերում են, եւ Ղափանի երկիրը, որ վերցրիր քաջությամբ՝ քեզ լինի: Բայց դու պիտի ելնես ու քո շուրջը համախմբես բոլոր զորքերը եւ այդ կողմերի խաներին, դուրս վանես օսմանցիներին քո սահմաններից»:

Խաչվառը, պատվական մտույզը, դրան հատելու իրավունքն ու բազում նվերները, որ ստացել էր շահից, պետք է ենթադրել, նրան չէին ուրախացնում: Պատմությունը դաժանաբար կրկնվում էր. տակավին 4-րդ դարում Բաբիկ Սյունին էր արհամարհել Շապուհին, երբ վերջինս հոր կալվածքները շնորհ էր անում իրեն՝ որդուն:

Դավիթ Բեկի համար մեկիքներին (տանուտերերին) միավորելը դժվար չէր. այդ խնդիրը դյուրավ լուծում էր զենքով: Պարսկաստանի պայմաններում այլ լուծում հնարավոր չէր: Հայ երեսելիներից ոմանք անգամ մահմեդականություն էին ընդունում, պաշտոններ ձեռք բերում պարսից իշխանության սամուրլքի վրա:

Դավթի գլխավոր մտահոգությունը՝ մեծ քաղաքականության առարկան, օսմանյան վտանգն էր, որ կախված էր ոչ միայն Պարսկաստանի, այլև՝ Ռուսաստանի ու Եվրոպայի վրա: Կապանում նա ուներ նաեւ ներքին թշնամի, որն այլ տեղերում (օրինակ, Արցախում) այնքան էլ արտառոց չէր. դա թուրքական ցանուցիր համայնքն էր, որ առիթի դեպքում նեցուկ էր կանգնում Սյունիքի սահմաններին մոտեցող տաճկական զորամասերին: Թրքամտություն էին դրսևորում երեսելի տներից շատերը: Պատմության մթանած խորքերից վերստին կյանքի կոչվեցին սպարապետ, տանուտեր, սուրհանդակ (հրեշտակ) եւ այլ հայեցի բազմաթիվ բառեր: Գավառականները սկսեցին կոչվել իրենց հինավուրց անուններով: Դավիթը քաջ գիտակցում էր, որ թրքության դեմ պայքարի միայն մի արդյունավետ եղանակ գոյություն ունի՝ անխնա կոտորել: Դա հայ ազգային հարցի հիմնավոր լուծման բանալին է, որը, ի ցավ մեր ճակատագրի, ժամանակ առ ժամանակ ժանգոտվում է:

Ազգային զարթոնքի մոր ալիքը Սյու-

**Էջեր Այունիքի դասնությունից**

Գիքուն սկիզբ առավ 1805-ից՝ ռուսական կայսրության հետ միավորելուց հետո: Եվ այդ դարակազմիկ մտահոգությունն ուներ Այունիքի ազատագրման նախագնացը մոտ մեկ դար առաջ:

Որպես աննախադեպ պատմական երեւոյթ, Դավիթ Բեկի գործունեությունը սթափության խթան հանդիսացավ միտհոլ հայաշխարհի համար: Սկիւռքը խլրտաց: Վանի Լիւն անապատում մի ավետարանի մեջ Մխիթար արեղան 1722թ. հիշատակագրել է. «...այր մի երկրէն Սիւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեղիչք եւ կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնատուփ զաշխարհն Հայաստան» (ՊՅԲ, 3, 73): Անգամ լուրեր եղան, թե «Ձիշխանն Հայոց ի թագաւոր օծեալ է»:

Ամեն սերունդ ճաշակում է իր ապրած ժամանակի հետադիմության դառնությունները: Դավիթ Բեկը բացառություն չէր, եւ 270-ամյա հեռավորությունից էլ կարելի է սարսռալ նրա ապրած ողբերգությունների համար:

Մինչ մենք հետամուտ ենք Կապանա տանը հնուց ի վեր պտտվող չարագուշակ ասեկոսեին, թե Դավթին թունավորել են, այդ մասին գիտի հանրագիտակ Րաֆֆին. «Բայց հանկարծակի մահը թույլ չտվեց այդ հերոսին երկար վայելելու իր հաղթությունների փառքը... 1728 թվին դավաճանի թույնը նրան գերեզման տարավ» (հատ. 9, էջ 442): Այնուհետեւ գրում է, որ նույն տարվա մեջ կյանքից հեռացան նաեւ այլ նշանավոր քաղաքական գործիչներ՝ Եսայի կաթողիկոսը, Մելիք-Աբովը, Մելիք-Եսային (Գանձասարի Եսայի կաթողիկոսը Դավիթ Բեկի եւ վրաց Վախթանգի համատեղ բանակի հետ Գանձակում սպասել էր Պետրոս Մեծի գալստյանը, որը տեղի չունեցավ): Պատահականութիւն է այս քառամահ իրողությունը: Հագիվ թե: Այն, ինչ չի կարող անել սուրը, ոյուրությամբ գլուխ կբերի մարդուն մահադեղ տալու թուրքական բնորոշ եղանակը, որ միշտ գործադրվում է զոհի յուրայինների միջոցով:

Դավաճանությունը մարդկային հարաբերությունների զագրելի արխտ է: Կայեցի ժամանակներից ծվարելով մարդկային ինչ-որ տեսակի մեջ՝ անտես սատամայի պես ուղեկցում է ժամանակին: Ամխտիր պարսավվում ու խարանվում է, դժվար ու անշնորհակալ

զբաղմունք է, որովհետեւ հների կողմից սպառված են բոլոր անծծներն ու նշանակները, ամենաթունդ հայիոյանքներն անգամ:

Չպետք է կասկածել, որ Ղուկաս Սեբաստացու պատմության թելադրիչներ Ստ.Շահումյանն ու Տեր-Ավետիք քահանան (սա Ադոնցի ապուպապն էր) գիտեին Դավիթ Բեկի մահվան հանգամանքները: Անսալով Մխիթարյան շրջահայաց գիտնականին՝ այդ ամենը նրանք անտես են արել իրենց պատումներում կամ թե՛ հենց այդպես է խմբագրել Ղուկասը՝ նյութը հարմար գտնելով հիմնական երկի բովանդակության հարիր մի այլ աշխատության մեջ գետեղելուն: Խմբագիրն, անշուշտ, իրեն գիտակցաբար հեռու է պահել հայ պատմագրության մեջ աչք ծակող «դավաճանագրության»

հանդես»-ի 12-րդ գիրքը՝ տպագրված Թիֆլիսում 1905 թվականին: Գիրքն ամբողջությամբ նվիրված է Կապանին (Ղափան) եւ, ըստ էության, Դավիթ Բեկի պատմությունն է, որ Ե.Լալայանը շարադրել է ծերունիների պատմածների հիման վրա՝ համադրելով Ղուկաս Սեբաստացու խմբագրած երկին: Լինելով մի քանի գյուղերում՝ նա գտել է հին Կապանի մելիքական տների տոհմածառերը եւ աշխատության մեջ գետեղել Մելիք-Փարսադանյանների ճյուղագրությունները

Պարզվում է՝ Դավիթբեկյան հերոսապատումն անցած դարում մեր տարեցները գիտեին շատ մանրամասներով եւ պատմում էին ոչ պակաս հյութեղ ու պատկերավոր, քան դա արել են Ղուկաս վարդապետը կամ վաճառականն ու քա-

<b>Կաղանի Մելիք-Փարսադանյան տոհմի ավագ ճյուղ</b>		
(ըստ ազգագրագետ Ե.Լալայանի)		
Ձագիկ նահապետ կամ Ծատիկ իշխան		
Մելիք-Փարսադան Ա		
Մելիք-Պալի		
Մելիք-Փարսադան Բ	Աստվածատուր իշխան	Շահում կամ Շիկո
Սափրագ եւ Պալի	Դավիթ Բեկ	Ստեփան իշխան
Էվլագ բեկ		Օհան հարյուրապետ
Մելիք-Փարսադան Գ		Մելիք-Ղուկաս
Մելիք-Հովհաննես		Մելիք-Հավհանջան
Մելիք-Գալուստ		Մելիք-Ստեփան
Հովհաննես-բեկ		Մելիք Սողոմոն
Տեր Մովսես		

ոչ հաճելի երեւոյթից: Սակայն, որպես ուսյալ անձնավորություն, չէր կարող շրջանցել այդ ողբերգությունը եւ թողնել առանց գնահատականի: Հավարտ իր պատմագրության, եզրակացրել է. «Բայց երբ նրանց հասավ անմիաբանության կործանարար այս ախտը՝ իսկույն քայքայվեցին, լուծվեցին, մասնատվեցին եւ դարձան չեղածի նման»:

Խորհրդավոր երեւոյթների տրամաբանական շարունակությունն էին Դավթի հաջորդ Մխիթարի եղբրական սպանությունը, հալիծորյան «գահակառիվները» եւ օսմանյան զորքերի մուտքը Ղափան:

Դարը թունավորված էր: Մեր ձեռքի տակ է ազգագրագետ երվանդ Լալայանի «Ազգագրական

հանան:

Տոհմածառից երեւում է, որ Դավիթ Բեկը Աստվածատուր իշխանի որդին է: Նա ժառանգներ չի ունեցել, որովհետեւ չէր ամուսնացել: Որ Դավիթ Բեկի հոր անունը կարող էր Աստվածատուր լինել, գիտի նաեւ Պրոֆ. Ա.Աբրահամյանը, երբ օգտվում է Դանիել գրչի տեղեկություններից (ՊՅԲ, հմ. 4, 1972): Դավիթ Բեկի հորեղբայր Մելիք-Փարսադանի տոհմը շարունակվել է Բեխ գյուղում: Առաջածորի Մելիք-Ստեփանյաններն իրենց տոհմածառն անցյալ դարում հանել էին Մելիք-Փարսադանյաններից, ըստ որի նրանց նախահայր Շիկո-Շահումը Դավիթ Բեկի մյուս հորեղբայրն էր՝ Դավիթ Բեկի պատանեկան ընկեր եւ

## Էջեր Այունիֆի ղափսմությունից

հետագայում զինակից Ստեփանոս Շահունյանի հայրը, Կալեր (Եկրաստան) գյուղի մելիք:

Սեզանուն Դավիթ Բեկի հոր մասին քիչ են խոսել՝ նրան թողնելով անհայտության մեջ, եւ այդ տարուն ունի իր պատճառները: Ի չգոյե գրավոր հիշատակարանների, մենք կհենվենք բանավոր ավանդագրույցների վրա, որոնք գրառել են Ե.Լալայանը եւ նրանից հետո՝ պրոֆ. Ստ.Լիսիցյանը: Մելիքների գործունեությունը Ե.Լալայանը շարադրել է Վ.Ազուլիսի ծխատեր քահանա Տեր-Մովսես Մելիք-Ստեփանյանի (սա իր լսածները տպագրած ունի «Բանասեր»-ի 1902թ. դեկտեմբերի համարում), մեղրեցի ուսուցիչ եւ փաստաբան Մատթեոս Շահյանի (սա Լալայանին ուղեկցել է Առաջածոր), բեխցի Հարություն-բեկ Մելիք-Փարսադանյանի, Արծվանիկի քահանա Տեր-Մեսրոպ Տեր-Հարությունյանի եւ ուրիշների հետ ունեցած զրույցների հիման վրա: Սրբագրության թերթերն աչքի են անցկացրել Մանուչար-բեկ Մելիք-Ստեփանյանը (Գանձակում) եւ Սողոմոն-բեկ Մելիք-Փարսադանյանը, որոնք մասնակի նկատառումներ են հայտնել:

Մելիք-Փարսադանյանի որդի Սափրազ-բեկը, հոր հետ ունեցած մի վեճի պատճառով, հեռանում է տնից: Վեճը ծանր տպավորություն է թողնում երիտասարդ Դավթի վրա, որ «իւր հայր Ստուածատրի մահից յետոյ մնացել էր Մելիք-Փարսադանի անմիջական իշխանութեան ներքոյ»: Ուստի եւ սա եւս թողնում հեռանում է Վրաստան եւ այնտեղ վրաց թագաւորի մօտ ծառայութեան մտնում»: Սա Դավթի՝ Հալիծորից հեռանալու առիթն է: Դրդապատճառը, որ հասկանալի կերպով չի գրառվել, բացահայտվել է ավելի ուշ: Այն զետեղված է Ստ.Լիսիցյանի «Ձանգեզուրի հայերը» աշխատության վերջում, Արշավիր Մելիք-Փարսադանյանի բացատրագրով: Ըստ ավանդության, Աստվածատուր Մելիք-Փարսադանյանը ուրացել է քրիստոնեական հավատքը, մահմեդականությունը ընդունել եւ կոչվել Ալավերդի: Հարուցում է ժողովրդի զայրույթը. նրան սպանում են, ընտանիքը՝ կոտորում, տունը՝ հրդեհում (սա գիտի նաեւ Րաֆֆին եւ նկարագրել է «Դավիթ Բեկ» վեպում): Դավանափոխության հարուցած այդ եղեռնից փրկվում է միայն 18-19-ամյա որդին՝ Դավիթը, եւ ապաստանում

Հալիծորում՝ հորեղբորանց մոտ: Ժողովրդի զայրույթը զսպելու համար Մելիք-Փարսադանյանը նրան ուղարկում է Թիֆլիս՝ ազգական Խոջա Սարգսի մոտ, որտեղ էլ նա վրաց թագավորի մոտ զինվորական ծառայության է մտնում: Պատկերացնելու է, թե ինչպիսի ծանրածանր հոգեկան հարված էր խանդավառ ու հուրհրան տարիքի ազնվական մարդու համար հոր ուրացությունը: Կասկած չկա, որ Դավիթ Բեկն ամբողջ կյանքում հոգեցունց է եղել ճակատագրի այդ չար խաղից: Նրան հետապնդել է «ուրացողի որդի» կոչվելու դարանակալ հարվածը, որ կարող էր խոցել նրա փշրված սիրտը պատեհ կամ անպատեհ առիթներով: Հենց դրանով պետք է բացատրել նրա հետ երբեմն անհամերաշխվելու, նրա ինքնամեկուսացման հայտնի միջադեպերը: Նրա դեմ ընդվզել են մի քանի մելիքական տներ, հաճախ էր ընդհարվում Մխիթար սպարապետի, Թորոս իշխանի, Պապ զորապետի (սրան զխատեց) եւ այլոց հետ: Իր դեկավարած ժամանակ ռուսական արքունիքին հղված մի խնդրագիր ստորագրել է ոչ ինքը, այլ Մխիթար բեկը: Գրառված ավանդագրույցներում հաստատված է, որ նրա Այունիք գալուսն դեմ էր Մխիթարը, իսկ Մելիք-Փարսադանը համաձայնություն է տալիս՝ ինչ-ինչ նկատառումներից դրդված:

Մենք կարող ենք նշել Դավթի հայրական տունը մոռացության տալու մի քանի դրդապատճառներ. նախ, կալվածատիրական մասնատվածության այդ ժամանակներում ինչպես հայ, այնպես էլ այլազգի ավատական տոհմերին (ցեղերին) հատուկ էր արյունալի վրեժխնդրության երեւույթը, ընդհուպ մինչեւ թշնամի տոհմի բնաջնջումը: Ուրեմն, տոհմային անվտանգության երաշխիքների համար, Մելիք-Փարսադանյաններին եւ Մելիք-Ստեփանյաններին «ձեռնտու չէր» բացեիբաց ասել, որ Դավիթն իրենց ազգականն է:

Պակաս կարելուր չէ նրա հայրական տիրույթների տնօրինման հարցը: Հայտնի է, որ Աստվածատուրը կալվածքներ ուներ Տաթևի մահալում: Բնականաբար Դավիթն այդ հարստության ժառանգորդն էր: Վրաստան հեռանալով՝ նա դա թողել էր Մելիք-Փարսադանյաններին, որոնք, հավանաբար, Աստվածատուր-Ալավերդու հաշիվները վերջացած էին համարում եւ դժկամությամբ պիտի

կալվածքը զիջեին օրինական ժառանգորդին՝ Դավթին:

Եվ, վերջապես, ուրացության անգոսնելի երեւույթը հակակրանքի տրամադրություն էր ստեղծել Դավթի հոր նկատմամբ, իսկ տան անդամների եղբրական մահը սերնդեսերունդ պիտի հիշվեր (հմմտ. Ֆրանգուլի ուրացությունը, որ առ այսօր անվանարկվում ու բանադրվում է կապանցիների կողմից):

Հոր ապաշխարության եւ զղջումի հիշատակի հեռավոր արձագանքը կա այն բանում, երբ Դավիթ Բեկը հրամայում է Տաթևի մելիք Դավիթ ուրացողին կախաղան հանել Շնհերի անապատի դռան առաջ, իսկ մինչ այդ ուրացողին շրջապատած ժողովուրդը 12 օր շարունակ վանկարկում էր.

Լուս Լուսավերեչի հավատին, վայ ուրացող մարդին:

Բեխի ծերունիները Ե.Լալայանին պատմել են Դավիթ Բեկի եւ Մելիք-Փարսադանի մտերմիկ հանդիպումների դրվագներ: Նրանց նախնական բացատրելի սառնությունը կարճ ժամանակում վերածել էր սրտառու բարեկամության եւ որպես արյունակիցներ, եւ որպես համախոհ քաղաքական գործիչներ, եւ որպես համերաշխ մարտավարներ:

«...Դավիթ-բեկը մտնում է Մելիք-Փարսադանի սենեակը եւ ասում. Հօրեղբայր, տեսնո՞ւմ ես, որքան օգտաւետ է մեր հաշտութիւնը. ինչի՞ աւելի շուտ չեկարք»: «Մելիք-Փարսադանը փաթաթում է նրա վզովը, համբուրում նրա ճակատը եւ օրհնում: Այսպիսով հաշտութիւն է կայանում հօրեղբոր որդու մէջ, որոնք այնուհետեւ միասին եւ համերաշխ գործում են» (Ե.Լալայան, գիրք 12, էջ 183):

Բանասիրությունը հազիվ է գլուխ հանել Դավիթ Բեկի մահվան թվականից եւ այն թեականորեն դրել 1828-ին: Եթե այն մեկ-երկու տարի վաղ դրվեր, Դավիթ Բեկն իր ծավալած ռազմական գործողություններով առասպելական հերոսի տպավորություն կթողներ (ըստ իս՝ նրա կատարածը առասպելականը ստվերելու անզուգական օրինակ է): Փաստերն ուշ դնելու օգտին չեն խոսում: Բայց կասկած չկա, որ նրա առեղծվածային մահվան առիթ է եղել ինչ-որ նպատակադիր կուսակցություն կամ շահագրգիռ խմբավորում, որի համար նյութ տալով, եզրահանգումը թողնում ենք ընթերցողին:

Դավթի մահից հետո Հալիծորի

## Էջեր Այունիքի տասնութամյակի

խորհրդակցությունը ոչ միաբան կարգով նրա հաջորդ է կարգում Մխիթար բեկին (սպարապետ): Հալիծորից Եղի բեկը, որ հավակնում էր փոխանորդի տիտղոսին, ռիսակալում է: Նա շտապ դաշինքի մեջ է մտնում ոչ անհայտ Ֆաթալի խանի եւ այլազգի այլ ուժերի հետ, հարձակում կազմակերպում Հալիծորի վրա: Կտրել տալով բերդ մտնող ջուրը՝ պաշարվածներին ստիպում է անձնատուր լինել: Թուրքերը գրավում են բերդը: Մխիթարը ճողոպրում է Խնձորեսկ եւ 1500 մարդ վարձելով օգնության է հասնում: Եղին փախչում է Շնդռեն գյուղը (Ճակատենի մոտ), սակայն Մխիթարի զինվորները բռնում են նրան, բերում հանձնում Հալիծորի ժողովրդի դատին, որն էլ արժանի պատիժ է տալիս այդ զագրելի տիպին. «... դու սուրբ մարդ ես, պետք է քո առաջդ նոս վառենք. մերկացնում են եւ ուսերին, կրծքին, ոտներին մոմեր կպցնում ու վառում, սատկացնում նրան» (Ե.Լալայան, գիրք 12, էջ 196): Արդ, պարզ է, թե ինչու առ այսօր խառնակիչ ու դավաճան մարդուն կոչում են Յաղի:

Ղե ի՞նչ: Որտեղացի՞ էր Ղավիթ Բեկը, նույն ինքը՝ Ղավիթ Աստվածատուրի Մելիք-Փարսաղանյանը: Որքա՞ն կարելու է այդ խնդիրը պատմության համար: Ջորավարի մաքառումի մի քանի տարիները դարաշրջան կազմեցին՝ մոռացության ետնախորշում թողնելով նրա անձնական ողբերգության արահետը: Նա արթնացրեց Այունյաց քնած առյուծին, սասանեց տառապյալ Հայաստանը: Բայց Ղավիթի թունավոր դարը դեռ չի սպառել իր առեղծվածային գաղտնիքները: Մեր քարաստան ընդերքում անթելված հրաշեկ պղինձը կերպարանք առել, դարձել է Ղավիթ Բեկ, եւ նա, Փառնակին հեծնած, անմահացել է մեր քաղաքում: Բայց տեսեք. հայացքն ու սլացքը դեպի կորուսյալ էրգիր, դեպի Վանա լիճ է:

1998թ., «Այունիք» թերթ, N41-42, N43-44, N45-46

## Այունիքյան օլիմպոսը

Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրագույն գագաթը Կապուտջուղն է, որ երկնագնա սլացքով հսկում է ողջ Այունյաց աշխարհը: Լեռան հետ աղերս ունեն բազում ավանդապատումներ ու լեգենդներ: Ամենասրտամոտը, թվում է, Սուրբ Մեսրոպի անվան հետ առնչվող իրապատումն է: Ինչպես հավաստում է Կորյուն Աքանչեղին Սրբին նվիրված վարքագրության մեջ, երանելին շատ տարիներ ճգնել է հարեան Գողթն (Կապանա խոսվածքում՝ Կոխտան) գավառում, ասել է թե՛ Կապուտջուղի ստորոտներում: Ցայժմ Որդվատուն (Օրդուբադ) պահպանվում են Մեսրոպավանքի ավերակները: Գողթնից Մաշտոցն իր շքախմբով 408թ. Բաղք (Ղավիթի շրջան) է անցել Տաշտունի (Տաշտոն) լեռնանցքով, որտեղ նրան դիմավորել է Այունիքի իշխան Վաղինակ Այունին:

II Հայտնի չէ՝ արդյո՞ք մաշտոցյան ժամանակներում լեռան անունը Կապուտջուղ է եղել: Բարբառում այն արտաբերվում է Ղավուջուղ ձևով: Ռուսատիրության ժամանակներից շրջանառվել են Կապուտջող, Կապուտժուգ, Խափուջիկ եւ այլ տարբերակներ: Լեռանվան համար տարակուսել է Ալիշանը. «ոչ գիտեմ գիարդ ի հնուն կոչեր, գի հարկ էր այնպիսույ բարձրութեան՝ ունել իւր անուն սեփական»: Եվ մատնանշել է. «բարձրագագաթն լեռոն այն Քափուճուխ կոչեցաւ՝ Դռնակ»:

Արդ, ակներեւ է, որ լեռանունը հարմարեցված է թուրքական հնչյւննը. դռնակը լեռնանցքի իմաստով է: Կապուտջուղի լեռնանցքը միակ հուսալի դռնակն է լեռնապարի վրա, որը Բաղքից (Ձորքից) բացվում է Գողթնի վրա կամ հակառակը: Ի դեպ, այս լեռնանցքով է 1920թ. մարտին Նժդեհն իր զորախմբով անցում կատարել դեպի Գողթն եւ անսպասելի հանկարծակյան գրոհով հարվածել թշնամուն:

Սատենագրական երկերում, ցա-

վոր, Կապուտջուղ անունը չի հիշատակված: Այն չկա Այունիքի պատմիչ Հայր Օրբելյանի (13-րդ դար)՝ մեզ հասած ձեռագրերում: Կապուտջուղ անունը չգիտի նաեւ Ղուկաս վարդապետը (18-րդ դար), որ գրել է դավիթբեկյանների պատմությունը: Վարդապետի՝ 1737թ. հեղինակած քարտեզում Այունիքը (Ղավիթանու երկիր) արեւմուտքից եւ հարավարեւմուտքից երիզում են Ղազանգյուլի, Ալազրոզի լեռները: Ի չգոյե լավագույնի, Ալիշանը մակաբերել է Կապանի լեռներ անվանումը՝ «պար Ալանկէգի կամ լեռանց Կապանայ»:

Ուշագրավ քննություն է կատարել մեր հայրենակից գրող-բանասեր Սերգեյ Ումառյանը: Անվան մեջ նա առանձնացրել է կապ արմատը, որ Կապան է: Ըստ հետազոտողի՝ հայերենին ազգակից պահլավերենում բաղ-ը հենց կապ է նշանակում, այնպես որ՝ մեր հիմնավորց Բաղք եւ Կապան անունները նույնական են եւ Կապուտջուղ անվան նախնական ձեւը պետք է լիներ Կապ-ճյուղ: Բայց թե ինչու լեռանունը պետք է ձեւվեր աստվածաշնչյան ժամանակներից ավանդված Բաղք-ից համեմատաբար ուշ շրջանառված Կապան-ից (5-րդ դար, Հ.Քս), առկախ է մնում: Ու նաեւ, խնդրո առարկա դիցական լեռը Այունիքի Օլիմպոսն է եւ տրամաբանական չէ, որ անունն առած լինի բնակավայրի պարզունակ Կապան անունից (հմմտ.՝ դիցական ժամանակների Արարատ, Մասիս, Արագած եւն): Ի դեպ, կապ արմատով Բաղքում այլ աշխարհագրական անուններ ավանդված չեն, բաղ-ով՝ հակառակը, զորոհնակ՝ Բաղաք-սար (Արեւիքի լեռնաշղթայում), Բաղաջուր (Ձորքում):

Այս հարցում թուրք գիտունների հետ քննարկման եզրեր չեն կարող լինել, որովհետեւ թուրքատիրությունը սկզբնավորվել է միջնադարում: Սակայն պետք է ընդունենք, որ թուրքն իր լեզվով լեռնանցքը եւ լեռը կոչել է գափըջըղ, որ բարբառս ցայժմ հնչաբերում է դափըջըղ: Սա ակներեւ, պարզունակ-հովվական անվանում է եւ չի կարող կորուսյալ հայեցի անվան տարինչեցունը լինել:

Խոսելով Տիգրան արքայի կողմից Աժդահակ Մարացու հետնորդներին Մասիս լեռան կողմերում վերաբնակեցնելու մասին՝ մեր Ղատմահայր Մովսես վարդապետը մատնանշել է սակավ հայտնի մի լեռանուն. «... ավելի քան բյուր մարդ



Էջեր Այունիքի դասնությունից

Տիգրանը բնակեցնում է մեծ լեռան արեւելյան կողմը՝ մինչեւ Գողթնի սահմանները... մինչեւ Նախճավանի ամրոցի դեմուղեմը: Նրանց է թողնում նաեւ երեք ավաններ՝ Խրամ, Ջուղա եւ Խորշակունիք գետի մյուս կողմում, ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդանականը...»: Պարզ է, որ դաշտի գլուխը՝ Աժդանականը, լեռան անուն է: Ընդամենը, պարզ է, որ «գետի մյուս կողմը» Արաքսի ձախավանյա՝ Նախիջեւանի դաշտավայրն է (տես Ա.Այվազյանի քարտեզ-պատկերացույցը): Դաշտավայրի արեւելյան կողմում նշանավոր միայն մի լեռնագագաթ կա՝ Կապուտջուղը, որը Փոքր Կովկաս լեռնահամակարգի ամենաբարձր կետն է (3906մ):

|| Ըստ Գ.Կարազյոզյանի (եւ ի լրո՝ ըստ Ա.Այվազյանի), Աժդանականը Օձասարն է, որ թուրքերը թարգմանաբար Իլանդաղ են կոչում: Սակայն հայտնի չէ, թե երբ եւ ինչու է Օձասարը վերանվանվել Իլանդաղ եւ առավել եւս՝ Աժդանականը՝ Օձասար: Ըստ մի ավանդազրույցի՝ Ա.Մալեղոնացին այս լեռան վրա տեղավորել է կանանցը եւ պահապան կարգել օձերին:

Օձասար-Իլանդաղը Կապուտջուղից ցածր է ավելի քան 1500 մետրով:

Պատմահոր մատնանշած մեծ լեռը, անշուշտ, Մասիսն է: Եվ, ըստ այդմ, խոսքի վերջում չէր դնի ոչ շատ բարձր լեռան անունը: Պատմահայրն, անշուշտ, Նախիջեւանի նոյյան դաշտը կհավերժացնեի հենց այդպես՝ նրա գլուխ նշելով մոտակա ամենաբարձր լեռնագագաթը, որ է Կապուտջուղը:

Նկատենք, որ Տեղանունների բառարանը (պրոֆ. Թ.Յակոբյան եւ ուրիշներ) չի նույնացնում Օձասարն ու Աժդանականը, թեպետ վերջինիս ստուգաբանությունը հղվում է պաշտամունքային օձիժ-վիշապին:

Արդ, պիտի ընդունենք, որ հնագույն ժամանակներում Կապուտջուղ լեռն ունեցել է Աժդանական դիցական, վեհահունչ անվանումը:

Կապճյուղ-Կապուտջուղը պաշտամունքային լեռ է: Ըստ ավանդազրույցի՝ լեռան վիհերում ապրում է հօշեփը, որ է վիշապը: Լեռնապարի երկու կողմե-

րում հայտնի են ջրի եւ պտղաբերության Նապատ կոչվող մեհենատեղիները, որոնցից մեկը՝ Քաջարանց գյուղի մերձակայքում: Ուլուբլաղ հանդանունը, որը հագարերեն է, բառացի նախնյաց վիշապածուկ է նշանակում: Ս.Խանգադյանի գրառած մի լեզունդի համաձայն՝ այս ջրածածկ կողմերով անցնող Նոյյան տապանից մի սեւաթույր քար է ընկել ու մնացել վճիտ մի աղբյուրի մեջ:

Լեռան արեւելակողմում՝ ներկայիս Գանձասար բաց հանքի տարածքում էր հնամենի Սուրբ Դավիթ ուխտատեղին, որ պարսկերեն բարբառով հնչում էր Փիրդավդան: Այս սրբավայրը, որ խորհրդային տարիներին կորցրել էր իր նշանակությունը, ուներ իջեւանատուն եւ իրեն էր գրավում անգամ հեռավոր վայրերի ուխտավորներին: Իբր, չբերներին պտղավորելու զորություն ուներ, ապաքինում էր օձից խայթվածին, հովանավորում ճամփորդության անվտանգությունը:

Լեռան բարձրադիր լանջերից սկիզբ են առնում Ողջի եւ Գիլան գետերը: Ջրբաժանի բարձունքները տիրական են ոչ միայն Այունիքի վրա: Այնտեղից տեսանելի են Մասիս սարն ու Արարատյան դաշտը, բազմաթիվ գետահովիտներ ակոսող մայր Արաքսը: Հեռադիտակով զննելի է Մակուի դաշտավայրը, որտեղ կարելի է նշմարել Ջանգիմարի վտակ Տղմուտի ձորահովիտը:



ԱՍՔԱՊԱՏՈՒՄ

Արբան Յին Կապանի ավերակներում է

Քարեղեն սնդուկը, որի մեջ աննարչելի կերպով պահվում էր Բաղակի հոջակավոր քաղաքը, ներկայացնում է մի փխուր, քարեղեն դագաղ, որի մեջ վաղուց արդեն թաղված էր Այունյաց աշխարհի մեռած մայրաքաղաքը...

Իաֆֆի

Ավանդապատումները զուգահեռվում են մատենագրությանը: Պատմության հոլովություն այդ ընթացքը երբեմնակի թուլացել է բնակչության տարհանում-վերաբնակեցումների հետեւանքով, եւ այս դիտարկումը, կարծես, հատկապես Այունիքի թագավորության շրջանին (970-1170թթ.) է վերաբերում:

Հին Կապան մայրաքաղաքի ավերակները հազիվ են նշմարվում, աղավաղվել են հայեցի տեղանունները, պատումների մեջ մեկի սխրանքը մեկ ուրիշին են վերագրում, խամրել է հնավայրերի տեղորոշման մտահոգությունը: Անգիտությամբ ակամա ավերում ենք, գայթակղվում ուրանաբեր «սատանայի եղունգ» փնտրելով, արտերկրից մեր հնամենի ոստանին աչք դնողներին իրենց տեղը չենք դնում՝ ինչպես հարկն է...

Ժողբանի (ֆուկլոր) գիտակների շարքերն են նուսրանում: Տարեցները մոդեռն ժամանակից անդին շրջանի համար սակավապետ եւ քչախոս են: Դեռ նախորդ դարավերջին կցկտուր պատմում էին մի քահանայի հաղորդածը՝ Դավիթ Բեկը եւ հետագայում Նժդեհը փնտրել են Հին Կապան քաղաքը, որ ամրանան այնտեղ, սակայն տեղորոշները գլուխ չեն հանել: Ի տրիտուր՝ Գարեն (Նժդեհը) ապավինել է դիցական Խուստուփին. թերեւս, Սպարապետին հետաքրքրել է նաեւ լեռան վան ստուգաբանությունը, որը ցայժմ վերջնական պարզված չէ (այս մասին՝ առաջիկայում): Ողջ գետն ակոսում է հինավուրց Բաղք գավառը: Ողջանց անվամբ գյուղ է հիշված Աժդանական-

## Էջեր Այունիքի դասնությունից

Կապուտջուղի արեւելակողմ ստորոտում, 18-րդ դարում:

Արդ, պարզ է, որ գետանունը հետին շրջանի է: Ըստ պատմիչի՝ գավառի գետերից գլխավորը ավանդաբար կրել է գավառի անունը: Ըստ այդմ՝ վաղնջական ժամանակներում Ողջի գետը Բաղքի գետ կամ Բաղացջուր է կոչվել: Այս վերջինը, ի դեպ, պահպանվել է գետի աջակողմ վտակի վրա, որը, հոսելով Արջածոր-Թունիս ձորաստանից, Չագիկձոր գյուղում (ինձա՝ Մուսալլամ) խառնվում է Ողջիին: Բաֆֆին Ողջի գետը Հալիձորի գետ է անվանել, թեպետ նրա այցելության ժամանակ (1881թ.) գետը, ներկայիս Կապանի տեղում գտնվող Հողորա գյուղի անվամբ նաև կոչվում էր Հողորա գետ, ըստ այլազգիների՝ Ուղուրչայ:

Ստ.Օրբելյանի ժամանակներում, բնականաբար, Բաղացջուրը վերակոչվել էր Կապանա գետ (տեղական խոսվածքում՝ Ղափանա: Հմմտ.՝ Չորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան: Օրբ., Գ): Նկատենք, որ Չորքը հին Բաղքից է առանձնացել որպես առանձին գավառ:

Ողջի գետի աջակողմ լեռնապարը երկանուն է հիշված՝ Բաղաց եւ Արեւիքի կամ Մեղրու լեռնաշղթա, որի ամենաբարձր գագաթը Բաղացարն է: Երկնտելու չէ, որ նախընտրելին Բաղաց լեռնաշղթա անվանումն է: Բաղացարից հյուսիս-արեւմուտք «Մարդ ու կնիկ քար» հորջորջմամբ լեռնաբազուկն է, որի վրա պահպանվել են բերդաքաղաքի ավերակներ, ըստ իս՝ Բաղաբերդը: Տարածքը մոտ 3 հազար քառ.մ է, գտնվում է եռակողմ անդնդախոր ձորերի միջեւ, կառույցներում ունի ոչ ուղղանկյունաձեւ՝ քառակուսի աղյուսներ, ջրհոր, պահակատուն: Գետահովտից բերդ տանող կորսված ճանապարհը կռահելը դյուրին է, հատկապես՝ Գիրաթաղ գյուղից գետի աջակողմ բարձունքը դիտելիս:

Ընթերցողի պատկերացրած այս բնածորում՝ գետի աջ ու ձախ բարձունքներում, ամենուրեք բերդավերակներ են, որոնք ժամանակին պատկարել են Հին Կապանը: Կռահելու է, որ կապան (ինձա՝ կիրճ ու լեռնանցք) համարվող տեղանքը Բերդարանքն է կամ Բերդամեջը, ինչպես կոչում են տարեց մարդիկ: Այն ձգվում է Դավիթբեկ ավանից (նաեւ՝ Անդրկավան) մինչեւ Ներքին Ջրախոր



(Ձղախոռ)՝ «Քարավան» կոչվող հյուրատունը, որին ակներև երիզում է հին պարսպի մի հատվածը:

Գիրաթաղի գետաբերանի կամրջից դեպի Տանձուն լեռն ձգվող ճանապարհի աջ մասում Հին Կապանի կարեւորագույն կառույցներից մեկն էր, որի պարսպափակ ավերակներն ու պաշտամունքային տունը հստակ նշմարվում են: Այս կառույցը սխալմամբ Բաղակուքար են կոչում: Խորհրդային ժամանակներում նախկին գետամերձ ճանապարհն անց են կացրել կառույցի դարավանդի միջով:

Այս վայրերը հիշարժան-պատմական են, որովհետեւ գտնվում են Բաղաբերդի ստորոտում: Ողջի գետի աջակողմ վտակը, որն ունի բնահարմար լողավազան, եւ որի վերնագավառում պահպանվել են սանդղաշար ճանապարհի ուղղանները, բնականաբար, Կապանա ձորն է: Այդ տեղանքում նշմարվում են արեւելակողմ ջրանցքի աղուրը, գետներես դամբարաններ, շինությունների ավերակներ: Ողջի գետի եւ Կապանա ձորի կցվանքատեղից հեռու չէ բարբառային հնչման «Սուրուն կապ» լեռնանցքը, որտեղով անցնում էր մեր կարմիր նախնիների կառուցած Ղափան-Քաջարան ինքնատիպ ճանապարհը: Քանի որ այս վայրը նախադուռ էր Չորք գավառի համար, ապա կռահելու է, որ կապի անունը Չորքի կապ կամ Չորոց կապ հնագույն անվան աղավաղված ձեւն է (կան եւ այլ ժող. մեկնություններ՝ Սորուն կապ-հոսող, գահավիժող իմաստով, Սյուրի կամ Սերունման տիկնոջ անվան կապ եւ այլն):

Կապան-կիրճի հարակից բարձունքում քանդարավոր արվեստագետը՝

բարեհիշատակ Մարատ Նուրիջանյանը, տեղադրել է բնության գաղտնիքների բանալին մարդկանց բերող արջի ձուլարձանը, որի ձախակողմում՝ գետի աջեզրին՝ ժայռի վրա, ծիրանի հագած այրի հարթաքանդակ կա՝ առլեցուն տիրականությամբ, վնասված (հետագայում) երկու ձեռքերն առաջ պարզած: Ըստ տեղական մի ավանդապատման՝ մոտ երկու մետրանոց այդ պատկերը Այունիքի թագավորինն է: Հրաշքով պահպանված այդ պատմական հուշարձանն ուսումնասիրել է արվեստագետ-մանկավարժ Լեռնիկ Առաքելյանը, հարթաքանդակի եզրային տարածքում ի հայտ բերել Ավետարանի, աղավնու պատկերներ: Կարծիք է հայտնել, որ պարզված երկու ձեռքերի վրա միջնադարյան հեղինակը տեղադրել էր արքայական քարակերտ սուրը՝ պատյանով: Ըստ Առաքելյանի՝ հարթաքանդակը հարյուրամյակների հնություն ունի: Հարկավ, նման բարձրարժեք ստեղծագործությունը պատշաճում է թագավորական ժամանակներին, երբ կար պետական հովանավորություն:

Թերթենք Հայր Ստեփանոսի «Հիշատակաց մատյանը»: Պատմիչը ԾԹ գլխում նկարագրել է, թե ինչպես դավադրության զոհ դարձավ Այունիքի թագավոր Սենեբերիմ Սեւադյանը 1094թ. «Պարտավի, Առանի ու Գանձակի ամիրան բազմամարդ զորքերով ելավ-եկավ պատերազմելու Սենեբերիմի դեմ: Սենեբերիմն, այդ իմանալով, նահանգի ամբողջ բնակչությունն ամրացրեց անառիկ ամրոցներում: Եվ ապա անհոյակ ամիրան, գալով ու տեսնելով, որ անհնարին է մարդկանց ուժով հարթահարելը, անեցի իշխան Գրիգորին, որն ինչ-որ պատճառով իր մոտ էր գտնվում, ուղարկեց Սենեբերիմ արքայի մոտ՝ ասելով. «Երդմամբ հանդիր նրան, որ գա ինձ մոտ, միմյանց հետ բարեկամանանք եւ իրեն մեծամեծ պարգևներով հետ կուղարկեմ, իսկ եթե չհամաձայնեցնես, այդ դեպքում զլուխդ կկտրեմ»: Ապա Գրիգորն ընթացավ այն չար ճանապարհով. մտնելով Սենեբերիմի մոտ՝ մեծամեծ երդումներով համաձայնեցրեց նրան՝ գալու ամիրայի մոտ: Եվ նրանք միասին եկան: Չարաթույն գազանը, Սենեբերիմին տեսնելով, իր պայմանը դրժեց, մշտոցով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-զնաց իր աշխարհը»:

## Էջեր Այունիքի դասնությունից

Սենեքերիմյան դարուն մոլեգնում էր աղանդավորների թոնդրակյան շարժումը: Անհավատներն ավերում էին վանքեր ու եկեղեցիներ: Կապանատանը հայտնի էր աղանդասերների առաջնորդ Սմբատ Տինիքցին, ուն գինավառ դուստր Այունեն անգամ ընդդիմանում էր թագավորին: Սենեքերիմ արքան, սելջուկյան վտանգը մեղմելու համար, աղանդավորների դեմ խստագույն պատիժներ կիրառելու հավակնություն չուներ: Արտաքին թշնամուն դիմակայելու համար նա անգամ զինում էր աղանդավորներին: Արքան սուր էր նվիրել քաջակորով Այունեին (այս ոլոցագնուհու անվամբ է Աղջկաբերդը՝ Շհարջիկից վերել, որ այլազգիները կոչում էին Կզկալա):

Դարաշրջանի իրադարձությունները վիպել է Ս.Ունառյանը: Վիպական մի տեսարանում Կապան տան 11-րդ դարի հերոսուհի Այունեն հայտնվում է դրյակամերձ հրապարակի պարսպի վրա. «Ահա այն սուրը, որ պիտի կտրեր իմ գլուխը, հայոց բարի թագավորը նվիրեց ինձ...»:

Արքայի դեմ կազմակերպված դավադրությունը Հին Կապանում էր, Բաղաբերդի պարիսպներից հեռու, եւ Այունեն անիրագվել էր այդ ամենին: Ըստ վիպագրի՝ «Էմիր Փատլունը կատաղությունից աքլորի պես վիզը երկարեց, սուրը մերկացրած՝ բղավելով հարձակվեց Սենեքերիմ թագավորի վրա ու խոցեց նրա սիրտը»:

...Խորհեմք այս ասքապատումի ելեւէջներով: Երախտապարտ ժամանակակիցները, թերեւս Սենեքերիմին հաջորդած որդու՝ Գրիգոր թագավորի կամեցողությամբ պատրաստեցին անդնդախոր ձորի գետեզրի ժայռապատկերը, որ ավանդաբար վերագրվում է Սենեքերիմ արքային, ով սուր էր դնում ժողովրդի ձեռքին՝ մեր հինավուրց տունը ներխուժած թշնամուն սաստելու համար:

Ինը դար շարունակ արքան ողջունում ու պատգամում է սերունդներին:



## Համոսահյանական ոգեղենության Այունիքի հնադարը

Լորեցի հորթարած, տավարած, մաճկալ պատանյակի, թշնամյաց դեմ պատերազմած նավաստու, ոսկեհուռ տարիքուն համայն աշխարհը հայ բանաստեղծի սքանչելափառ քանքարով արբեցրած Հմայակ Սահակի Գրիգորյանի առաջին հարյուրամյակն է, նախախնամության սահմանամբ՝ հայոց մեծաց պանթեոնում հանգրվանած իր պարթեւապերճ անձի բացակայությամբ:

Բիբլիական Լորաձորը, ցայժմ հնչաբերվող Ա.Եղիայի մերձակա լեռնագագաթով, սրբավայրերի ու խաչքարերի ցանուցի բազում մասունքներով, գրչավայրերի համբավով Այունյաց միջնաշխարհ՝ Ծղուկ-Սիսիան ոստանի՝ երկրագնդի միջօրեականով ձգվող չքնաղ բնածորն է եւ բանաստեղծի հոգեզմայլ երկտող նկարագրով՝

*Այսպեղ ամեն ինչ ասուպասուր է,  
Նորուր-մորուր է, մանկությունուր...*

Ծղուկ-Սիսիանը տարրընթերցվածներով առբերված է հնագույն սեպագրերում, զորօրինակ՝ ուրարտահունչ Ծուլուկին, Ծիունի, հայ ու այլազգի մատենագիրների երկերում: Լեզվական-ստուգաբանական քննություններ են կատարել Խորենացին, Հյուբըմանը, Մարկվարտը, Աղոնցը, Ղափանցյանը, Մառը, Մելիքիշվիլին եւ այլք: Այդ ամենն ի մի բերելով, լավակարգ եզրահանգումներն ամրակայել է Ս.Ունառյանը. «ժղ հիմքով դիցարանները կապված են եղել կրակի պաշտամունքի հետ», «...Այունի, Սիսիան, Սիսական եւ սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ զոհարան» (Այունիքը դիցարան, էջ 18):

Սիսական ոստանի վաղնջական փառքը Շաղատ գյուղաքաղաքն էր՝ այժմյան Շաղատ գյուղից հարավ, Որոտանի աջափնյակում: Գրեթե մինչեւ 9-րդ դարի կեսը Շաղատը Այունիքի գահերեց իշխանների ու եպիսկոպոսների նստավայրն էր: Կրթամշակութային Այունիքի ինքնատիպ Ոսկեդարն առնչակցվում է Շաղատին: Հայոց 2-րդ վարդապետա-

րանը (ճեմարան) 5-րդ դարում, Սահակ Պարթևի հաճությամբ, Մեսրոպ Մաշտոցը հիմնադրել է Շաղատում: Մինչեւ վարդապետարանի՝ 839թ. Տաթև փոխադրվելը, այստեղ ուսում են ստացել անվանի քերթողներ, վարդապետներ՝ Պետրոս Քերթողը, Վրթանեսը, Թեոդորոսը, Մաթուսաղան, Ստեփանոս Այունեցին, այլք:

**II** *Մեր բանասիրությունը տակավին հավուր պատշաճի քննության չի ենթարկել Մաշտոցի այունիքյան առաքելությունը: Քննելով իր նախորդներին, մեր պատմիչ Ստ.Օրբելյանը մակաբերել է, թե Այունիքը բախտ է ունեցել երկու անգամ վայելելու մաշտոցյան առաքելությունը՝ գրերի գյուտից (405թ.) առաջ եւ հետո (408թ.): Գրերի գյուտը Մաշտոցը մտահղացել է Գողթնում, որը, ըստ Ստ.Օրբելյանի, Այունյաց աշխարհի տասնմեկերորդ գավառի մեջ էր մտնում (Օրբ., Գ):*

Շաբթ Գողթնեցին, այնուհետեւ Վաղինակ Այունին Մաշտոցին ընդունեցին խանդավառությամբ, ամենայն հոգածությամբ օժանդակեցին դարձի ու լուսավորության համապետական ծրագրի իրականացմանը՝ «Մաշտոցն իր առաջադրած գործի համար շատ օգնություն գտավ Վաղինակից, այնպես որ պտտեց, վերահասու եղավ Այունիքի բուրլը կողմերում» (Կոր., ԺԴ): «Այն ժամանակ Աստված տվեց, որ Այունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ» (Կոր. ԺԴ):

Այունիքյան գործունեությունը լույս է սփռում մեր դպրության նախագանցի անվան «անսովորության» վրա: Մեր լեզվում մաշտոց նշանակում է ծիսարան՝ ծեսերի եւ աղոթքների ժողովածու, սփիեր, որ գործածական էր նախաքրիստոնեական ժամանակներում, եւ քրիստոնեական եկեղեցին ամրագրել է նույն նշանակությամբ: Մեսրոպ Մաշտոցի կենսագիր Կորյունի մոտ ամենուրեք Մաշտոց (Մաշթոց) է, Պատմահայրը շրջանառել է Մեսրոպ եւ Մաշտոց կրկնանունները: Ետոսկեդարյան

## Էջեր Այունիքի տասնութամյակ

գրականության մեջ Մեսրոպ Մաշտոց-ն արդեն սովորական է: Մի դիտարկում. եկեղեցական ծառայությանն անցնողին նոր անվամբ կոչելը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման, վաղմիջնադարյան է կարծվում: Որ երեւոյթն ավելի հին է, կարելի է բխեցնել Ավետարանից. «Սիմոնին, որին եւ Պետրոս կոչեց» (Ղուկ., Զ, 13): Արդ, ինչպե՞ս Մեսրոպ Զացեկացին նաեւ Մաշտոց կոչվեց: Մտորելու է, որ երիտասարդ Մեսրոպի՝ Սիսական կողմերում ճգնելու տարիներին Սյունյաց գահակալ եպիսկոպոսն էր Մաշտոց Սյունեցին, ում ուղարկել էր Ներսէս Մեծը, Անդոկ նահապետի խնդրանքով (Օրբ., Ը): Մեծն Ներսէսից ձեռնադրված Մաշտոց Սյունեցին «առաքինի վարքով ու ջանադրությամբ զարմացնում է բոլորին, բարեպաշտության բազմաթիվ օրենքներ է սահմանում այս աշխարհում, գիշեր ու ցերեկ չի դադարում իր համայնքին քարոզելուց» (Օրբ. Ը): Արդ, անարժանս խորհում են այս նորամույթ վարկածը՝ հոգեհարազատ Սյունիքում հոգեւոր ու մարմնավոր կատարելությունը հաստատելով, Մեսրոպն Առաքելական եկեղեցուց Մաշտոց հոգեւոր պատվանունը ստացել է կրկնորդմամբ:

**II** *Մեսրոպ Մաշտոցը Սյունիքի համար գիտության կաճառ եղավ: Որ նա իր գիտամշակութային գործունեությամբ էլ ավելի համբավավոր դարձրեց մեր հնամենի երկրամասը, վկայում է նաեւ վրացական խուցուրի գրի ստեղծումը՝ թերեւս հենց Շաղատում: «Սյունյաց նահանգում եղած ժամանակ Մեսրոպը մտածում է նաեւ Վրաստանի գրական ու կրոնական լուսավորության համար: ...Նա վրացերեն գրերը հնարեց Սյունյաց նահանգում, եւ իր հետ առնելով իր լավագույն աշակերտներից մի քանիսին, ովքեր անշուշտ սյունեցի էին, անցավ Վրաստան» (Յր.Աճառյան, Զայոց գրերը, էջ 175):*

Բանաբաղելով Խորենացու աշակերտ, հետագայում Սյունյաց եպիսկոպոս Պետրոս Քերթողի Պատմությունից, որը ցայժմ կորուսյալ է,

Ստ.Օրբեյլյանը վկայում է. «Իսկ աստծո այն սուրբ մարդն այն ժամանակ Սյունյաց աշխարհում թողեց թարգմանիչ եւ ուսուցիչ իր ընտրյալ աշակերտներից Բենիամինին ու Անանիային: Վերջինս էլ հետո ձեռնադրվեց եպիսկոպոս այդ աշխարհի համար...» (Օրբ., ԺԵ): «Իսկ երբ վերին պարզեւունով սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի ձեռքում սկզբնավորվեց հայ դպրությունը, Սյունյաց աշխարհում նա դպրոցներ հիմնեց եւ ղեկավար նշանակեց իր դասընկեր Բենիամինին: ...Եվ սա կարգավորելուց հետո իր հետ վերցնելով Բենիամինին՝ գնաց Աղվանից աշխարհը... եւ միասին նրանց ազգի կոպիտ լեզվին համապատասխան գիր ստեղծեցին» (Օրբ., ԺԶ):

Զայրենի եզերաց քրիստոնեական պատմության առիճնող մի դրվագն է Շաղատի եկեղեցու հայտնությունը, որ նկարագրել է Զայր Ստեփանոսը, քաղելով Պետրոս Քերթողի դիվանից (Օրբ. ԺԱ): Պարսից բանակի գալստյան նախօրեին Անդոկ նահապետը Սյունիքի հարստությունները հավաքվել էր Ստ.Նախավկայի եկեղեցում եւ շինությունը հողածածկ արել: Դետագայում Բաբիկ Անդոկագունը մի դիվանով հայտնաբերում է քարակոփ չքնադաշեն եկեղեցին, որտեղ ամփոփված էին բազում պատվիրանագրեր, բնակավայրերի գրությամբ սպասքներ, ոսկե եւ արծաթե խաչեր, նահատակների նշխարներ... Սա պատահեց հռոմ ամսվա մեկի օրը, որ է՝ 418թ. սեպտեմբերի 10-ին: Պատմիչի հաղորդմամբ՝ ամեն տարի Սյունյաց տերն ու եպիսկոպոսը, հանդես գումարելով, տոնախմբությամբ նշում էին սուրբ եկեղեցու երեւման օրը՝ որպես համայն Սյունյաց աշխարհի մայր եկեղեցվի օր:

Զանոսահյանական մերօրյա դարի ոգեղենությունը Սյունիքի Մաշտոցյան Ոսկեդարի մշտատես շարունակությունն ու առիավատյան է:



## Մեսրոպ Մաշտոցը եւ Սյունիքի կրթալուսավորչական դարձը

*Միտքս, լցված անդիմադրելի խնդությունք, սքանչանում է ստաջատիր այս սխալի պատմության վրա:*

**Ստեփանոս Օրբեյլան**

Ձորքում ասքերն այնքան հին ու բազմազան են, որքան Սյունյաց լեռերից գահավիժող ծյունահամ գետակները: Զնավանդ խոսքի զորությունն իմացողը դեռ պատմում է, որ սյունեցի կանայք Կապուտջուղի բարձունքներում սպասել են Ավարայրի դաշտում ճակատամարտող իրենց որդիներին ու ամուսիններին: Մարգարանը թույլ չէր տվել նրանց իջնել Նոյյան Նախիջեւան, անցնել Արաքսն ու զորավիգ լինել այրերին: Իսկ Ավարայրը, որ Մակուի դաշտի մի մասն է, Կապուտջուղից երեւում է մշուշով ծածկված Դեղնագետի /Տղմուտ/ հովտի կողմերում: Կանանց թափորը սյունյաց Օլիմպոս էր հասցրել Շաղատի վարդապետարանի օրհնությամբ զորացած խաչը: Կուռքերը վաղուց ճողոպրել էին երկրամասից, եւ խաչը Սյունիքում մաշտոցյան առաքելության հաղթանակն էր: Լեռնանցքի մյուս կողմում՝ Ազատ Գիրանի հովտում, արհավիրքի օրերին կոչնահարում էին զանգակատները, իսկ Մեսրոպականքի նորանորոգ եկեղեցուն ժամերգությունը չէր դադարում:

Գողթնեցիք գյուղի հեթանոս անունն այլեւս չէին հնչաբերում. գյուղի արեւմտակողմում գտնվող Սբ Գրիգոր եկեղեցին ժամանակին վերաշինել էին Մեսրոպն ու Շաբիթ իշխանը եւ արդ՝ սուրբ վարդապետի վախճանից մոտ տասը տարի անց սրբավայրը Մեսրոպականք էր կոչվում, իսկ գյուղը՝ Մեսրոպական, որ հետագայում զոկերեն բարբառով հնչեց Սաըվանիս, իսկ հարեւան Քորթում՝ Մուսրուփ Մաշտուցի շեն:

Զնավանդ ասքերի գիտակ եւ տոհմախոյզ խիկար Գեւորգյան-Քորդիկանցցին, հետեւելով տարեց ձորեցիների պատումներին, 50-ական թվականներին

## Էջեր Այոնիքի դասնությունից

Ձորքի Ունառենց տոհմի մի ճյուղավորումը հայտնաբերել էր Գողթնում եւ Նախիջտեւանում: Սարվանիս գյուղում նա գրուցել է զառամյալ Ջաքար Ունառյանի /Ջեքի ափու/ հետ: Ափուն այնքան չէր հպարտանում Ստալինի հետ անծամբ ծանոթ լինելու իրողությամբ, որքան Մաշտոցի վերաբերյալ ավանդապատումներով: Գյուղը, ըստ Ջեքի ափուի, ավանդաբար նշում էր թարգմանչաց տոհմը: Բնակչությունը հասարակական մատաղի համար դրամ էր հանգանակում: Պատարագում էին ոչ միայն աննորոգ Մեսրոպավանքում, այլև՝ Մաշտոցի քարայրում, որը մոտակայքում էր: Գյուղում պատմում էին, որ Մաշտոցը Կոխտանում /Գողթն/ անց է կացրել 17 տարի:

Պրոֆ. Թ. Հակոբյան-Քրդիկանցցին մատնանշում էր, որ Օրդուբադ քաղաքի /Մախկիհում՝ Որդվատ/ մոտ գտնվող Անապատ գյուղը նույնպես մեսրոպյան վայր է՝ սրբի հավանական ճգնարաններից մեկը:

Դիցական Կապուտջուղ լեռը հնուց անտի իր հետ աղերս ունեցող ասքերով այլունեցիներիս համար ոգու ներխուժում է: Լեռան ահագնատես քարաժայռերից մեկը հոգեզմայլ կերպարանք է ու զարմանալիորեն հիշեցնում է մեր անգերազանցելի իմաստունին՝ Խանգաղյան Սերոբին: Բնարձանը հմայում է ուրարտական քուրմի հարթաքանդակի տեսքով՝ փարթամատես բեղ ու մորուքը փռած մինչև ժայռի ստորոտը, աղեղած ձեռնափը ականջի հետևի դրած: Երբ Սերո Խանգաղյանն այս կողմերն էր եկել՝ հին ասքերն ունկնդրելու, նվաստս նրա ձիու սանձն էր բռնել: Նա Կռվակոչ սարի լանջին ժայռապատկերներ էր զննում եւ մեկնում, որ դրանք ժամանակին գրավել են ս. Մեսրոպին: Այդ վաղնջական գրի ընթերցումը դարապետը հանձնարարել էր իր աշակերտ Մամբրեին /եղբայր Մովսես Խորենացու/, որը պատմության մեջ մնացել է Մամբրե Վերծանող անվամբ: Ընդամին, ուրարտական քուրմի հարթաքանդակի տեսք ունեցող Սերոն այստեղ գրառել է նաեւ Նոյի ժամանակվա լեգենդներ: Ձորօրինակ, ջրասույզ Կապուտջուղի վրայով լողացող տապանից սեւաթույր մի քարաբեկոր է ընկել, որը ցայժմ էլ կա քաջարանամերձ մի ձորակում:

Անդրկապուտջուղյան լեռնաշխարհն անհիշելի ժամանակներից է կոչվում

Գողթն: Այոնյաց աշխարհի մի հատվածն էր ու երբեմն համարվել է Վասպուրականինը: «Գողթնեցիների մասին գտա պատմված, թե նրանք անկասկած Սիսական հատվածն են կազմում» /Խոր., Լ/: Այս գավառը հայտնի էր ինքնատիպ հեթանոսական մշակույթով: «Այս բանը ճշմարտապես պատմում են եւ թվեյաց երգերը, որ, ինչպես լսում են, ախորժելով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ» /Խոր., Լ/: Գողթան գուսանների հեթանոս երգերը քննելով՝ Ս. Աբեղյանն առաջինն է կռահել, որ հինհայաստանցիները «Սասնա ծռեր»-ից առաջ էլ էպոս են ունեցել:

Գողթն /Գողթան/ անունը պաշտոնական գործածությունից դուրս է մղվել պարսկատիրության ժամանակներից /16-րդ դար/, սակայն շարունակում է հարատեւել ժողովրդական խոսվածքում: Ցայսօր այն Ձորքում հնչում է Կոխտան տարբերակով: Տարեցները տակավին գինին մեծարում են «Կոխտանու կյինի», օղին «Փռակու արաղ» /Գողթնի Փռակու գյուղի անունից/, ընկույզը՝ «Ակյուլխու էնգլիզ» գնահատականներով:

**II** *Այոնիքի լեռնաշղթայից դեպի Արաքս իջնող ճյուղավորումները գավառը մասնատում են մոտ տասը առանձին ձորահովիտների: Գիրան /Գիլան/ գետի վերնագավառի Բիստ, Մարվանիս, Թիվի, Փառական գյուղերը Քաջարանից Կապուտջուղի լեռնանցքով կարելի է գրաստով հասնել 3-4 ժամում: Բնակավայրերի մի մասը մինչև մեր ժամանակները պահպանել է հնագույն հնչումը: Գավառի 30 գյուղանուններ ունի Տաթևի վանքի հնագույն հարկացուցակը /Օրբ., 79 /:*

Գողթնի տեղանունների ստուգաբանության ամփոփ պատկեր է տվել գրող-բանասեր Ս. Ունառյան-Քրդիկանցցին: Ըստ նրա՝ 15-ից ավելի գյուղանուններ դիցական ծագում ունեն /Փառական, Օրդուբադ, Ուսպատ, Արտակազդի են այլն/: Գողթն անունը ցեղային ծագում ունի / ըստ Աղոնցի՝ կողա ցեղախմբից /: Մինչև Ս. Ունառյանը Կապուտջուղ անունը նորահնար էր կարծվում, որով-

հետև Այոնյաց լեռնաշղթայի /Ձանգեզուրի/ հարավային մասը նաեւ կոչվում էր Գողթան լեռնաշղթա: Կապուտջուղը ժողովրդական ստուգաբանությամբ մերթ կապույտ երակ էր, մերթ՝ կապ դեպի Ջուղա, մերթ՝ կճուճից գլորված կափարիչի հետք: Ս. Ունառյանը լեռանվան մեջ պնդեց կապ-Կապան արմատը եւ այն հիմնավորեց որպես Կապանի ճյուղը, իմա՝ Կապճյուղ:

Որ Կապան անունը Ոսկեդարում գործածական էր, երեւում է մեր պատմիչ Օրբեյանի մի պատումից, խոսելով մերձարաքսյան Մանակկա վանքի վանահայր, ս. Մեսրոպի աշակերտ Գյուտի մասին՝ պատմիչը հավաստում է. «Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը ...» /Օրբ., ԻԱ/:

Ս. Ունառյանը հիմնավորել է, որ Բաղք եւ Կապան անունները նույն իմաստն են արտահայտում: Հնդեվրոպական լեզուներում «Բաղք անունը նշանակում է բարձր, լեռնային երկիր: Այդ անունն էլ հետագայում փոխարինվել է հնդիրանական ծագումով մեկ ուրիշ, բայց նույնիմաստ հիմքով՝ կապ, որից էլ՝ Կապան /«Այոնիքը դիցարան», էջ 73/: Դեռ ավելին. վիճարկելով կամ վերաքննելով անվանի հայագետների կարծիքները՝ Ունառյանը հիմնավորել է, որ Այոնի /Սիսիունի/, Սիսիան, Սիսական եւ սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ զոհարան /էջ 18/: Ընդամին, գիտության երախտավորը Այոնիքի տեղանուններից քննությամբ առանձնացրել է մոտ 250-ը, որոնք դիցական են կամ այլ կարգի պաշտամունքային անուններ են:

Բնական է ենթադրել, որ քրիստոնեական վարդապետությունը Այոնիք պետք է նետեր իր «ծանր հրետանին»: Օրբեյանի վկայությամբ՝ Ավետարանին հնազանդեցնելու համար Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ Սիսականի սահմաններն է մտնում Բարդուղիմեոս առաքյալը, քարոզում Արեւիքում /Մեղրի/, Բաղքում /Կապան/, Գողթնում, կործանում կռատները, իր աշակերտների հետ Որդվատում, Վանանդում եւ այլուր հիմնում եկեղեցիներ: /Ի դեպ, նոր Կապանը կառուցված է Հոդար գյուղի տարածքում, եւ Հոդարի եկեղեցին կոչվում էր Ս. Բարդուղիմեոս/: Քրիստոսի առաքյալի /12 աշակերտներից մեկի/ համարձակ գոր-

## Էջեր Այունիքի տասնութամյակին

ծնունդը հին Այունիքում հույժ զորավոր փաստ է: Այլ մանրամասների հետ պատմիչը հաղորդում է, որ ս. Բարդուղիմեոսն իր աշակերտ Կուսիին ձեռնադրել է Գողթնի եպիսկոպոս, բայց մինչև Գրիգոր Լուսավորչի /մեր խոսվածքում՝ Կրիքոր Լուսավերիչ/ Յայաստան գալը գողթնացիներն առանց կրոնական առաջնորդի էին: Ուրեմն, դարձյալ մոլեգնել էր հեթանոսությունը, եւ Դարձը չէր կայացել. հավատացյալները հալածվում էին: «Ոմանք, պատուպարվելով Դարու լեռան վրա, իրենց կյանքն անցկացնում էին մենավորությամբ» / Օրբ., 2/:

**II** *Քրիստոնեության ակներեւ նահանջը Գողթնում եւ ընդհանուր առմամբ Այունիքում հեթանոսության արմատացածության ապացույց է:*

Մեր ազաթանգեղյան բնորոշումով՝ մոխրապաշտ նախնիներին դարձի բերելու համար նաեւ զենք էր հարկավոր: Եվ պատահական չէ, որ անգամ երեւելի հոգեւորականները երբեմնի ճանաչված զորականներ էին /Գրիգոր Լուսավորիչ, Ներսես Մեծ, Մաշտոց եւ այլք/: Եկեղեցու պատմությունից հայտնի է, որ 314թ. Արելատի ժողովում կանոն ընդունվեց, որ քրիստոնյան պարտավոր է զենք կրել խաղաղ ժամանակ եւս, այլապես կհեռացվի համայնքից: Զին աշխարհը, փաստորեն, հեթանոսությունը մերժում էր քաղաքացիական պատերազմով՝ ավերվում էին մեծքանները, ոչնչացվում կուռքերի արձանները, հալածվում կուռքերը /հմմ. «Այս հին աշխարհը կփորենք մենք...», 1917/:

Նոր վարդապետության նվիրյալը մարտնչող զինվոր էր: Այդպիսին է մեզ պատկերանում երիտասարդ Մաշտոցը Կորյունի եւ Քերթոզահոր մատյաններում: «Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին» /Կորյուն, 9/: Այս գնահատանքից պետք է հետեւցնել, որ նա զորականի աստիճան ուներ:

Երանելի Մեսրոպը Գողթնում «թաքնված հեթանոսական աղանդը ... վերացրեց գավառի իշխանի օգնությամբ: ...Մարմնավոր կերպարանքով դեւերը, հալածված, ընկնում էին Մարաց կողմերը: Սրանից ոչ պակաս բաներ արեց եւ

Այունիքում՝ նրա Վաղինակ իշխանի օգնությամբ» /Խոր., 3, ԽԵ/: «Նորից քրիստոնեությունը հենվում էր հրամանի, իշխող գավազանի վրա: Կրկնվում են Տրդատի ժամանակները ...Այդ դեւերը, ինչպես եւ Գրիգոր Լուսավորչի ժամանակ, հեթանոսության պաշտոնյաներն ու կողմնակիցներն էին, որոնք տեղի տվին բռնությանը, ուժին եւ փախան» /Լեո/:

Որ ժամանակին բնորոշ էր քաղաքացիական պատերազմը, Ազաթանգեղոսի վկայությունն ավելի կոնկրետ է. «Կուստանդիանոս թագավորը, աստծուն ապավինելով, շարժվեց հեթանոս թագավորների վրա եւ իսկույն ամենքին սպանեց առհասարակ, նրանց կործանեց աստվածային խաչի զորությամբ, ...պղծալից հեթանոս թագավորների զավակներին մեջտեղից ջնջեց» /Ազաթ., 868/:

Գողթնը հեթանոսության եռացող կաթսա էր, եւ երկրի ղեկավար այրերին հաճո էր կարկառուն զործչին՝ Մեսրոպին, այնտեղ տեսնելը: Երեւում է, որ դա նրա կամքով չէր, այլապես նա դեպի իր ծննդավայրը՝ Տարոն կգնար, որտեղ հեթանոսությունը նույնպես զլուխ էր բարձրացրել /Յայքի՝ 387թ. բաժանումից հետո Տարոն Գավառը մնացել էր Արեւելյան մասում՝ պարսից հովանավորության ներքո/:

Մաշտոցն արքունի դպիրն էր, հետեւաբար պետական ծառայող էր, պետական այր եւ իր գործունեությամբ իրականացնում էր պետության քաղաքականությունը:

Զարկ է նկատել, որ Կորյուն Սքանչելին առավել պատկերավոր նկարագրություն է հատկացնում Մաշտոցի եւ Գողթնի ու Այունիքի իշխանների համագործակցությանը: Շաբիթ Գողթնեցին, այնուհետեւ Վաղինակ Այունին նրան ընդունում են խանդավառությամբ, ամենայն հոգածությամբ օժանդակում դարձի եւ լուսավորության համապետական ծրագրի իրականացմանը: Շաբիթը հյուրամեծար ու ասպնջական հանդիսացավ /Կորյուն, Ե/, Այունիքի իշխանը աստվածասեր հնազանդությամբ ընդունեց նրան, եւ Մաշտոցն իր առաջադրած գործի համար շատ օգնություն գտավ նրանից, այնպես որ պտտեց, վերահասու եղավ Այունիքի բոլոր կողմերում /ԺԴ/:

Վաղինակ Այունին, հարկավ, առեղծվածային անձնավորություն չէ:

Նա մեր նահապետ Անդոկի /Անդովք/ որդին էր, Փառանձեմ թագուհու հայրը, Բաբիկի եղբայրը, հետագայում՝ մարզպան Վասակ իշխանի հորեղբայրը /Աճառյան, Անձն.բառ., հ.Ե/: Ժամանակագրորեն նա գրեթե տարեկից էր Մաշտոցի, եւ, հավանաբար, մտերիմներ կամ գործակիցներ էին զինվորական համատեղ ծառայությունից կամ Ներսես Մեծի մոտ սովորելիս: Շաբիթ Գողթնեցին էլ հեռու չէր այդ մտերմությունից:

Այդ Մաշտոցի՝ առաջինը Սիսականի կողմերը քարոզելու եւ ճգնելու գալը դույզն-ինչ պայմանավորված էր նաեւ իր սյունեցի բարեկամների հանդեպ տածած սիրով, ու, թերեւս, դա նրանց միջնորդությամբ ու հրավերքով զլուխ բերվեց:

Պրոֆ. Աճառյանը, քննելով Մաշտոցի ժամանակագրությունը, ենթադրել է, թե նա կրոնավոր է դարձել /դա Գողթնում ճգնելու ժամանակն էր/ մոտ 30 տարեկանում, որ է 394 թվականին:

Այդ ժամանակ Այունյաց անառիկ բերդի՝ Բաղաբերդի պաշտպանական պատերազմից անցել էր գրեթե երեք տասնամյակ, եւ դեպքերը դեռ վառ էին ժողովրդի հիշողության մեջ: Շապուհ Երկարակյացը պարսից բանակով մտել էր Այունիք: Շաղատի եկեղեցաբլրում ոչինչ չգտնելով՝ եկավ ճակատամարտ տալու Բաղաբերդի դեմ, որտեղ միայն քարազլորքով մեր նախնիները հետ մղեցին թշնամու կանոնավոր բանակը: «Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել, ընդհակառակն, շատերը կոտորվեցին» /Կաղանկու., 2, գլ. Ա/: Այս նշանավոր ճակատամարտը վիպել է նաեւ Օրբելյանը: Անդոկի հերոսական դիմակայությունը ռազմատենչ հեթանոսին, անշուշտ, ցնցել ու ոգեւորել էր ոչ միայն սյունեցիներին: Եվ Մաշտոց-զինվորական-մտավորականին չէր կարող չզայթակղել հաղթանակած բերդը, որին, աներկբա, այցելություն է տվել: Այունյաց գիտունները դրանում չեն կասկածել, եւ մեզանում այդ ավանդույթը գրառված է: Գեղիազարյանն իր մի հոդվածում ուղղակի գրում է, որ այդ ժամանակ «Ղափան է գալիս Մեսրոպ Մաշտոցը, այցելում Բաղաբերդը» /«Պղնձի համար», 1941, 9 հունվ./:

Ետինները, մի հին ու կորսված պատմությունից առնելով, Բաղաբերդը կապել են Բաղակ նահապետի հետ: «Սա

Էջեր Այունիքի դասնությունից

այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է եւ անվանում Բաղաբերդ /Օրբ., Գ/: Ալիշանի գնահատմամբ /Աճառյան, Անձն. բառ., հ.2 / Սիսակն ապրել է Ն. Ք. 1850թ.: Մեր Բաղակ նահապետը գործել է Ն. Ք. 1700-ական թվականներին, երբ Հայքից հիքսոսներն արշավել ու գրավել էին Եգիպտոսը:

Մեր բանասիրությունը հավուր պատշաճի քննության չի ենթարկել Մաշտոցի այունիքյան առաքելությունը: Հետեւելով իր նախորդներին՝ մեր պատմիչ Օրբելյանը /13-րդ դար/ հետեւցնում է, թե Սյունիքը բախտ է ունեցել երկու անգամ լուսավորություն վայելելու՝ ընդունելու Մաշտոցին, գրերի գյուտից /405թ./ առաջ եւ գրերի գյուտից հետո /408թ./, «Մուրճ» ամսագրում 1891 թվականին գրող Ղ.Աղայանը հույժ ինքնատիպ դատողություն է զարգացրել, բայց դա քննադատորեն մերժել է Աճառյանը /Հայոց գրերը, էջ 478/: Ըստ Աղայանի՝ «Մեսրոպը, Սյունյաց երկրում եւ սյունեցոց համար գրելով Ավետարանն ու Մաշտոցը, բնական է, որ սյունեցոց բարբառով էլ գրեց. արդ՝ Սյունյաց բարբառում մինչեւ այսօր ով չկա, այլ միշտ աւ է հնչում...»:

Հենց այունիքյան առաքելությունն է լույս սփռում մեր դպրության նախագնացի անվան «անսովորության» վրա: Բանասիրությանը հայտնի են Մեսրոպ եւ Մաշտոց անունների մի քանի ստուգաբանություններ, սակայն դրանցից ոչ մեկը վերջնական ու համոզիչ չի համարվում: Հայոց մեջ սովորական են Ղազար Փարպեցի, Վահան Ամատունի, Մուշեղ Մամիկոնյան, Աշոտ Երկաթ տիպի անձնանունները: Խնդրո առարկա է Մաշտոց «տեսակը»: Մաշտոցի կենսագիր Կորյունը գիտի միայն Մաշտոց /Մաշթոց/, Պատմահայրը շրջանառել է Մեսրոպ ու Մաշտոց կրկնանունները: Ետուկեդարյան գրականության մեջ Մեսրոպ Մաշտոցն արդեն սովորական է: Եվ բացատրությունը, թվում է, ակնբեր է: Մաշտոցի կենսագրությունը Կորյունը գրել է կաթողիկոսի հանձնարարությամբ: Երկի նախաբանում նա բացատրում է իր նպատակը՝ գրել ոչ թե իրադարձություններով հագեցած կենսագրություն, այլ՝ Վարք, որ պատշաճում է սրբին հա-

վասար, երեւելի գիտնականին: Հիրավի, «Վարք Մաշտոցի» երկասիրությունը ավելի շատ վերլուծական-փիլիսոփայական աշխատություն է՝ ողողված Հին ու Նոր Կտակարանների լույսով: Հետեւապես Կորյունը չէր նախընտրի Մաշտոցի աշխարհական /ավագանի/ անունը, որ Մեսրոպ էր: Իր գրքի արժեքն ավելի մեծ համարելու մղումով, նա անտրամաբանական համարեց Մեսրոպ անվան գործածումը, որը կնսեմացներ վարքագրության ոսկեդարյան կոթողը:

Այստեղ զուգահեռենք, որ եկեղեցու ծառայությանն անցնողին նոր անունով կոչելը /ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման/վաղ միջնադարյան է կարծվում: Որ երեւույթն ավելի հին է, կարելի է բխեցնել Ավետարանից. «Սինոնիմ, որին եւ Պետրոս կոչեց» / Ղուկ., 2, 13/:

II *Բայց հետաքրքիրն այն է, որ Մաշտոցի՝ Սիսականի կողմնորում ճգնելու տարիներին Սյունյաց գահակալ Եպիսկոպոսն էր Մաշտոց Սյունեցին, որին ուղարկել էր Ներսես Մեծը: Ուրեմն, սյունյաց մեջ այս պատվական անունը հոգեհարազատ էր: Երկուստեք, թերեւս, բարեկամներ էին՝ Ներսես Մեծին աշակերտած լինելով: Ի՞նչ է նշանակում Մաշտոց:*

Մեր լեզվում մաշտոց նշանակում է ծիսարան՝ ծեսերի եւ աղոթքների ժողովածու: Բայց հայտնի է, որ Ն.Ք. 1-ին հազարամյակի սկզբին Հայաստանում գործածվող մաշտու անունը /սա, ակներեւաբար, Մաշտոց-ի արմատն է/ նշանակել է սուրբ կամ սրբազան: Աքեմենյան Իրանում այն հնչում էր մագդա ձեւով / ՀԱՀ, հ.7/: Նաեւ հայտնի է, որ նախաքրիստոնեական ժամանակներում հեթանոսական ծեսերի, օրհնությունների եւ ձոների գիրքը մաշտոց է կոչվել, որը քրիստոնեական եկեղեցին այնուհետ օգտագործել է նույն նշանակությամբ: Արդ, ինչպես վերը տեսանք, զոնե Սյունիքում այն նաեւ անձնանուն էր:

Իսկ պատմահայր Խորենացին նախընտրել է Մեսրոպ՝ Մաշտոցի աշխարհիկ անունը, որովհետեւ նա Կորյունի պես Վարք գրելու նպատակ չի ունեցել, այլ՝ Մեծ Հայքի պատմություն, իշխան Սահակ Բագրատունու հանձնարարու-

թյամբ եւ հովանավորությամբ: Այսբանից հետեւում է, որ Սյունիքում՝ հարազատ միջավայրում, հոգեւոր եւ մարմնավոր կատարելությունը հաստատելով՝ Մեսրոպը առաքելական եկեղեցուց ստացել է Մաշտոց հոգեւոր անունը:

Մաշտոցը Սյունիքը պետք է կարեւորեր այնքանով, որքանով Սյունիքի եպիսկոպոսությունը հայ եկեղեցու համար ամենաազդեցիկ ու առաջատար վիճակն էր: «... Սյունյաց մետրոպոլիտին ավելի պատիվ անելով՝ սուրբ Ներսեսը նրան տալիս է ոսկեթել գահավորակ ու Սյունիքը հռչակում պատրիարքին նախաթոռ» /Օրբ., է/: Այս կարգավիճակը Օրբելյանն էլ է հավաստում 13-րդ դարում:

Երկրի հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարներին պարզ էր, որ որպես աստվածաբան, պետական եւ մշակութային գործիչ կայանալիս Մաշտոցի համար սյունյաց միջավայրը հույժ կարեւոր գործոն է: Դա հավաստում է եւ այն իրողությունը, որ հետագայում սրբի վախճանին /440թ. փետրվարի 7-ին, շաբաթ օր/ պնդողներ եղան՝ նրան Գողթնում հուղարկավորելու մասին. «Բաժանվել էին երեք խմբի, մի մասն առաջարկում էր տանել Տարոն՝ իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցանել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգստարանում» / Խոր., Կ է /:

Տարիների առաջացմանը համեմատ՝ սրբասունդ Մաշտոցն ավելի էր հեռանում աշխարհիկ պետքերից, հակվում անապատականի կենցաղին եւ «պայծառ էր խոսքով, գործով ժուժկալ» /Խոր./: Երանելիս հայերենի համար տառեր ստեղծելու միտքը հղացել է Գողթնում: Նկարագրելով Գողթնի եւ Սյունիքի քարոզչական առաքելությունը՝ Խորենացին գրում է. «Նա միտքը դրեց մի հնար գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել եւ աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր» / Խոր., ԽԵ /:

Հինգերորդդարյան Սյունիքը՝ քրիստոնեական մշակույթի մեջ վերառված հնագույն բազմաթիվ կառույցներով, ինքնին տրամադրող էր աշխարհակալ վարդապետության գաղափարախոսի համար: Ցայսօր մեր երկրամասում՝ Մեղրու, Կապանի, Գորիսի եւ Սիսիանի

## Էջեր Այունիքի լուսնային շրջան

խոսվածքներում հիշվում են 10-ից ավելի մենաստաններ՝ Նապատ, Անապատ, Հոնապատ, Ընապատ եւ նման ձեւերով: «Եվ նա այս միեւնույն հոգեկրոն արվեստով շատ օրեր անց էր կացնում անապատ տեղերում: ...Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում բնակեցնելով հաստատեց վանականների շատ ու անհամար խմբեր, դաշտական ու լեռնական, անծավանուտ ու արգելական, ժամանակ առ ժամանակ իր անձով հենց օրինակ էր ցույց տալիս նրանց. ամեն մենաստաններից հետո առնում էր աշակերտներից մի քանիսին եւ գնում, լեռնակյաց, սորանուտ, ծակախիթ էր դառնում, իրենց օրական սնունդը խոտեղեն ուտելով էին վերջացնում» / Կորյուն, ԻԲ /:

...4-րդ դարի հայ-պարսկական ընդհարումները, որ մատենագրության մեջ արտացոլվել են «Պարսից պատերազմը» էպոսով եւ հայոց զենքի հաղթանակների դարակազմիկ շրջան են համարվում /Ոսիայի, Չիրավի հաղթական ճակատամարտերը եւ այլն/, մեծ մասամբ պայմանավորված էին սյունյաց նախարարական տան քաղաքական եւ ռազմական ներուժով: Այսօր, ըստ Ջորանամակի, բազմապատիկ ավելի զորք էր հանում հայրենյաց բանակի համար, քան մյուս նախարարությունները: Տաղանդավոր զորապետ Անդոկ Այունիքն մեծ հեղինակություն ուներ ոչ միայն արքունիքում, այլեւ՝ միջազգային ասպարեզում: Սպարապետի կարգավիճակով նա մի շարք փայլուն հաղթանակներ էր տարել պարսից դեմ: Անդոկի ավագ որդին՝ քանքարավոր Բաբիկ Այունիքն, հետագայում վերահաստատեց հայրական Այունիքի իշխանությունը, վերաշինեց Շաղատ ուստանը: Ըստ Օրբելյանի՝ 377 թվականից «ստուռ պես վայելչագեղ, սիրասուն, շքեղազարդ ու գեղանի այն Բաբիկը՝ Անդոկի որդին», «Այունիքը կառավարեց 21 տարի» / Օրբ., ԺԳ/: Ոսկեդարյան գրականությունից պարզ երևում է, որ, ի թիվս այլոց, Շաբիթ Գողթնեցին, Բաբիկ, Վաղինակ եւ Փառանձեն Այունիքները, Մեսրոպ Տարոնացին ժամանակի հառնող հայ երիտասարդության սերունդն էին: Կարելորդ էլ՝ ուսումնառությունը, թե՛ զինվորական ծառայությունը եւ նրանց մտերմության ոսկեհուռ ժամանակը: Բանասիրության համար թերեւս անկարելորդ այս եզրահանգումի նպաստն

առնենք Կորյունից. «Այն ժամանակ աստված տվեց, որ Այունիքի իշխանության զուլխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա, ինչպես որդին հորը՝ հնազանդություն ցույց տալով եւ Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչեւ վերջը գործադրում էր նրա հրամայածները» /ԺԳ/: Կորյունն էլ Մաշտոցին «իմ հայր» է անվանում: Սա, անշուշտ, հոգեւոր հոր իմաստով է, որ պատշաճում էր Մաշտոցին իր բոլոր աշակերտների նկատմամբ: Այնուհետեւ, Վասակ Այունի իշխանի վերաբերմունքը Մաշտոցի նկատմամբ բացառիկ էր, եւ մեր հին գրականության մեջ այդ բնորոշումն անգուճակ է: Որդիական ծառայությունը նշանակում է, որ երիտասարդ Վասակն ընդառաջել-մեծարել է իր հոր՝ Բաբիկի ընկերոջը, այլապես Կորյունն այլ համեմատություն կաներ: Այսպես կարող ենք խորհել եւ Գիտ /Գյուտ/ Գողթնեցու մասին: «Նրա մոտ եկավ հասավ եւ հայրաբարո Գիտը, քրիստոսասեր մարդ Շաբաթի որդին, որ ինչպես մի որդի, մի որդու հավասար, շատ ծառայություն էր անում վարդապետին» /Կորյուն, ԺԳ/: Այս Գյուտը մատենագրության մեջ հիշված է Մաշտոցի կրտսեր աշակերտների շարքում: Թերեւս այդ շարքում էր նաեւ Վասակ Այունիքն, որի՝ Պարսկաստանի հետ վարած քաղաքականությունը թյուրըմբռնելով, հետագայում Եղիշեն նրան դավաճան է հռչակել: Ինչպե՞ս կարող է Անդոկ Այունի նահապետի թոռը դավաճան լինել: Թեպետ, ըստ Օրբելյանի, Բաբիկը մանուկ Վասակին նվիրել էր պարսից Վառնի արքունիքին, Վասակն անհաշտ էր շահի հետ՝ քամահրում էր նրա խոսքը /ԺԳ/: Դարձյալ՝ հետագայում Տաթևի վանքը վերականգնելիս «այստեղ դրեցին նաեւ աստվածընկալ Բաբկենյան խաչը, որը մի տղամարդու հասակի չափով պատրաստված էր արծաթից Անդոկի որդի Բաբիկի որդու՝ Վասակի կողմից եւ իր մեջ մաս էր պարունակում փրկական փայտից» /ԼԹ/: Վերջապես, կորյունյան «աստվածային իմաստության շնորհքով օժտված» բնորոշումը հակոտնյա է ուրացողին:

Մամիկոնյանները Վասակի համար պապական տուն էին /Անդոկը Մամիկոնյանների փեսան էր/, եւ, հետեւաբար, Վասակն ու Վարդան Ստրատելատը

քույր ու եղբոր թոռներ էին: Նրանց հակառակությունը կարող էր ծագած լինել բարեկամական, առերեսույթ անկարելորդ հողի վրա. ի պաշտոնե Վասակն ավագ էր /մարգապանը երկրի տերն էր/, իսկ Վարդանն ավելի էր մեծարվում որպես Սահակ կաթողիկոսի աղջկա թոռ եւ ստրատելատի տիտղոսն առել էր սահակյան հովերով: Ըստ Փարպեցու՝ նշանավոր ճակատամարտից առաջ դեպի արեւմուտք ճողոպող Վարդան Սպարապետին նամակ-հորդորով հետ է բերել Վասակ մարգապանը: Բնական է, որ պարտության պարագայում հերոսը պետք է հաստատվի դավաճանության պարզունակ հորինվածքի առկայությամբ, որին եւ դիմել է Ավարայրի քնարական պատմիչը: Դավաճանի խարանդ պատմականորեն ծանրացել է սյունեցու վրա, մինչդեռ Եղիշեն իր հորինած տեսակից ունի մի ամբողջ ցուցակ՝ վասակյաններ: Ըստ էության՝ Եղիշեն պատվիրել են դիվանագիտությունն ու միջազգային համագործակցությունն ընկալել ու մեկնաբանել որպես դավաճանություն, ինչը եւ լավագույնս հաջողվել է զինվոր քահանային:

Քննության կարող է այն պարագան, թե ինչու Վասակի՝ Եղիշեի գովերգած պարսկասիրությունը հատուցվեց գերեվարությամբ դեպի Պարսկաստան, որտեղ էլ չարչարանքներ կրելով մեռավ: Վասակը, որ 410 թվականից Այունիքի իշխանն էր /հետագայում՝ Վրաստանի, այնուհետեւ՝ Հայաստանի մարգապան/, դպրոցներ բացելու խնդրով Մաշտոցի հետ շրջեց մեր երկրամասի բոլոր նախատեսված բնակավայրերը:

...Մաշտոցի սյունիքյան առաքելության պատկեր Այունյաց վարդապետարանի բացումն էր: Հենց հավաստմամբ՝ վարդապետարանը բարձրագույն տիպի դպրոց էր եւ իր շրջանավարտներին շնորհում էր վարդապետի գիտական աստիճան: Այունիքից երկրորդն էր Վաղարշապատի համբավանուն վարդապետարանից, որը բացվել էր Վառնապոլի արքայի, Սահակ Պարթևի եւ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով:

Մեր վարդապետարանը հավաստված է նաեւ միջնադարյան անուղղակի վկայություններով: Այդ վարդապետարանի սաներ էին հետագայում մշակութային խոշոր գործիչներ Պետրոս Բերթողը, Վրթանեսը, Թեոդորոսը, Մաթուսաղան եւ շատերը: 8-րդ դարում

## Էջեր Այունիքի դասնությունից

փայլատակել է մեր հանճարներից մեկը՝ Ստեփանոս Այունցեցին: Որ մեր առաջին վարդապետարանը Մաշտոցը եւ սյունյաց երեւելիները հիմնել էին Այունյաց աշխարհի աշխարհագրական, իշխանական եւ հոգեւոր կենտրոն Շաղատում, կարելի է մակաբերել Գայր Ստեփանոսի շարադրանքներից. «Շաղատում էր գտնվում մեծ հռչակ ստացած վարդապետարանը /ճեմարան/, որը հիմնադրվել էր 5-րդ դարում Սահակ Պարթևի եւ Մեսրոպ Մաշտոցի ժամանակ» /Թ. Գալստյան եւ ուր., Տեղ. բառ., հ. 4/: Շաղատը պատմությանը հայտնի Այունիքի առաջին մայրաքաղաքն էր: Այունյաց քրիստոնեական պատմության սքանչելի մի դրվագն է Շաղատի եկեղեցու հայտնությունը, որը նկարագրել է Գայր Ստեփանոսը /ԺԱ՝ քաղելով Պետրոս Քերթովի՝ մեզ չհասած դիվանից: Պարսից բանակի գալստյան նախօրեին Անդոկ Այունից մեր աշխարհի հարստությունները հավաքում է Ստեփանոս Նախավկայի եկեղեցուն եւ շինությունը հողածածկ անում: Գետագայուն Բաբկը, որ այդ կողմերը որսի էր ելել իր շքախմբով, դիմում է դեպի Շաղատի արեւելյան կողմի հանդիպակաց բլուրը: Զիու ոտքերը եղջերուի հետապնդելիս խրվում են բլրի մեջ: Ու երբ ձիուն դուրս են քաշում եւ տեղանքը փորում, հայտնվում է քարակոփ չքնադաշեն եկեղեցին: Ի հայտ են գալիս բազմաքանակ ոսկե ու արծաթե խաչեր, բազում պատվիրանագրքեր, Այունիքի բոլոր եկեղեցիների ուրիշ սպասքներ՝ յուրաքանչյուրն իր գյուղաքաղաքի գրությամբ, նահատակների նշխարներ: Սա պատահեց հռոմեացի մեկի օրը /418թ. սեպտեմբերի 10-ին՝ հեղ./: Պատմիչի վկայությամբ՝ ամեն տարի Այունյաց տերն ու եպիսկոպոսը, հանդես գումարելով, տոնախմբությամբ նշում էին սուրբ եկեղեցու երեւման օրը՝ որպես ամբողջ Այունյաց աշխարհի մայր եկեղեցու օր /այս ավանդական տոնը մեր ժամանակներում կարելի՞ է կյանքի կոչել/: Գայրնված եկեղեցուն Բաբկ իշխանը վանական պաշտոնյա է նշանակում Տիրոտ քահանա Շաղատեցուն, որին Օրբելյանը բացառիկ իմաստություն է վերագրում:

Երբ իր աշխատության մասին Կորյունն ասում է «չատր թողնելով, այս համառոտը գրեցինք» /ԻԸ/, այդ շատի մեջ, անշուշտ, մտնում են Մաշտոցի կյանքի բազում մանրամասներ /նա կու-

սակրոն հոգեւորական էր/, որոնցից մեկը կարող էր լինել նրա մասնակցությունը Շաղատի սրբավայրի հայտնության համապատասխան տոնախմբությանը:

Առաջին վարդապետարանի ավանդույթների կրողն էին Սաքենյաց վանքը, Տաթևի վանքը, Գլաձորը: Վարդապետարանը Տաթևի վանքում շարունակել է գործել 839 թվականից:

Մերօրյա հետազոտող Թաթևի Այունից գտնում է, որ «պատմական Շաղատն ու ժամանակակից Շաղատ գյուղն իրար են առնչվում միայն անվան նույնությամբ» /«Այունյաց աշխարհ», 2001, հմ.4/, եւ պատմականը պետք է փնտրել Ծղուկքի այլ վայրերում:

Այս խնդիրը կարող է կապված լինել Շաղատի հետմիջնադարյան վերաբնակեցման հետ: Ի դեպ, Շաղատ անվան հիմքում կարելի է կասկածել ուրարտական Սալա կամ Շալա աստծու անունը: Նման տեղեկություններ Ոսկեդարից չունենք, որովհետեւ սեպագրերի ընթերցման եղանակները կորսված էին, եւ ըստ այդմ՝ գիտունները առավելին հակվեցին դեպի առասպելաբանությունը:

Մաշտոցը Այունիքի համար գիտության կաճառ եղավ: Որ նա իր գիտական գործունեությամբ էլ ավելի համբավվոր դարձրեց մեր հնամենի երկրամասը, վկայում է վրացական գրի ստեղծումը: «Այունյաց նահանգում եղած ժամանակ, Մեսրոպը մտածում է նաեւ Վրաստանի գրական ու կրոնական լուսավորության համար: ...Նա վրացերեն գրերը հնարեց Այունյաց նահանգում, եւ իր հետ առնելով իր լավագույն աշակերտներից մի քանիսին, որոնք անշուշտ այնուցից էին, անցավ Վրաստան» /Աճառյան, Գայրց գրերը, էջ 175/: Այս եզրահանգումը Կորյունի քննության հիման վրա է:

Մեր բանասիրությունը հաստատել է, որ Մեսրոպը հնարել է վրաց խուցուրի կոչվող /եկեղեցական/ գրերը, որի հիման վրա հետագայում ձեւավորվել է մխեդրուլի կոչվածը: Մեսրոպի այս անգնահատելի ծառայությունը վրաց «պաշտոնական» գիտությունը չի ընդունում, թեպետ վրաց բանասիրության մեջ կան մաշտոցամետ մի քանի ուսումնասիրություններ: Ըստ երեւութի, վրացալեզու դպրոցներում Մաշտոցի դիմանկարը ցուցադրելը կքրքրի զգայուն վրացիների ինքնասիրությունը: Ի դեպ, մեզանից թարգմանելով «Շուշանիկի չարչարանքները» վարքագրությունը՝ մտացածին

Փառնավագ գիր ստեղծող թագավորի սերունդները կույսին վերանվանել են Նինո:

Այունիքը նաեւ աղվանական գրի ստեղծման ստնտուն է: Բանաքաղելով Խորենացու աշակերտ, հետագայում Այունյաց եպիսկոպոս Պետրոս Քերթովի Պատմությունից /որը չի հասել մեզ/՝ Օրբելյանը վկայում է, որ Մաշտոցը Այունյաց աշխարհում թարգմանիչ եւ ուսուցիչ կարգեց իր ընտրյալ աշակերտներից Բենիամինին եւ Անանիային: Վերջինս դեռ գրերի գյուտից առաջ նստեց Այունիքի մետրոպոլիտության /եպիսկոպոսատեության/ աթոռին 404-456թթ.:

Անանիա Թարգմանչի եւ իր նախորդի՝ Մաշտոց Այունցեցու զահակալման տարիները ժամանակավրեպություն ունեն եւ կարիք ունեն ճշտման:

Մաշտոցն այս երկուսի հետ Աղվանք գնաց, եւ միասին նախագնաց եղան այդ երկրի լուսավորության համար: Մաշտոցի հոգեւոր զավակ Անանիա Այունցեցին մեր երկրամասի վաղմիջնադարյան քանքարաշատ մտավորականն է: Լինելով սուրբ վարդապետին արժանավոր գործակից՝ ընդամենն Այունյաց դպրոցների բացման երախտավորն է: Պատկերացնելու չէ, որ Վաղինակի կամ Վասակի հետ Մաշտոցը որեւէ մենաստան կամ գյուղ գնար առանց Անանիայի: Այունյաց առաջին կրթապետին՝ Բենիամին Ընտրյալին, ինքն է նշանակել /Օրբ., ԺՁ/: Եղիշեն Անանիային հիշատակում է Արտաշատի նշանավոր ժողովին մասնակցած եւ պարսից թագավորի թղթին պատասխան գրած եպիսկոպոսների մեջ /2-րդ եղ./: Ավարայրի ճակատամարտից հետո գերեվարվել է Տիգրան, կրել Գազկերտի սահմանած պատիժները եւ վերադարձել:

... Աճառյանը, թերեւս, ոչ առանց ավստասլու է դեն նետել Ղ.Աղայանի կարծիքը 5-րդ դարում հնչյունների արտաբերման մասին: Դեռ միայն Կորյունից կարելի է կռահել, որ այդ ժամանակ բարբառները գոյություն են ունեցել: Գրաբարը, անշուշտ, իր բարձրաշխարհիկ եությանը ժառանգված էր քրմական գիտությունից, կրոնը հնարավոր էր փոխել, իսկ գիտության լեզուն՝ երբեք: Արդ, մաշտոցյան գյուտը նախապես ծանրացել է բազմաբարբառ երկրի լեզուների համար նվազագույն թվով նշանագրեր ստեղծելու խնդրի վրա:

## Էջեր Այունիքի դասնությունից

Դրան մղել են առկա օտար այբուբենները, առանձնապես՝ հունարենը, որոնք իրենց բարբառներում առկա հնչյունների միջին թվից պակաս թվով նշանագրեր ունեին: Մեր խոսվածքն այսօր ունի 48 հնչյուն՝ քմայնացած ձայնավորներ, գրական հայերենում չհանդիպող հնչյուններ կառնելով /կաթ/, հառնելով /հարս/, կյուլ /գայլ/, հաքյու /ազի/, վեր /հոր/ եւ բազմաթիվ այլ բառերում, որոնք, բնականաբար, նույն թվով առկա չեն մյուս բարբառներում: Մաշտոցը բավարար ու ոսկե նվագագույն համարեց 36-ը, թեպետ կարող էր եւ ավելին դնել, որքան հետիմներին պետք է օ, ֆ հնչյուններ ունեցող բառերի եւ բարբառների գրաման համար: 36-ն էլ խորհրդանշական է. գուցե այն պատճառով, որ Գրիգոր Լուսավորիչն իշխանություն ուներ 36 եպիսկոպոսների վրա /Օրբ., է/:

Քանի որ նա որեւէ չափ ծանոթ էր վրացերենին, նրանց հնչյունների թիվը համառոտելով, հասցրեց 38-ի, իսկ աղվաներեն չգիտեր եւ ստիպված՝ նրանց հնչյուններին համապատասխանեցրեց 52 տառ /սա աղվանական մի բարբառի համար ձեւեց/:

Մեսրոպ Մաշտոցը նաեւ մեզ հայտնի առաջին հայ մաթեմատիկոսն է /Ա.Եգանյան, Մաթ. Հայաստանում, 1968թ./, որովհետեւ այբուբենի հորինման հետ տառաշարքին տվեց թվային արժեքներ:

Այունյաց աշխարհի բազմադարյան գրական կյանքի համար Մաշտոցը միշտ եղել է ուղեցույց վառ աստղ: Մերօրյա Կապանում վեր է խոյանում «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» նորաշեն չքնադատես եկեղեցին, որը սյունեցիների՝ համագագային հանճարի նկատմամբ տածած սիրո ու երախտիքի առիվատշյան է:

Այունյաց նորօրյա գիտունների երեւակայությունը ներում է, որ վիպեն, թատերգեն ու շարժանկարով պատվեն սրբերի կարգը դասված Մաշտոցին՝ ազգային գիտության սկզբնավորողին, համաշխարհային մշակույթի բացառիկ անհատականությանը:



## Այունիքը եւ ռուսական ֆենոմենը

Արտաբերելով ռուս բառը՝ սյունեցին իր խոհերի մեջ այն զուգորդում է ազգային համերաշխության, ուժի եւ մշակույթի հետ:

Դարերի հոլովությունում ռուս բառն ակնածանքի ներուժով անխամիր դրոշմվել է մեր անցյալ ու ներկա ժամանակների հարահոսի վրա: Մեր բարբառը հագեցած է ռուսերեն բազմաթիվ բառերով: Ներկա բոլոր սերունդների համար ռուսերենը մատչելի է, իսկ ուսյալները տիրապետում են գրավոր ռուսերենին: Տարեցներն իրենց պատմությունը երբեմն ժամանակագրում են ռուսական ցարերի անունով՝ Նիկոլայի դարին, Ալեքսանդրի դարին եւ այլն:

Պետրոս Մեծի ժամանակներից, մահմեդական բռնության ճիրանների մեջ գտնվելով, սյունեցիները բաղձանքով սպասել են ռուսներին: Դեռ Բակուցն է տարեգրել, որ արդարություն գտնելու համար մեր նախնիները նամակ են գրել ռուսաց թագավորին: Ցարին ենթարկվելուց հետո մեր ռազմատենչ երիտասարդությունը վերագտել է իրեն ռուսական բանակում, վիպելու արժանի սխարանքներ գործել, կայացել է ռուսական զենք գործածելիս եւ ազատագրել իր հայրենիքը:

Երբ ռուսները եկել են թուրքերի հետ, մեծ սյունեցին՝ Նժդեհը, զգուշացրեց քողարկված դավադրության մասին, որը համոզիչ իմաստավորվեց տասնամյակներ անց: Ահա, Այունիքի երկու դարը նաեւ ռուսական է: Դավիթ-Բեկի իշխանությունից հետո շատ սյունեցիներ գաղթեցին Ռուսաստան, համալրեցին Ղզլարը, Մոզդոկը, Աստրախանը, անգամ Մոսկվան: Հետո, երբ Գրիբոյեդովն ու Պուլշկինն անցան մեր կողմերով, ռուս մուժիկներ եկան ու գյուղեր հիմնեցին Այունիքում:

Հիմա, երբ տեղ-տեղ սյունեցու հարսը կամ փեսան ռուս է, ընդունվում է սովորականի նման: Ազգագրորեն հետաքրքիր փաստ է, որ վաղ անցյալից սիրահարված հայ տղաներն իրենց մարմնի վրա դաջում են Կատյա, Վալյա, Նատաշա, Վերա, Լյուբա եւ նման գեղեցկահունչ անուններ: Թերեւս իզուր

էր կատակում Պետրոս թագավորը, երբ ասում էր, թե օտարին հարս գնացած ռուս կնոջից ռուսներ են ծնվում: Գոնե Այունիքի օրինակով դա թագավորավայել կռահում չէ. Այունիքում հարս եկած ռուս կանայք երեւելի հայրենասեր հայ զավակներ են տվել...

Ե՞րբ են հայերն առաջին անգամ տեսել ռուսներին կամ հաղորդակցվել նրանց հետ, ինչպե՞ս են նախապես կոչել նրանց:

Հնագույն հիշատակությունները, անշուշտ, մեր կողմերին են: 10-րդ դարում պատմիչ Մովսես Դավաթուրանցին, որ Կաղանկատվացու շարունակողն է, հաղորդելով Պարսկաստան-Հայաստան ու Աղվանք արշաված դելմիկների մասին, գրում է. «Հյուսիսային կողմերից հայտնվում է այլակրոն, անծանոթ մի ցեղ, որին ռուզիկ են անվանում, սրանք, ոչ ավելի, քան երեք ժամ ընթանալով, մրրկի նման համատարած Կասպից աշխարհածովի ելքով հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը, (Կղնկ. էջ 264):

Կասկած չկա, որ այս հիշատակման ռուզիկները ռուսներն են, որոնք, անշուշտ, նավարկել են Աթլ (Վոլգա) գետով, որի մեծությունն ու գեղեցկությունը զարմանքով նկարագրել է Կիրակոս Գանձակեցին:

Ըստ լեզվաբանների՝ ռուս էթնոհիմն ծագում է հինսլավոնական կամ ցեղանունից: Այլ մի ստուգաբանությամբ՝ շեկ կամ կարմրավուն է նշանակում: Բյուզանդական, հայկական եւ ռուսական միջնադարյան աղբյուրների վկայությամբ՝ Արլ. Հայաստանի վերջին՝ Բաղաց կամ Կասպանի թագավորությունը (970-1170) առեւտրական կապեր ուներ Կիեյան Ռուսիայի հետ: Սյունեցի վաճառականները հասել են մինչեւ Կանա-վոլգյան միջագետք, մինչեւ Բուլգար քաղաք: Մանքերման (Կիեւ) երկրում հիմնել են գաղթօջախ: Վաղմիտր-սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու զորաջոկատներից մեկն ուղարկվել է՝ գործելու սելջուկ Շամսեդին Ելտկուզի դեմ, ի պաշտպանություն պաշարված Բաղաբերդի, սակայն տեղ չի հասել անհայտ պատճառներով:

Պարզ է, որ 12-րդ դարից հայ-ռուսական առեւտրային հարաբերությունների զարգացմամբ ի հայտ է եկել ռուսական դիվանագիտության՝ Անդրկովկասն ազդեցության ոլորտ դարձնելու հեռան-

## Էջեր Այունիքի դասնությունից

կարը:

12-րդ դարում հայ եկեղեցին իր ինքնուրույնությունից զրկելու միջազգային ոտնձգությունների դեմ անհաշտ պայքար էր մղում Գր. Տուսետորդին եւ կոչ անում դիմել ռուս ժողովրդին՝ «Քրիստոնեությանը պատուեալ մեծափառ եկեղեցին ըռուզաց»: Սա միջնադարյան հայ իրականության՝ հյուսիսից օգնություն ակնկալելու առաջին փաստն է: Ռուս ժողովրդին իրենց ստեղծագործություններում անդրադարձել են միջնադարյան հայ տաղերգուներ Ֆրիկը, Յովհաննես Սարկավազը, Նահապետ Քուչակը: 15-17-րդ դարերում Մոսկվան այնքան հռչակավոր էր, որ մեր տաղերգուները այն բարձր են դասել Յոնից: Ուշագրավ է, որ 12-րդ դարում հայերեն է թարգմանվել «Բորիսի եւ Գլեքի վարքը»:

**II** *Յայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարի 2-րդ կեսին վերածել էին քաղաքական կապերի (1678թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը): Դրանք բարձր աստիճանի հասան Պետրոս Մեծի օրոք:*

Ռուսամետ հոսանքի եռանդուն ջատագովը եւ կարկառուն գաղափարախոսն Իսրայել Օրին է (1659-1711): Նրա գործունեությամբ հայ դիվանագիտության ավանդույթները աննախընթաց, նոր փայլ ստացան: Ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանում նա մեր դիվանագիտության համալսարանն էր՝ միջազգային անցուդարձերի խոր իմացության եւ իրադարձությունների վրա ներազդելու ճկունությամբ եւ հմտությամբ: Անշուշտ, Օրինի եւ նրա համախոհների մտածողության մեջ չէր իշխում մահմեդական իշխողներին հեռավոր հյուսիսի քրիստոնյա իշխողով փոխարինելու գաղափարը: Ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդի՝ իր պետականությունը հաստատելու մեծ հույսեր ուներ:

Օրին մեր հայրենակիցն է, այլուցի: Կաթոլիկ քարոզիչ Կրուսինսկին Օրինի ծննդավայր է նշել Ղափանը, Լեոն՝ Ղափանի անհայտ գյուղերից մեկը: Նրան համարել են նաեւ նախիջեւանցի, վայոցձորեցի՝ սերված Պռոշյան տոհմից:

Օրին մասին առաջին անգամ ընդարձակ ուսումնասիրություն է տվել

ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը 1868թ (18-րդ հատոր): Նրա եվրոպական գործունեության մասին 1893թ. Սյունիքում դասախոսություն է կարդացել պրոֆ. Յայգելը, որը նրան համարել է Դյուսելդորֆի հայ վաճառական:

17-րդ դարի վերջին հայ ժողովուրդը ոչ միայն կեղեքվում էր պարսկաստանյան զավթիչների կողմից, այլեւ մեծ չափերով ենթարկվում ազգային ճնշումների ու հալածանքների: Պարսից ֆեոդալական մասնատվածության պայմաններում խաները մասնավորապես Ղարաբաղում ու Սյունիքում հայերի հետ վարվում էին անպատմելի դաժանություններով, խստացնում հարկերը, ստիպում կրոնափոխ լինել: Յայրենիքն ազատագրելու գործով Օրին զբաղվում է անգլիական գերությունից ազատվելուց հետո: Յաստատվելով Դյուսելդորֆում՝ նա ծանոթանում է Պֆալցի կուրֆյուրստ Յովհան Վիլհելմի հետ, որն Ավստրիայի Լեոպոլդ կայսեր քենակալն էր: Կուրֆյուրստը Օրինի միջոցով նամակներ է ուղարկում հայ մելիքներին, ինչպես նաեւ վրաց իշխանին Օրինի բանակցությունների համար լիազորություններ տալու վերաբերյալ: 1699թ-ին Օրին Անգեղակոթ՝ Մելիք Սաֆրազի մոտ է գալիս (սա Էջմիածնի ժողովի մասնակից էր): Էջմիածնի եւ Աղվանքի (Գանձասարի) կաթողիկոսներից մերժում ստանալուց հետո նա Անգեղակոթում հակառակ պատկերն է տեսնում: Մելիքների ժողովը նամակ է գրում Պֆալց: Նամակը հետագայում պատճենվում ու ներկայացվում է Պետրոս Մեծին, որովհետեւ ինչպես պարզվել էր, կուրֆյուրստի շահադիտական հետաքրքրություններն առաջնահերթ էին հայերի ճակատագրից: Նամակի վերաբերմամբ մենք գործ ունենք Սյունիքի (Ղարաբաղի) հույժ հետաքրքիր մի դիրքորոշման հետ: Մելիքներն իրենց գրած թղթերի մեջ իրենց անվանում էին. «Մենք՝ մեծ Յայաստանի զխավորներս եւ ատենակալներս»:

Սա ցույց է տալիս, որ Սյունիքի հայ մելիքներն իրենց տեր էին ճանաչում ողջ Յայաստանի վրա:

1701թ. հուլիսի 25-ին Օրին իր ծրագիրը ներկայացնում է Պետրոս Մեծին: Թագավորը գրավոր ոչ մի խոստում չի անում, բայց բանավոր հուսադրում է: Նա հայ դիվանագետին տալիս է կառք ու թիկնապահներ, շնորհում գնդապետի

աստիճան եւ 50 հոգանոց շքախմբով որպես դեսպան ուղարկում Պարսկաստան: 18-րդ դարը Ռուսաստանում նաեւ նշանավորվում է հայ ժողովրդի նկատմամբ եղած հետաքրքրությունների վերելքով: Յայ ուսյալներն ավելի շատ են ներգրավվում ռուսական մշակույթի եւ գինվորականության մեջ: Ռուսիայում Ի.Օրինն հետեւում է հայազգի քաղաքագետների բազումը:

Ցարական արքունիքը սկսել էր տարբերակված ըմբռնել Կովկասը: «Ամեն կերպ աշխատեցեք հայերին իրավիրել, իսկ մուսուլմանների թիվը որքան հնարավոր է պակասեցնել, բայց այնպիսի գաղտնի միջոցներով, որ իրենք ոչինչ չհասկանան», -գրել է Պետրոս Ա-ն Մատյուշկինին:

Ցարական կառավարությանը հայերը պետք էին հատկապես արտադրական ուժերի զարգացման համար: Այդ քաղաքականությունը խրախուսել սկսել էր դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը: Պատմագրությանը հայտնի են Պարսկաստանից ներգաղթած հայերի համար արտոնությունների սահմանման՝ ցարական 1667, 1711, 1725, 1744, 1762, 1764, 1765, 1768, 1779, 1797, 1799, 1802թթ. հրամանագրերը:

Ռուսական կողմնորոշման համար մեծ հարված էր Պետրոս Ա-ի մահը (1725թ-ին) Դավիթ Բեկի իշխանության հաստատման տարիներին: Այդ ժամանակներից էլ հայտնի է Մխիթար սպարապետի՝ ռուսաց արքունիքին գրած նամակը:

Անդրկովկասին տիրելը եղել է Պետրոս Ա-ի նվաճողական քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը, որի կենսագործման համար մեծ ջանքեր է ներդրել Եկատերինա կայսրուհին: Անկախ Յայաստանի անունը շրջանառվել է նրա կառավարման տարիներին: Ծրագիրը մշակել են Յովսեփ արքեպ. Արղությանը եւ Յովհաննես Լազարյանը: Կայսրուհու հրամանով ծրագրի կենսագործմանը ծանոթացել է մեծ զորավար Ա.Վ.Սուվորովը, որը 1780-1781թթ. գտնվելով Աստրախանում, նամակագրություն է ունեցել Ղարաբաղի հայ մելիքների հետ:

Ազատագրական պայքարը՝ ռուսական կողմնորոշմամբ, 19-րդ դարի սկզբին հայոց մեջ դարձել էր անկասելի: Մեծ ակտիվություն են ցուցաբերում Դավիթ Բեկի իշխանության անկումից հետո

## Էջեր Այունիֆի դասնությունից

Ղարաբաղից ու Ջանգեզուրից Ղզլար, Մոզդոկ եւ Ռուսաստանի այլ վայրեր գաղթած հայերը:

1801թ Ռուսաստանին են միանում Վրաստանը, Լոռին, Շամշադինը, 1804-ին՝ Գանձակը, 1805թ-ին՝ Ղարաբաղը: Մայիսի 14-ին Ղարաբաղի եւ Գանձակի սահմանագծի գլխին՝ Կյուրակչայ (Թնագետ) գետի ափին, վրանի մեջ ռուսական բանակի գեներալ Ցիցիանովը եւ Ղարաբաղի Իբրահիմ խանը ստորագրեցին դաշնագիր, որով Ղարաբաղի խանությունն այսուհետեւ հպատակվում էր Ռուսաստանին: Դաշնագրով սահմանն անցնում էր Ողջի գետով եւ Ջանգեզուրի լեռնաշղթայով: Դա բացատրվում էր թուրք խանի երկրի մի պահվածքով: Ինչպես ցույց տվին իրադարձությունները, նա հետագայում բազմիցս խախտեց դաշնագիրը, հանդես եկավ մերթ պարսից, մերթ ռուսաց կողմից: Չորքում աղոտ հիշողություն է պահպանվել, որ երբեւէ ռուսաց եւ պարսից սահմանը եղել է Ողջի (Ուղուր) գետը:

Մեղրու գավառակն անջատվեց Ղարաբաղի խանությունից եւ միացավ Ղարաբաղի խանությանը:

**II** *Ռուսաստանին միանալուց հետո ցարական արքունիքը չչտապեց վարչական նոր բաժանում անել ու բարելավել կառավարումը: Դա, թերեւս, բացատրվում է ռուս-պարսկական հարաբերությունների չնվազող լարվածությամբ: Գավառակները շարունակում էին բաժանված մնալ մահալների, ինչը պահպանվեց մինչեւ 1822թ., երբ խանությունը ստացավ Ղարաբաղի պրովինցիա անվանումը: Մահալները նախկինի պես կառավարում էին մելիքները, որոնք ենթարկվում էին Շուշիում նստող խանին:*

1813-ին գեներալ Ռոտիչչեյը նախապատրաստվում էր արշավել Թավրիզի վրա եւ Կասպից ծովով ափհանում կատարել հարավում: Պարսից կառավարությունը ստիպված էր հաշտության գնալ: Բանակցությունները ընթացան Գյուլիստան գյուղում (Խաչեն), 15 օր: Հոկտեմբերի 12-ին գեներալ Ռոտիչչեյն ու Միրզա Աբուլ-Հասան խանը ստորագ-

րեցին դաշնագրությունը: Դերբենդից մինչեւ Ղարաբաղ երկրամասն անցնում էր Ռուսաստանին: Բայց Ռոտիչչեյը Մեղրին դարձյալ զիջեց:

Գյուլիստանի դաշնագրությամբ վերջանում էր ռուս-պարսկական առաջին պատերազմը:

Այնուհանդերձ, խանական վարչակարգը շարունակվում էր, որքան էլ Գ-ի դաշնագրությունը երկրում կատարվածի իրավական վավերացումն էր:

Այդ ժամանակներում վարչական բաժանումն այսպիսին էր. Սիսիանի մահալ(Բռնակոթ), Տաթևի մահալ (Տաթև), Կյուպարայի մահալ (Ագարակ, մինբաշի Մելիք Փարսադան), Աճանան մահալ (Առաջածոր), Բարգուշատի մահալ, Բաղաբյուրտի մահալ, Փիսյանի մահալ, Չավնդուրի մահալ: Հետագայում Թուրքմենչայի դաշնագրությամբ սահմանը հետ քաշվեց մինչեւ Արաքս, Մեղրին էլ միացավ ռուսական կալվածքներին, Աճանանի մի մասն անցավ նորակազմ Չավնդուրին, Տաթևի մահալի արեւելյան հատվածը Գորիս ոստանով առանձնացվեց որպես Ջանգեզուրի մահալ:

1805թ-ից հետո սկսվեց բնակչության ներգաղթը Պարսկաստանից, որը մեծացավ Գ-ի դաշնագրությունից հետո ու դարձավ զանգվածային Թուրքմենչայի դաշնագրությունից հետո:

Այունիքն աստիճանաբար հարմարվեց ու տիրացավ ռուսական կառավարչաձեւերին, որոնք խանականի համեմատ ավելի սրտամոտ էին մեր նախնիներին:

Իր դեմ չգրգռելու համար ռուսական կառավարությունը զգուշությամբ էր մոտենում մահմեդական ղեկավար շերտերի իրավունքներին: Հետեւելով խանական կարգ ու կանոնին՝ նոր կառավարիչները շարունակում էին հողեր բաժանել թուրք բեկերին ու աղալարներին, որոնք իրենց իրավունքները փոխանցում էին ժառանգներին:

Սակայն ռուսական կառավարությունը սկսեց հասկանալ, որ գրաված տարածքներում գործ ունի տարբեր մակարդակներ ունեցող ժողովուրդների հետ, որ մուսուլմանները երբեք էլ հուսալի չեն ռուսական իրականության համար: Ցարը աստիճանաբար հակվել էր հայերին Պարսկաստանից Արեւելյան Հայաստանում վերաբնակեցնելու մտքին: Դա, առաջին հերթին, պետության սահ-

մանների ամրապնդման երաշխիք էր: Նիկոլայ Ա ցարը, Պասկեւիչին ուղղված նամակում ասել է.

– Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմամբ հիմք դրվեց տնտեսության կազմակերպման առավել առաջադիմական եղանակներին, ամրակայվեցին իրավական նոր հարաբերությունները:

Միջնադարյան մահմեդական խավարամտությանն աստիճանաբար փոխարինեցին Հյուսիսամերիկյան շողերը: Ղարաբաղի պրովինցիայում աստիճանաբար կյանքի կոչվեցին ռուսական պետական ինստիտուտի կառույցները:

Ցարական հրովարտակով սկսեցին կազմակերպվել բնակչության հաշվառում, մարդահամարներ, գույքի հաշվառում, ազգագրական ուսումնասիրություններ եւ այլն: Ներգաղթը կազմակերպվել էր պատշաճ հոգատարությամբ: Պարենավորման խնդիրը լուծելու համար ներգաղթողներին բաժանել են 150-300 հոգանոց խմբերի, յուրաքանչյուրին կցված էր մեկ սպա եւ 2-5 կազակ: Յուրաքանչյուր ընտանիքին որպես նպաստ տրվել է 6-7 ռուբլի:

Նոր կազմակերպված Հայկական մարզում 1829-31թթ. բնակչության թիվը 25 հազարից հասել էր 82377 մարդու: 1891թ. Արլ-Հայաստանում հայ բնակչության թիվը հասել էր 250895-ի, 1913-ին՝ 1000100-ի:

Նորահաս ցարական ժամանակներում Պետերբուրգի պահանջով եւ հովանավորությամբ սկսել են ազգագրական ուսումնասիրությունները, որոնք առ այսօր չեն շրջանառվել աղբյուրագիտական նշանակությամբ ու պահպանվում են պետական արխիվներում:



Էջեր Այունիքի դասնությունից

ԱՃԱՆԱՆԻ ՀՈՅԱՇԵՆ ԿԱՍՈՒՋԸ

Կապանա տան պատմական հուշարձանների թվում իրենց նշանակությամբ ու ճարտարապետական լուծումներով առանձնանում են հինավուրց կամուրջները: Դրանցից մի քանիսի վրա կան (եղել են) արձանագրություններ, որոնք լույս են սփռում կառուցման ժամանակի վրա ու հաղորդում այլ տեղեկություններ:

Մեր գյուղերում տարեցները դեռ պատմում են Բաղաբերդ-Տաթև բանուկ ճանապարհի մասին եւ ցույց տալիս նրա կռահելի հատվածների աղուրը:

Այդ ճանապարհի վրա առ այսօր նշմարվում են մի իջեւանատան (Շաբանանցուն, Խլաթաղի դիմաց) եւ Աճանան գետի վրա կառուցված կամրջի (Օխտարի մոտ) ավերակները: Վերջինիս կամարի շարվածքն անտաշ քարերից էր եւ, հավանաբար, կառուցված էր Բաղաթաթավորության ժամանակներում:

Նույն գետի վրա, Խլաթաղ ջրի գետաբերանից քիչ վերեւ, սոսիների պուրակի հարեւանությամբ, հին կամրջավերակի արեւելակողմում պահպանվել է հոյաշեն մի կամուրջ՝ կառուցված սրբատաշներով: Այն կանգուն է եւ ձգվում է գետի ահագնատես անդունդի վրայով: Կարծես պատահականորեն, աջ ու ձախ ափերի ժայռային ելուստները բնաստեղծ հարթակներով դիմակայել են միմյանց, դրանով իսկ մեր նախնիներին հուշել կամրջի համար տեղի ընտրությունը:

Հյուսիսային եւ հարավային կողմերից ամբողջ կառույցը երիզում են կրկնակամարները, որոնք շարված են կարմրավուն ու կապտագույն շուրջ 110 սրբատաշ քարերից (տեղական բազալտ): Կամրջի երթեւեկի մասը ուռուցիկություն ունի եւ սալահատակված է գետաքարերով: Երկարությունը 13 մ 44 սմ է՝ 12 գագ, լայնությունը 3 մ 36 սմ՝ 3 գագ, կորության շառավիղը 2 մ 80 սմ, որ է երկուտուկես գագ (գագը երկարության հին չափ է, հավասար է 112 սմ-ի): Չափագրման յուրահատկությունը հուշում է, որ կառույցը պարսկատիրության ժամանակներից է:

Կամրջի բարձրությունը՝ ջրի մակարդակից ամենաբարձր կետի հեռավորությունը, 7 մ 20 սմ է: Շինանյութը քարն է ու կիրը: Շինությունը տատանումներից պաշտպանելու համար կամրջի երկու հենամասերի պատերի մեջ խոռոչներ են թողնված:

Ներկայումս կամրջի արեւմտյան մասը ջուր է ծծում, կաթում է եւ առկա է փլուզման վտանգը:

Արեւելյան կողմի հյուսիսային հատվածի պատի մեջ պահպանվել է պարսկերեն արձանագրություն: Տարեցների վկայությամբ մեկ այլ արձանագրություն կար նաեւ հարավային կողմում նույնպիսի կաթնագույն սալաքարի վրա: Այն չի պահպանվել, հստակ երեւում է տեղադրման որմնախորշը: Հավանաբար ընկել ու թաղվել է գետաբերուկ տիղմի մեջ:

Պահպանված արձանագրությունն ընթեռնելի է: Իմ խնդրանքով այն թարգմանել է պարսկագետ գիտնական Ռ.Փափազյանը: Պարզվում է, որ կառուցողը փորագրել է տվել Սաադիի «Վարդաստան» գրքի ներածական գլխի վերջին մասից երկու տող, որը, պարզ է, փոխաբերաբար վերագրվում է կամրջի նշանակությանը:

*Կապրի այս չափն ու կարգը շատ քրտրիներ դեռ երկար,*

*Թեկուզ մարմինս անկենդան լինի հոռիս հավասար:*

Այնուհետեւ արձանագրված է, որ բարեգործն է Աբաս-Ալիի որդի Աբդուլլան, վարպետը՝ Հակոբը: Կառուցումը ժամանակագրված է 1038թ.:

Ակներեւ է, որ այդ թվականը Փրկչական չէ: Որովհետեւ 1038թ. անկարելի կլինեւ մեջբերում անել 13-րդ դարի բնաստեղծ Սաադիից: Այն չէր կարող գրված լինել նաեւ պարսկական օրացույցով, որը հայտնի է Ջելալ-էդ-Ռիմի անունով՝ մշակված Օմար Խայամի կողմից: Ըստ այդ թվականի, որի սկիզբը 1079թ. մարտի 16-ն է, արձանագրությամբ նշված թվականը կկազմեր մեր՝ Փրկչական թվականության 2117թ-ը, որ անհեթեթություն է: Հետեւաբար արձանագրությունը թվագրված է արաբական հիջրաթ օրացույցով: Հիջրաթով թվագրված որեւէ իրադարձություն մեր թվականով (տոմարով) արտահայտելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հին արաբները օրացուցային տարին հիմնականում ընդունել են լուս-

նային տարին 354 օր, որի պատճառով մեր ներկայիս օրացույցով յուրաքանչյուր 33 տարին համապատասխանում է հիջրաթի 34 տարվան: Հետեւաբար, 1038-ը բաժանելով 34-ի ու այնուհետեւ բազմապատկելով 33-ով, ստանում ենք 1007,5 տարի: Մնում է դրան ավելացնել հիջրաթի սկզբնավորման տարեթիվը՝ 622. ստանում ենք 1629,5, այսինքն՝ 1630 թվական, որը եւ Աճանանի կամրջի կառուցման տարեթիվն է:

Իմ գրառած ավանդազրույցներում ավերակված կամուրջը կոչվում է Թաթալերի կամ Խանի, կանգունը Հակոբի, Նենեշի, Չոբանլուի (մոտակա գյուղի անունով), Ըջնանու, Կաթկոսի, անգամ կոլխոզի (հնագույն ավտովարորդներ Սետին, Արմենակը, Մանժետան բեռնատարն անց էին կացնում կամրջով, կոլխոզի նախագահն էլ խցիկում):

Ուշադրություն դարձրեք հինավուրց շինության հազվադեպ անվանը՝ Կաթկոսի կամուրջ...: 1630 թվականին, էջմիածինը շենացնելով, պարսից շահի սիրալիր հովանավորությամբ Հայ Առաքելական եկեղեցու գահին բազմած էր սբ Մովսես Խոտանանցին:



# Վահանավանք

Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու անդրադարձը



## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Գ**լբոսի վրա Վահանավանքը գտնվում է արեւելյան երկայնության 46° 19' 55"-ի եւ հյուսիսային լայնության 39° 21' 04"-ի հանգուցակետում, ծովի մակարդակից մոտ 1100մ բարձրության վրա, Սյունիքի (Չանգեզուրի) լեռնաշղթայի հարավային վերջույթից դեպի արեւելք ձգվող Արեւիքի լեռնաշղթայի (մասն. Բաղաց լեռներ, Բաղացսար՝ 3256մ) հյուսիսակողմյան ստորոտում, Ողջի գետի (վաղ անցյալում՝ Բաղաց գետ կամ Կապանա գետ, միջին հոսանքում՝ Հղորա գետ) աջ մասում՝ վերջինիս աջակողմյան Վանքիջուր վտակի ձախակողմյան տարածքում: 10-րդ դարում Վահան Ջեւանշերազունը «կառուցեց եւ մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը» (Օրբ., ԽԵ): Աղբյուրը կամ գուցե նրա մի ճյուղավորումն առ այսօր

բխում է որպես մեր նախնյաց մեծագործությունների առիավատյալ:

Վահան Նախաշինողին մեծարելով՝ սյունեցիներիս տոհմական պատմիչ հայր Ստ.Օրբելյանը հստակ տեղորոշում է տվել Վահանավանքին. «Եվ շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար..., սկսում է եկեղեցու շինարարությունը» (Օրբ. ԽԵ): Ի դեպ, համալիրի հարավակողմում մարմարացված կարմրավուն կրաքարի բաց հանքավայրն է:

Պատմիչը Սյունիքի 12 գավառները թվարկելիս մատնանշել է. «Տասներորդը՝ Ձորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան» (Օրբ., Գ): Արդ ըմբռնելու է, որ Վահանավանքը գտնվել է երբեմնի Ձորք գավառում, որը բռնում էր Կապանա գետի վերնագավառի եւ ձախակողմյան Գեղի վտակի ավազանները եւ մաս էր կազմում Բաղաց աշխարհի (չջիոթել

Բաղք գավառի հետ): Ալիշանը ենթադրել է, թե Աճանան (Եճանան) գյուղի տեղում հետագայում ձեւավորվել է թուրքաբնակ Շհարջիկը (Սիսական, էջ 276):

Պատմության հոլովություն Վահանավանքի տեղորոշվածությունը Կապանա տանը երբեւէ անորոշ չի եղել: Վանական համալիրը, որ ըստ պատմիչի. «ճոխացել էր որպես բազմամարդ քաղաք», մերձակա հնավայրերի, այդ թվում՝ Հին Կապան մայրաքաղաքի, ցայժմ չճշտված տեղորոշումների տեղացույց բանալին է: Այժմ ակնհայտ է, որ վայրը նախաքրիստոս ժամանակաշրջանի դամբարանադաշտ էր: Վահանավանքի մի կողմում, ըստ պատմիչի, Տանձափարախի անապատն էր (ըստ Մ.Հասարայանի, դա Բեխի անապատն էր, ըստ իս՝ գուցե՞ Հալիձորի դավիթբեկյան հնավայրը), մյուս կողմում՝ քաղաքի արտաքին որմնապարիսպն էր: Կասկածելու չէ, որ խոսքը Հին Կապան քաղաքի մասին է, որի հոգեւոր պետքերի սնուցողն էր Վահանավանքը: Առ այսօր նշմարվում է վա-

## Վահանավան



նական համալիրից դեպի Տանձունլենց ու Ջրախորջուր (Ջղախոր) ձգվող սայլուղու աղուրը՝ հարակից պարսպափակերով: Վանքի հյուսիսակողմ տափարակում, այդ ճանապարհի վանքամերձ հատվածում, թերեւս, մուտքի շքեղ կառույցի ավերակ է: «Լեռնակողմը՝ դեպի վեր, մինչեւ բարձրավանդակի ծայրը, որտեղ մակաղում էին մանր եղջերավոր անասունների հոտերը» (Օրբ., ԽԵ), թաքցրած ունի չուսումնասիրված քարանձավ, մատռան ավերակ:

Վահանավանքին մերձ էին Շտատուք, Իցան (Բեխի Ծնածուքար հանդր՝ում), Հուսկոր, Աչաղու, Արավայր, Շեկք գյուղերը, որոնք տակավին տեղորոշված չեն:

Տարածաշրջանը երկրաշարժային է: Արձանագրված է Սյունիքի 1319թ. երկրաշարժը:

Մի ճգնաժողովի տառապանքները նկարագրելով, մեր պատմիչն Արաքսից այս կողմ ընկած երկիրը դրախտային է համարում. «Լրա կերակուրն էին ընդդեմն ու ծառապտուղները, որովհետև

երկիրն ամառ ու ձմեռ եգիպտոսի պես էր» (Օրբ., ԻՎ): Հիրավի, Կապանում ո՞ւմ կգարմացնես վահանավանքյան ծառատեսակները թվարկելով՝ ընկուզենի, տխլենի, հոնի, տանձենի, խնձորենի, ցախկեռասի, սալորենի, ալոճենի, գլեռենի, պռչի... Իսկ բնաշխարհը դեղատուն է ոտքի տակ՝ եղինք, թուրինք, եգան լեզու, կատվալեզու, օճառախոտ, սինձ, կրնձուկ, իշառվույտ, կառ, երեքնուկ, անձխոտ, վայրի ցորեն ու գարի...

Նոր Կապանը, կարծես, դիմակայում է Վահանավանքին, որովհետև դիմացի՝ գետի ձախակողմյան բնակավայրերը ներառված են քաղաքի շրջագծում: Վանական համալիրի տարածքից գետի ձախակողմ բարձունքում՝ Բարգուշատի լեռնաբազկի վրա երևում է Աճանանի Հղորա բերդի ավերակը:

## Վահանավանքը եւ կապանյան տեղորոշումների թեականությունը

հ մի բերելով հետազոտողների ուսումնասիրությունները Կապանա տան հնավայրերի տեղորոշումների վերաբերյալ՝ դեմ ենք առնում իրարամերժության ու թեականության մի խառնափնթոր կույտի: Անվիճելի տեղորոշված են հեթանոսական մեհյանները, Բաղաբերդն ու Բաղակուքարը, Հին Կապանը, Ջեու բերդը եւ այլք: Ստահոգիչ է, որ ուսումնասիրողներից շատերը, զարգացնելով սեփական մոր տեսակետը, չեն ժխտում այլակարծիք մյուսներին:

Տեղորոշումը հավաստի է, երբ մատենագրական տեղեկություններն ընդհանուր եզրեր ունեն պեղումների արդյունքների, տեղանվան ստուգաբանության, ավանդապատումների հետ: Այս առումով աներկբայելի է, որ հնամենի Ձորք գավառի տարածքում ճշգրիտ տեղորոշում ունի Վահանավանքը. վանական համալիրը նկարագրել է միջնադարյան պատմիչ Ստ.Օրբեյանը, տեղում է Վահան Նախաշինողի վիմագիր տապանաքարը, հնուց անտի տեղացիները վայրի ավերակներն առնիշտ Վահանավանք են կոչել: Վանքի տեղորոշվածությունը երկրագնդի վրա՝ արեւելյան երկայնության 46° 19' 55", հյուսիսային լայնության 39° 21' 04". գտնվում է Բաղաց լեռնաշղթայի հյուսիսակողմում՝ Ողջի գետի աջ մասում:

Պատմիչ Օրբեյանին հետեւելով՝ հարկ է կարեւորել Վահանավանքի՝ մերձակա կառույցների (ոչ միայն) տեղորոշման կողմնորոշիչ դերը: Ինչ խոսք, Վահանավանքը շփոթելու չէ համանուն բերդի եւ մի քարավանատան հետ, որոնք գտնվում են ոչ հեռու՝ Բեխ գյուղի մերձակայքում, եւ, անշուշտ, այդպես են կոչվել վանական համալիրին առնչակցվելու առիթներով:

Վահանավանքը նաեւ Հովհաննավանք ու Հովհաննու վանք է կոչվել, եւ այս երկվույնները տակավին սպառնիչ պատասխան չունի:

1966թ. սկսված պեղումների բարեխղճությունն ու ծավալը պատկառանք



## Վահանավանք

են ներշնչում, մինչդեռ վերականգնման աշխատանքներում առկա են անհամոզիչ լուծումների միտումներ: Տարածքում ցանուցիր թափված սրբատաշերն ու խոյակները շինության մեջ ունեցած տեղի իմաստով մնացել են անհասցե կամ վերականգնման մեջ անհարկի փոխարինվել նորերով: Վերականգնման համայնապատկերը, կարծես, չի պատշաճում Հայր Ստեփանոսի նկարագրությանը՝ «օրըստօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք», «աղոթատուն՝ վիմակերտ մահարձաններով», «դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան», «կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բազմահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ», «կառուցեց մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը»...

Ըստ պատմիչի՝ Վահան Նախաշինողն Աստծու փառքի տուն է կառուցել՝ «զմբեթահարկ, եռախորան»: Բայց 1046թ. արձանագրության մեջ եկեղեցու, սրահի եւ ժամատան կառուցումը վերագրված է Ամբատ թագավորին ու նրա Գրիգոր եղբորը: Վահանի պատվանունը՝ Նախաշինող, պատմիչ Օրբելյանը չունի, այն նշված է միայն տապանաքարին: Արձանագրության բովանդակությունից կարելի է մակաբերել, որ նա այդ անվամբ մեծարվել է թագավորության շրջանում: Նախաշինող, այսինքն՝ առաջին կառուցող կամ նախագնաց կառուցումների, որ, ըստ պատմիչի, «վախճանվում եւ թաղվում է սուրբ տաճարի դռանը»: Վահան Նախաշինողի եղբորորդին՝ Վահան Շինարարը (հետագայում՝ կաթողիկոս), սրբի գերեզմանի վրա, «գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գավիթը՝ մեծամեծ հղկած վեմերով, երեսուն կանգուն բարձրությամբ»: Նկատի առնենք, որ պատմիչն իր երկը գրել է վանքի հիմնարկեքից ավելի քան երեքուկես դար հետո եւ Ամբատ ու Գրիգոր թագավորներից մոտ երկուսուկես դար հետո: Արդ, Վահան Նախաշինողի երախայրիքի ու հետագա հավելում-կառուցումների սահմանազատումն ու հաստատումը հետազոտողների խնդիրն է:

Մեզանում, չգիտես ինչու, տկար է պահանջկոտությունն արտերկրում մեր պատմագրությունը ներկայացնողների նկատմամբ: Ձորօրինակ, ինչպե՞ս հանդուրժել, որ «Վիքիփեդիա» ազատ

հանրագիտարանը Վահան Նախաշինողին ներկայացնում է ո՞ւմ օձօջ Աձձձձ, Շահանդոլխտ եւ Կատա քույրերին կոչում Սաահադухт, Катан, շրջանառում Նիօ Կի օ, Նիօ Կի օձ հորինովի անվանումներ, զուգահեռում Աձձի եւ Աձձի օձի իրարամերժ ձեւերը (հանրագիտարանային վերջին ուղղումը՝ 16.06.2011):

Մեր պատմիչ Օրբելյանը, որ թեմի առաջնորդի կարգավիճակ ուներ, անշուշտ, եղել է Վահանավանքում, որի վկայությունը նրա պատկերավոր նկարագրությունն է. «Ոմն Վահան՝ Չագիկ իշխանի որդին եւ Ջեւանշերի եղբայրը... գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար..., սկսում է եկեղեցու շինարարությունը»: Սա, ակներեւաբար, Վահանավանքն է: Եվ հստակ է ասված, որ Բաղաբերդը բարձր լեռան վրա է: Մինչդեռ բոլոր ուսումնասիրողները, հետեւելով Րաֆֆին, ով 1881-ին գննել է Կապանա հնավայրերը, Բաղաբերդը ճանաչել են Ողջի գետի եւ ձախակողմ Գիրաթաղջուր վտակի կցվանքատեղի մոտակա բարձունքի պարսպափակ տարածքը, որը գետի հունից բարձր է մոտ 300մ: Ջեւու բերդն էլ Րաֆֆին է ենթադրել Գեղվա գետաբերանին:

Ըստ Կաղանկատվացու՝ պարսից կանոնավոր բանակը՝ Շապուհ արքայի գլխավորությամբ, երեք անգամ գրոհել է Բաղաբերդի վրա, եւ մեր նախնիները միայն քարազլորքով հետ են մղել թշնամուն: Ըստ այդմ, ռազմավարական տեսակետից էլ այս ամրությունը Բաղաբերդ կոչել չի հարմարում: Հույժ արժեքավոր է նաեւ Ստ.Օրբելյանի՝ Բաղաբերդին տված մեկ այլ գնահատականը՝ «անհասանելի է մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել»: Հարկավ, եթե Րաֆֆին լիներ գետի աջակողմ բարձունքի բերդավերակներում կամ Աճանանի Աղջկաբերդում (Ղըղղալա), այլ մատնանշում կաներ: Եվ Ջեւու բերդն էլ տեղանշել է վերաբնակված Ջեւա բնակավայրի ազդեցությամբ, թեպետ դավիթբեկյանները Ջեւու բերդը ցույց են տվել Փուխրուտի կողմերում:

Աճանան գավառի անվանատունը Եճանան խոշոր գյուղն էր, որը, Ալիշանի ենթադրությամբ, Շհարջիկն է: Տեղանունների բառարանը Շհարջիկի տեղում դնում է հիմնավորոց Շեկք գյուղը,

որը Վահանավանքի դիմաց էր ու նրա հարկատուն: Հեղինակները քննության չեն առել դրանից մոտ 10կմ արեւելք գտնվող հնավայրը, որը տեղացիները կոչում են Շեկքանեն ձոր: Ի դեպ, Վահանավանքի կալվածքի բաժին են հիշված դիմացի գյուղերը՝ Աչաղու, Աչաղվագետ, Արավայր, Շեկք: Հետազոտողները չեն քննել այն իրողությունը, որ վերաբնակված այլազգիներն իրենց հետ են բերել նմանակ Աչխլու գյուղանունը: Իրավամբ, ներկայիս Աչաղուն Վահանավանքի դիմաց չէ: Աչաղու գյուղը պետք է փնտրել Խնկանց գյուղի մերձավորությամբ: Ի դեպ, Տաթևի վանքի «Քեթթուկ» հարկացուցակում Չաղու անվամբ գյուղ է հիշված Կավարտից ու Ղաթարից հետո: Չաղու գյուղանունն առկա է նաեւ հմ.1488 ձեռագրում՝ Աճանան գավառում: Այս Աչաղուն «պատմական» գյուղ էր, որովհետեւ նրա քրիստոնյա բնակչության դավաճանությամբ սելջուկները 1170թ. գիշերով գրավեցին Կկոց քարն ու Բաղաբերդը: Արդ, բնական է ենթադրել, որ Աչաղուն մոտ էր Բաղաբերդին եւ Կկոց քարին: Տեղանունների բառարանը Կկոց քարը դնում է Կապան քաղաքի մոտ, իսկ պրոֆ. Թ.Հակոբյանն այն նույնացնում է Ղըղղալայի հետ: Ըստ այդմ՝ պատկերացնելու չէ, թե ինչպես մի գիշերվա մեջ հրոսակի բանակը կարող էր Ղըղղալայից Բաղաբերդ՝ իմա Գիրաթաղջուրի գետախառնուրդը հասնել ու գրավել բերդը: Այս պարագային տրամաբանությունը հուշում է, որ Բաղաբերդը հենց Ղըղղալա-Աղջկաբերդն էր, որի հարեանությամբ գտնվող բերդերից մեկը կարող էր հարմարել Կկոց քարին: Հ.Ութմազյանն էլ այն կարծիքին է, որ Վահանավանքը գտնվել է Բաղաբերդի հանդեպ: Սակայն այս ամենին դիմակայում է Հայր Ստեփանոսի դիտարկումը, թե Վահանավանքը Բաղաբերդի լեռան ստորոտում էր (վանքն ու Աղջկաբերդը Ողջի գետի աջ ու ձախ կողմերում են): Այլ մի թեականություն է առկա «Սյունիքի պատմություն» բուհական համառոտ դասընթացում. հեղինակները, ընդունելով, որ Բաղաբերդը Գիրաթաղջուրի գետախառնուրդի մոտ է եւ անգամ, որպես ակներեւ թյուրիմացություն, Ամբատաբերդի մի լուսանկարը վերագրել են Բաղաբերդին, գրքի ներդրի քարտեզում Բաղաբերդը տեղանշել են Աչաղու եւ Նորաշենիկ գյուղերի միջև:

## Վահանավան

Այսբանից հետո կարող ենք վիպասանի տեղորոշած Բաղաբերդը կոչել «Սուտ Բաղաբերդ»: Հետազոտությունները վերաբնողների համար հետաքրքիր կլինի ծանոթանալ Ողջի գետի աջակողմ բարձունքում՝ Ջրախորջրի վերնագավառում գտնվող մի բերդավերակին, որը մոտ երեք հազար քառ.մ տարածք ունի, եռակողմ եզերվում է անդնդախոր ձորերով, պարսպափակ է: Ուրվագծվում են վիթխարատես մուտքը, տարածքի շինությունների հենապատերը, դեպի հյուսիսակողմ լեռնաբազուկը ձգվող բնահարմար սանդղաշարը, ջրամբարը եւ բերդադուրս այլ ավերակներ: Բերդավերակի տեղանքը տիրական է Կապանա ձորի վրա, նշարվում է դեպի Վահանավանը ձգվող ճանապարհի աղուրը: Բաղաբերդն է: Սուտ Բաղաբերդը տեղացիներն ավանդաբար կոչել են Դավիթ Բեկի բերդ: Անշուշտ, դավիթբեկյանները վերանորոգել-վերաօգտագործել են բերդը 1720-ականներին: Ակներեւ է, որ պարսիսպները 3-4-րդ դարի հնություն չունեն (դեռեւս որմերում պահպանվել են գերանների ածխացած մնացորդներ): Ինչո՞ւ պատմիչի կողմից անառիկ համարված այս բերդը չգրավեց Դավիթ Բեկին, ով նախընտրեց նոր բերդի կառուցումը մոտակա Հալիձորում՝ դարձնելով իր աթոռանիստը:

Ստ.Լիսիցյանի հաղորդմամբ՝ խնդրո առարկա բերդի պարիսպների վրա կան ռմբակոծության հետքեր, որոնք այդտեղ պատսպարված թուրքերին քշելու՝ Նժդեհի թնդանոթածության հետեւանք են: Ի դեպ, Լիսիցյանը Գիրաթաղջրի աջակողմում է պատկերացրել Բաղակուքարը: Տեղանունների բառարանը Բաղակուքարի վանքը տեղանշել է Ջրախորջրի եւ Ողջի գետի հատման վայրի տափարակում:

Բաղաբերդի տեղորոշվածությունը թեական է եղել նաեւ դավիթբեկյանների համար: Տեր-Ավետիքն ակնարկել է Բաղաբերդի Ատոմ զորապետին եւ իր օգնությամբ՝ Դուկաս Սեբաստացու կազմած քարտեզում Բաղաբերդի երկիր են համարել Աճանանը:

Աներկայելի չէ, որ միջնադարյան Հին Կապան քաղաքը կայացել-գորացել է անառիկ Բաղաբերդի հովանու ներքո: Դեռ պրոֆ. Աճառյանն է հաշվարկել, որ Բաղաբերդը Ն.Ք. 1850թ. հիմնեց Սիսակ նահապետի ժառանգներից Բաղակը:

Հին Կապանը 10-րդ դարում հայտնի դարձավ որպես Սյունիքի թագավորության մայրաքաղաք: Մինչ այդ էլ հայտնի էր Հին Կապանը: Երբ 958թ. Անանիա Մոկացի կաթողիկոսը Սյունիք եկավ, «նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»:

10-րդ դարի պարսկագիր «Հուդուդ ալ Ալան» ժողովածուն վկայում է, որ Կապանը ծաղկող քաղաք է, «արտադրում է լավ որակի շատ բամբակ»: 13-րդ դարի արաբ հեղինակի «Աշխարհի հրաշալիքները» աշխարհագրական երկում խոսվում է դժվարամատչ նահանգի մասին, որ ունի ամրոցների բազմություն: Դա, ըստ Միկլուխտ-Մակլայի մեկնաբանության, Կապան քաղաքի շրջակայքի մասին է: Կապան քաղաքը վկայակոչել է նաեւ արաբ աշխարհագիր Յակուտ ալ Համավին:

Քաղաքն ավերվեց 1103թ.՝ «բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից»: Օրբեյանական այս նկարագրությունը խանդավառել է տեղորոշողներին. որտե՞ղ էր Րաֆֆու ասած՝ Սյունիքի մեռած մայրաքաղաքը: Բնապատկերային առումով քաղաքատեղին հավանում են Դրղալայի բերդախումբը, Աչաղուն՝ ջրվեժով, Տանձուն լեռնը եւ Վերին Ջրախոր գյուղատեղին: Րաֆֆին հավանել է Վերին եւ Ներքին Ջրախոր գյուղերի տարածքին: Տեղանունների բառարանն ամրագրում է Տանձուն լեռնի տարածքը, որտեղ դպրոցականների ճամբարներն են: Այս պարագային հանելուկ է մնում, թե ինչ տրամաբանությամբ կան դիպվածով այդ բաց՝ ոչ շրջափակ տեղանքին կատաշաճեր կապան-լեռնացք բնորոշումը: Ի դեպ, վայրն ունի հեթանոսական մշակույթի երեսակումներ. ցայժմ պահպանվել են փորածո քարանձավը, եւ, ըստ իս՝ զոհաբերությունների քարե հարթակը:

Հետամուտ լինելով Հին Կապանի տեղորոշմանը՝ Ստ.Լիսիցյանն առավել հակվել է արեւմտակողմ տարածքին՝ Ջրախորջրի մերձակայքին, անգամ մատնանշել այն հեղեղատը, որտեղով ասպատակեց թշնամին: Ջիտաթաղը ոմանք հրեական թաղամաս են համարել

(ջիուտ-ջիո՞ւդ), իսկ ըստ Ս.Ումանյանի՝ այն պղնձագործության թափոններից լաջվարդի երանգ առած թաղամաս էր:

Ղ.Սեբաստացու քարտեզում հին քաղաքի ավերակներն օտարահունչ անվամբ տեղանշված են Հալիձորի եւ Բեխի միջեւ: Բայց եւ, որ մտորելի է, հնավայրին մոտ է տեղորոշված Դրղալա-Աղջկաբերդը:

Պրոֆ. Գր.Գրիգորյանը համոզված է, որ Հին Կապանի տարածքի մեջ են մտել նաեւ Աչաղու, Շիաղջիկ գյուղերը եւ Վահանավանը՝ իր բնակատեղիով:

Վահանավանքի կալվածքի օրբեյանական նկարագրության մեջ սահմաններ են նշված քաղաքի հավելյալ պարիսպն ու Տանձափարախի ձորը: Ի դեպ, այժմ էլ նշարվում են պարսպի հետքեր վանական համալիրի եւ Տանձուն լեռնի միջակա տարածքում: Բայց եւ հզոր մի պարսպահետք կա Ներքին Ջրախորջրից մինչեւ Աչաղու բնակավայրի արեւելակողմ ձորալանջը:

Պրոֆ. Թ.Հակոբյանը Տանձափարախը նախանշել է Տանձուն լեռնի ձորում (համանուն՝ Տանձուլենջ անվամբ տեղանք կա Հավուց թառի վանքի մոտ, Գառնի գյուղից արլ): Ալիշանը Տանձափարախի մենաստանը պատկերացրել է Բաղքի հր-արմ կողմում՝ «խնկանց գիւղ յերի անապատին Տանձափարախու»: Մուրադ Հասրաթյանը Տանձափարախ է ճանաչել Բեխի մերձակա Արիստակա անապատը, որը Ս. Բարխուդարյանը համարել էր Փառուարտա վանք:

...908 տարի առաջ, երբ թշնամին ավերեց Հին Կապանը, «սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ: Այն ուներ իրեն ենթակա քառասուներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար ութ գյուղ, մայրաքաղաքն էլ Կապանն էր»: Եվ այդքանից տեղորոշվածները՝ համոզիչ կամ թեական, փոքր թիվ են կազմում: Նորոյա եւ ապագա ուսումնասիրողներին հաճելի ու ծանր աշխատանք է սպասվում:



# Բանավիճական հողվածներ Լեռննախոսություն

## Ս. Ումառյանի «Այունիքը՝ դիցարան» աշխատությունը

Տեղանունների ստուգաբանությունը բանասացների նախասիրություններից մեկն է: Ամեն մի գյուղում միշտ կարելի է գտնել տարեց սերնդի մարդիկ, որոնք բացատրություններ են տալիս գյուղանունների, հանդանունների եւ բազմապիսի այլ տեղանունների վերաբերյալ: Նրանք տեղանունները մեծամասամբ կապում են լեզբների, հինավուրց գրույցների, բառախաղերի հետ եւ դրանց հավաստիության մեջ կասկածներ չթողնելու համար վկայություն հներին: Ժողովրդական ստուգաբանական տեղեկանքները միայն տարեց մարդկանց շնորհը չեն կազմում: Ստուգաբանական «յուրատիպ» ապարատով են զինվում նաեւ մեր ժամանակներում ունանք. խաչ են քաշում ընդունվածի, ավանդականի վրա եւ իրենք առաջարկում տեղանվան մոր մեկնաբանություններ: Ըստ այդմ, բավականին լուրջ ասուլիսներում եւ անգամ մամուլում հանդես են գալիս

մոր «գյուտերով»: Այդպես էր, օրինակ, տարիներ առաջ «Սովետական Հայաստան» օրաթերթում հրապարակված մի «ստուգաբանությունը» Արզնի տեղանվան վերաբերյալ: Հեղինակը, զոռ տալով երեւակայությանը, այն ցանկացել էր կապել Արայի ու Շամիրամի լեզբնդին ու կապել էր: Իբր, Արայի դին Շամիրամի մոտ են բերում եւ ասում. «Առ, զմիր» եւ վայրիս անունը դրանից էլ մնում է Արզնի: Պարզ էր, որ տեղանունների ծննդաբերության բացահայտման նման մեթոդը /եթե այդպես կարելի է ասել/ ապրիորի է, ոչ գիտական: Այդպես կարելի է պատմագիտական ճշմարտությունն էլ ավելի խոր թաղել ու նվազեցնել այն նպաստները, որոնցով պետք է բացահայտվի գիտականը:

Սակայն լեզբների, հինավուրց ասքերի եւ ինքնահնար այլ մեկնությունների մեջ էլ ազնվության էական նշույլներ կան: Տեղանվան բացատրության այս կամ այն ձեւը բացահայտում է մարդկանց վերաբերմունքը տվյալ վայրի, որեւէ սովորույթի, որեւէ ժամանակահատվածի, պատմական երեւույթների ըմբռնման նկատմամբ: Դա բացատրվում է, թերեւս, նրանով, որ ժողովուրդն ավանդաբար փոխանցող իր գրուցարանում ճշգրիտ մամրամասնություններով չի վերարտադրում պատմական դեպքերը: Ու նաեւ՝ ի բնե մարդկային

անհատները հիշողությունը չեն ժառանգում իրենց նախնիներից: Ընդամին, կյանքի առաջընթացը միշտ ենթադրում է անցյալը լավ իմանալ: Որովհետեւ անցյալի խելացի իմաստավորումն ինքը պրոգրես է: Այդպես, մի անհագ ցանկություն կա մեր մեջ՝ իմանալ, թե ինչ երեւույթների, դեպքերի կամ անհատների հետ աղերս ունեն տեղանունները: Թեկուզ այն լուսավոր կասկածը, որ տեղանվան մեկնությունը կարող է մեկ անգամ եւս հաստատել գիտական վարկածը, օժանդակել բազմակողմ ըմբռնելու պատմական երեւույթը, խթանում է մեր երեւակայությունը: Այսպես, Ալիշանը գրում է. «Խնկանց գիւղը յերի անապատին Տանձափարախոս՝ դասի ընդ գեղս Աճանանու ի մոր ցուցակի» /Սիսական, էջ 280/: Այս տեղանքը մեզ կարող է մղել փնտրտուքի: Եվ դա անում ենք այսպես: Ձորեցիների խոսվածքից քաղում ենք Տանձուն լեռնը հորջորջումը եւ տեղադրում հնամենի Կապան քաղաքի տարածքում: Շհարջիկ գյուղի արեւելակողմ արեգունին երկու կիլոմետր անցնելիս, գտնում ենք ավերակ մի եկեղեցի, բարձրացնում ենք մեջքերը մի սրբատաշ ու վրան հագիվ կարդում Խնկանց գեղը... Այստեղ հաճելի նպաստ է եւ այն, որ այս վայրերում Ձորքը հարեւանում է Աճանանին: Թվում է, թե մենք հավաստել ենք Ալիշանի

Բանավիճական հողվածներ եւ քննախոսություն

տեղեկանքը, որ է՝ ԽՆԿանց գյուղի տեղադրումը գտանք: Սակայն այս ամենը դեռ հեռու է գիտական լինելուց: Ինչպես նկատել էք, Տանձափարախ բառի մեջ փարախ էլ կա, որի իմաստը շտապ հասկանալ պետք չէ: Նաեւ, ի՞նչ ասել է Տանձափարախի անապատ: Եվ հետո՝ ԽՆԿանցի արձանագրությունը գուցե մի հիմարն է ուրիշ տեղից բերել ու այդ եկեղեցու ավերակի մոտ զցել: Կամ գուցե՝ մի խելոքը, կոնսերվացնելու ինքնակամ միտումով: Հին հայոց հասկացությամբ անապատը մեծատանն է, որում տեղադրված վանքում բանել են գրիչները, ծաղկել են ծաղկողները: Անապատային մենակացության գաղափարը վաղ /Նա՞խ/ քրիստոնեական է եւ ծագում է դպտական կողմերից: Դե հիմա արի ու Տանձուն լենջը հեռու թող Եգիպտոսից: Անկարելի է: Ստորեկտեսները, ինչպես դա ցույց է տվել մեր տաղանդաշատ համերկրացի Ս. Ունառյանը, որ մեր ազգային վաղնջական մտածումն անբաժան էր հարեւան եւ հեռու ժողովուրդների մշակույթներից:

Ժողովրդական ստուգաբանությունը, որքանով էլ այն համոզիչ թվա, միշտ էլ տարակուսելու տեղ թողնում է: Դա վերաբերվում է ոչ միայն տեղանուններին, այլ ցանկացած բառին: Քանի որ մենք այս զեկուցման մեջ առիթ չունենք բառերի ստուգաբանության մասին խոսել ամհասարակ, օրինակներ առնենք տեղանուններից:

Բոլորիդ հայտնի է մեր գյուղի՝ Լեռնաձորի նախկին անվանումներից մեկը՝ Քրդիքենդ: 84-ամյա Լեւոնի նախկին անձնագրում՝ տրված Ձանգեզուրի գավառի Օխչու գյուղվարչության կողմից 1915 թվականին, հավաստված է Քյուրդիքենդ: Այս հորջորջումն առիթ է տվել մերկապարանոց մի գրույցի, թե իբր, Լեռնաձորում ինչ-որ ժամանակ քրդեր են ապրել: Խնդրո առարկա քրդերը շեն կենան, սակայն որ նրանք չեն ապրել Լեռնաձորում, պարզ հասկանալի է մի շարք փաստերով:

Շրջանիս տարեցները սովորաբար Լեռնաձորը կոչում են իր համեղական անվամբ՝ Քյուրդիգյաց, իսկ Լեռնաձորցիներին՝ քյուրդոյեցի: Ուշադրություն դարձրեք. դ ինչու՞նով վերացող գյուղանուններից՝ Վանանդ, Հանդ եւն կազմվում են վանանդեցի, իրնդեցի ձեւերը, որոնց մեջ դ-ն երբեք չի սովում: Քրդիքենդի հար ու նման է Բաշքենդ

մեզ ծանոթ գյուղանունը, որից կազմված բաշքենդեցի ձեւում նույնպես դ-ն չի սովում: Այս օրինաչափությունը, որ շատ հարազատ է Լեռնաձորի խոսվածքին ու նաեւ Ղափանի ենթաբարբառին, Լեռնաձորցուն պետք է դարձներ քյուրդոքյուրդեցի: Մինչդեռ բարբառս այսպիսի ձեւ չունի: Սա՛ մեկ:

Ղափանի ԶԱԳՍ-ի արխիվում պահպանվել է Լեռնաձորի նախկին եկեղեցու «Ձափաբերական» մատյանը, որի մեջ քահանաները զանազան գրություններ ունեն: Դրանցում ոչ մի տեղ չկա Քրդիքենդ անուն, այլ միայն՝ Քրդիկանց: Դեռ ավելին՝ եկեղեցու ձվածեւ կնիքի դրոշմում պարզ ընթեռնելի է՝ սբ Աստվածածին եցի Քրդիկանց գեղջ: Սա՛ երկու:

Ինձ գրած մի նամակում Ս. Ունառյանը նշում է, որ Քուրդիկ Սյունյաց իշխան է ապրել 8-րդ դարում /տես նաեւ Աճառյանի Աճձնանունների բառարանը/ ու նաեւ՝ Ձորքում եղել է Քրդիկանց գյուղ, ճահուկում՝ Քրդ-ն, Ծղուկքում՝ Քրդական եւն: Քուրդիկ կամ Քրդիկ անունը շատ փխրածալուր է եւ տարածված էր հիմավուրց Սյունիքում: Հետագայում, անբարեհունչ դիտելով, աստիճանաբար դուրս է մղվել: Հիշենք, որ Վահանավանքում Քրդիկ մակագրությամբ մի տապանաքար կա:

Առաջածորցի Բախշին ասում էր, թե Օխչի տեղանունը ծագում է Օխտը Ղօչի ձեւից, իմա՝ այդ գյուղում ապրելիս են եղել յոթ ազնվատոհմ, քաջ մարդիկ, որոնց Ղօչի էին կոչում: Ծարկսն ասում էր, թե բառը Օխա բառից է, որ գորգագործական դազգահի կարելու մի դետալն էր: Դա հավաստում էր նրանով, որ Օխչիում զարգացած խաշնարածություն կար, եւ առատ էր բուրդը:

Լեռնաձորում Տիգրանն ասում է, թե Բողաջըղ վայրը իր անունն առել է Բաղա թագավորի անունից: Այստեղ հիշենք Ստեփանոս Եպիսկոպոս Օրբելյանին. նրա մեկնությամբ Բաղք անունը ծագել է Բաղակ առասպելական նահապետի անունից: Արծվանիկում Հրճածոր անունը մեկնում են արյան ձոր, Նորաշենիկում Եսայի Սարտիրոսյան բանիմաց մի ծերուկ այսպիսի գրույց գիտեր. «Երբ մրջյունները շատացան ու սկսեցին հատիկը տանելով ամայացնել ամբարներն ու դաշտերը, համայնքը որոշեց տեղափոխվել նոր տեղ: Նոր գյուղը կոչվեց Նորաշենիկ, որ է թե՛ նոր շեն»: Փոխարուեսեցիներից ոմանք գյուղանունը կա-

պում են պախրա բառի հետ:

Ծավի Թուրջունանաց եկեղեցին, Բեխի իմինանցա /Մըրանցա/ ծորը, Խլաթաղի Կրնեն, Եղվարդի Ծավեկը, Կաթնառատի Բըխժօտը, ինչպես նաև հանրածանոթ Նանաչի կանուրջը, Սուրուն կապը, Ղաթարը, Գիրվին քարը, Տըփասարը, Ուլուբըլաղը, Ջալին գյուղը, Գյուղըջանցը եւ այլն եւ այլն ունեն ինքնատիպ կամ տեղ-տեղ միմյանց հիշեցնող ավանդագրույցներ, որոնք բանահավաքների համար թանկագին մասունքներ են:

Տեղանունների ժողովրդական ստուգաբանությունը արտացոլում ունի նաեւ ոչ աբորիգեն բնակչության մեջ: Պարզ է, որ զուտ հայեցի ստեղծված ավանդագրույցները՝ ներառելով զուտ հայկական կենցաղի, մտածելակերպի, լեզվական եւ այլ առանձնահատկություններ, դժվար քննություն կբռնեն այլ լեզուներում: Օրինակ, կենցաղային-հայկական մի մանրուքի պատճառով մեր հարսնաքարի լեզենը եւ երբեք չեն սպասում աղբբեջաներնում: Սակայն զարմանք չի պատճառում մեր շրջանում տարածված աղբբեջանական մի լեզենդ, ըստ որի Ղափան անունը հղվում է կաֆան բառին, որը հնուց անտի այդ ձեւում կշեռք է նշանակում /կաֆան-թարազը/: Այդ լեզենդը, առանց չար դիտավորության, պատմում է, որ այս վայրերում առաջինը /՛/ թուրքական մի քարավան է երեւացել ու կշեռք բանեցրել, հիմնել շուկա: Հետեւապես վայրիս անունը կաֆան-թագար է մնացել: Շատ անխիղճ բան է գիտության համար՝ լեզենդները դնել գիտական մեկնությունների հիմքում: Բայց այդպես վարվողներ կան: Բաքվեցի մի «խելոք» այդպես է վարվել, ապացուցելով, որ Երնջակի /Նա ասում է Ալինքս, Ալինջախանա/ բերդը հիմնել են թուրքը, սելջուկները 10-րդ դարից հետո: Եթե այդպիսի լեզենդ /Նաղը/ կա, թող պատմվի դարեդար: Սակայն եթե դա գիտական հողվածի է վերածվում Ադր. ՍՍՀ ԳԱ «Թարիխ, Ֆալսաֆա, Հուգուտ» տեղեկագրում, եւ էլ բացում են վաղ միջնադարի կամ հենց հայոց ոսկեդարի մատյանները, գտնում են Երնջակ բերդանունը, գավառանունը: Բաքվեցին շատ է հեռուն գնացել, ստուգաբանելով նաեւ Երնջակ անունը եւ դնելով ծագած 10-րդ դարից: Բացն Ծիրակացու ԱՇԽԱՐՀԱՅԱՑՈՒՅՑԸ եւ կարդամ Երն-

## Բանավիճական հողվածներ եւ ֆնանսություն

ջակ գավառաճանուրը:

Խոսելով ստուգաբանության մասին, ակադ. Աճառյանը գրում է. «Ժողովրդական ստուգաբանությունների մեջ լայն տեղ են գրավում տեղանունները: Տաճիկները, գրավելով Չայաստանը եւ հայերեն տեղանունները հարմարացնելով իրենց լեզվի բառերին, կազմել են՝ Օձուն-Ուզունլար «երկարներ»... Արագած-Ալագեօզ «խաժ աչքերով»...»:

Սուրմալու հին անունն է Սուրբ Մարի, կրճատված Սուրմարի, տարանմանությամբ /երկու ր-երից մին դարձնելով/ Սուրմալի, որից իսկույն պատրաստ էր տաճկերեն Սուրմալի կամ Սուրմալու «աչքին ծարիր քսած»:

Նույնիսկ Կոստանդնուպոլիս անունը թուրքերը հունարեն իս տին պալին «ի քաղաք» «Պոլիս» ձևից հանելով շինել են Սթանպոլ /ԼԲՂԼ, հ.6, էջ 732/: Եվ ոչ միայն սրանք: Այսօրվա հարցի հետապնդման սահմաններում մենք կարող ենք մի քիչ էլ ընդլայնել մեր ասելիքը: Գիտության ճշմարիտ մեթոդները սիրող յուրաքանչյուր ոք չգիտի՝ խնդա՞, թե՞ ճակատամարտ տա ներկայիս թուրք պատմաբանների ու լեզվաբանների ճռռոմ ֆրագներին: Ոմն Կըրգիօղլի պրոֆեսոր, որի բոլոր նախնիները, առանց բացառության, միջինասիական տափաստաններից խրոմած, ավերելու, հրդեհելու եւ քանդելու միակ «գովելի» ֆունկցիայով 13-րդ դարում սպառազեն վրաններով բնակեցին Չայկական բարձրավանդակում, գրում է, թե Աստվածաշնչի թորգոնը /Թոգարման/ նախահայր թուրքն է: Անշուշտ, հայոց գիտությունն իր Մասիս սարի պես բարձր է, եւ Մասիսի բարձրությունը չի խանգարում, որ այստեղից տեսնենք թուրք գիտնականի երկար ականջները: Մի՞թե տրամաբանական է, որ հնդեվրոպացի հայերն իրենց երկիրը թորգոմա տուն կոչեն, հենվելով շատ ծիծաղելի հնչող եւ այն ժամանակ իսկապես զրոյական մակարդակի վրա գտնվող «օղուզական քաղաքակրթության» չգոնահապետի անվան վրա: Պատմությունը այդպիսի ոչ մի դեպք չգիտեր: Ինքը՝ թուրք բառը ծագում է չինարենից եւ նշանակում է հյուսիսի հրոսակ: Դա այն պատճառով, որ հարազատ անապատատափաստաններից թուրքերը հաճախակի ասպատակում էին Չինունաչիները: Այստեղ տեղին է բերել Անտուան Մեյեի մի ասածը. «Այն փաս-

տը, որ ազգը բնորոշվում է իր սեփական բնույթը պահպանելու եւ մարդկային որեւէ այլ խմբակցությունից որոշակի մնալու կամքով, ոչ մի տեղ այնքան ակնհայտորեն երեւան չի գալիս, որքան հայերի մոտ: Վրա են հասել ներխուժումներ, թալան, ջարդեր, ազգը աննկուն պահպանել է այն, ինչ նրան տարբերում է մյուս ազգերից» /Մեյե, Չայագիտական ուսումնասիրություններ, Երեւան, էջ 521/:

...Այսօրվա քննության առարկան Ս. Ունառյանի «Սյունիքը՝ դիցարան» գիտական ապարատն է: Եվ, հավանաբար, թվում է, թե մենք մեր խոսքով շրջանցում ենք գրքի արժանիքները: Սակայն այդպես է այն բացահայտել առանց հեռվանց սկսելու:

Ունառյանը ստուգաբանել է Սյունիքի, ընդամենն եւ հայկական լեռնաշխարհի մոտ 360 տեղանուններ: Նրա ստուգաբանական ապարատը ամբողջական կերպով առաջին անգամ է լիիրավ տարածվում տեղանունների ամբողջության վրա: Մինչ այդ տեղանունների ստուգաբանությունը բանասիրության մեջ կրել է տարերային բնույթ, չի փայլել գիտական համոզականությամբ ու երբեմն էլ, ինչպես ասում են, մի օրվա թիթեռնիկի կյանք է ունեցել: Գիտական ստուգաբանությունը համոզիչ է այնքանով, որքանով համոզիչ են նրա մեթոդները: Իրենց ժամանակին ստուգաբանական շատ փաստեր համոզիչ ու անհերքելի են թվացել: Բանասիրությունը գիտի մի շրջան, երբ «մոդայիկ» էին պատահական նմանությունները: Դրանք, իհարկե, ավելի զավեշտական են, քան գիտականի նկատմամբ ժողովրդական ստուգաբանությունը: Օրինակ, Նապոլեոն անունը պատահական նմանություն դրսևորեց հին հունարեն լեզվով մի նախադասության, որը այդ բառի՝ սկզբից հաշված մեկական տառերի բացթողումից առաջացած բառերի շարքն է. Նապոլեոն ապոլեոն պոլեոն ոլեոն լեոն եոն ոն: Սա թարգմանաբար նշանակում է՝ Նապոլեոնը կործանեց քաղաքները բոլոր, առյուծ հավիտենական լինելով:

Երբեմն, գիտական անվան տակ, ստուգաբանությունը կարող է վերամբարձ լինել եւ որքան կարելի է՝ ծիծաղելի: Կան գիտնականներ, որոնք իրենց կոչումներին համապատասխան արտաքին կեցվածքներ են ընդունում՝ քայլում են փքված, իբր՝ մտամոլոր, բազման-

շանակ հանում-դնում են ակնոցները, ունքերը վրա են բերում իբրեւ գիտության շատ զաղտնիքներ միայն իրենց է մատչելի: Այդպիսի կեղծ դրսևորումներից մարդկանց մեջ մտավախություն ու խորհրդավորություն է առաջանում գիտություն ասածի նկատմամբ: Ոմանք թվում է, թե գիտությունն առհասարակ անմատչելի բան է եւ առանձին անհատների է հատուկ: Ավելի վատ է, երբ գիտնականն ինքն է իր մասին շատ մեծ կարծիքի: Ես Մառին այդպիսի գիտնական չեմ համարում, սակայն ի պատեհ առիթի, պետք է օրինակ բերեմ Աճառյանի մի պատմվածք: «Ռեկտոր Չակոբ Չովհաննիսյանը պատմեց, թե Շուշում կար մի հայ՝ Նիկրչյան ազգանունով: Պրոֆ. Մառին առաջարկել էր տալ այս ազգանվան ծագումը: Մառը իսկույն խաղչյան բեւեռագրերի լեզվով գտնում է մի բառ եւ դրանից հանում այդ ազգանունը: Մինչդեռ ազգանվան ծագումը հետեւյալն է եղել:

Ռուսները նոր էին մտել Շուշի: Մի գինվոր մտնում է մի հայի այգի եւ սկսում է խաղող ուտել: Տերը վրա է հասնում եւ սկսում է բղավել գինվորի վրա: Զինվորն ասում է... «Ոն կրիչի» /Մի բղավիր/: Չայը կարծում է, թե հայիոյանք է, ինքն էլ նրա վրա է բղավում «ճիկրիչի» եւ այսպես իրար վրա «ճիկրիչի» բղավելով՝ գինվորը դուրս է գալիս: Չայը գնում է թոփխանան եւ ամենքի առաջ պատմում իր քաջագործությունը: Դրանից հետո նրա եւ նրա գերդաստանի անունը մնում է Նիկրչոք, Նիկրչոնց» /ԼԲՂԼ, հ.6, էջ 769/:

Թերեւս, որպես մանկավարժական դիտարկում պետք է ասեմ, որ գիտությունը երբեք էլ խորշելի չէ, չունի անմատչելիության կեղծ տպավորությունը: Միայն թե՛ այն դառնում է մարդու /տվորողի/ նախասիրությունը, զբաղմունքը, թեւ առկա են որոշակի պայմաններ, տրամադրվածություն եւ նորին գերազանցություն հրապուրանքը:

Փորձեք սրտամոտ մի թեմայի մեջ խորանալ: Դուք կսկսեք հետեւյալ պարզ բանաձևից. որքանո՞վ է զարգացված այն գիտության մեջ, արդի ի՞նչ վիճակ ունի եւ ի՞նչ կարելի է ավելացնել: Այս պարզ մտեցումից հետո անհրաժեշտ կլինի փնտրել մեթոդներ ու եղանակներ: Չետո, հուրախություն, կծագեն կանխադրույթներ, կասկած, վարկած, պարադոքս, հանելուկային դրություններ եւ այլն: Սա, իհարկե, դյուրին ծրագիր չէ:

Բանավիճական հողվածներ և քննախոսություն

Նման մի ծշրագիր է ձեռնամուխ եղել ՍՍՀՄ գրողների միության անդամ Ս. Յ. Ումառյանը, ապավինելով իր տաղանդին: Ումառյանը, գիտնական չէ, սակայն իր գիտական ապարատով ցուցաբերում է գիտնականի ազնիվ աշխատակարգ, խորագիտություն, բազմաթիվ ուղղություններով արդյունքների ստուգման մեծ կուլտուրա: Այն հուժկու և փոթորկուն նորությունը, որով նա խուժում է բանասիրության անդաստանը, Սյունիքի տեղանունների դիցաբանական ծագման տեսությունն է: Ուշագրավ է և այն, որ նորընծա տեսությունը շատ քիչ է պարունակում թեական կարծիքներ: Գիտական ապարատի հիմքում պատմահամեմատական քերականության հզոր մեթոդներն են, հնդեվրոպաբանության նորագույն մվածումներն են: Հեղինակն իր ծանրակշիռ ծառայությունն է բերում հին հայկական աստվածների պանթեոնի լիակատար ուրվագծմանը: Հայոց հեթանոս աստվածների կաճառը՝ Արամազդի հովանու ներքո, վաղուց հայտնի է պատմությանը: Սակայն, ինչպես բազմաստված հին հույներն ու այլ ժողովուրդներ, հայերն էլ տարբեր ժամանակներում մինչև քրիստոնեությունը, ունեցել են բազմաթիվ աստվածներ, որոնք մասնական պաշտամունք են պայմանավորել՝ յուրահատուկ ֆունկցիա ունենալով հանդերձ: Աստվածությունների պանթեոնի ընդլայնությունը խոսում է ժողովրդի բարձր կուլտուրայի և զարգացածության աստիճանի մասին: Ըստ այսմ պատկերացնելու է հեղինակի բերած նպաստը ոչ միայն բանասիրությանը, այլև առհասարակ պատմական գիտությանը: Նա պարզունձշտում է շատ աստվածների ծննդաբանությունը, պարտականությունները, որոշում նրանց բազմաթիվ տեղադրության վայրերն ու սահմանները: Բնականաբար, ստուգաբանական ապարատի կիրառումով հեղինակն օգտվում է բազմաթիվ մեռած ու կենդանի լեզուներից, քաջածանոթ է դրանց ու հայերենի ունեցած փոխազդեցություններին: Պարզ է, գոյատևելով հնդեվրոպական մայր հայրենիքում՝ փոքր Ասիայում, հնդեվրոպացի այլ ազգերի ու սեմականների հարեւանությանը, հայերը չէին կարող մեկուսացված ստեղծել հայոց պաշտամունքի պառնասը: Ինչպես մյուս ժողովուրդները, նրանք նույնպես փոխ են տվել կամ առել աստվածություններ-

րի ֆունկցիաները: Աստվածանունները /դիցանունները/ հայերենի մեջ են թափանցել հայերենի տվյալ շրջանի հնչյունական օրենքներին համապատասխան: Այսպես, եթե Մաժան դիցանունը հայերենում այդպես էլ հնչում է, ապա հարակից լեզուներում այն ձեռք է բերում նոր, հայերենին խորք հնչումներ: Եվ դա՝ ոչ միայն վաղնջական ժամանակներում: Օրինակ առնենք Բաքու բառը: Աղբբեջաներենում այն հնչում է Բաքը, նրանից ուղղակի փոխ առնելով հայերը ասում են Բաքու, ռուսները՝ Բակու, մեկ ուրիշ՝ Բաքյու և այլն: Սակայն լեզվի ձայնական օրենքներն էլ դիտարկելիք է զարգացման-փոփոխման օրենքներ ունեն: Դա նշանակում է, որ, օրինակ, հայերենի այսօրվա ձայնական օրենքների դրությամբ մենք օտար բառը ներմուծում ենք մի հնչմամբ, իսկ հայրուրամյակներ առաջ՝ մեկ այլ:

Ես ուզում եմ ցույց տալ, որ կան որոշ դժվարություններ Ումառյանի գրքից օգտվելու համար: Այսինքն՝ ընթերցողն այն չպետք է հանպատրաստից ձեռք բերի, առնի ու հենց այնպես կարդա: Գրքին ծանոթանալու համար անպայման պետք է որոշակի պատրաստություն ունենալ: Առաջինը, որ պետք է նշեմ, հնդեվրոպական նախալեզվի մասին դույզն-ինչ գաղափար ունենալն է: Այնուհետև, ընթերցողը գոնե համառոտ ծանոթ պետք է լինի հայ ժողովրդի պատմության վաղնջական շրջանի մեկնաբանման նոր տեսությանը, որովհետև Ումառյանի զարգացրած գիտական ապարատը կամ հավաստում է այդ տեսության կենսունակությունը, կամ ազդվում է նրանից:

Հարցը դնենք այսպես. ի՞նչ է ստուգաբանությունը, ի՞նչ է տոպոնիմիկան: Ստուգաբանությունը /տիմոլոգիա/ լեզվաբանության բաժին է, որն ուսումնասիրում է բառերի ծագումն ու պատմությունը՝ հենվելով պատմա-համեմատական մեթոդի վրա: Պարզ է, որ այն հետաքրքրվելու է նաև տեղանուններով: Տեղանունների ստուգաբանությամբ զբաղվող գիտությունն էլ տոպոնիմիկան է /տեղանունաբանությունը/:

Գիտության մեջ հեղաշրջիչ նշանակություն ունեցավ լեզվաընտանիքների սահմանումը, մասնավորապես հնդեվրոպական լեզվաընտանիքի ճանաչումը: Հյուսիսում ցույց տվեց, որ հայերենը ինքնուրույն հնդեվրոպական

լեզու է: Գիտնականներին հաջողվել է սահմանել հնդեվ. նախալեզուն, գտնել այժմյան լեզվի հեռավոր հնդեվրոպական բառարմատները և այն օրենքները, որոնցով նախալեզվից /հնախոսական լեզվից/ հնչյունները փոխարկվել-անցել են ճյուղավորված լեզուներին: Այ սա է այն զորեղագույն միջոցներից մեկը, որի մասին ասացի վերը և որը համարեցի Ումառյանի գիտական ապարատի մեթոդներից մեկը: Թերեւս ձանձրալի չի լինի այս դիտողության վրա մի օրինակ բերել:

Մի խումբ հին ու նոր լեզուների ուսումնասիրությամբ հնդեվրոպաբանությունը, կիրառելով համեմատական մեթոդը, ի թիվս այլոց, վեր է հանել մեր եղբայր բառի նախալեզվի համապատասխանը՝ ? :

Ինչպե՞ս է խոշոր հնդեվրոպաբան Աճառյանը /Ս. Ումառյանի անմիջական ուսուցիչը, երբ նա ուսանում էր համալսարանում/ ապացուցում եղբայր բառի ծագումը նախալեզվի այդ արմատից:

1.Հնդեվրոպերենի բառակազմի բնատվիս է հայերենը: 2.չ տալիս է հայերենը: 3. ա դառնում է հայերեն ա: 4. Երկու ձայնավորի միջև է դառնում է հայերեն յ: 5.Վերջավանկի ձայնավորը ջնջվում է հայերենում:

Այս հինգ օրենքների կիրառումով տրված բառը հայերենում պետք է դառնար հայերեն բրայր: Սակայն դրա վրա էլ գործում են զուտ հայերենի ձայնական օրենքները, որոնք այստեղ 4 են: 1.Երկու հաջորդական ռ-երից մեկը վերածվում է Լ-ի: 2.Բլ կարող է շրջվել և դառնալ լը: 3.Բաղաձայնից առաջ գտնված լ առանց բացառության դառնում է դ, որ է թավ լ: 4.դ բառակազմում ստանում է շատ անգամ և, երբեմն էլ ա հենարանը: Հետևաբար ունենում ենք եղբայր բառը:

Սրանք այնքան ճշգրիտ օրենքներ են, որ Աճառյանը երբեմնակի խոսք է բացում մաթեմատիկական ճշմարտությունների մասին, զուգահեռներ անցկացնում: Իր մի աշխատության մեջ /ԼՔՀԼ, 6հ./ նա անգամ բերել է եռանկյան մեթոդն անկյունների գումարի մասին թեորեմի ապացուցումը:

Այս ապարատին է դիմում Ումառյանը, երբ ասելիք է սկսում Տրի, Խուստուփի, Սիսական, Վայոց ձոր և այլ տեղանունների մեկնության վերաբերյալ:

Գրքի ուշադիր ընթերցողը կնկատի, որ բազմաթիվ դիցանունների ծագում-

## Բանավիճական հողվածներ եւ ֆինախոսություն

Ճաբանությունը հեղինակը համոզիչ կերպով տանում է մինչեւ վաղ ստրկատիրական ժամանակները: Ուրեմն՝ դիցանունները հայոց մեջ գոյություն են ունեցել հազարամյակներ շարունակ: Դա նաեւ հավաստվում է որոշ աստվածությունների՝ զուտ հայ իրականությանը հատուկ ֆունկցիաներով: Անշուշտ, որեւէ աստվածություն պաշտելու համար ժողովուրդը պետք է ապրեր պատմական որոշակի զարգացում: Պաշտամունքի մեջ աստվածության ամրակայումը, ծեսերի հաստատումը շատ երկար պատմական ժամանակահատվածի արդյունք է: Հատկապես, որ դրանք սերտ աղերս ունեն պետականության հետ: Եթե Տրդատ Մեծը քրիստոնեությունը պետական կրոն է հռչակել հատուկ հրովարտակով, ապա անշուշտ այդպես են վարվել բոլոր նախնի թագավորները, որոնք քրմերի համաձայնությամբ կամ դրդումով հարմար ու հաճելի են համարել հայկական աստվածների պանթեոնից վտարել որեւէ աստծու կամ ռահվիրա լինել պաշտամունքի: Արգիշտի /տարընթերցվածություն՝ չէ/ արքան իր մի արձանագրության մեջ վկայակոչում է հալդ աստծո գորությունը: Եվ դա՝ Վանի թագավորության ժամանակներում: Կարո՞ղ է, որ այդ աստծո գաղափարը նրա ժամանակներում ստեղծված լինի: Անշուշտ, ոչ: Խալդն իր գորությամբ իսկ զարգացման, ֆունկցիաների ամրակայման պատմական ընթացքի ապացույց է: Որոշ գիտնականներ խալդ համարում են Հայկ Նահապետը, որ հիշատակում է Պատմահայրը: Ըստ Կտակարանի Քրիստոսի ծննդյան թիվը դնում են փրկչ. /մեր/ թվարկության 1 թվականին: Բայց մի՞թե քրիստոնեությունը հատկապես 1 թվականին է սկզբնավորվել: Հիշենք, որ հայոց մեջ այն լուսավորչական եկեղեցին սկսեց տարածել պաշտոնապես 301-ին:

Այս ամենը հեռվանց մեզ մոտեցնում է հայ ժողովրդի պատմության մեջ ընդունված այն «տեսակետին», թե հայ ժողովրդի կազմավորումը սկսվել է ուրարտական պետության կործանումով. մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին: Այս տեսության հեղինակների համար սա, ինչ խոսք, շատ հեղինակավոր ըմբռնում է: Ամրակայված: Քարացած: Ըստ այդ տեսակետի /ՅԺ, 1հ./ մինչեւ մ.թ.ա. 6-րդ դարը, այլոց կարծիքով՝ մինչեւ մ.թ.ա. 10 կամ 7-րդ դարը հայեր չեն եղել, նշա-

նակում է հայկական լեռնաշխարհի Վանի տերությունն էլ բնավ հայկական չի եղել:

Մինչդեռ այս տեսության համար ոչ են նպաստավոր աքթադական արձանագրությունները: Մ.թ.ա. 15-13-րդ դարերում գրված խեթերեն արձանագրություններում հիշատակվող Հայասական խայաշատ երկիրը, որ գտնվել է խեթական տերությունից արեւելք, այժմ արդեն խեթագետներն ընդունում են, որ Հայքն է: Անհիմն ու ոչ գիտական է Ուրարտու անվանումը: Աքթադական արձանագրություններում հարկավ Հայքը չէր կարող այդպես էլ կոչվել, ինչպես առ մեր ժամանակները ուրիշ ազգերը մեզ ոչ թե հայ, այլ՝ արմյանին, էրմանի, տմեխի, կամ մի այլ բան են կոչում: Աքթադացիները մեր երկիրը կոչել են իրենց լեզվով՝ Ուրարտու, երկրի բնակիչներին՝ ուրաշտայա: Դրա համար շատ ապացույցներ են բերվում: Օրինակ, Ասորեստանի Ասարհադոն թագավորի մի արձանագրություն պատմում է, թե ինչպես մ.թ.ա. 681 թ. Ասորեստանի Սենեբերիմ թագավորին սպանում են նրա որդիները եւ փախչում: Հին Կտակարանում ասված է, որ Սենեբերիմին սպանող որդիներ Ադամելեքն ու Սանասարը փախան Արարադի երկիրը: Խորեմացին նույն դեպքի մասին գրում է, որ Սենեբերիմ թագավորին սպանող որդիներ Ադամելեքն ու Սանասարը «եկին փախստական առ մեզ»:

Աքթանյանների բոլոր արձանագրություններն ասում են, որ Առմինա, Հարմինույա, Ուրաշտու՝ Հայաստանի տարբեր անուններն են իրն պարսկերեն, էլամերեն եւ աքթադերեն: Հաստատված է, որ մ.թ.ա. 590 թվականին տեղի է ունեցել թագավորական հեղաշրջում, մի հարստությունը փոխարինվել է մյուսով, որի արդյունքն է եղել Վանի նոր պետության հիմնադրումը եւ Վանը դեռ երկար ժամանակ Հայաստանի մայրաքաղաք է եղել, երկիրն աքթադերեն շարունակվել է կոչվել Ուրարտու-Ուրաշտու /բաբելական եւ ասորական տարբերակներ/, եբրայերեն՝ Արարատ: «Արարատյան աշխարհ-Հայաստանի ամենամեծ նահանգը,-մեկնում է Սերո խանգաղյանը «Թագուհին հայոց» հնավեպում,-խորենացու նշած Այրարատյան թագավորությունը, որին մի քանի համբակներ, մտքի խավարման բերումով, Ուրարտու են ասում»:

Այսպիսով, հայ ժող. կազմավորում հասկացությունը սուտապատում տեսություն է: Հայերը եղել են հնուց անտի, հազարամյակներ շարունակ:

Հայերի հնագույն պատմության գլխավոր աղբյուրը լեզվական-լեզվաբանական է: Լեզուն բյուր անգամ թանկ է հին ամրոցի պեղումներից, իր ժամանակի բնորոշումն ունեցող կավանթից, սեպագիր արձանագրությունից եւ անգամ՝ գիտնականի «երկաթ տրամաբանությունից»: Այժմ խստագույնս ապացուցված է, որ հայերը փոքրասիական ծագում ունեն եւ մ.թ.ա. 6-5 (ին կարծիքով 9-րդ հազարամյակին Ս. Ու.) հազարամյակներում կատարվել է հնդեվ. մայր ժողովրդի տրոհումը, որի բարբառներից մեկը եղել է հայերենի նախավիճակը: Հայերենի բառային ընդհանրությունները շումերների, աքթադերենի, խեթերենի հետ ակնառու նշաններ են վերջին երեք լեզուների հետ հայերենի երկարատեւ շփման: Դա նշանակում է մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում հայերենի այն ժամանակվա վիճակի եւ այն կրողների առկայություն այդ տարածքում, այսինքն՝ հայերի առկայություն: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Աքթադի թագավոր Նարամիսինի արձանագրությունների մեջ եղած հիշատակություններն այն մասին, որ ինքը մի քանի անգամ արշավել է ըստ տեղադրման, Միջագետքից հյուսիս գտնվող Արմանի երկիրը, վկայում են Հայքի ոչ միայն գոյությունը, այլեւ՝ կազմակերպվածությունը՝ Նարամիսինին հակառակորդ լինելու համար: Ի դեպ, այս օրերին Ս. Ու. մառյանը հրապարակման է հանձնել մի ուսումնասիրություն հայ բառի ծագման վերաբերյալ: Հեռախոսային գրույցի ժամանակ նա ասաց, որ հայ բառը 9000 տարեկան է: Այդ ուսումնասիրության մեջ նա ցույց է տվել օտարների կողմից հայերին տրվող տարբեր անվանումների՝ արմեն, սոմեխի եւ ֆլա ծագումնաբանությունը:

Նոր տեսությունը, որ համառոտակի բերեցի վերը, հավաստում-ամրապնդվում է մեր դիցական անունների գեներալով: Տարբեր ժողովուրդների պաշտամունքների փոխներագրությունը հենց ամենագորեղ ապացույցներից մեկն է:

Մյուս կողմից՝ դիցաբանությունը հատուկ է հնագույն բոլոր զարգացած քաղաքակրթություններին եւ մի տեսակ

## Բանավիճական հողվածներ եւ քննախոսություն

չափանիշ է: Կույր երգիչ Յոնեթուրը անգիր ասում էր հին հույների էպոսը՝ Իլիականն ու Ոդիսականը: Պլատոնը մ.թ.ա. 4-րդ դարում Յոնեթուսի մասին ասել է. «Այդ բանաստեղծն է դաստիարակել Յեւլարան»: Մարքսն իր դոկտորական դիսերտացիայում Պրոմեթեևսի մասին գրում է. «Պրոմեթեևսը փիլիսոփայական օրացույցի ամենաազնիվ սուրբն է եւ նահատակը»:

Դիցաբանությունը չի կարող հենց այնպես, ոչնչից ու ինքնահնար ստեղծված լինել: Մարդու միտքը դրա հենքում անպայման ունեցել է ճշմարիտ ու իրական պատմական երեւոյթներ, նշանավոր անհատներ: Դիցաբանությունը հատկապես պատմագիտության համար անսահման պոտենցիալ հնարավորություններ ունի: Գիշենք մի փաստ. 19-րդ դարում հռչակավոր հնագետ Զ. Շլիմանը Փ. Ասիայի Գիսարլիկ բլրի վրա /Դարդանելի նեղուցի մոտ/ քաղաք է պեղել ճիշտ այն վայրում, ուր, ըստ հույների վկայության, ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել Տրոյան եւ «Իլիականում» Տրոյայի նկարագրությունն էլ հարազատորեն համընկել է Շլիմանի պեղած քաղաքին:

Ո՞վ կառարկի, եթե ասենք, որ հայոց դիցաբանությունն էլ իրենում քաքքրած ունի բազմաթիվ պատմական իրողություններ: Իհարկե, հենվելով Ոսկեդարի մատենագրության վրա, մենք վաղուց ենք համոզվել ու պեղել մեր Տրոյան /օր. Արմավիրն ըստ Խորենացու եւն/: Սակայն առավել հետաքրքիր արդյունքներ կարելի է սպասել դիցաբանական պատումներից ամենավաղ հայկական շրջանի պատմության շատ էջեր լուսաբանելու համար: Ունայնապես ասում է, թե խօսք բառը զեփպտերենում զոհարան է նշանակում: Այդ արմատից եւ նորխուռիական /ուրարտերեն/ խութու-ից հանում եւ մեկնում է Խուստուփի դիցանունը: Գիշենք, որ առ այսօր էլ խոսվածքում ունենք Գյաջին խութ, հաչին խութ, հսօթ հանդանունները: Այս փաստն ինքնին առանձին ուսումնասիրության աղբյուր ու առիթ է: Եվ արդյո՞ք միայն սա: Մերժելով կամ հավաստելով տարբեր հեղինակների ստուգաբանությունները, հեղինակը իր տեսությունը տարածում է 13-14-րդ դարերի Սյունական պատմիչ Ստ. Օրբելյանի /սա ամենահավաստի ու բարեխիղճ գիտնականն է Խորենացուց հետո, որպես տեղաբան/ գյուղացուցակի վրա, համառորեն հետախուզում

այդ անունների ծագումնաբանությունը: Նա ցույց է տալիս, որ Բաղք եւ Կապան անունները նույնիմաստ են: Տեղանուններ կան՝ աղերսված բաբելական ջրհեղեղի աստված Ուննապիշտիմի, Վանի թագավորության Խուտուիմի աստծու, բաբելական Գիրրա աստծու, շումերական Շարա աստծու, խուռիական ջրի աստծու, հայոց մեռնող եւ հարություն առնող Արա աստծու, հայոց Անգեղ աստծու, խեթական Մեցուլա աստծու, խուռի-միտանյան Տուշշի աստծու հետ եւ այլք:

Ուղղակի ապշեցուցիչ է հեղինակի խորագիտականությունը, որով ծննդաբերում է Սիսիան-Սիսական հոգեհարազատ անունը որպես ծիսարան կամ զոհարան: Գրքում բավական շատ են արեւի պաշտամունքին հղվող հասկացությունները: Ժխտելով Ա. Ղարիբյանի, Գյուրջյանի, Ադոնցի, Ղափանցյանցի մեկնությունները, Ունայնապես հիմնավորում է, որ Վասպուրական գավառանունը, որ նշանակում է «արեւի երկիր» կամ «արեւի ու կրակի տեղ», իսկ փոխաբերական իմաստով՝ «Արեւիք» այսինքն՝ «արեւապաշտների, կրակապաշտների երկիր»: Իսկ Մեղրին հանում է Սիհրից:

Գիրքը բավականին շատ փաստեր է պարունակում հնագույն ժողովուրդների ու ցեղերի միգրացիայի վերաբերյալ, բացահայտում նրանց լեզվական փոխազդեցությունները: Հետաքրքրական է, ինչպես ցույց է տալիս հեղինակը, որ կասպերն ու քաշերը /Դյակոնովը քաշերենը համարել է էլամական մի բարբառ/ նույն են եւ որ Կասպից ծովանունը եւ նրա հարավ-արեւմտյան ափին բնակվող կասպերի ցեղանունը ուղղակի կապ ունեն քաշ ցեղի եւ Սյունիքի Քաշունիք, Քաշաթաղ անունների հետ: Ունայնապես ապացուցում է, որ քաշեր-կասպեր եւ լաիհճներ /կակեր-վուլուզուհի/ ցեղերը եղել են լեզվակից-արյունակից եւ ապրել են Վրկանից աշխարհում, քաշերի հարեւանությամբ: ...Սյունիքում ապրող լաիհճները գաղթել են Կասպիականի ափերից, իսկ քաշերը՝ էլամից են եկել դեպի հյուսիս /էջ 65-66/: Հեղինակը հանգում է Սյունիքի բարբառի ծագման խնդրի լուծմանը եւ գիտության մեջ առաջինն է այն լուծում: «...Սեւանի ավազանում /մ.թ.ա. 8-րդ դարում/ բնակվել են հայկական ցեղեր, որոնց լեզվական զարգացումը տվեց Սյունիքի հայ

բարբառն ու ենթաբարբառները» /էջ 44/: Հեղինակը ձեռք է զարկել բանասիրության մեջ առկա մի շարք հանելուկների լուծմանը: Գրքի նորարարությունը նաեւ նման փաստերի մեջ է արտահայտվում: Օրինակ, նա մեկնում է գեղնի բառը, որ հիշում է Աճառյանն իր Արմատականում եւ չի մեկնում այն: Ունայնապես գտնում է, որ դրանով կազմված Գեղարքունի տեղանունը պաշտամունքային ծագում ունի եւ անվանահիմքը հնդեվրոպական է եւ հղում է սանսկրիտում պահպանված ուկկա-կրակ արմատական բառին: Նույն արմատից են առաջացել հին Հռոմի դարբնության եւ կրակի աստված Վուկան անունը եւ հնդեվրոպական ծագումով այլ բառեր: Այստեղ հիշենք, որ լատիներենի վ-ն հայերենի դիմաց ունի գ:

Ս. Ունայնապես ընդարձակ ու պատշաճավոր քննության է ենթարկել իր հայրենի գյուղի հիմնավուրց անունը: Եթե գիտությունը ոչ ախորժելի համարող մեկին ասենք, թե Լեռնաձորի հնավանդ անունը, որ առ այսօր պահպանվել է խոսվածքի մեջ, ընդհանրություն ունի Տրապիզոն քաղաքանվան, Թրակիայի, Տրոյայի, Տրանսիլիվանիայի հետ, գուցե հեզմանք կամ հունոր համարի: Սակայն ստուգաբանությունը դա ցույց կտա Ունայնապեսի գրչի տակով անցնելուց հետո: Բանն այն է, որ գյուղիս անունը /Դիլլար/ հիմնավուրց Տիմիք կամ Տիրնիքն է, որ հավաստված է Օրբելյանի գյուղացուցակում: Տիրը հայերի հնագույն արեւի աստվածն է եղել: Հելլենիզմի ժամանակ այս աստծու անունը փոխվել է Տիր-Ապոլոնի, այնուհետեւ Արա Գեղեցիկի ֆունկցիան վերագրվել է Տիր-Սիհրին, իսկ Սիհրը նույնպես եղել է արեւի աստված: Պրոֆ. էդ. Աղայանի կարծիքով Տիր աստծու ծագումը հնդեվրոպական է: Այդ բառարմատից է հանում Ունայնապեսը նաեւ հայերենի արաքել, թրծել, անթեղ, ինչպես նաեւ հեթանոսական արնդեզ բառերը: Ատր-աճն...

Ինչպես տեսնում եք, ժողովրդական ստուգաբանությունը տեղանունների վերաբերյալ հօսք է ցնդում այս հզոր, ունայնական ապարատի գործադրմամբ: Անշուշտ, միտք չունի ջնջել թեկուզ մի լեզուն կամ գրույց: Ժողովրդական ստուգաբանությունը կենդանի պրոցես է, այն ունի իր որոշակի հունը: Այն դառնում է հատկապես ամենել ու գուտ ֆոլկլորային, իր թիկունքում ունենալով դիցաբանական ծագումնաբա-

## Բանավիճական հողվածներ եւ ֆննախոսություն

նության համոզիչ տեսությունը:

Գիրքն ինքնին մեծ եւ պատասխան չակնկալելով հարված է գիտության զեղծարարներին, հատկապես՝ թուրք խեղճ ու կրակ պատմաբաններին, որոնք ալլահին վկայակոչելով Տիգրան պարթեւ թագավորին, Մաշտոցին... թուրք են համարում, հին հայկական տեղանունները հարմարեցնում տաճկական կեղծ ստուգաբանությանը: «Սյունիքը՝ դիցարան» աշխատությունը հայրենագիտության անզուգական աղբյուր է: Հանրակրթական դպրոցի ուսուցչի համար այդ գրքով բացվում են հայրենագիտական աշխատանքների նոր հորիզոններ եւ անհրաժեշտ է մշակել գրքից օգտվելու ուրույն մեթոդիկա: Հենց ուղղակի ասենք, որ տեղանունաբանությունը մեր դպրոցների հայրենագիտական աշխատանքներից դուրս մնացած բնագավառ է: Եթե հեղինակ Ումառյանն իր ձեռքի տակ ունենար թեկուզ մեր շրջանի բոլոր գյուղերի հանդանունների լիակատար ցանկը, ավելի կհարստացներ ասելիքը: Ասենք, առանց դրա նա այդպիսի հակում ցուցաբերում է:

Շատ ցանկալի է, որ մեր հանդանունները խմբագրվեն, ի մի բերվեն: Չէ՞ որ ժողովուրդը հիմնավորը դիցանունների մի մասը, իր հնչումին հարմարեցնելով, պահպանել է հանդանունների մեջ: Ուշադրություն դարձրեք, ձեր հարագատ գյուղի հանրածանոթ շատ հանդանուններ առանձնանում են դիցական լիներու զգացողությամբ: Իհարկե, միայն՝ զգացողությամբ: Ստուգաբանությամբ զբաղվողը վաղ թե ուշ ինչ-որ բնագոյով կանխագգում է տեղանվան հինհայկական համն ու հոտը: Չէի ասի, թե գիրքն ընթերցողին մղում է ստուգաբանություն կատարել: Սակայն, որ ճշմարիտ է, անպայման նման նախասիրություն հուշում է: Սա եւս մանկավարժական նկատառումով են դնում, որովհետեւ սովորողներին հետազոտական աշխատանքի մղելը ոչ միայն ցանկալի է, այլև՝ մեր ժամանակներում խիստ անհրաժեշտ: Այս դեպքում է, որ Աճառյանը զգուշացնում է անաղարտ պահել գիտականը: «Կան քննիչներ, որոնք ոչ միայն այս կամ այն հատուկ անունը զուգարում են մի ուրիշի հետ, այլև տալիս են նրանց զանազան ուսու իմաստներ եւ դրանից հետո դեռ եզրակացություններ են հանում»: Այնուհետեւ մեծ լեզվաբանը բերում է մի քանի անմիտ հա-



ՆՈՒՄԱՎՈՐՆԵՐ՝ ԿՐԹԵՆ ՄԱՌՈՒՅԵՆԵՐ

Փագանալիճ, Կապուտջուղ

մեմատություններ, որոնք սարքել է ինքը զվարճությունների համար. Անգլիա-անգղ, լի ա, Էդինբուրգ-ետին բուրգ, Հունգարիա- հուն գարի ա, Մոսկուա- մի ոսկի ա, Ճապոն-ճայերի բույն եւ այլն:

Ակադ. Աճառյանն ամբողջ մի հանրագիտարան է, սակայն նա ավելի շատ էր ծրագրել, քան հասցրել է կատարել: Եվ ինչպես թե՛ մեծանուն հայագետի այս պատգամը նրա երբեմնի սասն Ս. Ումառյանը կտակի տեղ է դրել: Հրապարակված ունենալով Սյունիքի տեղանունների ծագումնաբանությանը վերաբերվող առաջին աշխատությունը, նա առողջ հող է նախապատրաստել առավել ծավալուն աշխատանքի համար: Ասել է թե՛ հայոց տեղանունների ստուգաբանականը սպասենք նրանից:

«Սյունիքը՝ դիցարան» աշխատությունը ոչ միայն նորամուծություն է գիտության մեջ, առհասարակ, այլև, ինչպես վերը մասնակիորեն նշեցի, մեծարժեք ներդրում է հայագիտության մեջ: Նկատենք, որ ծագումնաբանության ումառյանական ուրույն շկոլան հաղթարշավով չի առաջ ընթանում: Քանի որ խոսքը գիտապատմական արմատական դիսցիպլիններին է վերաբերում, ապա, բնականաբար, գրքի զարգացրած պրոբլեմները առնչվելու են հայ ժողովրդի պատմության մեջ վաղուց ամրակայված մի շարք հիմնարար գաղափարների: Դրանում խոր բացահայտում ունեն հեղինակի սկզբունքաբանությունն ու համարձակությունը:

Գիրքը խմբագրել ու գրախոսել են դոկտոր-պրոֆեսորներ Ռ. Իշխանյանն ու Ա. Գ. Աբրահամյանը, որոնք հայ ժողովրդի պատմության վաղնջական շրջանի լուսաբանման նոր տեսության հեղինակներ ու պաշտպաններ են: Անշուշտ, իր գործարարած գիտական մեթոդներով Ս. Ու.-ն ղեկավարվել է Աճառյանի ցուցումներով ու դիտողություններով: «Շատ զգուշալի են, որովհետեւ ծագում են նախապատմական ժամանակներից եւ նույնիսկ հայտնի չէ, թե ինչ լեզվի են պատկանում» - գրել է Աճառյանը /ԼՔՀԼ, հ.6, էջ 767/:

Այս զգուշացումը հենց ուղենիշ է եղել Ս.Ումառյանին: Տարիների տքնաջան աշխատանքի արդյունքը այս հրաշալի դիցական մատյանն է: Նմանակելով իր իմաստուն նախնի Ստ. Մետրոպոլիտ Օրբելյանին, նա նույնպես, սակայն յուրովի, գրքի վերջում դասդասում է Սյունիքի տեղանուններն ըստ անվան դիցապաշտական ծագման մասին: Եվ, որպես ամփոփում, գրում է. «... պատմական Հայաստանի հյուսիսարեւելյան խոշոր մարզերից մեկի Սիսական կամ Սյունիք անունը եւ նրա Գեղարքունի, Սողք, Ծղուկ, Հաբանդ, Վայոց ձոր, Արեւիք եւ Երնջակ գավառանունները ունեցել են պաշտամունքային ծագում, Աղահեջ, Գողթան եւ Կովսակյան գավառանունները՝ ցեղային ծագում, իսկ Բաղք, Ճահուկ եւ Չորք գավառանունները աշխարհագրական անուններ են» /էջ 104/: Ինչպես վայել

## Բանավիճական հողվածներ եւ քննախոսություն

Է Ճշտապահ գիտնականին, նա բոլոր փաստարկումներն ու մեջբերումները հավաստել է արժեքավոր աղբյուրներով, վկայակոչելով իր շոշափած հարցերին նախկինում անդրադարձած հայ ու այլազգի գիտնականներին:

Գրքի արժանիքներից մեկն ուզում եմ առանձնակի ընդգծել:

Ես վերը նշեցի, որ գրքից օգտվող պետք է որոշ պատրաստություն ձեռք բերի կամ եթե դա ունի՝ բռավո: Ուրեմն պետք է ենթադրել, որ այն մտավորական ընթերցողի վրա յուրահատուկ ազդեցություն է գործելու: Ըստ այդմ՝ առաջին հերթին մտավորականը պետք է գրքի ընձեռած հնարավորությամբ մաքրագարդի իր մտածելակերպը տեղափոխել իր ժամանակներում: Վերջապես, այս ապարատով զինվելով, մարդն առավել լուսավոր է, քան հեթանոսների, լեգենդների, օտարաբանության հագարան փաստերի իմացությամբ: Օրինակ առնենք. 82-ամյա Տիգրանն ինձ ասում է, թե Կապուտջուղ անունը, որին ինքը Ղափըջուղ է ասում, դափա-սար եւ ջրղ արահետ անուններից է ծագել: Մեկն էլ ասում էր, թե ձյունադիր լանջով անցնող քահանայի կաթսայի կափարիչն է գլորվել ու հետք թողել եւ այդպես՝ նորից Ղափըջուղ: Իսկ Ումառյանն ասում է եւ հիմնավորում, որ տեղանունս Կապճյուղ է: Արդ, ինքս, որ Տիգրանից 50-ով կրտսեր տարիք ունեմ, ինչու՞ հաճելի պիտի համարեմ դափան ու ջրղը ուրիշին ավանդելու համար, եթե կա գեղեցկահունչ Կապճյուղ անունը: Եվ նույնը՝ բոլոր անունների համար:

Մտավորականներից սովորում եմ բոլորը, եւ առաջին հերթին նրանք պետք է շնչեն նորի թարմությամբ:

Վերջում նշեմք, որ հեղինակը ստուգաբանությանը հարազատ է մնացել նաեւ իր պատմավեպերում, տողատակի ծանոթագրություններում տալով այս կամ այն անվան ծագումնաբանությունը, ուսումնասիրության հրապարակումից առաջ հանդես է եկել մամուլում, գիտական ասուլիսներում:

**ՌՈՒԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**16.04.1982**



## Վիշապանուն եզերք Կապանա

Ը ստ Հայր Ստեփանոս Օրբելյանի՝ Հին Կապանը քաղաքի համբավ է առել 10-րդ դարի վերջին տասնամյակներում: Արաբ աշխարհագիր Յուդուդ ալ-Ալամը (10-րդ դար) վկայում է, որ իր ժամանակներում Կապանը ծաղկող քաղաք էր, արտադրում էր լավ որակի շատ բամբակ: Հայր Ստեփանոսի երկից կարելի է մակաբերել, որ Կապան տեղանունը գործածական էր ավելի վաղ ժամանակներում եւս (զլ.ԻԱ), իսկ իր ապրած ժամանակներում (13-րդ դար) այն փոխարինում էր Ձորք գավառանվանը «Ձորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, եւ այժմ կոչի Կապան» (զլ.Գ): Այսպիսով պարզ է, որ Կապան անունը Սյունիքում լայն տարածում է գտել թագավորության ժամանակներից՝ 970-1170 թթ.: Արդ բնական է համարել, որ Կապան գավառանունից կազմված տեղանուններն ի հայտ են եկել 10-րդ դարից ոչ վաղ:

Ետիմներից մեր հայրենակից Ս. Ումառյանը գրել է. «Ձորքը հետագայում անվանեցին Կապան, ուստի նրա արեւմտյան ամենաբարձր լեռը կոչվեց Կապճյուղ, այսինքն Կապանի մի ճյուղը, որը սակայն գրականության մեջ է մտել սխալ եւ անհեթեթ մի անունով՝ Կապուտջուղ» (Սյունիքը դիցարան, էջ 72): Ուրեմն՝ Կապուտջուղ լեռնանունը շրջանառվել է Հայր Ստեփանոսի ժամանակներից, թեականորեն, գուցե եւ՝ թագավորության ժամանակներից: Սակայն այս մասին ոչ մի հիշատակում չկա: Եվ մի՞թե տրամաբանական է, որ Սյունիքի Օլիմպոսը անուն առած լինի Կապանի թագավորության ժամանակներում: Իսկ ինչպե՞ս էր այն կոչվում մինչեւ այդ: Ով է երբ է առաջին անգամ գործածել Կապուտջուղ կամ Կապճուղ անունը, հայտնի չէ: Այս հարցադրման պատասխանն ունի հանրագիտակ Հայր Ալիշանը. «ըստ իմաստից տեղոյ անձուկ անցիցս՝ բարձրագագաթն լեռանն այն Քափուճուխ կոչեցաւ... ոչ գիտեմ զհարդ ի հնունն կոչի, զի հարկ էր այնպիսոյ բարձրութեան՝ ունել իւր անուն սեփական» (Սիսական, էջ 291):

Ավներեւ է, որ Կապուտջուղ անվա-

նունը նորահնար է եւ սիրողական մակարդակով սարքված է թուրքերեն գափըջուր բառից:

Կապուտջուղ լեռան նկարագրությունն անհնար է՝ առանց լեռնագագաթին հարեւանող լեռնանցքների նշանակությունը պարզելու: Դրանցից արեւմտակողմինը, որի մոտ անգիր տապանաքարերի գերեզմանոց կա, բանուկ էր հնուց անտի՝ լինելով Բաղք-Գողթան ճանապարհին (Աղի ճանապարհ): Դա, հիրավի, լեռնաստանի միակ մատչելի դռնակն է, որը Ձորքից բացվում է Գողթանի (Նախիջեւանի) վրա կամ հակառակը: Թուրքն իր լեզվով դռնակը կոչել է գափըջուր: Լեռնանցքի համար սա. բնականաբար, պարզունակ-հովվական անվանում է եւ չի կարող հնավանդ հայկական անվան տարինչունը լինել:

|| *Լեռնանունը գրավոր հիշատակում ունի ռուսաստրիության հաստատման ժամանակներից:*

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց, Այսրկովկասի ազգագրական- ժողովրդագրական ուսումնասիրությունն արժանացավ ցարական կառավարության հատուկ ուշադրությանը: Կովկասի ուսումնասիրման վարչությունը ձեռնամուխ է եղել «Սբորնիկ մատերիալով դյա օպիսանիյա մեստնօստեյ ի պլեմյոն» ժողովածուի հատոր առ հատոր լույս ընծայմանը: Հեղինակները, պարզ է, հնարավորություն չունեին՝ պատշաճ քննության առնել հայ մատենագրության տեղագրական տեղեկությունները եւ աշխարհագրական անունները իմնականում գրառել են բանավոր հարցումների հիման վրա: Ընդամին նկատեմք, որ պարսկաստրիության եւ ավելի վաղ ժամանակներում տեղանունների թուրքահունչ տարբերակները տարածված էին նաեւ հայախոս միջավայրում: Իշխանությունը թելադրում էր իր լեզուն, տեղանունների իր հնչումը: Այդ ճանապարհով են գրավոր խոսքի մեջ ի հայտ եկել ցայսօր մեր ունկնդրությանն անսովոր բազմաթիվ տեղանուններ՝ Սաբաթբյեչմաս, Սիլուդարա, Բաշթյանը, Աչախլը, Սոփիյուրդ, Չանախչի, Սեյիդլար եւ այլն: Այս ամենը պատմական իրողություն է, եւ դրանից վատ զգալու անհրաժեշտություն չկա: Եթե կամենանք ցույց տալ, որ մի

## Բանավիճական հողվածներ եւ քննախոսություն

շարք թուրքերեն տեղանուններ հայերենի աղավաղումն են, կպատահի, որ ծիծաղելի դրուբյան մեջ կհայտնվենք: Ջորջորնակ, զավեշտական է Ղովշուտը՝ Կավճուտ, Շհարջիկը Շղարշիկ, Օխտարը Ուխտավայր դարձնելը եւ այլն: Աներկբայելի է, որ թուրքատիրությունից եւ արաբատիրությունից առաջ բոլոր տեղանունները (այդ թվում՝ լեռնանունները) Սյունիքում հայերեն էին: Ուրեմն, խնդիրը դրանք վերստին կյանքի կոչելն է: Նորահնար շինծու տեղանուններն անհեռանկար են ու... վտանգավոր (այս մասին՝ այլ անգամ):

**II** *Խորշելու չէ, որ Կապուտջուղ անունը շինված է թուրքերեն բառից: Որ այն նշանակում է դռնակ, հավաստել է Ալիշանը (էջ 291): Կապուտջուղ անունը չի գործածել պատմիչ Հայր Ատեփանոսը: Կապուտջուղ լեռնանունը չգիտի նաեւ Դավիթ Բեկի ժամանակագիր Հայր Դուկաս Սեբաստացին, որ նկարագրել է գորավարի մարտերն ու կազմել իր ժամանակի Մեծ Դափանի (Սյունիք) քարտեզը:*

Դառնանք մեր Պատմահորը: Առաջին գրքի L գլխում հաղորդում է Տիգրան թագավորի կողմից Աժդահակ Մարացու հետնորդներին Մասիս լեռան կողմերում վերաբնակեցնելու մասին... «ավելի քան բյուր մարդ Տիգրանը բնակեցնում է մեծ լեռան արեւելյան կողմում մինչեւ Գողթնի սահմանները... մինչեւ Նախճավանի ամրոցի դեմուդեմը: Նրանց է թողնում նաեւ երեք ավաններ՝ Խրամ, Ջուղա եւ Խորշակունիք, գետի մյուս կողմում, ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդահականը, մինչեւ նույն եւ Նախճավան ամրոցը»:

Պատմահոր խոսքից դժվար չէ մեկնաբանել, որ «դաշտի գլուխ»-ը՝ Աժդահականը, լեռան անուն է: Ընդամին պարզ է, որ «գետի մյուս կողմում» ասվածը Արաքսի ձախափնյա՝ Նախիջեւանի դաշտավայրն է, որտեղ եւ տեղորոշված են Խրամը, Ջուղան եւ Խորշակունիքը (տես Ա. Այվազյանի քարտեզը): Բայց դրանց գլխին՝ արեւելակողմում, նշանավոր լեռը մերօրյա հնչյւնով Կապուտջուղն է, որը Փոքր Կովկաս լեռնահամակարգի ամենաբարձր լեռնագագաթն

է (3906 մ), Հայաստանի Հանրապետությունում 2-րդը՝ Արագածից հետո: «Աշխարհացոյց»-ի հեղինակ Խորենացին, անշուշտ, Նոյյան Նախիջեւանի դաշտը կհավերժացներ հենց այդպես՝ նրա գլուխ նշելով բարձրաբերձ լեռնագագաթը, որն իշխում է Սյունիքի ու Գողթան-Նախիջեւանի վրա եւ, ըստ ավանդազրույցների, հեթանոս սյունեցիների աստվածների բնակատեղիի համարում ունեն:

Անհամոզիչ է, որ լեռն անուն առած լինի կամ վերանվանվի Կապան անվան տարածման ժամանակներում: Հարկավ, այն հնագույն ժամանակներից պաշտամունքային անվանում է ունեցել: Եվ կռահելի է, որ այդ կորուսյալ անունը եղել է Աժդահական, որն աղերս ունի վիշապի պաշտամունքի հետ:

Պատմական հիշողությունը լեռնանունը պահել է մոտակա՝ նրանից մոտ 1500 մ ցածր Իլանդաղի վրա (թարգմանաբար՝ Օձասար): Օձասարն ու Աժդահականը (Կապուտջուղը), ըստ մի լեզվագիտի, հարս ու փեսա են եղել:

Խորենացի Մովսեսից առբերած իմ այս կռահման մասին հեռախոսել եմ ԵՊՀ պրոֆ. Բ.Հարությունյանի հետ եւ ստացել նրա սիրալիկ հավանությունը: Մովսես Վարդապետի հիշատակն օրինությամբ լինի, պրոֆեսորին շնորհակալություն: Գրեցի ու մատանցի Հին Կապանի մի ավերակում:

**ՈՐԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ**  
9 մարտի 2006թ.



## Նկատառումներ յոթնաբերդ Կապանի ամրոցների պեղորոշման վերաբերյալ

Ջեվո

**1723** թ. նոյեմբերի 2-րդ կեսին Դավիթ Բեկն առավ Ջեուբերդը, որտեղ ամրացել էր Ասլամագղուլի թուրք զորապետը:

Այս հերոսամարտը սյունեցիները վիպել են, պատմել սերնդեսերունդ: Նոր սերնդին Ջեուբերդը մատնանշում են Ողջի եւ Գեղի գետերի կցվանքատեղում, որտեղ հիմա գետեղված են Կամոյի խորովածանոցը, ՋՊՄԿ ջրիան կայանը: Քիչ այն կողմ Ջեյվա ավանն է, որի համար առաջարկվել է Բարիկավան նորանունը, սակայն լրագրական վրիպակի պատճառով տարածվել է Բարիկավան անհեթեթ անվանումը:

Բերդը նշված վայրում է տեղորոշել Բաֆֆին: Նա, ձեռքի տակ ունենալով մեր կողմերին վերաբերող առկա գրականությունը եւ հատկապես Դուկաս Սեբաստացու «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին եւ պատերազմաց Հայոցն Դափանու» աշխատությունը (Վաղարշապատ, 1871թ.), ձիով այցելել է բերդավերակները, զրուցել գիտակների հետ: «Դավիթ Բեկ» վեպում եւ «Ուղեգրություններում» անզուգական վարպետությամբ վեր է հանել իրենից 150 տարի առաջ ծավալված իրադարձությունները: Բաղաբերդի, Բաղակուբարի, Շլորուտի տեղորոշումներ նույնպես նրա կռահումներն են, եւ դրանք հիմք են հանդիսացել ետիմների հետազոտությունների համար:

Մեկուկես դարի ընթացքում տեղի էին ունեցել ժողովրդագրական էական փոփոխություններ: Ետդավիթբեկյան ժամանակների արտագաղթը, ներգաղթը Պարսկաստանից՝ 1805-ին Ռուսաստանին միանալուց հետո, ցարիզմի՝ թուրք համայնքներին հովանավորելու

## Բանավիճական հողվածներ եւ քննախոսություն

քաղաքականությունը արժանատի է փոխել Սյունիքի ժողովրդագրական պատկերը: Երեք պատմական հիշողությունը եւ տեղի տվեց խառնափնթոր ավանդազուրկներին: Հին դավանցիներն այլեւս ցույց չէին տալիս հին Կապանի, Բաղաբերդի, Գրիհամի բերդի, առավել եւս՝ հնավայրերի տեղերը: Այդ ամենը դարձավ պատմագիտության խնդիր, որն առ այսօր չի ձեռք բերել կռվաններից:

Բաֆֆու կողմից Ձեւու բերդը Գեղիի գետաբերանում տեղորոշելուն նպաստել է մերձակա Ձեյվա բնակավայրը: Այս անվամբ տեղանունները շատ հին չեն համարվում մեզանում եւ ուշմիջնադարյան պետք է համարել: Ձեւու կամ Ձեյվա անուն չի հիշատակում 13-րդ դարի պատմիչ Ստ.Օրբելյանը: Անվան փոփոխությունը՝ գելիա, Աճառյանը արաբական է համարում եւ ստուգաբանում որպես կրոնավորի խուց կամ մահմեդականների հավաքատեղի:

Ձեւու բերդի հիշատակումն ունի Մխիթարյան միաբան Ղուկաս վարդապետը՝ վերոհիշյալ գրքում: Վարդապետն իր աշխատությունը խմբագրել է Դավիթ Բեկի զորավարներ Ստեփան Շահունյանի (Առաջածորի Մելիք-Ստեփանյանների նախապապի), Ավետիք քահանայի (որի ծոռնորդին էր Ն.Աղոնցը) եւ այլոց պատմությունների հիման վրա: Ղուկասի համապատումի հետ պահպանվել ու հրատարակվել են Շահունյանի եւ Տեր-Ավետիքի պատմությունները: Այս վերջինները, բնականաբար, հետազոտողներն ավելի հավաստի են համարում, որովհետեւ հեղինակներն իրադարձությունների անմիջական մասնակիցներ էին եւ իրենց հուշերը բանավոր խոսքով թելադրել են վարդապետին: Ստեփանը պատմում է, որ Դավիթ Բեկի հրամանով Պապ հազարապետը թուրքերից մաքրում է Լեւազի ծորը եւ ավարն ուղարկում Ձուվարի եկեղեցուն (Մեղրի): Բայց Դավիթը լուր առավ, որ Ձեւու բերդում թուրքերը գործաժողով են արել եւ Հալիծորից գրում է Չավոնուրի (Կովսական) Թորոս հազարապետին ու Պապին (Կենաուզ), որ գան թուրքերի վրա: Հավաքվեցին Ղարաչիմանում եւ այնտեղից ելան Ձեւու բերդի վրա ու գրավեցին:

Եթե այս Ղարաչիմանը համարենք ներկայիս Դիցմայրին, ինչպես ընդունում են բոլոր հետազոտողները,

անտրամաբանական կլինի: Նախ այն գտնվում էր Բարգուշատի վիճակում, որտեղ տիրություն էր անում դեռ չջախջախված Ֆաթալի խանը: Որպես զորակայան չէր ընտրվի Ղարաչիմանը, որովհետեւ այն, գտնվելով Չավոնուր գետի ձախ մասում, անվտանգ տեղ չէր, հատկապես, որ Դավիթն արդեն հենակայան ուներ Հալիծորը: Ու նաեւ, խելքի մոտիկ բան չէ, որ Պապ զորավարը Ձեւուի վրա գնալու համար Կենաուզից անցներ խոր թիկունք: Նա կգար Կալերի կողմից կամ Տաշտունի լեռնանցքով: Ուրեմն, կա մի այլ Ղարաչիման, որն ավելի նպաստավոր է Դավիթ Բեկի զորքերի այս տեղաշարժի նկարագրության համար:

Բաֆֆին համոզված է, որ Ձեւու բերդը Բաղաբերդից մեկ մղոն հարավ էր եւ կրկնում է Տեր-Ավետիքի նկարագրությունը՝ բարձրաբերձ պարիսպներով, անառիկ են: Տարակուսելին այն է, որ Ձեւու բերդը չի գտնվել բարձունքի վրա, ինչպես սովորաբար՝ հին այսօրյաց ամրոցները: Ու նաեւ՝ բացառիկ երեւույթ է, որ նման երկու հզորագույն բերդեր գտնվեն միմյանց այդքան մոտ: Ձեւու բերդի ներկայիս տարածքում՝ միաթռչք կամրջից վեր, նշմարվում են հին բնակավայրի հետքեր, միջնադարից հզորագույն ամրոց այնտեղ փնտրել՝ անարդյունք է: Մեր այս ենթադրության օգտին է Ստեփանի պատումի մի հաղորդումը. «Բայց միայն ի կողմանս Փուխուրուբա սարին ժողովեցան թուրքն ի Ձեւու բերդն»:

Ակներեւ է, որ բերդը սարի կողմերում էր: Եթե դա իսկապես լիներ Կամոյի խորովածանոցի վայրինը, Ստեփանն ավելի բնորոշ տեղադրություն կնշեր. ասենք՝ Բաղաբերդի կողմերում, Գեղիի գետաբերանում: Բայց առավել տարակուսելին «Փուխուրուտի սարի կողմերում» արտահայտությունն է: Ձեւուն գետի ձախ կողմում է, իսկ Փուխուրուտը՝ աջ, նրանից գրեթե 20 կմ հեռավորության վրա: Ինչպե՞ս կարող է Ձեւուն գտնվել Փուխուրուտի սարի կողմերում, երբ վերջինս Արեւիքի (Մեղրու) լեռնաշղթայի ճյուղավորումներից մեկն է:

Եթե բերդի այս տեղադրությունը նշած լիներ տեղանքին անծանոթ մեկը, թվում է, կպատշաճի: Հիրավի, Կենտիկումն ապրող վարդապետի համար Ձեւուն Փուխուրուտի սարի կողմերում է: Բայց խնդրի առարկայի մեջ խոսքը Ստեփան զորավարին է վերաբերում, որ Դավիթ Բեկից երեք մելիքի իշխանու-

թյուն էր ստացել եւ գերազանց գիտեր Ղափան երկրի աշխարհագրությունը:

Չորօրինակ, նա իր պատումի մեջ տարբեր առիթներով թվարկում է ծորահովիտների գյուղերը, նշում սարանուններ, երեւելի արանց՝ որտեղացի լինելը: Արդ, Ձեւուի նրա տեղանունը՝ Փուխուրուտի մոտերքում, չպետք է կասկածի առնել:

Կարող էր Փուխուրուտը լինել նշված գետերի կցվանքատեղում կամ մերձակայքում՝ սարավանջերին: Այսպիսի հակափաստարկ չկա: Փուխուրուտը Ստ.Օրբելյանի՝ Չորքում հիշատակած Բեխորոտ գյուղն է, ունի առ այսօր կանգուն եկեղեցի եւ հավաստի պատմություն: Դավիթ Բեկի մահվանից ութ տարի հետո՝ 1736թ., այս գյուղով իր անցումը հավաստել է Աբրահամ Կրետացի կաթողիկոսը: Այս գյուղում մի ավանդազուրկ է պահպանվել, ըստ որի՝ Դավիթ Բեկին, բոլոր գյուղերի համեմատ, ամենաշատ ձիավորը Փուխուրուտն է տվել:

Այս դատողությունների ետնախորքի վրա, պարզ է, Ձեւու բերդը պետք է փնտրել Փուխուրուտի (Փուխուրուտի սարի) կողմերում: Կիմական արձանագրություններ տակավին հայտնաբերված չեն: Բայց այստեղ խոսվածքում այսօր էլ շրջանառվում են Ղարաչիման, Թորքի Չօլան եւ Հայի Չօլան, Սղմախատեղ, Շենատեղ հանդանունները:

Չորքում գիտեն Գյուլջիկի (Ճահճասար, Փուխուրուտի կողմերում) ճակատամարտի մասին՝ ընդդեմ թուրքերի, դավիթբեկյան ժամանակներում, որին մասնակցեցին շրջակա գյուղերի բնակիչները: Դա, ինչ խոսք, կարող է Ձեւու բերդի առնան կերպափոխված արձագանքը լինել:

### Գրիհամ

Ստ.Օրբելյանի ժամանակներում (13-րդ դար), իր իսկ հավաստմամբ, Սյունիքի Կովսական գավառը սկսել էր կոչվել Գրիհամ: Սա, անշուշտ, գավառի գլխավոր բերդի անվանումից էր: Պատմիչը Գ գլխուն «մարդկանց մեքենայությունների հանդեպ անասան» բերդերի մեջ թվարկում է նաեւ Գրիհամը:

1103թ. թուրքերը գրավեցին մայրաքաղաք Կապանը: Օրբելյանի պատումից երեւում է, որ թշնամին Կապանին մոտեցել է Կապանա գետի հոսանքն ի վեր: Նա գետի վերին հոսանքի շրջա-

## Բանավիճական հոդվածներ եւ քննախոսություն

նով չէր կարող եկած լինել, որովհետեւ Բաղաբերդը, Գեղին, Կաթավաբերդը, Շլորուտը, Կարծեւանը, Մեղրին անվճար էին մնացել՝ Գրիգոր թագավորի իշխանության ներքո (զվ. ԿԱ): Այս թվարկման մեջ է նաեւ Գրիհամը: Եվ ըստ այդմ կարող ենք կանխակալ կարծիք ստեղծել, որ Գրիհամը չէր կարող գտնվել Կապան գետի (Ողջի գետ) միջին կամ ստորին հոսանքի շրջանում:

Մի թեական ենթադրությամբ Գրիհամը նույնացվել է Կապանա խոսվածքի «Գյիրվին քար» տեղանվան հետ եւ ենթադրաբար տեղորոշվել գետի ձախ կողմում, թուրքահունչ Շարիփլուի դիմաց: Դա հավանական չէ՝ այնքանով, որքանով գավառի գլխավոր բերդը չի կարող գավառի սահմանից դուրս լինել: Կապան գետը Կովսականի եւ Քաշունիքի սահմանն էր, թեպետ պատմական կարճ ժամանակով Կովսական-Գրիհամը տարածքներ է ներառել եւ Բաղք-Քաշունիքից, եւ Արեւիք-Մեղրիից: Պրոֆեսոր Վ.Առաքելյանը Դ.Սեբաստացու աշխատության թարգմանության ժանոթագրություն 42-ում Կովսականը դրել է Մեղրու շրջանում, որին չի կարելի համաձայնել: Կովսականի (որոշ ձեռագրերում՝ Կուսական, Կոսական) մեջ է Խուստուփ դիցալեռը, ինչպես նաեւ՝ ներկայիս Կապան քաղաքի Ողջի գետի աջափնյակը:

Պարսկատիրության ժամանակներում այս գավառը կոչվում էր Չավնդուր: Բայց այսպես՝ մեծամասամբ Ողջի գետին (Չավնդուր գետ) հարող շրջանը: Դավիթբեկյանները գիտեին նաեւ Գրիհամը (Գուրհամի կամ Գուրամի երկիր) որպես գավառ: Ուրեմն, Չավնդուրը եւ Գրիհամը հիմնավորք Կովսականի մեջ էին մտնում: Դա առավել հավաստի է Ստեփան Շահունյանի պատմմի մեջ. Դավիթ Բեկը Ծավից զորքով գալիս է Լիճք եւ Ղոզղոզ գետի ձորում ճակատում թշնամում: Մարտի հետագա ընթացքը թողնելով իր զորապետերին, դառնում է Գալիձոր, եւ թշնամին ռիսկի է դիմում: «Եւ ի յառաւօտուն պահու, նոքա իբրեւ տեսին թէ Տաւութ Պէկն ոչ է անդ, եւ ոչ ուստեք էր նոցա այնուհետեւ երկիրդ, անցին ի Գուրամ, եւ եկին աւար հարկանելով գլողմանա Գուրամու մինչեւ ի Մեղրայ»:

Այսբանից պետք է հետեւություն անել, որ Գուրամ-Գրիհամը չէր կարող «Գյիրվին քարի» կողմում լինել: Այս ենթադրությունը հաստատվում է Ստե-

փանի հետագա խոսքի մեջ: Գուրամի ասպատակությունից ահաբեկված բնակիչները փախել էին Չավնդուր: Պարզ է՝ նրանք դեպի Մեղրի չէին փախչի, որովհետեւ, ինչպես ասվեց, ասպատակողները Գուրամից Մեղրի էին անցել:

Մեղրիում ասպատակողներին հասնում է Բայանդուր զորապետը, ջարդ տալիս ու ձերբակալում երեւելիներին: «Եւ շինականքն Գուրհամայ դարձան գնացին եւ բնակեցան իւրաքանչիւր ի տունս իւրանց, որք վասն ահի հենիցն անցեալք էին յերկիրն Չավնդուր»:

Այսպիսով, Գրիհամը գտնվում էր Չավնդուրի եւ Մեղրու (Կենավուզ) միջեւ կամ Չավնդուրից այն կողմ՝ դեպի Արաքս: Գրիհամի բերդն էլ պետք է որոնել այդ կողմերում:

**ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Այունյաց աշխարհ», N26, 2002թ.



## Նկատառումներ «Այունիքի պատմություն» գրքի վերաբերյալ

### Քննախոսություն

Այունյաց պատմությունը հետազոտողների մեջ, Ստ.Օրբելյանից (13-րդ դար), Ղուկաս Սեբաստացուց (18-րդ դար) եւ Ղ.Ալիշանից (19-րդ դար) հետո ամենաերեւելին, անշուշտ, պրոֆեսոր Գր.Գրիգորյանն է՝ մեր բազմաբեղուն ժամանակակիցը: Վերջերս նա եւ համահեղինակ Ս.Հախվերդյանը հրապարակ հանեցին «Այունիքի պատմություն» շքեղազարդ բուհական համառոտ դասընթացը: Մտահղացումն ինքնին ողջունելի է եւ, հարկավ ուսանողներին դասընթացը պետք էր անաչք ռունեն իրենց պատմությամբ հետաքրքրվող սյունեցիները:

Թեյի սեղանի շուրջ մեր պրոֆե-

սորը քաղցրաբառ մակագրությամբ մի օրինակը մեղուցյալիս է նվիրել: Եվ զի ճշմարտությունը փիլիսոփան գերադասել է իր աշակերտ Պղատոնից, պիտի խոստովանեն, որ ընթերցելիս համակվեցի դառնությամբ: Գրքում սպրդել են հայագիտական մեղանշումներ, իրարամերժ դատողություններ, ժամանակագրական անհամապատասխանություններ եւ այլ վրիպումներ: Հույժ անբարեխիղճ է գտնվել սրբագրիչը: Չարմանք է պատճառում հղումը, թե՛ ձեռագիրն անցել է մի քանի տիտղոսավոր գիտնականների ձեռքի տակով: Իմ պնդումները հիմնավորելու եւ հեղինակներին վերակողմնորոշելու նպատակով պատրաստեցի սույն հոդվածաշարը:

1. Աստվածաշունչը թարգմանվել է Շաղատում

Սա հեղինակների ժանրակշիռ եզրահանգումներից մեկն է (էջ 233):

Ցավն այն է, որ նրանք կամայակաւորեն շրջանցել են ոչ միայն Կորյունի ու Խորենացու հավաստումները, այլ նաեւ՝ ետիմների զարգացած քննական տեսությունը՝ սուրբ գրքի թարգմանության տեղի, ժամանակի եւ մյուս հանգամանքների վերաբերյալ:

Կորյուն Սքանչելին իր երկի Ը գլխում խոսելով Մեարոպի՝ Սամոսատ քաղաքում մեծարվելու մասին՝ շարունակում է. «Եվ հենց այստեղ... ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից, եւ երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական տնից: Եվ սկսեց թարգմանել սուրբ գիրքը՝ նախ Սողոմոնի առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության... »:

Այս ամենը հաստատում է նաեւ Խորենացին. «Եվ իսկույն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար սկսելով Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը եւ նոր կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի» (Խոր., Գ, ԺԳ):

Բնականաբար, մշակութային գլուխգործոցի թարգմանությունը չէր կարելի բավարար համարել մի ձեռնարկումով: Եվ դրան նվիրաբերվում է մեր մյուս հսկան՝ Սահակ Պարթեւ կաթողիկոսը: Այս իրողությունն էլ, անշուշտ, հավաստված է Ոսկեդարի պատմիչների կողմից: Երբ Մեարոպն ավարտում է Աղվանքի լուսավորությունը, վերադառնում է Նոր Քաղաք (իմա՝ Վաղարշապատ),

## Բանավիճական հողվածներ և քննախոսություն

«Եւ տեսնում է, որ Մեծն Սահակը զբաղված է սուրբ գրքի թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնվելու պատճառով» (Խոր., ԺԳ):

Վերոբերյալ մեջբերումներից մի՞թե դժվար է հետեւցնել, որ Աստվածաշնչի թարգմանությունը մայրաքաղաքի բարձր մտավորականության առաքելությունն էր: Թարգմանությունը մաս առ մաս ստուգվում էր հունարեն և ասորերեն բնագրերի համադրմամբ: Դժվարությունները հաղթահարելու նպատակով Սահակն ու Մեսրոպը Բյուզանդիոն են գործուղում Զովհանիս, Արծանիս, Զովսեփիս, Եզնիկիս, Ղեւոնդիս, Կորյունիս, որպէսզի հմտանան թարգմանչական գործի մեջ: Սրանցից ոչ մեկը այլևէ չէր: Եփեսոսի ժողովից հետո «...եկան մեր թարգմանիչները, որոնց անուններն առաջուց հիշատակել ենք, և գտան Մեծ Սահակին ու Մեսրոպին Տարոնի Աշտիշատում, հանձնեցին թղթերը ու Եփեսոսի ժողովի կանոնները, սամանված վեց կանոն, այլև Ս.գրքի ստույգ օրինակները» (Խոր., ԿԱ):

Արդ, դժվար թե այս ամենի մեջ դույզմ-իմչ նպաստ գտնվի՝ Աստվածաշնչի թարգմանությունը Շաղատի վարդապետարանին վերագրելու համար:

Այնուհանդերձ, գայթակղության սողանք կա այդ նախագահ, դարակազմիկ թարգմանությունը մեր նախնյաց (այլույց) շնորհներին վերագրելու առումով, և դա է բորբոքել նորընծա պատմության հեղինակների երեւակայությունը:

Ետիններից մեր պատմիչ Ստ.Օրբեյանը՝ այլույց հող ու ջրին սիրահարված սրբասունդ մետրոպոլիտը, մոտ ինը դար հետո գրել է. «Չայոց մեջ նախաթո վարդապետությունը և գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին սուրբ Սահակի և երանելի վարդապետ Մեսրոպի կողմից» (Օրբ., Է):

Օրբեյանի խոսքն, այո, Սյունյաց թեմին է վերաբերում: Նկատված է, որ իր աշխատության մեջ մեր պատմիչն այրվում է Սյունյաց աթոռը հայ եկեղեցու կազմում նախաթո ու առաջատար տեսնելու հրդեհով, և ըստ այդմ նրա մոտ գնահատումները երբեմնակի գեղարվեստական չափանիշներ ունեն: Որ Ներսես Մեծը նախապատվություն էր տվել Սյունյաց աթոռին, նա կրկնում է մի

քանի անգամ և խոստովանում, որ «Մեր Չայոց աշխարհում երկար ժամանակներից հետո եղան նաև վիճաբանություններ Սյունյաց գահերեցության վերաբերյալ...» (զլ. է):

Մետրոպոլիտության կարգավիճակը, ըստ Օրբեյանի, Սյունյաց թեմում վերականգնվել է ոչ մեկ անգամ: Վերջին անգամ՝ իր իսկ ջանքերով:

Օրբեյանի փաստարկը՝ գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն Սյունիքի եպիսկոպոսությանը վերագրելու վերաբերյալ, ուղղակի չպետք է ընկալել: Եթե դա Աստվածաշնչի թարգմանության հետ աղերս ունենար, նախկիններն ակնարկած կլինեին: Ավելին, ինքն ուղղակի կասեր: Նա, որ ամեն մանրամասն մեջ է բերում ի նպաստ իր հայրենի երկրամասի շքեղաշուք պատմության, մի՞թե կշռանցեր սուրբ գրքի՝ տեղում թարգմանված լինելու գորեղագույն փաստը:

Չեղինակները գրում են, որ Օրբեյանի հաղորդածը լրացնում է համահեղինակ Գր.Գրիգորյանը. «Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը Սյունյաց (Շաղատի) վարդապետարանին վստահեցին Ս. գրքի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանութեանց»» (էջ 63):

Ինչպես կարելի է հասկանալ, Սյունիքի պատմության համար այս բացառիկ եզրահանգումն հարգարժան պրոֆեսորն արել է ինձ անհայտ՝ իր մի այլ աշխատության մեջ, որին, անշուշտ, վերապահությամբ պետք է մոտենալ: Կորյունի մի նկարագրությունից երևում է, որ գրերի գյուտի ժամանակներում Սյունիքի թարգմանչաց դպրոցը տակավին չէր կայացել. «Մաշտոցը... պտտեց, վերահասու եղավ Սյունիքի բոլոր կողմերում: Եվ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, ավելի զազանամիտ, վայրենի, ճիվաղաբարո կողմերինը, և այնքան հոգ տարավ, դաստիարակի պես կրթեց, խրատեց, որ մինչեւ անգամ հենց այն վայրենիներից կարգեցին Սյունիքի եկեղեցու համար եպիսկոպոս-տեսուչ, որի անունն էր Անանիաս, մի սուրբ ու երեւելի, եկեղեցու ժառանգավորների համար հայրաբարո մարդ» (Կոր., ԺԴ):

Կասկած չկա, որ այս Անանիասը մեր հինգերորդարյան Անանիա Թարգմանիչն է, Սյունյաց թեմի առաջնորդը (ըստ Գր.Գրիգորյանի՝ 414 թվականից), որին,

ի թիվս շատերի, Ավարայրից հետո պարսից արքան դատաստանի կանչեց Տիգրան:

Թարգմանիչ պատվանունը, պարզ է, մեր եպիսկոպոսին հետո են վերագրել: Սակայն հետաքրքիրն այն է, որ թարգմանիչ էր կարգված գրերի գյուտից առաջ: Այս մասին հստակ ասում է Օրբեյանը ԺԶ գլխում:

Ինչպե՞ս հասկանալ՝ թարգմանիչ գրերի գյուտից առաջ:

Բանասիրությանը հայտնի է, որ Ոսկեդարին նախորդող ժամանակաշրջանում թարգմանիչ բառն այլ նշանակություն է ունեցել: Այն մերօրյա ուղղակի իմաստով չէին հասկանում, որ է՝ խոսքը մի լեզվից մեկ այլ լեզվով համարժեք արտահայտողը: Քրիստոնեական դարձից հետո այն առավել ըմբռնել են մեկնիչ իմաստով: «Թարգմանիչը սուրբ գրքի մեկնիչն էր» (Աճ., Չայոց գրերը, Բ, ԺԱ): Երբ գրակարդացն ասորերեն կամ հունարեն հատվածներ էր կարդում սուրբ գրքից, բեմ էր ելնում թարգմանիչը և մայրենի լեզվով բացատրություններ տալիս: Պարզ է, որ նա ազատ էր խոսքի մեջ և հեռու էր բառեզրությանից ճշգրիտ թարգմանությունից: Գրերի գյուտից հետո, երբ աննախընթաց գրական շարժում ծավալվեց, թարգմանչությունը վերառվեց նոր նշանակությամբ: Եվ թարգմանիչ բառը հաստատվեց այլ նշանակությամբ, ինչ պատկերացնում են նաև մեր ժամանակներում:

Օրբեյանը, նախնյաց պատմությունը փառահեղ տեսնելու սիրույն, թարգմանչաց մենաշնորհը այլույց է վերագրել՝ տեղյակ լինելով հայրաբանության հայրենի կարկառուն ներկայացուցիչներին՝ Պետրոս, Ստեփանոս, Մաթուսաղա եւն, որոնք, ինչպես հայտնի է, սուրբ գրքի անգերագանցելի մեկնիչներ են: Այս ավանդույթը շարունակվել է նաև Սյունիքի ետօրբեյանական ժամանակներում:

Չանրահայտ է, որ սահակ-մեսրոպյան թարգմանական դպրոցն իր կատարելությամբ առնչուտ մնաց անգերագանցելի: Այն թարգմանությունները, որոնց գլուխ երկու սրբերն էին կանգնած, կամ իրենց ձեռամբ էր, կազմում են ոսկեղենիկ գրաբարի հենքը: Աստվածաշունչը, հարկավ, միակ կատարյալ թարգմանությունը չէր: Բայց «Թագուհի թարգմանութեանց» գնահատականը ոչ թե տրվել է հայ մատենագրական ժա-

## Բանավիճական հոդվածներ եւ ֆննախոսություն

ռանգության վերաբերմամբ, ինչպես կարելի է մակաբերել հեղինակների շարադրանքից, այլ՝ համաշխարհային: Այդ գնահատականի հեղինակը եվրոպացի հայագետ Լակրոզն է:

Որ հեղինակները մերօրյա հրատարակչական չափանիշների ետնախորքի վրա են պատկերացրել ոսկեդարյա գլուխգործոցը, երեւում է նրանց կողմից տրված պարզունակ մի գնահատականից. «Դա հայերեն գրերով գրված առաջին գիրքն է, որի վրա հենվեց հայ գրականության հետագայում կառուցված շենքը» (էջ 63):

Աստվածաշունչը 5-րդ դարում չէր կարող մերօրյա ընկալմամբ գիրք համարվել, այսինքն՝ միահատորյակ: Գիրք ասելով հոգնակին նկատի ունեին, այսինքն՝ մատենաշար, ժողովածու: Չէ՞ որ այն բաղկացած է 66 մասից: Առաջին՝ փութանակի թարգմանության համար Կորյունը թվարկել է Յոզանայանը, Մարգարեությունները, Ավետարանը, Պողոսի եւ մյուս առաքյալների թղթերը: Ցայդ էլ, Մեսրոպի ձեռքով թարգմանվել էր Առակաց գիրքը: Անշուշտ, կպատշաճեր, եթե հեղինակները հայերեն գրերով գրված առաջին գիրք համարեին ոչ թե Աստվածաշունչը, այլ՝ Առակաց գիրքը:

Չհիմնավորելով կամ չվկայակոչելով Սյունիքի թարգմանչական դպրոցի գոյությունն ու համբավը 5-րդ դարի սկզբին եւ հատկապես Աստվածաշունչի՝ Շաղատում թարգմանված լինելը, առ ի չգոյե լավագույնի, մեր հեղինակները մատնանշում են հորենացուն, ըստ որի՝ եվսեբիոսի պատմությունը նրա ժամանակներում կարելի էր գտնել Սյունիքում (հտր., Բ, Ժ): Այս փաստին անդրադարձել է Զր.Աճառյանը. «Ե դարի երեք թարգմանիչների ձեռքով թարգմանված ունենք եվսեբիոսի Եկեղեցական պատմությունը, Քրոնիկոն..., որոնցից առաջինն էլ Մեսրոպն է թարգմանել տվել: Եթե մեր մատենագրության մասնախայրերը ջանք եւ գործ են դրել այսպիսի երկրորդական ու երրորդական գրքեր թարգմանելու կամ թարգմանել տալու, ինչպես՝ կարող էին անտես անել կամ կիսատ թողնել Աստվածաշունչը, որ այն ժամանակի հայացքներով՝ գրքերի գիրքն էր» (էջ 257):

«Սյունիքի պատմություն» դասընթացը չի շահում Աստվածաշունչի շաղատյան մտացածին թարգմանության պնդումից: Բանասիրությանը

հայտնի են իրատեսական վարկածներ՝ Մաշտոցն այբուբենը մտահղացել է Սյունիքում, վրաց գրերը ձեւել է մեզանում: Մեսրոպ Մաշտոց պատվանունն էլ սյունեցիք են տվել: Իսկ դրանք հեղինակները շրջանցել են:

1933թ. լույս տեսած «Պատմութիւն հայ մատենագրութեան» աշխատության մեջ Ե.Դուրյանը, ենթադրելով, որ Սյունյաց վարդապետարանը գտնվել է Շաղատում, գրել է. «Դեպի հույն լեզուն տրված ավանդական այդ միտումը զակատում մը եղավ մանավանդ Ջ դարում, ուր հայերենը քերականորեն ալ հունարենի վրա ձեւված լեզվի մը նմանությունը առավ, մանավորապես Սյունյաց վարդապետարանի շնորհիվ: Ընդամենն մա մեջբերումներ է արել Ստեփանոս Սյունեցու «Պատմութիւն Սիւնեաց» գրքից: Զուգաբան դպրոցի կենտրոնը Սյունյաց վարդապետարանն է համարել Ա.Ալպոյաճյանը:

2. Ժամանակագրական սայթաքումներ

Հեղինակների ջանադիր աշխատանքի արդյունքը լինելով՝ «Սյունիքի պատմություն» համառոտ դասընթացն իր հորինվածքով հավակնում է Սյունյաց աշխարհի պատմագիտական առձեռն հանրագիտարանի գնահատականին: Բայց այդպիսին լինելու համար պատշաճ խմբագրում է անհրաժեշտ, որովհետեւ զգալի թիվ են կազմում ժամանակագրական անհամապատասխանությունները: Նշենք դրանցից մի քանիսը:

Ա. 387թ. Շապուհի մոտ ժամանած Սյունյաց իշխան Անդոկին պարսից արքան հատկացնում է 14-րդ բարձը (էջ 40): Սակայն, ներառյալ այդ ժամանակը, 378-399թթ. Սյունիքի տեր է հիշատակված նրա որդի Բաբիկը (էջ 45):

Բ. Բաբիկի մահվան բոթը պարսից արքունիք է հասցնում սենեկապետ Սամը եւ չարախոսում Վասակին: Վերջինս ընդդիմանում է: Եվ ի հեճուկս դրա, արքան Սյունիքի տեր է նշանակում քու Սամ Գնթունուն, որն իշխում է ընդամենը մեկ տարի: Նրան հաջորդում է Վասակի հորեղբայր Վաղինակը (էջ 45):

Այսքանից հետո էջ 250-ում ժամանակագրությունն այլ կերպ է ցույց տրված.

Բաբիկ Սյունի 378-399,  
Վաղինակ Սյունի 400-409,

Սամ Գնթունի 409-410:

Գ. Վկայակոչելով պատմիչ Օրբե-

լյանին՝ հեղինակները գրում են. «554թ. Դվինում հայկական նոր տոմարի ընդունման առիթով... Սյունյաց իշխան Միիր-Արտաշիրը եւ հոգեւոր առաջնորդ Վրթանեսը, միաբանելով ժողովրդին, ուղարկեցին իրենց գիտուն վարդապետին... » (էջ 52): Բայց Միիր-Արտաշիրին Սյունիքի տեր են համարել 565 թվականից, իսկ Վրթանեսին հոգեւոր առաջնորդ՝ 559 թվականից:

Դ. Գրքի 7-րդ գլխում՝ «Սյունիքի քաղաքական եւ հոգեւոր կյանքը 6-9-րդ դարերում» (պետք է լինի 7-9-րդ -Ռ.Է.), կարդում ենք. «Մաթուսաղայի մահից հետո (643թ.) Սյունյաց մետրոպոլիտոսյան աթոռն «ուր տարի մնաց թափուր»»: Քիչ հետո (էջ 56) Մաթուսաղան այդ թվականին վախճանված չէ. «Սյունյաց հոգեւոր թեմը 18 տարի (634-652թթ.) ղեկավարել է Մաթուսաղա Քերթողը... »:

Ե. Քուրդոն Սյունյաց իշխան է հիշված 8-րդ դարում (էջ 54), բայց նրա կառավարումը դրված է 681-699թթ. (էջ 251):

Զ. Նույն անձը էջ 57-ում կոչված է Գրիգոր 2-րդ Սուփան, էջ 251-ում՝ Գրիգոր 4-րդ Սուփան (համարը պետք է հղել Գրիգորին, Սուփանը՝ փակագծերում):

Է. Ե՞րբ է Սյունիքի հոգեւոր կենտրոնը Շաղատից տեղափոխվել Տաթև: Այս հարցին Օրբեյանը չի պատասխանել. «Ես չիմացա» (Օրբ., ԼԹ): Մեր հեղինակների հետազոտությունն էլ, կարծես, հաջողությամբ չի պասկվել: Նրանք կարելի են համարել երկակի պատասխան տալ: Էջ 58-ում «Դա տեղի է ունեցել 839թ. Թեոդորոս եպիսկոպոսի ժամանակ (838-846թթ.)», սակայն էջ 131-ում՝ «839թ. Դավիթ Սյունյաց եպիսկոպոսը գահակալ իշխանների համաձայնությամբ նահանգի հոգեւոր կենտրոնը Շաղատից տեղափոխեց Տաթև»: Օրբեյանը բառացի մեջ է բերել այս Տեր-Դավթի մի կտակը՝ գրված 839թ., Սյունյաց իշխան Փիլիպեից ազարակներ ստանալու վերաբերյալ (գլ. ԼԹ): Բայց հեղինակներն այս եպիսկոպոսի թեմակալությունը դրել են 854-871թթ. (էջ 253): Նաեւ Տեր-Դավթից հիշատակագրություն է թողել Փիլիպե իշխանի մահվան տարում՝ 848թ., որն ամբողջությամբ մեջ է բերել պատմիչը: Ի դեպ, պրոֆեսոր Ա.Ա.Աբրահամյանի հաշվարկով Տեր-Դավթին աթոռակալել է 840-857թթ.:

Ը. Զովհաննես Ե մետրոպոլիտի, Զակար Ա Ապստամբի, Վահան Սյունեցու,

Բանավիճական հողվածներ և քննախոսություն

Սմբատ Բ թագավորի գահակալման տարիները ներկայացված են խառնաշփոթ՝ միմյանց հակասող ժամանակագրություններով: Հեղինակները լռելյայն չըջանցել են Օրբելյանի ընդարձակ պատմությունը Մուշե և Երիցակ եպիսկոպոսների մասին ժամանակագրության առումով: Ընդունելով, որ Մուշե կաթողիկոսին հրավիրել է իշխանուհի Սահակիան, անտես են առել Երիցակի օժուկը՝ Մուշե Սյունեցուց հետո: Այստեղ ակնհայտ է գիտակցված խուսանավունը, որովհետև Մուշե կաթողիկոսը գահակալել է 526-534թթ., իսկ իրենք Երիցակին դրել են 517-518թթ.:

Մուշե կաթողիկոսի այցը Սյունիք Օրբելյանը նկարագրել է գեղարվեստական ոճով, կարեւորել է անգամ վերնագիրը՝ «Տեր Երիցակի սքանչելի օժան մասին»: Քիչ հավանական է, որ այս հատվածում պատմիչը կոպիտ ժամանակավրիպություն թույլ տված լինի կաթողիկոսի, Երիցակի և Սահակիայի համաժամանակակից լինելու իմաստով:

Թ. Հակասությունների մի «մեղմ տեսակ» կա, որը վիճարկելի է առաջին հերթին ուսանող ընթերցողի համար: Հեղինակները պնդում են, որ մախախորհրդային ժամանակներում «Աղրբեջան» կամ «աղրբեջանցի» հասկացություն չի եղել (գլ. 29): Դա այն դեպքում, երբ արաբական աղբյուրները Ատրպատականը հաճախակի են յուրովի կոչել Աղրբեջան, ինչպես Վասպուրական-Բասիլորաջան, Սիսական-Սիսաջան:

Հետևողական չլինելով իրենց պնդումին՝ նրանք նախապես (գլ.13) գրել են. «1405թ. Կարա-կոյունլու ցեղի առաջնորդ Յուսուֆն իրեն ենթարկեց Հայաստանը, Աղրբեջանը և այլ երկրներ...»: Կամ՝ ճորտատիրական հասարակարգ Սյունիքում երբեք գոյություն չի ունեցել (էջ 84): Իսկ էջ 108-ում գրել են. «պատմական աղբյուրները վկայում են, որ Տաթևի պարոն-տեր մեկը իր իշխանության սահմաններում ուներ «բազում ճորտս այլազգիս»

3. Աղավաղումներ, սխալ ընկալումներ

«Սյունիքի պատմություն» բուհական համառոտ դասընթացում տեղ են գտել մեջբերումների անհարկի խմբագրման, աղավաղման ու սխալ ընկալման դեպքեր: Այսպես, առանց հղում տալու, Խորենացուց առել են, իբր, հետևյալը. «Փնտրել տուր այս գիրքը

Գեղարքունիքում, Սյունյաց գավառում, և կարծում են, որ մինչև այժմ էլ պահվելիս կլինի նույն քաղաքում» (էջ 63): Այստեղից կարելի է հետեւցնել, թե, իբր, քաղաքը Գեղարքունիքն է կամ Սյունիքը, որն անհեթեթություն է: Մեջբերումը Պատմահոր գրքի Բ մասի Ժ գլխից է (տես), և այնտեղ խոսքը Եղեսիա քաղաքի մասին է, իսկ աղճատված մեջբերումն այլ բան է ասում:

Օրբելյանի բերած մի ավանդազրույցի համաձայն, երբ Օրբելյանները հաստատվել են Վիրքի Օրբեթում, այնտեղ վերանվանել են Օրբելիներ: Այս մասին հեղինակներն էջ 85-ում գրում են. «Ստ.Օրբելյանի կարծիքով՝ տոհմական այս վերանվանումը տեղի է ունեցել իրենից ավելի քան 1000 տարի առաջ՝ 216-252թթ. արանքում, Տրդատ Բ-ի օրոք»:

Բայց պատմիչի երկի 42 գլխից անհնար է այդ հետեւությանը հանգել: Այդ գլխում պատմիչը, նկարագրելով վրաց թագավորի նենգանտությունը՝ Օրբելյան տոհմի հիշատակը ջնջելու նպատակով, նշում է Փրկչ. 1177 թվականը: Եվ նա նկատի է ունեցել դրանից 1000 տարի առաջը, որը, բնականաբար, չէր պատշաճի Տրդատ Բ-ի ժամանակաշրջանին: Օրբելյանն այսպիսի թագավոր չգիտի:

Վերապահությամբ պետք է ընդունել հեղինակների «Հրկիզվեցին և ոչնչացվեցին այստեղ ամբարված ավելի քան 10000 ձեռագիր մատյաններ ու սրբություններ» հաղորդումին (էջ 78), որը վերաբերում է Բաղաբերդի կործանմանը: Այդ մասին Օրբելյանի սկզբնաղբյուրն այսպես է ասում. «Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցիր ու ցան եղան երկրի երեսին» (Օրբ., 4Ա):

Էջ 77-ում Սենեքերիմ թագավորին սպանող «չարաթույն գազանի» անունը նշված է Ելտկուզ, որը պատմիչը, հասկանալի պատճառով, չի նշել (գլ. ԾԹ): Անհրաժեշտ էր դա պարզաբանել, որ չվիթթվի ԿԱ գլխում և «Ողբ»-ում հիշատակված Ելտկուզ աթաբեկի հետ, որը մոտ 80 տարի հետո էր:

Մեջբերումներից մեկն ուղղակի աղմկահարույց է: Վրաց իշխանաց իշխանը Դավիթ Բեկին «իրավունք տվեց գնալու իր հայրենի աշխարհը՝ Կապան...» (էջ 185):

Ղուկաս Սեբաստացին այդպես չի գրել, նա չունի «իր հայրենի աշխար-

իը՝ Կապան» արտահայտությունը (տես Ա.Մարդյանի և Վ.Առաքելյանի թարգմանությունները): Ու նաև չի կարելի Ղափան անվան փոխարեն գրել Կապան, որովհետև դավիթբեկյան ժամանակներում Սյունիքը կոչվել է Ղափան, Ղափանի յոթնաբերդ գավառ: Ի դեպ, այս անունները հեղինակները պետք է հաստատեին 1-ին գլխում, Չանգեզուր անվան քննարկումից առաջ:

Էջ 186-ի «Ջորավարն իր առաջին ճակատամարտը տալիս է Շինուհայրից ոչ հեռու՝ Եռաբլրի սարահարթում, և հաղթում դարաչոռու ավազակաբարոցներին» տեղեկությունը պետք է համապատասխանեցնել վերջին ուսումնասիրությունների հետ (տես ՊԲՀ, 1990թ. համարները): Նույն էջում կարդում ենք. «Սեբաստացին գրում է, որ թշնամու զորքի թիվը 60000 էր, բայց դա չափազանցություն է»: Ահա Սեբաստացու գրածը. «Եւ նա էլ ընդ առաջ նոցա ի յուշեփեն, և ետես ի հեռուստ զգօրսն թշնամեաց զի էին իբրև վեշտասան հազար» (Սեբ., գլ.1): Վեշտասանը տասնվեց է և ոչ վաթսու, ինչպես ներկայացրել են հեղինակները:

Չգացվում է, որ հեղինակներն անուշադիր են գտնվել մոզեական ժամանակների աղբյուրներն օգտագործելիս: Էջ 208-ում խոսում են «հանքաքարից պատրաստված պայթուցիկ տակառների» մասին, մինչդեռ «10-էն մինչև 80 կիլո ծանրությամբ մետաղե տակառներ են ասոք» (Վ.Գեւորգյան, «Լեռնահասաստանի հերոսամարտը», էջ 32): Էջ 213-ում, առանց հղում տալու, դարձյալ աղմկահարույց տեղեկություն են տալիս. «1921թ. փետրվարի 21-ին Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն տեղի ունեցավ Նժդեհի՝ սպարապետ օժվելու հանդիսավոր արարողությունը»: Բայց Նժդեհի տարեց զինվորները մինչև վերջերս պատմում էին, որ դա տեղի է ունեցել Կավարտի եկեղեցուն: Տեղեկությունը երկու անգամ հավաստված է վերը նշված գրքում. «1920-ի օգոստոսի 25-ին Կալարտի մէջ կը հռչակուի Սիւնեաց սպարապետ» (էջ 13 և էջ 72): Վեց ամիս հետո՝ հեղինակների նշած 1921թ. փետրվարի 21-ին, Գորիսի եկեղեցուն դրոշի հանդիսավորությունն էր՝ Նժդեհին հանձնել ևն Հայկական եռագույնը՝ մակագրված:

Էջ 214-ում թվարկված են Լեռնահասաստանի կառավարության յոթ անդամ-

## Բանավիճական հողվածներ եւ ֆինախոսություն

ների անունները: Վարդան Գեւորգյանը ութն է նշում: Հեղինակները բաց են թողել հաղորդակցության նախարար Ա.Օհանջանյանի անունը:

Վերախմբագրման կարիք ունի գրքում զետեղված միակ քարտեզը (էջ 93): Թեպետ գրել են, թե «պատմական հին աղբյուրները Սյունիքի Չորք գավառում Հալիձոր տեղանունն չեն հիշատակում» (էջ 187), այնուհանդերձ Օրբելյանների գերիշխանության ժամանակներին հղված այս քարտեզում Կապանի մոտ Հալիձոր են նշանակել: Այդ ժամանակներում չեն հիշատակվել Ողջի գետ, Ձեւա, Քարուտ, Տանձեակ անուններ, սակայն նշանակված են քարտեզում. Երնջակ գավառը, որ հարեւանում էր Գողթնին եւ ձգվում մինչեւ Արաքսի փոքր (էջ 14), տեղանշված է Կապուտջուղից այս կողմ: Իսկ Երնջակի նշանավոր ամրոցը պատկերված է համանուն գետի ակունքների մոտ. պետք է լինի միջին հոսանքի շրջանում:

Վիճահարույց են պատմությունից հայտնի անձնանունների, մի շարք բառերի և հեղինակների կատարած փոփոխությունները: Օրինակ, գրում են Հոնանգուր (էջ 44), մինչդեռ Կաղանկատվացին ու Օրբելյանն այդ հսկային անվանում են Հոնագուր: Առանշահիկ տոհմանունը դարձրել են Առնաշխարհիկ (էջ 56), Կատրամիդեն Կատրամիդե (էջ 71), Ղուզանենց Թաղին էջ 186-ում հնչում է Թաղա Կուզանենցի, էջ 199-ում թյուրիմացություն է՝ Ալավերդի Խարլամպի Կոնդարով:

Ղափանի հանքատեր Խարլամպի Կոնդարովը յոթ եղբայրներից մեկն էր, եւ հին ղափանցիները նրան դիմում էին մակամունով՝ ուստա Ալավերդի, որ իր հետ բերել էր Պարսկաստանից: Չշարունակենք թվարկումը:

Նշենք, որ գրքում անճշտությունների մի մասը սպորդել է այն պատճառով, որ հեղինակները մեջբերումներն արել են պատմիչի եւ գրաբար, եւ աշխարհաբար երկերից (նախապատվությունը պետք է տալ աշխարհաբար թարգմանությանը): Այս դիտողության հետնախորքի վրա երեւում է հեղինակների տարանջատ գործելու կասկածը: Պրոֆեսոր Գրիգորյանի աշխատությունները մեծ մասամբ հենված են գրաբար հրատարակությունների վրա, եւ դրանք այս գրքի պարագայում օգտագործված են նույն հրատարակությունների աշխարհաբար

րի անհամակարգ համադրմամբ:

Հեղինակները, բարձր գնահատելով պատմիչ Օրբելյանի՝ գրքի վերջում զետեղած հարկացուցակը՝ հատկապես տեղանունների քննության առումով, իրենց գրքում նույնպես զետեղել են այն, սակայն սխալներով: Այսպես, պատմիչի նշած Տափյար գյուղանունը դարձրել են Տաճյար, Գուկականը՝ Գուկան, Կոմենը՝ Կոմեն, ճողքը՝ ճողք, Աժակը՝ Աժուկ, Փառավազը՝ Փառավազ եւ այլն:

Կան չափի միավորների սխալ գործածություններ՝ կվտ/ժ, մեգավատ, խ/մ եւ այլն: Անճշտություններ կան լեռնագագաթների նշված բարձրություններում (էջ 11): Թվահամարներով նշված հղումները երբեմն չեն համապատասխանում գրքի վերջում բերված ծանոթագրությունների ցանկին:

«Սյունեցիների կենցաղը, ուսեստը, տարազը, էթնիկական պատկերը» գլուխը տկար համապատասխանություն ունի գրքի հետապնդած խնդիրներին: Տարվելով հիմնականում Գորիսին վերաբերող նկարագրություններով՝ ապակողմնորոշման առիթ են տվել ընթերցողին: Այս գլխում հարկ չեն համարել անդրադառնալ մեծ սյունեցու՝ Ն.Աղոնցի, Ստ.Լիսիցյանի հետազոտություններին:

Ընթերցողը կարող է այն տպավորությունն ունենալ, թե սյունյաց «Տների մեծ մասը եղել է քարանձավային» (էջ 20): Չէ՞ որ այս բացառիկ առանձնահատկությունը Հաբանդին էր հատուկ:

Տեղեկություն տալով սյունեցիների ուսեստի մասին՝ շրջանցել են հիմնականը՝ լավաշը, կաթնամթերքը եւ մսեղենը: Փոխարենը սյունեցիներն ուստում են... կլորած պենջար (°), պոլի, մտիտեղ, ծոպաշար, տոպ, դարավաշ, կծղոկ, շիրիջով (°) թխված հաց, իծի կոթ, զռա, կարտոֆիլով տոլմա, ձիթօրան (°), դլավ, պղկաթան եւ այլն, որոնք բարբառային՝ շատերի համար անհասկանալի եւ առանձին գյուղերում գործածվող բառեր են: Հեղինակների պարտքն էր ըստ հայբուսակի գրել գրական հայերենով՝ փակագծերում դնելով բարբառայինը:

Մեղրու թզի եւ նռան համբավի փոխարեն նշել են «Գորիսի ճխթթոն», «Քարահունջի օղին», «Կապանի գխաշուն» (°): Ըստ հեղինակների (հավանաբար 2-րդ), «Ամենաբաղցր լոբին լինում է Տաթեւում եւ շրջակա գյուղերում»:

Խոսք չկա ընկույզից, պնդուկից, լտուտից, կծոխուրից, սերկելիլից պատրաստվող ուսեստների մասին, որոնք ավելի բնորոշ են սյունեցիներին:

Լավ է, որ թեական համարվող խնդիրների վերաբերյալ հեղինակները որոշ դեպքերում տեղ են տվել բազմակարծությանը: Օրինակ, բերված են Դավիթ Բեկի մահվան երկու վարկած, անաչառ քննել են Խորենացու Կոռնիձորում ծնված լինելու տեսակետը, վիճարկել են պատմական որոշ հետազոտությունների հեղինակային պատկանելության խնդիրներ եւ այլն: Սակայն նույնը չի կարելի ասել բառագրության ստուգաբանության մասին: Այսպես, հին Կապանի Ջիտաթաղը համարում են ջիտուների թաղ (էջ 21), սակայն չեն նշում մի այլ մեկնաբանություն՝ պղնձագործների լաջվարդ (պիլվ. ջիտա) թափոնների թաղամաս: Կովսական անունը կոսքաշ ցեղանունից դնելու փոխարեն (Ս.Ումառյան) ստուգաբանել են կով արմատով եւ դարձրել կովերի արոտավայր կով-ս-ական: Ըստ այդմ կարելի՞ է ամեն արոտավայր էլ Կովսական կոչել: Հիմնավորել է պետք: Եթե ստուգաբանությունն այդպես դյուրին լինի, բուսական բառն էլ կարելի կլինի ստուգաբանել... բուերի արոտավայր:

Գրքում իրենց գործածման նշանակությամբ կասկածելի են նորահնար մի շարք բառեր՝ ճգնազգյաց, բրուտագործ, մակաղանոց, շփոտ, չաղաթերեն եւ այլն:

**ՌՈՒԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
«Այունյաց աշխարհ», 2002թ., N21,  
N22, N23



# Էջանանցին՝ իր Ժամանակակիցների մասին



## Ես քո համեսպ մշակն եմ

**Ա**խ, մտավորականություն, մտավորականություն... Այսօր լեզուդ համարացել է, ու կյանքը կարոտ ունի քեզ: Գիտես, դու գիտես ամեն ինչ, նույնիսկ նոր կյանքի ճառագման հավատքը ունես: Դու ինքդ պետք է


վեր կենաս արքային զորավիզ: Միտք եմ անում, թե նախագահի թեկնածուն ո՞վ է... Այն մարդն է, որ մեռած ասորերենով վիճում է բելգիացի հայագետի հետ, կարդում եւ թարգմանում է Ագաթանգեղյա պատմությունը, ասում է, որ Տրդատ Արքան եւ Գրիգոր Լուսավորիչը հորեղբոր տղաներ են... Այդ մարդը Լեւոն Տեր-Պետրոսյանն է: Այսօր մենք նոր կյանք ենք կառուցում, եւ ես էլ եմ ինձ հանրապետության տեր զգում: Թող Լեւոն Տեր-Պետրոսյանը լավ արքա լինի, գերագանց կատարի իր պարտականությունը, ես էլ լինեմ գյուղական ուսուցիչ, կապանցիս էլ իր գործը լավ անի, եւ այսպես կյանքը կկայանա:

Արքայիս մի քանի խոսք եմ ուզում ասել, նոր շատ բան կա մեր կյանքում, սակայն լռության կամուրջ է կառավարության ու ժողովրդի միջեւ: Նորի կայացումը պետք է բացատրել ժողովրդին: Պետությունը պետք է քարոզչական մեքենա ունենա: Մենք տկար ենք, որովհետեւ մեր կայացումը չենք կարողանում բացատրել: Առիթ եմ ունեցել շփվելու բազմաթիվ իշխանավորների հետ: Մեր պետական համակարգում արտառոց է կադրային ինֆանտիլիզմը: Պետական պաշտոնյան չի գիտակցում, որ պաշտոնը պերճանք չէ, պարտք է ժողովրդի առաջ: Պետք է ատեստավորվեն ոչ թե փորձառու ուսուցիչները, այլ պետական

պաշտոնյաները: Ցավով պետք է ասեմ, որ մեր կառավարությունը ուրբանիստների կառավարություն է: Ոչ ոք մտքով չի անցկացնում, որ երկիր Չայաստանս գյուղի երկիր է, մենք բոլորս ենք գյուղացիներ, ու այսօր շատ թշվառ է գյուղի, գյուղացու վիճակը, գյուղում ի՞նչ է մնացել... Շատ կցանկանալի, որ մեր կառավարությունը գյուղի զարգացման ծրագիր ունենա, որ գյուղը գյուղ մնա՝ մաքուր իր ամեն ինչով:

**||** *Հանգուցյալ պրոֆեսոր Հակոբյանն ասում էր՝ Սյունիքը դուռ է թշնամյաց համար, եւ մենք ենք միշտ փակել այդ դուռը: Խնդրում եմ մեր նախագահին՝ առանձնահատուկ վերաբերվիր Սյունիքին, մեր Սուրեն մարզպետին թիկունք եղիր: Իսկ ես, իմ հերոս երկրի նախագահ, եթե գնաս մի թագավորի վրա, ես քո սպարապետի զինվորն եմ, թե քո ամբողջ ուժերը ներդնես Հայրենիքս աննախընթաց ծաղկեցնելու համար, ես քո զուսամն եմ, թե երկնես մի նոր ոսկեդար, ես քո համեստ մշակն եմ:*

Մ Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին



Խուսափուփի սլացքն ի վեր համբառնած այր մի...

Կապանա տունը, բանասիրական Երեւանը, Սյունիքի գրապաշտ սփյուռքը ծանր կորուստ ունեն. սրտի վրահաս կանգը շիջեց վաչեփրեմյանական իմաստապարզեւ հրացուլքը: Բոլոր ճանաչողները, մխիթարանքին հուսալով, փնտրտուք են սկսել նրա ստեղծագործությունների խորախորհուրդ էջերում: Ինչո՞ւ էր քանքարապաշտ մեր հայրենակիցը գեղապատկեր խորհում երկրայինի ու երկնայինի սահմանին: «Մի փետուր ընկավ ափերիս մեջ, կվերադառնաս գարնան սկզբներին՝ Կամ վարդի տեսքով, Կամ թռչնի նման: ...Մահն, ի վերջո, սիրո տարբերակ է: Ամենաքիչ մահը պատմության մեջ է: Որովհետեւ պատմությունը աշխարհի ու մեր միջեւ չափվող տարածությունն է»:

Բանասիրության դոկտոր Վ.Եփրեմյանը լույս աշխարհ է եկել 1960-ի հունիսի 11-ին, Ղափանում. որդի՝ Կարմիր դարուն հանիրավի բռնադատված Փափագի եւ Մարուսյայի: Սերուն է Կովկասականի հինավուրց Մազրա-Մացրու գյուղի համբավանուն գերդաստանից:

Նորոգ հանգուցյալը սովորել է ԵՊՅ-ում, ավարտել ասպիրանտուրան, գիտությունների թեկնածու է 1988-ից,

դոկտոր՝ 2008-ից, ընդամին՝ ԵՊՅ գիտական աստիճանները շնորհող՝ գրականության տեսության խորհրդի անդամ էր: 1987-95թթ.՝ Ղափանի դրամատիկական թատրոնի գրական բաժնի վարիչ, 1994-2000թթ.՝ «Կապան» (հետո՝ «Կապանցիներ») թերթի գլխավոր խմբագիր, 1999 թվականից՝ ՀՊՃԿ Կապանի մասնաճյուղի սոցիալ-քաղաքական առարկաների եւ լեզուների ամբիոնի վարիչ, ապա՝ ընդհանուր ճարտարագիտական կրթության ֆակուլտետի դեկան: 2012 թվականից ՀՀ գրողների միության անդամ էր:

II Երեք հիմնարար մենագրության, 50-ից ավելի գիտական հոդվածի հեղինակ է: Լավագույն պատմվածքի մրցանակակիր է ճանաչվել 2012թ.:

Իր իսկ բառերով՝ «Լուսավոր մարդկանց կենսագրությունը թվերի փառահանդես ու նկարների հավաքածու չէ: Հայացք է, Չասված Բառ, Ասված Բառաշարի մեջ լինող լռություն, լիքը-լիքը հոգի, Միայնակին պաշարած՝ ցավ պատճառող ամայություն»: Այսպես ճառագուն էր նորահայտ իմաստասերի խոհերով, որոնք գուցե կային հազար տարի առաջ կամ լինելու են հազար տարի հետո, եւ մեկը պեղելու-վկայակոչելու է 52-ամյա Վաչեին: Ու թերեւս քչերը հաշտ ու անկռիվ ներեն, որ հազարին սիրելու փոխարեն չնվիրաբերվեց մեկին ու չշառավիղվեց. «Օ, կործանված սերեր, բոլորն էլ անուն են ունեցել...»:

Անթաքույց մեծատաղանդ էր: Բանասիրության մեջ կանխորոշեցուրվագծեց վաչեփրեմյանական՝ ապագային միտված ինքնատիպ դպրոցը: Նրա համախոհ զրուցակիցը լինելու համար անհրաժեշտ էր դուրս-ինչ ծանոթ լինել համաշխարհային պատմությանը, մշակութաբանությանը, գիտության արդի զարգացումներին ու գրականության մեծերի ստեղծագործություններին: Իր քանքարի բացահայտման առումով նա բարդ ու մտորելի էր, ինչպես հյուլեական միջուկը, գալակտիկական խռոչը, փիլիսոփայական մտքի փայլատակունդ էրկրի որեւէ ծագում:

Նրա գրավոր խոսքը մեր նորացող հայրենիքի համար արժեւոր էր զենքի պես՝ հայկականության համաշխարհային ճանաչման ասպարեզում:

«Գիրքն անեն լինողի ճակատագիրն է: ...Բանաստեղծությունը փորձ է՝ ընթեռնելի դարձնելու երկնքում գրառված ճակատագրերը: Լռությունը, Բանաստեղծությունը, Մշակույթն անսկիզբ են ու անվերջ»: Ակներեւ՝ իր թերատված կենաց ճանապարհի օրերից մեկում մարգարեացել էր՝ ինքն էլ անսկիզբ ու անվերջ է...

15 փետրվարի 2013թ.



Օվսաննա ոսկեծղի այր Կամոյանին

Կովսալեռ - Խուստուփի ստորոտում վրձնահարվածները երեւակում են առիթնորդ - անզուգական պատկերներ, ծաղկող Ռոբերտ Կամոյանը տարերքի մեջ հորեյար է...

Սյունեցիներիս պատմության հիշատակման շրջանը մեր եւ արտերկրի շատ գիտուններ համարել - հիմնավորել են բրոնզի դարը: Դարերի հոլովույթում պաշտամունքների երկրամաս Սյունիքն ավանդել է Հայկա գարն Սիսակ նահապետի ու նրա ժառանգների ասքերը: Բարդուղիմեոս Առաքյալի, Սբ Մեսրոպի սյունիքյան այցելությունները պատմվում են սերնդեսերունդ ... Քափ ու քրտինք կտրած՝ պատմաբանները համալրում են սյունյաց պատմության գրադարանը, որը լուսաողով ոսպնյակ է այր Կամոյանի համար՝ վրձնով ներկա-

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

յացնելու մեր նախնյաց փառահեղ կերպարները:

Արվեստագետը հավատամք ունի, որ պատմական գործիչների դիմագծերն ու բնավորության արտացոլիչները դաջված - անթեղված են պատմիչների տողերի հետնախորքում, մեր լեռնաստանի բերդավերակներին ու լեռնապարերի վեհությանը: Եւ կամոյանական այդ գաղտնիքն է փարատում մեր կարողը՝ երկրպագելու Չազ նահապետի, Վասակ Սյունի քաղաքագետի, Վահան Նախաշինողի եւ այլ մեծերի պատկերներին ...

Համբուրում եմ աջդ, քանքարաշատ այր, եւ մաղթում, որ յուրովսան ու անխամիր եռանդով համարես քո մտորած՝ Սյունիքի վրձնական գրադարանը:  
**31 հունվարի 2012թ.**



## ԲԱՐՁՈՒՆՔ

### Ավագ գործընկերոջ դիմանկար

Հավատացեք, որ երկարամյա մանկավարժների ապրած տարիները պակսվում են առիթքնող ասքով: Ինչ էլ լինի, առաջացող տարիքում նրանք ակնկալում են իրենց դասավանդած սերունդների հարգանքի ու մեծարման փոխհատուցումը: Դա կամ գիրկընդիսառն հանդիպումն է, կամ հոգեպարար հուշապատումը: Ընդամին ինքնատիպ ուսուցիչը, եթե նկատել էք, ամմասն չէ մեր առօրեական խոհերին ու գործերին: Վերջին չորս տասնա-

մյակում Քաջարանում ուսանած յուրաքանչյուր ոք, անշուշտ, իր հուշերի ավագանուն եւ հոգու ելեւէջներում ունի այս քաղցրալուր ու ակնածելի անունը՝ Վանյա Գալստյան: Պատկառազու այրը բոլորել է 70-ը, եւ գործընկերներով լեռնասփյուռ քաղաքի անվանի մտավորականին՝ Քաջարանի պատվավոր քաղաքացուն, մեր հոգեւոր նվիրաբերումն ենք անում՝ նորակոչելով իր համբավավոր տոհմից առնված անվամբ՝ Հովհան Անանանց:

Հինավուրց Բաղքի Վանանդաձորի հայրենի Մալղաշից (Քաշունի) պատերազմական մի ամռանը 2-րդ դասարանցի Վանին Եզնասարի բարձունքից դիտում էր Տաթևի վանքը.

- Ապի՛, էն ի՞նչ մեծ տուն է:
- Արեւդ կծիմ, Տաթևն է, դա գիտության մեր քաղաքն էր, - ուշիմ մանչուկին բացատրություն տվեց Անանանց Սայադը, - փլվել է, հիմա մեծ քաղաքներում են գիտուն դառնում:

Հոր դասն ուղենիչ եղավ զավակի համար: Ավարտեց հարեւան Տանձավերի յոթնամյակը՝ գերազանցությամբ, Գորիսի մանկավարժական ուսումնարանը՝ գերազանցությամբ, Բաքվի ՄԻ բանասիրական ֆակուլտետը՝ գերազանցությամբ: Եվ առմիշտ՝ ցայսօր, սիրահարված մնաց պոեզիային: Ուսուցիչ է ամենուրեք՝ արտասանում է երկխոսության պատեհառիք պահին, ասումընթում զբոսայգում զրուցողների համար, հարսանիքում կամ տխուր ժամին: Բանաստեղծների մխիթարիչ խոսքերով մարդկանց մեջ փարատում է հիասթափությունն ու ընկճվածությունը, յուրովսան սպեղանի դնում երկիրը երբեմնակի համակող ճգնաժամին:

Ճակատագիրը Վ.Գ.-ին տխուր մանկությունից հետո բարձունքներն է վիճակ հանել: Տաթևի վանքը մնաց նրա մանկության ծորում, եւ վայելչատես, խանդավառ երիտասարդը՝ երկնչած լինելով ասպիրանտ մնալու առաջարկից, ուսուցչական աշխատանքի մշանակվեց մերձկապուտջուղյան Կաթնառատ գյուղում: Դա 47 տարի առաջ էր:

Երբ խոսք է լինում իր գյուղական տարիների մասին, ասում է.

- Գյուղական ուսուցիչ լինելը վիպական է: Երբ Կաթնառատի յոթնամյակում տնօրեն էի, կոլտնտեսության հոգսերն էլ էին հանգուցվում դպրոցում:

Երիտասարդ տնօրենը, որ իր պա-

տանկության ամառները հոտաղ ու հնձվոր էր եղել, ծեռք զարկեց գյուղական ուսուցման յուրովի ճանաչմանն ու բարելավմանը: Կաթնառատի ու Փոխրուտի սերունդներն առ այսօր կապված են իրենց երբեմնի ուսուցչի հետ, որի վեցամյա աշխատանքը լուսավորչական երեւոյթ էր:

Ամրագրեմք. տխուր է, բայց այսպես է՝ երեւելի անհատականությանը գյուղում մնալ չեն թողնում: Եվ Վ.Գ.-ին տեղափոխեցին Քաջարան՝ Չորքում մանկավարժության «գերագույն քուրմի»՝ ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Ռ.Թադեոսյանի ղեկավարած միջնակարգը: Համբավանունի մոտ անկարելի է անվանի չլինել: Վ.Գ.-ն, ծճարիտ ուսուցչի կեցվածքի համար, «ծեռքից-ծեռք» անցնելու հաճույթ էր ապրում: Քաջարանի նորաբաց դպրոցի երջանկահիշատակ տնօրեն Ա.Կարապետյանը (հետագայում կուսընկերակցի քարտուղար) 1965-ից նրան «գամեց» նոր դպրոցում, որը կոչվեց հմ.1:

Ճանաչումն ու համբավը քարշ էին գալիս նորարար ուսմանավար-ուսուցչի ետեւից, բայց ինքն էլ երբեք անտարբեր չի եղել ուսուցչապետի աթոռին եւ ահա 45 տարի անընդմեջ ղեկավարում է Քաջարանի Ե.Չարենցի անվ. միջնակարգը: Վարչականի եւ ուսուցչականի սահմանում մեր հոբելյարն ավելի լավ է երեւում որպես պրոֆեսիոնալ (արիեստավարժ): Հոգու խորքում բնատուր հավատամքն է՝ ուսուցման բազմապիսի հնարների գործադրումը, ֆրոնտալ եւ աշակերտակենտրոն եղանակների համադրումն ու իմաստավորումը, աշակերտ-անհատի համար հույժ առանձնահատուկ՝ ընկրկման ու նահանջի հայտնաբերումն ու հաղթահարումը: Մյուս կողմից՝ հոգսատար դպրոցական տնտեսությունն է, իսկ կենտրոնում՝ ուսուցչա-աշակերտական հսկայամարմին համայնքը (կոլեկտիվը): Երբ տնօրեն ես, ամեն բան հնարավոր է. վառելավայտը սպառվում է՝ քունդ չի տանում, լուր ես առնում, որ տասներորդիցն ծխում է՝ հուզվում ես, ուսուցիչն ամսագրային հոդվածը չի կարդացել՝ զլուխդ ես առնում ավերիդ մեջ: Բազմաթիվ անգամ թեյի սեղանի շուրջ Գալստյանն այսպիսի «առտնին» թեմաներով զրույցի է ներքաշել իր գործընկերներին: Կրտսերները գիտեն, որ «իին կոճղը» գիտի դպրոցավարական

## Մեզանցին՝ իր ժամանակակիցների մասին

բոլոր հիմնահարցերի լուծման ուղիները: Երբեմն էլ, ինչպես հայր, կշտամբում է, որ ուզած-չուզած, ընդունելի է լինում:

- Պատահո՞ւմ է, որ դպրոցում ձայնդ բարձրացնես:

- Հարեւան լեռնաձորցին իզուր չի ասում, թե երբ ընկ. Գալստյանը միջանցքում հրահանգներ է տալիս, ինքն իրենց գյուղում ձայնը լսում է, - ընդունում է կատակն ու, հաճույք պատճառելու ակնկալիքով, քաղցրաստղ ժպտում, - բարձրաձայնելը պիտներական ճամբարում աշխատելու տարիներից է մնացել...

Նրանք, ովքեր կարդացել են Վ.Գ.-ին, աներկբա մտորել են նրա խոհերով, ընդգծել տողերը, նամակագրության մտադրություն ունեցել: Մամուլում բազմակի անգամ է տպագրվել, ունեցել հեղինակային հրապարակումներ մանկավարժագիտական ժողովածուներում, հռետորել համագումարներում ու հնչում ԶԼՄ-ներով:

Ստեղծագործողի համար լավագույն աշխատանքն առջեւում ու անտիպ է, եւ սա, հարկավ, ասված է նաեւ Հովհան Անանանցի համար: Կայացող երկրի դպրոցն ու մանկավարժությունը վաստակաշատ մտավորականի համար մտահոգության եւ լուծման խնդիրներն են: Ասում է՝ անհրաժեշտ է անցյալին քաջահմուտ շարունակություն լինել, կույրզկուրայն չխոնարհվել նորամուծությունների վրահաս հեղեղի առջեւ:

Նրա ղեկավարման տարիներին Քաջարանի Աջափնյակի (Գետամեջ) դպրոցում ցնծալուր (սենսացիոն) շատ բան է եղել. մի քանի անգամ ընդհանուր կամ առարկայական առաջավոր փորձն ընդհանրացվել է վերադասի կողմից, ուսուցիչները զանգվածաբար ներգրավվել են հետազոտական աշխատանքներում, դպրոցը հաղթող է ճանաչվել մրցույթներում ու ծրագրերում (ունի համացանցի կապ), հասունության վկայական ստացած հարյուրներն անզուգական ճախր են ունեցել ու երեւելիներ դարձել մեծ կյանքում: Եվ հիմա էլ, երբ հանրակրթության մեջ ինչ-որ առունով որոնումների շրջան է, այս դպրոցը Ձորքում մնում է հետաքրքրության կիզակետում: Հովհան Անանանցի մարդկային հմայքը տիրական է Քաջարանում, եւ քաջարանցիները նրա անունը դրել են դիցական Կապուտջուղ լեռան ակնածանքի բարձունքին:

Այուցիքի մարզպետը մարդու

տեղ իմացող է: Որտեղից-որտեղ լսել էր, թե գործընկերները դափնի են դնում հնագույն մանկավարժի ճակատին: Եվ ժամանել էր նրա անվանի սաների շքախմբով ու նվեր բերել հորելյարի մանկության սարերի չքնաղ գեղանկարը: Տարիների վաստակի տակ կքածը մատնեց իր մեծագույն բնատուր շնորհքը՝ արտասվեց: (Հարկավ, սովորող մանկության պահանջարկը հուզական խառնվածքի ուսուցիչն է: Արտասվել կարողացողն է հղկում եւ տիրում մանկությանը): Բայց փորձաշատ այրերին, ինչ խոսք, «դավադիր» հարցեր էլ պետք է ուղղել.

- Ո՞ր շրջանավարտներն են քեզ ավելի սրտամոտ:

Նման դեպքերում, որ սպասելի է, մատնանշում են իշխանական կամ տնտեսական լծակներ ունեցողներին: Բայց ահա քանի-քանի տարիներ Հովհան Անանանցի պատասխանն անփոփոխ է.

- Մանկավարժները:

Նրա ուղեգրած կադրերն աշխատում են ԿԳ նախարարությունում, այս ու այնտեղ դպրոցների տնօրեններ կամ տեղակալներ են եւ, իհարկե, նաեւ՝ շնորհներով առանձնացնելի մանկավարժներ: Եվ բոլորն ուղեգրողի հետ կապված են փոխադարձ պահանջկոտությամբ: Հավակնում է լինել մանկավարժական գերդաստանի հիմնադիր՝ 3 զավակներից 2-ը մանկավարժներ են: «Պահանջարկ վայելող» սեղանապետ է:

Ինչ վերն ասացինք, տակավին թերի է այն բանի համեմատ, թե ինչպես են սյունեցիները գնահատում մարդուն: Որեւէ մեկի մասին լսելուց առաջ տարեց սյունեցին կհարցնի. «Հացո՞ւմ է, թե՞ հացաքոռ»: Այս բնորոշ հարցը վաղուց Հ.Ա. Անանանցի նախասիրածն է, որովհետեւ դարընդդար եկած ավանդույթը Սայաթ եւ Շողեր մեծերի միջով ջրվեժվել է լուսաճակատ որդու հոգեաշխարհի մեջ: Հագարին հյուր է տարել ու դեռ պետք է տանի, որ պատվի ծանոթին ու անծանոթին՝ Թումանյան, Սեւակ կամ Սահյան արտասանելով:

Հպարտանալու արխիվ է ստեղծել անվանի տնօրենը: Դրանում զգալի ծավալ են զբաղեցնում բազմազան պարգեւները, որոնց մասին առանձնակի ոգեւորությամբ չի խոսում: 1986-ի մի օր ռադիոն թվարկում էր «Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան»-ով պար-

գեատրվածներին: Տիկին ժեմիկն էր ունկնդրում.

- Վանի՜կ, քո անունն էլ ասաց:

- Կարող է պատահել:

Նորերս, երբ մի առիթով նշում էին հորելյարի ծառայություններն ու պարգեւները, տիկին ժեմիկն ուղղեց.

- Վաստակավորի կոչում չունի:

- Չի՛ կարող պատահել, - զարմացավ մարզպետը:

**Ձորքի դպրոցի տնօրեններ՝**

**Անուշ Մկրտչյան (Բարիկավան),**

**Արքայիկ Մովսիսյան (Գեղի), Լեռնիկ**

**Ազարյան (Ձագեձոր), Ռաֆիկ Գրիգորյան**

**(Քաջարանի հմ.2), Սամվել Իվանյան (հմ.**

**3), Վալերի Ներսիսյան (հմ.4), Ռոբերտ**

**Գրիգորյան-Էջանանցի (Լեռնաձոր):**



## Վարիացիա՝ թերթի համար

**1972** թ. աշնանը, պիտներական կոմիսարի հագուկավով, ընդունելություն խնդրեցի ՀԿԿ շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Մինասյանից: Միրալի որջունեց ու հետաքրքրությամբ ունկնդրեց իմ «հայցը»: Տարեցներից լսել, գրառումներ էի արել ու պատրաստվել: ...1918թ. Նախիջեւանի կողմից մոտ 2000 հայեր մեր կողմերն էին ներգաղթում Գեղվաձո-

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

րով: Երեխաներին ու ունեցվածքը բարձել էին արու գոմեշներին, ագուլխայան փայլվիլուն սինիներն ու ինքնատեղերը շողշողուն էին քարավանի երկայնությամբ: Գեղվածորի դարանակալ թուրքերն Աջիբաջ-Սանջարաղ ձորաստանում շուրջկալեցին գաղթականներին, կոտորեցին ու տիրացան ունեցվածքին: Կոտորածից մազապուրծ մի երիտասարդ Գեղիգետն ի վար փախել, Ղափան էր հասել... Հաղորդեցի եւ այլ մանրամասներ: Խնդրեցի անմեղ գոհերի հիշատակին նվիրված հուշատախտակի կարելիությունը: Ստահագություն համակեց ընկ. Մինասյանին եւ լռության թուղթերից հետո դարձավ ինձ.

- Մեր տղա՛, անցյալը հիշելն ազնիվ ու խիզախ պահվածք է: Բայց կա նաեւ ազգամիջյան տհաճություններ բորբոքելու վտանգը: Հուշատախտակը քննություն չի բռնի...

**II** *Իմ խանդավառությունը տեղի տվեց: Հարկավ, Գեղվածորում փակցվելիք հուշատախտակը մեկ օր էլ չէր մնա: Տարիներ հետո իմացա, որ Գեղվածորի եղեռնը կազմակերպել էր թուրքական արտաքին ուժերի հրահրումով, եւ Գ.Նժդեհը վրեժխնդիր էր եղել՝ 1919թ. դեկտեմբերին կազմակերպելով Գեղվածորի արշավանքը: Խորհրդային իշխանությունը փախստականներին Նախիջեւանից հետ էր բերել, եւ ռիսակալ եղեռնագործների սերունդներն էին ապրում Գեղվածորի գյուղերում, որոնցից յուրաքանչյուրում ցայժմ պահպանվում են միջնադարյան եկեղեցու ավերակները:*

...Խնդրի նախապատմությունն աղերսներ ունի անարժանիս այլ գրառումների հետ: Տարեցների պատմելով, մեր Քրդիկանց-Լեռնաձորը մոռեցիան շրջանում երկատվել էր. մի մասը մոռեհական էր վաշտապետ Ռուստամ Սարդարյանի ղեկավարությամբ, ոմանք էլ Թեւան Մանուկովի ցուցումով հարում էին բուլշեիկներին: 1920թ. «սեպտեմբեր 9-ի լուսաբացին, յարձակողական ամառը հրամանատար Նժդեհ քիւրտիքենդիներուն խարանող կոչ մը ուղղել է տք, վերջնագիր կը դրկէ կարմիր

զօրամասերու հրամանատարութեան» (ԼՀ, էջ 79): Հենց այս օրերին Ողջիգետի աջ մասում գտնվող Փիրմազրա գյուղի բարձունքից Քաջալ Ղազարի հրահանգով հրետանավոր Աբրահամ Բիստեցին թնդանթային մի քանի ռումբ նետեց Քրդիկանցի վրա՝ ի գուշացում: Ձոհեր չեղան: Օրեր անց գյուղ եկավ Սպարապետը: Դիմավորեցին աղ ու հացով, Հայրապետենց Թեւանը նրա ոտքերի տակ ոչխար մորթեց: Սպարապետին ուղեկցողների հետ էր նաեւ երգասաց վալեչատես երիտասարդը՝ 18-ամյա կավարտեցի Գրիգոր Գեւորգյանը: Քանի որ ժամանակին Քրդիկանցն այլազգիների կողմից հնչաբերվում էր Քյուրդքյանդ ձեւով, երգասացը նավի աղբյուրի մոտ սկսեց «Աժդահի փաշա գյալդի...» կանչը, որին ժպտալով ընդդիմացավ Սպարապետը.

- Սյունիքում Քրդն անվամբ մի քանի՛ հայկական գյուղեր կան...

Շնորհաձիր Գրիգորն իրեն հավաքեց ու հանպատրաստից բարբառախառն մի երգ զլեց, որը կցկտուր մտապահել էր աշխարհագրի մասնակից, բարեհիշատակ Տիգրան պապը: Խմբագրեցի դույզն-ինչ.

*Գողթանի փրկիչ, Չավնդուրի փառիշտի,  
Գենուսգի հրամանատար, Գեղվածորի աժդահի փաշա  
Նժդեհն է եկել, դռները բացե՛ք...  
Աջիբաջ ձորում մորթված հայերի  
Անմեղ արյունից սարերն են լալիս:  
Նայր Նժդեհին իր սիրտը էր տալիս,  
Թուրք ու բուլշեիկ մեղա են գալիս...*

Խորհրդային շրջանում Գր.Գեւորգյանը (Հուրոց Կրիքոր) դարձավ հանքաշխարհի երեւելիներից մեկը: «Հիանալի կազմակերպիչ էր, հռետոր, գործի հմուտ գիտակ: Ուր գնում, այնտեղ էլ հայտնվում էր փոխանցիկ դրոշը» (Գր. Սմբատյան, էջ 102): Ռ.Մինասյանն աշխատել-կայացել է Գր.Գեւորգյանի ղեկավարման հեթափոխներում: Ի դեպ, 1937թ. Կավարտում որպես «հակահեղափոխական-տրոցկիստական գրուպայի» անդամ մեղադրված Գր.Գեւորգյանը Ռ.Մինասյանի տիկնոջ՝ Վիկտորյայի հորուն է:



## Վաստակաբեռ փարեգիրը՝ Կապանա Կրկից

**Ճ** շնարիտ մտավորական այրեղը կռահելի մի նկարագիր ունեն. տարիների բարձունքում մենախոսում են գրչի հետ, որովհետեւ ստեղծագործելու, հուշագրելու, ժողովելու երկնատուր շնորհն իր արտացոլումը պիտի գտնի ապրած տարիների մեջ եւ հետո: Գրչի բերածով անցյալ, ներկա ու ապառնական ժամանակները կամրջվում են, եւ հարատեւում է մահկանացուներիս մտքի շարժը:

...Այսպես էի խորհում, երբ մարզուտանի բանուկ փողոցում ունկնդրում էի Արտավազ Մկրտչյանի բարեւ-գրույցը: Ակներեւ էր, որ 88-ամյա այրը ճերմակ օձիքի ու փողկապի, արդուկած կոստյումի համար, քավ լիցի, պարտական չէ միայն իր կողակից Վիկտորյային, ում հետ երկուստեք երջանիկ հարկ ունեն Շահունյան փողոցի գետեզրին: Երկյուղը, որ գրույցը տարեց մարդկանց հատուկ ինքներգություն կլիներ, փարատվեց: Իր մասին խոսելիս հաճելի ժխտ է, սակայն տարեցին ոչ բնորոշ աշխուժանում ու եռանդ է ցուցաբերում, երբ ակնարկ էր առնում իր հեղինակած տասնչորս գիրք-գրքույկներից մեկի մասին...

Ինքն ու Կարմիր դարը փոխադարձ պահանջկոտությամբ ուրվագծեցին

## Մ Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

Քրդիկանց-Լեռնաձորում լույս աշխարհ եկած եւ 1930-ականներին ընտանիքով Տանձավերում վերաբնակված Արտավազդի կենաց ճանապարհը: Միջնակարգն ավարտելուց հետո սովորել-ավարտել է Սվերդլովսկի տանկային ուսումնարանը, Հայրենական պատերազմին մասնակցել է որպէս S-34 տանկի հրամանատար: Մարտերում զոհված երեքի կրտսեր եղբայրն էր, վիրավորվել ու հաշմանդ գորացրվել է 1945-ին:

Բուհական կրթությունից հետո 25 տարի մանկավարժական աշխատանք է կատարել՝ ընդամենը դպրոցներ ղեկավարել Քաջարանում եւ Ղափանում, 12 տարի խմբագրել է «Քաջարան» բազմատպաքանակը, երկու տարի ղեկավարել է Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնը: Տարիներ շարունակ լինելով Պատմական հուշարձանների պահպանության, Պատերազմի եւ աշխատանքի վետերանների շրջանային խորհուրդների նախագահ՝ հանդես է եկել նորարար ու հեռատես նախածեռնություններով: Դեռ Ղափանի բանակումբում հիմնադրել է Մարտական փառքի թանգարանը, որը հետագայում վերաբազմվորվեց քաղաքի մշակույթի պալատում: Ակներեւաբար՝ փորձաշատ, բազմագիտակ պերսոն է: Արդ, պատշաճում է, որ, արժեւորելով հանդերձ, յուրովսան ներկայացնենք նրա հեղինակած գրադարանը: Ցավոք, երկարամյա ստեղծագործողն ի մի չի բերել մանկավարժական եւ լրագրողական տարիների հրապարակումները ՁԼՄ-ներում, որոնք, հարկավ, դույզն-ինչ կարող են լույս սփռել ժամանակաշրջանի վրա:

1970-ական թվականներին Ա.Սկրտչյանը հայտնի դարձավ որպէս դրամատուրգ: Շրջանային թերթը տպագրեց նրա «Այունյաց աշխարհ», երեք գործողությամբ դրաման, այնուհետեւ՝ «Դաթարի հանքում» պատմահերոսական դրվագը՝ մեկ պատկերով:

Արցախի ազատագրման տարիներին գրեց «Անդրկաբերդ» երեք մասանոց դրաման, որի գործող անձինք ազատամարտիկներն են: Աղվանի ու Տանձավեր գյուղերում ինքնապաշտպանության վաշտեր կազմակերպելու օրերին գեներալ Մ.Սարգսյանի հորդորով գրեց «Նժդեհ» երեք գործողությամբ պիեսը: Ի դեպ, Սկրտչյանն արժանի նպաստ ունի մոլորեղբայրության մեջ: Գրքերից մեկում անդրադարձել է նաեւ

Սպարապետի զինակիցներին, զետեղել զինակիցների հիշողությունները, ընդլայնել զորավարի մտերիմների շրջանակը: Սկրտչյանի տատը Նժդեհի համազորագին էր՝ քցնութեցի, նրա երեք դուստրերը Քրդիկանց էին հարս եկել, որոնց այցելություն տվեց Մեծ քցնութեցին: Նժդեհի պայքարին զինվորագրվել էր նաեւ հայրը՝ սխրագործ հայդուկ Աղաբեկը՝ վախճանված 1943թ.:

Ա.Սկրտչյանը ջանադիր աշխատանք է կատարել Արցախյան ազատագրականի մասնակիցներին հավերժացնելու մշտաբորբոք տենչի ասպարեզում. մատենավորել է նահատակների, հրամկազմերի անդամների կենսագրությունները, սրտառուչ հուշագրությունները: Հոգեւոր պարտքը հանգիստ չի թողել անդուլ հեղինակին. նրա մատչանը Կապանա շրջանակից վերածել է սյունեցի ազատամարտիկների համապարփակ երկհատորյակի՝ համակարգչային ոչ անթերի շարվածքով: Պատշաճ անդրադարձել է մեր հայրենակից ու մեր երկրամասի համար մարտնչած եկվոր զորապետներին:

Գնահատելի է տարեգիր Սկրտչյանի սիրահարվածությունը Հայրենական պատերազմի մասնակիցներին ու հուշարձաններին: Դեռ 1998-ին ՀՀ ԳԱԱ հրատարակչությունը լույս է ընծայել նրա «Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում» պատկերազարդ, 330 էջանոց գիրքը, որը վերահրատարակվել է 2003-ին:

Ընթերցողների լայն շրջանի համար տեղեկատվական աղբյուրի ու կրթադաստիարակչական նշանակություն կունենա «Հայրենի հողից հեռու, հայրենի հողի համար» համասյունիքյան մեծածավալ երկհատորյակը, որի հեղինակային ազդորինակն ակնածելով՝ թերթեցի, եւ որը տպագրության ընթացքի մեջ է:

Ա.Սկրտչյանը բազմամեղիս համար ծնողական տարիք ունի, եւ ինձ մնում է՝ ակնածանքի ու երախտագիտության հեղեղի մեջ առնել նրան:

Հ.Գ. Թերթի խմբագրի հաճությամբ Ա.Սկրտչյանի համար անակնկալ եմ պատրաստել: Գրքերից մեկում նա իր հոր ծննդյան թվականը մոտարկել է: Մինչդեռ ցարական մարդահամարի տեղեկագրում Աղաբեկ Մարտիրոսյանի ծննդյան թվականը 1879 է, պապ

Սկրտչինը՝ 1838, նախապապ Մարտիրոսինը՝ 1781: Լեռնաձոր-Տանձավերյան այս ազգատոհմը հնուց անտի անսովոր անվանում ունի՝ Ծտենց (բարբառում՝ Ծտից ազգ): Հները տոհմանունը մեկնում էին ծիտ-թոջնական արմատով, որն անտրամաբանական ու անընդունելի է: Ըստ տեղական ավանդության՝ այս ազգատոհմի նախնին Քրդիկանցում վերաբնակության է եկել 17-րդ դարում, Հողար գյուղից, որը ներկայիս Կապանի տարածքում էր՝ Բեխին մերձակից: Ե.Լալայանի «Ազգագրական պատկերազարդ հանդես»-ի 12-րդ գրքում առբերված է Բեխի ծերունիների մի զրույցը Մելիք-Փարսադանյանների տոհմային ճյուղագրությունների մասին, որոնցից մեկը Ծատիկի ճյուղն է: Ըստ ծերունիների՝ Ծատիկը Վրաստանի կողմերից Ղափանում վերաբնակված Աստվածատուրի համառոտությունը կան մականունն էր: Արդ, պարզ է, որ անսովոր Ծատենց-ը վաղ շրջանում Ծատիկենց էր, որ է՝ Աստվածատրյան: Ի դեպ, ըստ Լալայանի՝ Ծատիկից է շառավիղվել հետագա Աստվածատուր իշխանը՝ Դավիթ Բեկի հայրը:

Ահավասիկ անակնկալը՝ վաստակաբեռ մեր տարեգիրը Մելիք-Փարսադանյան զարմ է:



## Էդիկ Ավետիսյանի պայծառ հիշատակին

Ա մեն մի ապրած կյանքը մեծ ու ինքնատիպ խորհուրդ ունի: Կյանքի կարոտաբաղձ թելը վայրկյանների, րոպեների, ժամների, օրերի ու տարիների երանական շարանն է՝ իր հազարան կողմերով: Մարդու կենաց ճանապարհն իր ծննդյան օրվանից չի սկսում, որովհետեւ անցած-գնացածն էլ ողջերի համար կյանք է, ուրախության ու մաքառումի, սիրո ու կարոտի աղբյուր:

## Մեջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

Ամեն մեկն իր ծնունդով դուրսգնացած կրկնում է նախորդներին, ամեն մեկն կյանքն իր ընթացքով չապարձների ու թերապրածների ողջության անուշիկ հատիկն ունի:

Վաղամեծ ծաղիկները մեր տեսած անդաստաններում առ միշտ կան իրենց անմարմին հմայքով: Հիշողությունը ոչ թե կյանքի մերժում է, այլ նրա հավերժության հավաստումը:

Կյանքից հեռացած ամեն մեկը մեզ օգնում է ապրել հենց իր կատարած ու ձեռնարկած բազմաթիվ գործերով: Նրանք, ովքեր աշակերտ են եղել Էդիկին, միշտ ձգտելու են նրա պես մարդամոտ լինել, նրա պես քայլել առյուծաբար, նրա պես ուրախանալ անկաշկանդ, լինել հոգու ծով ու մարմնով գեղեցիկ:

Ով աշխատել է Էդիկի հետ, անտես ժպտալու է նրան հիշելիս, ուրախ հպարտության ավիշը համակելու է նրան. հաճելի էր Էդիկի հետ աշխատելը եւ հետաքրքիր ու զարմանալի էր նրա պես գործընկեր ունենալ:

Ով չգիտեր հպարտ ու մեծահոգի լինելու գաղտնիքը, դրան տիրում էր Էդիկի մեջ այդ գյուտը գտնելով: Այսպես է կյանքը՝ ամեն մեկն իր մտերիմից ակամա կենցաղ մի կարմիր թել է վերցնում, եւ դա խոստովանելու համար ամեն մեկն է դժվարանում: Մարդն ունի՞ց է սովորում հարգանք, արժանապատվություն, հայրենասիրություն, հումանիզմ... Իհարկե, մարդկանցից: Եվ սովորում է ամբողջ կյանքում, ամեն օր ու ժամ: Էդիկն այնպիսի ընկեր էր, որից կարելի էր սովորել ամեն օր, ամեն ժամ: Ընկեր լինելով, նա գիտակցաբար ու անգիտակցաբար հազար անգամ փոխարինում էր մոտ բարեկամին ու եղբորը:

Էդիկն արդար էր:

Ես հիմա ոչ թե հիշում, այլ տեսնում եմ նրան: Էդիկին հիշելն անկարելի է, որովհետեւ նա իր կյանքով ու գործով շոշափելի ու տեսանելի է բոլոր ճանաչողների համար:

### Ֆիզկուլտուրան նրա փարերքն էր

Ակամա միշտ փնտրել եմ լավ մարդուն, առավել եւս՝ լավ ուսուցչին: Ունի հետ ժամոթացել եմ ձեռքսեղմումով, որոշ ժամանակ անց մոռացել եմ կամ մտաբերել դժվարությամբ: Էդիկի հետ իմ ծանոթությունը պատահական չէր ու պաշտոնական չէր: Խոստումնալից մարդուն ծանոթանալը, կարծես, հրամա-



յական անհրաժեշտություն է: ...Աշխատանքի անցնելու օրվանից Քաջարանի Ստ. Շահունյանի անվան դպրոցում ուսուցիչ Էդիկն աչքի ընկավ ուսուցչական բնատուր շնորհքով: Հետո, շաբաթ առ շաբաթ նա հայտնի դարձավ հարեւան դպրոցներում, եւ նրան շատ սիրեցին սովորողների ծնողները:

Խստապահանջությունը նրա մակարձական տակտի հենքը եղավ. Էդիկը չէր ցանկանում, որ իր սաները մեծանային անուժեղ, անհամարձակ ու թուլակազմ: Այդ ամենի համար անհրաժեշտ էր նորացնել ու կատարելագործել ֆիզկուլտուրայի դասը: Եվ դա նրան հաջողվեց:

- Զեղավ, - իրեն հատուկ արձագանքող ձայնով ասում էր նա, - ապա տես, թե ինչպես եմ պահում իմ մատները զնդակի ետդարձի ժամանակ... Ու անշտապ, տրամադրող հանգով ցուցադրում էր վարժությունը:

- Մարմինդ ուղիղ չես պահում...

- Քայլում ես կրունկներդ չափից ավելի մոտ...

- Մի ամաչիր, հավաքիր քեզ եւ կստացվի...

Այս ու նման շատ դիտողությունները նա ասում էր կամ սովորողին առանձին, կամ անհատական զրույցի ժամանակ, կամ էլ՝ հրապարակավ: Անկարելի է պատկերացնել, որ նրա դիտողությունն առմիշտ չհիշի աշակերտը:

Կարճ ժամանակում Էդիկ Ավետիսյանը դարձավ առաջավոր փորձի ղեկավար: Նրա մասին ակնարկներ տպագրեցին մամուլի շատ օրգաններ, այդ թվում եւ՝ ինքն:

Եղավ Էդիկը, եւ Քաջարանի հմ. 2-ում եղան շատ գավաթներ, պատվոգրեր: Երեխայի պես ուրախանում էր այդ «ավարով» եւ ավելի էր հավատում իր սաներին, որոնք ամենուրեք միշտ բարձր

պահեցին խանդավառ ուսուցչի անունը:

...Պիոներական ճամբարում, ուր տարիներ շարունակ աշխատել եմ Էդիկի հետ, պիոներներն ազատ ժամին ինչպես քայլերգ էին երգում Հունան Ավետիսյանին նվիրված երգը: Մի օր պարզվեց, որ երեխաները կարծում են, թե այդ երգը նվիրված է Էդիկ Ավետիսյանին: Այ քեզ զարմանալի բան... Իհարկե, ես պարզաբանեցի, որ երգը ոչ թե ընկ. Ավետիսյանին է վերաբերվում, այլ՝ Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանին: Իսկ պիոներներից մեկը հարցրեց.

- Իսկ մեր ֆիզիկը ընկ. Ավետիսյանի մասին երգ չկա՞...

Հուլվեցի, ինչպե՞ս է մանկությունը սիրում իր երիտասարդ ուսուցչին, ինչպե՞ս է հավատում... Հավատում եմ, որ նրա շնորհալի սաներից մեկը մի օր երգ պիտի գրի սիրելի ուսուցչի հիշատակին, եւ դա իրավամբ արժանի է:

Ֆիզկուլտուրան նրա տարերքն էր: Եվ ամենուրեք: Դպրոցում, ճամբարում, արտադպրոցական հիմնարկներում նա բազմաթիվ մրցություններ է նախաձեռնել, ազնվաբար փնտրել շնորհալիներին, ապագա լավագույն մարզիկներին: Բազմաթիվ առիթներով փառաբանել է սպորտը, սիրել տվել շատերին: ...Ճամբարում, ամռան տապին, Էդիկը քայլում էր բոբիկ: Այլ կերպ կարելի՞ է սովորեցնել բոլորին, որ ամռանը բոբիկ քայլելը առողջության գրավական է...

Նա ու իր պատանի տուրիստները շրջել են ողջ քաջարանյան լեռնաշխարհում:

### Ուրցով թեյ

Բաղաբերդյան իրիկուն: Ճամբարի պետը ժողով է հրավիրել, Էդիկն ուշանում է: Պետը խոժոռվում է ու անտես եռում՝ ինչպես ամեն մի պետ: Բայց հուզվելու առիթն Էդիկն է, ինչպե՞ս կարելի է Էդիկի վրա բարկանալ: Առհասարակ Էդիկն իր կյանքում ոչ ոքի այդպիսի առիթ չի տվել: Եթե թյուրիմացություններ եղել են, արդարությունը Էդիկի կողմն էր...

Բաղաբերդյան իրիկուն, զով զեփյուռ, ճամբարականները նոր են քնել: Ու եկավ Էդիկը.

- Բժշկուհի, 8-րդ սենյակի Կարենն այսօր անտրամադիր էր: Այցելեցի, տաքություն ունի, -ասաց, ուշանալու համար ներողություն խնդրեց, բայց չնստեց:

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

Բժշկուհին՝ անհոգ մի կին /Եղիկն ու ես, չգիտեմ ինչպես, ճամբարային բոլոր բժշկուհիներին չենք սիրել/, դժկամ վեր կացավ... Եղիկը գրանիտե հայացք ուղղեց նրա ետեւից, եւ դա միայն ինձ դուր եկավ, որովհետեւ բժշկուհին ոչ թե մարդասիրաբար վեր թռավ հիվանդի անուն լսելով, այլ՝ հենց այնպես վեր կացավ: Գրանիտե հայացքին, պարզ է, հետեւեց բարկությունը: Իսկ Եղիկի բարկությունը միշտ օգտակար ու, կասեի, խուտուտ տվող ուրախ առիթներ է բերել:

- Քսան հոգով այս փոքր սենյակն էք հավաքվել, մեղք չէ՞ք: Չմոռան առիթ լինու՞մ է կանաչ անտառի թարմությունը վայելել...

Չամոզեց ու բոլորս դուրս եկանք ժողով բացօթյա անցկացնելու: Իսկապես դա շատ լավ էր ու հաճելի: Հիմա, որքան գիտեմ, այս ավանդույթը, որի ռահվիրան Եղիկն էր, ճամբարներում աստիճանաբար տարածվում է: Սակայն ժողովը խանգարեց էլի... Եղիկը: Ես պնդում էի, որ վաղը չէ մյուս օրը անակնկալների օր է, իսկ Եղիկն ասում է, որ մարզական աշխատանքների պլանով վաղը երկօրյա արշավ ունի: Առանց անակնկալ կլինի... Ես վրա էի տալիս, ինքը թե.

- Պիտներները գիտեն, որ արշավի պիտի գնանք, ի՞նչ անակնալ:

Եղիկը մեղմ էր պաշտպանում իր տեսակետը, պետք դա զգաց եւ իմ ճամբարային աշխատանքի պատմության մեջ առաջին անգամ ճամբարի պետն անցավ իմ կողմը:

- Ավագ ջոկատավարի ասածն օրենք է, նա է պլանը գրում, ես էլ հաստատում եմ:

Եղիկը ծիծաղեց, առանց թույլտվության թողեց ժողովը, քիչ հետո վերադարձավ «Օլիմպիական» սրահից հանած պլանով, որը ես էի հաստատել ստորագրել: Ճիշտ որ նրա ասածն էր՝ վաղը երկօրյա արշավ ունենք:

- Կամ պլանից ստորագրությունը ջնջիր, կամ էլ անակնկալներդ ուր ուզում ես տար, - իրեն հատուկ հունորով ասաց Եղիկը, ու բոլորս ծիծաղեցինք:

...Չաջորդ օրը «Գանձասար» ճամբարի հեռագրատունը հայտնեց, որ պատանի տուրիստներն ընկ. Ավետիսյանի ղեկավարությամբ վրան են զարկել Աղջկաբերդում, խարույկ են նախապատրաստում եւ գիշերելու են: Ազդանշանների եղանակը պայմանավորվել էինք Եղիկն ու ես. հեռավոր սարի

կատարից իրար հետ խոսում էինք ջահի վերուվար, աջուձախ շարժումներով: Միմյանց իրազեկում էինք, որ տիպիկ դեպքեր, հիվանդներ չկան, ամեն ինչ կարգին է: Այս ամենը ես ճամբարում վեր էի ածում հեռագրի, իսկ Աղջկաբերդում՝ Եղիկը դա այլ կերպ էր անում: Հետագայում մենք ճամբարում ապացուցում էինք երկուստեք հաղորդումների հավաստիությունը...

Չաջորդ օրը երեկոյանում էր, երբ Աղջկաբերդից վերադարձան: Ընթրիքին կես ժամ կամ ավելի էր մնացել: Իմ առանձնասենյակում Եղիկը բերած ուրցով թեյ պատրաստեց ու մի բաժակ տարավ 8-րդ սենյակ, որտեղ հիվանդ պիտներ Կարենն էր: Սակայն Կարենը երբեք ուրցով թեյ չէր խմել եւ առաջին անգամ չցանկացավ խմել, մտածելով, թե դեղահաբ են խառնել: Իսկ Եղիկը լավ գիտեր ճամբարի հոգեբանությունը: Նա իր բերած ուրցը խոհանոց տարավ, երեկոյան թեյը համեմեց ուրցով: Հետո «հրամայեց», որ ընթրիքին Կարենն էլ գա: Եվ մի՞թե հաճելի չէ բոլորի հետ ուրցով թեյ խմել: Ուրցի թեյը Կարենին կազդուրեց: Ճամբարականները այդ երեւանցի դպրոցականին «խոռնի չայ» էին կանչում, իսկ Եղիկը քթի տակ ժպտում էր: Երբ ավարտվեց պիտներական ամառը ու եկավ բաժանման տխրալուր ժամը, Կարենը մոտեցավ Եղիկին ու ասաց.

-Ընկ. Ավետիսյան, ուրցը կարո՞ղ է բուժել բոլոր հիվանդությունները:

Երեխան, միամիտ ու վախվորած աչքերով, կարեկցանքով էր հարցնում: Ես Եղիկի կողքին էի, ու երկուսով լրջացանք:

-Ի՞նչ հիվանդություն, տղա ջան,- տղային առանձին տեղ բերելով, հարցրեց նա:

-Հայրս գարնանից հիվանդ է: Մայրս ամեն օր լաց է լինում թաքուն, իսկ մեր բակում ասացին, որ իմ հայրիկն էլ չի բուժվի, քաղցկեղ ունի:

-Ուրցն ամեն ինչ է բուժում, տղա ջան,-մխիթարական ասաց Եղիկը, ու երկուսով մեր աչքերում թացություն զգացինք...

### «Պապուսները»

Պիտներական ճամբարի աշխատողը, բնականաբար, խենթ ու ռոմանտիկ պետք է լինի: Ճամբարային սովորական, միմյանց մանող օրերը ոչ միայն ծանծ-

րալի են ճամբարականների համար, այլև կարող են նվազեցնել նրանց խանդավառությունը, մղել պասիվ վիճակի եւ հակապիտներական արարքների: Եղիկը, որպես հմուտ ճամբարային դաստիարակ, լավ գիտեր այս ամենը: Նրա միտքը միշտ որոնումների մեջ էր: Մի տեսրակում գրառել եմ Եղիկի բազմաթիվ առաջարկությունները, որոնց մի մասն իրագործվել է կամ ընթացք ստացել: Նա, - իհարկե, չէր մտածում միայն ճամբարի մարզական հնարավորությունների ընդլայնման համար: Ասում էր.

- Այս անտառում շատ հարմար է ցուցադրել «Լոռեցի Սաքոն»:

- Վատ կլինի՞, որ Արվաքարի գագաթին էլեկտրական լամպ ամրացնենք:

- Աղբյուրները վերանորոգենք:

Եվ այլ, եւ այլ մտահղացումներ:

Միոյութական իրիկուն, Դավիթբեկի ընկուզենու տակ մտորելիս, պլանավորեցինք «այցելել պապուսներին»: Որպես կանոն, մեր մտահղացումն առաջինը պիտներներին հայտնեցինք: Պապուսների հագուստներն ու հանդերձավորումը ես ստանձնեցի, նրանց շարժումները, պարերն ու ծիսակատարությունները՝ Եղիկը:

...Անցավ երկու օր: Եղիկի հետ անհետացանք անտառում, հագցրինք պիտներներին, որոնք բարձր ջոկատի տղաներ էին: Հագուստները կանաչ տերեւներից էին, գլխարկներն ու ուլունքները՝ խխունջների հիմ պատյաններից, «ցեղի առաջնորդը» խոյի եղջյուրով միզակ ու վահան ուներ: Դեմքերը հին գլխնեացիների նման ներկել ու փետրավոր գլխարկներ էին դրել: Եղիկը շատ բնորոշ մի պատ էր հորինել՝ մարտական քայլք, խորհրդավոր շրջանցում խարույկի վրայով: Իսկ երաժշտությունը... Դարձյալ Եղիկը հնարամիտ եղավ: Թմբուկը կապկպեց ծառի կեղեւով, իսկ զարկիչի փոխարեն փշոտ զնդածեւ մի կանկար բերեց, որպիսին շատ է աճում Տանձուլենջում: Թմբկահարը միալար խփում էր թմբուկին, իսկ Եղիկը/Երեւի ինչ-որ կիները էր սովորել/ ռազմատենչ մի պար էր պարում, մերթընդմերթ ուժգին ծիծաղից մեջքի ընկնում իմ կողքին... Երեխաներն իրենց դերը շատ լուրջ էին կատարում, որովհետեւ այդ ծրագիրը նրանց շատ դուր էր գալիս: Չաջորդ օրը իսկապես անակնկալ եղավ:

Մեր ճամբարի չտեսները, բանուզործ

## Մ Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

թողած, վազեցին ֆուտբոլի դաշտ, որտեղ «վայրի մարդիկ» էին հավաքվել: Էդիկի հետ հեռվանց հետեւում էինք: Յենց մեր կողքին վախից թուլացավ դաստիարակներից մեկը, բայց տեսնելով Էդիկի անտարբեր դիրքը, իրեն հավաքեց: Յենցում «պապուսները» կատարում էին իրենց ծրագիրը: Իր պոստը լքել էր նաեւ խոհարարը. ամբողջ ճամբարը հիացական ու հետաքրքիր դիտում էր նորընծա սեւամորթ մարդկանց պարերը, արհեստները, խաղերը: Յետո լուրը հասավ հարեւան ճամբարները. «Գանձասարում» նոր մարդիկ են հայտնաբերել: Յարեւան մոտիկ ճամբարում երեխաները ճաշի չզնացին, առաջակտրուկ անելով մեր ճամբարը հասան: «Պապուսները» ճաշում էին ընկուզենու տակ, այդ օրը դաշտային խոհանոց էինք կազմակերպել:

Յետո իսկապես բոլորը հասկացան, որ ծրագիրը ծիծաղելու համար չէր: Ճամբարականներն այդ ծրագրով ինացան Միկելուխո-Մակկայի, պապուսների մասին, մոտիկից տեսան նրանց «կենցաղը», համակրեցին ու սիրեցին:

Պապուսների հետ լուսանկար ունենք՝ Էդիկն էլ, ես էլ: Սակայն անփութաբար ես դրանք կորցրել եմ եւ փնտրում եմ՝ Էդիկին նվիրված ալբոմում գետեղելու համար: Պապուսների հետ եղանք Ղափանում, Կարմրաքարում:

Երանական օրեր...

Այնքան բարի եմ ուզում պահել քո հիշատակը, սիրելի Էդիկ...

### «Տեժի»

Էդիկ Սուրենի Ավետիսյանը ճամբարի գարթուցիչն էր: Թե քներ Էդիկը, քնով կանցներ ամբողջ ճամբարը: Նա լավ գիտեր Ձորքի հինավուրց անտառի առավոտվա հնայքներն ու նրա հրաշագործ կազդուրիչ օդի բույրը: Այդ պատճառով նա ժամը 7-ին /ինքը վեր էր կենում 6.30-ին/ շեփորով կանչում էր բոլորին:

- Վազել, - հոգեպարար կանչում էր Էդիկը քնաթաթախ մանչուկներին:

Եվ քաջալերում էր ետ մնացողներին: Վտիտ ու վատառողջ երեխաների համար հատուկ երթուղի էր մշակել՝ պակաս դժվարությամբ: Իսկ լավագույն մարզիկներին անտառ՝ իր անվամբ աղբյուրն էր ուղարկում լվացվելու:

...Այդ օրը ես ուշ արթնացա: Երեկոյան ինքն ու Մարտուն Անտոնյանը ինձ

մի լավ «ծեծել» էին շատ ուշ քնելու համար: «Դու գյուղացի ես, մենք քաղաքացի», - իրեն հատուկ հումորով ասել էր Էդիկը, - «Ի՞նչ իրավունք ունես ինձնից ուշ քնել, հետո ի՞նչ, որ ավագ ջոկատավար ես»:

- Մեկ-երկու, մեկ-երկու... էեյ, աղջիկ, առույգ կատարիր: Վայ մամայի բալաներ, ոնց են մարզանքից վախենում, - երեխաներին տրամադրելով ու կատակելով առավոտյան մարմնամարզության դասն էր վարում Էդիկը: Վաղորդյան անդորրի մեջ հատու եւ զրնգուն ծայրով նա կառուցում էր ճամբարային օրվա տրամադրությունը: Դասն ավարտվեց, տեսավ ես չկամ: Գիտեր, որ քնած եմ եւ անպայման եկավ քունս խանգարելու: Իմ սենյակի բանալին ուներ: Բացեց, մտածեցի, որ վերմակը դեն է ձգելու եւ ինձ նախատի: Բայց նա ուղիղ գնաց դեպի ջոկատավարական բաճկոնս, գրպանից հանեց սուլիչն ու... սեղանին գտնվող երկու մեծ տանձը, որոնք մի ծնող էր նախորդ օրն ինձ «կաշառ» բերել: Նախորդ երեկոյան, երբ «ծեծ կերա», ի հեռուկս գրպանս խոթեցի ճամբարի միակ սուլիչը, որն Էդիկինն էր: Սուլիչը նրա անբաժան ընկերն էր ու կախված էր պատից: Ինձ թվացել էր, թե վերցրել եմ անտեսանելի:

- Վերցնելիս տեսել ես, ինչու՞ իրիկունը չուզեցիր, - անկողնուց վեր կենալով ասացի ես:

- Դե որ ծեծել ենք, մտածեցի, որ գիշերը կվատանաս ու այս սուլիչով օգնություն կկանչես:

- Էդիկ, տանձի մեկը թող, նախաճաշի չեմ գալու:

- Երեկ մեր փեսան մի տոպրակ տանձ է բերել: Ինձ չի գտել, վերցրել ես ու խոտացել, որ ինձ ես հանձնելու: Տանձը պարզեատրել ես ԴԻ-ի անդամներին, երկուսն էլ քեզ պահել...

«Ուրեմն՝ փեսան իր արածի մասին հեռախոսով կամ մեկի միջոցով տեղյակ է պահել Էդիկին», - խորամանկ ժպտացի ես:

...Տանձն ուտում էինք, երբ հերթապահ պիոներն ասաց, որ ինձ կանչում են: Դուրս եկանք. փողոցում Գրիշա Մկրտչյանը, մի փաթեթ ձեռքին, կարմրատակած ծիծաղում էր: Ծիծաղից խոսել չէր կարողանում:

Էդիկն ասաց.

- Գրիշա, ծիծաղիր, բայց ձեռքինդ բաց արա...

Լավաշ էր, իստակ թարմ լավաշ: Լեռնածորից մի կին ինձ համար լավաշ էր բերել: Յանդիպել էր Գրիշային ու տվել նրան: Գրիշան հարցրել էր անունը: Կինն ասել էր.

- Տեժի:

Յենց որ Էդիկն իմացավ այդ անունը, Գրիշայից ավելի թունդ սկսեց ծիծաղել: Ի՞նչն էր ծիծաղելի: Կինը գյուղում իմ հարեւանն էր, այդպես էլ կոչվում է: Իսկ սրանք ծիծաղում են, հա ծիծաղում: Էդիկը, որ մի քիչ դեմքի կարմրություն ուներ, ծիծաղից ալ գույն ընդունեց, աչքերը լցվեցին ծիծաղկուն արցունքներով: Օրերն անցնում էին, Էդիկը հեռվանց ինձ տեսնելիս ծիծաղում էր: «Ի՞նչ կա», - իբր չգիտեր ինչի համար է ու հարցնում էր:

- Տե-ժի, - քահ-քահ ծիծաղի միջից ասում էր նա ու իր գործն անում:

Երբ կլինի՞ գյուղ հասնեմ ու այդ Տե-ժուն հարցնեմ, թե ինչու՞ իր իսկական անունը չասաց՝ Նադեժդա, այլ միայն՝ գյուղականը: Սակայն Լեռնածորում ո՞վ կգարմանա, թե ինչու Նադեժդային Տեժի են ասում:

### Նամակ Քաջարանի դպրոցի ուսուցիչներին

Մարդն իր մահը գիտակցում է ծերունական տարիքում: Ամբողջ տիեզերքում ամենասարսափելին մահն է: Ծերունական տարիքում մարդը նմանվում է տիեզերքի եւ, կարծես, մոտավուտ մահը մարդ-տիեզերքից դուրս է: Գալիս է, թող գա: ...Երիտասարդ տարիքում ոչ-ոք չի հավատում իր մահը: Այդ տարիքում մահը մերժված է հավերժորեն, անկասկած: Երիտասարդ մարդը մահվան մահճում էլ չի հավատում մահվան: Կյանքն է վերջին վայրկյանը: Իսկ այդ վայրկյանն ունի սկիզբ, այնուհետեւ գալիս է վայրկյանի կեսը, հետո՝ վայրկյանի կեսն ավելանում է մեկ հազարերորդականով, նորից՝ մեկ հազարերորդականով, հետո՝ մեկ միլիոներորդականով եւ այդպես շարունակ: Ես Էդիկի մահվան դեմ եմ հանում տիեզերքի բոլոր արեւները ու մեր Երկիր մոլորակի բոլոր զարուհները...

Էդիկը աղբյուրներ էր կառուցել, Կապուտջուղի զագաթից Էդիկը մտորել է տխրամած Արաքսի հետ, նա իր բալիկների համար հեծանիվ է գնել, հարյուրների հետ աղուհաց է կտրել Էդիկը. քանի-քանի անգամ նա նստել է այստեղ, իմ կողքին, այս բազմոցի վրա: Ինձ միշտ թվում էր, որ նա ինչ-որ հեռու տեղ է

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

գնացել ու մի օր պիտի գա, մի օր պիտի գա... նա ամեն տեղ իր բնատուր ձիրքով փոխարինում էր բժշկին: Տարիներ հետո նա պիտի դառնար այն իմաստուն պապիկը, որ իր ծերունական հմուտ ձեռքերով դարմանում է մարմնական կտորվածքները...

Երբ հիվանդ էր անկողնային ու այցելեցի, Էդիկն ինձ նորից զարմացրեց իր կենաց հավատով, իր ասելով՝ իր բուժելի ցավի խոր իմացությամբ: Կնոջ ամենօրյա՝ կողակցին կորցնելու ակնկալման ողբը, որին Էդիկը տեղյակ էր եւ դեռ ամենասահավոր բանը չէր համարում, ճգնում էր անոթել իր ապաքինմամբ: Իսկ նա հավատում էր, որ կապաքինվի:

Կեցցե մարդը, կեցցե Էդիկը՝ մահվան անագորոյն ճանապարհին եղավ առլեցուն կենաց հավատով...

Հանրակրթական դպրոցի համար Էդիկի երախտիքը գնահատելի է: Քաջարանի հմ.2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի պատին մարմարե փոքրիկ տախտակը կազդարարի՝ Էդիկ Սուրենի Ավետիսյանի պայծառ հիշատակին: Ոչ մի փոքրիկ էլ չի հարցնի, թե ո՞վ էր նա: Էդիկը կա բոլորիս մեջ, բոլորի հետ...

25 մարտի 1983թ.



## Արտաշես Գեւորգյանի հիշատակին

Ոսկերիկ աշունը սողոսկել էր լեռնաշխարհի ծոցը: 1944 թվականն էր: Ռազմաճակատից եկած ամեն մի նամակ բերքի տոնն ավելի համեղական էր դարձնում: Քաղաք առ քաղաք, գյուղ առ գյուղ գեհեմամռունջ ֆաշիզմից ազատագրվում էր հայրենիքը: Պատերազմական վերջին աշունը...

Տակնուվրա էր լինում լեռնային գյուղի անդրորը, երբ մեղավորի արցունքներով փոստատարը «սեւ թուղթ» էր բերում:

«Թշնամու դեմ մղվող անհավասար մարտում քաջաբար զոհվեց...», - կարկամած ասացին կալվոր Նուբար մայրիկին: «Սեւ թուղթը» ետադարձ հասցե չունեց, ու մայրական սիրտը տարիներ ի վեր որոնել սկսեց քաղցրամուն որդու անհայտ շիրիմը: Եվ ահա, 34 տարի անց, Նուբար տատը խորշոմած ձեռքերով վերցնում է հեռավոր լատիշական անտառի եղբայրական մի բուռ հողը, որը ցողված է զոհված որդու արյամբ...

\* \* \*

Արտաշես Ենոքի Գեւորգյան: Միլիոնավոր նահատակների անուշ լեզուն մի հատիկ: Նրան ճանաչողների հուշերում՝ համեստ ու մարդամոտ, դպրոցական նստարանից՝ ուշիմ ու խելացի: Հայրը՝ ասացող Ենոքը, որ նաեւ գիտեր Արտաշեսի ու Սաթենիկի հիմնավորը գրույցը: Հաճախ էր ասում որդուն. «Եղիկ Արտաշեսի նման քաջ ու խելացի: Երբ հարս բերես, անունը պիտի փոխեն ու Սաթենիկ դնեն...»:

Հայրենիքը վեր է ամեն սիրուց: «Երբ ես զոհվեմ-իսկ դա ես այնպես չեմ ուզում-նոր սեր արա...» - այսպես է գրել ռազմաճակատից Արտաշեսը Եղեգնածորի շրջանի Գետափ գյուղում ապրող իր... Սաթենիկին:

Ծնվել է 1912-ին: Սովորել է Քրդիկանցի /այժմ՝ Լեռնածոր/ տարրական դպրոցում, ապա՝ Ողջիում: Այնուհետեւ 16-ամյա պատանին իր բազկի ուժով զորավիգ եղավ ծաղկող ու բարգավաճող երկրամասին. որպես բանվոր աշխատեց երկաթգծի շինարարության Շեյֆլու-Ղափան հատվածում, արժանացավ դրվատանքների: Տեղափոխվեց ու անդամագրվեց Ղափանի Լեհինյան հանքերի փառաբանված կոլեկտիվին. երկու տարի ստորերկրյա հանքուղում հորատող էր: Բանվորական միջավայրում բացահայտվեցին Արտաշեսի կազմակերպչական ընդունակությունները: Նա դարձավ լեռնագործների կուլտուրական հանգստի ջատագովներից մեկը:

Սովետական գյուղում սկիզբ էր առել կոլտնտեսային շարժումը: Արտաշեսն արդեն կոմերիտական էր եւ, բնականաբար, գյուղում ավանդ ուներ ներդնելու: 1931-ին սովորում է Գորիսի կաթի վերամշակման ու մեքենաների շահագործման դասընթացներում ու վերադառնում հայրենի Լեռնածոր: Առ այսօր գյուղում ակնածանքով են հիշում հմուտ

երիտասարդին, որի անմիջական ջանքերով արտադրության մեջ ներդրվեցին սեպարատորը եւ այլ մեխանիզմներ, որի շնորհիվ «Կարմիր աշխատավոր» կոլտնտեսությունը զգալի հաջողություններ ունեցավ:

Արտաշեսի վաղնջական ցանկությունն էր շարունակել ուսումնառությունը: Եվ ահա՝ հնարավորություն ստեղծվեց: Նա տեղափոխվեց Երեւան, աշխատանքի անցավ տրամվայի պարկուն: Կարճ ժամանակում Արտաշեսին ընտրում են սկզբնական կոմերիտական կազմակերպության քարտուղար ու երաշխավորում կուսակցության շարքերն անցնելու համար: 1935-ին նա կուստոնն է ստանում: Այնուհետեւ նա սովորում է Հայաստանի կոմունիստական բարձրագույն դպրոցում եւ փայլուն հաջողություններով այն ավարտում 1937-ին: Պատանեկան տարիներից Արտաշեսը մանկավարժական աշխատանքի կարող ուներ: Նա ցանկություն է հայտնում աշխատելու գյուղական դպրոցում: Եղեգնածորի շրջանի Գետափ գյուղի յոթամյա դպրոցում սիրով են ընդունում նրան: Աշխատում է որպես ուսուցիչ, ապա՝ դիրեկտոր, միաժամանակ վարելով գյուղի սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղար: ...Պահպանվել է Եղեգնածորի շրջժողկրթաժամարի 1941 թվականի հուլիսի 18-ի հրամանը, որով Արտաշես Գեւորգյանը ազատվել է աշխատանքից՝ կամավոր կերպով Կարմիր բանակ մեկնելու կապակցությամբ:

Ձինվոր Գեւորգյանը թշնամու դեմ կռվել է Կերչում, Բելոռուսիայում, Մերձբալթիկայում: Վերջին եռանկյուն նամակը ծնողները ստացել են 1944-ի օգոստոսին:

\* \* \*

Անցել են 34 երկար ու ձիգ տարիներ: Ենոք պապը որդու կարոտը ջրվեժել է կողակցի սրտում ու հեռացել կյանքից: Նուբար զիզին, միամիտ, մանկան նման, բազում տարիներ հարցուփորձ է արել հեռուներից եկածներին... «Գուցե իմ Արտաշից խաբար ունենաս...»: Սոր սիրտն իմաստուն է, այն չպեղծված շատ խորհուրդներ ունի...

\* \* \*

Ամռան արեւը ջերմացնում է Բալթիկայի ափերը: Չքնաղ Յուրմալան փթթել

Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին


է ու գրավել հազարավոր մարդկանց: Կարծես խոհերից ծանրացած, հսկայական ՏՈւ-154 օդանավը ողջունում է հյուրընկալ Ռիգային ու մեղմ վայրէջք կատարում: Հայրենիքի զինվոր Արտաշես Ենոքի Գեւորգյանի հարազատները շտապում են ժամ առաջ լինել Ցեսիսի շրջանի Մորե գյուղում: Ավտոբուսը դանդաղ ընթանում է լատիշական դաշտերով, մտնում խորհրդավոր կեչուտները: Շրջգինկոմիսարիատի ներկայացուցիչ Վլադիմիր Ալիմովիչ Վետրովը պատմում է երբեմնի թե՛ մարտերի մասին: Թվում է, լատվիական անտառի սոսափյունը ընկերակցում է կապիտանին. վերջինիս հետ արտասվում են բոլորը՝ Հայաստանից եկած թվով 8 հյուրերը, նրա դուստրերը՝ Ինան ու Լարիսան, վարորդը: Ավտոբուսի պատուհանից այն կողմ հպարտ լռությամբ եղբայրական գերեզմաններն են անցնում: Ահավասիկ Մորե գյուղի ամենամեծ եղբայրական գերեզմանը. այստեղ հանգչում են թվով 750 սպաներ ու զինվորներ: Ցեսիսի շրջանն ազատագրվել է դժոխքի ճիվաղներից 1944-ի հոկտեմբերի 6-ին Առաջին մերձբալթյան ռազմաճակատի զորքերի կողմից՝ Հովհաննես Բաղդասյանի հրամանատարությամբ: Արտաշես Գեւորգյանը անհավասար մարտ է մղում ընկերների հետ եւ զոհվում Գաույա գետի ափին... սեպտեմբերի 29-ին:

Եղբայրական գերեզման... Հուշիկ քայլեր... Ոսկեզանգուր լռություն... Գյուղսովետի գործկոմի նախագահ Ռասան Վիկտորովնան դանդաղ մոտենում է մարմարե սալիկներից մեկին, որի վրա հարազատները կարդում են նվիրական անունը՝ շարքային Գեւորգյան Արտաշես Ենոքովիչ:

\* \* \*

Նուբար տատը կարոտախեղդ արցունքներով համբուրում է որդու շիրիմից բերված հողը, անիծում պատերազմը... Հեռավոր Լատվիական ՍՍՀ-ի Ցեսիսի շրջանի Մորեի 8-ամյա զիշերօթիկ դպրոցի, Եղեզնածորի շրջանի Գետափի միջնակարգ դպրոցի, Լեռնաձորի 8-ամյա դպրոցի պիոներները հերթական նամակներն են գրում, որ էլ ավելի պայծառ լինի զոհված ուսուցիչ Արտաշես Ենոքի Գեւորգյանի անմոռաց հիշատակը:

30 հուլիսի 1987թ.



ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱԲԵՌ ՄՇԱԿԸ

Թաթիկ Հակոբյանի տաղանդով Հայաստանի պատմական աշխարհագրությունը քննության առնվեց հավուր պատշաճի:

Մեծ Հայքի ձորահովիտները պատմությունը հանգուցած պնակիտներ են: Դրանք գրելիս մատենագիրը ճգնել է վանքի խցում, եւ մագաղաթը դարձել է ժամանակագրություն ու ողբ: Ձորահովտի քարապռնկին հանգրվան առած կրթատան լսարանում սերունդներն ունկնդրել են նախնայաց մաքառման ու արարումի ասքերը: 18-19-րդ դարերը հրապարակ հանեցին պատմության վերլուծաբաններին: Նախագնաց Մխիթարյան հայրերը հայագիտությունը զարգացրին բազմաթիվ ճյուղերով: Ի մասնավորի՝ պատմական աշխարհագրությունը սկզբնավորողներից աչքի զարնեց Դուկաս Ինճիճյանը, հետագայում այն հարստացրեց Ալիշանը: Ոչ լրիվ հերկված խոպանը տակավին մնում էր մորընծա հետազոտողին: Անհրաժեշտ էր վերաիմաստավորել նախորդների ստեղծածը, համակարգել 20-րդ դարի քննախույզ գիտության պահանջներով: Եվ գիտության աննախընթաց դարն անժամանակավրեպ առաջադրեց իր տիտանին, որը

համնեց Յոթնաբերդ Կապանա տնից եւ իր չխամրող շողը բերեց գիտության կաճառի մշտական փայլին:

...Հինավուրց Ձորքի Շլորուտ բերդավանի հարեւանությամբ հին Քրդիկանց գյուղի ավերակներն են: Կանգուն է միայն եռանավ հոյաշեն եկեղեցին, որտեղ 1917-ի ամռանն իր մկրտությունն է առել զուռնահար Խաչանի որդի Թադեոսը: Ազգատոհմում հայրենանվեր երեւելիներ կային, եւ դա մշանակ էր, որ լույս աշխարհ եկած զարմը նախնայաց փառքին արժանի պսակ առներ, նախախնամությունը նրա առջեւ դրել էր գիտության սանդուղքը:

Ղափանում միջնակարգ կրթություն ստացած Թաթիկը հայրենի Լեռնաձորից (նախկինում՝ Քրդիկանց) մայրաքաղաք գնաց «սեւ եկած» մի տարի՝ 1935-ին, երբ մոլեզնում էին սովն ու եռյակները, ու երերուն կոլխոզները համատարած չքավորություն էին սփռել: «Կարմիր աշխատավոր»-ի երիտասարդ կոլտնտեսականը ցնցոտիավոր չէր, բայց Ջառի մայրիկը՝ մայրաքաղաքը յուրովի շատ պահանջկոտ պատկերացնելով, խասը (տնական գործվածք) ներկեց, հագցրեց ուսումնաստենչ զավակին:

Սարեցի տղայի համար համալսարանը հոգեցունց հայտնագործություն էր, հատկապես, որ դասավանդում էին համբավանուն գիտնականներ: 1940-ին ավարտեց աշխարհագրական ֆակուլտետը, մեկնեց բանակ, մասնակցեց Հայրենական պատերազմին եւ, վիրավոր տուն դառնալով, ուսուցչական աշխատանքի անցավ Ողջիի միջնակարգում: Երբ պատերազմն ավարտվեց, գիտության ապագա խոստումնաշատ մշակն ասպիրանտ դարձավ եւ առմիշտ իր կյանքը կապեց մայր բուհի հետ: Դասախոսական աշխատանքը զուգորդեց գիտականին, եւ ոչ լրիվ հերկված խոպանը տարի առ տարի սկսեց տեղի տալ:

Ձորքի զովասուն լեռներում մանկությունն անցկացրած երիտասարդի անհագ գայթակղությունն առաջինը համակեց Սյունյաց մեծ պատմիչին: Պատմագիտական վերլուծության ենթարկելով Ստ. Օրբելյանի գրական-պատմական ժառանգությունը՝ նա գիտությունների թեկնածուի աստիճան հայցեց «Սյունիքի թագավորությունը» ուշագրավ աշխատությամբ: Թ.Հակոբյանի հետազոտությամբ մեր միջնա-

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

դարյան պատմիչի «Պատմութիւն նահանգի Սիսական» աշխատությունը ճանաչվեց որպես սյունեցիների յուրահատուկ «Աստվածաշունչ մատյան»։ Դրանով իսկ ապագա մեծ գիտնականը դրեց Սյունիքի պատմության բազմակողմ հետազոտությունների գիտական հիմքերը։

Գիտության անհանգիստ վիճակը գիտնականի կիրքն է։ Երբ ուրարտագիտությունը ցնծալուր նոր փաստեր արձանագրեց Էրեբունի բերդաքաղաքում, աշխարհի հնագույններից այդ բնակավայրն ակնկալեց իր պատմությանը ձեռք զարկողին։ Դա, անշուշտ, Հակոբյանը եղավ։ «Երեւանի պատմությունը» մեծարժեք աշխատության առաջին մասը նրա դոկտորական ատենախոսությունն էր (1961)։ Այնուհետև լույս տեսան մյուս երեք մասերը։

Թաթևի Հակոբյանի տաղանդով Հայաստանի պատմական աշխարհագրությունը քննության առնվեց հավուր պատշաճի։ Սա գիտության այն ճյուղն է, որն ուսումնասիրում է երկրի կամ որևէ տարածաշրջանի ֆիզիկական, տնտեսական, քաղաքական եւ բնակչության աշխարհագրությունն ըստ դրա պատմական զարգացման ժամանակաշրջանների։ Արդ, պրոֆ. Հակոբյանի կրթողային հատորը՝ «Հայաստանի պատմական աշխարհագրությունը», որ Պատմահոր ուրվագծած ոճի արդիական ընկալման կերպն է, ոչ միայն հայագետների, այլև՝ մեր պատմության զորավոր նյութի մի մասնիկը քիմքին հառած յուրաքանչյուրի ինքնատիպ հանրագիտարանն է։ 1968թ. այս աշխատության գիտական մեծ հնչեղությունն ազդակ եղավ, որ ԵՊՀ ամբիոնի վարիչ, բազմաթիվ պատմաաշխարհագրական հոդվածների ու քարտեզների, բուհական եւ դպրոցական դասագրքերի հեղինակ Թ. Հակոբյանն արժանանար ՀՍԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ կոչման։

Հույժ խաղաղ պահվածքի եւ բարեհամբույր, բուլոբին ձեռք մեկնող, սրբասունուղ մտավորական էր՝ օժտված կապանձորեցու խոսքաշեն հունորով։ Երբ մախապատրաստվում էր «Անիի պատմությունը» երկհատորյակին, մի առ ժամանակ վրան էր գարկել Ախուրյանի ձորակառնի (Արմ. Հայաստան գնալ չէր կարող։ Թուրքական կողմը նրան «պերսոնա նոն գրատա» էր ճանաչել)։ Երբ

հեռադիտակով կարդաց Արաքսի մյուս կողմի սարալանջին քարաշարվածով գրած հակահայկական անհեթեթությունը, ծիծաղեց. «Թուրքերն իրենց ոչ-խարի առաջին թշնամին են համարում խորհրդային տանկերը»։

Նրա բեղուն գրիչն էր պատճառը, որ փառքը քարշ էր գալիս նրա ետեւից։ Բայց նրա անտարբերությունը մեծարման նկատմամբ ինչ-որ տեղ ծայրահեղ էր։ Ձորօրինակ, երբ ԵՊՀ-ն պատրաստվում էր հանդիսավոր նշելու նրա ծննդյան 70 եւ գիտամանկավարժական ու հասարակական գործունեության 55-ամյա հոբելյանը, գիտնականը խնդրեց, որ հանդիսավոր նիստ չլինի ու «տապալեց» այն։ Իսկ ԳԱ ակադեմիկոս առաջադրվելու նախաձեռնությանը ոչ միայն հետաքրքրություն չցուցաբերեց, այլև՝ «խանգարեց»։

Պրոֆեսորի գրիչը երբեք դադար չի ունեցել։ Նրա գիտական հրապարակումները, Հայաստանի քաղաքներին ու տեսարժան վայրերին նվիրված գրքերը, հանրագիտարանային հոդվածները, համահեղինակ այլ ստեղծագործություններն ու գիտական ֆորումներում կարդացած զեկուցումներն արագ գտնում էին իրենց սպառողին։ Ինչպես սպասելու է՝ Թ. Հակոբյանի դպրոցին հետեւեցին գիտության բազմաքանակ հայցվորներ եւ նրա հոգատարությամբ դարձան գիտնականներ։ Ըստ մոտավոր գնահատման՝ նրա տպագիր խոսքը գերազանցում է 2 հազ. մամուլը եւ արդարացնում այն դափնին, որով հետեւորդները պատվում էին նրան՝ երկրորդ Ալիշան։ Ինչպես ծնողի համար դժվար է որոշել, թե որ զավակն է ամենասիրելին, այնպես էլ գիտնականի համար իր մտքին ու տքնանքի արգասիք գրքերի դեպքում է։ Սակայն, ըստ իս, պրոֆ. Հակոբյանի գլուխգործոցը «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան» սովորածավալ հնգհատորյակն է (համահեղինակներ՝ Ստ. Մելիք-Բախշյան, Հովհ. Բարսեղյան), որի ստեղծման վրա հեղինակներն աշխատել են 30 տարուց ավելի։ Տպագրությունն ավարտվել է կես տարի առաջ։ Այս տիպի բառարան նախաձեռնողներ եղել են, սակայն ընկրկել ու նահանջել են։ Այդ մտադրությունն ունեն Թ. Հակոբյանի ուսուցիչ, ակադեմիկոս Հր. Աճառյանը։ Հնգհատորյակը համապարփակ է, ներառում է

շուրջ 136 հազ. տեղանուն ու յուրատեսակ հանրագիտարան է։ Մասնավորապես բնակավայրերի համար տրված են տեղորոշումը, պատմությունը, բնակչության շարժն ու թվաքանակներն ըստ աշխարհագրերի, տնտեսության ճյուղերը, մերձակա պատմական հուշարձանները, արժանահիշատակ իրադարձությունները, անվանի մարդկանց անունները եւ այլն։

Հանրապետությունում եւ սփյուռքում բառարանն ընդունվել է որպես մշակութային բացառիկ երեւույթ։ Այս տարի հեղինակներն արժանացել են հանրապետության նախագահի մրցանակի (Թ. Հակոբյանն ու Ստ. Մելիք-Բախշյանը՝ հետմահու)։ Ակնարկը գրելուց առաջ մի քանի հեռախոսազրույց ունեցա Երեւանի հետ։ Պրոֆ. Հովհ. Բարսեղյանը, կարծես Ոսկեդարից ավանդված ձայնով, ափեափ հուզվեց Թաթևի համար եւ պատվիրեց, որ իրեն եւս մեկ անգամ ընկերոջ ծննդավայրը բերեմ...

Նրա այրին՝ տիկին Բնարիկը, հարցնում էր. «Դպրոցն անվանակոչե՞լ եք Թաթևի անվամբ»։ Մի՞թե բավ է մեկ դպրոցը հանրահռչակ գիտնականի համար։ Կապուտջուղից, Արագածից երեւացող ո՞ր դպրոցն է քննություն բռնում առանց պատմաբան, աշխարհագետ, հայագետ Թադեոս Խաչատուրի Հակոբյանի։

Հ.Գ. 1989-ին պրոֆեսորը պատրաստվում էր միջազգային հանրության համար գրելու «Արցախ» պատմագիտական գրքույկը՝ իրեն հատուկ գիտական կուռ տրամաբանությամբ հերքելով թրքական նկրտումները։ Բայց հոկտեմբերին հանկարծամահ եղավ։ Հայրենի գյուղի դպրոցի հետ պրոֆեսորը մշտական կապի մեջ էր եւ կամեցել էր, որ իր մահից հետո անձնական մեծածավալ գրադարանի մի մասը հանգրվանի այնտեղ, ինչը եւ արվել է նրա այրու եւ որդիների ջանքերով։ Հիշատակ Սյունյաց Մեծաց օրհնությանը եղիցի։

«Սյունյաց աշխարհ»,  
20 հունիսի 2002թ.

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին



### ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԵՊ ՉՍԱՐՈՂ ՍԻՐՈՎ

Մարզային մայրաքաղաքից Սյունյաց աշխարհի վրա Գրիշա Մանուչարյանը իր պատուհանը նորովի բացեց: Սիսիանի, Գորիսի, Կապանի ու Սեղրու առանձնահատկությունների ետնախորքի վրա ընդհանրություններ գտնելը եւ ղեկավարման նոր ոճի հաստատումը գերխնդիրներից առաջնահերթը եղան:

**II** *Համակարգչային դարը Սյունյաց կրթական ու մշակութային հաստատությունների դռներն է բախում: Տեղ-տեղ սյունեցի բանիմաց դպրոցականները, համացանց (ինտերնետ) հրաշալիքի ապավինած տեղեկատվություն են փնտրում աշխարհի տարբեր ծագերում, հաղորդակցվում իրենց տարեկիցների հետ՝ Եվրոպայում կամ օվկիանոսից այն կողմ: Ուր որ է մարզի դպրոցները կունենան համակարգչային միասնական ցանց՝ համացանցի էլքով: Ժամանակի հողովույթի մեջ համակարգավորվելու համար հերթ են կանգնել գյուղական կրթօջախները: Էլ ինչ-պե՞ս ասես գյուղն անհրազեկ է, ամեն ինչից կտրված է...*

Հոգսերի թնջուկի ծանրությունից եւ նորանուծությունների պարզեւած ուրախությունից մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Գրիշա Մանուչարյանն ինքնամոռաց հակվել է գրասեղանին: Մտածումի մեջ մարզպետի բարեփոխիչ պահանջ - ծրագրերն են, գրառումներում ու թղթապանակներում Սյունիքի կրթամշակու-

թային նկարագիրն է՝ իր իսկ ուրվագծած հեռանկարը:

Նորօրյա դժվարությունների հաղթահարման մտահոգությունն ուղղակի Մանուչարյանի ափերի մեջ է. մեկին տրամադրում է խորունկ ուսումնասիրել կրթության օրենքը, մեկին հուսադրում է, մյուսին խորհուրդ տալիս՝ ինքնուրույն գտնել հիմնահարցի լուծումը, նախաձեռնող լինել: Պահանջկոտությունը մանուչարյանական բնագիծ է, իսկ պատժի մասին ակնարկում է կատակով կամ սյունեցիական հանրածանոթ զավեշտական մի պատմությամբ: Պահվածքին բնորոշ խոհականությունը, դիմացինին քննարկման տրամադրելու մեղմանուշ ժպիտն ու նրան օգտակար լինելու նախատրամադրվածությունը Մանուչարյան - ղեկավարի հմայքի արտահայտիչներն են: Իսկ խորքը որքան առիճքնող, այնքան անպեղելի է՝ հայրենամվեր մտավորականի բարեմասնությունների բարդ հյուսվածք:

Բուհն ավարտելուց հետո Դանիելանց համբավման ազգատոհմի զարմը ֆիզիկա է դասավանդել հայրենի Խնածախ գյուղի դպրոցում: Որ շնորհաշատ գյուղական ուսուցիչը խոստում ուներ, Գորիսում արդեն նկատել էին: Եվ ճակատագիրը գրեթե երեք տասնամյակ նրան նվիրաբերեց Վարարակնի ծորափերին ծաղկող քաղաքին: Սկսեց որպես դպրոցական տեսուչ, այնուհետեւ մի տասնամյակ ղեկավարեց Բակունցի անվան միջնակարգը: Քաղաքի ու շրջանի դպրոցների նորարարությունները ճախր առան այդ կրթօջախից կամ հանգուցվեցին այնտեղ: Գորիսեցիք «աչք դրեցին» խանդավառ ուսուցչապետի եռանդին, նրան հերթով վստահեցին ժողկրթբաժնարի, կուսըրջկոմի երկրորդ քարտուղարի, քաղխորհրդի նախագահի պաշտոնները: Հստակ երեւաց նրա անմնացորդ նվիրումն ու ինքնօրինակ «ծեռագիրը»: Վերջինս համայնավարների գրասենյակում տաբու ենթատեքստ ուներ եւ անգամ յուրայինին չէր ներվում:

Մի պատեհ առիթով Գրիշա Մանուչարյանի անձնական թերթիկն էի նայում: 1987 թվականից իշխանական բուրգի սանդուղքով սկսել է ետ-ետ գնալ՝ վերստին հասել է ժողկրթբաժին ու ամուն հանած իր դպրոցը: «Հո կավի՞ճն էլ ձեռքիցս չեք առնելու...», - ասել է եւ ինքնագոհ շարունակել մանկավարժական աշխատանքը:

Որքանով այսօր լրագրողական հետաքրքրասիրությունը կարելվույն չափ մեծ է, փորձեցի ժողովել ճանաչողների կարծիքները: Դրանց մեջ ընդհանուրը նրա կայացած անհատականության գործոններն էին՝ համառ հետեւողականություն՝ սեփական դիրքորոշմամբ, նաեւ ինչ-որ տեղ՝ քարտուղարական իշխանության ժամանակին չմիտվող կարծիք: Հիրավի, խորհրդային իրականության մեջ՝ հատկապես իշխանական կառույցում, անդեմ միակերպությունը համատարած բնույթ էր կրում: Եվ երբ մարդն ակամա իր մեջ շոշափում էր ընդհանուրից դույզն-ինչ տարբերվող այլընտրանքային դիրքորոշումը, պետք է պատրաստ լիներ հոգեկան տվյալանքին ու ակնկալվող բացահայտ կամ ոչ բացահայտ հալածանքին: Ջարմանալիորեն դրդապատճառներն անհատներից չէին ելնում, այլ՝ միակուսակցական լճացած դոգմատիզմից: Այսքանից հետո էլ չպետք է Գրիշա Մանուչարյանի կենսագրության մեջ տեսնել «զոհի կերպարին», որովհետեւ նա երբեք ընդվզող բողոքավոր չեղավ: Սակայն նրա սկզբունքայնությունը, ինչպես անթելված հուր, կայացող նոր հանրապետությունում վերածեց հույժ անհրաժեշտ բարեմասնության: Մանուչարյանը, 96-ին երեւանյան մրցույթում հաղթելով, նշանակվեց կրթության եւ գիտության նախարարության Սյունիքի տարածքային տեսչության պետ՝ տեղափոխվելով Կապան: Մեկ տարի անց նշանակվեց մարզպետարանի կրթության վարչության պետ:

**II** *Վարչության պետը ճանաչեց - կազմավորեց իր «ծանր հրետանին»՝ արհեստավարժությանը, ստեղծագործական խառնվածքով փայլող ուսուցիչների եւ տնօրենների առաջատար կորիզը: Հանրակրթության ասպարեզից հեռացածներին փոխարինելու եկածներին մանկավարժությունն արտաքուստ դիմջ ու դյուրին գործ էր պատկերահունում: Պետը «ջախջախեց» թերըմբռնումը: Կադրային խնդիրը մղեց առաջին գիծ:*

Փառավորվում է գործին նվիրվածներով, անհրաժեշտ է համարում ուսուց-

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

չին ներգրավել համայնքների կրթամշակութային հիմնահարցերի լուծմանը, գիտահետազոտական աշխատանքի հրապարակ տրամադրել նրան, ձեռնամուխ լինել վճարովի մանկավարժական փորձարարությանը, ստեղծել ուսուցչական նորամուծությունների Սյունիքի բանկ:

Նրա մեջ վաղուց են ի հայտ եկել ֆիզիկայի հիանալի ուսուցչի շնորհները: Իր մշակութային խառնվածքին հարիր՝ սելեռուն հայացք ունի Սյունյաց արմատի վրա: մարզի նորօրյա դպրոցը պետք է նաեւ հենվի Շաղատի վարդապետարանի, Վահանավանքի դպրոցի, Տաթևի համալսարանի մանկավարժական զարգացումների վրա: Սյունյաց առաջին կրթապետ Բենիամին Ընտրյալից մինչև Գրիշա Մանուչարյան գիտական քննության կարող 1600-ամյա գանձառատ շրջան է... «Տնտեսության հզորացմանը համեմատ կաճի նաեւ մտավոր կապիտալը» (նրա մի ելույթից):

Ուսուցչի եւ ընդհանուր առմամբ դպրոցի սոցիալական ծանր վիճակը Մանուչարյանը դնում է բոլոր հիմնահարցերի հիմքում: Հոգացավ տանտիրոջ պես իր «իշխանական տիրույթն» է առնում ուսուցչին նյութապես օժանդակելու ամեն մի առիթ: Ուսուցչական ընտանիքը նրա հոգածության զավակն է:

**II** *Բարեգործներին մատնացույց անելով սահմանամերձ գյուղերի դպրոցները, նպատակային աշխատանքներ սկսեց դրանց ուղղությամբ: Նոր լիցք հաղորդեց դպրոցը ոտքի կանգնեցնող բազմանշանակ ծրագրերի ներդրմանը, դպրոցի կառավարման արմատական փոփոխություններին, ուսուցիչների վերապատրաստմանը, դասագրքային ապահովվագրությանը, դպրոցական օլիմպիադաների կազմակերպմանը, բուհական կրթության խթանմանը:*

Երբեմնի գյուղական ուսուցիչն առավել, քան այլ մեկը մեզանում, կարելուում է գյուղական ուսուցչան առանձնահատկությունները: Այդ համակարգը Գրիշա Մանուչարյանի համար, կարծես, գիտական ուսումնասիրության բնագավառ է:

Անշուշտ, գյուղական ուսուցումն ավելի շատ տարբերվում է քաղաքային ուսուցումից, քան երկուստեք ունեն ընդհանրություններ: Գյուղական ուսուցչի կարգավիճակը, ազգագրական ընդգրկված միջավայրի առկայությունը, համասեռող մանկավարժական միջավայրի սահմանափակությունը քաղաքայինի համեմատ, դասարանների սակավ կոմպլեկտավորվածության պայմաններում մանկավարժական արդյունավետության բարձր ցուցանիշները տակավին չեն ուսումնասիրվել գիտական պատշաճ մակարդակով:

Որքան էլ, Գրիշա Մանուչարյանի համոզմամբ, դպրոցը պետք է պահպանողական կեցվածք ունենա, այնուհանդերձ իրականությունն իր անակնկալներն է մատուցում: Դպրոցի ինքնուրույնության սինդրոմն առաջ է բերել չսպասված ծայրահեղություններ:

Ինքնակատարելագործման մշտական պահանջն անտեսելով եւ իշխանության թույլ պահանջկոտության պատրանք ունենալով, առանձին տնօրեններ եւ մշակութային հիմնարկների ղեկավարներ ակամա հեռացել են կառավարման գիտական կազմակերպումից, հակվել նիհիլիզմին ու տնավարությանը: Եվ կրթամշակութային պետը հեռանկարի իր սիրահարվածությամբ մտադիր է կրթամշակութային հաստատությունների ղեկավարների համար գտնել ինքնախթանման - ինքնաբացահայտման արդյունարար եղանակներ: Որքանով դպրոցների ազատության աստիճանը մեծ է եւ ի դերեւ է եղել միջդպրոցային կեղծ մրցակցությունը, պետք է ունենալ ուժեղ տնօրեն: Ուժեղ զինված մանկավարժական գիտության առումներով, ազգային արժեքների խոր իմացությամբ, գործարարի հատկություններով, հոգեւոր բարեմասնությունների ներուժով: Գյուղական դպրոցը սահմանված ուսուցչական ծանրաբեռնվածությունների համեմատ, կարիք ունի բազմապրոֆիլ ուսուցիչների: Պետք է մտածել տղամարդ ուսուցիչների թվի ավելացման, գյուղական դպրոցներին առընթեր մանկապարտեզներ ունենալու, գյուղական ակումբներն ու գրադարանները տաղտուկից հանելու, մարզական դաստիարակության համար բազա ստեղծելու, համայնքը կրթամշակութային հաստատությունների հոգսերին մերձեցնելու մասին...

Այսպես է. Մանուչարյանը խորհում է, որոնում, հուզվում... Եթե անգամ բոլոր խոշոր հիմնահարցերը լուծման ճանապարհ գտնեն, նա դարձյալ հանգիստ չի ունենա, երբ ձեռքն ընկնի ուսուցչի վատ ձեռագիրը, հանդիպի դպրոցի չսափրված տնօրենի, իմանա որեւէ կոլեկտիվում ծագած վեճի կամ ինչ-որ գյուղում ուսուցչի վառելափայտ կամ կովի համար խոտ չունենալու մասին:

**II** *Չգիտեմ, թե քանի գորիսեցի է գրիչ վերցրել այս վաստակաշատ այրի մասին գրելու: Ինքս առաջին կապանցին եմ եւ հնգամյա ծանոթությունից առաջ հեռվանց գիտեի: Կապանից նայելիս գորիսյան նորահայտ ինքնատիպություններն էն գլխից ստվերված էին երեւում: Հինգ դժվարին տարիները բավ եղան, որ Գորիսի նկատմամբ սեր ու ակնածանք տածող ուսյալ կապանցին այդ բազումքի մեջ տեսնի նաեւ Գրիշա Մանուչարյանին, որին մտերմական շրջանակներում արդեն կոչում են նախանձելի քաղցրալուր կրկնանունով Գրիգոր Հաբանդեցի:*

Գրիշա Մանուչարյանը՝ Գրիգոր Հաբանդեցին, 65 տարեկան է: Երբ, կրտսերի անմիջականության իրավունքով «ներս խուժեմ» նրա աշխատասենյակն ու ասեմ շնորհավոր, վեցուկես տասնամյակ է լրացել, շաղվածի պես պիտի հանի ակնոցներն ու ասի՝ իսկապե՞ս:

Հետո իր համեղական գորիսյան բարբառով անվարժ պիտի ասեմ.

- Մի վերցակ եմ պիրալ, յոր կօնէ՞ս: Ի՞նչ կասի:

...Կռահումը թողնում եմ ընթերցողին:

«Այոնյաց աշխարհ»,  
10 հունիսի 2002թ., N14

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին



### Լեռնային ճարտարագետ Վահրամ Զովհաննիսյանը

Մեծավաստակ լեռնային ճարտարագետ (ինժեներ) Վահրամ Խաչատուրի Զովհաննիսյանը 1925-1960թթ. աշխատել է ԶԽՍՀ գունավոր մետալուրգիայի համակարգում: 1947-59թթ. եղել է Ղափանի պղնձահանքային կոմբինատի գլխավոր արտադրագետ: Շարադրել է Ղափանի հանքերի պատմությունը, որը լույս է տեսել հայերեն (1973թ.), ապա՝ ռուսերեն (1978թ.): Կապանի պատմությանը հետաքրքրվողների համար Վ.Խ.Զովհաննիսյանի ուսումնասիրությունը բացառիկ նշանակություն ունի:

Ահավասիկ մի շարք ուշագրավ փաստեր եւ իրադարձություններ:

...Լեռնային ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանը 1926թ. այսպիսի գրառում է կատարել. «Սրանից 20-25 տարի առաջ Բեխ գյուղում, Զակոբջան-բեկ Մելիք-Փարսադանյանի տանը մի հին գիրք է եղել: Այնտեղ ի միջի այլոց եղել է հոգեւորական հեղինակի նշումը այն մասին, որ Լուսինյան հայ թագավորների ժամանակ Բարաբաթում գյուղի մոտ, այսօրվա իշխան Տարսայիճի աջակցությամբ արծաթ է հանվել»:

– Ղափանում հանքերի եւ գործարանների (քյարխանա) գոյության մասին հավաստել է 14-րդ դարամիջի գրող Զանդավահ Ղազվիհին. «...Նախիջեւանի հարեւանությամբ Աճանան նահիայում (զավառ) եղել են պղնձի հանք եւ գործատուն»:

– 1900թ. սկսեց աշխատել հեռագրական կապը Գորիսի եւ Շուշու միջև:

– 1874թ. Գորիսում փոստային բաժանմունք բացելու հետ, փոստը Ղափանից առաքվում էր Գորիս, որտեղից ձիերով հասցվում էր Շուշի:

– Ղափանի եւ արտաքին աշխարհի միջև անմիջական հեռագրական կապ է հաստատվել Գորիս-Ղափան հեռագրական գծի շինարարությունից (1911թ.) հետո:

– 20-րդ դարի սկզբին Կատար-Կավարտի ընդհանուր մակերեսը, որը կազմում էր 258 դեկադար (282 հա), առանձին լեռնարդյունաբերողների միջև բաշխված էր հետեւյալ կերպ. Կունդուրով-136 հա, Մելիք-Ազարյանց-87 հա, Խոջամիրյան-27 հա, Լազարե-16 հա, Մելիք-Կարակազով-9 հա:

– Առաջինը Ղափանում վերամբարձ էլեկտրական կարապիկներն ի հայտ եկան Կատարի եւ Սյունիքի հանքերում 1903թ., երբ Կատարի (Ղաթար) պղնձածուլական գործարանում շահագործման հանձնվեց Ղափանի առաջին հիդրոէլեկտրակայանը:

– 1857թ. կառուցվեց եւ շահագործման հանձնվեց նոր գործարան Ողջի գետի (Ուղուր) աջ ափին, ավերակ Զալիձոր գյուղի մոտ: Այստեղ առաջին անգամ մետաղահալոցների օդամուղ փուքների համար օգտագործվեց ջրի ուժը: Մինչ այդ փուքերը շարժման մեջ էին դրվում ձեռքի ուժով:

– 1897թ. Սյունիքի պղնձածուլարանի կառուցումով, առաջին անգամ Ղափանում կիրառվեց հանքաքարի հալման վատերժակետային (ջրաշապիկային) եղանակը: Ժամանակի համար նորագույն տեխնոլոգիայով հագեցած այդ գործարանը կառուցվել է արդյունաբերող Մելիք-Ազարյանցի (շուշեցի) միջոցներով: Այդ գործի նախաձեռնողը եղել է լեռնային ինժեներ Վահանյանը:

Ղափանի առաջին հիդրոէլեկտրակայանը նույնպես կառուցվել է Մելիք-Ազարյանցի միջոցներով:

– Առաջին հարստացուցիչ ֆաբրիկական կառուցվել է 1908թ. Կատարի գոր-

ծարանում, Մելիք-Ազարյանցի միջոցներով:

– Դեռ 1900թ. Սյունիքի գործարանում կոքս է օգտագործվել, որը ձեռք էր բերվում Դոնցեկի ավազանից եւ կազմում էր տեղական վառելիքի (անտառա-նյութ, փայտածուխ) 15 տոկոսը:

**II** – ՈՍԴԲԿ Բաքվի կոմիտեի ջանքերով 1905թ. Ղափանում կազմակերպվեցին սոցիալ-դեմոկրատական խմբակներ, որոնց անդամների քաղաքական աշխատանքի արդյունքում 1905թ. մարտի 26-ին Ղափանում առաջին անգամ հայտարարվեց համընդհանուր գործադուլ, որը ղեկավարում էին Բաքվի կոմիտեի Կունդուրով եղբայրների հանքերից մեկում աշխատող ներկայացուցիչները: Որպես պատասխան, տեղական իշխանությունները ռազմական դրություն հայտարարեցին, Բաքվից հրավիրեցին պրիստավին, 150 ստրաժնիկներով: Ձերբակալվեց 6 մարդ: Սակայն բանվորների ճնշմամբ նրանց չորս ժամ հետո ազատ արձակեցին:

– Պղնձի արտադրության վերսկսման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 1924թ. մայիսի սկզբին Թբիլիսիից «Յունկերս» ինքնաթիռով Ղափան հասավ Ա.Մյասնիկյանի կողմից ստեղծված հանձնաժողովը Բաղդատյան, Ջարապով, Կարապետյան եւ մի էներգետիկ: Դա առաջին ինքնաթիռն էր, որ Ղափան եկավ ու վայրէջք կատարեց նախկին Սյունիքի գործարանի մոտ: Օդանավակայանի բացակայության պայմաններում այդ թռիչքը կապված էր մեծ վտանգի հետ: Ինքնաթիռը պետք է վայրէջք կատարեր Գորիսում, սակայն ամպամածության պատճառով հասավ Ողջի գետի հովիտը՝ կողմնորոշվելով իրանական Ղարադաղի լեռների վրա:

– 1930 թվականից իրանական բանվորների հավաքագրումը դադարեցվեց: Նրանց վերջին խումբը Ղափանը թողեց 1931թ., նրանցից մի բանինս էլ իրենց ընտանիքներն Իրանից մշտական բնակության համար Ղափան տեղափոխեցին:

## Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

– Մարիետա Շահինյանը Ղափանի հանքեր է այցելել 1926-ի օգոստոսին:

– 1926 թվականին, դեռ գարունը չբացված, բարեխառն մի օր այստեղ բեռնաթափվեց մի մեծ քարավան: Մի քանի ընտանիք էին: Հատկապես աչքի էին ընկնում կանայք, որոնք, որպես կանոն, դուրեկան արտաքին ունեին: Նրանք խոսում էին երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն եւ հունարեն: Դա Ղափան հասած հայրենադարձների առաջին քարավանն էր՝ կազմված իզմիրցիներից, որոնց պատերը ուղիղ երկու հարյուր տարի առաջ բռնագաղթել էին հենց Ղափանից: ...Այդ խմբին դիմավորող չկար: Միայն պարապ շրջողները նրանց շրջապատել եւ հետաքրքրությամբ դիտում էին տարօրինակ հագուստ կրող այդ մարդկանց: Նորեկներն իրենց իրերը հավաքեցին թեմիների տակ, տեղ պատրաստեցին ծերերի համար, իսկ երեխաները խմբվեցին նրանց շուրջը: Կանայք իջան գետափ, քարեր բերեցին, դաշտային օջախներ շարեցին: Տղամարդիկ վառելիքայտ գտան, ջարդեցին, դարսեցին օջախների մոտ եւ գնացին ծանոթանալու շուկային: Ծեր կանանցից մեկը մոտեցավ մի օջախի, գրպանից հանեց լուցկու տուփը եւ վառեց օջախը: Այդ օջախից էլ կրակը տարան եւ վառեցին մյուս օջախները: Կանայք սկսեցին ճաշ պատրաստել եւ լվացք անել, իսկ ծերերը հսկում էին երեխաներին: Երկու օր անց հրապարակը դատարկվեց, նորեկները տեղափոխվեցին Սյունիք գործարանի ավերակ շենքերը: Հայրենադարձները սկսեցին մշակել իրենց տրամադրված հողը, որը մինչ այդ խոպան էր: Հանքի վարչությունը նրանց օգնեց եզներով: Շուտով հայրենադարձները Ղափանի շուկան ողողեցին ամեն տեսակի բանջարեղենով՝ վարունգ, կաղամբ, բազուկ, գազար եւ նույնիսկ պետությանը հանձնեցին մեծ քանակությամբ ծխախոտի տերեւ: Այդպես Ղափանում դրվեց ծխախոտագործության եւ ապրանքային բանջարաբուծության սկիզբը:

– Ալեքսանը 1926 թվականին կազմակերպեց ֆուտբոլի խումբը: Ղափանի պատմության մեջ դա առաջին ֆուտբոլի թիմն էր, որի անդամները խաղադաշտ կառուցեցին սեփական ուժերով, մոտավորապես այնտեղ, որտեղով այժմ ձգվում է Շահունյանի փողոցը: Երբ ֆուտբոլիստներն առաջին անգամ

դաշտ դուրս եկան, շուկայում մարդ չմնաց: Բոլորը եկել էին դիտելու իրենց համար բոլորովին անծանոթ այդ խաղը:

II – *Նախկին հանքատեր Խոջանիդյանի երկհարկանի բնակելի շենքը՝ կառուցված եվրոպական ձեւով, հատկացվեց հիվանդանոցին (1926-ին), որն ուներ 30 մահճակալ: Առաջին գլխավոր բժիշկը Աշոտ Պարոնյանն էր: Նրան փոխարինեց բժ. Իսրայել Փիրումյանը: Վիրարուժականը կազմակերպվեց 1926-ին, առաջին վիրաբույժը հայտնի պրոֆեսոր Շարիմանյանն էր:*

– 1932թ. նոյեմբերի 7-ին, երբ երկաթուղին հասցվեց Ղափան, հնարավոր դարձավ ծանրաքարշ սարքավորումների ներկրումը: Ֆաբրիկայի շինարարությունն ավարտվեց 1935 թվականին:

– Եղենու եւ սոճու ամրակափայտը, որը թեթեւացրեց ամրակապողների աշխատանքի պայմանները, առաջին անգամ Ղափան մուտք գործեց միայն 1933 թվականին:

– Ծեր դափանցիք պատմում էին, որ առաջին պատերազմից մի քանի տարի առաջ Չափնի գյուղի բնակիչ Նիկոլայը, Ռուսաստանից տուն վերադառնալիս, բերում է մի «տաչկա»: Այդ երկանիվ սայլի մասին լուրը տարածվում է, եւ շրջանի գյուղերի բնակիչները թափվում են Նիկոլայի բակը, որ տեսնեն հրաշքը: Բայց դաշտերից բերքը տուն կրելիս, հենց առաջին երթաշրջանում, սայլը շուռ է գալիս եւ ջարդվում: Պատմում են նաեւ, որ անվավոր տրանսպորտը բանեցնելու մի փորձ էլ արվել է Ջեյվա (Դավիթբեկ) գյուղում: Բայց այդ փորձն էլ ավարտվում է վթարով եւ խեղճ «նորարարը» հազիվ է կարողանում փրկել իր եզները:

– 1908-09 թվականներին միտք հղացավ բացել մի հիմնական հանքուղի, որը պետք է անցներ հարավից՝ ձորի ստորոտից դեպի հյուսիս՝ մինչեւ Կավարտ գյուղի տակը: Սմբատ Մելիք-Ստեփանյանը 1927թ. դեկտեմբերի 10-ին խնամքով կազմված եւ ամենայն լավատեսությամբ տոգորված մի զեկուցագրով նորից այդ հարցը բարձրացրեց:

«Սյունյաց աշխարհ»,  
20 սեպտեմբերի 2002թ., N24



## Գրկում եմ քեզ, քո...

Ամեն գյուղական համայնք իր անվանի զավակների անտես կաճառի ուրվապատկերն ունի, եւ այդ ընկալումը, ինչ խոսք, անհաս է քաղաքաբնակիչ:

Գյուղի մշտական զրուցատեղում գլուխ-գլխի տված ծերակույտը եւ դպրոցն՝ իր հերթին, մանչերին ու պարմաններին հպարտություն են ներշնչում՝ մատնացույց անելով գյուղի պատմության հողվույթի պայծառ անհատակաճություններին, որոնց գործունեությունը համայնքի ճանաչելիության առիավատյան է: Նրանք գյուղի երկնակամարում, համայնքի ավանդույթներով փառավորվողի համար, պատկերանում են որպես յուրովի բոցավառության ու փայլի ասուպներ... Հայրենի հողի համար մարտերում ընկած մեր նախնիների, պետական գործիչ Խ.Գեորգյանի, գիտության վաստակավոր գործիչ Թ.Հակոբյանի, գրող Ա.Ունամյանի լեռնաձորյան պանթեոնում հանգրվանել է 64-ամյա Յուզիկ Լեւոնի Համբարձումյանը: Հիվանդության անբուժելիությունը տակավին համամարդկային տկարություն ու նահանջ է, բայց Յուզիկի թողած թերին անգիտելի ու անկռահելի չէ...

Բաքվի գվարդիական այր, հայր Լեւոնը, ում իմաստախոսությունները ցայժմ շրջանառվում են որպես առած ու ասացվածք, մանկանն անուն դնելիս,

## Մեջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

Ժամանակի հովերով տարված, ակնկալիք ուներ: Հայտնի ֆիզիկոս եւ գյուտարար Յուզի անունը, թերեւս կկողմնորոշեր որոշակի ապագան: Կարծես, եղավ...

Դեռ պատանեկության տարիքում գյուտերին տածած սիրահարվածությամբ, հայրական տան գրադարանի ընդլայնման մտահոգությամբ, ռոմանտիկ նախածեռնությունների ձեռնարկմամբ Յուզիկը տարեկիցների շրջանում լիդերի համարում ուներ: Լեռնաձորի յոթնամյակում, Քաջարանի միջնակարգում սովորելիս ֆիզիկամաթեմատիկականի քանքարով լիացրել-հիացրել էր ուսուցիչներին: Մանկավարժագիտության կողմից դեռեւս չկարելուրված մի օրինաչափությամբ, շնորհների բնատուր պարգև (բարբառիս դիպուկ բառով՝ սովորի) ունեցող սովորողի բարքը խթանում է աշակերտական համրույթի ուսումնաստեղությունը: Յուզիկն ու համադասարանցի Գագիկն ավարտական դասարանում բարեկամացել են Պ.Սեւակի հետ, մտերմի մանակագրություն ունեցել: Հետագայում Յուզիկն իր որդուն Պարույր անվանակոչեց, Գագիկ Դավթյանը շարունակեց բանաստեղծին...

Գիտության ճանապարհն անշեղ ուղենիշ էր խորհրդային դարի սահմանագծին անհրաժեշտ շրջադարձ կատարած երիտասարդի համար: Ավարտելով Երեւանի պոլիտեխնիկականի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ զուգահեռված մայրի կոչմամբ, 1970-91թթ. աշխատել է մոսկովյան ծովային գիտահետազոտական ինստիտուտի Երեւանի մասնաճյուղում, ապա՝ ՀԽՍՀ ԳԱ Կապանի մասնաճյուղում՝ ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, փորձարարական գործարանի տնօրեն: Աշխատանքին զուգահեռ բազմակի անգամ գիտական հոդվածներ է տպագրել հայրենական ու արտերկրի պարբերականներում, 1981թ. պաշտպանել է գիտական թեզ, ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակ է հանքարդյունաբերության բնագավառի՝ զրանցված չորս գյուտի:

Ինչպես հայրենի գյուղում միստուկաց ուներ ամեն ընտանիքի հետ եւ Կապանում քաղցրալուր էր բոլոր ճանաչողներին, այդպես խորհրդագուրդ հարաբերվում էր գիտական շրջանակների, հետազոտողների հետ, քաջալեր-

վում մոսկովյաների, եվրոպաների գործակիցներից ու յուրովսան քաջալերում նրանց:

**||** *Հայրենիքի անվտանգության մտահոգությունը, են գլխից, նախ ուսյալի առաջնահերթությունն է: Եվ արցախյան լարվածության ուժգնացման շրջանում Համբարձումյանը բացահայտեց կազմակերպչի իր շնորհները: 1991-96թթ. լինելով Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, իր անտես եւ տեսանելի ներդրումն է ունեցել շրջանի պաշտպանության ծանրածանր աշխատանքներում: Կապանյան առաջին իշխանության նախագնացները պատվով քննություն բռնեցին. թեպետ եղան անլույս տարիներ, չեղան բռնություն եւ սովահարություն, ոգեկոչվեց քաղաքացիական համերաշխությունը, վերակոչվեցին կորուսյալ հայեցի տեղանունները...*

Իշխանության բուրգում անհատի վաղվա օրը համեմատական է եղանակից կախված գյուղատնտեսական բերքի հաջողությանը: Արդ, խոստումնաշատ գիտնականին մնում էր «դարձի գալ» եւ անցնել գիտամանկավարժական աշխատանքի. պաշտոնավարեց «Արդիմպեքսում», եղավ ՀԴԵՀ Կապանի կրթահամալիրի կառավարման ավտոմատացված համակարգերի ամբիոնի դասախոս, դոցենտ, ամբիոնի վարիչ: Համբարձումյանի օժտվածությունների ընդգծելին արդիականությունն էր, անցյալի արժեքների գնահատմամբ՝ նորի շուտափույթ ընկալումը. ձեռք զարկեց գործարարությանը՝ կազմակերպեց «Նասիբենց» ՍՊԸ-ն, համագործակցեց «Լամաքս գրուպի» հետ՝ պարսիկ բարեկամների բազունքի նախագնացը հանդիսանալով:

Հայրենի եզերքը շեն ու բարեկեցիկ դարձնելու, մշակույթն ու կրթությունն ուժեղի ներածին չափ խթանելու հոգեւոր բարենամանություններով ու ներդրումներով մշտական տեղ գրավեց ժամանակի հարահոսի վրա: Հայրենի գյուղի բարե-

կարգումների ցանկում նաեւ նրա ուկետառ անունն է: Երբեւէ գրել էր գյուղի աշակերտներին. «Տառապում եմ մշտական լավատեսությամբ՝ համոզված, որ մեր հայրենիքի լավագույն օրերը հեռու չեն: Այսօրվա սերնդին ցանկանում եմ արժանապատիվ կեցվածք, ապահով կյանք, իմաստալից ժամանց...»: Հիանալի հռետոր էր՝ մեջբերումների իմաստուն խոսք ու խրատով: Իր մեծածավալ գրադարանի գիտատեխնիկական բաժնեմասը նվիրաբերել է հայրենի գյուղի դպրոցին, որտեղ կենտրոնացված են նրա դիվանից մասունքներ: Եվ, անշուշտ, հավերժությանն է միտված Պարույր Սեւակի՝ Յուզիկին գրած մի նամակը, որ բանաստեղծն ավարտել է ստորագրությամբ՝ գրկում եմ քեզ, ք...



## Կտրած մապին գունե աղ արեք

Երբ իմացա, որ աստծո կամեցողությամբ եւ պարոն մարգպետի հաճությամբ մեր համերկրացիներից Հոմեր անունով մի գիտուն այր հրաժեշտ է տվել երեւաններին, հիմնավորվել մարզոստանում ու ստանձնել նորաստեղծ կրթահամալիրի րաբունապետի պատվական պաշտոնը, սիրտս փառավորվեց: Ի բնե պարտքի զգացումը խոսեց իմ մեջ՝ ինչպե՞ս ողջուցն Ողիսեսին, որ ի վերջո հանգրվա-

## Մ Էջանանցին՝ իր ժամանակակիցների մասին

Են է Կապանում: Խորհեցի՝ մանակով խնդիրք անել հայրենաբաղձ գիտնականին՝ մտորել մարզում ֆիզիկամաթեմատիկական հանդես հրատարակելու հնարավորությունների մասին: Տեխնիկական մտավորականության հուժկու ինքնաբացահայտումը, դպրոցներում ֆիզիկամաթեմատիկական կրթության լավագույն ավանդույթները, մարզի հոգեւոր զարգացման հեռանկարը հիրավի հուշում են դա անել: Բայց մանակա, հավանաբար, կմնար սոսկ հրապուրիչ առաջարկություն:

Սուպերտպարան չունենք, թուղթ չունենք: Եվ ամենակարեւորը՝ հիմա ամենուրեք բուքի եւ ցուցամատի հասկանալի շփումն է դերել է անում ամեն մտահղացում: Արդ, առաջարկությունս օրակարգից հանեցի՝ ի պահ տալով երազներիս սնդուկին:

Բայց ահա, երբ տկարացել է «Կապան» քաղաքային թերթի հրատարակման գործը, հանգիստ առնել չեմ կարող: Երեւանում բազմաժամ թերթերը մրցահանդեսի մեջ են, իսկ Կապանում, կարծես, կշեռքի բանիվ-մժարը փետուրի թեթեւությամբ վեր է բարձրանում, հացիվ-մժարը՝ վար իջնում:

Ո՛հ, բավական է տրտնջաք, թե հացը թանկ է, հարկերը ծանր են, կոմունիստական հնոտիքն եք հագնում, լույսն անջատում են ու փլան-փստան: Հասկացե՛ք, անլրագիր ապրելն է իսկական դժբախտություն: Եվ, եթե համակերպվեք դրան, վաղը չէ մյուս օրը ոչ թե 21-րդ դար կգա, այլ՝ մի այլ դարահամար, որ վաղուց հաշիվները փակել է պատմության հետ:

Իշխանության պահվածքն ի տես ամենքի ազնիվ է՝ նա փողը չի թաքցնում: Իսկ հարուստներն այն թաքցնում են: Գերի լինելով գաղտնաստության նախկին պատկերացումներին, ոմանք տակավին չեն ըմբռնել, որ հարուստ լինելը պատիվ, պարծանք ու տոն է, եւ այդ ամենի հավաստումը բարեգործությունն է: Շքեղ ավտոմեքենաներ ու առանձնատներ գնելը, խոշոր եկամուտներ ունենալը մեծարանք է եւ՝ ձեռնարկության, եւ՝ անհատի անվանը: Ողբերգականն է հաստատվում կյանքում, երբ հարուստն ու հարստությունը չեն սատարում հոգեւոր-մշակութային կայացմանը, երբ պատերազմ չեն հայտարարում չքավորությանն ու աղքատությանը:

...Որպեսզի ավտոբուսին չվճարեն, սովորաբար Կապան եմ իջնում մեր գյուղի ունեւորների մեքենաներով: Հաշտ լինելով հույժ համեստ կենցաղիս հետ, քաղաքում աչք եմ ածում, թե կապանցի ո՞ր մի երեւելին ինձ հյուրասիրության կտանի շքեղ պանդոկներից մեկը եւ, ի մեծարում գյուղական ուսուցիչս, մի շիշ օղի բացել կտա: Սակայն առաջներում արմատացած այս սովորույթն էլ է տկարացել: Իմ սպասածին հակառակ, ինձ որպես հյուր իրենց տներն են տանում բանվոր Երվանդ Շամիրիչն ու կրթապետ Վասիլ Ավետիսյանը: Իսկ մեծամասամբ երեւելիների հասցեին թոնթորալով, վայելում են ռադիոյի եւ «Սյունիք» թերթի խմբագրություններում, դպրոցական տեսչությունում եւ արհմիության գրասենյակում հյուրասիրած սակավաշաքար սուրճը եւ գյուղ վերադառնում (հիարկե՛ սքափ):

Որ հարուստներն ինձ մոռացել են, փույթ չէ: Մտավորականի պարկեշտությանը հավատարիմ՝ ձեռքս դեպի նրանց չեմ մեկնի:

Կտրած մատին գոնե աղ արեք...



### Կյանքում միշտ պետք է կա սխրանքի համար

ճ գնակեցությանը դույզն-ինչ հակվելով՝ խորհում եմ, որ մանկավարժական աշխատանքի մա-

խասիրությունը մատենագրությանը նվիրվելու բաղձալի խոստումն է: Նախեցեք Սյունիքի եւ համայն հայոց դարերն ի վար՝ պատմիչները, գրիչները, ծաղկողները, քերթողներն անխտիր վարժապետել են: Մեր մաշտոցյան վարեր երկրամասում Մովսես Խորենացուց (թե՛ Խորեացի) մինչեւ Սերոբուղը երեւելիները մատենագրել են դասուսուցումին զուգընթաց կամ հետո... Այս բանաձեւումը հույժ տեսանելի է մերօրյա բազմավաստակ այդ Արկադի Ծատուրյանի օրինակով: Շառավիղված լինելով բիբլիական ժամանակների Ձագ Հաբանդեցու ոտնակոխ Խնձորեսկի նորակա գերդաստանից՝ գործիսյան մեծերի մրցասպարեզում իր երկու տասնյակ հատորակով դափնեպսակ առավ ու տեղ գրավեց Լաստի խութ պառնասի լուսաշող բարձունքում...

Կարդացե՛ք, կարդացե՛ք Արկադի Ծատուրյանի՝ որդի Երվանդի. պատմաբան է, բանաստեղծ ու արձակագիր, բանահավաք ու ազգագրագետ է, նոր ժամանակի քաղաքական անցուղարձերի մտահոգ դիտորդ ու գիտակ է, նաեւ՝ քահ-քահ ծիծաղող ու հեզմող սյունեցու խնձորեսկաբույր տարեգիրն է:

Ընկեր Ծատուրյան (կուզե՞ք՝ նաեւ պարոն Ծատուրյան), Քո կրտսեր համատեսակն եմ. արդ, գիտեմ, որ շողափայլ պարզեւներին անտարբեր ես եւ, ընթերցողների բազումը կազմակերպելով, պարզեւատրում եմ Քեզ Կապանա իմ օրրանի մշտագո ընծաներով՝ Անդոկ նահապետի դարասքող խոսք ու պատգամի ոգեղենությամբ, Աժդանական-Կապուտջուղի սլացքի անզուգական վեհության բնապատկերով...

Քո գրչին անխամիր զորություն եմ մաղթում: Հնագույն մանկավարժ Քո հեղինակած գրադարանով վերստին ապացուցեցի, որ կյանքում միշտ տեղ կա սխրանքի համար:

ՌՈՒԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ-ԷՋԱՆՑԻ

# Պատմվածքներ, մանրապատումներ բանահավաքություն



## Երկուսեր


Գրոն, բոխիով լի մաղախը մեջքին առած, ոչխարի հոտը լանջն ի վար գյուղ է քշում: Փոշին երկինքն է բռնել, իսկ երեխաներն ընդառաջ են վազում: Մեկօրյա հովիվն ընդմիջարկում է քիս ասելը, երեխաներին հանդիմանում, որ չխրտնեցնեն եւ, նկատելով ոչխարին հնոտի հագուստներով դիմավորելու եկած տղամարդկանց, վերջնագիր երանգով կանչում.

- Վալոդ հե՛յ, թոխին կաղում էր, թողել եմ Շվոտի լափռիների տակ:

- Դռներին մնա՛ս, - իրենց բակից լսելով, անհծում է Գուռին, - բա որ գայլի բաժին դառնա՞: Երեկ չէ՞ր, որ Արտաշի քուռակին չանգոռտել է:

- Խոխա՛, գյուղում ի՞նչ նորություն կա:

- Խուշուշ տատի կովը ծնում է, - միաբերան ասում են երեխաները:



- Խուրմա՞ն, - կռահում է Աբոն, - հա՛, ժամանակն է:

Մարիան փռած սամիթը հավաքեց ջեջիմի մեջ, ցանկապատի վրայով նայեց դեպի հարեւան բակը, որտեղ կուրկուտ էր հնդրում Շուշանը.

- Աղջի՛, լսե՞լ ես, Խուշուշի կովը ծնում է:

- Տիրոջ աչքը լույս, - շալն ականջի ետեւ քաշեց, Նունիկը ծնեց, հիմա էլ Խուրման է: Թոռներն էլ ամեն օր տասը - տասնհինգ գառ ու ուլ են գոմից հանում: Աբոյին արդեն կանչե՞լ են...

Խուրման իրավ ծանրել է: Խուշու բիբին գոմից տուն չի գալիս: Տղան, հարսը, թոռները գնում-գալիս են: Մթնժողրեք է. գյուղը

գոմերը փակել, հեռուստացույց նայելով ուրցի ու գիվանի թեյ է խմում:


Գոմի լույսը վառած, մի հին եղանակ դնդնալով, Խուշուշ բիբին շոյում է ցավ քաշող Խուրմային, հնդրում պոչին կպած կծողուկները: Խուրման տնքում է, մերթ չոքելու շարժում անում, մերթ անսովոր լիզում փաղաքշողի հացաբույր ձեռքերը:

Լուսինը խունկ է ծխում լեռնաշխարհի վրա: Գյուղադեմ անտառում գիշերային անդորրն ակոսում է ցախաքլորի ախորժալուր կանչը: Մոտակա գոմից մի աքաղաղ է տարածում արծազանքում:

- Չոռ, բայդուշ, - թոնթորում է գոմի բակի քարին դադար առած Խուշուշը, - գիշերվա կեսին գլխակերի պես ծայնդ գլուխդ ես գցել:

Հանքի գիշերային  
հերթափոխն էլ





## Պատմվածքներ

եկավ, բայց խուրման դեռ երկունքի մեջ է: Հորատող Վաղոյի ճամփան գոմերի մոտով է անցնում:

- Այ խուշուռ բիբի, մեղք ես, տուն գնա, - հորդորում է նա, - դա ծնող չի...

- Չէ, չէ, չէ: Վաղո, քեզ մատաղ, հենց տուն մտնես՝ զանգիր, մեր Վաթոյին վեր կացրու, ժամանակն է:

Կեսուրը քնահարամ հարսին ուղարկեց Աբոյին կանչելու: Դռան թակոցին, գիշերանոցն ուղղելով, ընդառաջ եկավ Լիզան: ...Աբոյին արթնացնել չհաջողվեց, հոգնաբեկ քուն էր մտել:

- Խոր մրափի գաս, - գոմի դռանը ձայնը բարձրացրեց խուշուռը, - տես-տես՝ անունն էլ լավ կով ծնեցնող է: Թե որ էն լիրբը կանչեր, կատվի ծակուծուկով կգնար...

Աղմուկի վրա Նոյեմենց պատշգամբի լույսը վառվեց:

- Պառավ, լեզուդ քեզ քաշիր, հա, - կրակահերթ տվեց Նոյեմը, - ժամանակին արեշիկ Համբարձումի հետ արածներիդ լուրը Համադան էր հասել:

- Այ գիշերվա քաջք, - կեսրոջ փոխարեն մեջտեղ ընկավ Վաթոն, - մենք կով ենք ծնեցնում, քո նման անբանին պատասխանելու հավես չունենք...

- Վայ, շնորհքդ սիրեմ: Անբանը դու ես ու քո տեգրակենը, - բակի լույսը վառելով, կռվտուքի հակված, մոտ եկավ Նոյեմը, - աղջի, կեսրոջը օժիտի կարպետը մինչեւ հիմա դեռ թափ չեք տվել: Բա դու խոսելու տեղ ունե՞ս...

Նոյեմի ձայնն ընկավ Աբոյի ականջը, եւ նա ինքն իրեն արթնացավ:

- Նոյեմին սպանում են, գնա, - խանդից տապակվելով՝ խայթեց Լիզան ու լույսը հանգցնելով՝ գնաց պառկեց հերանց տնից բերած նախշավոր թախտին: Հորիզոնը կարմրատակում էր: Աբոն, բաճկոնն ուսերին առած ու հորանջելով, հայտնվեց ցայգալույսի լեզվակրվի թեժ կենտրոնում: Առավոտյան կիթի շտապող կանայք բանիմացի հետաքրքրասիրությամբ դիրքեր էին գրավում: Նոյեմը Վաթոյին դեմ էր արել պատին, ձայնը գլուխը գցել:

Վերին թաղից Հուռին, կատարվածից անտեղյակ, ամբողջ ուժով գոռում է.

- Այ ժողովուրդ, հեյ, գայլն ապրանքը կոտորել է...

Հետո բերեց

սամդերքն ու կացինը, երեսն ուղղեց դեպի մերքին թաղը, որտեղ իրար էին անցել, սկսեց հմայել.

Կյուլ անիմ, կյուլկապ անիմ,

Հդէ քյինիմ, չափ անիմ,

Կյուլին ռէխը կապ անիմ...

Աբոն նստեց վաղորդյան ցողից խոնավացած քարին: Խուշուռը վրա պրծավ.

- Տղամարդ ես, նստելու ժամանակ ես ճարե՞լ: Վեր կաց սրանց լեզուները մեկ-մեկ տակռահան արա...

- Սեւ լինի այն օրը, երբ ես տնփեսա եկա: Յարաբ, տեսնես մեր Կովկասում առանց կնիկ մի գյուղ կլինի՞, թողնեն - գնան այնտեղ, - այսքանի հետ էլ մի «չլսված» հայիոյանք տալով, բարկացավ Աբոն: Կանայք սսկվեցին:

Իսկ Աշոտիկը, որ աչքերը տրորելով եկել էր գառները հանդ տանելու եւ խուշուռ տատի գոմի դռնով անցնելիս տեսել էր, թե ինչպես է խուրման լիզուն ծածառ անող հորթուկին, վազեց դեպի ուռենու մոտ հավաքվածները.

- Խուշուռ տատի, աչքդ լույս, խուրման ծնել է...

Պառավը սթափվեց ու բազկատարած վազեց գոմի ուղղությամբ:



## Գլխահարկ արք

ողովն արդեն

սկսվել էր, սակայն

բազմահարկ վարչական շենքի սանդղահարթակներում մեկական կանգնած աշխատակիցները դեռ տեղում էին: Անժպիտ, անխոս, ձեռքներն աստիճաններն ի վեր պարզած՝ ընդունում էին ուշացածներին:

Իգրեկյանը, կոշիկների քրքրվածությամբ ծնվելով, չուզեց վազանցել իրենից առաջ բարձրացող միջառասակ ուսուցչուհուն, որն, անշուշտ, նույնպես վերջին հարկի դահլիճն էր գնում՝ ժողովի: Կինը դադար առավ, փնջացնելով արծակեց մեջքին կապած շալի քշկոռը եւ մտերմաբար դիմեց իրեն հավասարվածին.

- Կարտոֆիլը հավաքել են, բերքը պակաս է: Չեզ մոտ ո՞նց է:

- Մեզ մոտ ավելի վատ է: Ե՛վ ջրի խնդիր կա, եւ գոմաղբն է փողով:

...Երբ դահլիճ մտան, դպրոցների ներկայացուցիչներից ոչ մեկը նրանց կողմը չնայեց: Չախ ձեռնափր ականջի ետեւ աղեղած՝ բոլորը հայացքներն ուղղել էին «Դպրոցների օգնության ծրագիր» կազմակերպության՝ մայրաքաղաքից եկած բանախոսին, որը, թեպետ նախագահությունում միայնակ էր, ունկնդիրներին իրենով էր արել հրատապ ասելիքով, ձեռքերի համապատասխան շարժումներով՝ ըստ ձայնի երանգի: Ասելիքի կարեւորությունից ստիպված՝ ցուցամատերից զատ մյուս մատները բռնեցրել էր:

Իգրեկյանը տեղ գրավեց եւ, հետեւելով հարեւաններին, ընթացքից սկսեց գրառել «...ըը





## Պատմվածքներ

հավաքել ժամանակին, մուծել ժամանակին: Դա իմ փողը չէ. քո փողը չէ, նրա փողը չէ, դա արտերկրացուն է»:

ժողովականները, լսածը մոռանալու վտանգից շունչները պահած՝ գրառում էին: Խոսքն ավելի ազդու դարձնելու նպատակով հռետորը դիմեց պատկերավոր արտահայտչամիջոցի.

ժամանակին չմուծողի հոր հարսանիքը միտն ենք բերելու: Այդ զգաստացնող դիտողության վրա՝ նստածները երկյուղից մեկեն կռացան: Ամբիոնից նրանց գլուխները հագիվ էին երեսուն: Բանախոսը, նկատելով չկռացած նորեկին, «դա արտերկրացուն է» բառերից հետո շանթեց նրան.

Ինչու՞ չեք գրում, մենք լուրջ փաստեր ենք ձեր առջեւ դնում:

Իգրեկյանը, բանախոսի «պրոֆեսորական պահվածքից» ճնշվելով, չուզեց ասել, որ տեղեկատվությունն իրեն ծանոթ է, եւ որպեսզի չկտրի հռետորի մտքի թելը, ցույց տվեց անծայր մատիտը եւ կափկափեց.

Կտորել է: «Ջինս» ֆիրմային կոշիկներով բարկությունից տկտկացնելով ամբիոնը՝ բանախոսը կրկնում կամ ըստ իրեն՝ շարունակում էր.

Դա իմ փողը չէ. քո փողը չէ... Իգրեկյանն անծայն թերթեց տետրը եւ գտավ, որ այն, ինչ գրառում են, նախորդ ժողովներում արդեն գրառել են: Եվ շշուկով դիմեց կողքին նստած գյուղական դպրոցի տնօրենին.

Այս ամենը մենք գրած ունենք: Պարոն բանախոսը հիմա նորույթներ է հայտնում, - շնչաց չսափրված տնօրենը, - նախկինում ասում էր՝ դա արտասահմանցուն է, հիմա՝ դա արտերկրացուն է: Առաջ ասում էր՝ դա քո փողը չէ, իմ փողը չէ, իսկ հիմա՝ դա իմ փողը չէ, քո փողը չէ: Չե՞ք տարբերում: Խորհուրդ եմ տալիս՝ մանրամասն գրել:

Իգրեկյանը ձանձրացավ, հորանջեց եւ ակամա աչքն ընկավ մյուս կողքին նստած դասղեկուհուն: Նա կռացել, բայց չէր գրում, այլ անթարթ նայում էր իր պայլուն կոշիկներին:

«Ջինս» ե՞ն, - խոսեցրեց Իգրեկյանը:

Երեւի: Դարեւանցինս են, մեկ օրով խնդրել եմ այս ժո-

ղովի համար: Իսկ քո կոստյումն ո՞ւմն է, առաջին անգամն եմ տեսնում, այդ կոշիկներին էլ չի բռնում:

- Գյուղապետի քավորինը, բարի մարդ է, - անկեղծացավ Իգրեկյանը:

Չսափրված ակտիվացավ.

Իսկ իմ բաճկոնը կոմունիստների ժամանակներից է: Լավ եմ պահել, չէ՞:

Ետեւում նստած շրթներկված ուսմասվարը գրչի ծայրով հրեց Իգրեկյանին.

Ճի՞շտ է, որ ձեր գյուղում ֆիզիկայի ուսուցիչը դասի ժամին կռացել է կավիճը վերցնելու, երեխաները տեսել են վերնաշապիկի կարկատանը:

Իգրեկյանը գլուխը վեր ու վար արեց:

Ե՛, տասներկու հազարն ի՞նչ դրամ է, - փնթփնթաց ուրիշի կոշիկ հագած, - լույսի, հացի ու մի զույգ նասկու փող էլ չէ:

Մեր տնօրենը սալարկան ծախել է, վառելափայտ գնել եւ ամեն մի ուսուցչի համար՝ մի մայկա, - ձեռքը բերանին դրած՝ իր տնօրենին մեծարեց առջեւում նստած երկարամյա դասվարը, - նա ճանաչված մեծություն է՝ մեր կոշիկները խնայելու համար հրաման է արձակել, որ դպրոցում հողաթափեր հագնենք:

Ցը՛, ցը՛, ցը՛, - բարենախանձ զարմացավ շրթներկվածը:

... դա արտերկրացուն է, - դահլիճից շշուկներ լսելով՝ խոսքի այս բառերն առանձնացրեց ու բարձրաձայն

մեց ճառախոսը, այնուհետեւ, ի խնամ կոկորդի, ջրի համար վար ցատկեց ամբիոնից:

ժողովականներն ուղղվեցին աշակերտի պես: Մտքերի ծածուկ փոխանակությունն աշխուժացավ:

Այդքան աշխատավարձով ո՞նց ապրես, - կարծես մենախոսեց ծանուցիչը՝ ծամող տարեց ուսուցիչը, - մի կով ու երկու ավանակ եմ պահում... Ինչո՞ւ պետք է էջ պահեն: Ուսուցչին դա պետք չէ, ով պահում է, թող պահի, - դիրք ընդունեց չսափրվածը եւ ցույց տվեց կողքին նստած ուսուցչուհու ձեռնապայուսակը, որը թաղիքի հին կտոր էր հիշեցնում, - էս չի՞ պետության պահած դասատուն, ոչ հազուստ կարող է գնել, ոչ կոշիկ, ոչ սոււնկա:

Ոչ երշիկ, ոչ հալվա, ոչ վաֆլի, - հառաչեց երկարամյա դասվարը: Մինչեւ ե՞րբ պիտի հին շորերը տակից հագնենք, վրայով՝ փոխ վերցրածը: Ումից էլ մի բան ես խնդրում՝ պետք է նրա երեխային լրացուցիչ պարապես, - քիթը կուչ ածեց շրթներկվածը: Աշխատավարձ ասածն էլ չենք տեսնում, - թոնթորաց տարեցը, - ստացածը հենց պարտքերն է ծածկում: Այ ընկերներ, ապրանք պահեք, ապրանք... Բանախոսը, որ արդեն խնել էր ջրամանի ամբողջ ջուրը, կարծես, վերջացնում էր.

... դա քո՞ փողը չէ, նրա փողը չէ...

Իգրեկյանը մի խղճահար հայացք մետեց շուրջը նստածներին: Իսկապես,





## Պատմվածքներ

ինչպե՞ս են այս մարդիկ ապրում չնչին աշխատավարձով: Անգամ առօրեական գործառնության իրեր չեն կարող գնել, էլ ինչ մնաց՝ հագուստ, սննդամթերք, վառելավախոտ: Եվ արդեն սովորական է, որ իրար երեւալու համար հագուստներ են փոխ վերցնում, մեկի նվիրած շոկոլադե հերթով կծում:

Դահլիճի դուռը բացվեց, եւ ծամոն տրորող մեկը հռետորին գլխով արեց:

Ամփոփումը հնչեց գրեթե որպես բղավոց.

- Դա արտերկրացուն է:

Եվ դահլիճն ակամա, մեկ մարդու պես, դա կրկնեց բարձրաձայն: Թղթերը ծալեցին, ծափահարություն հնչեց: Իգրեկյանի ժպիտը վեր ածվեց ծիծաղի: Նա այլեւս չէր կասկածում, որ դահլիճում նստածները վաղուց ներքնաշորեր անգամ չեն գնում: Շատերը, գուցե, դրանք իրենց մարմնի վրա չեն կրում: Իհարկե, կանայք՝ նույնպես: Շրթներկվածը մոտեցավ ճառախոսին, որն առաջինն էր մոտենում ելքի դռանը, շնորհակալություն հայտնեց հռետորիկայից ստանալու համար եւ սիրալիք հիշեցրեց, որ նա բռունցքված մատները բացի:

Իգրեկյանը ծիծաղում էր՝ հարուցելով բոլորի զարմանքը:

Իսկ սանդղափաթակներում կանգնածները՝ անժպիտ-անխոս, աստիճաններն ի վար էին պարզել մյուս ձեռքերը: ■



# Ժպիտների քաղաքը



Քաղաքը, կարծես, ոչ այլայլվել, ոչ էլ սկսվել էր: Երբ ռայկոմի դռներն անդարձ բացվեցին, եւ կոմունիզմի ուրվականը՝ ծիտիկի կերպարանքով, դուրս թռավ, հանգրվանեց խուստուփի գագաթին ու այնտեղից անեացավ, սկսեցին ռմբահարել: Բոլորը հասկացել էին, որ քյիրվան մեր հացը կերել, կատաղել ու մեզ դավաճանել է: Ռմբապատարանում էլ ժպիտի առիթ կար: Ասում էին՝ թուրքը պոզերը հանել է, իսկ Սիրան հաքուրը ողորմի էր տալիս Փիրան գիզուն, որ միշտ ասում էր, թե մարդկանց կենդանիների հետ համեմատելիս թուրքը օձին է նման:

Այունյաց աշխարհագրորդ, չսպասելով կանոնավոր բանակի վրա հասնելուն, ինքնապաշտպանությունից անցավ հարձակման: Դատարկված թուրքական գյուղերում մեր տղաները ճանաչեցին Դափանի տախտակն ու մեխը, պատշգամբներին համատարած քսված կապույտ ներկը, որ մեր պահեստները ստանում էին տանիքներն ու կաթսայատները ներկելու համար: Փրվանում, Մամադկուլու տանը, Արթուրը ճանաչեց իր հոր հնամաշ վերարկուն, որ անվանի կոլտնտեսականը գնել էր ընկ. Ստալինի մահվան տարում: Իսկ Արաքսամերձ մի գյուղում Աշոտը

ճանաչեց իրենց չաթուն, որ

նախշավոր գործել էր իր Դոնի տատը: Արթրեջանում սկսեցին գահակոխվները, որոնք վերջ չունեն Օսման Սելջուկի ժամանակներից: Դամակուսակցին, գահաժառանգին, զարմիկին, բարեկամին, որդին հորը, հայրը որդուն այնտեղ չեն խնայում: Մարդկային այդ տեսակն էլ այդպիսի ժպիտ է առաջ բերում,

ինչպես Էլչիբեյի մեկ բառանոց հարցազրույցը մոսկովյան թղթակցի հետ՝ նեթթ: Այսինքն՝ ոչ:

Ռումբերը քանդեցին Կապանա աշտարակը, եւ ընկած ամեն մի վեմի համար 40 ասկյար հոգին ալլահին բաշխեց: Իսկ Արաքսն անցնելիս (տեղ ԱԾ, այդ ե՞րբ ու ինչպե՞ս էին այս կողմն անցել) ամբողջ ցեղով, առանց մեռնակատարի, «վայ, դադա, վայ» էին կանչում...

Աշտարակի աստվածահաս կործանումից Բաբելոնն անունը չփոխեց, բայց մեր Դափանը, հաղթանակի համազարկի տակ, Կապան նորահունչ անունն առավ: Կյանքը կամաց-կամաց վերագտավ իր բնական հունը: Քաղաքն ապաքինվել ու սկսել է կատակել: Գինոսյան ժպիտների դափնում շատերն են տենչում: Գորիսից, Մեսրոպը՝ Սիսիանից, եկած ջոջերը մրցում են յուրովի համեղական բարբառներով: Առօրյա խոսքի մեջ խցկվել են նոր բառեր՝ դուլար, շոու, բիզնես, կազոյլ, անգործներ միություն եւ այլն: Պիժոն տղաները փողոցներն անցնում են՝ գարեջրի «իմպորտին» փայլատուփերը բերաններին առած: Քաղաքում մնացել է միայն մեկ մուրացկան, այն էլ... չի մուրում, «պարտատերերն» են գտնում նրան: Շիկահողից, Եղեգնաձորից, Եղվարդից տանձի կաթուկ են բերել շուկա, բուրմունքից ուշք գնում է: Քաղաքը երեկոյան ուտում է 150 դրամանոց լուլիկն ու քնում, իսկ գիշերահակները՝ տարեցների թոնթորանքին անտեղյակ, թրեւ են գալիս պանդոկներում, որտեղ, եթե ցանկանաս, «դաշաքիշերի» խորոված էլ կտան:

Թոշակներն ու աշխատավարձերը տալիս են ոչ մեծ ուշացումներով, եւ մարդկանց ունքամեջը բացվել է: Մեծահարուստներն ամոթխած հարսի պես են եւ կարծում են, թե բարեգործությունից երկնային պատիժներ կառնեն, օրինակ,





## Պատմվածքներ



ծանր գրիպ, աղերի կուտակում, սերտիֆիկատի արժեզրկում եւ այլն:

Սարգսյան արձանի շենքը ճերմակել է, առինքնող տեսք է առել. սա աշխարհում երրորդ Սպիտակ տունն է՝ Վաշինգտոնից ու Մոսկվայից հետո: Աստիճանավորները ջոկ-ջոկ են անում կառավարման կորած-թուլացած սանձերը: Մի տեղ իրար են խառնվել. դժվարանում են ճշտել տեղանունների բնիկ հայկականները, որ ուղիղ 700 տարի առաջ թվարկել է երջանկահիշատակ Ստեփանոս Մետրոպոլիտը: Տանջվեք, տե՛ղն է, ձեզ ո՞վ էր ասում յոթ դար ուշանաք: Ղուչուլլու, Աջիլլու, Մահմուդլու. Աղքանդ, Բաշքյանդ, Կարաքյանդ, Ալիդարա, Յաղլու դարա, Կարավըն դարա, -օ՛ֆ, ո՞նց էլ այս տափախությունները հարազատացել էին սյունյաց խոսվածքներին: Մի թուրքի նմուշ էլ չկա, որ գոնե տարեցները զրույցի բռնվեն. չէ՞ որ բոլորը գիտեն թուրքերեն: Լեւոն, Մամիկոն, Տիգրան ավուներն ասում էին՝ թուրքի հետ նստիր-վեր կաց, բայց ձեռքիդ մահակը բաց մի թող: Իրենք այդպես էլ անում էին: Ինձ դուր էր գալիս, որ թուրքը հայի ամեն ինչը գովում ու հավանում էր: Օրինակ, Կապանա լիմոնադը խմելիս, ասում էր՝ քյոփօղլու լիմոնաթ, ձան վերիդ (թարգմանիչ գտեք):

Քաղաքը փառատոններ է անցկացնում ու երգում ամեն քայլափոխի: Մի ծխող, աշխույժ տատիկ գյուղից եկել, շուկայում ձու էր ծախում: Գնելու միտք չունեի, բայց խոսելու պատրվակ էր պետք: Խնդրեցի՝ մի երգ ասա, բոլոր ձվերն առնեմ: Եվ տատիկը՝ Ծինամ րունըթ քարի նի, Եկամ հղեթ պարի նի: Թող էս րարի Լեւոնի Ընդրուջան րարի

նի:  
Է՛, այս պատալը գուսան է:

Բայց կարեւորը դա չէ. թաքստոցից հանեց մի դուլ ձու, դրեց ցուցադրած 10-ի մոտ ու ասաց՝ այ մարդ, պայմանը պայման է: Ամենուրեք ջրավազաններում լողացող երեխաների պես քաղաքի փեշի տակ էլ ժպիտը ճողփում է: Քաղաքապետարանի կողմից խուզված ծառուղու նստարանին Աբոն է: Սա կյանք չի, ասում է: Չետո ծոծրակն է քորում, հըմ անում: Ու մեկեն՝ առաջ մարդիկ գողություն ու խաբեություն էին սովորել, եւ դա համարում էին լավ կյանք: Չիմա, որ վատ բանի ճանապարհն ինքնիրեն փակվում է, անսովոր վիճակ է առաջ գալիս, դրա համար են տրտնջում: Նորին սովորելը ժամանակ է պահանջում:

Չա՛, Աբո ջան, այդպես է:  
- Որտե՞ղ ես աշխատում:  
- Չե՛չ, - ձեռքն է թափ տալիս, - գյուղ են գնացել, արջառներ են բտում: Էն ժամանակ, որ Չամլետը, Նորիկը, Ռահիկը, Սլավիկը եւ մյուսները ճառեր էին ասում, ես սխալմամբ ետ կանգնեցի, թե չէ հիմա գոնե տնային կառավարիչ կլինեի: Չիմա էլ ջոջերն են փոխվել, էլ ինձ չեն հիշում...

Ուր գնում ես, ժպիտ կա, թեպետ ինչ-որ տեղ՝ դեռ դառնավում: Մեկը բոլոր թերթերը կարդում է հենց կրպակի պատուհանից, մեկը վարձու զուգարան է բացել, մեկը հենց փողոցում գովազդում է իր կոմունիստական հնոտիքը: Իսկ անեկոտներին էլ թիվ չկա: Չրաչը միայն մի չնչին մասն է լույս ընծայել՝

Ձոքանչ-նամե: Քաղաքական գործիչներին վերաբերողներն էլ աջ ու ձախ նայելով ու կամացուկ չեն պատմում: Եթե մարդը, օ՛ պղզիցիա ունի, այսինքն՝ օպոզիցիայի մեջ է, որ հայավարի ընդդիմություն է կոչվում, ապա նա պարտավոր է գոռ տալ երեւակայությանը եւ սրան-նրան ասել, որ... մեր դեկավորները պատրաստվում են փախչելու: Ո՞ւր: Լեւոն Տեր-Պետրոսյանը Պետերբուրգ է գնում՝ Սոբչակի տեղը, Չրանտ Բագրատյանը Բահրեյնում արդեն պաշտոն ունի, Արա Սահակյանը «դաչա» ունի Սահարայում, Վանո Սիրադեղյանը Սիրիա է, Վազգեն Սարգսյանը Սարդասի ծովում վաղուց է հաճանավերի տորմիդ կազմակերպել, մեր մարզպետ Աբրահամյանը Բիրմայի վրա աչք ունի, Արարքյանը՝ Արագած սարի, իսկ Գնունին արդեն գնացել է: Չա՛, Փափազյանի բաջանադը (պետք է լինի քենակալ) Ավստրիայում կենդուրուի ֆերմա ունի (հավանաբար Ավստրալիան նկատի ունեն: Բայց արդյո՞ք կենդուրուն ընտանի կենդանի է):

Օ՛, Գինոսի Կապան: Իրար են խառնել սյունյաց նրբաճյուղ խոսվածքները, մայրաքաղաքի կեցվածք առել, դարձել Չիշողության Բաբելոն: Երդվյալ կոմունիստներն էլ են ժպտում, հո չեն պատրաստվում բյուրոյի նիստի: Ցուցածողով իր հպարտությունն ընդգծող մի ուստիկան կա, որին միշտ անժպիտ էի տեսնում: Բայց երեկ, երբ եռամյա Գագոն մանկապարտեզից գալիս կենտրոնական կամրջից ծկլակի տվեց մարզկենտրոնի գետի մեջ, կարծես ուստիկանի բերանը ականառակներից ետ քաշեցին: Ուստիկանը ժպտում էր: Իսկ մեզ միայն այդ էր պակասում:



Պատմվածքներ



Չ  
ա  
ն  
պ  
ա  
ն  
ա  
կ



Քաղաքը

**Ք**եռի Լիպոյի ավտոբուսը, ձախակողմ նարնջենի լապտերիկը թարթելով, շրջադարձ է անում գյուղի կանգառում: Անտանելի շոգ է, եւ ավտոբուսը Քաջարանից ուղերթի է դուրս եկել առանց ուղեւորների: Առաջկտրուկ անելով՝ երեխաները լցվում են մեքենան.

- Քեռի Լիպո՛. կա՞, - վրա են տալիս մեկեն, անգամ մոռանալով բարեւել:

Քեռի Լիպոն լավ գիտի իր ամեն մի ուղեւորին, երեխաներին առավել

եւս: Գլխով է անում, ժպտում՝ գլուխը տարուբերելով:

- Ով մեկից ավելի ուտի, կիջեցնեն հիվանդանոցի կանգառում,- կես լուրջ, կես կատակ ասում է վարորդ քեռի Լիպոն, - բժիշկ Քարամյանն էլ արծակուրդում է, ո՞վ պիտի բուժի անգինան:

...Շուկայի մոտ պաղպաղակի կրպակն է, աշխարհի ամենալավ կրպակը: Թե պաղպաղակը սպառված լինի, դարձյալ հաճելի է կրպակի շուրջը պտտվել, ծիկրակել ցածրադիր պատուհաններից: Այս կրպակի շուրջն են հավաքվում քաջարանցի բոլոր դպրոցականները, այստեղ էլ ծանոթանում են գյուղից եկածների հետ: Չէ, վեճ ու կռիվ չի լինում...

Քաղաքի երեխաները մեծամասամբ չեն նախընտրում պաղպաղակն ուտել փողոցում, տունը մոտ է, կտանեն, ավստի մեջ կղեն ու գոլով անուշ կանեն:

Կարենը, Արթուրը, Միշիկը, Արմենը, Գայանեն, Նուրիկը, Անուշը, Սառան, Արամը, Գագիկը, բոլորը, որ եկել են գյուղից, հենց կրպակի մոտ կիսով չափ բացում են պաղպաղակը, թուղթն աղբարկող գցում ու լիզում ազահաբար:

- Գագո՛, պաղպաղակն ո՞վ է հնարել, - արագախոսում է Արմենը՝ գլուխը թեթելով պաղպաղակի կիսվող զուգահեռանիստի տակ:

- Ով հնարել է, նա մեծ պիտի կոչվի,- արագ-արագ ասում է Արմենը, որի պաղպաղակի մնացորդն արդեն ջրիկացել էր եւ ստիպել տիրոջը՝ լիզելն արագացնել: - Ուրեմն՝ մեծ իտալացիներ...

- Այ չտեսներ, ձեր գյուղում չկա՞,- ասում է քաջարանցի Արմանը, պաղպաղակները հանգիստ դասավորելով տոպրակում:

Արթուրը, դեն գցելով պաղպաղակի ճմրթած աշտանակը, վիրավորվածի կեցվածք ընդունելով, առաջ է գալիս.

- Թե մեր գյուղը կաթ չուղարկի գործարան, երազումդ էլ պաղպաղակ չես տեսնի, հասկացա՞ր:

- Դե՛, դե՛...

- Ճիշտ է ասում, Արթուր, - ձեռքերը թաշկինակին քսելով՝ ասում է Սառան, - ինչու՞ գյուղերում պաղպաղակ չեն վաճառում, ամեն լավ բան քաղաքում սպորողների համար են վաճառում: Չէ՞ որ գյուղե-





Պատմվածքներ

րի խանութներում էլ սառնարաններ կան:

- Իմ կարծիքով պաղպաղակը հենց հնձվորների համար է, - կարծ կապում է Արամը, - ոչ ինձ, ոչ քեզ, ոչ նրան:

- Իսկ ի՞նչ վատ է, որ բոլորն ուտեն, - գոչում է Միշիկը, - ի՞նչ թագավոր, ի՞նչ քաղաքացի, ի՞նչ հնձվոր: Եհ՛շտ չէ, Պրոֆեսոր:

Պրոֆեսորը Վարդանի մականունն է: Նա լուռ է ու սակավախոս: Եվ, ինչպես աշխարհի բոլոր երեխաները, ինքն էլ ամենաշատը պաղպաղակ է սիրում:

- Մի հեռու տեղ մի քաղաք կա՝ անունը Պաղպաղակ: Փողոցներում պաղպաղակի անհամար կրպակներ կան: Ամեն մի կրպակում՝ հազար տեսակ պաղպաղակ: Այդ քաղաքում բոլորը միայն պաղպաղակ են ուտում եւ ոչ մի մայրիկ չի ասում, թե կոկորդո կցավի, պաղպաղակ չուտես...

Ունաք, ծիծաղելու պատրաստ, սպասում էին, որ Պրոֆեսորն իր հեքիաթը վերջացնի:

- Քիչ պրոֆեսորություն արա, - վրա բերեց Անուշը, - թե կախարդել գիտես, այնպես արա, որ մեր գյուղն էլ պաղպաղակ բերեն:

Իսկ քեռի Լիպոն հեւիհեւ հասնում է կրպակի մոտ ու թեթեակի կշտամբում:

- Աչքս ջուր կտրեց ձեզ սպասելով, մարշ, գնում ենք:

Երեխաները, բաժանվելով աշխարհի ամենալավ կրպակից, վազում են կանգառ: Քեռի Լիպոն ուղղություն է վերցնում դեպի գյուղ:



Խորթ մայր արջը



մբողջ Վերին Չորքում ո՞վ չէր ճանաչում Փիրմագրա գյուղացի Ստեփան պապին:

- Ոսկի մատներ ուներ, - ասում էր Բանուվշա տատն իր ծերուկի մասին ու նրա գլխով անցածները անձկորեն պատմում թոռներին, բայց թոռներին ամենից շատ հուզում էր խորթ մայր արջի պատմությունը:

\*\*\*

Ոսկեուրիկ աշունը լուռկեն մտել էր Վերին Չորքի անտառները: Տեսակտեսակ վայրի տանձը հասունացել ու կաթուկ էր տալիս: Արջի քոթոթները դարան էին մտնում հսկա տանձենիների մոտ, որ պաղպաղակի պես փափուկ ու համեղ կաթուկն ընկնի, վազեն հափ անեն: Փիրմագրայի աշունն ուրիշ է...

- Ստեփան, հերիք քնես, վեր կաց, գնա՝ արեգունու տանձենուն մտիկ արա: Ժամանակն է, - արելը դեռ չծա-

գած՝ ձայնեց Բանուվշան:

Առաջինը Ստեփան պապը դուրս եկավ գյուղից: Աշնանացող բնության երանական բուրմունքներից նրա ռունգերը խուտուտ էին գալիս: Ցողոտ սարդոտայնները ընկնում էին նրա երեսով: Մի սարդ հրացանի փողով իջավ ուսին:

- Չը՛, հյուսածդ քանդեցի, բարկացե՛լ ես, - ինքն իրեն խոսեց Ստեփան պապը: Չետո հիշեց իր տատի պատմածը, թե, իբր, սարդերը լուրեր են բերում: Տանձուտին մոտեցավ հուշիկ քայլերով, այնպես, որ խազալը չխշշա ու իր գալը մատնի:

- Թե որ Բանուվշայի տանձենուն ձեռք տվող լինի՝ հը՛մ, - մտածեց ու պատրաստեց հրացանը:

...Ջարմանքից, թե գայրույթից քար կտրեց Ստեփան պապը: Բրդոտ ծուռթաթը բարձրացել էր ծառն ու անխնա թափում էր կարմրատակած պտուղները: Չախմախը սարեց, որ գետնով տա իր Բանուվշայի ծառը թալանողին, բայց հանկարծ աչքով ընկան գետնին վազվզող երկու քոթոթները: Հրացանը ետ քաշեց Ստեփան պապը, շունչը պահեց, որ տեսնի այդ



անզուգական տեսարանը:

Մայր արջը, ուժեղ հարվածելով ճյուղերին կամ պոկոտելով, վար էր թափում տանձը, հետն էլ մրթմրթում: Քոթոթներից մեկը դրանք խելոք հավաքում էր կոճղի մոտ, իսկ մյուսը, որ վատառողջ ու լղարիկ էր երեւում, ձեռքն ընկածն ուտում էր: Պահ առ պահ մայրը ցասկոտ հայացքը վերելից նրան էր ուղղում, գազազում ու նորից շարունակում ճյուղերը թափահարել:

Պատահեց այնպես, որ թմբլիկ քոթոթը մի քանի հասուն





## Պատմվածքներ

տանձ ջուկեց ու մեկնեց հազիվ քարշ եկող իր երկվորյակին: Դա նկատեց մայր արջը եւ ահավոր գոռալով՝ վար իջավ: Լղարիկը գիտեր իր բանը: Վագեց ու կուչ եկավ կոճղի մոտ: Մայր արջը մի ապտակ հասցրեց թմբլիկին, իսկ լղարիկի վիզը անգթորեն ոլորեց ու այնպես զուլւր կոճղարմատի տակ խոթեց:

- Պատժում է, - անցավ Ստեփան պապի մտքով, - ա՛յ քեզ մայր...

Չետո մայր արջն ու մյուս քոթոթը մոտեցան տանձի կույտին ու սկսեցին անուշ անել: Երբ համեղ նախաճաշն ավարտվեց, մայր արջը մտածեց պատիժը վերացնելու մասին եւ կոճղարմատի տակից դուրս քաշեց փոքրիկին: Բայց նա անշնչացած էր...

Մայր արջը միայն փնթփնթաց ու պատրաստվում էր հեռանալ: Սակայն թմբլիկը վայնասուն բարձրացրեց, սկսեց ողբազին լիզել իր երկվորյակին, բարկանալ մոր վրա: Նա չէր ուզում բաժանվել: Մայր արջը կոպտաբար դնջով հրեց թմբլիկին, որ հեռանալու նշան էր:

Ստեփան պապը ապշել էր քարասիրտ մոր վարմունքից: Նա սթափվեց, չախմախը կայծ տվեց, ու քոթոթը հասցրեց արցունքոտ աչքերը վերջին անգամ մորն ուղղել ու փախավ, պատսպարվեց մոտակա քուլուտում:

Այս ամենը Ստեփան պապը պատմեց տանը: Բոլորից շատ Բանովշա տատն էր հուզվել:

\* \* \*

- Ստեփան, կար-չկար, դա խորթ մայր էր, - լացակունած ասաց նա, - լավ արեցիր, որ սպանեցիր, էդ քարասիրտի միսն ու մորթին մեզ պետք չի...

Ստեփան պապը գլխով արեց ու վառեց ծխամորժը:



## Կատուն



Արկղի մեջ փակված՝ կատուն մի քանի անգամ տխուր մլավեց:

Բնագրով գիտեր, որ

դեռ ցերեկ է, եւ նրան թվում էր, թե բանտել են իրեն: Գուցե՞ պատահի մոռանան, եւ ինքը սովամահ լինի:

Այս ժամին նա միշտ պառկում էր պատին թեք հենած երկանքի մոտ եւ, արեւից ծուլանալով, նայում էր խնձորենիների սաղարթներում պահմտոցի խաղացող թռչնակներին: Չետո տանտիրուհին ծայնում էր նրան՝ փիսո՜ եւ մեկնեմ վեր էր թռչում, մոտ վազում ու ձեռնասուն քաղաքավարությամբ ուտելիքը վերցնում ու քաղցը հազեցնում:

Թաղում ոչ ոք չէր հալածում նրան: Միայն ճախարակ մանող մի տատիկ շատ էր նախատում, երբ զարմանքից սրում էր սկանջները եւ թաթը մոտեցնում դանդաղ պատվող անվին:

Կատուն, թեկուզ քաղցած էր, իր ցեղին հատուկ սովորությամբ նորից հոտոտեց արկղում եղած մի կտոր հացը, բայց չկերավ: Նա սովոր չէր մարդկանցից թաքուն ուտելուն: Մի անգամ էլ անհույս մլավեց: Չետո, կարծելով, թե երագի մեջ է, վեր ցատկեց, թպրտաց: Արկղը կապկպված էր... Բայց նա հիմա մառան պիտի զնա՝ մթերքները հսկելու... Կատուն անորոշ մռլտաց, սսկվեց:

Արկղը բացեցին: Կատուն անհամբեր դուրս ցատկեց: Տան ծանոթ կահ-կարասին իջեցնում էին մեքենայի թափքից: Բագմոցը, որին նստում էր աղեղված պոչով, քարշ էին տալիս դեպի անձամոթ դուռը:



Դա անըմբռնելի էր կատվական ուղեղի համար, եւ նա անհամզհաս հոտոտեց գետինը: Ասֆալտի հոտից նրա սեւաթույր ռունգերը խուտուտ եկան, հոտն անսովոր ու անդուր էր: Չայացքը դանդաղ վեր բարձրացրեց, նոր տուն էր եւ այնքա՛ն բարձր:

Սահմուկեցուցիչ զգացում պարուրեց կատվին: Շուրջը հարազատ ոչինչ չգտնելով՝ նրան թվաց, թե ինքը զազազվում է, ուր որ է վրա կպրծնի ու կճանկռոտի մարդկանց: Օտարացման բնագրից նա մի ուսոյունով պոկվեց տեղից ու սլացավ փողոցի երկայնքով: Մոտակա մետաղե աղբամբարից մի գամփռանման կատու դաժան հայացքը վրան հառեց ու հարծակման դիրք բռնեց: «Փրչոտի մեկը, կատվական ցեղի տականք, դնչի կեղտը տես», - իր հերթին նա ֆշշացրեց աղբակերի կողմը: Եվ բռնեց հարազատ գյուղի ճամփան...

\* \* \*

Երկու օր հետո կատուն հայրենի եզերքում էր: Անցավ թաղի ծանոթ ոլորանների կեռամաները, մտավ իր մանկության բակը, առվակից կուշտ ջուր խմեց, սանդուղքով լուռ վեր բարձրացավ: Սենյակներում դատարկություն էր: Գոնե ծանոթ իրերից մեկը լիներ, ասենք, այն կծիկը, որ միշտ զլորում էր թախտի մոտ կամ վառարանը, որի մոտ տաքանում էր:

...Աղեկտուր մլավելով՝ կատուն ամբողջ օրը ման եկավ տան ու բակի ամայության մեջ: Իրիկնադեմին մտավ ցախատուն: Չնոտիների մեջ տաքուկ տեղ էր պատրաստել ու ձագեր ունեցել: Իսկ հիմա նվիրական անկյունը տակնուվրա էր եղել... Թվաց, թե լսում է իրիկնային ծանոթ ծխորը՝ բակի առվի կարկաչը, ոչխարների մայունն ու կովի փնջոցը. բակը ողողված է լույսով, եւ ահա մեկը կանչում է իրեն՝ փիսո՜... Պատրանքն ավելի սեղմեց նրան ու, վերջին ուժերը հավաքելով, դնչիկների մեջ, որքան կարող էր՝ խորացավ: Եվ այլեւս դուրս չեկավ:





Պատմվածքներ

**Հ** լորիկ աչքերով, հարցասեր փոքրիկ տղա է Առնոն: Նա ամեն օր պայուսակն ուսակապերով ամրացնում է թիկունքին ու ճամփեզրի ծաղիկները հաշվելով՝ գնում դպրոց: Երբ գունագեղ թիթեռնիկ է պատահում, Առնոն անթաքթ նայում է նրա բացուխուփ անող թեփկներին: Ինչ լավ է, որ չի պոկել թիթեռնիկի սիրած ծաղիկը: Բայց նա դասից չի ուշանում, թեպետ դպրոցը գյուղից հեռու է, եւ ճանապարհին շատ ծաղիկներ ու թիթեռնիկներ կան: Ահա, ուր որ է, նրան կոխմավորի ուսուցչուհի ժենյա Չայրապետյանը, կօգնի հանել պայուսակը, կժպտա եւ այդպես կսկսի դասը: Դասարանում միայն Առնոն է... Երբ ցուրտ է, ինքն ու ուսուցչուհին նստում են վառարանի մոտ. Առնոն կարդում է դասը, իսկ ընկեր Չայրապետյանը գլխով է անում, եւ եթե լավ է կարդում, շոյում է գլուխը: Իսկ Առնոն ավելի շատ մաթեմատիկան է սիրում: Ինչքան էլ դժվար խնդիր տա ընկեր Չայրապետյանը, Առնոն լուծում է, հետո երկուստեք դասամիջոց են հայտարարում: Առնոն պայուսակից հանում է Լուսիկ տատի տված գաթան, իսկ ընկեր Չայրապետյանը անուշահամ կոնֆետներ է դնում սեղանին...

- Եթե ես չգայի Ռուսաստանից, դու ո՞ւմ դաս կտայիր: Եվ կոնֆետներ չէիր բերի, ճի՞շտ է, - այսպես էր ուզում հարցնել Առնոն, բայց ընկեր Չայրապետյանն իրեն չի նայում, պատուհանից այն կողմ էջանանի հովիտ դարձնում է: Բարգուշատի Լեռնապարով երիզված անդաստանում, կանաչ մարգագետնի անտառոտ եզրին կառուցված դպրոցը ծովում խարիսխ ձգած հսկայական ճերմակ նավ է հիշեցնում: Առաջածորի բարձունքից երեւում են Խլաթաղը, Նորաշենիկը, Շրվենանցը, Տորթնին, Խոտանանը, Դռնանցը: Առաջածորի դպրոցը գոյատևում է ահա 90 տարի: Ընկեր Չայրապետյանը շատ է պատմել, թե քանի-քանի նշանավոր մարդիկ է տվել գյուղը: Նրանցից շատերն իր աշակերտներն են եղել: Դիմա, երբ արդեն վարսերն են ճերմակում, դպրոցում ընդամենը 10 աշակերտ է մնացել, իսկ 2-րդ դասարանում՝ միայն Առնոն:

- Քաղաքում ապրելը հեշտ է, շատերը գնացին քաղաք, -

# Դասարանում միայն



## ՄՈՒՈՆ Է

պատմում է ընկեր Չայրապետյանը, - բայց գյուղից չկտրվեցին, գալիս են ամռանը, բանջարանոցները մշակում. առանց գյուղի ապրել կլինի՞...

- Քաղաքը ցուրտ է, - իր հերթին ընկեր Չայրապետյանին է զբաղեցնում Առնոն՝ հագիվ մտաբերելով հեռավոր Նորիլսկը, որտեղ ինքը ծնվել ու մանկապարտեզ է հաճախել, - այնտեղ ո՞չ ծաղիկներ կան, ո՞չ թիթեռնիկներ: Գիտե՞ս, ընկեր Չայրապետյան, եղջերուի միսը ուտում են, նրան սահնակ են լծում...

- Դե, դու աշխարհ տեսած մարդ ես, - ընդհատում է ընկեր Չայրապետյանը, - ես անգամ իսկական եղջերու չեմ տեսել:

- Նկարե՞մ:  
- Այդտե՞ղ, չէ, դա քո տատի տետրն է:

Առնոն գիտի, որ իր պապ Քրիստափորն ու տատ Ծովիկը Առաջածորի դպրոցի ուսուցիչներ էին: Նրանք վաղուց չկան: Ընկեր Չայրապետյանն

ասել է, որ դեռ մագերը չճերմակած, հիվանդացել ու մահացել են: Իսկ դպրոցում մինչեւ այսօր պահվում են 40-50 տարի առաջ նրանց գործերը:

- Այս մարգարտաշար ձեռագիրը քո պապինն է, - հուշիկ, կարծես ինքն իրեն, ասում է ընկեր Չայրապետյանը, հետո, նայելով տետրի երեսը, ուղղում, - չէ՛, տատինդ է: Նրանք այնքան միատեսակ գեղեցիկ էին գրում...

- Երբ մեծանամ եւ ձեռագիրս արդեն լավ լինի, ուսուցիչ կդառնամ, - լռությունն ընդհատում է Առնոն, - իսկ այն ժամանակ մեր դպրոցում հեռուստացույցի չափ աշակերտներ կլինեն...

- Դեռուստացույցով մեծ դպրոց ես տեսել: Մերն էլ մեծ էր տասնամյակներ առաջ, - հոգոց է հանում ընկեր Չայրապետյանը, - հիմա սառույցը հալվել է, գյուղի վերակենդանացման համար մեծ որոշումներ կան...

Կողքի դասարանից ծխի հոտ է գալիս: Առնոն բացում է դուռը: Այդ Արմենն է հացի կտորը դրել վառարանին ու մինչեւ պայուսակը կկարգավորեր...

- Գիտե՞ս, որ մեծ որոշումներ կան, - գիտակի կեցվածքով ասաց Առնոն, - մեր գյուղում էլ հեռուստացույցի չափ շատ երեխաներ կլինեն...

- Գլխիցդ դուրս բաներ մի խոսի, - միջամատի պարույկով Առնոյի գլուխը ցավեցրեց Արմենը, - գնա, սապոգներ հագիր, տես, անձրեւ է գալիս...

Գյուղի ճանապարհը վերելք է, եւ ցեխը շատ է: Դողի ծաղկափոս բուրմունքը խոտոտու է տալիս Առնոյի ռունգերը: Թիթեռնիկները տապ են կացել: Առնոն քայլում է մեղմ անձրեւին, մտածում պապի ու տատի մարգարտաշար ձեռագրի, հեռուստացույցի ու ընկեր Չայրապետյանի պատմած մեծ որոշումների մասին: Ներքեւում, ինչպես ծովում, անդորրի մեջ խարիսխ է ձգել Էջանանի հովտի ամենագեղեցիկ կառույցը՝

Առաջածորի հինավուրց ու Լեգենդար դպրոցը:



Պատմվածքներ



# Կավիթը, որ բողբեկ էր ֆառաֆե, եկե՛ն գյուղ եւ երազում է գառնաւ սովիտւոյի գիրեկսոր

Սանկապարտեզում Դավիթն անհամբեր սպասում էր շաբաթ օրվան: Գիտեր, որ այդ օրը հայրիկը կան մայրիկը սովորականից շուտ են իրեն տանելու. չէ՞ որ պետք է գյուղ գնան: Պատշգամբից ակնդետ ներքեւ էր նայում (նրանց տունը 8-րդ հարկում է), ե՞րբ են դպրոցից տուն դառնալու Զորիկն ու Գարիկը: Տատը գյուղում բոլորին է սպասում... Ղափանից գյուղ շատ է հեռու, եւ ճամապարհը, որ գալարվում է յոթ սարերի մեջ, կարծես հեքիա-

թից է լույս աշխարհ եկել: Զորիկն ու Գարիկը շատ բան գիտեին, ու նրանցից էլ Դավիթն էր սովորում: Ահա դուրս եկան քաղաքից. սա մերձքաղաքային պիոներական ծամբարն է, սա էլ Զորքի կիրճի Արջի արձանը, Բաղաբերդը ու էլի գյուղեր, վերջապես՝ Բաղաճյուղը, եւ ահա՝ տատիկի այգին:

...Ի՞նչ զարմանալի ծաշեր է եփում տատիկը՝ հեղեփով լոբի, ավելուկ, չորաթանի ապուր, կաթով դդում, խաշիլ: Դրանցից մանկապարտեզում չեն տալիս: Իսկ խնեցու կարագն ու մոթալի շոռը, կոպաթը (կարկանդակ, որի խորիզը թարմ խոտաբույսերից է), մասուրի ապուրն ու վարունգի թթուն միայն տատիկի տանն են լինում:

- Տա՛տ, արի մեր մանկապարտեզում էլ ճաշ եփիր, - ասում էր Դավիթը: Իսկ տատը թռռնիկին քաղցր լեզվի համար այտերն էր համբուրում ու խանդաղատանքից նրան փաթաթում մեջքն առած շալի մեջ:

Կիրակնօրյա իրիկունը, ինչպես միշտ, սկսվում էր առանց տատիկի: Դավիթը տխուր նստում էր պատշգամբում, հիշում առվի խոխոջը, հանդից շարան-շարան եկող ոչխարներին ու մեծ խոզին, որ մի անգամ կերավ տատի մաղը: Դետտ... սկսվում էր քաղաքի միանման, իր համար ծանծրալի առավոտների շարանը. Զորիկն ու Գարիկը վազում էին ավտոբուսի կանգառ (դպրոցը հեռու էր), իսկ

մայրիկն իրեն քարշ էր տալիս մանկապարտեզ, որտեղ ոչ մեկը չգիտեր, որ իրենք գյուղում մեծ խոզ ունեն, եւ որ նա կերել է տատիկի մաղը...

\* \* \*

- Ման, քանի՞ օր մնաց մինչեւ ամառը...

Ու հիշում էր...

Տատիկը դադար չունի: Ամռան մի օր տարի է կերակրում՝ ասում է: Վաղ առավոտյան, երբ կովը կթած տուն էր մտնում, Դավիթն իսկույն վեր է կենում: Իսկ Զորիկն ու Գարիկն անկարգապահ են: Մինչեւ ուշ երեկո նստում են հեռուստացույցի մոտ, ցավեցնում տատի զլուխը, իսկ առավոտյան չեն կարողանում շուտ արթնանալ: Դավիթը դուրս է վազում, սակայն բակում ձի չկար... Երազ էր տեսել, իբր, Շամիր պապն իրեն ձի է նվիրել ու ասել. «Դու իմ տան ծուխն ես...»: Դավիթն ուսն է առել փոցխը, եւ տատի հետ գետակի այգին են գնում: Այս ի՞նչ անհասկանալի երգ է երգում տատիկը:

- Տա՛տ, Շամիր պապն ուժե՞ղ էր:

Տատը քայլում է մանրիկ-մանրիկ, մերթ-մերթ կորացնում է մեջքը, ձեռքը դնում ճակատին ու զննում Քաշինձորի արեւոտ անտառը:

- Տա՛տ, Շամիր պապն էլ է՞ր մեքենա վարում:

- Չէ, նա քաղաքի մարդ չէր:

Կոլխոզի նախագահ էր, հետո՞՛ ֆերմայի վարիչ...

- Իսկ ինչո՞ւ էր կոլխոզի նախագահ, - ոճվար բառերը չհասկացավ Դավիթը:





## Պատմվածքներ

- Կոլխոզը ցորեն, կաթ, միս, բուրդ էր ստանում, ցորեն էինք կալսում...

- Իսկ հիմա ո՞ր է կոլխոզը:

- Հիմա սովխոզ է, սովխո՞գ:

Համ էլ, բալիկ ջան, շոգին քիչ կխսեն:

- Իրիկունն ասացիր, որ ես քո տան ծուխն եմ: Թող ծուխը Գարիկը լինի, չէ՞ որ ասում էիր, որ ես քո սրտիկն եմ...

- Տատ, Ջորիկն ու Գարիկը որոշել են գյուղից փախչել, ասում են՝ ճամբար ենք ուզում...

\* \* \*

Օգոստոսի վերջին օրերն էին: Ջորիկն ու Գարիկը ճամբարից գյուղ եկան՝ տատին ու կրտսեր եղբորը տեսնելու: Մի քանի օր հետո սեպտեմբերի 1-ն էր:

- Վեց համարի երթուղով նոր ավտոբուսներ են ավելացել, - ուրախ ասաց Ջորիկը, - թերթում եմ կարդացել: Իսկ աշակերտների համար էլ ավտոբուսներ են առանձնացրել:

- Մայրիկը նոր հագուստ է գնել ու նոր պայուսակներ, - ասաց Գարիկն ու անուշ արեց տատի պատրաստած հավիկ, - Դավիթիկի պայուսակը ես եմ տանելու, իր համար ծանր կլինի...

- Իսկ ես ձեզ հետ չեմ գա, - ասաց Դավիթը...

Դավիթը թողել է քաղաքը: Դավիթը մնում է գյուղում: Դավիթը տատի ծուխն է, տատի սրտիկն է, տատի կյանքն ու արեւն է:

\* \* \*

Մայրիկը գլուխը կորցրել է: Չգիտի՞ քաղաքում ծնողական ժողովի գնա, թե՞ գյուղում: «Բա սա կրակ չէ՞ր, որ բերեց մեր գլխին: Բա 6 տարեկան երեխան այդքան բան կհասկանա՞, ի՞նչ է գտել քանդված գյուղում», - ասել է Դավիթն ու ասարթով մյուս տատիկը՝ մայրիկի մայրը, եւ, ասածից փոշմանելով, խանութից մի տոպրակ չամիչ է առել, ուղարկել գյուղաբնակ դարձած թոռնիկին: Իսկ գյուղի դպրոցում ամեն ինչ կարգին է: Ուսուցիչները սիրալիր ողջունում են բոլորին ու ժպտում: Պապիկներն ու տատիկները էլ են գալիս դպրոց. մեկը՝ ձեռքերը մեջքին դրած, մեկը՝ գուլպա գործելով, մյուսը՝

ծեռնափայտով...

Երեխաները նրանց ուղեկցում են ուսուցչանոց կամ պիտենտենյակ: Եվ ինչքա՞ն շատ խաղալիքներ կան ու նաեւ՝ ննջարան: Ընկեր Ջարիկը իսկական մայրիկի նման բոլորին օգնում է հանվել, հետո հեքիաթ է պատմում, ու բոլորը քնում են: Շամփր պապիկի նկարը դպրոցի թանգարանում էլ կա: Եվ էլի շատ պապիկների նկարներ...

Միշտ էլ գյուղի դպրոցում հետաքրքիր ինչ-որ բան կա: Մեծ տղաներն Արթուրի ղեկավարությամբ (ի՞նչ ուժեղ է Արթուրը) հեքիաթի տուն են կառուցել, կաթինետներում կինոներ են ցուցադրում, մուլտեր նայում հեռուստացույցով, իսկ զանգի կոճակը միջանցքում է: Մի անգամ, դասամիջոցին, Վարդանը զանգը տվել է ու փախել, շատերը կարծել են, թե իսկական է: Դավիթն էլ նրանց հետ: Մեկ էլ տեսար մեքենան եկավ, մեծերը նստում են, թե՛ դաշտ ենք գնում, աշխատանք կա: Շատ քեռիներ էլ գալիս են, թե՛ ո՞նց եք, հո ցուրտ չէ՞:

- Ընկեր Ջարիկ, որտեղից ես այս գորգերը:

- Սովխոզն է տվել: Սովխոզը մեր բազայինն է:

- Ճոճանակն ո՞վ է տվել:

- Բա մեր դպրոցի շենքն ո՞վ է կառուցել:

- Սովխոզը:

Մեր սովխոզը շատ հարուստ է: Երբ մեծանաք, սովխոզում ձեզ համար բազմաթիվ գործեր կգտնվեն:

Աշխատանք շատ կա այստեղ: Դու գյուղատնտես կդառնաս, դու՝ անասնաբույժ, դու՝ տրակտորիստ...

- Իսկ ես կդառնամ սովխոզի դիրեկտոր,-ասում է Դավիթը:

Պատանի ընթերցող, արի պայմանավորվե՞նք ու խնդրե՞նք «Պիոներ կանչին»՝ 20 տարի հետո փնտրել ու գտնել Դավիթ Երվանդի Դուկասյանին: Եվ այն ժամանակ թող ինքը պատմի իր մասին եւ իմաստավորի մեր այսօրվա գրույցը:



## Նոյաս

Սոցապի մի շտապող կին՝ ցուցակն ու տասանոցներով լիքը ցելոֆանե տոպրակը թեւի տակ, գյուղ մտավ: Տնետուն անցնելով, մատը լեզվով թրջում էր, նպաստները հաշվում ու բաժանում. մի տան տալիս էր, երկուսը բաց թողնում: Երբ լեզվանի հերթին պարզ դարձավ, որ իր ամուսնը ցուցակում չկա, նա երկար չսպասեց. սանդուղքից հանեց մեղ օրվա համար պահած «Կալաշնիկով» ավտոմատը, շտապեց եկեղեցու բակն ու մի կրակահերթ տվեց:

Ցուցակից դուրս մնացածները այդ ազդանշանը հասկանալով, մեկեն հավաքվեցին գյուղի կենտրոնում: Միտինգը սեւ ամպի պես համակեց գյուղը:

Լոզունգներն ահասարսուռ էին. «Անարժան նպաստառուի կողմ գայլի բաժին դառնա, հավերն աղվեսը տանի», «Թագուշին ցուցակի մեջ չմտցնողի ցեղը կտրվի», «Նպաստ ստացող ունենորների տներից 01, 02, 03-ը անպակաս լինեն»: Լեզվանի հերթելը խոսում էր՝ թեւերը կողքին կանթած ու բորբոքված.

- Նոյեմի տղան Փրանցիայից դուլար է ուղարկում պամադա քսող մորը, իսկ նրան այստեղ նպաստ են գրել: Օսանը կով ունի՝ հորթը տակին: Հեղին թաքրել ու չի գրանցել սեւ էշն ու քուռակը: Համփին ու Մայկոնն ապրում են նույն խարաբայում, բայց գրանցումով բաժան են: Սամոն իր կնկանից թաքուն միշտ փող է տալիս Պարսիկին: Ինչո՞ւ նրանք պետք է նպաստ ստանան, իսկ Նախշունը՝ ոչ: Խեղճի կովը երկու տարի է՝ չի ծնում, իսկ մի տախտ կաղամբի շիթի-



Պատմվածքներ



ներն այս տարի կարկուտը հեչ է արել:  
Չերսելի փաստարկած ճառը՝ ընդ-  
դեմ նպաստառուների, ընդմիջարկվում  
էր անհասցե անձնությունով ու մատնա-  
սուլոցներով:

Անուսինների վրա իշխանություն  
ունեցող կանայք, «մագազին»-ները  
փոխելով, ճռնացնում էին ավտոմատ-  
ները:

- Տրա-տա-տա-տա...

Չռետորուհին, գյուղի բոլոր  
փակագծերը բացել-վերջացնելուց  
հետո, մի ծամոն առավ բերանն ու  
աչք-ունքով ինչ-որ ցուցում տվեց:  
Նախշունի դասակը, թմբուկների որոտի  
տակ, շրջապատեց վերին թաղը, որտեղ  
նպաստների բաշխումն ավարտին էր  
մոտենում:

Ավտոմատավորները կայանեցին  
սոցապից եկածին ու բանտարկեցին  
Կնյազենց մարագում: Մարի բիբին  
քիլերի դիմակ հագավ, մարագի դռանը  
պահակ նստեց՝ ցաքատը կողքին եւ  
հանգիստ շարունակեց գուլպա գործել:  
Իզուր էր սոցապից եկածն աղաչում, որ  
բիբին իրեն ազատի:

- Նստես՝ տակդ  
այրվի, վեր կե-  
նաս՝ գլուխդ,

- անողոք անիծում էր բիբին, - դե, թող  
նպաստառուները ռիսկ անեն գան  
ու քեզ ազատեն: Տես, գլխներին ինչ  
կղնեն:

Երբ արդեն գյուղի երկու հակառա-  
կորդ ճամբարները դիրքեր էին գրա-  
վել, լեզվանի Չերսելյան բջջայինով  
հրահանգ տվեց: Կալատեղում երեւաց  
Թինան, որի մասին Մայկոնն ասել էր,  
թե՝ ջորուց յոթ օր առաջ լույս աշխարհ  
եկած այդ տիպը ստում է, ռադիկուլիտ  
չունի:

«Շատ գիտեցած» Թինան ցախա-  
վելին փայտե պոչ ամրացրեց, հեծավ  
ինչպես ձիուն ու միտինգավորների  
միջով մի քանի քայլ վազելով, օդ  
բարձրացավ:

Նպաստառուները, ցախավե-  
լը հեծած Թինային գյուղի երկնքում  
տեսնելով, ճողոպրեցին ու փակվեցին  
մառաններում: Սավառնորդը մի քա-  
նի հետախուզական պտույտ գոր-  
ծեց թաղերի վրա եւ համոզվելով, որ  
զենիթային հրա-

մոթները չեն հասցրել հանել, առանց  
խղճի խայթ զգալու, մեկական «Գրադ»  
բաց թողեց նպաստառուների տների  
վրա, որոնք հինգ մատի պես գիտեր:

Գյուղը կորավ ծխի մեջ: Մարի բիբին  
իրեն կորցրեց եւ իր հերթին կրակ տվեց  
նպաստ ստացող Կնյազենց մարագը:  
Ինքնապաշտպանության նպատակով  
նպաստառուներն աշխարհագոր գու-  
մարեցին:

Գյուղապետարանում իրարով  
անցան: Անկանխատեսելի հետեւանք-  
ները կանխելու համար գյուղապետը  
ենթականերին կարգադրեց՝ կապվել  
զինկոմիսարիատի հետ եւ հաշտարար  
ստորաբաժանում խնդրել:

Բայց «Արմենտել»-ի կողերից ո՞վ  
զլուխ կհանի. մերթ Մեղրուց էին պա-  
տասխանում, մերթ՝ Վեդուց, մերթ՝  
Ալավերդուց...

Բոլորը մերժում էին.

- Ձորք չունենք: Ուղարկել ենք գյու-  
ղերը՝ նպաստառուներին պաշտպանե-  
լու:





## Պատմվածքներ



# ՌՐԻՉԻՆԱ

**Ն**խտը սկսված է, - համագումարի բացում հայտարարելու կեցվածքով խոսեց տնօրենուհին, եւ առանց մանեկավոր պարանոցը շարժելու, շեղ մայեց դեպի հյուսիս, ուր նստած էին հաստիկ ուսմասվարուհին, որին բամբասելիս անվանում էին Վանքի հացթուխ, կոմունիստական մուշտակով, ավիտամինոզ ունեցող ուսուցչուհին, որին թվում էր, թե տնօրենուհին ոչ թե խոսում, այլ մկկում կամ բառաչում է, ներկած եղունգները երբեմն-երբեմն սեղանին դնող մի ուսուցչուհի, խանութում հացի համար պարտք չունեցողը եւ էլի ուրիշները:

- Ահա ծյունը սկսել է, - մկկում էր Նա, - եւ մենք պետք է քննության առնենք ձեռքը մախապատրաստվելու հարցը: Դետո, առանց մանեկավոր պարանոցը շարժելու, շեղ մայեց դեպի հարավ, ուր նստած էին Բերանբացը, Ջկեռի պահածո հորինողը, էմիրաթներից մի անանուն հագուստ ձեռք բերածը եւ այլ ուսուցչուհիներ: Դիմացը՝ արեւելյան կողմում, դոլար ունեցողների տներում պարապող մի ուսուցչուհի էր փրկվել՝ բացականչելի աթոռների հարեւանությամբ: Արեւմտյան կողմում միայն ինքն էր: Օրակարգն արդեն ի գիտություն էին ընդունել, երբ քամին բացեց պատուհանը, եւ առաջին ծյունն աներես պարտատիրոջ պես ներս խուժեց: Ոչ

որ, իհարկե, վեր չկացավ պատուհանը փակելու, որովհետեւ դա... ուսուցչական պարտականություն չի համարվում: Իսկ պատուհանը հարավակողմ էր, եւ այնտեղ նստածները լուռ տեղափոխվեցին հյուսիսի եւ արեւելքի թափուր տեղերը: Էմիրաթներից անանուն հագուստ ձեռք բերածը անտեսակ հագուստի ծալքը բացեց սրունքների վրա՝ հաղթական զննելով կոմունիստական մուշտակով գործնընկերոջը: «Ներկված եղունգները» շունչը ավելի ներս տարավ ու խաչված ձեռքերը թաքցրեց կոմստակերին: Վանքի հացթուխն անշարժ էր, իսկ Բերանբացը ծլվլաց:

- Դպրոցում տղամարդ չկա, բանվորական հաստիքներն էլ հանել են, հո տնօրենուհին չի փակելու պատուհանը, նրան ժամանակ որտեղի՞ց...

- Դիմենք կրթաժամին, որ բանվոր ուղարկի, - ամեն մի բառի հետ աջ ձեռքը վեր ու վար անելով՝ կարծ կապեց դուլար ունեցողների տներում պարապողը:


- Կրթաժամը փող չունի, քանի՞ անգամ եմ ասել, - ջոջի իրավունքով բառաչեց տնօրենուհին, - ֆինբաժինը չի ֆինանսավորում...

- Դիմենք նախարարությանը, - գկռտաց գկեռի պահածո հորինողը:

- Կնկա խելք, խելք՞ նախարար քանի-քանիսի դիմումին պատասխանի, - վրա պրծավ տնօրենուհին, առանց մանեկավոր պարանոցը շարժելու, կարծես, իր հավին էին քիչ ասում: Բոլորը դրական զլխով արեցին, իսկ «խելք՞ նախարար» արտահայտության վրա Վանքի հացթուխը լացակունեց:

- Թող ծնողները գան, պատուհանը փակեն, - կռկռաց Բերանբացը:

- Ո՞վ երես ունի նրանց դիմի, - մայեց



Կանացի հավանությունը միահանու էր, իսկ տնօրենուհին մտախոհ կանգնած էր, առանց մանեկավոր պարանոցը շարժելու եւ աչքերի տարուբերումներով զննում էր մերթ հյուսիսը, մերթ հարավը, մերթ արեւելքը:

- Ի՞նչ առաջարկություն կա:  
- Քամին բացել է, թող քամին էլ փակի, - հազիվ լսելի թոնթորաց հացի խանութում պարտք չունեցողը:

տնօրենուհին, շաբաթվա տակին-զլխին փող ենք հավաքում աշակերտներից՝ այս գնելու, այն գնելու...

- Այո: Դա: Ըհը..., - չէին կարող չհամաձայնել բոլոր ուսուցչուհիները:

- Դո հարցը չի՞ մնալու առանց լուծման, - արտատուքները սրբելով՝ կմկմաց Վանքի հացթուխը, - առաջարկում եմ՝ սպասել, մինչեւ ծնեռը վերջանա:


- Քվեարկում ենք, - առաջարկը հավանեց տնօրենուհին:

Ոչ դեմ կար, որ ձեռնպահ: ■





## Մանրամասումներ



յից ուղղաթիռ պիտի գա, մեզ տանի...  
Վալերիկն ու Ստյոպան, որ համեմատաբար երիտասարդ էին, խալային կարեկցելուց արտասովեցին, իսկ Ավետիսյանը մեջքերումներ էր անում բյուրոյի որոշումներից ու Գորբաչովի՝ նախորդ օրը հեռուստատեսությամբ դուրս տված տափակություններից:  
Խալան, աչքը սարերից չկտրելով, համբուրեց Ավետիսյանի շավարի փող-

մի՞թե հնդկահավերի հարցով նա մեզ չպիտի հիշի:  
Մի նամակ պատրաստեցի առաջին քարտուղարի հասցեով, սակայն կասկածում էի՝ այս թոհուրեի ժամանակում քարտուղարը կատակին տեղ կտա՞, թե՞ չէ: Դե, ինչ լինելու է, թող լինի... Նամակն իմ անվամբ չգրեցի ոչ թե «ապահովության» նպատակով, այլ որպեսզի Վալերիկին ու Ստյոպային «փորձանքի» մեջ զգեն:

Այդ երկուսը, որ միշտ փայլել են կատակների, արկածների ու խորամանկությունների մեջ, սովորություն ունեին՝ ինձ վստահելով հանդերձ, դպրոցում գյուղխորհրդի ու սովխոզի պաշտոնական մաքուր բլանկներ թողնել: Իսկ երբեմն թռցնում էին դպրոցի կնիքը, ճաշացուցակ կնիքում եւ ինձնից անտես ծրի կերակրվում մեր դպրոցի ճաշարանում:



Այս ամենին, իհարկե, պատասխանել էր պետք:

Եվ ահա այսպիսի նամակ՝ գյուղխորհրդի բլանկի վրա, դեպուտատ Վալերիկի ստորագրությամբ.

«Չարգելի առաջին քարտուղար, իր հաստիքի պահպանման համար Ավետիսյանը գնացած աղբբեջանցի կոմունիստներին հաշվառումից չի հանում: Դեռ ավելին. անհայտ գործարքով Ղովշուտի աղբբեջանցիներից ութ հնդկահավ է ձեռք բերել, որ օրական մեկը մորթի եւ միայնակ ... ուտի...»: Ուղարկեցի փոստով:

Շրջկոմում այն կարդալով՝ հարմար չգտան հանձնել քարտուղարին, բայց Ավետիսյանին «փսսացրին», թե Ստյոպան ու Վալերիկը իրենից մատերիալ են գրել: Կարծելով, թե քարտուղարն իրազեկված է, Ավետիսյանը, ցատումից եռալով, նամակը գրպանում իրեն զգեց գյուղ:

Ստյոպան ու Վալերիկը, իհարկե չճաշակեցին այն դատաստանի դառը պտուղները, որ ես

# Ծնդկահավեր

Եր նախկին սովխոզում, իհարկե, բոլորը լուրջ էին: Վերելում պլանը, շրջկոմն ու քարտուղարն էին: Այդ ամենը, ճիշտն ասած, ուսուցչիս համար միապաղաղ էր, եւ ես պետք է որ առիթ փնտրեի՝ զվարճացնելու սովխոզի դիրեկտոր Վալերիկ Գրիգորյանին, գյուղխորհրդի նախագահ Ստյոպա Պետրոսյանին եւ, անշուշտ, կուսքարտուղար Յրանտիկ Ավետիսյանին:

...Թուրքաբնակ Ղովշուտ գյուղն ինքնատեղահանվում էր:

Բնակչությանը հորդորում էին, խոստումներ տալիս, որ մնան, բայց թուրքերն անդրդվելի էին:

Գյուղը մեր սովխոզի մեջ էր մտնում եւ, բնականաբար, Վալերիկը, Ստյոպան ու Ավետիսյանը գրեթե միշտ այնտեղ էին:

Ավետիսյանը, որպես աչքի ընկնող կուսաշխատող, ի վերջո ինձ էլ հրամայեց՝ միանալ ջրջերի խմբին եւ իմ «օձը բնից հանող» լեզվով մասնակցել ազիտբացատրական աշխատանքներին: Գնացիմք, Ղովշուտը մրջմանոցի պես անհանգիստ էր:

Երբ ընկուզեմու ստվերում սկսեցի ճառել, մի «խալա» մերթ-մերթ սարերին էր նայում:

- Խանում, ինչո՞ւ եք խլշկոտում, - հետաքրքրվեցի ես:

Եվ նա, գաղթվելու երկյուղից, շատ անմիջական գտնվեց.

- Թուրքիա-

քերը ու սիրտը բացեց նրա առջեւ.

- Պարտկոմ եղբա՛յր, դու ես

մեր տերը: Մալ ու դովլաթս լրիվ տանում եմ, բացի իմ ութ հնդկահավերից. դրանք քեզ փեշքեշ: Իբադուլլա՛, այս կողմ քշիր դրանց...

Ավետիսյանը, իբր անհարմար զգալով, տեր կանգնեց փեշքեշին, թեպետ դա դուր չեկավ պատկառազու միրուքավորի կեցվածք ունեցող վարուժան-հնդուհավին, սակայն ինքն իրեն ասաց. «Թուրքից մի բան վերցնելը վրադ ծանր է նստում»: Փորձից գիտեր: Եվ Ստյոպայից ու Վալերիկից մաս-մաս պարտք վերցնելով (չեմ հիշում, ես ժլատաբար չտվեցի՞, թե՞ չունեի), ավելացրեց իր մոտ եղածին ու իր սիրելի «խալա»-ի ծոցակապի մեջ խոթեց 150 ռուբլի:

Երբ վերադարձանք սովխոզի վարչական ոստան՝ այսինքն, մեր Լեռնածոր գյուղը, հնդկահավերը մտքիցս չէին գնում: «Գոնե ասեր, որ մեկը պիտի մորթի ու մեզ հյուրասիրի», - թոնթորում էր Վալերիկը: Իսկ հաջորդ օրը Ստյոպան լուր բերեց, թե մեկն արդեն մորթել է: Երիշտ է, Ավետիսյանն ինձնից հյուրասիրությանը մի քանի գլուխ բարձր է, բայց





## Մանրամասնումներ

էի ակնկալում եւ հեռվանց իմանալու պատրաստակամությամբ սրտատրոփ սպասում էի:

Պայթյունն իմ գլխին եկավ:

- Ալլո: Թռչակի գնալու ժամանակս մոտեցել է, ինչո՞ւ ես իմ բախտին քար գցում, - վրա էր տալիս կուսքարտուղարը, - բոլորիդ էլ բյուրո եմ քարշ տալու իմ հեղինակության հետ խաղալու համար, բայց պատասխան տվողն ինքդ ես...

Անտեղյակ ձեւանալու հեռախոսային փորձերս չէին հաջողվում: Ի վերջո, երբ մոտ կես ժամ սպառնալիքներ ու խրատներ տալուց հետո կուսքարտուղարը հանդարտվում է, խոսքի առիթ որսացի:

- Ես անմեղ եմ, - վերջին ճիգերն էի գործադրում եւ ընկալուչն ափով ծածկելով, քաքցում ծիծաղս, - դե՛ ապացուցիր, որ ես էլ եմ մասնակից այդ նամակին: Նամակը գրել է Ստյոպան, ստորագրել է Վալերիկը, տարել է փոստի Պավլուշը, բացել է շոքկոմի Վարյան, կարդացել է քարտուղար Սկրտչյանը...

- Է հե հեյ՛, - հեզնեց Ավետիսյանը, - այդ նամակում ես առաջին անգամ եմ հանդիպում հնդկահավ բառը, որ միայն քո իմանալու բանն է: Էջմիածնից մինչեւ այստեղ այդ թռչունը հնդուշկա է կոչվում, հնդկահավ բառը քո հնարածը չի՞: Պարզ է, որ նամակը հենց դու ես գրել ....

Լեզուս կապ ընկավ, լսափողը դրեցի:

Ստյոպան ու Վալերիկը, որ նախապես տեղյակ էին նամակին, չքմեղացան Ավետիսյանի մոտ.

-Մենք մեր կյանքում դեռ «կլլաուզա» չենք գրել: Դա նրա բանն է...

Սակայն ժամը մեկ զանգում էին, թե՛ մեր սիրտը հնդկահավ է ուզում, մի բան մտածիր...

Հաջորդ օրը բանբեր եկավ դպրոց, թե... Ավետիսյանը մի հնդկահավ է խորովել ու հյուրերի հետ ինձ է սպասում: Հարկավ, չգարմացա: Գիտեի, որ մեր կուսքարտուղարի զայրույթն անցողիկ է:

...Տեղավորվեցի՞մ ճոխ սեղանի շուրջը: Ես, բանից անտեղյակ, առաջինը ձեռքս մեկնեցի հնդկահավի կարմրատակած

ագորին: Ավետիսյանը, ունքերը խոժոռելով, թեթեւակի խփեց ձեռքիս.

- Սկրտչյանին եմք սպասում:

Բայց առաջին քարտուղարը չեկավ ու չեկավ. հյուր գնալու սովորույթ չուներ:

- Էլ համբերել չկա՛, - ձեռքերը շփեց սովխոզի դիրեկտորն ու վրա պոժավ, - թե եկավ՝ մեկն էլ կմորթենք...

Օրական մեկը մորթելով՝ յոթ օր խնջույթի էինք Ավետիսյանի հարկում: Ինձ, բնականաբար, ազդր չէր հասնում: Դրանք առաջինը վերցնում էին Ստյոպան ու Վալերիկը, քանի դեռ Ավետիսյանը նրանց պարտքերը չէր տվել: Ութերորդ հնդկահավի վրա «դժբախտություն» պատահեց: Մենակությունից, թե մորթվելու կանխագացությունից, վերջին հնդկահավն անշնչացել էր հավանոցում:

- Այդպես էլ տար, զգի՛ր դպրոցի բակը, որ համոզվի՝ ինձնից ձեռք քաշի, - կարգադրեց Ավետիսյանն իր տիկնոջը՝ հուսալով, որ կազատվի ինձնից: Բայց դա նրան չհաջողվեց:

Սպասվում էին նոր արկածներ:

1996

## Տակառակ-բամբառակ

- Ողջույն:
- Ասենք՝ քարեն: Դրանում ի՞նչ կա:
- Նոր գլխարկ ես առել...
- Տին է, նոր է երեսուն:
- Ասում էիր՝ տարին անձրեւային է լինելու:
- Ընդհակառակը՝ երաշտի վրա էի պնդում:
- Այս գրիչը Վարդանն է նվիրել, լավությունը չի մոռացվում:
- Ճիշտ չէ, վատությունն է միշտ հիշվում: Տես ձեռքիս սպին, Արոն է թողել:
- Արոն միշտ խաղաղախ գործեր էր բռնում:
- Չէ, ճիշտ է արել: Տղամարդը պարտքի տակ չափսի մնա:
- Տիմարկ եմ շտապում:
- Տիմս ով է աշխատում, դարձիք տուն:
- Շտապողը կզարնի:
- Շտապողը կընկնի:
- Եղանակը սքանչելի է:
- Ջրհեղեղ է սպառվում:
- Միայն թե՛ շար վնասներ չպարճատի:
- Ջրհեղեղն ի՞նչ է, որ վնաս պարճատի:
- Տաջոդ: Էլի կհանդիպենք:
- Տանդիպելու մեջ ի՞նչ կա, որ հանդիպենք:

## Մենախոսություն

Անցնում է գյուղի կեռուներնեկրով, բարձած ավանակն առաջ արած:

- Ա՛յն, էդ պեկից խոր մի սոկի, շա՛ռ Եղասն մեր հերը կանիծի: Վար խոսքից չի կշտանում, ում ասես նախշում է:

- Չու հա՛: Մի կպիր Վաղոյի չափարին, շունն





## Մանրամասումներ

ինձնով մի արաւ: Փողաբեր է դասել,  
էլ ոչ մեկին չի բարեւում: Անգլալ փարի  
հաց չէր ճարում, որ զիկրվի:

- Ա չո՛ւ, ա չո՛ւ: Ի՛նչ ես դեպի էդ հիմարի  
մղակը գնում: Բոլորի հոգին կերել,  
մենք ենք մնացել՝: Բա դա մարդ ա՛...  
- Չոքո՛ւշ, հեյվան: Դեպի քեզ նմանի  
դուռն ես գնո՛ւմ: Որ ասում եմ  
աշխարհն էշություն ա բռնել, ինձ էշ են  
անվանում:

\*\*\*

Ինչպես են խոսում փոքրիկները  
- Մամա, Կարապետ արապի անունն  
ի՛նչ է, - մի անգամ հարցրեց Աշխենը...

## Լիպոյի շտաբը

4-րդ դասարանի Լիպոն գյուղի  
ծայրին գրնվող մի տնակում շտաբ  
է հիմնել, որտեղից ցանկանում է  
«դեկավարել» իրենց թաղամասի  
երեխաների ամառային գործերը:  
Լիպոն երագում է, որ իր շտաբին  
բոլորը ենթարկվեն, նույնիսկ  
գյուղացիները տեղեկություններ  
հաղորդեն, խորհուրդներ հարցնեն  
ու միջնորդեն այս կամ այն «գործի»  
համար: Իսկ ինչո՞ւ չունենալ մի  
քանի հեռախոս, որ հնարավոր  
լինի կապվել ցանկացած քաղաքի  
հետ: Ավելին. Լիպոն մտածել է դրոշ  
ունենալ շտաբի շենքի վրա, ունենալ  
մի քանի բարձրախոս, հեծանիվ...

Լիպոն ուզում է դառնալ մեր օրերի  
Թիմուրը: Անգլալ փարի իր շտաբն  
ունեն նաև վեցերորդ դասարանի  
Մարտիր: Նա գյուղում քայլում էր  
խորհրդավոր, ծանրամեծ: Նրան  
շարերն էին նախանձում, օրինակ՝  
Արարուշը, որ մի անգամ թոցրեց  
շտաբի բանալին: Իսկ Լիպոյի շտաբը  
շտաբ քչերին դուր եկավ...

- Բավական է խայտառակեք մեզ, - մի  
օր բարկացավ դպրոցի պիտներական  
դրուժինայի նախագահ Վահրամը,  
- հարցը մտքնում եմ դրուժինայի  
խորհրդի նիստ:

Պարզվում է, որ պատանի  
հեղախոյզները խուզարկել էին  
Լիպոյի շտաբը եւ սպացուցել, որ նա  
կողպեք, մուրճ, նավթ ու բազկաթոռ  
տնից քերել է առանց ծնողների  
գիտություն:

- Տախշարակել ես, - վրա սրծան ԴԽ-ի  
անդամները:

Լիպոն խոստովանեց ամեն ինչ,  
գիտակցեց իր սխալը:

- Քո շտաբը պետք է գյուղում լավ ու  
օգտակար գործեր անի,- ասացին  
ԴԽ-ի նիստում, - եւ պետք չէ ցույց  
տալ, թե ովքեր են այդ գործերի  
հեղինակները:

- Քանի՞ բակ ու արահետ եք  
բարեկարգել:

- Չոհիվանների ընտանիքներին օգնե՛լ  
եք:

- Տանից փարիկների գառները  
քերե՛լ եք...

Լիպոն հուզվեց, բայց մտքում որոշեց  
սրեղծել իսկական թիմուրական  
շտաբ: Չէ՞ որ ամառ է:

## Ուսուցիչն ու մանկալը

Կարճկար մի ուսուցիչ  
Պարոթեր ուներ շատ ու քիչ  
Յարսք, ինչպես փող ճարի՝  
Չէ՞ որ մտր է նոր փարին:

Ի՛նչը մնաց, որ ծախի,  
Ախր շատ վար է հալը,  
Բակը երալ նա ցախի,  
Աջքին ընկավ մանկալը:

Չմտն ցրտից դողալով,  
Ճանփին տեղ-տեղ սղալով,  
Իրենց գյուղից վերջապես  
Շուկա հասավ մանկալով:

- Գլխիդ մարտը, մսագործ,  
Մի քիչ միս փուր խորովեմ,  
Լավությանդ որպես վարձ,  
Այս մանկալը քեզ թողնեմ:

Թե նոր փարվան հյուր կանչեն,  
Ինքս ինձնից չամսւնեմ,  
Ասեմ՝ նոր եմ քեֆ արել,  
Ճոխ սեղանից հո՛խսւմ չեմ:

- Չեմ քա ոչինչ առանց փող,  
Մանկալն ու ինձ հանգիստ թող,  
Գյուղում սպրոդն է շահում,  
Ինչո՞ւ ոչխար չեմ պահում:

Այժմ գնա դու անհույս՝  
Դարձիր գյուղի գլխիկոր,  
Թող խորոված չստրելուց  
Ջանիդ դուրս քա մոլաբոր:

\* \* \*

Այստեղ ի՛նչն է գլխավոր՝  
Աշխատողը մտավոր  
Թող հասկանա, որ կյանքում  
Դեռ ոչխարն է կարեւոր:



## Բանահավաքություն

### Ê³ ÕÇİÝ»ñ

Հինավուրց Ձորքը խաղիկների, երգերի ու հայրենների երկրամաս էր: Հարեւանելով գուսանատուն Գողթանին, Ձորքն էլ հայտնի էր իր ստեղծագործություններով, իսկ երաժշտի մասնագիտությունը մեծամասամբ տոհմական էր: Առ այսօր էլ Քաջարանց գյուղում Աշուղենց (Աշուղներ) գերդաստան կա: Ժողովրդից շատ են լսել՝ քչանանցիք խոսքագեն են, քրդիկանցիք՝ պարող, փուխրուտեցիները՝ առակախոս, կաթնառատցիք՝ սրախոս, հանդեցիք՝ երաժշտության համար խենք:

Բայց սրանք պայմանական են: Ընդհանուրն այն է, որ բոլորն էլ լավ գիտեն բառ ու բանի հարգը: Ամենուրեք տարածված են խաղիկներ, որոնք դեռ ոչ ոք չի գրառել: Սիավասիկ նմուշներ Լեռնածոր գյուղից:

*Ճրագ, ճրագ ճրջնարիտ,  
Փունջ մընեշակ, մարթարիտ.*

◆◆◆

*- Մայթաղի՛, քո՛ն ըս, թս գերթուն:*  
*- Վեչ քուն ըմ, վեչ գերթուն:*

◆◆◆

*Կնյագից Մարին  
Աշկըն էն սարին  
Էս քանի փարին...  
Կըսպասի յարին՝  
Քաշկուտ Արգարին,  
Վեր փարան Սիրիի  
Սել եկած փարին:*

◆◆◆

*Խնամի՛, խնամի՛, պարավ ըս եկած,  
Տերտակն ս ծարավ ըս եկած:  
Նանց գյիդիմ մուն դոջ ըս պիրած,  
Ամս մուն պրդոճ չիս պիրած:*

◆◆◆

*Այ գլըդեցի, անուրճ Մարաս,  
Մուն եզն ըմ կերած էս սասարս,  
Կյինիմ ըմ խմած մուն փոճ մուն  
կարաս,  
Կրոթ թորթին դիվանն արի, թե  
կրկարաս:*

◆◆◆

*Անարոյիս, մեճ զավակըս,  
Քեզ եմ հանձնում վեց զավակըս,  
Ձեռքիդ պահիր զիրք ու քստուն  
Ու լավ պահիր իմ փուն սևուն...*

◆◆◆

*Ախճի, ճրկարտի իսալ ս,  
Դեքը կարն օխնալ ս:  
Թս աըրտումըդ ես չրկամ՝  
Եր կաց, քյինի մեր կարան:*

◆◆◆

*Արեն ընգալ ս փրոնեքին,  
Մարսաղ ըմ էն փրդին կրոնեքին:  
Ծարավ ս, հոնձն սևուն չի՝  
Թընգն ս փոլալ խոնեքին:*

◆◆◆

*Մարերը կընաշալ ս,  
Վէխճարը պըրթարալ ս:  
Քու մար մեռնի, սյ ախճի,  
Շորերըս յըխտոտալ ս:*

◆◆◆

*Մուն քաղ օնիմ ծիրան ս,  
Խոխիս մարը Սիրանն ս:  
Տղս օնիմ՝ Արոբիկ,  
Թուշիկները կըլորիկ:*

◆◆◆

*Ախճի, ախճի, մարդըդ փախճի,  
Ես փրոնիմ, փու մըրհետ պասի,  
Արած պենաղ վեր հըմաշիս,  
Քըրթկընգանըդ կըկանսիս:*

◆◆◆

*Քըրտակին, քտակին,  
Ծըկլակի փամ ճըխրակիդ,  
Կոժըդ կոտրիմ ծորումը,  
Մոխեր ածիմ կըրակիթ:*

◆◆◆

*Պորթը սսևդերքսն հսնիմ,  
Նըդե քյինիմ, չափ սնիմ,  
Կյու սնիմ-կյու կաս սնիմ,  
Կյուլին ռեխը կաս սնիմ...*

◆◆◆

*Ես սարերին խոնըն ըմ,  
Վեղը ծաղիկ կրոնըն ըմ,  
Նու վեր ինձ ճընանչում չի,  
Աշխեն փարուն թոնըն ըմ:*

◆◆◆

*Բաղին երթին մեճ կալ ս,  
Վա՛յ մըղըդ եկալ ս:  
Յարիս դսնձված իրեսը  
Ըրգոնան յրան փակվալ ս:*

◆◆◆

*Ախճից օնիմ հիմանի,  
Տալ չիմ հազար թունանի:  
Օղտերն սլ պեռնին պիրին,  
Տալ չիմ ախճիզիս փանին:*

◆◆◆

*Եշում ում, իրեում չի,  
Ծառերը փրիտում չի,  
Քսնի վախար ս փեսուն չիմ,  
Խելըքս սլ կըլխումս չի:*

◆◆◆

*Փեսա-փեսա՛ փըստըցնիմ,  
Մունին փակին նըստըցնիմ,  
Մուն ճօթ հագալ քըշտըցնիմ,  
Մուն թաս կյինալ եր քըցնիմ:*

### ÒáñùÇ ÝßÈ³ ñ³ ì áóŸ

Հարգելի խմբագրություն, զգացվում է, որ թերթն ազգագրական նյութերի հրատարակման նախասիրություն ու հեռանկար ունի: Ընթերցողների մեծ մասը դասիրով է ընդունում: Առաջարկում են ունենալ մշտական խորագիր՝ «Ձորքի հայրենագետ» կամ «Ձորքի նշխարատուն»: Այդ խորագրի ներքո հրատարակել Քաջարանի ու շրջակա գյուղերի ժողովրդական բանահյուսության նմուշներ, կենցաղային սովորույթների նկարագրություններ, տեղեկանքներ հնավանդ ու մոռացված արհեստների մասին, տարեց մարդկանց հուշագրություններ, տեղանունների ու հանդանունների ստուգաբանություններ եւ այլն:

Կարծում եմ՝ այս աշխատանքին զորավիզ կլինեն մտավորականության ներկայացուցիչները, պատանի ազգագրագետները, գուցե եւ՝ մեր Վերին Ձորքի սփյուռքից՝ առանձին անհատներ: Նախագնացի իրավունքով առաջինը ինքս եմ տրամադրում որոշ նյութեր:

**ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ - ԷՋԱՆՑԻ**

### Հ Վ»ՕŸ

Հնուց անտի Վերին Ձորքը բրդի արտադրության շտեմարան էր: Հետեւաբար լայն տարածում ունեին բրդի մշակության բազմազան գործիքներ: Դրանցից մեկը հանիրավի մոռացված անեղն (հանեղն) կոչվող գործիքն էր: Լեռնածորում հիշվում է փորձառու վարպետ Օվակիմենց Մոսիմ, որին շատերն են աշակերտել, այդ թվում եւ՝ այժմ 90-ամյա Տիգրան Հակոբյանը:

Անեղնը հատուկ մշակված փայտից պատրաստված աղեղ է, որին ձգում է ոչխարի աղիքից հատուկ կերպով մշակված լարը՝ մոտ մեկ մետր երկարությամբ: Վարպետը գործիքն առնում էր ձախ ձեռքին, ամրացնում բռնակի կաշեկապով: Աջով բռնում էր չակ կոչվող հարվածիչը եւ լարին փաթաթվող անմշակ բրդի փաթեթներն առնում հարվածի տակ: Լարի տատանումից բուրդը մաքրվում ու զգվում էր: Գզբաբն այն առանձնացնում էր զգարներով, որոնք արվում էին ճախարակով մանելու կամ այլ նպատակներով:

Հարկ է նշել, որ Ձորքի խոսվածքի մեջ լար բառը պահպանվել է միայն այս գործիքի հետ առնչված՝ բարբառում

## Բանահավաքություն

անեղին լարը կոչվել է լեր: Պատանհի ազգագրագետներին կհետաքրքրի նաև աքռավ, կյիզաթ անիլ, քըլլարիկ, մուրդա բառերի ստուգաբանությունը, որ այստեղ չեն բերում վերջնական եզրահանգում չունենալուս համար: Ակադ. Աճառյանը հիմնավորել է, որ անեղն բառը նույն աղել բառի հոմանիշն է:

### İ ³ ÖÇ Ü³ ñÃÇ ³ ë³ Í´

1. Յուղուծովին խաթրին քըթավերին կոթը կըպաչին:
2. Սըրտիթ նըստիմ, միրուքըթ քանդին:
3. Կարկուտը թակած տեղը կըթակի:
4. Կյուլին կըլիսին Ավիտարան ըն կարթալ, ասալ ա՛ շուտ արի, վէխճարը սեռը անց ա կացալ:
5. Քաչալին ճար նի, ուրան կըլիսին ճարը կըտեսնի:
6. Եծին կիճիպը վեր քոր չի տա, չըբանի մըհակ չի նի կյել:
7. Վենդըթ յորդանիթ չափավը մեկնի:

#### Են, վեր ասալ ա թա՛

1. Տափը տեղ չի տամ:
2. Իվիլ թիքյան փերը ծակում չի:
3. Սըտընի ծիյա նըստած, վեր չի կյեն:
4. Իրեսը բլղարի կաշի ա:
5. Օխծին ըմխումը մըրզիս, օխծը կըստակի:
6. Գյոռուցը հասնում ա յըրզյանցու կըլիսը:
7. Տենակ տաս, արուն չի կաթիլ:

19.02.1991

#### Չանգասույթներ

1. Բըրանի, կեր պըրանի:
2. Թակ-թակ ծըտիպուն, վէչ փարդու կան, վեչ ալ սուն:
3. Կառնավ, պըրինձ, իմ քուր քյինի, Չերթը կյե ինձ:
4. Կոլա-կոլա, դիք-կոլա, Չարի չամբար, մեշկը խամբար, Աղուն աղիմ, ալլուր մաղիմ, Չարըս սարին, մարըս սարին, Կոտ տամ, Ճյուր տամ, եր քաղիմ:
5. Կոնդի-կոնդի, պապան կյե, Խաշխաշ պիրի, ճաշ անիթյ: Վենդան փոմիթյ, քաշ անիթյ:
6. Փետըրվար ա, փեղ օնի՞ս, Մարտ ա կյելու, դարդ օնիս:

#### Շուտասելուկներ

1. Չալ ծետ, չալ ծըտաճոտ:

2. Երրին ծորունը, ճուլը ծոռ:
3. Չոլը եռ ա լալ հոռի ծառը: Այ հոռավը հըլլոր հոլ:
4. Փարչի մեշին մածուն կան, Մածունը մըրչեմուն կան:
5. Երդացունը չախչախը ծըմվալ ա, Ծեթուրին ճըմվալը ճըղվալ ա:

### ÔáñÛÇ ¼Ç½áöÝ

Նուբար զիզին չրաթան լալ թրած, վեր չրանի, ինքն ալ համ թիլ ա կծկում, համ մտեկ անում: Մուն կյող կատու մըտանում ա, պըրզում բիդի զիզուն, ամա ռիսկ չի անում լոք տա, մունը տանի: Չիզին ալ ղմըշում չի փիշտի ասի, մեխկն ա կյեն: Կատուն շատ վեր խըրշկոտում ա, զիզին կամանց ասում ա.

- Զմանչիմալ, քյինի, քյինի մունը եր կալ, քյինի...

Էտի պարի կնե՛կ... Դորմի՛ քեզ, Նուբար զիզի:

13.03.1991

◆◆◆

Լեռնածորցի Շուշան տատն այժմ չկա, բայց ժողովրդի մեջ ապրում են նրա ստեղծագործությունները: Նա ժամանակի գրագետներից Օհանից Խաչու դուստրն էր եւ ստանձնել էր տնային վարժուհու ազգանվեր պարտականությունները: Ուն գրել-կարդալ է սովորեցրել, մեկական գողտրիկ քառատող է նվիրել: Զորինում էր նաև համպատրաստից: Քառյակները հավաքելուն ինձ օգնեցին նրա ծոռնուհիներ Անուշը, Շուշանը եւ Զայկուշը: Ահավասիկ մի քանիսը:

*Նենա օրը նօրալ ա,  
Նօրալ ա, պլորալ ա:  
Յար, քու լսնենգյա իրենասթ,  
Իմ սերտըս մլլօրալ ա:*

◆◆◆

*Քյեցալ ղմ՝ ծմակը տրաննի,  
Չար լուզուն թող տրաննիլի,  
Տու ինձ ղս սերուն, ես ալ քեզ,  
Մաղ շենը թող նախաննիլի:*

◆◆◆

*Մեր կվին թանը ծախիւն,  
Էն տղին նանը ծախիւն...  
Թող տղերքը քոլ նին,  
Վար սնին, հոնձ սնին,  
Փեղը պիրին, դարս սնին,  
Թօրեն վատին, քոլ սնին,  
Նացը թիսին, քոլ սնին,  
Ապուն աշկը պեց սնին:*

◆◆◆

*Մարին հրդէն թօզ ա,  
Քաղածըս ինջըլօզ ա,  
Էրի յարը հինչ սնին,  
Վեր կյելը կըզ-կօզ ա:*

### Ö³ ÷ ³ ŌÁ

Մուն մարթ մուն փուք ցորեն ա տամ, մուն մըրթի փափաղ օնում: Քանի թնում ա կըլիսին, էթ փափաղը վեր ա ընգում: Ալ՛ համփերում չի, կըզնըվում ա, փափաղը տեն քըցում, ինքյըն ուրան ասում.

- Ալ՛ կըլխաս պեցուր տեղ կա՞, վըր քեզ թնիմ:

### ´ ³ é³ ñ³ Ý

Կըլխաս պեցուր-զլխիցս բարձր փափաղ-զլխարկ մուն-մի, մեկ մըրթի- մորթե օնում-գնում, առնում թընում-դնում է վեր ա ընգում-ընկնում է կըզնըվում ա-զայրանում է ուրան-իրեն վըր-որ

**Ասացող՝ քաջարանցի Գարեգին պապ, 82 տարեկան**

### ² é³ ÍÝ»ñ »ö ³ ë³ óí³ ÍúÝ»ñ

Սըլվ յեզնը վեր ա ընգալ, տենակավուրը շըտացալ ա:  
Սեւ եզն ընկավ, դանակավորները շատացան:

◆◆◆

Շօնը շանը վըրնը կօխիլ չի:  
Շունը շան ոտքը չի կոխի:

◆◆◆

Կյետըն օմնան դօնում քյաթա չի պիրիլ:  
Գետն ամեն անգամ գաթա չի բերի:

◆◆◆

Յուղուծովին խաթրին քըթավերին կօթը կըպաչին:

Չվածեղի խաթեր թավայի կօթը կպաչեն:

◆◆◆

Վըրնդերը յորդանիթ գյօրա մըլեկնի:  
Ութերդ մեկնիր վըրմակին համեմատ:

◆◆◆

## Բանահավաքություն

### Ասացող՝ Սաթենիկ Ղուկասյան, 63 տարեկան

Աննկողությունը Լեռնաձորի խոսվածքով Լեվոնը, կըլօխը կախ, կըզմված, շե-  
նին տակավը քյունում ա նուն: Ուրաց  
կըտրան թուփն ծրերքը մըէկնում ա,  
կանչում:

-Լեվոն, ա՛յ Լեվոն, էք կավը յետ տօր  
կյէ:

Լեվոնը կըլօխը պըրցնում չի, ինքը ու-  
րան ասում ա:

-Ախճի՛, ծրերքըք քաշի՛, աշկըս վեր ըս  
ածալ:

՝ 3 é³ ñ³ Ý

կըզմըված-բարկացած  
շենին տակավը-գյուղի ներքելով  
քյընում ա նուն-զմալիս է լինում  
ուրաց կըտրան- իրենց կտուրից  
ծրերքը-ծեռքը  
կավ-կով  
յետ տօրկյէ -հետ տուր, գա  
ինը ուրան-ինքն իրեն  
վեր ըս ածալ-կիանես, կթափես

### ՕանՍՇ ùá Ñáñ

Մուն աշկը ծակ ճըղացպան ա նուն:  
Հու վըրէր աղուն ա տանում ճըղացք, պա-  
րոյորը յոր ընէլի տըէղ առաջ շըհատն ա օ-  
զում: Տուրա հետի ալ խալխը անեսկ լալ  
տամ ճըղըցպանին:

- Իմ հար վըրէ մըռնի, վեչ մունն ալ  
դորմի չի տալու,- դարդ լալ անում ճըղըց-  
պանին տղան:

...Հարը վըրէ մըռնում ա, տղան ա  
ճըղացպան թըռնում: Պա հինչ անի,  
վըրէ հորը դորմի տան: Մըտէկ ա անում,  
հու վըրէ կյեմ ա ճըղացք, վազ ա տամ  
առաջըն, ասում:

- Շոտ արի շըհատը տոր:

- Ղորմի քո հոր, էն հալա ճըղացին  
տըռանը լալ շըհատը յոր օնում: Տու իսկի  
թողնում չիս հասիք ճըղացք,- ասում ըն  
ճըղաց կյըվողնեն:

- Հեն ա հորս դորմի ըն տամ, - ըրխա-  
նում ա ճըղացպանին տղան:

՝ 3 é³ ñ³ Ý

դորմի քո հոր - ողորմի քո հորը  
Մուն աշկը ծակ ճըղացպան - մի  
աչքածակ, կծծի ջրաղացպան  
Հու - ով

Պարոյոր - բարի օր  
Շըհատ - հացահատիկ աղալու վարծ  
Անեսկ լալ տամ - անիծում էր  
Վազ ա տամ առաջն - վազում է  
ընդառաջ  
Յոր օնում - վերցնում  
Շոտ արի - շուտ արա  
Ըրխանում ա - ուրախանում է  
Կյեմ ա - գալիս է

2 ի 3 Ý 13 à 3 i áóù

Անցած դարի կեսերին գուսանի եւ բա-  
նաստեղծի համբավ ուներ Վերին Հանդ  
գյուղացի Սարգիսը: Տոհմի շառավիղնե-  
րի եւ տարեցների պատմելով, նա երկա-  
րակյաց էր եւ ապրել է շուրջ 120 տա-  
րի: Հայտնի էր շաիր Սարգիս անվամբ:  
Ժամանակի ոգուն համապատասխան,  
ստեղծագործում էր երկու՝ հայերեն եւ  
թուրքերեն (հետագայում անվանված  
արքեջաներեն) լեզուներով: Տոհմում  
առ այսօր էլ հանգավոր խոսքի բնատուր  
ծիրքով օժտվածներ կան: Բայց աշուղ  
Սարգիսի գրավոր ոչինչ չի պահպանվել:  
Նրա ստեղծագործության պատահիկնե-  
րը ժամանակակիցներն անգիր հաղորդել  
են սերնդեսերունդ, որոնցից բանաբաղ  
անելով եւ խմբագրելով, մի հատված են  
ներկայացնում ընթերցողին: Այնկալում  
են, որ նորոգ կպահես բոլոր ընթերցողնե-  
րի նուրբ սերն իմ նկատմամբ եւ օրհնու-  
թյունները՝ բարեհիշատակ ինքնուս գու-  
սանի հիշատակին:



Աշուղուհի Փարի Մարայանցին,  
լսած լինելով շաիր Սարգիսի համբավը,  
Սիսիանում մրցույթներ անցկացնելուց  
հետո, 1850-ական թվականներին Վե-  
րին Ձոր է գալիս՝ հանդիպելու Սարգիս  
Բանիաղվեցու հետ: Ի դեպ, Վերին Հանդ  
գյուղի հնագույն անունը Բանիս է, օտար-  
ների մոտ այն Բանիսլու էր հնչում: Վերին  
Հանդի ջրաղացի մոտ աշուղուհին բա-  
րեւում է անծանոթին եւ հարցնում շաիր  
Սարգիսի տունը: Անծանոթը, որ ինքը Սար-  
գիսն էր, նախ ներկայանում է որպես շաիր  
Սարգիսի բատրակ: Աշուղուհու համար հե-  
տաքրքիր էր զրուցել «նոքյարի» հետ:

- Ո՛վ տարեց մարդ, շատ բան գիտի՞  
քո աղան:

- Ո՛վ աստծու դոնադ, նա այնքան գի-  
տի, որքան աղուն է աղացել այս ջրաղա-  
ցը...

- Լավ ես խոսում, ալլաիը քեզ պահա-  
պան: Դե, հիմա ասա, թե քանի՞ տարեկան

է այս քարը հըսկա...  
- Դու մորից եղած չէիր, խանում, որ  
այս քարը կար ու կլինի: Աստծուն է հայտ-  
նի տարիքն այս քարի:

Խանունը միտք է անում, թե որ  
բատրակն այսքան բանիմաց է, ուրեմն  
անհաղթելի է վարպետը: Մտադրվում է  
մեջլիսի չզմալ ու հենց ջրաղացի մոտից  
շարունակել ճամփան: Սակայն Սարգիսը  
ժպտում ու մի հանպատաստից չափա-  
ծո խոսքով ներկայանում է, սիրալիր տուն  
տանում եւ հյուրընկալում աշուղուհուն:  
Հաջորդ օրը, երեկոյան ժամերգությունից  
առաջ, գյուղի սբ. Աստվածածին եկեղեցու  
բակում մեջլիս են կազմակերպում: Սագի  
քաղցրահամ նվազակցությամբ սկսում է  
հարց ու պատասխանը. նախապատվու-  
թյունը քահանան տալիս է պատվական  
դոնադին:

#### Փարի

Ու՞մ սուրն էր օրհնել հայ մեծ  
խալիֆան,

Ո՞վ էր փաղշահն այն վայելչատես,  
Որ աշխարհին առավ մի՞նչեւ Հնդստան  
եվ անուն հանցե Իսթենդերի պես:

#### Սարգիս

Փաղշահներ շատ են եկել աշխարհն  
ու գնացել,

Նրանց փառքն ու լավ գործերն են  
մնացել...

Այդ պարսից Աֆշառ Նադիր շահն էր  
մեծ

Որ օրհնյալ սրով աշխարհին տիրեց:

#### Փարի

Շատ գիտուն ես, շաիր էրմանի,  
Քեզնով քո գյուղն է գովքի արծանի,  
Քոնն է մեջլիսը, հիմա դու հարցրու,  
Իմաստուն խոսքով Փարուն  
գարմացրու:

#### Սարգիս

Մի թագավոր կար հին Հայաստանում,  
Երբ որ նայում էր ձեռքի մատանում,  
Ուրախությունն էր վշտի փոխարկ-  
վում:

Թե վիշտ ունենար, նայում էր կրկին,  
Խռոված հոգին նորից էր հրճվում:  
Արդ, Ի՞նչ էր զրված մատանու վրան,  
Իմ ազիզ դոնադ, գտի՛ր պատաս-  
խան...

#### Փարի

Հոր անունն ասեմ՝ դա ճիշտ չի լինի,  
Թե՞ մի կախարդի անուն էր գրել...  
Կարծում են նաեւ, որ կինն ու գինին  
Այդ հանելուկին պայման են դրել...  
Դու մեծ շաիր ես, ալլաիը վկա,

## Բանահավաքություն

Դրա լուծումն իմ դավթարուն չկա...

### Սարգսիս

Ո՛վ Փարի խանում, ղոնաղ իմ բարի,  
Մատանու վրա ԱՆՅՈՂԻԿ բառն էր,  
Այսպես է կարգն այս մեծ աշխարհի,  
Երբ բարին չկա, մեր հյուրը չարն է,  
Անիծենք չարը մեր խոսք ու սագով  
Ու փառք տանք բարուն մեր գինու  
թասով:

Լուսինն Արեւի քույրն է երկնքում,  
Վիշտն էլ ծիծաղի քույրն է մեր  
կյանքում...



Այս մեջլիսի ավարտին Փարի խանումը  
ակնածանքով հայտնում է աշուղ  
Սարգսիսի հաղթանակը եւ որ բարձել էր ջո-  
րուն, առաջարկում է Սարգսին: Վերջինս  
մեծահոգաբար հրաժարվում է: Ու եւս մի  
օր իր տանը պատվելով աշուղուհուն,  
նրան ճանփու է դնում Գողթան:

՝ 3 é3 ñ3 Ý

Շաիր-բանաստեղծ  
Աշուղ-գուսան  
Աշուղ Փարին Ջաբրայիլի շրջանի  
Ներքին Մարալյան գյուղից էր:  
Նոքյար-բատրակ  
Աղա-տեր, պարոն  
Ղոնաղ-հյուր, հյուրընկալվող  
Ալլահ-աստված, երկնավոր արարիչ  
Խանում-տիկին  
Մեջլիս-այստեղ՝ մրցույթ  
Խալիֆա-օտարներն այդպես էին կո-  
չում հայ եկեղեցու պետին: Այստեղ նկա-  
տի ունի կաթողիկոս Աբրահամ Կրետա-  
ցուն, որ 1735թ. Սուլթանի դաշտավայրում  
օրհնել է շահ օծվող Նադիրի սուրը եւ կա-  
պել մեջքին:  
Փաղշահ նաեւ փաղիշահ- այստեղ՝  
արքա, շահ Պարսից  
Իսբենդեր-նկատի ունի Ալեքսանդր  
Մակեդոնացուն  
Շաիր Էրմանի-բանաստեղծ հայ  
Դավթար-գիրք, մատյան

È»éÝ³ ÓáñóÇ  
ÆBÈ³ Ý Øáí ëÇËÛ³ ÝÇ  
Ñ³ Ý»Ëáõİ Ý»ñÇó

Ինձ մոտ նստած է թոշակառու Իշ-  
խանը: Մի տետր է բերել՝ մոտ 50 ինք-  
նահնար հանելուկներ, որոնց մի մա-  
սը հորինել է գյուղական ուսուցչիս  
«առաջադրանքով»: Մտադիր եմ նոր ուս-

տարվանից բերել նրան որպես մոռաց-  
ված արհեստների դասատու (ասում է՝  
կսովորեցնեմ տրեխ, կողով գործել, բրու-  
տի արհեստ, փայտածուխ պատրաստել,  
ըռոքընը տաշել եւ այլն): Հանելուկների  
տետրի վրա գրել է ինքնահնար գրական  
անուն եւ քահ-քահ ծիծաղում է այդ հնար-  
քի վրա՝ ՄԻՀ Քրդիկանցի: Այսինքն՝ Մով-  
սիսյան Իշխան Համբարձումի, իսկ Քրդի-  
կանցը Լեռնաձորի միջնադարյան անունն  
է, որ նշանակում է Քրդիկ իշխանի գյուղ:

Տատըն առավոտ ծեգին,  
Երկինքն առած զույգ ձեռքին,  
Չյուն է մաղում մեղմօրոր  
Ոտն ու ձեռքը լրիվ չոր:  
**(Մաղ)**

Ես ինչպե՞ս հեծնեմ,  
Հա, ձեռը գտա՝  
Ծնկներից զարկեմ,  
Առջես չոք տա:  
**(Ուղտ)**

Կտրին գնդեր շարեցի,  
Վեց երդիկին ցրեցի:  
**(Բիլիարդ)**

Գիշերները չարչարվում,  
Ցերեկով է զարդարվում:  
**(Անկողին)**

Որս է որոնում գիշերով խավար,  
Օրը ցերեկով կախվում գլխիվար:  
**(Չղջիկ)**

Օձի նման գալարվում է հենակին,  
Կախաղան հանում իր նորագա-  
վակին:  
**(Լոբու թուփ)**

Որքան կոկորդն եմ լցնում,  
Որոճում է, փոթորկում,  
Դեն է նետում, կուտակում,  
Ամենքին կերակրում:  
**(Ջրաղացքար)**

Լույս է տալիս, արտասվում,  
Սառցակալում ու մարում:  
**(Մոմ)**

Գոմից, թե սարերից է՝  
Հազվադեպ բաներից է,  
Օրերս մի պատառ կերա,  
Միջուկը մետաղից էր:  
**(Խորոված)**  
Ջբաղմունք թավշե՝

Թե նորեն ծաղկի,  
Տեսնողը կապշե:  
Վերացավ գնաց,  
Անունը երգի  
Վարպետին մնաց:  
**(Շերամ)**

Ցամաքում հովել, ջրում լողորդ է,  
Իմացած բառը միայն մի «ղորթ» է:  
**(Գորտ)**

Միլիցան քյեցալ ա, փափաղը  
մընացալ ա:  
**(Մեխը)**

Մուն կյուն տավար՝ կըպկուտոր:  
**(Մրջնանոցը)**

Մուն կյուն տավար, մուն կապավ  
կապված:  
**(Ցախավելը)**

Չաթուն ճյուր տամ, դանան օռռի:  
**(Դրումը)**

Կյունաշը գյուղումը, հաքյին չուղումը:  
**(Շերեփը)**

Սպիտակ հինիմ, կյարմուր կյործիմ,  
սեվ կտրիմ:  
**(Մոշենի)**

Կյարմուր խընեցի, սեվ սիրել:  
**(Մասրենու պտուղը)**

Չորս ախպրավ պատ ըն թընում,  
մունը քար ա պուրում:  
**(Գուլպա գործելու ճաղերը)**

Ստեղ պեց թողիմ, թիփլիզ փըռնիմ:  
**(Նամակ)**  
Հայ տամ, հույ տամ, հաքյվան  
փըռնիմ, ծիքյ տամ:  
**(Լծակավոր կշեռք)**

Քըշանա քըշերավ թըռիմ քու զիզու  
օսերիմ:  
**(Կուժը)**



## Բանահավաքություն

### Սիրո եւ ջրի Լեգենդը

**Յ**աբանդ գավառը, որ Բաղաց աշխարհի հարեւանն էր, հայտնի էր իր մեծաշնորհ բրուտներով:

...Կապանա քարավանները հաճախ էին դեպի այնտեղ ձգվում, որ գինու կարասներ ու բրուտի այլ կահ-կարասիք գնեն... Քարավանապետերը միշտ սիրով էին իրենց հետ վերցնում Գորուփիկ իշխանի հավատարիմ ընդոծին Սմբատին, որ հմտացել էր առետրի մեջ, շատ բանիմաց էր ու խոնարհ: Իր բազում այցելությունների ժամանակ գեղադեն ու ամրակազմ Սմբատը նվաճել էր հաբանդուհի Սիրանուշի՝ բրուտի աղջկա սիրատոջոր սիրտը, եւ ինքն էլ անլուր այրվում էր սիրո հրդեհի մեջ:

Գեղանի հաբանդուհին նրան սովորեցնում էր նոր արհեստի գաղտնիքներն ու մի անգամ Սմբատին նվիրում է իր սիրո հավատամքի առհավատչյան՝ կավաշեն մի կուժ, որ սովորական չէր եւ հրաշքի էր ընդունակ:

- Ո՛վ դու բաղացի, որ քո առիւթնող եւթյամբ տիրացար իմ սրտին, վերցրու իմ ձեռքով պատրաստած ու հրաշագործության ընդունակ այս կուժը: Նրանում իմ սիրո ուժն է...

Թող չջարդվի, այլապես երկուսիս էլ կկործանի ամենագոր Արամազդը, եւ մեր սերը ջուր կդառնա, - այդպես է հրաժեշտ տալիս բրուտ հաբանդուհին:

...Կապան հասնելուն տակավին զգալի ճանապարհ կար, երբ դառն աղետը համակեց ամենուր, չորացան գետերն ու առուները, ցամաքեցին բոլոր

աղբյուրները: Վաղորդյան հովն էլ ցող չբերեց, ու թռչեցին ծաղիկները, թփերն ու բաղեղները: Ծարավի տվայտանքից մարդիկ ու կենդանիները դեգերում էին խելակորույս, ճչում, հառաչում ու կաղկանծում աղիողորմ, միմյանց ծվատում, որ գոնե արյուն վայելեն...

Քարավանը վրան զարկեց Ջանգալատուփում, Ոլորքածորից քիչ ներքե... Ու թողնելով քարավանի կանանց, ծերերին ու երեխաներին անջուր մղձավանջի մեջ՝ ելան կտրիճները ջուր որոնելու: Բայց ապարդյուն... Չեռացողների ականջին հազիվ հասնում էին ջրատենչ, հալչող ձայներ.

- Չասա՞ր, հասա՞ր...

(Այստեղից էլ՝ Նորաշենիկ գյուղի Չասար հանդամասի անունը):

Սմբատը ընկերների եւ սիրուհու կթի հետ գնաց Ոլորքածորն ի վեր: Ահասարսուռ եւ պապակ բարձրաբերձ վիհերից քարեր էին գլորվում եւ, կարծես, լսվում էին չար ոգիների նախանձոտ քրքիջներն ու հռհռոցը... Քարափին Բեռնխորի եկեղեցին է ծխում, հեռվում երաշտից խանձված Ծաղկանց այգիներն են ու խասարտը: Էլ շարժվելու ավյուն չկա, տարաբախտ որոնողներից մի քանիսը, հանդերձյալ կյանք ընդունելով, մնացին խորխորատներում: Սմբատն էլ պահ առ պահ զգում էր, թե ինչպես է դանդաղում արյունը երակներում...

Ու դանդաղ ծունկ է չոքում այնտեղ, ուր օրեր առաջ իրար էին զգվում Ծաղկանց այգիների գետակի ու Փարախածորից եկող վտակի ջրերը... Վերջին անգամ համբուրում է նվիրական կուժն ու մեկեն հիշում Սիրանուշի խոսքերը. «Թող չջարդվի, այլապես ... մեր սերը ջուր կդառնա»: Ու, ի հեճուկս Արամազդի

կամքի, տառապյալ մարդկանց համար, նա ջարդում է կուժը: Մեռնում է Սմբատը, իսկ փշուր-փշուր եղող կթին ձայնակցում է հենց այդտեղ ծագած աղբյուրի կլկոցը: Ո՛վ զարմանք, այդ պահին էլ վերստին կյանք են առնում բոլոր գետերն ու աղբյուրները, մարդիկ, կենդանիներն ու հավքերը հագեցնում են յոթնօրյա ծարավը...

Սիրանուշի՞ն, թե՛ Սմբատին հավերժացնելու համար ժողովուրդը այսօր էլ այդ աղբյուրը կոչում է Բրուտի աղբյուր:

... Ջուրը շենացնում է խանձված բնությունը, եւ առաջինը փարթան կանաչն աճում է Բրուտի աղբյուրի մոտակա գյուղի հանդերում: Եվ ավանդությունն ասում է, որ այդ պատճառով էլ գյուղը Աճանակ կամ Լճանակ է կոչվում (այժմվա Առաջածորի մերձակա տարածքում, ուր եւ գտնվում է Բրուտի աղբյուրը): Իսկ ի՞նչ եղան ջուր դարձած սիրո կթի կտորտանքները... Ասում են, որ նրանցից աղբյուրի շրջակայքում տխլենի ծառեր արարվեցին եւ հիմա էլ էջանանում շատ են տխլենիները, որ կուժ հիշեցնող պտուղ՝ պնդուկ են տալիս...



# Նամականի

## Երեւան, պեպրական համալսարան, ընկ. Է. Բ. Աղայանին

**Հայ իրականության մեջ առանձին  
անուն-հայրանունով դիմելու՝ ռու-  
սերենին բնորոշ ձեւի հայերենով  
փոխարինման եւ նորընծա «Նա-  
խամաշտոցյան...» աշխատու-  
թյան մի դրույթի մասին:**

Հարգելի պրոֆեսոր  
Կարծում եմ ձեզ համար տհաճ չի  
լինի իմ երկրորդ նամակը: Նախոր-  
դին պատասխանելու համար Դուք ժա-  
նանակ գտաք ու շատ սիրալիք գտնվե-  
ցիք իմ նկատմամբ: Իհարկե, ինքս  
հակված չեմ լեզվական երեւոյթների՝  
ինձ հուզող բոլոր հարցերի մասին Ձեզ  
գրել:

1. Նմանակելով ռուսերենին, հատ-  
կապես ետհոկտեմբերյան շրջանում  
մեզանում տարածվել է մարդկանց  
անուն-հայրանունով դիմելու ձեւը:  
Դրանում վատ ու մտահոգիչ որեւէ բան  
չկա, որովհետեւ գրեթե սովորական է  
դարձել: Այդպես գրում են մանուկում,

գեղարվեստական  
գրականության մեջ  
եւն: Աշոտ Արշակի  
Մեսրոպյանը երբ ըն-  
կեր Մեսրոպյան է,  
առկա է պաշտոնա-  
կան մթնոլորտը, որ  
կարող է մտերմության  
երաշխիք անգամ չունենալ  
երկու խոսակիցների միջեւ:

Սակայն երբ նույն անձն Աշոտ Արշա-  
կովիչ է, ապա դա՝ մտերմական ներ-  
քին մղունից ելնելով է: Մյուս կողմն էլ  
կա. այս նամակում Ձեզ ընկեր Աղայան  
են կոչում, սակայն չեն ենթադրում, թե  
ինչ-որ կաշկանդված են պաշտոնական  
մթնոլորտից: Թերեւս այդպես կլիներ,  
եթե Ձեզ հետ Ձեր կաթինետում կամ  
լսարանում խոսեի: Զգիտե՛մ՝ դիմու՞մ  
են Էդուարդ Բագրատովիչ ձեւով: Դա էլ  
մարդկային փոխհարաբերության մի այլ  
նուրբ բնագավառին է բնորոշ:

Եվ այսպես ամենուրեք՝ Տիգրան  
Հայկովիչ, Ռաֆայել Արմենակովիչ,  
Շմավոն Մամիկոնովիչ, Սահակ Մեսրո-  
պովիչ, Անահիտ Վահանովնա եւն:

Մեր լեզուն վաղնջական ժամանակ-  
ներից ունի ԱՁՆ /ԱՁՈՒՆ/ բառը, որը սե-  
րունդ, զարմ, ժառանգ է նշանակում եւ,  
հավելելով առանձին բառերի, նրանց



նոր իմաստ է հաղոր-  
դում: Այսպես, ունենք  
վիշապազուն, հայ-  
կազն, արքայազն,  
թագավորազն եւն:  
Վիշապազն, ինչպես  
հասկանում եմ, նշա-  
նակում է վիշապից սեր-  
ված, վիշապի ծագ, սե-  
րունդ: Ինչպես երեւում է, ԱՁՆ

բառը բիբլիական ժամանակներից  
գոյություն ունի /գուցե՞ էթնոնիմ է/ եւ  
իրենում կրում է ասպետականության  
նման վեհ զգացում: Նոր ժամանակնե-  
րում ԱՁՆ բառը չի փայլում լեզվական  
հնարավորություններով եւ մի քանի  
հինավուրց բառերի մեջ դիմջ ապրում  
է լեզվի զանձարանում: Իմիջայլոց շատ  
այլ բառեր կան, որոնք հիշվում են ու-  
կեդարից կամ ետին շրջանից, նոր նշա-  
նակությամբ կիրառվելու հնարավորու-  
թյուններ ունեն, սակայն չեն կիրառվում  
արդի գեղարվեստական խոսքում:

...Տրամաբանական չէ արդյո՞ք, որ  
ԱՁՆ բառը կյանքի կոչվի մեր ժամա-  
նակներում, հատկապես, որ հույժ անհ-  
րաժեշտ է անձանց դիմելու կայուն ու  
հուսալի ձեւ ունենալ: Ռուսերենի դի-  
մաց մեզանում դյադյա, տյոտյա ձեւերը  
փոխարինվում են հորեղբայր, մորեղ-

## Նամականի

բայր, մորաքույր, հորաքույր ձեռքով, որոնք բանավոր լեզվի համար, իմ կարծիքով, այնքան էլ հարմար չեն: Այդ բանի օգտին կլինի, որ Աշոտ Արշակունի-ը դառնա Աշոտ Արշակունի: Նույն կերպ վատ չեն հնչի՝ Տիգրան Յայկազուն, Ռաֆայել Արմենակազուն, Շամվոն Մամիկոնազուն, Սահակ Մեսրոպազուն, Անահիտ Վահանուհի եւն:

Ռուսերենի -իչ, -ովիչ, -եվիչ վերջածանցները մեր լեզվում տեղադրելը մեր ազգային խոր հարգանքի դրսևորումն է ռուսերենի նկատմամբ: Սակայն ինչու՞ ընդօրինակել տառացի, երբ լեզուն իր ներքին հնարավորությամբ կարող է դասնել ինքնատիպ կարգով:

Ովիչ վերջածանցը վերջանում է կտրուկ չ-ով, իսկ ազն-ը ա եւ ն հնչյունների առկայությամբ, ավելի համեղական է:

2. Բորբոքուն հետաքրքրությամբ կարդացի Ձեր «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, Մեսրոպյան այբուբենի եւ հարակից հարցերի մասին» աշխատությունը: Ես ինձ կարդալու իրավունք վերապահեցի, որովհետեւ այն միայն լեզվաբանների, բանասերների համար չէ գրված: Բանն այն է, որ Ձեր արծարծած շատ խնդիրներ հուզում են նաեւ մասսայական ուսուցչությանը: Ուսուցիչները, իսկապես, վաղուց էին սպասում նման ամրակուռ հրապարակախոսության:

Այս նամակում օրինակներ չեմ բերի, թե ես, որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ինչպես եմ իմ գեղջուկ սաների հետ առնչվում նաեւ բանասիրական ուսումնասիրությունների հետ, մասնավորապես պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի որոշ աշխատանքների հետ:

Նախամաշտոցյան, Ետմաշտոցյան շրջանները, հայ մշակույթի համեմատաբար վաղ շրջաններն ընդհանրապես բանասիրությանը զբաղեցնում են բարձրագույն մակարդակով: Այդ մակարդակում, անշուշտ, անկարելի է գիտնականների առճակատումը, սակայն բանասիրությունը պետք է ունենա անհերքելի գիտելիքների մատչելի պաշար, որն անհրաժեշտ է ամեն մի հայի, առավել եւս՝ ուսուցչի:

Ես Ձեր գրքի սովորական ընթերցողն եմ: Իհարկե, ընթերցել բառն այստեղ իր պատշաճ նշանակությունը չունի: «Նախամաշտոցյան...»-ը ոչ թե ընթերցելու, այլ ուսումնասիրելու համար է: Եվ բնավ

էլ այն կարծիքին չեմ, թե ամբողջովին ըմբռնել եմ Ձեր զարգացրած դրույթները: Մասնավորապես հիացած եմ բանասիրության առյուծի ճշմարիտ ուժերն արդարացի գնահատելու, գիտական հեղափոխական տրամաբանության ամենահամարձակ դրսևորման՝ Ձեր ազնվությամբ: Դուք հայ բանասիրության իմաստուն արքան եք:

...Այն պատճառով, որ ես բանասիրության կրթություն չունեմ, գրքի մի քանի դրույթներում ինձ հանդված չեմ գտել, ուստի մեջբերելուց ձեռնպահ եմ մնում: Միայն՝ էջ 240-241-ի մասին:

Մինչ այդ՝ ինչու՞ բանասիրության դասական աշխատություններում գործածական է Մեսրոպ եւ ըստ այդմ՝ մեսրոպյան այբուբեն, նախամեսրոպյան բառերը: Աճառյանն ասում է, թե Մեսրոպ բառը ետին շրջանում է ի հայտ գալիս, նախապես՝ Վարդ-ում եւ այլուր, Մաշտոց է:

Գրում եք. «...Էլ ավելի միակողմանի է այն պնդումը, թե իբր Մեսրոպի մեծությունն այն է, որ նա կարողացավ որոշել հայերենի հնչյունները... Սա մի «մեծություն» է, որ ոչնչի է հավասարեցնում Մեսրոպի իսկական մեծությունը»: Այնուհետեւ՝ «Յայկական այբուբենի հորինման համար անհրաժեշտ՝ հայերենի հնչյունական համակազմի գիտական պատկերացում կազմելու տեսակետից Մեսրոպի դրսևորած իրոք որ հանճարեղ իմացությունը մեր լեզվի հնչյունների հնչյութաբանական գնահատությունն է...»:

Ինձ թվում է. որ այս նախադասությունների միջեւ հակասականություն կա: Մի՞թե Մաշտոցի մեծությունը հայերենի հնչյունական ատաղձը մշակելու մեջ չէ: Կորյունի վկայած «խուժադուժ», «ճիվաղաբարո» կողմերում, «խնցրեկագույն» լեզուների առկայությամբ մի՞թե հեշտ կլինեն «ընտրել աննշույթը»: Անկարելի է, որ 5-րդ դարում չլինեին բարբառներ /հայերեն հիշեցնող լեզուներ/ եւ նրանց առանձնահատկություններն ավելի արտահայտիչ կլինեին: Յետեւաբար՝ հնչյունների ընդհանրական համակարգ ստեղծելը ոչ միայն տեխնիկական դժվարությունների հետ պետք է կապված լինեն /Մաշտոցի գավառից գավառացիները, քարոզությունները, հեթանոսական դեւերին հալածելը եւն/, այլեւ ազգագրական, լեզվական երեսույթների գնահատման, բանահավաքչության

հետ եւն: Մաշտոցը պետք է որ բառերի անհաշիվ ցուցակներ կազմած լինեն ու դասդասումներ կատարած:

Օրինակի համար, մեր ժամանակներում հայերենի առկա բարբառներն ավելի շատ հնչյուններ ունեն, քան գրականը: Մեր «ղափաներենի» Ա-ն, Ու-ն, Ու-ն, Ք-ն եւն առանձին հնչյուններ չե՞ն:

Մեր լեզվում հիմա հնչյուններն արտաբերելու էտալոն չկա: Որքան առաջին դասարանների ուսուցիչներն են, դրանց, թերեւս, քառորդ մասի չափ էլ ա հնչյունի արտասանական տարբերակ կա: Յենց այդ հնչյունը սասնեցիները, ապարանցիները, շիրակցիները, արցախցիները մի նրբությամբ առանձնացող տարբերակով են արտաբերում: Շատ վայրեր կան, որտեղ հայերը դժվարությամբ են արտասանում, օրինակի համար, պ հնչյունը, տ հնչյունը /բ,դ/:

Մաշտոցի համար պետք է խորթ լինեին բոլոր բարբառները, բացառությամբ Նոր քաղաքինը եւ իր ծննդավայրինը: Արդյո՞ք շուտ կհաշտվեր Գողթան գավառի խոսվածքի նրբությունների հետ: Եթե լեզվաբան չլինե՞ր՝ այո: Բայց որ նրան հետապնդում էր լեզվական-հնչյունական առաքելությունը, կկանգներ դժվարությունների առջեւ: Ասենք, եթե հնչյունները որոշելը դյուրին լիներ, այբուբենի հորինմանը պետք է վաղ շրջանում էլ ձեռնամուխ եղած լինեին: Այս ենթադրությանը հարիր է Դանիելյան այբուբենի վարկածը: Սակայն նա էլ հիրավի մերժելի է, որովհետեւ սակավահնչյուն էր, որպիսին հատուկ չէ հայերենին: Ծայրահեղ դեպքում Դանիելյան նշանագրերը կարող էին հորինված լինել հայկական մի գաղթավայրի, մի բարբառի հնարավորությունների սահմաններում:

Ոմանք նշանագրերի գյուտի հիմքում դնում են համեմատաբար առաջադեմ կրոնի՝ քրիստոնեության հայտնվելը: Յիմա, դարերի բարձունքից, դա հավանական է թվում: Բայց չէ՞ որ, եթե հավատալու լինե՞նք Գ. Լուսավորչի առասպելին եւ պատմիչներին, քրիստոնեությունը գրեթե մեկ դար գոյություն ուներ արդեն նշանագրերից առաջ: Եվ ինչու՞ այդ դարի ընթացքում չծագեց այդ բաղձալի անհրաժեշտությունը, հատկապես, որ երկիրը տակավին չէր հռչակված Բ.-ի եւ Պ.-ի կողմից: Դարը ահռելի ժամանակահատված է, նա շաբաթ չէ, ամիս չէ, տարի

## Նամականի

չէ:  
Մեր ժամանակների բնավորությունն այլ է: Նշանագիրն ու հնչյունը գրեթե մատչելի են կյանքի բոլոր բնագավառներում: Այո՛, ուրիշի լեզվի հնչյունները որոշելը դժվար չէ: Սակայն դա այն դեպքում, երբ մենք ամեն օր շփվում ենք այլ լեզուների հետ: Այլ լեզվի հնչյունները որոշելը դժվար չէ լեզվաբանի համար: Այ, օրինակի համար, մենք կարո՞ղ ենք դուրս գալ թրթռել նորընծա աֆրիկյան ցեղի լեզվի հնչյունները: Կամ՝ ռուսերենի դիտումը մեզ երբեք չի հանգեցնի ռուսական այբուբենին, որովհետև խոսակցական ռուսերենում առկա է ծ հնչյուն /ծեխնիկա, ծեպլեյե եւն/, առկա չէ ա հնչյունը, այն չէ էլ լսվում, ապա օրինակ վարք ունի ր-ռ հնչյունը:

Նաեւ հետաքրքիր է, թե ինչու Մաշտոցը հատկապես 36 նշանագիր է հորինել: Մի՞թե 5-րդ դարում Ֆ հնչյունի անհրաժեշտությունը չկար: Գոնե՛ք բնածայն բառերում նա պետք է հանդիպեր /ոֆ, ուֆ, ֆշշալ/: Մյուս կողմից՝ հունարենն ուներ Ֆ, այն հնչյունադարձվել է փ /փիլիսոփա/ կամ ֆ /Պյութագորաս/: Դետաքրքիր է. նախատեսեց բ-պ-փ, սակայն վ-ի հուշումով Ֆ-ն չդրեց: Երանելին չափավոր է գտնվել նաեւ երկբարբառները մեկ նշանագրով նշանակելու խնդրում: Ինձ թվում է, որ այդ, «ժլատության» հիմքը 36 թիվն է: Այն լրիվ քառակուսի է, 12-ի եռապատիկն է /երորդություն, 12 աշակերտ/, իր փառահեղ վարքով առնչվում է շրջանագծի հետ, հավանաբար գուշակությունների թիրախ է եղել հեթանոս քուրմերի համար:

Աճառյանն ասում է, որ Մաշտոցը նաեւ հայ առաջին մաթեմատիկոսն է, որովհետև նա իր հորինած նշանագրերին տվել է թվային արժեքներ: Եթե այդպես է, հետաքրքիր է հետևյալ գծագիրը: Ա-մի ժ-տասը, ճ-հարյուր, ռ-հազար թվերը դասավորված են ուղղահայաց եւ հորիզոնական փոխադարձաբար ուղղահայաց տրամագծի ծայրերում: Միմյանցից 10, 100 եւ 1000 անգամ մեծ թվերը /տառերը/ նույնպես դասավորված են փոխուղղահայաց տրամագծերի ծայրերում:

Եթե նշանագրերը 36 չլինեին, այսպիսի հետաքրքրություն չէր դիտվի: Թերեւս սա պատահական ժամանց է, այնուհանդերձ...

Ինչն՞ով է ապացուցելի, որ Մաշտո-

ցի հորինած այբուբենը կատարյալ էր: Դետաքրքիր է այսպիսի հարց տալը հարմար չէ, որովհետև բանավոր խոսքը միշտ եղել է այբուբենի հնարավորությունների ստրկացման վտանգի ու ճնշման տակ: Եթե ուրիշ հետո դժվար թե հայ կոկորդը նոր հնչյուն արարեր, եթե դա լիներ, ապա այբուբենը չէ՞ր հանդուրժի:

Իմ կարծիքով ոչ մի այբուբեն ոչ մի ժամանակ չի կարող լեզվի հյութեղությունը կրող լինել: Այբուբենները ենթակա են լրման առհասարակ: Ուրեմն Մաշտոցն աշխատել է ոչ թե որպես ճշգրիտ մեքենա՝ լեզվի հնչյուններն ու նշանագրերն ամրակայելու տեսանկյունից, այլ ստեղծել է հայերենի՝ իր ժամանակի ամենաբարենպաստ այբուբենը եւ շահագրգռված է եղել, որ այն ունենա ոչ ավելի, ոչ պակաս 36 նշանագիր:

### ՈՐՈՇԵՐՑ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղափանի շրջանի Լեռնաձորի  
ուլթամյա դպրոցի ուսուցիչ,  
25 դեկտեմբերի 1977թ.



## Հայկ. ՍՍՀ լուսավորության մինիստրություն, ծրագրա- մեթոդական բաժին ընկ. Տ. Էլոյանին

Խոստովանում եմ, որ Ձեր առաջադրած հարցի շուրջ գրելը ինձ համար եռանդուն է այնքան, որքան միջն. դպրոցի շրջանավարտը տրամադրված է ընտրել շարադրության ազատ թեման: Այնուհանդերձ այդ հարցում /ինչպես եւ բազում հարցերում/ ես չեմ կարող ինձ համակարգել, չեմ կարող դույզմին չափով ընտրել այն օբյեկտը, որի շուրջը պետք է ծավալվեն: Դա, թերեւս այն պատճառով, որ գեթ մեկ անգամ չեմ հանդիպել մեկին, որի հետ կարելի լինի ազատ խորհրդակցել ուսուցչի խորհրդածությունների մասին: Միշտ փնտրել, սակայն չեմ գտել այն մարդուն, որի հետ կարողանամ բանավիճել, հակադրվել ու կարծիքներ փոխանակել: Ըստ այդմ էլ իմ գրավոր խոսքը վերընթերցելիս շատ եմ գտնում անորոշ ու վերամբարձ մտքեր, ու կոնկրետ լինե-

լով հանդերձ, տեղի է տալիս մի շարք այլ եւ անցանկալի եզրահանգումների: Բայց քանի որ իմ ծանոթությունը Ձեզ հետ որոշակի հիմքեր ունի, դեմ եմ ձգում ամեն մի մտավախություն, եւ կամենում եմ խոսել անկաշկանդ:

\* \* \*

Զգիտեմ երբ, հակված էի ուսուցչի աշխատանքն ընդհանրապես ուսումնասիրելու առաջին կարեւոր ու որոշիչ աղբյուր համարել նրա հոգեկան բարենասնություններով օժտված լինելը: Այժմ էլ այս հակումն իմ առօրեական խոհերում էլ կարեւոր դեր ունի: Օրագիր հիշեցնող իմ տեսողներից մեկուն գրել եմ. «Ես երբեւէ բարկացել եմ այդ դասարանում, վիրավորել կոլեկտիվը, դրա համար այնտեղ արդյունքի չեմ հասնում: Երկար ժամանակ ես այդ դասարանում գեղեցիկ չեմ լինի...»: Հիրավի: Բոլոր դեպքերում չէ, որ մեր՝ ուսուցիչների առաքելության բովանդակությունը որոշում են լավ գիտելիքների ունենալն ու մեթոդական բարձր վարպետությամբ օժտված լինելը: Իսկ այսօր, ըստ իս, գրեթե այդ պլանով է ուսուցիչը գնահատվում: Ու ակամա ստվերում է մնում կարեւոր շատ բան: Տարիներ շարունակ դիտել եմ տեսչական ստուգումների պրակտիկան: Կարծես, նման ստուգումները հետապնդում են մի նպատակ՝ հայտնաբերել կատարող ուսուցչին, այլ ոչ՝ մտածողին ու ստեղծագործողին: Դեմն այս տարբերակումն էլ պետք է ընդունել: Զգալի թիվ են կազմում այն ուսուցիչները, որոնք մանկությունը շատ վատ գիտեն, տարիների հետ այնքան են բթացել, որ երեխաները նրանց համար ոչ թե անգրել թղթեր են, այլ՝ փոքրիկ մեծեր: Այդ ուսուցիչների գործունեության մեջ վաղուց ետին պլանում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը, որը ես համարում եմ մեր պրակտիկայի ոսկեդեմիկ բնագավառը: Խնդրո առարկան՝ ուսուցչի աշխատանքը դիտելը, վերահսկելը, օգնելը, որ իրականացնում են դպրոցի ղեկավարները, մեթոդ-միավորումները, ժողկրթբաժինները, մինիստրության եւ կատարելագործման ինստիտուտների տարբեր մարմինները, կարող է խոր քննության: Ուսուցչի /դպրոցի/ փաստաթղթերի ստուգումը, մի քանի դասերի վերլուծությունները տակավին ոչինչ են կարծիք կազմելու ուսուց-

## Նամականի

չի գործունեության մասին: Սերնդի դաստիարակության համար ուսուցիչն ունի առյուծի բաժին, եւ նրա աշխատանքի՝ ամենալայն պլանով ուսումնասիրությունը միայն կարող է գաղափար տալ ուսուցման եւ դաստիարակության արդյունավետության մասին: Շատ կարեւոր է իմանալ ուսուցչի քաղաքական պատրաստվածության, հետաքրքրությունների շրջանակի, ընտանիքում եւ հասարակության մեջ ունեցած հեղինակության, կոլեկտիվի հոգսերով ապրելու, հասարակական գործունեության եւ այլ մանրամասների մասին: Իր գործը սիրող յուրաքանչյուր մեկը չի կարող անտարբեր մնալ իր շրջապատի գործունեության նկատմամբ: Ի վերջո, չէ՞ որ հնարավոր չէ հանրակրթական դպրոցում ստեղծել սեփական շկոլա: Դպրոցական հարկի բազմաթիվ հարցեր /գրեթե բոլորը/ իրենց համար խաչմերուկ ունեն մասն ուսուցչի: Հետեւաբար ամեն մեկն էլ որեւէ չափ տոգորված է թերություններն ու թերացումները վերլուծելու ակնկալումով: Հետեւում է, որ գյուղական ուսուցիչների առաջավոր կորիզը մասնավորապես անհաշտ է բոլոր տեսակի անցանակալի դրսեւորումների դեմ: Իսկ այդ ամենը նրանից պահանջում էն հոգեւոր ուժերի պիրկ լարում:

Շատ հետաքրքիր է քննել այն ուսուցչի հոգեբանությունը, որը խորունկ հայացքով տեսնում է շրջապատի գործունեությունը, միօրինակությունը: Վայ այն ուսուցչին, ով չունի պայծառ լավատեսության երկրպագելի զենքը:

Հոգեբանական ման գրոհի են ենթարկվում սկսնակները հատկապես: Վարդագույն երազներով դպրոց են գալիս, հեռվանց ուրվագծում են իրենց լուսավոր սանդուղքները, սակայն... մոտիկից ուսումնասիրելով ու ունկնդրելով ոմանց, կարճ ժամանակում համակերպվում են յուր գնալու արգահատելի պրակտիկային, դառնում կարճատես երեւութները զնահատելիս, հարմարվում են այն բանին, որ իրենց միշտ հիշեցնեն, «կարգի դնեն»: Մի խոսքով մանկավարժական աշխատանքը դիտում են ուրախ, դյուրին, դիմջ գործ: Նման պատրանքի մեջ ընկած ոմանք, երբ սթափվում են այդ ճանապարհով իրենց ուժերը չբացահայտած լինելուց, մանկավարժական աշխատանքը մակերեսային պատկերացնելուց, բռնում են դպրոցից տանող ուղին: Եղուկ մեր

առիւնքնող մասնագիտություն...

**||** *Ուսուցչի հոգեբանությունը գործին վնաս է այնքանով, որքանով մեծ չէ պահանջությունը նրա նկատմամբ: Որքան էլ ապավինենք ուսուցչի խղճին, նվիրվածությանը, ներքին վճռական ծայնին, որքան էլ հուսանք, որ նա ունի հասարակության շահերին համապատասխան իդեալներ եւ միշտ հավատարիմ է դրանց-մենք չարաչար սխալված կլինենք:*

Որպեսզի ուսումնասիրության համար ուսուցչի հոգեբանությունը դառնա հետաքրքիր ու օգտակար այլոց համար, առաջին հերթին պետք է մտածել ընդհանրապես դպրոցի եւ մասնավորապես հենց նրա աշխատանքի գիտական կազմակերպման մասին: Վերցնենք դաստիարակության բնագավառը: Որքան գիտեմ, ընկ. Սարգսյանին ուղղված մի նամակում ես անդրադարձել եմ դրան:

Անկեղծորեն նշեմ, որ ինքս իմ ծանոթ միջավայրում երբեք համոզված չեմ եղել բարձր գնահատելու ավագ սերնդի /15-ից բարձր աշխ. ստաժ/ ուսուցիչների աշխատանքը: Այսօր նրանց բանակը դպրոցում ճնշող մեծամասնություն է կազմում, դպրոցի ղեկավար կազմը այդ կոնտինգենտն է, գրեթե ամեն ինչում նախապատվությունը տրվում է նրանց: Եվ, բնական է, դպրոցի օրվա պատկերը հենց նրանց հոգեբանությունն է որոշում: Այժմ ՌԻՉՏԵԼՍԿԱՅԱ ՉԳՁԵՏԱ թերթը քննարկում է ոմն. Լ. Վ.-ի նամակը: Մասնավորապես նամակագիրը իր շրջապատի բոլոր ուսուցիչներին համարում է գործություն /սերոստ/ /ՈւԳ, Նո. 11, 1975թ./: Ես մեր կոլեկտիվում ձեռնարկեցի այդ նամակի քննարկումը: Նրանում բերված դիտողություններն այնքան արտառոց էին, որ մեր կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին առանց բացառության համակեց ներքին, թերես չապրված, մի դառն զգացում: Ինքս այն կարծիքին եմ, որ գործություն ասածը համեմատաբար երիտասարդ սերնդին երբեք չէ հատուկ: Փորձենք անկեղծորեն զրուցել երկարամյա մանկավարժներից մեկի հետ /թող լինի եւ վաստակավոր ուսուցիչ/: Որպես կանոն, նրանք

չեն հիշում կամ մեջբերում ուսումնասիրատիարակական աշխատանքի բարելավման՝ անցած տարիների իրենց ներդրումները: Առաջին հերթին նրանց տեսողությունը սահմանափակվում է տարիների ստաժի թվի մեջ, իսկ մի՞թե ամեն 20-30 տարվա ստաժը կարող է հարգանք ներշնչել...

Բոլոր դեպքերում չէ, որ ուսուցիչը ղեկավարվում է բուհում ստացած գիտելիքներով: Սկսնակի «մեղրամիսն» անցնելուց հետո նա ընտրում է իր սեփական մանկավարժությունը, որը միշտ չէ ընդունելի: Ինչ է դա:

Մանկությունը տպավորությունների վառ շրջան է: Ամեն մի աշակերտ ակն ընդ ական հետեւում է իր ուսուցչին: Եվ եթե խոր մտածենք, մեզանից ամեն մեկն էլ դույզմ-ինչ չափով կրում է իր երբեմնի ուսուցիչների ազդեցությունը: Եվ հաճախ այն ազդեցությունը, որը գիտական չէ, ընդունելի չէ: Մեր դպրոցներում տակավին չի բացառված հին տարրը՝ աշակերտին ծեծելը, վիրավորելը, քեն պահելը եւ այլ փոքրոգություններ: Դրանում համոզվելու համար, թեկուզ դասամիջոցին, ուսուցիչների քննարկմանը դնենք մի դեպք /օրինակ, աշակերտը ջարդել է ապակին/, հանդես կգան /թերես մասն որպես կատակ/ ամենատարբեր «լուծումներ»...

Հին սերնդի ուսուցիչներից ոմանք այն կարծիքին են, որ աշակերտների հետ երբեք մտերիմ ու անկեղծ չպետք է լինել: Տարիներ շարունակ գյուղում տեսնում եմ, թե ինչպես են նրանք իրենց առյուծ գոլում, երբ երեխաներն իրենց տեսնելիս... ծլկում են, թողնում նվիրական խաղը, զբաղմունքը եւ անհետանում: Այս բանը ընդգծվում էր մանկավարժական ժողովներում. ակնկալվում էր, որ երեխաները «երես կառնեն» ու «չեն ենթարկվի»: Ահավասիկ իրական հայտարարություններ.

- Երեխան պետք է օրական կես ժամ...
- Քննությունների ժամանակ խաղն արգելվում է:
- Տես, երեկ ամբողջ օրը թափառում էիր գյուղում, ահա թե ինչու «վատ» ես ստանում:
- Քեզ մյուս անգամ փողոցում չտեսնեն:
- /Ծնողներին/ Շատ է խաղում, ինչո՞ւ էք հանդուրժում:
- Եվ այլն:

## Նամականի

Այս բոլորը բնորոշում են վարժապետական մտածելակերպը: Ի՞նչ խոսք կարող է լինել ուսուցչի եւ աշակերտի փոխհարաբերության մասին: Մի՞թե նման ուսուցչի դասին աշակերտը կարող է ազատ մտածել, համեմատումներ, համադրություններ անել: Երկյուղածությունից միայն անգիր է անում, վաղը՝ մոռանում:

...Մի ամռան պիոներական ջոկատները մոբիլիզացրի խոտհնձին: Կապել էի վզկապ, ճաշում էի երեխաների հետ, նրանց հետ լողանում էի գետակում, երգում նրանց հետ, օրվա աշխատանքներն ամփոփելիս տողանում գրկում կամ համբուրում էի լավագույններին... Այս բոլորի համար ուրախանում էին գեղջուկ ծնողները: Բայց արի ու տես, որ որոշ ուսուցիչներ հիվանդագին էին ընդունում իմ փոխհարաբերությունը սաներիս հետ: Նրանք տառապում էին իմ «էժանության» համար, իսկ ուսումնական տարվա ընթացքում ես շահում էի այդ մտերմությունը զարգացնելով: Բազմաթիվ երեխաներ ավելի հավատարիմ գտնվեցին դեպի իմ դասավանդած առարկան, իսկ ես՝ դեպի պիոներական ջոկատների՝ ամռանը ստեղծած ավանդույթների նկատմամբ, ու դրանք էլ ավելի զարգացրի: Գտա իմ աշխատանքի գիտական, ռեալ հիմքերից մեկը, որ հավերժ հուսալի է:

Ընդհանրապես մանկավարժական մանուլը շատ է գրում երեխաների աշխարհը ներթափանցելու եւ այլ ՄԱՆՐՈՒՔՆԵՐԻ մասին: Սակայն ցավալի է, որ դա տակավին բոլոր ուսուցիչների կերակուրը չէ: Մեզանում իշխում է մակերեսայնությունը: Դա այն պատճառով, որ ուսուցիչներից շատերը մինչեւ իրենց հոգու խորքը չգիտեն տարիքային հոգեբանությունը, տարիքային առանձնահատկությունները: 4-10-րդ դասարաններում նրանց ձեռքին միեւնույն արշինն է:

Յորմալիստ շատ ընկերներ չեն ուզում հավատալ եւ ընդունել, որ 7-8-րդ դասարաններում երբեմն /մենք հարավ-ցի ենք/ սովորողների մոտ ծլարձակում է սիրո զգացմունքը: Ես ցավով հիշում եմ, թե ինչպես մի անգամ 8-րդու անկեղծ սիրային մամակը վերածվեց համազուլական սկանդալի: Աճուրդի էին հանել դասղեկն ու նրա «արբանյակները»: Ծնողական ժողովում հայտարարություն արվեց այդ մասին...

-Իսկ եթե սիրում է,-գրուցում եմ Ա. Տ.-ի հետ /ուսուցիչ/:

-Ընկեր, աշակերտն իրավունք չունի սիրահարվել,-կարճ է կապում նա:

...Այժմ իմ ափերի մեջ մանկական սիրո բազում դեպքեր կան: Փոքրիկ մարդը /7-10-րդ դաս./ հավատում է իր ուսուցչի կարեկցանքին ու զաղտնապահությանը, նրա խորհրդին: Բոլոր դեպքերում այդ խոստումնալից զգացումը պետք է այնպես դաստիարակել, որ չտուժեն դասերը, ծնունդ չառնեն մանկական շեքսպիրականները:

Կան ուսուցիչներ, որոնք այնքան կարճատես են ու նեղ մտահորիզոնով, որ տրամադրված են հռետեստերեն: Նրանք աչք են փակում մեր հայրենիքի օրավուր բարգավաճման, ծաղկման առջև: Իրենց նեղ շրջապատի դիտումով են գնահատում կյանքն ընդհանրապես: Նման ուսուցիչներն անտարբեր են մասնավորապես նաեւ մանկավարժական գիտության նորությունների նկատմամբ: Երբեք չեն կարողանում հանգզվել ու հրաժարվել իրենց նախասիրած «հարցում-հաղորդում» դասերից: Ով-ով, ուսուցիչը պետք է զինված լինի խոր լավատեսությամբ, որին պետք է հետեւի խանդավառությունը, կյանքի սովերտ կողմերի նկատմամբ պայքար ծավալելու վճռականությունը: Իսկ եթե այդպես չէ, ապա նա հոգնած ու ընդարմացած մարդու տպավորություն է թողնում, եւ անխուսափելի է դրանց փոխանցումը սերնդին:

Ահավասիկ մեկը: Հակված է միայն դիտողություններ անել: Ունակ չէ նկատել լավը ու այն օրինակ բերել: Նրա դասից կարելի է քաղել այսպիսի ճեպագրություններ.

- 1000 անգամ էլ ասեմ, դուք հասկացող չեք:
  - 1-ին դասարանցու խելք էլ չունեք:
  - Պետք է սովորել, սովորել, սովորել... ով չսովորի, բանվոր է դառնալու:
- Ձավեշտական մտածելակերպ է:

\* \* \*

Կրկին նշեմ, ընկ. Էլոյան, որ ուսուցչի հոգեկան բարեմասնությունների հարցը ոչ-ոքի չի հետաքրքրում: Ինչպես թե՛ կարելու է այն, որ նա լինի բարեխիղճ /դա ներառում է ձեւապաշտությունը/: Այն, ինչ իրապես առաջնային ու զուտ մանկավարժական է, իսկապես մտավորներն է դիտվում ու ուսումնասիր-

վում: Ըստ իս, ուսուցչի աշխատանքում առյուծի բաժինն ընկնում է նրա խիերի ու դրանցով կողմնորոշվելու զորեղությանը: Իսկ վերադասը հակված է տեսնել, որը եւ երբեմն կարող է պատրանք լինել: Լուսավորության մինիստրությունում պետք է խոր կերպով ուսումնասիրվի եւ մշակվի ուսուցչի աշխատանքը դիտելու-ուսումնասիրելու նոր համակարգ: Ատեստավորումն էլ այդ բանը լրիվ չի ապահովում: Մեխը ուսուցչի նկատմամբ պահանջկոտության բարձրացումն է: Կարելու է եւ այն, որ դպրոցի ղեկավարների աշխատանքը պարտադիր կերպով համարվի ուսուցչի աշխատանքի գնահատման չափանիշը: Պահանջողները պետք է իրենք լինեն իդեալական ու ավանգարդային: ...Այս հարցը շատ ջուր տանող խմոր է: Լավ կլինի, որ Ձեզ հետ կլոր սեղանի շուրջը խոսելու առիթ ստեղծվի:

**ՌՈՒՔՆԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**Լեռնաձորի դպրոցի ուսմավար**  
**մարտ, 1975թ.**



## ԲԱՆԱՍՏԵՂԾ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ Ի ԳՈՐԻՍ

**Ա՛յր քանքարափայլ,**  
Աժդանական-Կապուտջուղի բարձունքից գրկեցի Քո լույսով ողողված Սյունիքը, Քեզ գրկեցի... Սիրում, կարոտում, տենչում եմ Քո տաղանդին, զորանում եմ Քեզնով:

Հատորդ ստացել եմ՝ մեծագույն հարստությունը գյուղական ուսուցչիս հոգեւոր կենցաղում:

...Քեզնով բոլոր ընթերցողներդ ԱՆՄԱՅՆԱԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ եմ...

Դու նորովի ու անկրկնելի ես բացահայտում գյուղաբնակին, այլունցուն, մարդուն:

Տիգրան, Քո՛ պոետիկ սիրահարվածության մեջ վաղնջական, նորօրյա եւ ապառնական ժամանակի ամեն չպեղված այլունցին է...

**ՌՈՒՔՆԵՐ ԷՋԱՆԱՆՑԻ**  
**12 հոկտեմբերի 2015թ.**  
**Ղափանցի ընթերցող**

Նամականի



Գորիս, Բանաստեղծին

Տիգրան,

Քանքարավոր այր, Զաբանդա տնից,
Նվիրաբերումի ձոնագրով Քեզնից
երեք սուփեր ստացա, որոնցով նորոգեցիր
իմ նուրբ սերը Քո նկատմամբ:
Տիգրանգրիգորյանական «Անմահության
համանվագ» պոեմը հաստատեց ամրացրեց
ու զորացնում է գյուղական ուսուցչիս:
Դա իմ հիմնն ու կերպն է, հայրենի հող
ու ջրին սիրահարված յուրաքանչյուր
սյունեցունը...

Ոգեւորված-խանդավառված եմ, որ
Քո ոգեղենությամբ հայտնվել ես մեր
ժամանակներում եւ այդպես կարոտաբաղձ
միտված ես ապառնական ժամանակներին:

...Այժմ ընթերցում եմ բանաստեղծություններիդ
ժողովածուն, բայց դեռ չեմ ավարտել.
Հոգիդ՝ անքեւ լինի, հավատդ՝ շե՛ն լինի,
կյանքդ՝ հորձանք (էջ 65):

Աղաչում եմ՝ առմիշտ եղիր բանաստեղծ
եւ ընթերցողներիդ անդաստանում անտես
մի արա տողացի ընթերցողիդ:

Մատչիմ ի համբոյր՝

ՈՌԲԵՐՏ ԷՋԱՆՑԻ
1 օգոստոս 2013թ.



«Այսօրվա Երկիր»
Թերթի խմբագիր
Ս. Լ. Ալեքսանյանին

Պաշտոնատար անձանց ուղղված
Ձեր նամակը՝ մեծն Սերոյի ծննդյան
100-ամյակին ընդառաջ, հոգեբուխ է, իր
25 դրոյթների սանդղակով՝ սրտամոտ:
Ընդամին խորհում եմ, որ հոբեյանը
պրագմատիզմով դուրս-ինչ պետք է
ամդրադառնա արդիականության որոշ
խնդիրների լուծմանը, մասնավորապես՝
մանկավարժության բնագավառում:

Գրեթե կես դար անարժան գյուղական
ուսուցման ոչ երեւելի նվիրյալ եմ եւ,
Սերոյին կարդալով, բազմակի անգամ
թելեր եմ առել ու ինքնաբավ ճախր ունեցել,
որ նա պառնասին տենչացել-տիրել է
գյուղական ուսուցչի կարգավիճակից:
Թե ինչ ներուժ եւ հնարավորություններ
ունի գյուղական ուսուցիչը՝ գյուղական
ուսուցման նվիրյալը, հստակ երեւում է
սերոյական անգուզական օրինակով:

Արդ՝ հրամայական է, որ Սերո-100-ի
նախապատրաստման շրջանում բարձրաձայնեմք
արդի ժամանակաշրջանում ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱԴՅՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ բացահայտումը,
կարեւորումը եւ հետագա քայլերի ուղենշումը:

Գյուղական դպրոցը տկարացել է, եւ բոլորիս
աչքի առաջ օր օրի խամրում է ոգեղենությունը:
Կառավարումն ուրբանիստական բնույթ ունի,
եւ գյուղուսուցման մեջ ի հայտ է եկել ստվերայինը,
զորօրինակ՝ 5-ից պակաս աշակերտ ունեցող
դասարաններում ուսուցիչը վարձատրվում է
կես կամ քառորդ դրոյթով, եւ դա՝ առանց
իրավական հրահանգավորման...

Գյուղական ուսուցման առանձնահատկությունները
ներառում են գեղջկական ավանդապահությունները,
արհեստները, բարբառն ու ժողբանը, ազգագրական
կուլտիտն իր ինքնատիպությամբ, համայնքին
յուրահատուկ պահանջումները եւն....

...Սերոն ասում է՝ կարելորեք գյուղը,
եւ դա սկսեք գյուղական ուսուցումից:
Գյուղական ուսուցիչն, իհարկե, հակված է
ոգեշնչվել Սերոյից եւ սերոյավայել մի կամ
մի քանի հրաշք գործել: Ստեղծագործող,
գյուղին սիրահարված ուսուցչին պետք է
գնահատել նաեւ սերոանուն պարգեւներով...

...Նորերս շրջանառեցին լուր, թե նոր
նախարարություններ պիտի կազմակերպվեն,
եւ շատերն են թերահավատ ու դեմ այդ
նորույթին, ոմանք էլ ծիծաղում են: Մի ծիծաղելի
էլ ինքս եմ հավելում՝ ստեղծեմք գյուղական
ուսուցման մախարարություն եւ զուգահեռեմք
ԿԳՆ-ին: Այնուամենայնիվ՝ մտորելու է....

ՈՌԲԵՐՏ ԷՋԱՆՑԻ



ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
Մի դասագրքի
թարգմանության առիթով

Երկար տարիներ է՝ մաթեմատիկա եւ դասավանդում
Ղափանի շրջանի Լեռնածոր գյուղի 8-ամյա
դպրոցում: Հասկանալի է, որ ուսուցչի առաջին
օգնականը լավ դասագիրքն է, սակայն հաճախ
մեզ մատուցում են այնպիսի դասագրքեր, որոնք
քննություն չեն բռնում: Խոսքս հատկապես
4-րդ դասարանի մաթեմատիկայի դասագրքի
թարգմանության մասին է: Հայերեն լեզվով այն
առաջին անգամ լույս է տեսել 1976 թվականին:
Սովորական ընթերցանությունն անգամ ցույց
էր տալիս, որ թարգմանության մեջ սպորդել են
լեզվական ու մաթեմատիկական բազմաթիվ
սխալներ: Թվում էր, որ «Լույս» հրատարակչությունը
վճռական միջոցներ կծեռնարկեր թրուքումները
շտկելու համար: Ավաղ, նույն թրուքումներով
վերահրատարակվեցին ոչ միայն 4-րդ, այլեւ՝ 5, 6, 7, 8-րդ
դասարանների հանրահաշվի ու երկրաչափության
դասագրքերը: Դասագրքերի ու մեթոդական
ծեռնարկների մասնագիտական լեզուն աչքի է
ընկնում անհամապատասխանություններով:

Նշեմք, որ 4-րդ դասարանի դասագիրքը
դպրոցականի մաթեմատիկական հետագա
կրթության համար ունի որոշիչ նշանակություն:

Մաթեմատիկայի ուսուցման արդյունավետությունը
խորապես աղերսվում է մայրենի լեզվի ուսուցման
հետ: Այդ պատճառով մաթեմատիկայի դասագրքի
լեզուն պետք է լինի հստակ, հույժ գրագետ ու
զերծ՝ լեզվական սխալներից: Մինչդեռ 4-րդ
դասարանի դասագրքում առկա են լեզվական
շատ մեղանչումներ, որոնք տեղ են գտել նաեւ
գրքի հայերեն երկրորդ հրատարակությունում
(1977 թ.):

79 կետի նյութն ուսումնասիրելիս դպրոցականը
կարող է «հանգվել», որ եռանկյունները, քառանկյունները,
վեցանկյունները, շրջանները երկրաչափական
պատկերներից կազմված զարդանկարներ են:
Ծանոթանանք բնագրին. «Сначала эти

## Նամականի

узоры были очень простыми, а потом они все усложнялись и превращались в орнаменты, составленные из геометрических фигур-треугольников, квадратов, шестиугольников и кругов».

Թարգմանված է այսպես. «Ակզբում այդ նախշերը շատ պարզ են եղել, իսկ հետո ավելի ու ավելի բարդացել են եւ վերածվել երկրաչափական պատկերներից կազմված զարդանկարների՝ եռանկյունների, քառակուսիների, վեցանկյունների եւ շրջանների»: Ակներեւ է, որ բնագրում եռանկյունները, քառակուսիները եւ մյուս պատկերները զարդանկարներ չեն համարվում: Այդ նախադասությունը պետք է թարգմանվեր այսպես. «Նախապես այդ նախշերը շատ հասարակ են եղել, իսկ հետո ավելի են բարդացել ու վերածվել երկրաչափական պատկերներից՝ եռանկյուններից, քառակուսիներից, վեցանկյուններից եւ շրջաններից կազմված զարդանկարներին»:

«Կառուցենք համաշխարհային օվկիանոսի մակերեսային բաշխման շրջանային դիագրամը Խաղաղ, Ատլանտյան, Յնդկական եւ Յյուսիսային Սառուցյալ օվկիանոսների միջեւ» - կարողում ենք էջ 213-ում (ինչո՞ւ սառուցյալ բառը մեծատառով է գրված) եւ զարմանում, թե ինչպե՞ս կարելի է դիագրամ կառուցել օվկիանոսների միջեւ: Նման մանվածապատ եւ զավեշտական նախադասությունները, ցավոք, զգալի թիվ են կազմում, թարգմանիչը ավելի շուտ պատճենահանել է, քան իսկապես թարգմանել: Որոշ նախադասություններ ոչ թե թարգմանվել են, այլ՝ կամայական մոտեցումով փոխադրվել: Ռուս-հայերեն բառարանների առկայությունն անտեսելով, թարգմանիչ Ս. Գրիգորյանը սխալ է թարգմանել որոշ բառեր: Այսպես, «теплоход» բառը թարգմանված է շոգեհամակ (խնդիր 961), բնագրի «катер» եւ «моторная лодка» բառերի դիմաց դրված է միայն մոտորանավակ բառը (էջ. էջ 183, 220), 78 կետում «животные» բառը թարգմանված է... զագաններ, «ловили рыбу»-ն դարձել է զբաղվում էին ձկնորսությամբ:

1977 թ. հրատարակությունում չի վերախմբագրվել 1398 խնդրի անկապ թարգմանությունը. «В куске было 240 м материи. На пошив детских

халатов пошло 3/4 всей материи. Из 7/10 оставшейся материи сшили косынки для девочек. Сколько метров материи осталось в куске?»

Ահավասիկ թարգմանությունը.

«Կար 240 մ գործվածք: Մանկական խաղալիքներ կարելու համար օգտագործվեց ամբողջ գործվածքի 3/4-ը: Մնացած 7/10-ից աղջիկների համար կոստյումներ կարեցին: Քանի՞ մետր գործվածք մնաց»:

Թարգմանիչի կամայականությունը չէ՞ արդյոք, որ «халат»-ը փոխարինվել է խաղալիքներով, «косынки»-ն կոստյումներով: Նույնքան անփութորեն են թարգմանված 1101, 53, 1355, 803, 1000, 56, 86 եւ մի շարք այլ խնդիրներ:

Յենց առաջին դասին (կետ 1), 4-րդ դասարանցիներին բացատրվում է, որ «հինգ» թվի համար հնդկացիները մտցրին 5 հատուկ նշանը: Յնդկացիներն այստեղ փոխարինվում են ռուսերենի «индусы» հոգնակի բառին, որ պետք է թարգմանվեր հնդիկները ձեռով: Սա կոպիտ սխալ է: Դասագրքի «Լրացուցիչ հարցեր» բաժնում խոսվում է հնդկացիների մասին, որը ճշտորեն թարգմանված է «индейцы» բառից: 4-րդ դասարանցին պետք է սովորի տարբերել Ամերիկայի բնիկ կարմրամորթներին՝ հնդկացիներին, Յնդկաստանում ապրող հնդիկներից: Աշակերտներին ապակողմնորոշում է 53-րդ խնդիրը. «Автомобиль подъезжает к городу, по улицам которого разрешается ехать со скоростью не более 60 км/ч», նախադասությունը թարգմանված է. «Ավտոմոբիլը մոտենում է քաղաքին, որտեղ թույլատրվում է զնալ ժամում 60 կմ-ից ոչ ավելի արագությամբ: Դուրս է թողնվել «по улицам» բառը:

Յատկապես վատ է թարգմանված դասագրքի վերջին մասը՝ 78-81 կետերը. «Իսկ հարկը գյուղացիների վրա բաժանելու համար հարկավոր էր բաժանում կատարել»: Այս նախադասությունից կարելի է հասկանալ, թե գյուղացիներից հարկը ոչ թե վերցնում, այլ նրանց էին բաժանում: Այստեղ էլ գյուղացիներ բառը փոխարինում է «население деревни»-ին: Տարօրինակ է, որ «система счисления» թարգմանված է թվարկության սխալում, իսկ «система нумерации»-ն թվարկության

համակարգ: 250-րդ էջում «система» բառի դիմաց գործածված է մի դեպքում սխալում, մեկ այլ դեպքում՝ համակարգ:

Թարգմանիչի մեղքով դասագրքում տեղ գտած մաթեմատիկական սխալներն ապակողմնորոշում են ոչ միայն սովորողներին, այլեւ անփորձ ուսուցիչներին: Առանձին խնդիրների կամայական փոխադրումից խեղաթյուրվել են բովանդակությունները: Յամադրենք 1437-րդ խնդրի ռուսերեն եւ հայերեն տարբերակները: «К берегу реки подошли 30 солдат. У берега была лодка и в ней двое ребят. Как переправить на другой берег весь отряд, если в лодке могут ехать или двое ребят или один солдат? Сколько раз лодка пересечет реку туда и обратно, если в конце концов она вернется на старое место и оба мальчика будут на том же берегу?»:

«Նավակով կարող են զնալ կամ երկու երեխա, կամ մեկ զինվոր: Ինչպե՞ս պետք է փոխադրել ջոկատը գետի մյուս ափը, որպեսզի նավակը վերջում վերադառնա նախկին տեղը: Քանի՞ անգամ պետք է նավակը հատի գետը, եթե ջոկատում 30 զինվոր կա»:

Անկերել, է, որ 4-րդ դասարանցու համար որոշակի չեն «նախկին տեղը», «նավակը հատի գետը» հասկացությունները: Նման թարգմանությունից կարելի է հասկանալ, թե ջոկատի կազմը ներառում է նաեւ երեխաներին:

1454-րդ խնդիրը թարգմանելիս դուրս է թողնվել «От этих чемоданов» արտահայտությունը եւ ստացվում է, որ բանալիներից ոչ մեկը ճամպրուկներից ոչ մեկինը չէ:

4-րդ դասարանի դասագրքի շարադրանքն ինդուկտիվ է: Այնուհանդերձ, մաթեմատիկական շատ հասկացություններ ոչ թե ուղղակի սահմանվում, այլ պարզաբանվում կամ զարգացվում են մյուսի շարադրանքի հիման վրա: Թարգմանիչն անտեսել է նաեւ այս կարեւոր պահանջը: «Называют» բառը, որ պետք է թարգմանվի անվանում են (կոչում են), մի շարք դեպքերում թարգմանված է կոչվում է: Սա տրամաբանական կոպիտ սխալ է: Օրինակ, 6-րդ կետի «Эту фигуру называют лучом» նախադասությունը թարգմանված է այսպես. «Այդ պատկերը կոչվում է ճառագայթ»: Պետք է լինի «Այդ պատկերն անվանում են ճառագայթ»: Նույն կերպ պետք է ուղղել այսպես. «...որոնց անվանում են

## Նամականի

թվային արտահայտություններ» (էջ 46), «...դրանց կոչում են զուգահեռ ուղիղներ», (էջ 16), «նրանց անվանում են հակադիր ճառագայթներ» (էջ 112) եւ այլն:

Ըիշտ չի թարգմանված 2-ի վրա բաժանելիության հայտանիշի ձեւակերպումը (էջ 144): Ռուսերեն բնագրում խոսքը թվի գրառման կենտ թվանշանով վերջանալու մասին է, իսկ հայերենում, չգիտես ինչու, համառոտված է եւ նույն ձեւակերպման մեջ մի անգամ խոսվում է գրառման՝ զույգ թվանշանով վերջանալու մասին, մեկ այլ անգամ՝ թվի զույգ թվանշանով վերջանալու մասին: Անկապ է 17-րդ կետի առաջին նախադասությունը՝ «խնդիրներ լուծելիս երբեմն նշում են միայն գործողությունները, իսկ լուծումը կատարում են հետո»: Ինչպես հավաստում է ռուսերեն բնագիրը, ոչ թե լուծումն են հետո կատարում, այլ հենց այդ գործողությունները: Դրա պատճառը թարգմանչի անհարկի միջամտությունն է «...Выполняют их потом»-ի մեջ «их»-ը վերաբերվում է գործողությունների (действия) բառին: 21-րդ կետում կարդում ենք. «эти единицы площади записывают так; 1мм2, 1см2, 1дм2, 1м2, 1км2»: Այս կարելի էր նախադասությունը նույնպես անփութորեն է թարգմանված. «Մակերեսի միավորների անվանումը նշանակում են այսպես՝ մմ2, սմ2, դմ2, մ2, կմ2»: Ինչպես տեսնում ենք, «անվանումը» բառն ավելորդ է, եւ անվանական մասերի մոտ պարտադիր 1 թիվը բացակայում է: Նույն մոտեցումն է ցուցաբերվել «Ծավալներ» թեման թարգմանելիս:

**II** *Լեզվական եւ մասնագիտական տեսակետներից խիստ ցածր մակարդակով է թարգմանված հատկապես 1-ին կետի նյութը: «Ձրո թվանշաններ պարունակող դասի անվանումը չի արտասանվում»,-կարդում ենք թարգմանությունը: Իսկապե՞ս: Ահավասիկ զրո թվանշաններ պարունակող դասեր ունեցող թվեր 1005, 23 600 709, 605 506 060: Մի՞թե այդ թվերը կարելի է կարդալ առանց 005, 600, 709, 605, 506, 060 դասերի անուններն արտասանելու: Այստեղից է սկսվել (սա առաջին դասանյութն է) թարգմանողի տեքստերից ամենուրեք*

*բառեր հանելու անցանկալի մարմաջը, որ նկատվում է նաեւ 19, 44, 59, 144, 145, 158, 250, 257, 258, 259 էջերում (սղության համար չեն վկայակոչում):*

Թարգմանողը սխալ է օգտագործում «ը» որոշյալ հոդը: Այսպես, 235-րդ խնդրում պահանջվում է անվանել ուղղանկյուն զուգահեռանիստի «ընդհանուր կող ունեցող երկու նիստերը»: «Ը» հոդի գոյությունն այստեղ, կարծես, ամրակայում է այն միտքը, թե իբր, ուղղանկյուն զուգահեռանիստն ընդհանուր կող ունեցող միայն երկու նիստ ունի, մինչդեռ կա նիստերի այդպիսի 12 զույգ: 47-րդ էջում կարդում ենք. «14 + 696: (86-28) արտահայտության մեջ նախ կատարում ենք հանում, հետո՝ բաժանում եւ, վերջապես, զումարում»: Արտահայտության մեջ գործողություններն ակներեւ են: Արդ, ինչո՞ւ է խոսվում հանման, բաժանման եւ զումարման մասին ընդհանուր կերպով: Չէ՞ որ այս օրինակում ոչ թե կանոնարկման, այլ կոնկրետ գործողությունների ուղեցույցն է տրվում: Ուրեմն պետք է լինի՝ «... կատարում ենք հանումը, հետո՝ բաժանումը...» եւ՝ ինչպես տեքստում: «Ը» հոդի անտեղի գործածությունը թիվն անկանոն կոտորակի տեսքով գրելու կանոնը (էջ 152) դարձրել է տրամաբանական ներքին կապից զուրկ բառերի հավաքածու:

Ինչպես վերը նշեցինք, առանձին բառերի բառացի թարգմանությունը նսեմացնում է հայերեն նախադասության արտահայտչականությունը, տրամաբանական սխալի պատճառ դառնում: Այսպես, միշտ չէ, որ «например» բառի դիմաց կարելի է գործածել օրինակ բառը: 21-րդ կետի թարգմանության մեջ միավորները թվարկելուց հետո գրված է. «Օրինակ, քառակուսի մետրը՝ 1 մ կողմով քառակուսու մակերեսն է»: Ըստ թարգմանության չի հետեւում, որ այդ օրինակը բերված է մակերեսի միավորները փաստարկելու եւ մյուսները պարզաբանելու համար, տրամաբանորեն չի աղերսվում նախորդ նախադասության հետ: Պետք է թարգմանվեր այսպես. «Օրինակի համար քառակուսի մետրը 1 մ կողմով քառակուսու մակերեսն է»:

«Ավել», «ավելի», «մեծ», «շատ» բառերը գործածվում են մեծամասամբ «больше» բառի փոխարեն: Սակայն չի

նշանակում, թե կարելի է օգտագործել դրանցից որը կամենանք: Այսպես՝ չենք ասում «3 անգամ ավելի կողմ»: Ինչպես 11-րդ էջում է, այլ՝ «երեք անգամ մեծ կողմ»: Նման ձեւով՝ ոչ թե 6 անգամ ավելի զինվոր» (էջ 212), այլ 6 անգամ շատ զինվոր» եւ այլն: Ո՞ր ուսուցիչը կհամաձայնի սովորեցնել իր սաներին, իբր «Չայտարարը ցույց է տալիս, թե կոտորակը քանի հավասար մասերի է բաժանված», ինչպես կարդում ենք 6-րդ էջում: Անհասկանալի չի՞ լինի դպրոցականի համար, թե ինչու կոլտնտեսականը մեքենայով քաղաք է գնացել հատկապես... կայարանից («станция» թարգմանված է կայարան) :

Մաթեմատիկայի դասագրքի լեզուն չպետք է հակասի դպրոցական մյուս դասագրքերի լեզվին: Թարգմանողները, անշուշտ, համագործակցելու որոշակի ասպարեզ ունեն: Թե չէ, ինչի՞ մասն է, որ մյուս առարկաների դասերին աշակերտը գործածելու է «Լեռը ծովի մակարդակից բարձր է 7495 մետրով» նախադասությունը, իսկ մաթեմատիկայի դասին՝ «Լեռը ծովի մակերեսույթից բարձր է 7495 մետրով. (էջեր 5,136):

Կամ հայերենում ո՞րն է նախընտրելի՞ «Աշակերտի մոտ կար 50 կոպեկ» նախադասությունը (էջ 11), թե՞ «Աշակերտն ուներ 50 կոպեկ»-ը:

Պետք է ենթադրել, որ դասագրքի «Պատասխաններ» բաժինը (որի մասին, ի տարբերություն ռուսերենի, ցանկում հղում չկա) , մեկ ուրիշն է թարգմանել, այլապես թարգմանության որակը պետք է լրիվ խոտան համարվի: Այսպես, 1417-րդ խնդիրը պահանջում է իմանալ, թե քանի տարեկան է Մարոն: Պատասխանում կարդում ենք՝ 13 տարի, փոխանակ՝ 13 տարեկան: «Քանի՞ փոխադրում պետք է կատարել...» հարցին տրված է «5 ուղեւորություն» պատասխանը (էջ, էջ 246, 269): Կարդացեք 1179-րդ խնդրի պահանջը. «Քանի՞ մտրուկ կար երամակում», բացեք 268-րդ էջը եւ կարդացեք պատասխանը՝ 33 թուռակ... Գամեմատելով դասագրքի 1976 եւ 1977 թվականների հրատարակությունները, պարզվում է, որ երկրորդ հրատարակության ժամանակ որոշ վրիպակներ ուղղվել են, սակայն զգալի թիվ են կազմում նորերը: 10-րդ էջն է սպրդել այն վրիպակ-սխալը, թե՛ հատվածի երկարությունը նշանակում են [AB]: Պետք է լինի (AB): Եվ հետո գրված է՝ (AB) = 4 սմ,

## Նամականի

որը նույնպես անհեթեթություն է: 1355-րդ խնդրի մի մասը չկա դասագրքում: Նկ. 76-ը որպես համարանիշ կրկնված է երկու անգամ: Նկ. 278-ը եւ նկ. 279-ը պետք է փոխանակվեին, այլպես չեն համապատասխանում շարադրանքին: Որոշ նկարների վրա պահպանված են ռուսերեն մակագրությունները՝ լրիվ կամ մասնակի (նկ. նկ. 42, 62, 160, 243): 47-րդ էջում գրված է 9>70:2, պետք է լինի 8.9>70:2: Լրացման համար նախատեսված աղյուսակները հայերեն դասագրքում համեմատաբար մեծ մակերես են զբաղեցնում, շարվածքն աչքի է ընկնում անհամաչափությամբ: Ահա թե ինչու դասագիրքը հայերենում ավելի մեծածավալ է: Կան տպագրական բազմաթիվ թերություններ:

Մեր կարծիքով, հատկապես դասագրքերի համար ոչ թե պետք է թարգմանական խմբագիր նշանակել, այլ՝ թարգմանական խորհուրդ, ընդգրկելով նաեւ հանրակրթական դպրոցների ուսուցիչներին:

Չավանաբար նամակ երկար ստացվեց, սակայն հարցն այնքան հուզող է, որ ցանկացա հանգամանորեն ծանոթացնել ձեզ:

1978

### «Այնույնպես էրկիր» թերթի կողմից

Մեզ չհաջողվեց ճշտել, թե որ խմբագրությանն է հղված այս նամակը: Ենթադրում ենք, այնուամենայնիվ, որ նամակն ուղղված է «Լույս» հրատարակչությանը:



## Նամակ Ղափանի «Գանձասար» ճամբարից

«Ձագիկ իշխան» օպերացիայի անդրամիկ դեսանտը Վահանավանքում հաջողությամբ անցկացրին «Խիզախում» ջոկատի պիոներներն ու կոմերիտակները: Նրանք, որ բարեկամացել են պեղող արշավախմբի եւ նրա ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու ընկեր Գրիգորյանի հետ, համատեղ պեղեցին Ձագիկ իշխանի ենթադրվող գերեզմանը:

Ֆուտբոլը տղաների խաղ է: Իսկ եթե այն խաղում են աղջիկները... «Հոբե-

լյանական» ջոկատի պիոներուհի Կատյայի առաջարկությամբ ճամբարում ստեղծվեցին աղջիկների թիմեր: Հանդիպումը կայացավ 2-րդ եւ 3-րդ ջոկատների աղջիկների միջև: Հաղթեցին 2-րդ ջոկատի ֆուտբոլիստուհիները, Կատյան երեք գոլ խփեց: Սկսված է «Ռե՛, աղջիկներ» մրցությունը, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել ճամբարում:

Առաջին ջոկատի պիոներ Սամվել Հարությունյանը ճամբար է եկել քանդակագործի իրերով, իր հետ բերել է դուր, մուրճ, հեսանաքար, բրիչ: Սամվելը որոշել է քանդակել ՍՄՄՍ գերբը: Նրա գործերից մեկն էլ ճամբարի մասնաշենքերի մակետի պատրաստումն է:

ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ



## Նամակ խմբագրությանը

Գազամուղի շինարարությունը ուրախությամբ է համակել դափանցիների: Էջանանցից մինչեւ Վերին Ձորք շինարարությունը արագ է ընթանում: Սակայն, ավերում են անտառաշերտերը եւ, մարդիկ, երբեմն, դրան կարելորդություն չեն տալիս, ասելով «Գազինը բոլոր վնասները հատուցել է»: Դա գուցե այդպես է: Բայց կա՞ ավելի ողջախոհ մտտեցում այդ հարցին, քան բնաշխարհն անվնաս շահագործելու օրինական պահանջը:

Ինչպե՞ս հանդուրժել, երբ լանջն ի վար գահավիժող քարերը տապալում են հազարավոր մատղաշ ծառեր, ծառաթփեր: Վերաբացելով Ձանգեզուրի պղնձամուղիբեմային կոմբինատի Քաջարանի նախկին թափուկատարի ճանապարհը, ճանապարհաշինարարներն անփութորեն հողի ու քարի մասշտաբային զանգվածները լցնում են Ողջի գետի աջափնյակով ձգվող անտառակը: Հարց է ծագում. մի՞թե հնարավոր չէ լցոնը տեղափոխել: Նախկին թափուկատարի մեծ տրամաչափի մետաղե խողովակները բուլդոզերները «հենց այնպես» գլորում են լանջն ի վար:

Այո, անփութություն... Ո՞վ պետք է պատասխան տա:

ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ



## Նամակ խմբագրությանը

### Գրքասերների պահանջը

Գյուղական խանութները վերջին տարիներին ընդլայնել են ապրանքների տեսականին: Սակայն ուրախանալու քիչ առիթներ ունեն դպրոցական եւ գրքասեր գնորդները:

Գյուղական խանութներում հազվադեպ կարելի է գնել գրեմական պիտույքներ, գունավոր մատիտներ, տարբեր նշանակության տետրեր, տուշ, ուսումնական ծրագրերով նախատեսված գործիքներ: Պարզ է, որ «Գիրքը՝ փոստով» ծառայությունը չի կարող բավարար չափով սպասարկել գյուղի գրքասերներին: Էլ չենք ասում բաժանորդագրական գրականության ձեռք բերման մասին (որպես կանոն գյուղում բաժանորդագրություն չեն կատարում):

Այս գործում նախաձեռնություն կա եւ այն պետք է ընդլայնել: Տարիներ առաջ Դավիթբեկ գյուղում բացվել է գրախանութի մասնաճյուղ: Գրքի առևտրի ընդունված մի այլ եղանակ էլ կա՝ շրջիկը: Սակայն շրջիկ գրախանութն այլևս չի երևում:

Կարո՞ղ է շրջապարզակերությունը ձեռնամուխ լինել այս հարցերի լուծմանը: Կարծում ենք, այո:

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լեռնաձորի 8-ամյա դպրոցի ուսուցիչ  
1 ապրիլի 1980թ.



## Նամակ Լեռնաձորից

### Նորից «xyz» ակումբի մասին

Ակումբն այս ուսումնական տարում ավելացրել է մի քանի բաժիններ. ուսումնական բաժին (ուսմասվար՝ Արտուշ Հակոբյան), գիտության բաժին (վարիչ՝ Վիգեն Ստեփանյան): Ակումբականներն այս տարի հիմնականում զբաղվել են մաթեմատիկական կյանքի աշխուժացմամբ. նրանք լուծել են դժվարագույն խնդիրները, ուսումնասիրել Պտղոմեո-

## Նամականի

սի թեորենները, էյլերի շատ բանաձևեր, փոքր թեորեններ եւ նշանավոր այլ խնդիրներ: Նամակ է ուղարկել «չհետազոտված օբյեկտ»՝ Վերին Խոտանան գյուղը, ուր ապրում է Սարգիս պապը, խնդիրներ գիտե, երեխաները խնդրել են, որ դրանք ուղարկել:

Հատուկ պարապմունքը նվիրվեց 12-րդ դարի արեւելքի խոշորագույն մտածող Գիյաս ադ-Դին Արու Լե-ֆատրի Օմար իբն-Իբրահիմ ալ Խայյան ան-Նայ-սաբուրիին (Օմար Խայյան): Օմար Խայյանին գիտեն որպէս բանաստեղծ, բայց նա նաեւ մաթեմատիկոս է ու աստղագետ, մեծ փիլիսոփա:

...Դեկտեմբերին հրավիրվեց մաթեմատիկական երեկո՝ «Շիրակացի մեր դպրոցում» թեմայով: «Շիրակացի որպէս ականավոր մաթեմատիկոս» թեմայով զեկուցում կարդաց 8-րդ դասարանցի Արտուշ Հակոբյանը, «Հայտնագործություն անելու կանոնները» զեկուցումով հանդես եկավ նույն դասարանից Վիգեն Ստեփանյանը: Այնուհետեւ անցկացվեց փիլոսոփիա, ցուցադրվեց «Հաշվելու տեխնիկան» կինոֆիլմը: «XYZ» ակումբը, Ծնողների խնդրանքով, պատրաստում է հաշվետու պարապմունք: Ակումբի անդամները «Քվանտ» ամսագրին ուղարկել են իրենց հավաքած մի քանի խրախմբանկարներ: Խմբագրությունից պատասխանել են, որ դրանք կտպագրվեն առաջիկա համարներից մեկում:

Ուղեծիր է դուրս եկել «Ողիսես» ճամփորդող ակբումը: Այն կլինի Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկի մարզում, Օրենբուրգի մարզում, Թաթարական ԻՍՄՀ-ում, Վոլգոգրադում, Երեւանում եւ այլուր:

...Մոտ օրերս լույս կտեսնի «խորհրդավոր գրաֆ» թերթը, որտեղ ներկայացվում են գրաֆների կիրառումը ժամանակակից մաթեմատիկայում: Լույս է տեսել «Մաթեմատիկոսի ծոցատետր» թերթի հերթական համարը: Համարում զետեղված են «Լուծեցեք լեզվաբանական խնդիրներ», «Արվեստ եւ մաթեմատիկա», «Խնդրանի», «Դժվարին դրություններ», «Չաու Լո Կենի հիպոթեզը», «Առաջարկում է Ա. Եգանյանը» եւ այլ նյութեր:

Վերջերս դպրոցում փոքրիկ ցերեկույթ էր: Վիգենն ու Արտուշը հագել էին Արքիմեդի եւ Հերոնի «հագուստները»: Ներկա էին դպրոցի նախկին սաներ, հա-

մալսարանի ուսանող Ռուստամ Հակոբյանը, պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողներ Վահագն Մովսիսյանը, Համլետ Ներսիսյանը: Ռուստամը պատմեց ժամանակակից հաշվիչ մեքենաների եւ թվարկության այլ սխեմաների մասին: Նա գրատախտակին գրեց.

$$2 \cdot 2 = 100$$
$$10 + 10 = 100$$
$$110 + 101 = 1011 \text{ եւ այլն:}$$

Բայց դա զարմանալի չէր ակումբականների համար... 7-րդցիներ Սարիկը, Վանիկը, Ժորան, Սամվելը, Արաքսյան «Պրոֆեսոր Գլոխկոտրուկի» անունից բացատրեցին, որ հաշվումները կատարված են ոչ թե տասնորդական, այլ թվարկության երկրորդական սխեմով: Հանդիպման այս փոքրիկ ցերեկույթին հաջորդելու է դպրոցի շրջանավարտների երեկոն:

«Ով չի ուսանում մաթեմատիկան, թող այս դռնից ներս չմտնի»։ գրված է ակումբի դռան վրա: Նշանավոր այս խոսքերը դռան վրա առաջարկել է գրել «Եվրիկա» գրադարանի վարիչ Արքայիկ Պետրոսյանը: Ասենք՝ գրադարանի գրքերը զուտ մաթեմատիկական բնույթի լինելով, հատկապէս մաթեմատիկա սիրողների կգրավեն:

Գործում է «Աբիտուրիենտի պրակտիկում» դասընթացը՝ միջնակարգում սովորող աշակերտների համար:

Ակումբի բոլոր անդամները գրում են պրեզիդենտի հանձնարարած ռեֆերատները: Սարիկ Ներսիսյանը գրում է «Շրջա՞նը... դա շատ խորհրդավոր է», Վիգեն Ստեփանյանը՝ «Նշանավոր թեորենների կիրառումը», Արտուշ Հակոբյանը՝ «Օժանդակ շրջանագիծ» թեմաներով զեկուցումները: Մի խումբ երեխաներ միասին գրում են «Մաթեմատիկա եւ երեւակայություն» թեմայով աշխատանքը:

### ՈՌԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ



## ՆԱՄԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՄՈՒՅՉԻՆ

Կապուսի շրջան, գ. Լեռնաձոր  
Նարգելի Ռոբերտ Գրիգորյան

Երեւանից մենք դուրս եկանք առավոտյան, ամպ ու զամպին: Անձրեւը մեկ կաթկթում էր, մեկ վարարում, իսկ այդպիսի ժամանակ ուղեւորները ներանձնանում են, ամեն մեկն իր մտքով տարվում: Անձամբ ես մտածում էի. այս ոլոր-մոլոր ճամփի վերջնակետում այդ ինչ դպրոց եմ տեսնելու, որի մասին տարբեր մարդկանցից զարմանալի լուրեր էի լսել, իբր՝ գյուղական դպրոցում երեխաների հոգեւոր եւ մտավոր դաստիարակության գործում այնպիսի նորամուծություններ են արվել, այնպիսի արդյունքների հասել...

Չի կարելի ասել, թե լիուլի հավատում էի լսածիս, բայց եւ իմ կողմից ազնիվ չէր լինի կասկածելը, ուստի որոշեցի՝ կհասնենք, կտեսնենք: Մեր ճամփին այս ինչքա՞ն ձոր, Եղեգնաձոր, Աղավնաձոր, Գլաձոր, Կոռնիձոր, Հալիձոր, Առաջաձոր եւ, ի վերջո, Կապանի շրջանի Լեռնաձոր, մեր նպատակակետը:

|| Այդ է մեր հայրենիքը՝ լեռ եւ ձոր, ժայռեր, քարաբաճաններ, գառիթափ լանջեր, եւ նրանց արանքներում, հողի ափաշափ պատառիկներ, ծուռումուռ եզրերով, մեծ թեքությունների վրա: Բասենի գավառից գաղթած մորս ձայնն ընկավ ականջս. «Ինչ ես կորցրել, ինչ ման կուզաս», չէ՞ որ դու գիտես, քո մեծ հայրենիքից այն, ինչ մնացել է քեզ, շատ է թանկագին եւ աշխարհի ոչ մի տեղում սրանից գեղեցիկ լեռներ, ձորեր, քարաժայռեր, հոնի ծաղկած ծառեր ու փուշ-ծաղիկներ չկան:

Մինչեւ տեղ հասնելը ցավատանջ տեսարանի ականատես եղանք: Գորիսից հետո, շրջանի սահմանամերձ խճուղով անցնելիս, գյուղերից մեկի մոտ կանգնեցինք, մինչեւ կազմվեց շարասյունը, եւ, բոլորս միասին, հատուկ հսկո-

## Նամականի

դուրյամբ առաջ շարժվեցինք: Ցավատանջ բառը չի բնորոշում այս երեսույթը: Մեր տան մեջ, մեր ճանապարհների մեծը ապահով չենք: Այս է ամբողջը: Եվ այն էլ քանի տարի:

...Եվ, եթե նամակա այստեղ ընդհատած չլինեի քաղաքական պայմանների սրման պատճառով, ապա պետք է գրեի Զամլետ Քոչարյանի ու նրա ընկերների՝ Արտավազդի, Կարենի, մյուսների (որոնց՝ անունները չգիտեմ), մեր քաջերի, մեր պաշտպանների մասին: Երբ նայում էի Զամլետին, ինձ թվում էր, թե նա պատրաստ է սավառնելու: Նրա շարժումների, հայացքի մեջ, թռիչքի ելման գծին կանգնած մարզիկի վեհությունը կար: Բայց ինչ ողբերգություն, նա այլևս չկա եւ նրա նման շատերը՝ Ոսկեպարից, Տավուշի շրջանից, Մարտունաշենից, Գետաշենից: Ողբերգական իրադարձությունից հետո միայն ես կարողացա բնորոշել Զամլետի համարձակ էությունը, հասկանալ հրաժեշտի պահին ասած նախադասության իմաստը. «Մի հուզվեք, ամեն ինչ լավ է վերջանալու»...

**II** *Զամլետ Քոչարյանը մեր այն ֆիդայիներից էր, որոնց երդումն ավարտվում է՝ «...բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին» խոսքերով:*

Շարունակելով նամակա, պետք է հարցնեմ Ձեզ, հիշո՞ւմ եք. մենք տեղ հասանք մթնով եւ տեսանք Ձեր դպրոց՝ մանկապարտեզը: Եվ հիմա ես պետք է փորձեմ հաղորդել իմ տպավորությունը. որը դպրոցին ծանոթանալուց հետո, ամբողջ գիշեր եւ մինչեւ այժմ, իմ հոգում է: Մեր խումբը անձրեկի, մառախուղի, շրջափակման, գնդակոծված գյուղերի, ոլորապտույտ ճանապարհների ու մթան միջով եկավ դեպի դպրոց, մտավ մի լուսավոր օջախ, որտեղ համոզվեց, թե ինչպես համեստ հնարավորություններով կարելի է մեծ արդյունքի հասնել, եթե կա նվիրում. աշխատասիրություն եւ մտադրությունն իրագործելու անկոտրում կամք: Մանավանդ՝ եթե կա մանկան հոգին թափանցելու, նրան իբրեւ աստծո ստեղծած պարզեւ մոտենալու եւ նույնիսկ հավասարը հավասարին վերաբերելու ունակություն:

Արդեն Ձեզ ասել եմ. 1988 թվականի փետրվարից այս կողմ երկու երջանիկ

օր եմ ապրել: Եվ այն էլ մեկ շաբաթվա մեջ: Առաջինը 1991թ. ապրիլի 5-ին, Մասիսի շրջանում, որտեղ ներկա եղա հողի սեփականաշնորհմանը, տեսա, թե ժողովուրդն ինչ խնդությամբ, հոգեկան ինչ վերելքով է ընդհառաջ գնում դաշտերին ու այգիներին, որ տասնամյակներով լքված էր, անտեր էր, որովհետեւ բոլորին էր եւ ոչ մեկին չէր: Երկրորդը՝ ապրիլի 12-ին, երբ ամեն պահ գնդակոծման վտանգի տակով եկանք ու մութը ճեղքելով, նույնիսկ շրջապատի հսկայահասակ լեռները, նույնիսկ Լեռնաձոր գյուղը չտեսած, մտանք ձեր լուսավոր դպրոցը, որտեղ տարիների միջով քայլ առ քայլ առաջացող մանուկներն ու պատանիները դառնալու են մեր քարուհողի արժանապատիվ տերերը:

Ես, որ մասնագիտության բերումով այցելել եմ հանրապետության հարյուրավոր դպրոցներ, ներս մտնելուն պես հասկացա, որ ուրիշ աշխարհ եմ ընկել, մինչեւ այժմ իմ տեսածից բոլորովին տարբեր:

Դպրոցի հոտը, ուր էլ որ գնացել եմ, ոտքս շեմից ներս դնելուն պես զգացել եմ հատակի մածուկի, փոշու, գույնզգույն պլակատների ու ցուցանակների, մեծ մասամբ անճաշակ պատի թերթերի, առաջնորդների նկարների, «ՍՄԿԿ»-ի որոշումներից արտագրված քաղվածքների եւ նման այլևայլ բաների սառը, վանող հոտն ու շունչը:

**II** *Ձերը՝ բացառություն էր: Զամեմատության համար չեմ ասում, պարզապես երկար ժամանակ դպրոցի մասին չէի գրել եւ հիմա, առաջին պահ շփոթվեցի, տեսնելով նախամուտքում ամրացված դարակը, որի վրա տեղ էին գրավել օճառը, սրբիչը, սանրը, մաքրության խորհրդանիշները: Դեռ հաջորդ օրը, լույսով, պետք է զարմանքով նկատեի, թե դպրոց-մանկապարտեզի շուրջն ինչքան մաքուր էր: Դեռ միայն ներսի ու դրսի անթերի մաքրության մեջ ինչքան հարգալից*



*վերաբերմունք կար թե սովորողների, թե հյուրերի եւ թե, առաջին հերթին, ուսուցիչների հանդեպ:*

Մ ա ք ու թ յ ա ն դարակից հետո (այսպես անվանեմք), մենք տեսանք աղով լի թասը, որը հյուրընկալ օջախի խորհրդանիշն էր. եւ հենց այնտեղ, նույն սեղանին դրված մտերմիկ իրերից ու հուշաթերթիկներից ինչքան բան իմացանք Լեռնաձորի կենցաղի ու ավանդույթների մասին:

Պարոն տնօրեն, թույլ տվեք մինչեւ վերջ անկեղծ լինել, միջանցքում դրված գանձանակը առաջին պահ իմ մեջ տարակուսանք հարուցեց: Բայց հետո, երբ կրկին անդրադարձա դրան, հասկացա, որ իր լուսան՝ իր մի քանի կոպեկը դպրոցի շենացման գործին ներդրած մանկան եւ պատանու հոգուն նվիրատվության, բարեգործության անաղարտ ծիլեր են արմատակալում, քանի որ նա սեփական կամքով հրաժարվում է իր մի բաժին պաղպաղակից կամ մի բուռ արեւածաղկի սերմից: (Միջանկյալ ասեմ՝ Լեռնաձորի դպրոցի շենացման հիմնադրամ ունենալու միտքը տարիներով նախորդել է Լորիս ճգնավորյանի մարդասիրական ուխտագնացությանը):

...Այստեղ նորից նամակա ընդհատվեց՝ Լեռնային Դարաբաղի Զադրուֆի շրջանի գյուղերից մեր հայրենակիցների բռնագաղթը, նրանց հանդեպ (բառեր չունեմ որակելու) վերաբերմունքը կյանքն անհմաստ էին դարձրել: Մտքով, սակայն, իմ նամակը շարունակվում էր: Ու թեեւ դա կապ չունեի ձեր դպրոցի հետ, չգիտեմ ինչու, Ձեզ էի ընտրել «թիրախ»՝ թափելու դառնությունների այն հեղեղը, որ կուտակվել էր իմ հոգում: Եվ, եթե ի վիճակի լինեի գրի առնել մտածումներս, արտահայտած կլինեի իմ վիշտն ու ցատունը անարդար մեր իրավակարգի, աշխարհի անտարբերության, ինչպես նաեւ մեր անհեռատես եւ ոչ դիվանագետ լինելու դեմ: Սակայն, կարծես թե լարումը մի փոքր թուլացել է, եւ ես, շարունակելով նամակա, պետք է Ձեզ տեղեկացնեմ այն տպավորության մասին, որ ստացա դասասենյակներից մեկում (կարծեմ՝ համարողության): Կոճակը սեղմելուց հետո, երբ պատին իջավ էկրանը եւ, միաժա-

Նամականի

մանակ, ավտոմատ փակվեցին լուսամուտների փեղկերը, մի պահ ինձ թվաց, թե Ծաղկածորի գրողների հանգստյան տանն եմ, որի շքեղ դահլիճում մեծ ծախսերի գնով, բայց ճիշտ նույն մեխանիզմով են բացվում եւ փակվում էկրանն ու պատուհանները: «Մեր ուժերով,- ասացիք Դուք: - Մենք ենք նախագծել եւ սարքել»: Ինչպես նաեւ աշխարհագրության դասասենյակում, ձեր ուսուցիչներից մեկի ջանքերով էր պատով մեկ բացվել մեր հայրենիքի քարտեզը, որ մանկան աչքի առաջ լինի, թե ինչպես ծվեն-ծվեն պոկել են նրա հատվածները, եւ այն, ինչ մնացել է այսօր, ինչ մեր սեփականությունն է... Երեխան պետք է իմանա նաեւ, թե մեր կորուստների մեջ որն է մեղքի մեր բաժինը: Հատկապես դեպի Կապան տանող ճանապարհին, Սիսիանի շրջանում, երկու կողմից այնքան է սեղմված մեր քարտեզը, ասել է թե մեր հողը, որ դարձել է կոկորդ, թույլ տալով միայն մի կերպ շնչել Կապանին, Գորիսին, Մեղրիին: Եվ հենց այս օրերին, քսաներորդ դարի վերջին, մանլիչը դարձյալ սեղմում է տարբեր կողմերից, հօդս ցնդեցնելով մարդու իրավունքների դեկլարացիան «զարգացած քաղաքակրթության մեր դարում»: Դատարկ խոսքեր, ինչքան ենք լսել:

Պարոն Գրիգորյան, ներեցեք շեղվելուս համար, որը եղավ դարձյալ մեր անկայուն իրականության պատճառով, եւ վերադառնալ Լեռնածոր, մտովի հիանալու ուսուցչանոցի ձեւավորմամբ, ծաղիկների ու մինչեւ առաստաղը հասնող բույսերի անդորրավետ մթնոլորտով, որտեղ, ինչպես Դուք ասացիք, ուսուցիչների հետ մանրամասն խորհրդակցելուց հետո, որոշվում է, թե դասավանդմանը կան երեխաների առողջությանը, նրանց սննդին, խաղերին, զբոսանքներին եւ այլ խնդիրներին ինչ լուծում եւ ընթացք պետք է տալ: Ճիշտն ասած, իմ վրա անմոռաց տպավորություն թողեց նաեւ այն փոքրիկ սենյակը, որը հատկացված էր թեյ եւ սուրճ պատրաստելու համար: Ինքնաեռ, սրճեփ, բուրավետ թեյախոտեր, օսլայած սրբիչներ... Ընտանիքին, ուրեմն, հնարավորություն ունի իր ազատ պահերին «ընտանեկան» տաք անկյունում զգալու, հաջորդ դասից առաջ ուժերը վերականգնելու:

Երբ մենք ուսուցչանոցից դուրս եկանք եւ գնում էինք դեպի մանկապարտեզի հարկաբաժինը, եւ նկատեցի, որ Բեյրութից ժամանած հյուրը, հանրա-

հայտ մտավորական, գրող եւ տեսաբան Գրիգոր Շահինյանը, ուշադիր դիտում է Ձեր ոտքերը: Նրա հայացքի ուղղությամբ նայելով՝ տեսա Ձեր տրեխները, բրոյա թելերից հյուսված գույնզգույն կապիչներով՝ իսկը Սյունիքի հանգույն: Ահա թե այս բարձրահասակ, թիկնեղ տղամարդը ինչու է այդպես թեթեւ ու անաղմուկ քայլում, ահա եւս մի մանրամասն անցյալի ավանդույթները ոչ թե հիշելու, այլ ապրեցնելու: Եվ բոլորովին չզարմացա, երբ պարոն Շահինյանը այնպես սրտանց ցանկություն հայտնեց ունենալ այդ հարմար, պապենական կոշիկներից, որոնք հողին շփվելու, հողից ուժ առնելու հնարավորություն են ընձեռում հազնողին:

Սիջանցքում շարված եռանիվ հեծանիվները, հաշվեցի՝ 19 հատ էին: Սանիկները բոլորն ապահովված էին անձնական հեծանիվներով: Հուզիչը ոչ թե այդ էր, այլ այն, որ հեծանիվները շարված էին կողք-կողքի, նույն գծի վրա, առանց մի մատնաչափ տատանման, որի պատճառով սովորական միջանցքը դարձել էր անսովոր, դարձել արտահայտիչ կարգուկանոնի, նաեւ գորովանքի, որով շրջապատված էին մանուկները: Անցնելով մանկապարտեզի օրինակելիորեն կահավորված խաղասենյակով, մնջարանով, ճաշասենյակով (ինչքան լույս եւ ծաղիկ կար այնտեղ), չեմ կարող մի պահ կանգ չառնել դպրոցահասակների ճաշարանում, որտեղ Գրիգոր Շահինյանն ու բանաստեղծ Ռազմիկ Դավոյանն «ուսումնասիրում» էին երեխաների վճարման գրքույկները՝ ուտելիքների գների նշումներով: Ամբողջ ամսվա ընթացքում սննդի համար ծախսված գումարը կոպեկ առ կոպեկ ըստ օրերի գրի է առնվում, իսկ ամսվա վերջում ծնողը մուծում է դրամը: Ես համածայն եմ դրան, թող երեխան իմանա հացի գինը եւ, որ ավելի կարեւոր է, զգա ընդհանուր սեղանից իր վերցրածի համար ազնվորեն վճարելու հաճույքը:

Պարոն տնօրեն, ձեր դպրոցի թանգարանում ինչքան բան կար տեսնելու: Սակայն ես, իբրեւ գեղեցիկ նկար, իմ հիշողության մեջ տարա «Լորի որսի համայնիչը», որի մասին լեռնածորից մանուկներն ու պատանիները մի գունագեղ ավանդություն պատմեցին, մինչդեռ մենք, հյուրերս, տեսնում էինք առաջին անգամ: Գույնզգույն կտորներով ու թելերով նախշազարդված հնաբույր

այդ սփռոցը ժամանակին «հմայել» էր թռչուններից՝ հեշտացնելով որսորդի գործը եւ դառնալով թանգարանային մուշ, հիմա էլ բորբոքում է երեխաների երեակայությունը, փնտրելու կապը բնության ու մարդու փոխներազդեցության: Ինչքան ես հասկացա, Ձեր նպատակն է սովորողներին հաղորդել ձեր հողուջրի, պատմության, ուսեստների, բարբառի, ծեսերի ու ավանդույթների մանրամասները: Եվ, պետք է խոստովանեմ, դա շատ սրտամոտ էր: Երբեմն, չճանաչելով մեր շուշանն ու սինդրիկը, մեր ժախն ու սիբեխը, չիմանալով բնիկ հայկական պես-պես ծաղիկների, նախշուն թռչունների, հանքաքարերի անունները, դասագրքերով սովորում ենք մերձարեւադարձային բույսերի ու կենդանիների, տարաշխարհիկ լեռների ու գետերի անունները: Ինչպես որ մայրենի լեզվի իմացությունն է օգնում դյուրին ըմբռնել օտար լեզուները, նույնպես եւ՝ սեփական ժողովրդի պատմության ու ավանդույթների լավատեսյակությունն է հեշտացնում գիտելիքների սահմաններն ընդարձակել, ընդգրկելով մեծ տարածություններ:

Ինչ խոսք, առիթը բաց չեմ թողնի ասելու նաեւ, թե ինչքան կարեւոր էր Ձեր տված պատասխանը իմ երկու հարցին. ի՞նչ փոխհարաբերության մեջ են աշակերտները ու ուսուցիչները, շրջանավարտների ո՞ր մասն է բուհ ընդունվում: «Շատ անկաշկանդ, - ասացիք Դուք: - Դասերից հետո, եթե որեւէ հարց հետաքրքրի նրանց, կարող են զանգել տուն» ուսուցչին կամ գալ դպրոց: Սահմանափակումներ չկան: Դպրոցում ելումուտն ազատ է: Մանկապարտեզի սաները իրենց սիրած խաղալիքը կարող են տուն տանել, եթե օրվա վերջում չեն կարողանում նրանից բաժանվել: Բուհ ընդունվում է շրջանավարտների կեսը, երբեմն ավելին: Չենք վշտանում չընդունվածների համար: Գյուղում աշխատանք շատ կա. տանը, դաշտում, դա եւս հարստություն է»:

Դպրոցը փոքր է, ընդամենը 101 աշակերտ: Երեւանի հազարից ավելի սովորող ունեցող դպրոցներն ինչ նախանձով կվերաբերվեն ձեզ: Երբ ծանոթ մի ուսմասվարի պատմում էի այդ մասին, նա ասաց, «Ռոբերտի դպրոցը, ես

## Նամականի

*դրան կողմնակից եմ: Այդպիսի պայմաններում հնարավոր է երեխա կրթել»: Իսկ երբ ասացի, որ 24 աշակերտ գալիս է Քաջարան քաղաքից, մեկն էլ Կապանից, նա ավելացրեց. «Դա ոչ միայն գնահատական է, այլև հաստատումն այն իրողության, որ մեզ նոր դպրոց է պետք»:*

Պարոն տնօրեն, ձեր դպրոցի մասին ես էլի ասելիք ունեմ, բայց չէ՞ որ չարաշահում եմ «նամակի ժանրը», բացի այդ տակավին չեմ խոսել այն բուն պատճառի՝ դպրոց-մանկապարտեզի սաների կնունքի մասին, որի համար մենք՝ Այրույաց թեմի առաջնորդ Ասողիկ եպիսկոպոսի, Ռազմիկ Դավոյանի, Գրիգոր Շահինյանի եւ ձեր համերկրացի, կենսաբանության դոկտոր Բելլա Չարունյանի գլխավորությամբ եկել էինք Լեռնածոր:

Դեռես ճանապարհին էի իմացել, որ երեսնական թվականներից 18-ամյա Սոնյա Նավասարդյանն ու 20-ամյա Աշոտ Չարունյանը Լեռնածորի առաջին ուսուցիչներն են եղել: Կարելի է ասել՝ հիմնադիրները: Սոնյան մայրենի լեզու էր դասավանդում, Աշոտը՝ պատմություն, սակայն երկուսն էլ ստիպված էին պարապել նաև այլ առարկաներ, քանզի այն ժամանակվա գյուղական դպրոցի համար շրայություն կլինեին, եթե բոլոր առարկաների գծով մասնագետներ ունենային:

Չխոսենք դժվարությունների եւ սահմանափակ հնարավորությունների մասին, որոնք հաղթահարեցին երիտասարդ ուսուցիչները եւ որը Լեռնածորի այսօրվա դպրոցի պատմության ակունքն է: Ասենք միայն, որ հետագայում Սոնյան ու Աշոտը ամուսնացան եւ հայտնի դարձան մեկն իբրև հանրապետության վաստակաշատ ուսուցչուհի, մյուսը՝ անվանի պատմաբան: Եվ ահա այսօր, նրանց դուստրը՝ Բելլան, ի հիշատակ իր ծնողների, որոշել է հարստացնել դպրոցի գրադարանը եւ օգնել, որ բոլոր սաները կնքվեն մեր հայկական պապենական օրենքով:

Ծնողների հիշատակի հանդեպ հարգանքի մատուցման ի՞նչ երջանիկ պատեհություն:

Բելլայի խաչերը (թերևս այսպես անվանենք)՝ գնված դպրոց-մանկա-

պարտեզի բոլոր սաների համար, հարյուրից ավելի... Նրա համար, որպեսզի հանդիսավոր արարողությունից հետո, երեխաները, իբրև օրվա թանկագին հուշ, կրեին մեր եկեղեցու, մեր հավատի խորհրդանիշը:

Դեպի եկեղեցի՝ հարեւան գյուղ, Գեղանուշ: Թեթև անձրև էր մաղում: Ինչ շքեղ, հսկայահասակ լեռներ էին... Գեղանուշի տները՝ կպած լեռնալանջերին: Շվեյցարիա: Այգիների ցանկապատերի տակ՝ գնաբուկները, դեղին գլխիկները խոնարհած: Այդպիսի անաղարտ կանաչ որտե՞ղ եք տեսել: Սակայն, այս ու այնտեղ հանդիպում են լճակներ՝ թունավոր պարունակությամբ: Չարաբաստիկ պոչամբարներ կան պատռված պոչամբարներից լանջն ի վար հոսող աղտեղություններ: Քաջարանից է գալիս: Եվ դեռ ասում ենք՝ Շվեյցարիա:

Կարող էր լինել, եթե մեր իրականության մեջ մարդը արժեք ունենար, եւ բնությունն ու հանքային հարստությունները օգտագործվեին ոչ թե կողպատելու, այլ, նախ եւ առաջ, ապրելու առողջ միջավայր պահովելու նպատակով:

**II** «Մեր շրջանի էկոլոգիական վիճակը սարսափելի է» - ասացիք Դուք: Մտատանջությամբ լի Ձեր մի նախադասությունը ես երբեք չեմ մոռանա:

Երբ մենք մոտենում էինք եկեղեցուն, տեսա հողին փռված մի գեղեցիկ բույս, սպիտակ պուտերով: «Մենք դրան տատակ ենք ասում»: Անունը տատակ, բայց բույսը՝ բնության չնաշխարհիկ մի զարդարանք:

Այդ օրը, եկեղեցու կամարների տակ, մեր շատ երիտասարդ, բայց խոսքով եւ պահվածքով շատ ազդեցիկ Ասողիկ սրբազանը կատարեց կնունքի արարողությունը:

Կնքահայրը՝ Ռազմիկ Դավոյան. բանաստեղծի շնորհները թող փոխանցվեն իր սաներին:

Խաչեղբայրը՝ Գրիգոր Շահինյան, պարոն Գրիգորը ինչ քնքշանքով էր չորացնում օրինված ջրով լվացված մանկանց դեմքերը: Գրականության եւ մանկավարժության նվիրյալի բարությունն ու անձնուրացությունը թող փոխանցվեն իր սանիկներին:

**II** Չգիտեմ, Դուք նկատեցի՞ք, թե մայրերն ինչպես էին առաջ հրում իրենց գառնուկ-երեխաներին, որ չքաշվեն, չամաչեն: Եվ մյուռոնված մանկունք, պայծառացած հայացքներով, մոտենում էին Ասողիկ եպիսկոպոսին, նրա ձեռքից խոնարհությամբ ընդունելով պատկերազարդ աղոթագիրքը:

Այդ տեսարանն անհնար է մոռանալ, հարգելի տնօրեն: Դա մեր դարավոր ավանդության փոխանցումն էր: Դա նաև արդյունքն էր այն ջանքի, որ պետք է կրթել ոչ միայն մանկան միտքն ու մարմինը, այլև հոգին: Ձեր կոլեկտիվի աշխատանքի ամենամեծ գնահատականը, սակայն (իմ կարծիքով) եղավ Գրիգոր Շահինյանի խնդրանքը, երբ նա գյուղի հասարակության, Կապանից ու Երեւանից եկած հյուրերի ներկայությամբ դիմեց Ձեզ. «Առաջիկայում Լիբանանից գալու եմ Չայաստան ավելի երկար ժամանակով: Եվ երջանիկ կհամարեմ ինձ, եթե ձեր դպրոցում ինձ աշխատանքի ընդունեք իբրև ուսուցիչ»:

Յ. Գ. Այսօր, հունիսի 20-ին, երբ վերջապես ամբողջացրի նամակս, իմացա, որ սահմանից Գեղանուշ գյուղի ուղղությամբ կրակոցներ են եղել: Վերհիշեցի խոսակցությունն այն մասին, որ դեռես դպրոցական տարիքից պետք է հայ պատանին հասկանա եւ նախապատրաստվի իր հայրենիքի սահմանները պաշտպանելու անհրաժեշտությանը: Դուք այդ առումով որոշ գործ արել եք: Ցավում եմ, որ առհասարակ այսքան ուշ ենք մտածում այդ մասին: Թերևս, դպրոցական ծրագրերում արվելիք փոփոխությունների մեջ հետայսու ամենից շատ այդ է արժանի ուշադրության:

Խորին հարգանքով՝  
**ՍԱՐԳՈ ՂՈՒԿԱՅԱՆ**  
1991



# «Այունյաց երկիր» թերթի բարեկամը

Ռոբերտ Էջանանցու հոդվածները՝ հրապարակված մարզային թերթում («Այունիք», «Այունյաց աշխարհ», «Այունյաց երկիր»)

### «Այունիք» թերթ

#### 1996 թվական

1. Հրաշքներ եւ սպասելիքներ, N2-3, 21 մայիսի:
2. Խորհիր Արաքսի ափին, N7-8, 13 հուլիսի:
3. Երգեր, Այունիք, N11-12, 1 օգոստոսի:
4. Այս սարն իմն է, այս ձորն իմն է, իսկ դպրոցն ու՞մն է, N13-14, 15 օգոստոսի:
5. Ես քո համեստ մշակն եմ, N18-19, 10 սեպտեմբերի:
6. Ամանորյա կուպլետներ, N32-33, 30 դեկտեմբերի:

#### 1997 թվական

1. Տիգրան ափուի կտակը, N5-6, 21 փետրվարի:
2. Մուստաֆան, Շեյթանը եւ ... «պետական գաղտնիքը» (Աբրոյի պատմածը), N15-16, 14 մայիսի:
3. Մովսես Խոտանանցի (Սյունեցի). կաթողիկոս Ամենայն հայոց, N27-28, 21 օգոստոսի:
4. Ապրիր Արաքսի ափին, N29-32, 18 սեպտեմբերի:
5. Կեսկատակ, կեսլուրջ՝ տոնածառի շուրջ, N43-44, 22 դեկտեմբերի:

#### 1998 թվական

1. Անկախության հռչակման 7-րդ տարեդարձի առթիվ, N33-34, 1 սեպտեմբերի:
2. Ամրոցը, որ մերձակից է Բաղքի երկնքին, N35-36, հոկտեմբեր:
3. Դավիթ Բեկի մահվան 270-ամյակը, N41-42, նոյեմբեր:
4. Դավիթ Բեկի մահվան 270-ամյակը, N43-44, նոյեմբեր:
5. Դավիթ Բեկի մահվան 270-ամյակը, N45-46, դեկտեմբեր:

#### 1999 թվական

1. Ճամփորդություն ի Գորիս, N25-26, 16 հոկտեմբերի:

### «Այունյաց աշխարհ» թերթ

#### 2000 թվական

1. Ելույթ ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում, N1, 12 սեպտեմբերի:
2. Ռոբերտ Էջանանցու մախատոնական խոստուտը, N11, 20 դեկտեմբերի:

#### 2001 թվական

1. Ամանորյա ժպիտներ, N1, 1 հունվարի:
2. Մաշտոցապատում, N16, 11 հուլիսի:
3. Մաշտոցապատում, N17, 23 հուլիսի:

4. Մաշտոցապատում, N18, 9 օգոստոսի:
5. Մաշտոցապատում, N19, 27 օգոստոսի:
6. «Այունյաց աշխարհը» մեկ տարեկան է, հեռախոսագիր գյուղից, N20, 11 սեպտեմբերի:

#### 2002 թվական

1. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N7, 30 մարտի:
2. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N8, 10 ապրիլի:
3. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N9, 20 ապրիլի:
4. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N10, 30 ապրիլի:
5. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N11, 10 մայիսի:
6. Հին Կապանի վերջին աշունը (ավանդավեպ, լրագրային տարբերակ), N14, 10 հունիսի:
7. Դպրության հանդեպ չմարող սիրով (Գրիշա Մանուչարյան. դիմանկարի ուրվագիծ), N14, 10 հունիսի:
8. Գիտության վաստակաբեռ մշակը, N15, 20 հունիսի:
9. Կապուտջուղ, N18, 20 հուլիսի:
10. Նկատառումներ «Այունիքի պատմություն» գրքի վերաբերյալ, N21, 20 օգոստոսի:
11. Նկատառումներ «Այունիքի պատմություն» գրքի վերաբերյալ, N22, 30 օգոստոսի:
12. Նկատառումներ «Այունիքի պատմություն» գրքի վերաբերյալ, N23, 10 սեպտեմբերի:
13. Ծաղկաքաղ ընթերցողի համար, N24, 20 սեպտեմբերի:
14. Պապ Կարճեւանցի, N25, 30 սեպտեմբերի:
15. Նկատառումներ յոթնաբերդ Կապանի ամրոցների տեղորոշման վերաբերյալ, N26, 15 հոկտեմբերի:
16. Սանդուհը՝ երկրորդ սփերով, N27, 30 հոկտեմբերի:
17. Դաս Բաղաց լեռներում, N28, 15 նոյեմբերի:

#### 2003 թվական

1. Ոսկեփորիկը թառում է ընտրյալի ուսին, N2-3, 30 հունվարի:
2. Դաս Բաղաց լեռներում, N4, 10 փետրվարի:
3. Բարձունք, N6, 18 մարտի:
4. Կայունության անատոմիա. հայացք Սյունիքից, N7, 30 մարտի:
5. Պրոֆեսորական էկլեկտիզմ, N7, 30 մարտի:
6. Պրոֆեսորական էկլեկտիզմ, N8, 11 ապրիլի:

## «Այունյաց երկիր» թերթի բարեկամք

7. Պրոֆեսորական եկլեկտիզմ, N9, 21 ապրիլի:

### «Այունյաց երկիր» թերթ

#### 2003 թվական

1. Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորումը, 175 տարի անց, N7, 10 դեկտեմբերի:

#### 2004 թվական

1. Որ աղետը հանկարծակիի չբերի, N14-15, 6 մայիսի:
2. Առինքնող նախագնացություն, N16-17, 15 մայիսի:
3. Կապուտջուղ, N33-35, 28 հոկտեմբերի:

#### 2006 թվական

1. Շնորհավորում ենք, N18, 30 հոկտեմբերի:

#### 2007 թվական

1. Պայազատ որոյակ, N7, 20 ապրիլի:

#### 2008 թվական

1. Սյունիքյան օլիմպոսը, N22-23, 27 օգոստոսի:
2. Դիվան Բաղաբերդի, N24-25, 10 սեպտեմբերի:
3. Կապան քաղաքի «հովանավոր» լեռն է Խուստուվը, N24-25, 10 սեպտեմբերի:
4. Սյունիքը եւ ռուսական ֆենոմենը, N32, 20 նոյեմբերի:

#### 2009 թվական

1. Երբ մենք երկաթով էինք վարագուրված, N18, 10 սեպտեմբերի:
2. Վայրն այս, որ Ագարակ է կոչվում հիմա, N19, 10 հոկտեմբերի:

#### 2010 թվական

1. Ռոբերտ Գրիգորյան. «Չկա հանրակրթական դպրոցը վարկաբեկելու ավելի արտառոց երեւույթ, քան ուսուցչի՝ իր մոտ մասնավոր պարապուրդի հաճախելու՝ աշակերտին ներկայացվող պարտադրանքը», N15, 1 սեպտեմբերի:

#### 2011 թվական

1. Օրացույց (մտերիմ գրույց «Կապանատան պատմության բազմապատկող»-ների հետ), N4, 25 փետրվարի:
2. Կավարտ. պատմական ակնարկ, N8, 4 մայիսի:
3. Չազ Հաբանդեցի՝ անվանահայր մեր երկրամասի, N10, 28 մայիսի:
4. Արքան հին Կապանի ավերակներում է (ասքապատում), N12, 30 հունիսի:
5. Սյունիքի հրոտից-օգոստոս տոնական է, N13, 30 հուլիսի:
6. Ելույթ գիտաժողովում՝ նվիրված «Այունյաց երկիր» թերթի՝ Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակի առիթով թողարկված համարին, N13, 30 հուլիսի:
7. Աճանանի կամուրջը եւ վերծանություն թվականը, N15, 15 սեպտեմբերի:
8. Կապանա պատվիրակության անունից հիացք ու շնորհակալիքներ (Ելույթ Նիկողայոս Աղոնցի նվիրված գիտաժողովում), N21, 14 դեկտեմբերի:



9. Քաջարանց, N22, 28 դեկտեմբերի:

#### 2012 թվական

1. Օվսաննա ոսկեծղի այր Կամոյանին, N2, 31 հունվարի:
2. Գրկում ենք քեզ, ք... , N17, 20 հուլիսի:
3. Վահանավանքը եւ կապանյան տեղորոշումների թեակա-նությունը, N30, 15 դեկտեմբերի:
4. Շահանդուխտ Ա, N30, 15 դեկտեմբերի:
5. Շահանդուխտ Բ, N30, 15 դեկտեմբերի:
6. Հին Կապանի վերջին աշունը (ավանդակալ լրագրային տարբերակ), N30, 15 դեկտեմբերի:
7. Դիվան Բաղաբերդի, N30, 15 դեկտեմբերի:
8. Վահանավանքյան ապոկրիֆ, N30, 15 դեկտեմբերի:
9. Վահանավանք. աշխարհագրական ակնարկ, N30, 15 դեկտեմբերի:

#### 2013 թվական

1. Խուստուփի սլացքն ի վեր համբառնած այր մի... (հիշատակի խոսք եւ ոչ միայն), N4, 15 փետրվարի:
2. Համառոտ տեղեկանք. Ներքին Հանդ, N5, 28 փետրվարի:
3. Թուղթ առ Արամ Քալանթարյան, N18, 29 հունիսի:
4. Գորիս, Բանաստեղծին, N26, 5 հոկտեմբերի:
5. Մեր տարեգիր, սեր լրագիր, իմ թերթ... , N28, 30 հոկտեմբերի:

#### 2014 թվական

1. Կյանքում միշտ տեղ կա սխրանքի համար, N23, 20 սեպտեմբերի:

## «Այունյաց երկիր» թերթի բարեկամը

### 2015 թվական

- 1. Քաջարան գյուղը, N17, 16 հուլիսի:
- 2. Խոտանանը՝ գրչավայր, N23, 11 սեպտեմբերի:

### 2016 թվական

- 1. Բանաստեղծ Տիգրան Գրիգորյանին, ի Գորիս, N2, 26 հունվարի:

### Այունիքի մարզային թերթերում հրապարակված հոդվածներ Ռոբերտ Էջանցու մասին

1. Գրախոսություն «Կապանա տուն» մենագրության մասին (Անուշավան Աղամյան, «Այունյաց աշխարհ», N23, 24 հոկտեմբերի 2001 թ.):
2. Պատասխան խոսքի իրավունքով կամ խոտորնակին՝ խոտորնակ (Սերգեյ Չախվերդյան, ԶՊԵԶ Գորիսի կրթահամալիրի ավագ դասախոս), «Այունյաց աշխարհ», N27, 30 հոկտեմբերի 2002թ.:
3. Մի արատավոր գրախոսության մասին (Գրիգոր Գրիգորյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), «Այունյաց աշխարհ», N5, 28 փետրվարի 2003թ.:
4. Այունիքյան արեն ու ոգին էր նրա մեջ, եւ արմատներ ուներ նա հողում (Սամվել Ալեքսանյան, «Այունյաց երկիր», N7, 11 մարտի 2016թ.):

### Ռոբերտ Էջանցու անրիպ Նյութերը՝ «Այունյաց երկիր» թերթի խմբագրությունում պահպանվող

1. Նշանավոր մեղրեցիներ. Ստեփանոս Մեղրեցի
2. Կապանի տարածաշրջանի գյուղերը. Կաթնառատ, Վաչագան

### Հրապարակվել է Ռոբերտ Էջանցու խմբագրությամբ

1. Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային գրքից հատված՝ փոխադրված գրական հայերենի (փոխադրումը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Հակոբ



- Քոստյանի), «Այունյաց երկիր», N30, 15 դեկտեմբերի 2012թ.:
2. Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային գրքից հատված՝ փոխադրված գրական հայերենի (փոխադրումը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մկրտչյանի), «Այունյաց երկիր», N10, 28 մայիսի 2010թ.:
- Պատրաստեց Սամվել Ալեքսանյանը**

## ՄԵՐ ՏԱՐԵԳԻՐ, ՄԵՐ ԼՈՒՔԻՐ, ԽՄ ԹԵՐԹ...

**Ե**րկրամասի հիմնախնդիրների տողացի լուսաբանումներով, մոտ ու հեռավոր անցյալների իրադարձությունների նորահայացք բացահայտումներով, արդի ժամանակի երեւելիների խոսք ու խրատն ի տես դնելով, երկրում ու հարեւանի տանն ի հայտ եկած նորարարությունների հաղորդումներով, զալիք ժամանակին միտված կանխասացություններով, հայրենի եզերաց անունն առած թերթն իր մագաղաթահուշ ու համացանցային տարբերակներով ՁԼՄ-ական բազմաձևակա ճանապարհին ակամա շրջանցել է պահանջարկի անորոշ պատմեջը եւ մարզի ու նրա սփյուռքի համար դարձել հոգեւոր սննդի ամենահամեղ տեսակը:

Որպես ընթերցող չճանաչվածների մի բազումք է հայտնվել, որ չի կարելուրում հղումն այն աղբյուրին, որից առել է իրազեկվածությունը, փաստարկումը, մեկնաբանությունը, թեպետ ակնբախ է՝ դա մարզոստանում արարվող հեղինակավոր պարբերականն է:

Հայրենիքի նորացումը ոգեկոչող կամ առաջընթացին դիմակայող իրադարձությունների խորագնին վերլուծություններով, պատմական անցյալի վրա նոր քննություն ու լույս սփռելով, սյունեցիական ֆենոմենը նորովի իցույց դնելով, հոբելյար լրատվամիջոցն ընդամին վերածել է գիտահետազոտական յուրատիպ պարբերականի: Ներկա եւ ապագա հետազոտողների համար հույժ անհրաժեշտ ու կողմնորոշիչ բնույթ ունեն խմբագրակազմի տքնաջան աշխատանքի արգասիք համապարփակ անվանական համարները, որոնք անակնկալի են բերել անգամ աշխարհի տարբեր ծագերում հայտնված մեր ուսյալներին...

Առանձնյակ-համարի՝ ջանադիր

## «Այունյաց երկիր» թերթի բարեկամ

գլխաբերված ուղղորդիչ բնաբան խոսքը, գլխավոր խմբագրի՝ նարգի հասարակական կյանքի հեքը ջերմա- չափի զգայնությամբ ու ճշգրտությամբ արտացոլող առաջնորդող մեկեն պար- պում են ընթերցողի ապրիորի տարա- կուսանքները: Հայրենիքի զարգացման հետևանքների վրա Սիսիանի, Գորիսի, Կապանի, Մեղրու երբեմնի ինքնա- բավ միջավայրերը թերթի ծանրակշիռ նպաստով ու հետևողականությամբ մերձեցել ու զորանում են աննախըն- թաց մշակութաբանական ընդհանրու- թյուններով, ստեղծագործական պաթո- սի նոր ընկալումներով:

Մեր ժամանակներում, ակներեւ, որոշ լրատվամիջոցներ անբացատրելի հրապույր ունեն առ էժանագին ցնժա- լուր տեղեկատվությունը, անփույթ- այպանելի վերաբերմունք՝ գրավոր խոսքի մշակույթի նկատմամբ, ինչից համառորեն զերծ է մեր հորեյարը, դեռ ավելին՝ հայտնվել է այդ տկարություն- ների՝ նարտնչող հաղթահարողների փաղանգում:

Գյուղթղթակցի հոգեհարազատու- թյամբ անձնավորում են Քեզ՝ «Այունյաց երկիր», սեր լրագիր, մեր տարեգիր, թերթ իմ, դեռ տասնամյա ես, տա- րիքով՝ խոխա, ում թուշիկը պաչում են: Մաղթում-ակնկալում են բազում տասնամյակներ, մերօրյա շնորհաշատ լրագրողների հանրույթից ու առինքնող ավանդույթներից շառավիղված նոր խմբագրակազմեր...

**«Այունյաց երկիր», N28  
30 հոկտեմբերի 2013թ.**

Այունիքի հոգեւոր նայրաքաղա- քը Ձագ Հաբանդեցու հնամենի այս ոստանն է, որտեղ նվաստս եկել ու հպարտության վայելք են ստանում:

«Այունյաց երկիր» թերթի այս հա- մարն ուղղակի հրաշք է:

Տաթևից փրկության հույսով 1170թ. Բաղաբերդ տեղափոխված, բայց ոչն- չացված տասը հազար կտոր ձեռագ- րերից ու նատյաններից որոշ մասունք- ներ, այնուամենայնիվ, փրկվել են. այդ մասունքներից մի կտորն էլ Սամվել Ալեքսանյանի խմբագրած թերթի այս համարն է:

Շնորհավոր ասելը քիչ է: Եթե այս

տաղանդաշատ հարժիսեցին չլիներ, որ խմբագրի իր անուն-ազգանունն ավանդաբար գրում է մըրողչապես՝ Սամվել Ալեքսանյան, մենք շատ բան կորցրած կլինեինք: Մենք այս հրաշք երկրամասում ապրում ենք, ուր ամեն քարը պատմություն է, ամեն այրը՝ մի վեպ... Ո՞վ պիտի այսքանը վեր հաներ: Մենք մեզնով չենք հպարտանում, չենք զարմանում, չենք թեւավորվում...

«Այունյաց երկիր» թերթի լրատվա- կան կարգավիճակն ընդլայնվել-վերա- ճել է գիտավերլուծական պարբերա- կանի: Հները, մեր պատմիչները միշտ ասում էին, որ այունեցիները կենտրոնա- խույս են, իբրև թե թագավորին, կենտ- րոնական իշխանությանը դեն ենք: Դրա մեջ



երեւի ճշմարտության հատիկ կա: Բայց հիմա պիտի խոստովանենք, որ դա մեր՝ մշակութային ինքնագիտակցության գնահատականն է:

«Այունյաց երկիր» այս համարում բարձր գնահատանքի արժանի շատ հոդվածներ կան: Կցանկանայի այդ շարքում առանձնացնել զարմանալի անհատականություն Գարեգին Պետ- րոսյանի մեծարանքի հոդվածը, որ հեղինակել է լավագույն լրագրողը, մեր Վահրամ Օրբեյանը:

Այստեղ նստած են մեր գրականա- գիտության «ծանր հրետանի» Դավիթ Գասպարյանը, պրոֆեսորաց պրոֆեսոր Կիմ Աղաբեկյանը: Նրանց հոդվածնե- րը, որ տեղ են գտել թերթում, անշուշտ, զորացնում են թերթի տվյալ համարը: Բայց ինչո՞ւ ենք մենք այսքան սիրա- հարված գրական կյանքին, մշակույ-

թին: Պարոն խմբագիր, ինչո՞ւ, օրինակ, Ձեր թերթում չէք տպագրում սինուս, կոսինուս, ինտեգրալ եւ նման այլ մշա- նակումներով հոդվածներ: Գարեգին Պետրոսյանն այն միակ գիտնականն է՝ միջազգային ճանաչում ունեցող, ով առաջինը հերկեց հայոց անդաստանի խոպանը եւ ցույց տվեց, թե մեր ժողո- վուրդն ինչպիսի մաթեմատիկա ունի:

«Այունյաց երկիր» ինքնատիպ թերթ է, զարմանալի թերթ: Երբեմն այնպիսի մտադրացումներ է ունենում, մեծ գիտնականին, գրողին գնահա- տելու համարձակություն դրսևերորում, ժամանակակից տնտեսական հարցեր վերլուծում, որ մնում ես ապշած:

Շնորհավորում են «Այունյաց երկիր» պանծալի թերթի այս համարի ծնունդը:

**ՈՐԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
2 հուլիսի 2011թ.**

# Ընտանիքը



Ռոբերտ Էջանանցին դստեր՝ Աշխենի հետ

## Իմ լուսավոր ասպրղը



**ԱՇԽԵՆ  
ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Բ**արձր լեռների գրկում ծվարած փոքրիկ քաղաքում ապրող աղջնակին երկինքը շատ մոտ էր թվում: Երեկոյան ժամերին, երբ աստղազարդ գեղեցկուհին պատշգամբից կարծես ներս էր խցկվում, նա անհամբեր սպասում էր, թե երբ է հայրիկն ընթրելուց, լրագրերը թերթելուց հետո գնալու պատշգամբ, որպեսզի քույրերի հետ հարմար ու տաքուկ տեղավորվի հայրիկի շուրջը, հայացքը հառի երկնքին եւ ուշադիր լսի նրա բազում պատմությունները տիեզերքի, մարդու, կենդանական ու բուսական աշխարհի ու, ընդհանրապես, ամեն, ամեն ինչի մասին:

Աղջնակն այնպիսի հե-

տաքրքրությամբ ու հիացմունքով էր նայում երկնքին, որ կարծես գիտակցում էր, որ այդ անթիվ, անհամար աստղերից ամենաբախտավորի տակ է ծնվել:

Նրա հավատարիմ ընկերները՝ երկինքն ու աստղերը, գիտեին այդ մասին եւ համառորեն լռում էին, որովհետեւ վատահ էին, որ կգա օրը, երբ աղջնակն անպայման կհասկանա, որ Ռոբերտ Էջանանցու դուստր լինելն իսկապես մեծ բախտավորություն է:

Հպարտ եմ, որ մեծ սյունեցու, արժանավոր հայի, մեծահամբավ ուսուցչի եւ աշխարհի լավագույն հայրիկի դուստրն եմ: Հպարտ եմ, միեւնույն ժամանակ՝ պար-

Ընթացիկ



ԾՅ Մ

-Արդեն ունեն մի աղաւ,  
Նարեն փայտն ձիւնկին,  
Գնան, հասնեն Լեռնաձոր,  
Կծեն գյուղի պապիկին:  
-Աղամիկդ մի բրինձ՝  
Ընդամենը մի հատ է,  
Իմը քունից, Տակի տղա,  
Երեսունմեկով շատ է...

Գրեց գյուղի պապիկ  
Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ  
1996 թ. փետրվարի 10-ի երեկոյան

տավորված: Ձգտում են ապրել ու արարել այնպես, որ արժանի լինեն քո զավակը կոչվելու:


Դու կաս, դու իմ կողքին ես, իմ ամենահարազատ ու ամենալուսավոր աստղ, իմ պապ:

Քո խորունկ հայացքն աչքերիս առաջ է, զրնգուն ծայնդ՝ ականջիս, իմաստուն խոսքերդ՝ հոգուս մեջ, լուսավոր մտքերդ՝ սրտիս խորքում, քո գրած նամակները՝ փփիս մեջ եւ պահում են քո լուսանկարի պես:

Մանկության ջերմ ու անփոխարին-

նելի հուշերը վաղուց մոլորվել են երկար ու ձիգ տարիների հորձանուտում, բայց երկնքի ու աստղերի հետ իմ բարեկամությունը շարունակվում է: Այսօր այնտեղ շողում է իմ ամենալուսավոր ու ամենահարազատ աստղը: Եվ ամեննեւին էլ պատահական չէ, որ մարդիկ թե ուրախությամբ, թե տխրությամբ պահերին միշտ հայացքը հավատով հառում են երկնքին: Չէ՞ որ այնտեղ ամենահարազատ ու ամենալուսավոր աստղերն են ապրում... ■

## Ընթացիկ



**...Ինչպիսի՜ գործանքով էր վերաբերվում Կոնստանտին Ռուսապուրեին**

Էջերից, բայց հետաքրքրական բազում դրվագներ միայն նրա հարազատներից կարելի է իմանալ: Եվ հիմա տիկնոջ՝ Ռիտա Ստեփանյանի ու դուստրերի հետ նստած զրուցում ենք մաթեմատիկայի նրա կարիքներում, որտեղ ամեն ինչ մեծ մանկավարժի կենդանությունն է հուշում՝ հատակին գծված կողորդի-նատները, գրատախտակը, որի վրա կավճով գրվածը նրա մարգարտաշար ձեռագիրն է հիշեցնում, նախազարդ ցուցափայտը, հանրաճանաչ մաթեմատիկոսների փոքր-ինչ խունացած լուսանկարները...

Գյուղական ուսուցիչների ընտանիքում է ծնվել, հայրը՝ Քրիստափոր Գրիգորյան՝ Երկրորդ աշխարհամարտի մասնակից, պատերազմում ստացած խեղդումներից անժամանակ հեռացավ Երկրային կյանքից: Մայրը՝ Ծովիկ Սարգսյան՝ մանկավարժ, 36-ը դեռ չլրացած՝ անողորք մահը գտավ նրան: Այս ամենը հակիրճ ու պատկերավոր է ներկայացրել իր ինքնակենսագրականում. «Գյուղական ուսուցիչների ընտանիք, առաջնեկ, որբություն 14 տարեկանից՝ Չերիքնազ տատիս խնամքի տակ, երեք երեխաներով»:



**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

**«Ռ** ուսուցիչը պիտի անպասելի լինի, ինչպիսին Ռոբերտ Գրիգորյանն է: Մաթեմատիկայի դասից հետո նա հանկարծ կարող է աշակերտներին տանը շարադրություն հանձնարարել «Մեր շրջանի յոթ հրաշալիքները» թեմայով: Զգիտեն ինչ են գրել, բայց հրաշալիքներից մեկը, անշուշտ, Լեռնաձորի ութամյա դպրոցն է»:

Այս տողերը չորս տասնամյակի եւ ավելի վաղեմություն ունեն: Գրվել են Մոսկվայից գործուղված թղթակցի կողմից եւ տպագրվել «Կոմսոմոլսկայա պրավդա» լրագրում: Ավաղ, Լեռնաձորի դպրոցը մեծ ճանաչման արժանացրած անձնավորությունը, մեր թերթի մեծագույն բարեկան Ռոբերտ Գրիգորյանը՝ նույն ինքն էջանանցին կամ Կրիքոր Լուսավերեջը (Գրիգոր Լուսավորիչ), ինչպես նրան դիմում էին նեղ շրջապատում, ինչ նրան դուր էր գալիս, արդեն երկրավորներիս հետ չէ, այլեւս չեն վայելի նրա անհափ հաճելի ներկայությունը:

Շատ բան է մեզ հայտնի նրա կյանքի

**||** Մոտ կես դար նույն դպրոցում (սա հազվադեպ է պատահում) ուսմասվար, 1984 թվականից որպես տնօրեն, հասցեն՝ Կապանա տուն, Լեռնաձորի հիմնական դպրոց:

Յուրօրինակ այս կրթօջախի հարկի տակ շատ երեւելիներ են հյուրընկալվել՝ հայտնի գրողներից ու արվեստագետներից (Սերո Խանգադյան, Ռազմիկ Դավոյան, Տիգրան Մանսուրյան, Ազատ Շերենց եւ ուրիշներ) մինչեւ Խորհրդային Միության կրկնակի հերոս, ԽՍՀՄ տիեզերագնաց-օդաչու Նիկոլայ Ռուկավիշնիկով, հյուրեր արտասահմանից:

...Առաջաձոր գյուղում աչք բացած պատանու զիտակցական կյանքն անդառնալիորեն կապվեց Լեռնաձոր փոքրիկ գյուղի հետ, միջնակարգ ավարտելուց հետո 6-ամսյա մանկավարժական դասընթացներ էր անցել, դասավանդելու նշանակեցին Լեռնաձորի ութամյա դպրոցում: Դա 1965 թվականին էր: «Ես էլ աշխատում էի մանկապարտեզում որպես դաստիարակչուհի,

## Ընթացիկ

ընդունվել է մանկավարժականի բանասիրականի հեռակա բաժինը, վերհիշում է տիկինը: Միրում էր կատակներ անել, նաև ռոմանտիկ էր: Մի անգամ հանդիպեց գյուղում, թե գնանք, Ամերիկայում աշխատենք՝ ես վարժապետ, դու վարժուհի: Իսկ ինչու՞ Ամերիկայում ես ոչ այստեղ, փորձում էի հակադարձել: Եվ այդպես շարունակ կատակներ էր անում, նաև շատ ռոմանտիկ էր: Մի անգամ էլ թե՛ գնանք Անուշի, Սարոյի նման փախչենք սարերը», բայց ու՞մից փախչենք, – լինում էր իմ պատասխանը:

Ծանոթությունից հինգ տարի հետո անուննացան: Մանրամասների մեջ չխորանալով՝ ասենք, որ պարզ, անպաճույճ եղավ նրանց անունությունը, առանց հարայ-հրոցի:

– Չեմ ուզում ոչ մեկին ներություն տալ, – ասել էր ես հարսնացուի՛ն տեղյակ պահել, – քեզ համար էլ կաշաղակի պարագաներ չեմ առել (նկատի ուներ օճանելիքը, հարդարման պարագաները):

«Դամեստ կյանքով ենք ապրել, ճոխության հետևից չենք ընկել, քչով բավարարվել ենք, դժվարությունները

միասին ենք հաղթահարել, ծնողներս են երբեմն փորձել օգնել, չի թույլատրել, – խոստովանում է Ռիտա Ստեփանյանը, – հիմնականում դպրոցում էր անցնում էջանանցու ժամանակը, ծանրաբեռնված էր, դա դժվար չէր նկատել, ուստի ազատություն էինք տվել, տան հոգսերով չէինք ծանրաբեռնում»:

Ծնվեց առաջնեկը՝ Ծովինարը, ով վաղամեռիկ ուսուցչուհի տատի անունն է կրում: Եվ հաճելի մի զուգադիպությամբ շարունակում է մանկավարժ հոր գործը դպրոցի տնօրենի պաշտոնում: Էջանանցին շատ էր սիրում երեխաներին. 1975-ին երկվորյակ ունեցան, տիկին Ռիտան պատմում է, որ չգիտեին, որ զույգ պիտի ծնվի. «Առաջինը Սյունեն ծնվեց, բուժքույրը շտապեց աչքալուսանք տալ՝ Գրիգորյան, աչքը լույս, աղջիկ ունես, էլի աղջիկ-վրա բերեց Էջանանցին: Մեկ էլ երկրորդն է ծնվում: Բուժքույրն էլ՝ Գրիգորյան, մի՛ գնա, մեկն էլ ծնվեց, բայց էլի աղջիկ է... Ինչ էջանանցի, որ կատակի չտա՝ դե ասա բժշկական ուսումնարան պիտի բացեն»:

Կատակը կատակ, բայց երբ հասակ էին առնում, տեսնել էր պետք, թե ինչպիսի գորովանքով էր վերաբերվում դուստրերին՝ Ծովինար, Աշխեն, Սյունե, Լիլիթ, ինչպիսի հայրական սիրով լեցուն ոտանավորներ է ձոնել, խրախուսական նամակներ գրել (երբ հեռակայում էր Կիրովականի մանկավարժականում կամ գտնվում էր տնից հեռու՝ առողջարանում): Այս մի դեպքն էլ տիկինն է պատմում.

II «1990-ականների սկզբին էր՝ ցուրտ ու մութ ժամանակներ, տուն եկավ, թե՛ վառարանի վրա կարող էս լավաշ թխել, դպրոցում աշակերտները կարող են սոված լինել:

Վեր կացա, խմոր հունցեցի, լավաշի հետ տանը ինչ կար, դրեցի հետը, դպրոց տարավ: Գիմնականում դպրոցում էր լինում, մի անգամ շրջանավարտների վերջին զանգից հետո եկավ տուն, մեկ էլ թե՛ չէ, դպրոց պիտի գնամ, երեխաներն այնտեղ են, առանց նրանց չեմ կարող»:



Ռոբերտ Էջանանցին քրոջ՝ Անուշի, մոր՝ Ծովինարի եւ եղբոր՝ Ալբերտի հետ

## Ընթացիկ

Մինչ Ռ. Ստեփանյանի հիշողությունների կծիկը սկսել էր քանդվել, Ծովինարը մանկական տարիների հուշեր ներկայացրեց. «Չայրիկի համար մի հաճելի զբաղմունքը մեզ հետ բնության գրկում անցկացնելն էր: Չատկապես դա լինում էր աշնանը, երբ ծառերը բազմերանգ գույներով էին պատվում: Ամեն ինչ բացատրում էր, խոսում ծառերի, բույսերի, սողունների եւ միջատների, գետերի ու գետակների մասին, ստուգաբանում տեղանունները, մի խոսքով՝ մեր այցը բնության գիրկ ուսուցողական, ճանաչողական բնույթ էր կրում՝ անմռանալի ու հետաքրքիր: Երբեմն անտառ գնալիս մեզ հետ ինքնառեւ էինք վերցնում, թեյ պատրաստելիս խոտաբույսեր էր օգտագործում, թեյն այնքան համեղ էր ստացվում, որ բուրումնավետ այդ ըմպելիքից հնարավոր չէր կշտանալ»: Ծովինարը հիշում է նաեւ հայրիկի ընթերցանության ժամերը, երբ իրենց համար գրական-գեղարվեստական ստեղծագործություններ էր ընթերցում. «Հիշում եմ՝ մի անգամ այնքան տպավորիչ կարդաց «Գիքորը», որ քույրիկներով սկսեցինք լաց լինել: Ինքն էլ հուզվեց. նուրբ հոգի ուներ:

Չաճախ երեկոյան քույրիկներով դպրոց էինք գնում, լուսնադիտակով նայում երկնքին, երեւի դրանից իմ մեջ սեր արթնացավ աշխարհագրության, աստղագիտության հանդեպ: Դեռ շատ փոքր էինք, բայց գիտեինք՝ ինչ է գալակտիկան, մոլորակները, եղել է գիշեր, որ այն չենք փակել, զրուցել էինք տարբեր թեմաների շուրջ: Դասընկերուհիներիս բնակարաններում պատերին՝ թանկարժեք գորգեր էին կախված, մեր տան պատերին աշխարհի քաղաքական քարտեզը. ննջասենյակում՝ Չայաստանի քարտեզը՝ ցուցափայտը կողքին: Մեր տանը հյուրերից մեկը հայրիկին այդպես էլ ասել էր՝ «գյաթա չունես, պատերին քարտեզ ես կախել»:

Նրա հարուստ արխիվն ուսումնասիրելիս ուշագրավ շատ բան կարելի է պեղել: Որ Լեռնաձորի ութամյա դպրոցում 1970-ականներին ստեղծել է «XYZ» ակումբ, X-ը խորհրդանշում է աշխատանքը, Y-ը՝ գիտելիքը, Z-ը՝ ժողովրդական բանահյուսությունը: Գյուղի ծերունիներից գրի էր առնում նրանց պատմած ավանդազրույցները, խնդիրները, խրախուսականները: Դեռ ավելին.



Ռոբերտ Էջանանցու հայրը՝ Քրիստափոր Գրիգորյանը

15 խրախուսական «Չայկական ժողովրդական խնդիրներ» վերնագրի ներքո տպագրվել է համամիութենական «Քվանտ» ամսագրի 1972 թվականի հունիսյան համարում: «XYZ» ակումբի մասին գրվել է գերմանական «Ալֆա» ամսագրում՝ «Մի մաթեմատիկական ակումբ Չայկական ԽՍՀ-ում» վերտառությամբ:

Որ Էջանանցին աշակերտի, դեռահասի երեւակայությունը բորբոքող մեկն էր, տողերիս հեղինակը համոզվել է դպրոցահասակ տարիքում՝ ամառային արձակուրդի օրերին, «Գանձասար» պիոներական ճամբարում: Ճամբարի ավագ ջոկատավարն էր, բազում հետաքրքրական միջոցառումների նախաձեռնող ու հեղինակ: Հիշում եմ այսպիսի մի դրվագ. գիշերվա կեսին, երբ ճամբարն անուշ քուն էր մտել, մեկ էլ տագնապ էր հայտարարվում: Երբ ճամբարականները՝ կիսաքուն, քնաթաթախ, բանից անտեղյակ շարք էին կանգնում, հայտնում էր, որ այսինչ բացատում այլմոլորակայինները տիեզերանավով վայրէջք են կատարել, ճամբարականները պիտի գնան եւ դիմավորեն նրանց: Կամ մի այլ հուշ. երբ

ջոկատը քայլում էր անտառամիջյան ճանապարհով. մեկ էլ իրաման կինչերը՝ ջոկատ, կանգնիր: Մի բույս էր քաղում եւ հարցնում դրա տեսակը (ո՞վ պիտի իմանար): Փոքր դադարից հետո ասում էր. «Սա թանթրվենի բույսն է»: Եվ հետեւում էին տեղեկություններ դրա մասին:

II Էջանանցու բնավորության գծերից կարելի է առանձնացնել կողքինի օգտակար լինելու պատրաստականությունը. հարազատների վկայությամբ՝ երբ տանը հնչում էր հեռախոսագանգը, ընկալուչը վերցնելով՝ առաջին արտահայտությունն էր՝ ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Երեխաների մեջ էլ սերմանում էր այդ հատկությունը, ծերերին, տկարներին պետք է օգնել: Երբ շրջապատում մեկը հիվանդանում էր, տնեցիներին հորդորում էր տեսակցության գնալ, հետաքրքրվել որպիսությամբ: Մի դեպք պատմեցին. մի անգամ տուն եկավ մի պարկ կանաչիով՝ մի մասը դեղնած: Երբ հետաքրքրվեցին, թե բանն ինչ է, ինչու է այդքան կանաչի գնել, պատասխանեց՝ բա ի՞նչ անեի, շուկայում միայն մի ծեր կին էր մնացել...

Այդպես պատրաստ էր գրպանի համեստ պարունակությունից բաժին հանել իր սաներին, ծերերին, կարիքավորներին...

Էջանանցին՝ բանահավաք: Սա մի առանձին եւ մանրակրկիտ ուսումնասիրության թեմա է՝ դպրոցում ստեղծել էր հնագիտական եզակի թանգարան, ինչպես տնեցիներն են ներկայացնում, մեծ ջանասիրությամբ էր հավաքում Լեռնաձորի, Քաջարանի, Կապանի տարածաշրջանի բանավոր գրույցները՝ խրախուսականներ, օրհնանքներ եւ անեծքներ, ժողովրդական բանահյուսության նմուշներ, ինչպես՝ Իշխան պապի ու Շուշան տատի հանելուկները, կազմել էր բարբառային բառերի բառարան, սիրում էր գրուցակիցներին տեղեկացնել, որ Լեռնաձորը նախքան մեր թվարկությունը կոչվել է Տիրմիք, 8-րդ դարից՝ Քրդիկանց, ի պատիվ նրա տիրոջ՝ Քրդիկ իշխանի, 1929 թվականից կոչվում է Լեռնաձոր: Որեւէ հավաքի կամ միջոցառման ժամանակ սիրում էր երգել

**Ընտանիք**



Ռ.Էջանանցին ընտանիքի անդամների հետ



Ռ. Էջանանցու կինը՝ Ռիտա Ստեփանյանը

Շուշան տատից լսած եւ գրառած խաղի-

կը՝ ստեղծելով անմիջական մթնոլորտ:

*Նենա օրը նօրալս,  
Նօրալս, պիլլորալս,  
Քու լրսնենգա իրենաթ,  
Իմ սէրպըս մըլլօրալս:*

Յոււմորը միշտ անպակաս էր նրանից: Ամանորի առիթով երգիծանքի լեզվով քառատողեր, բանաստեղծություններ (հունորեսկներ) էր գրում տարբեր մարդկանց (հիմնականում ճանաչված) մասին, որոնք տպագրվել են տարբեր թերթերում: Մինչև վերջին օրերը հավատարիմ էր կատակասերի իր բնավորության գծին: Հիվանդանոցում եւս կատակում էր. մեկին ասաց. «որ լավ սրսկես, քեզ մի ործակ եմ տալու»: Երեւանցին ինչ իմանա՝ ործակն ինչ է: Հարցնում է՝ ի՞նչ: Ործակ էլի, կրկնում է Էջանանցին: Որոշ դադարից հետո՝ հա՛, իմացա՛ ործ հավ:

Որքան էլ դժվար էր պատմել այդ մասին, նրա կողակցից ցանկանում ենք

իմանալ որեւէ դրվագ նրա ապրած վերջին օրերից. «Հաջորդ օրը պիտի գնա՝ յինք Երեւան՝ բուժգնման: Ճաշելուց հետո մեկ էլ թե՛ պիտի դպրոց գնամ: Ասի՛ մի գնա (ոտքերը ցավում էին, դժվար էր քայլում): Ընդդիմացավ՝ թե այստեղից դպրոց ինչ ճանապարհ կա, մի մատյան կա, գնամ, լրացնեմ, գամ: Մի քիչ ուշացավ, մեր հեռախոսագանգերին չէր պատասխանում, հետո ինքը զանգեց, թե վատ եմ զգում: Աղջիկներիս հետ շտապ դպրոց հասանք՝ սիրտը վատացել էր, պառկեցրի՛նք բազմոցին, ասաց՝ մահը եկավ: Վերջ: Այլ բան չասաց...»

Լեռնաձորի դպրոցում ամեն ինչ այնպես է, ինչպես նրա կենդանության օրոք, իսկ ահա երբ դուրս ես գալիս կրթօջախից եւ քայլում փողոցով, այն զգացողությունն է քեզ պատում, որ գյուղը դատարկվել է: Եվ շատերն ունեն այդ զգացողությունը:



## Ընթացիկ



### ԾՈՎԻՆԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Ռոբերտ Գրիգորյանի ավագ դուստրը եւ գործը շարունակողը

**Օ**նվել է 1974թ. դեկտեմբերի 21-ին Կապանի շրջանի Լեռնաձոր գյուղում: Սովորել է Լեռնաձորի ութամյա, այնուհետև՝ Քաջարանի թիվ 2 դպրոցում: Միջնակարգ ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության եւ տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետը: Բուհում սովորելուն զուգընթաց 1991 թվականից աշխատել է Լեռնաձորի ութամյա դպրոցում՝ ուսուցիչ: 2013 թվականից Լեռնաձորի միջնակարգ դպրոցի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ դուստր եւ մեկ որդի:




Կենտրոնում՝ Լեռնաձորի միջնակարգ դպրոցը, որտեղ Էջանանցին տնօրեն է եղել 1984-2012թթ.

**Ս**յունիքի մարզի Լեռնաձորի ութամյա դպրոցը հիմնադրվել է 1923 թվականին: Նախապես կոչվել է Ջանգեզուրի գավառի Ղափանի գավառամասի Քրդիկանց գյուղի տարրական դպրոց: 1930 թվականի սեպտեմբերից կոչվել է Ղա-

փանի շրջանի Լեռնաձորի տարրական դպրոց: 1937 թվականին ստացել է նոր կարգավիճակ եւ կոչվել Ղափանի շրջանի Լեռնաձորի յոթամյա դպրոց: 1962 թվականի սեպտեմբերից կոչվել է Ղափանի շրջանի Լեռնաձորի ութամյա դպրոց: 1995 թվականից կոչվում է Սյունիքի մարզի Լեռնաձորի ութամյա դպրոց: Հիմնադրման ժամանակից առ այսօր գործում է անընդմեջ: Հիմնադրման տարվանից գործել է հարմարեցված շինությունում: 1935 թվականին կառուցվել է դպրոցական շենք: 1973 թվականին շահագործման է հանձնվել դպրոցական նոր կառույցը՝ երկու մասնաշենքով: 1988թ. մայիսի 6-ից մինչեւ 1995թ. ապրիլի 1-ը՝ Լեռնաձորի ութամյա դպրոց-մանկապարտեզ: 2002թ. դեկտեմբերի 20-ից կոչվում է «Լեռնաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առետրային կազմակերպություն:



**Ծննդավայր  
Առաջածոր**





**Կառլան ֆադաֆի «հովանավոր» լեռն է Խուսուփե**

Յները նրա լանջերին կազմակերպել են Վարդավառի եւ այլ տոնախմբություններ:  
Ըստ մի ավանդազրույցի՝ Խուսուփուփի սրբաբերդից բերված ջուրը հրաշագործ է եւ  
կասեցնում է դաշտերը համակած մորեխի պարսերը:  
Ըստ մի այլ գրույցի՝ Խուսուփուփի վրա երկնքից կրակներ են ընկնում եւ այդ ժամանակ  
տեսնողների լեզուն կապ է ընկնում:  
Դիցական լեռ է: Անվանումը ստուգաբանված է որպես աղոթարան:  
Արեւելյան եւ հյուսիսային կողմերը կտրված են անդունդներով եւ վիհերով: Լեռան ամբողջ  
վեհությունը երեւում է Շիշքար գագաթից: Բուսածածկույթն ունի շուրջ 150 տեսակ:  
Լեռան փեշին ամփոփված է Գարեգին Նժդեհի աճյունը:

**ՌՐԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**